ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բուհական դասագիրք

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 93/94(075.8)
ԳՄԴ 63.3g73
Կ 294

Հաստատված է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից որպես բուհական դասագիրք:

Հրատարակման է երաշխավորվել ԵՊՀ և Հայ-ռուսական համալսարանի գիտական խորհուրդների ու ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ընդհանուր պատմության բաժնի կողմից:

Կարապետյան Ռուբեն
Կ 294 Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն: Բուհական դասագիրք / Ռ. Կարապետյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2019, 528 էջ:

Դասագիրքն ընդգրկում է արաբական երկրների նոր և նորագույն պատմության հիմնական իրադարձություններն ու զարգացումները: Քննության են ենթարկված արաբական կարևոր երկրների անցյալի և ներկայի առանցքային խնդիրները: Ներկայացված են այդ երկրների պատմական զարգացման ընդհանուր օրինաչափությունները, հիմնական փուլերն ու առանձնահատկությունները:

Նախատեսված է «Արևելագիտություն», «Պատմություն» և «Միջազգային հարաբերություններ» մասնագիտություններով սովորող ուսանողների ու արաբական աշխարհի պատմությամբ հետաքրքրված ընթերցողների համար:

ՀՏԴ 93/94(075.8)
ԳՄԴ 63.3g73

ISBN 987-5-8084-2415-9

©ԵՊՀ հրատ., 2019
© Կարապետյան Ռ., 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 7
ԲԱԺԻՆ Ի
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(17-րդ դարակեսից մինչև 1918 թվականը).....10
ԳԼՈՒԽ Ա
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 11
1. Արաբական երկրների վարչատարածքային բաժանումը, պետական համակարգն ու սոցիալ-տնտեսական վիճակը 11
2. Արաբական երկրները Աբդուլ Համիդ 2-րդի իշխանության տարիներին.....18
3. Սիրիան, Լիբանանը և Պաղեստինը 19-րդ դարում. Արաբական ազգային-մշակութային զարթոնքը՝
(Ալ-Նահդան) ու Թանզիմաթը 26
Ա. Արաբական ազգային-մշակութային զարթոնքը՝ «Ալ-Նահդան».. 28
Բ. Լիբանանը, Սիրիան և Պաղեստինը Թանզիմաթի ժամանակաշրջանում (1839-1876 թթ.).....32
4. Իրաքը Թանզիմաթի շրջանում..... 39
Ա. Քրդերի ապստամբությունն ու միջցեղային պատերազմները..... 39
Բ. Միդհաթ փաշան Իրաքում 43
5. Մահդիի ապստամբությունը Սուդանում..... 46
6. Ալժիրի գրավումը Ֆրանսիայի կողմից և Աբդ ալ-Քադիրի ապստամբությունը 53
7. Արաբիան 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին 60
ԳԼՈՒԽ Բ
ԵԳԻՊՏՈՍԸ 18-19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ: ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ 69
1. Նապոլեոնի արշավանքը Եգիպտոս 69
2. Եգիպտոսը Մուհամմադ Ալիի իշխանության օրոք 79
3. Արաբիայի գրավումը Եգիպտոսի կողմից..... 86
4. Եգիպտոսը 1841-1876 թթ. 95

5. Ահմադ Արաբիի ապստամբությունը և Եգիպտոսի նվաճումը Անգլիայի կողմից 100
6. Անգլիայի և Ֆրանսիայի մրցակցությունը Եգիպտոսում 109
7. Ներքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակը Եգիպտոսում 116
Ա. Ազգային-ազատագրական շարժումը Եգիպտոսում 122
8. Եգիպտոսի հայ համայնքը 18-19-րդ դարերում 128
ԲԱԺԻՆ II
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ 142
ԳԼՈՒԽ Ա
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 146
1. Հին օսմանները և երիտթուրքերը 146
2. Արաբական ապստամբությունը Հիջազում 154
3. Դավաճանված արաբները 161
4. Արաբական երկրների ազգային-ազատագրական պայքարը և Ֆրանսիան 170
5. Ազգային-ազատագրական պայքարը Սիրիայում և Լիբանանում (1920-1946 թթ.) 179
6. Սուդանը և Լիբիան անկախության համար մղված պայքարում 190
ԳԼՈՒԽ Բ
ԱՐԱԲԱ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ 202
1. Իսրայել պետության ստեղծումը 202
2. 1948 թ. առաջին արաբա-իսրայելյան պատերազմը 217
3. Սիրիան 1945-1970 թթ. 220
4. Սառը պատերազմի տարածումը Արաբական Արևելքում. հեղաշրջումներ ու հակամարտություններ 230
5. 1967 թ. արաբա-իսրայելյան «վեցօրյա» պատերազմը 250
6. 1970 թ. հորդանանյան ճգնաժամը 257
7. 1973 թ. արաբա-իսրայելյան պատերազմը 265
8. Քաղաքացիական պատերազմը Լիբանանում (1975-1989 թթ.) 273
9. 1978 թ. Քեմփ-Դևիդի համաձայնագիրը Եգիպտոսի և Իսրայելի միջև 291

10. 1982 թ. Իսրայելի ներխուժումը Լիբանան 303
11. Սիրիան և «Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը» 322

ԳԼՈՒԽ Գ

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ - 21 ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 332
1. Իրանա-իրաքյան պատերազմը (1980-1988 թթ.).....332
2. Իրաքի ներխուժումը Քուվեյթ: Դրդապատճառներն ու հակասադդամական միջազգային կոալիցիայի ձևավորումը 340
3. Իրաքյան պատերազմը (2003-2011 թթ.).....357
4. Նավթային գործոնն Արաբական Արևելքում 364
5. Ջրային հակամարտությունը Մերձավոր Արևելքում 376
Ա. Տիգրիս-եփրատյան ավազանը 378
Բ. Նեղոսի ավազանը 380
Գ. Հորդանանի ավազանը 382
Դ. Արևմտյան ափի ջրային աղբյուրը 383

ԳԼՈՒԽ Դ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 385
1. 1991 թ. Մադրիդյան մերձավորարևելյան համաժողովը՝ խաղաղության նոր գործընթացի սկիզբ (1990-2000 թթ.) 385
2. Սիրիա – Իսրայել. չօգտագործված հնարավորությունները և ապագա հեռանկարները խաղաղության հաստատման համար (1991-2001 թթ.)..... 399
3. Երուսաղեմի հիմնախնդիրը պաղեստինա-իսրայելյան հակամարտության կարգավորման գործընթացում 413
Ա. Տեղեկություններ «Հին քաղաքի» մասին..... 417
Բ. Պաղեստինյան և իսրայելյան դիրքորոշումները Երուսաղեմի կարգավիճակի վերաբերյալ 419

ԳԼՈՒԽ Ե

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 422
1. Իսլամական արմատականություն (ֆունդամենտալիզմ) 422
2. «Արաբական գարուն». պատճառներն ու հետևանքները.....434
3. Սիրիական ճգնաժամը.....445
4. Աշխարհաքաղաքական նոր իրավիճակ Մերձավոր Արևելքում457

ՀԱՎԵԼՎԱԾ 1.....469
Հայ-եգիպտական հարաբերությունները (1991-2017 թթ.).....469
Ա. Քաղաքական համագործակցություն.....469
Բ. Առևտրատնտեսական հարաբերություններ..... 472
Գ. Գիտակրթական համագործակցություն.....476
Դ. Համագործակցություն մշակույթի բնագավառում.....480
Ե. Եգիպտահայ համայնքն այսօր.....482
ՀԱՎԵԼՎԱԾ 2 485
Կահիրեի համալսարանում Հայագիտական կենտրոնի
հիմնադրման պատմությունը 485
ՀԱՎԵԼՎԱԾ 3.....495
ՀՀ-Արաբական պետությունների լիգա համագործակցության
պատմությունից.....495
Ուսումնական հիմնական գրականություն.....502
Գրականություն լրացուցիչ ընթերցանության համար.....503

ՆԱԽԱԲԱՆ

Հայ ժողովրդի պատմությունն անքակտելիորեն կապված է Մերձավոր Արևելքի՝ այն անմիջական ու կենսական տարածաշրջանի հետ, որտեղ կայացել է Հայոց պետականությունը՝ արձանագրելով իր անկումներն ու վերելքները, հաղթահարելով գոյութենական սպառնալիքները, անընդհատ բախվելով խաղաղության ու պատերազմի հիմնախնդիրները լուծելու պարտադրանքներին: Այդ տարածաշրջանում էլ բազմադարյա սերտ առնչություններով մենք կապված ենք մեր անմիջական հարևան արաբ ժողովրդի հետ և ակնհայտ է, որ արաբական երկրների պատմության ուսումնասիրումը շարունակում է առաջնային խնդիր մնալ հայ ժողովրդի համար:

Արաբագիտությունը մեր նորանկախ պետության գիտական կարևորագույն ուղղություններից մեկն է: Դեռևս խորհրդային տարիներին Հայաստանում ձևավորված արաբագիտության դպրոցն իր նշանակալի ավանդը ներդրեց ոչ միայն խորհրդային, այլև համաշխարհային արևելագիտության զարգացման գործում: Այդ ասպարեզում առաջնային ու նշանակալի դերակատարություն ունեցան հայ արաբագետների պատրաստման երկու դարբնոցները՝ Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետն ու ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը: Չնայած ՀՀ անկախացումից ի վեր, դժվարին պայմաններում վերոնշյալ հաստատությունների գործադրած ջանքերին և իրականացված հսկայածավալ աշխատանքերին ՝ այսօր, այնուամենայնիվ, նկատելի է հատկապես ուսանողության համար հրատարակված հայերեն մասնագիտական գրականության (դասագրքերի, ձեռնարկների ևն) պակասը: Ահա այդ հանգամանքն էլ դարձավ «Արաբական երկրների նոր և նորագույն պատ-

մություն» ուսումնական ձեռնարկի նախապատրաստման և 2003 թ. հրատարակման հիմնական դրդապատճառը: Փաստորեն, այն հայերեն առաջին ձեռնարկն էր մեր իրականության մեջ:

Արաբական երկրների պատմությանը նվիրված այս նոր՝ արդեն բուհական դասագիրքը հրատարակման նախապատրաստելիս և արդիական որոշ հարցեր լուսաբանելիս փորձել ենք ձերբազատվել գաղափարախոսական երանգավորումներից ու քաղաքականացված կամ անվերապահ և անբեկանելի գնահատականներից:

Նկատենք, որ ընդարձակ ժամանակագրական սահմանները զգալիորեն խոչընդոտել են յուրաքանչյուր թեմայի համապարփակ լուսաբանմանն ու մանրամասն ներկայացմանը: Ուստի քննարկման հիմնական առարկա ենք դարձրել արաբական պատմության կարևորագույն իրադարձություններն ու դեպքերը՝ համարժեք գնահատական տալով ինչպես արաբական աշխարհում նրանց ունեցած ազդեցությանը, այնպես էլ բազմաթիվ գործիչների գործունեությանն ու նրանց թողած ժառանգությանը:

Հայտնի է, որ պատմական գործընթացների հետազոտությունների ժամանակակից մակարդակը, հատկապես արաբական տասնյակ երկրների առկայության պայմաններում պահանջում է հսկայածավալ փաստացի նյութերի և աղբյուրների հետազոտում ու մշակում: Սակայն չունենալով նման նպատակ՝ սույն դասագրքում մենք ոչ թե ներկայացրել ենք յուրաքանչյուր արաբական երկրում տեղի ունեցած պատմական զարգացումները, այլ արաբական երկրների ընտրությունը պայմանավորել ենք արաբական աշխարհում նրանց ունեցած դերի կարևորությամբ, ինչպես նաև Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության հետ առնչությունների ծավալով ու խորությամբ: Ուստիև նյութի մատուցման ընթացքում առանձնակի ուշադրությամբ ենք անդրադարձել Եգիպտոսի, Սիրիայի,

Լիբանանի, Իրաքի և արաբական այլ երկրների նոր ու նորագույն պատմության առանցքային հարցերին, ներառել ենք ժամանակակից արաբագիտության հիմնական դրույթները, ինչպես նաև գիտական շրջանակներում արծարծվող բազում թեմաները:

Արաբական երկրների պատմության տեսական խնդիրների իմաստավորումը թույլ է տալիս ոչ միայն խորությամբ ուսումնասիրել փաստագրական նյութը, այլև հասկանալ պատմության օրինաչափություններն ընդհանրապես, ներկայացնել սոցիալ-տնտեսական, քաղաքական իրադարձությունների և երևույթների փոխկապակցվածությունն ու փոխպայմանավորվածությունը: **Անցյալը շատ դեպքերում իր որոշիչ հետքն է թողել և շարունակում է մեծապես ազդել արաբական երկրներում ստեղծված ներկայիս իրավիճակի վրա**:

Դասագիրքը նպատակ ունի նաև ներկայացնելու ուսանողներին արաբական երկրների պատմական զարգացման ընդհանուր օրինաչափությունները, հիմնական փուլերը, տարբեր միտումներն ու առանձնահատկությունները, որոնք առարկայի և ուսուցման գործընթացի անփոխարինելի ու անհրաժեշտ բաղադրիչներն են:

ԲԱԺԻՆ I
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(17-րդ դարակեսից մինչև 1918 թվականը)

Արաբական երկրների նոր պատմությունը ընդգրկում է մի ժամանակաշրջան, երբ հաստատվում և զարգանում էին կապիտալիստական հարաբերությունները: Արաբական երկրների տեսանկյունից այդ դարաշրջանը բնութագրվում էր եվրոպական տերությունների կողմից դրանք գաղութների և կիսագաղութների վերածելու համար մղված պայքարով և Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման զարթոնքով:

Որպես նոր պատմության սկզբնական բնագիծ՝ պաշտոնական պատմագրության մեջ պայմանականորեն ընդունված է 17-րդ դարի կեսը, երբ անգլիական հեղափոխության միջոցով Եվրոպան ազատագրվեց ֆեոդալիզմի կապանքներից՝ ճանապարհ հարթելով կապիտալիզմի սրընթաց զարգացման և, որպես դրա հետևանք, եվրոպական տերությունների գաղութային ակտիվ քաղաքականության ծավալման համար: Սակայն այն ժամանակ, երբ Եվրոպան թոթափվում էր միջնադարյան հետամնացությունից, արաբական աշխարհը տնքում էր Օսմանյան կայսրության դաժան ու հետադիմական լծի տակ:

Արաբական երկրների նոր պատմության վերջնական տարեթիվը 1918 թվականն է, երբ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը սկիզբ դրեց չորս դար տևած Օսմանյան տիրապետության կործանմանը և փակեց արաբական երկրների պատմության թերևս ամենամռայլ էջը՝ նրանց համար բացելով ազգային անկախության նվաճման և ինքնուրույն պետությունների ստեղծման պատմական փուլը:

ԳԼՈՒԽ Ա

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

1. Արաբական երկրների վարչատարածքային բաժանումը, պետական համակարգն ու սոցիալ-տնտեսական վիճակը

13-րդ դարավերջին Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում հիմնված Օսմանյան (Էմիր Օսմանի կողմից) թուրքական փոքր իշխանությունը աստիճանաբար ընդարձակվեց և գրավելով Բյուզանդական տարածքները, իսկ 1453 թ.՝ նրա մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, Անատոլիայի մնացած մասն ու Բալկանները՝ վերածվեց ընդարձակ կայսրության:

Իր նվաճողական ծրագրերի իրականացման ընթացքում Օսմանյան կայսրությունն առաջնակարգ տեղ էր հատկացնում արաբական երկրներին: 16-րդ դարասկզբին սուլթան Սելիմ Յավուզի (Ահեղի) հորդաները ներխուժեցին Արաբական Արևելք: 1516 թ. նրանք նվաճեցին Հյուսիսային Իրաքը և շարժվեցին դեպի Սիրիա: 1516 թ. օգոստոսի 24-ին Հալեպից հյուսիս՝ Մարջ Դաբիքի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում թուրքերը պարտության մատնեցին մամլուքներին և իրենց տիրապետությունը հաստատեցին Սիրիայում:

1517 թ. նույն բախտին արժանացան Եգիպտոսն ու Հիջազը: Օսմանյան սուլթան Սելիմ I-ի զորքերը Եգիպտոս ներխուժեցին 1517 թ. հունվարին և նույն ամսվա 22-ին Կահիրեի մատույցներում տեղի ունեցած գլխավոր ճակատամարտում գլխովին ջախջախեցին մամ-

լուքների բանակը, իսկ նրանց առաջնորդ Թուման բեյին կախաղան հանեցին: Եգիպտոսի անկումից հետո օսմանյան սուլթանին իր հպատակությունը հայտնեց Հիջազը, որտեղ գտնվում էին մահմեդական աշխարհի երկու կարևոր սրբակենտրոնները՝ Մեքքա և Մեդինա քաղաքներով: Շուտով Օսմանյան կայսրությունն իր տիրապետությունը տարածեց ամբողջ Պաղեստինի, Հորդանանի և Լիբանանի վրա: 1516-1538 թթ. ընթացքում թուրքական զորքերին հաջողվեց պարսիկներին դուրս մղել Իրաքից և այն միացնել Օսմանյան կայսրությանը[1]:

1518 թ. թուրք ծովահեն Խայր ադ-Դինը գրավեց Ալժիրը: 1534 թ. թուրքական ենիչերիների[2] բանակը գրավեց Թունիսը, իսկ հաջորդ 20 տարիների ընթացքում նաև Քուվեյթը, Բահրեյնն ու Եմենը:

Արաբական երկրներից թուրքերին չհաջողվեց ծնկի բերել միայն Մարոկկոն, ինչպես նաև Արաբական թերակղզու կենտրոնական և արևելյան մասերը՝ Նեջդն ու Օմանը: Ինչ վերաբերում է Եմենին, որտեղ ապաստան էին գտել Իրաքից և Բահրեյնից շիա մեծ թվով փախստականներ, 1633-1870 թվականներին այն պահպանեց իմամատի անկախ կարգավիճակը:

Օսմանյան կայսրության արաբախոս մյուս բոլոր մասերում մինչև 19-րդ դարը հաստատվեց թուրքական իշխանությունը: Թուրքերը, որ գտնվում էին զարգացման անհամեմատ ցածր մակարդակում, քան իրենց ենթակա արաբ ժողովուրդը, գրված արաբական շրջաններում հաստատեցին ռազմաֆեոդալական հետադիմական վարչաձև՝ ծանր հարված հասցնելով տեղի բնակչության տնտեսական և մշակութային զարգացմանը: Նվաճումից հետո

---

[1] Իրաքը դեռևս 1508 թ. գրավել էր Սեֆյան Պարսկաստանը:

[2] Թուրքերեն «ենիչերի» նշանակում է «նոր ուժ», որ 14-րդ դարում ստեղծված արտոնյալ հետևակային միավորում էր: Այն կազմված էր հիմնականում քրիստոնյա երիտասարդներից, որոնք հարկադրաբար մահմեդականացվել էին և բացառիկ զինվորական վարժեցում էին անցել: Յենիչերները մոլեռանդորեն ծառայում էին թուրքական սուլթաններին և համարվում էին նրանց իշխանության հենարանը:

արաբական երկրները վերածվելով Օսմանյան կայսրության ծայրագավառների՝ ամբողջությամբ ենթարկվեցին սուլթանների անսահմանափակ իշխանությանը: Թուրքերը գրաված արաբական երկրներում ձեռնամուխ եղան նոր վարչատարածքային բաժանմանն ու կառավարման համակարգի ստեղծմանը:

Սիրիայի[3] բաժանման հիմքում դրվեց փաշալիկի (էալեթի)՝ նահանգի սկզբունքը: Սկզբնական շրջանում Սիրիան բաժանվեց երեք էալեթների՝ Դամասկոսի[4], Հալեպի, Տրիպոլիի, որոնք, 1864 թ., այսպես կոչված, «Վիլայեթի օրենքի» (թուրք. Թեշքիլե Վիլայեթ Նիզամնամեսի) համաձայն վերափոխվեցին վիլայեթների: 1660 թ. ստեղծվեց Սաֆադի էալեթը, որը վերանվանվեց Սայդայի, այնուհետև՝ 1888 թ.՝ Բեյրութի վիլայեթի, որոնք իրենց հերթին բաժանվեցին մարզերի՝ սանջաքների (արաբ. լիվա): Նոր Դամասկոսի վիլայեթը բաղկացած էր տասը, Հալեպը՝ ինը, իսկ Տրիպոլին՝ չորս սանջաքներից: Երուսաղեմ քաղաքը վերածվեց հատուկ սանջաքի: Արաբիան՝ Հիջազի և Եմենի, իսկ Եգիպտոսը, Տրիպոլին (Լիբիա), Թունիսը և Ալժիրը դարձան առանձին փաշալիկություններ: Ինչ վերաբերում է Լիբանանին, ապա նրան Բարձր դռան կողմից շնորհվել էր ինքնավար էմիրության կարգավիճակ[5]: Վիլայեթները ղեկավարում էին փաշաները կամ բեյերը:

Էալեթների կառավարիչները կոչվում էին *փաշաներ* կամ *բեյլերբեյեր*, որոնց ենթարկվում էին հարկահավաքը՝ *մուհասիլը*, դատավորը՝ *կադին, մուֆթին,* ինչպես նաև ոչ ուղղակիորեն փաշայի հրամանատարության ներքո գտնվող զինվորական հրամանա-

---

[3] Պատմաաշխարհագրական Սիրիան՝ Ասորիքը կամ Բիլադ ալ-Շամը, ընդգրկում էր ժամանակակից Լիբանանի, Հորդանանի, Իսրայելի և Պաղեստինի տարածքները:

[4] Էալեթ ալ-Շամ, որն էլ 1865 թ. դարձավ Սիրիայի վիլայեթ:

[5] Ֆախր ադ-Դին 1-ին, ծնկի գալով օսմանյան սուլթանի առջև, համբուրել է գետինը, փառաբանել թուրք միապետին և իր հպատակությունը հայտնել նրան: Դրանից հետո սուլթանը Լիբանանին շնորհել է ինքնավար էմիրության կարգավիճակ և էմիր ճանաչել Ֆախր ադ-Դինին՝ երկրում կառավարող կարգելով Մաաների դինաստիան (1516-1697):

տարները՝ *սիրդարն* ու *դիզդարը*, որոնք ավելի շուտ Բարձր դռան կողմից կայսրության նահանգների վրա վերահսկողության ու ազդեցություն պահպանելու միջոց էին:

Եգիպտոսը դեռևս 1525 թ. հաստատված օրենսգրքով համարվում էր մի ամբողջական փաշալիկություն, որտեղ իշխում էր օսմանյան սուլթանի կողմից նշանակվող փաշան՝ *վալին*, որի ենթակայության տակ էին գտնվում վարչական, քաղաքացիական և ռազմական բոլոր մարմիններն ու պաշտոնյաները: Եգիպտոսը բաժանվեց 12 սանջաքների, որոնք ղեկավարում էին *հաքիմները*՝ հիմնականում մամլուք բեյերը: Նրանք թեև ենթակա էին թուրքական վալիին, սակայն իրականում օժտված էին լայն իշխանությամբ:

Իրաքում կազմավորվեցին երեք էալեթներ (վիլայեթներ)՝ Մոսուլի, Բաղդադի և Բասրայի[6], իսկ Հիջազի կառավարիչը՝ Շարիֆը,[7] ուղղակիորեն ենթարկվում էր օսմանյան սուլթանին:

Ինչքան երկիրը ծայրամասային և դժվար հասանելի էր Բարձր դռանը, այնքան լայն ինքնավարություն էր վայելում: Օրինակ՝ Ալժիրը, Թունիսը և Լիբիան, գտնվելով օսմանյան իշխանության ներքո, իրականում անկախ տիրույթներ էին: Հարկերը ժամանակին վճարելու դեպքում, նրանք միանգամայն ինքնուրույն էին կարգավորում իրենց ներքին հարցերը:

Օսմանյան կայսրությունում *սուլթանը* կամ *փադիշահը* երկրի ղեկավարն էր: Նա ռազմական և քաղաքացիական անսահմանափակ իշխանություն ուներ: 16-րդ դարում սուլթանը դարձավ նաև

---

[6] 1864 թ. Էալեթների վարչական բաժանումը փոխարինվեց վիլայեթների:

[7] Շարիֆ (արաբ. ազնվական) են կոչվել Մեքքայի շարիֆայության ղեկավարները, որոնք համարվում էին սրբազան երկու քաղաքների՝ Մեքքայի և Մեդինայի պահապանները: Շարիֆները Մուհամմեդ մարգարեի դուստր Ֆաթիմայի կրտսեր որդի Հասան իբն Ալիի ուղիղ ժառանգներն էին: Օսմանյան տիրապետության ժամանակ թուրքերը պահպանեցին Մեքքայի շարիֆայությունը մինչև 1916 թ. արաբական ապստամբությունը: 1925 թ. Հիջազը գրավելուց հետո Սաուդների ընտանիքը դարձավ մուսուլմանական աշխարհի համար ամենակարևոր այդ քաղաքների պահապանը:

խալիֆ՝ մահմեդականների հոգևոր առաջնորդը: Կայսրությունում երկրորդ կարևոր պաշտոնն էր համարվում *շեյխ ուլ-իսլամը*՝ մահմեդական հոգևորականների ղեկավարը: Վերջինիս ձեռքում էին կենտրոնացված երկրի արդարադատությունը, դատարանները, մադրասեները և մզկիթներին պատկանող ընդարձակ հողատարածքները: Դատավորները կոչվում էին *կադի*, ռազմական դատավորները՝ *կադի ասկարի*, իսլամական իրավունքի մեկնաբանողները՝ *մուֆթի*, ենթարկվում էին *շեյխ ուլ-իսլամին*: Կայսրության բոլոր կենտրոններում տեղական հոգևորականությունը գտնվում էր *մուֆթի*ների ենթակայության տակ:

Կայսրության կենտրոնական կառավարությունը կոչվում էր Բարձր դուռ՝ *Բաբ ել-Ալի*, որի գլուխ կանգնած առաջին նախարարը կամ Մեծ վեզիրը՝ *Սադրե Ազամ,* ղեկավարում էր ամբողջ պետական վարչակազմը: Մեծ վեզիրին մշտապես ուղեկցում էր *դեֆթերդարը*, որը հողի գրանցման ու ավատների բաժանման պատասխանատուն էր: Պետության համար ամենակարևոր հարցերով զբաղվում էր սուլթանը: Սակայն, հատուկ դեպքերում հրավիրվում էր խորհուրդը՝ *դիվանը*, որը կազմված էր ավագ գեներալներից, նախարարներից՝ վեզիրներից և այլ պաշտոնյաներից:

Բանակը չափազանց կարևոր դեր էր կատարում Օսմանյան ռազմաֆեոդալական կայսրության կյանքում: Այն հիմնված էր իշխանների՝ *սիպահ*ների վրա, որոնք պարտավոր էին բնակվել իրենց շրջանների սահմաններում: Սանջաքներում բնակվող սիպահները կազմում էին հեծելազոր, որով պատերազմական իրավիճակներում *սանջաք-բեյերի* գլխավորությամբ համալրում էին կայսրության բանակը:

Թուրքերի կողմից նվաճված արաբական մարզերը տարբերվում էին միմյանցից իրենց սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով: Նրանցից առավել զարգացածներում (Եգիպտոս, Լիբանան, Սիրիա, Պաղեստին) տիրապետում էր ֆեոդալական հասարակական կարգը, որի հիմքում ընկած էին ստրկացված վարձակալների՝ ֆելլահների (արաբ գյուղացիների) մանր և մանրագույն տնտեսությունները, որոնք անձնական կախման մեջ էին ֆեոդալներից:

Թուրքերը սուլթանի սեփականություն հայտարարեցին արաբական երկրների բոլոր հողերը՝ բացի վաքֆերից[8]: Այդ հողերի մի մասը թուրք ֆեոդալները դարձրել էին իրենց սեփական տիրույթները: Այսպես, 18-րդ դարում Եգիպտոսում հողերի երկու երրորդը գտնվում էր թուրքական մամլուքյան զորահրամանատարների՝ բեյերի տիրապետության տակ:

Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում հողերի մեծ մասը մնացել էր արաբ ֆեոդալների տիրապետության տակ: Ինչպես թուրք, այնպես էլ արաբ ֆեոդալները, ֆելլահներից մթերքով ու դրամով զանազան հարկեր էին վերցնում[9]:

Գյուղացիներից վերցրած դրամի և գյուղմթերքի նշանակալի մասը ֆեոդալները հանձնում էին փաշաներին: Իրենց հերթին այդ գումարների մի մասը փաշաները որպես տուրք մուծում էին սուլթանական գանձարան, իսկ մնացածը յուրացնում էին: Ֆելլահները գտնվում էին եռակի լծի տակ՝ սուլթանի, փաշաների և արաբ ֆեո-

---

[8] Արաբական երկրներում թուրքերի կողմից հաստատվել էր հողային տիրապետության և օգտագործման երեք ձև՝ հողի մասնավոր տիրապետություն՝ *մուլք,* մահմեդական հոգևորականության ու մզկիթների հովանավորության տակ գտնվող հողատարածքներ՝ *վաքֆ* և պետական՝ *խաս* կամ *միրի:*

[9] Հիմնական հարկերն էին *ուշրը* (տասնյակ) կամ *խառաջը,* որի չափը հաստատագրված չէր և տարբերվում էր ըստ հողատարածքի և բերքատվության: Կայսրության ոչ մահմեդական հպատակները հավելյալ վճարում էին հատուկ գլխահարկ՝ *ջիզյե* կամ *խառաջ ռա՝սի*:

դալների: Նման վիճակն առաջացնում էր գյուղացիության արդար դժգոհությունը՝ հանգեցնելով ապստամբությունների: Երբեմն դրանք գլխավորում էին առանձին ֆեոդալներ, որոնք չէին ցանկանում իրենց եկամուտներից բաժին հանել թուրք նվաճողներին: Սակայն շարժման հիմնական ուժը միշտ էլ կազմում էին նստակյաց գյուղացի ֆելլահները և քոչվոր բեդվինները:

Ավելի քիչ զարգացած մարզերում (Արաբիա, հարավային Իրաք, Ալժիր, Թունիս) տիրապետում էին ֆեոդալական-նահապետական հարաբերությունները, պահպանվել էին նաև նախնադարյան-համայնական կարգերի մնացորդներ: Քոչվոր անասնապահները և կիսանստակյաց, երկրագործությամբ զբաղվող բնակչությունը բաժանվում էին ցեղերի և տոհմային համայնքների, որոնց գլուխ կանգնած էին առաջնորդները՝ շեյխերը: Արոտավայրերը և մշակելի հողերը կազմում էին ցեղերի և տոհմային երկրագործական համայնքների կոլեկտիվ սեփականությունը: Պատկերն այլ էր հյուսիսային Իրաքում, որը բնակեցված էր գլխավորապես քրդերով, իսկ հողային հիմնական ֆոնդը կենտրոնացված էր բեկերի ձեռքում:

Արաբ գյուղացիների առանց այդ էլ ծանր վիճակի վրա, 16-17-րդ դարերից սկսած, հավելյալ բեռ դարձավ իլթիզամի համակարգի կիրառումը: Ըստ այդ կարգի՝ հարկերի գանձումը կապալով, վարձակալությամբ տրվում էր անհատին, և նրանից ստացվող եկամուտը բաժանվում էր գանձարանի *ու իլթիզամ*ը հավաքող *մուլթազիմ*ի (կալվածատեր-կապալառու) միջև: Վերջիններիս գործադրած բռնություններն ու կամայականությունները մեծապես նպաստում էին գյուղերի անկմանը: Գյուղացիները զանգվածաբար լքում էին բնակավայրերը և փախչում քաղաքներ, որի հետևանքով նվազում էր գյուղերի թիվը, ինչն իր հերթին հանգեցնում էր գյուղացու՝ հիմնական արտադրողի քայքայմանը: Այս ամենի արդյունքում արա-

բական երկրները հայտնվեցին աղքատության և հետընթացի եզրին: 18-րդ դարավերջին Եգիպտոսը հազիվ էր կարողանում արտադրել անտիկ դարաշրջանում թողարկված գյուղատնտեսական արտադրանքի մեկ քառորդ մասը: Սիրիայում և Իրաքում մշակության համար պիտանի շատ հողեր լքվել էին և դարձել ամայի:

2. Արաբական երկրները Աբդուլ Համիդ 2-րդի իշխանության տարիներին

Ղրիմի պատերազմից հետո Օսմանյան կայսրությունը հայտնվել էր խորը տնտեսական ճգնաժամի մեջ: Պատերազմի ընթացքում օսմանյան կառավարությունը ստիպված եղավ վերցնել իր առաջին օտարերկրյա վարկը: Վերջինս, տնտեսական անհեռատես քաղաքականության, պետական մեքենայի անարդյունավետ ղեկավարման ու գործունեության հետևանքով աստիճանաբար աճեց: Այսպես՝ միայն Աբդուլ Ազիզ սուլթանի օրոք (1861–1876) երկրի արտաքին պարտքը 4 մլն ֆունտ ստերլինգից հասավ 200 մլնի: Պետության մենաշնորհը հանդիսացող մի շարք հարկերի (աղի, թութունի և այլն) բարձրացումը, պետական ունեցվածքի գրավադրությունը, միևնույնն է, բավարար չէր ոչ միայն հսկայական պարտքը, այլև վարկի տոկոսները մարելու համար: Բարձր դուռը հարկադրված էր նորանոր վարկեր վերցնել՝ էլ ավելի խորացնելով ճգնաժամը: 1873 թ. ահավոր երաշտը, մեծ վնասներ հասցնելով երկրի գյուղատնտեսությանը, էլ ավելի վատթարացրեց կայսրության տնտեսական վիճակը: Ի վերջո, 1875 թ. հոկտեմբերի 6-ին, Բարձր դուռն իրեն անվճարունակ հայտարարեց: Ինչ վերաբերում է վարկային պարտավորություններին, ապա կառավարությունը հայտարարեց նաև, որ այսուհետ կանխիկով կվճարի նրանց միայն կե-

սը, իսկ մյուս կեսը՝ պարտատոմսերով: Օսմանյան կառավարության վերոհիշյալ քայլը մեծապես նվազեցրեց երկրի ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական հեղինակությունն արտասահմանում՝ մասնավորապես եվրոպական տերությունների շրջանում:

Ծայրաստիճան սրվել էր իրավիճակը նաև կայսրության ներսում, որտեղ զանգվածային բազմաթիվ ցույցեր էին տեղի ունենում: 1876 թ. մայիսին ժողովրդական ցույցեր հրահրվեցին մայրաքաղաք Կ.Պոլսում, իսկ մայիսի 29-ին իրականացված հեղաշրջումից հետո սուլթան Աբդուլ Ազիզին փոխարինեց նրա եղբայրը՝ Մուրադ 5-րդը: Վերջինս բարձր մտավոր ներուժի տեր, կրթված ու խելացի անձնավորություն էր: Սակայն, կայսրության առաջադեմ լիբերալ ուժերի հետ ունեցած կապերի համար, արժանացել էր եղբոր անվստահությանը և, փաստորեն, գտնվում էր մեկուսացված վիճակում: Նրա անընդմեջ հարբեցողությունը մտավոր խանգարվածության և լուրջ հիվանդության պատճառ էին դարձել, ինչն էլ նրան զրկեց կայսրության ղեկից: Իսկ ահա նրանց մեկ այլ եղբայրը՝ Աբդուլ Համիդ 2-րդը, սուլթանական գահ բարձրացավ նույն տարվա օգոստոսի 31-ին[10]:

Այստեղ հարկ է նշել, որ մայիսյան հեղաշրջման ակտիվ մասնակիցներն ու իրականացնողներն էին թուրքական բանակի սպաները, որոնք իրենց կոչում էին «Ենի օսմանլար» (Նոր օսմաններ): Հիասթափված թանզիմաթի արդյունքներից, նրանք առաջ քաշեցին իրենց սեփական ծրագիրը, որը համառոտակի հանգում էր հետևյալ կետերին՝ ազգային կապիտալիզմի զարգացում, սահմանադրական և խորհրդարանական համակարգի ստեղծում, բուրժուական նոր մշակույթի զարգացում և միջնադարյան հետամնաց թուրքական սովորույթների ու սոցիալական երևույթների մերժում:

[10] Лорд Кинросс, Расцвет и упадок Османской империи. Часть VII, Последний султан Москва, 1999, с. 579-658.

Սկզբնական շրջանում «Նոր օսմանների» գործունեությունը սահմանափակվում էր մշակութային գործունեությամբ, ավելի ուշ՝ 1865 թ., նրանք հիմնեցին քաղաքական գաղտնի կազմակերպություն: «Մեկ օսմանյան ազգության» ստեղծման ջատագովները մերժում էին այլ ազգությունների ինքնորոշման, ազգային խնդիրներն առաջ քաշելու իրավունքները: Կտրված լինելով կայսրության բնակչության լայն զանգվածներից՝ քաղաքական գործիչների նոր սերունդը հանձինս՝ Իբրահիմ Շենասիի և Զիյա փաշայի, պալատական հեղաշրջման կողմնակիցներ էին: Նրանց առաջին փորձն այդ ուղղությամբ 1867 թ. ավարտվեց անհաջողությամբ: Նրանցից շատերը ձերբակալվեցին, իսկ ոմանց էլ հաջողվեց փախչել արտասահման:

Միդհաթ փաշան, որն Իրաքի կառավարիչն էր 1869-1871 թթ., սերտորեն կապված էր «Նոր օսմանների» հետ: Նա 1872 թ. նշանակվեց Մեծ վեզիր, սակայն շատ շուտով հրաժարական տվեց սուլթանի հետ ունեցած իր տարաձայնությունների պատճառով: 1876 թ. մայիսին նա ակտիվ դերակատարություն ունեցավ հեղաշրջման գործում և, սուլթան Աբդուլ Համիդի իշխանության գալուց հետո, կրկին նշանակվեց Մեծ վեզիրի պաշտոնում: Սակայն Միդհաթ փաշայի հիմնական առաքելությունը կայացավ նրանում, որ սուլթանը նրան վստահեց նոր սահմանադրության կազմումը: Օսմանյան պատմության մեջ առաջին նման փաստաթղթի կազմումն ու ընդունումը պատմական մեծ նշանակություն ունեցան ոչ միայն երկրի, այլև այնտեղ բնակվող բոլոր ժողովուրդների համար: Նոր սահմանադրությունը թեև պահպանում էր սուլթանի հիմնական լիազորությունները (պատերազմ հայտարարելու, խաղաղություն կնքելու, նախարարներ նշանակելու, խորհրդարանը ցրելու, քաղաքականապես անվստահելի անձանց առանց դատի աքսորելու և այլն), այնուամենայնիվ նախատեսում էր երկպալատ խորհրդ-

դարանի ստեղծում, իսկ սուլթանին հպատակ բոլոր քաղաքացիներն, անկախ ազգային կամ կրոնական պատկանելությունից, ստանում ու կրում էին հավասար իրավունքներ և պարտավորություններ: Թուրքերենը, ըստ սահմանադրության, հռչակվեց երկրի պետական լեզու, իսկ իսլամը՝ պաշտոնական կրոն:

Սահմանադրության հռչակումը զուգադիպեց Կ. Պոլսում դեկտեմբերի 23-ին գումարված Թուրքիայի Բալկանյան նահանգներում բարեփոխումների կապակցությամբ հրավիրված Միջազգային համաժողովի հետ: Նոր սահմանադրության ընդունումը ողջունեցին կայսրության մյուս ժողովուրդները՝ արաբները, հայերը, հույները, որոնք հույս ունեին ժողովրդավարական պայմաններում բարձրացնել իրենց հուզող հարցերը և իրենց նկատմամբ իրականացվող բազմաթիվ անօրինականությունների մասին տեղեկացնել կենտրոնական իշխանությանը: Սակայն նրանց հույսերը չարդարացան. խորհրդարանը շատ շուտով փակվեց, իսկ Օսմանյան կայսրությունում հաստատվեց արտակարգ դաժան վարչակարգ, որը ստացավ «զուլում» անունը: Ինքը՝ Աբդուլ Համիդ 2-րդը, իր ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ գործած բազում ոճրագործությունների համար կոչվեց Կարմիր կամ Արյունոտ սուլթան: Սուլթանը մշտական վախ ուներ արաբների ազատագրական ձգտումներից, անխնա ճնշում էր նման միտումների ամենափոքր դրսևորումներն անգամ, բանտ (զնդան) էր նետում բոլոր, ազատախոհներին: Խիստ հալածանքի էր ենթարկվում արաբերեն լեզուն, պաշտոնական հիմնարկներում, դատարաններում, բանակում, դպրոցներում և մշակույթի բոլոր ոլորտներում տիրապետող էր թուրքերենը: Թերթերը, գրականությունը ենթակա էին խստագույն գրաքննության:

Առաջինը թուրքական վարչակարգի դեմ պայքարի մեջ մտան տակավին երիտասարդ և թույլ արաբական բուրժուազիան ու ազգային մտավորականությունը: Արաբական երկրներում՝ Սիրիայում,

Լիբանանում, Պաղեստինում և Իրաքում, ստեղծվեցին զանազան գաղտնի միություններ[11]: Առաջին գաղտնի արաբական քաղաքական միությունը հիմնվեց 1875 թ. Սիրիայում: 1880 թ. դեկտեմբերի 31-ին տարածված թռուցիկներից մեկում շարադրված էին միության հիմնական խնդիրները՝ անկախություն տալ Սիրիային և Լիբանանին, արաբերենը ճանաչել պաշտոնական լեզու, վերացնել գրաքննությունը և այլն: 90-ական թվականներին մեծ եռանդով էր գործում մեկ այլ գաղտնի միություն՝ «Արաբ ազգի իրավունքների պաշտպանության կոմիտեն»: Նման միություններ էին գործում նաև Դամասկոսում, Բեյրութում, Բաղդադում, Բասրայում, ինչպես նաև վտարանդի արաբների շրջանում: Վերջիններից պետք է նշել Նյու-Յորքում 1900 թ. ձևավորված «Երիտասարդ Սիրիա» և 1904 թ. Փարիզում կազմակերպված «Արաբական հայրենիքի լիգա» ընկերությունները: «Արաբական հայրենիքի լիգայի» հիմնադիրն էր Նաջիբ Ազուրին, ով առաջ քաշեց «Արաբական երկրները՝ արաբներին» լոզունգը: Նաջիբ Ազուրին գտնում էր, որ զուլումի լծից ազատագրվելու համար պետք է միավորվեն և միասնական ճակատով հանդես գան արաբները, քրդերը, հայերը, հույները և մյուս ոչ թուրք ժողովուրդները: Նա մեծ համակրանքով էր վերաբերվում արևմտահայերի ազատագրական պայքարին՝ բարձր գնահատելով բարոյական այն աջակցությունը, որ հայերը ցուցաբերում էին արաբների ազատագրական ձգտումների նկատմամբ: Հայտնի հայ

[11] Արաբական ազգայնականության և արաբականության (արաբիզմ) վերաբերյալ տե՛ս Нации и национализм на мусульманском Востоке. Отв. редакторы В. Я. Белокреницкий, Н.Ю. Ульченко. Институт Востоковедения, РАН, Москва, 2016, Левин З. И., Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, Москва, 1972, Dawn, C. Ernest. From Ottomanism to Arabism: Essays on the Origins of Arab Nationalism. Urban, Chicago and London: University of Illinois Press, 1973, Antonius, George. The Arab Awakening. London. 1938, Tibi, Bassam. Arab Nationalism. A Critical Inquiry. Palgrave Macmillan, London, 1990, Hourani, Albert. Arabic Thought in the Liberal Age. London, 1962, Haim, G. Sylvia. Arab Nationalism: An Anthology. University of California

հասարակական գործիչ Մինաս Չերազին 1905 թ. գրված իր մի նամակում, շնորհակալություն հայտնելով հայերին այն խանդավառության համար, որով նրանք դիմավորեցին արաբների հայրենիքի զարթոնքը, Նաջիբ Ազուրին ընդգծում է. «Քաջաբար առաջարկելով ամբողջ ուժով օժանդակելու արաբներին թուրքական պետության դեմ, մյուս կուսակցություններից առաջ հայերը մի անգամ ևս ցույց տվեցին, որ գիտակցում են մեր ընդհանուր շահերը... Պետք է ճանաչենք և հասկանանք իրար և պետք է միանանք հարձակվելու համար ընդհանուր թշնամու վրա... Հայերն արդեն միացել են մեզ»[12]:

Զինված ելույթներ տեղի ունեցան 1886, 1896 և 1906 թթ., երբ ապստամբեցին Ջեբել Դրուզի (Սիրիա) գյուղացիները: 1895 թ. ոտքի ելան Հալեպի, իսկ 1903 թ.՝ Բեյրութի բնակիչները՝ գլխավորապես արհեստավորները և վաճառականները: Թուրքերը դաժանաբար ճնշեցին այդ ելույթները: 90-ական թվականներին, ուշքի գալով Արաբիի ապստամբությունից հետո, զգալի աշխուժություն նկատվեց նաև Եգիպտոսի հասարակական-քաղաքական կյանքում: Դրանում շատ մեծ էր Մուստաֆա Քամիլի դերը: Նա հանդես էր գալիս անգլիական տիրապետության դեմ, պայքարում Եգիպտոսի անկախության համար և ձգտում էր դրան հասնել՝ օգտագործելով անգլո-ֆրանսիական հակասությունները և քարոզելով ազգային գաղափարները: 1907 թ. նա հիմնեց «Հիզլ ալ-Վաթան» կուսակցությունը: 20-րդ դարի սկզբին Եգիպտոսում ձևավորվեցին նաև քաղաքական այլ կուսակցություններ, ինչպես նաև առաջին բանվորական արհմիությունները: Եգիպտոսի տարբեր վայրերում տեղի էին ունենում բախումներ տեղական բնակչության և անգլիացիների միջև: Այսպես, օրինակ, 1906 թ. հունիսի 13-ին Նեղոսի գետաբե-

---

Press, 1974, Dawisha, Adeed. Arab Nationalism in the Twentieth Century: From Triumph to Despair. Princeton, 2016:

ռանում գտնվող Դենշավայի գյուղացիները դիմադրեցին անգլիական սպաների խժդժություններին, որի ժամանակ վիրավորվեցին մի քանի գյուղացիներ:

Արաբական երկրներում մեծ դժգոհություն էր հարուցում եվրոպական կապիտալի դիրքերի ամրապնդումը: 20-րդ դարի սկզբին Ֆրանսիան իր ձեռքում էր կենտրոնացրել Սիրիայի և Լիբանանի մետաքսի արտադրությունը: Իսկ անգլիական կապիտալն իր հիմնական գործունեությունը Եգիպտոսից հետո կենտրոնացրել էր Իրաքում, որը գյուղատնտեսական հումք և մթերքներ էր մատակարարում Անգլիային: Տարածաշրջանում իր գործունեությունն աշխուժացրեց նաև Գերմանիան, որը Մերձավոր և Միջին Արևելք թափանցելու համար որպես հզոր լծակ օգտագործեց Բեռլին-Բոսֆոր-Բաղդադ-Բասրա երկաթգծի շինարարությունը:

Աբդուլ Համիդի իշխանության ժամանակ մեծ տերությունները, օգտագործելով ազգային փոքրամասնությունների խնդիրը՝ մարոնի քրիստոնյաների, հույների, հայերի և այլոց իրավունքները պաշտպանելու պատճառաբանությամբ, սկսեցին առավել ակտիվորեն միջամտել կայսրության ներքին գործերին և սաստկացրին պայքարը՝ իրենց դիրքերը կայսրության ներսում ամրապնդելու ուղղությամբ: Օգտագործելով մեծ տերությունների՝ հիմնականում Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի միջև եղած հակասությունները, Աբդուլ Համիդն աստիճանաբար թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական բնագավառներում նախապատվությունը սկսեց տալ Գերմանիայի հետ համագործակցությանը:

Եթե արևմտյան երկրներին հանգստացնելու նպատակով նա խոստացավ կայսրության քրիստոնյաների նկատմամբ որոշ բարեփոխումներ իրականացնել, որոնք խոստումներից այն կողմ այդպես էլ չանցան, ապա կայսրության հպատակ արաբներին նա

[12] Նաջարյան Ե. Հ., Արաբական ազգային-մշակութային զարթոնքը, Երևան, 1988,

փորձեց համախմբել կրոնական հենքի վրա՝ իրեն հռչակելով խալիֆ՝ բոլոր մահմեդականների հոգևոր առաջնորդ: Այսպիսով, սուլթանը դարձավ «հավատացյալ սուլթան», կայսերական ապարանքներում արգելվեց ոգելից խմիչքների օգտագործումը, նրան սկսեցին ամենուրեք ուղեկցել կրոնական գործիչներ, բացվեցին մահմեդական նոր վարժարաններ-մեդրեսեներ: Արաբներին սիրաշահելու նպատակով նա իր անձնական քարտուղար նշանակեց սիրիացի Իզզաթ Փաշային, իսկ շատ արաբների կառավարական բարձր պաշտոններ տվեց: Սուլթանի հատուկ որոշմամբ նախատեսվում էր ապագայում իր թիկնապահական գնդերից մեկը կազմել ամբողջությամբ արաբներից: Հաշվի առնելով անձնական անվտանգության նկատմամբ Աբդուլ Համիդի պաթոլոգիական վախն ու հիվանդագին կասկածամտությունը՝ կարելի է պատկերացնել, թե վերոհիշյալ որոշումն ինչպիսի տպավորություն թողեց արաբների վրա: Սակայն սուլթանի ամենախելացի քայլը Հիջազի երկաթուղու նախաձեռնումն էր, որը պետք է ծառայեր երկու նպատակի՝ Դամասկոսից դեպի Մեքքա ուխտագնացների հոսքի շոշափելի ավելացում և Հիջազում ապստամբության հնարավոր բռնկման դեպքում արագ միջամտելու հնարավորության ընձեռում:

Պետք է արձանագրենք, որ Աբդուլ Համիդի քաղաքականությունը որոշակի հաջողության հասավ արաբական երկրներում այն առումով, որ, ասենք, նրա կառավարման 32 տարիների ընթացքում վարչակարգի դեմ ուղղված ընդամենը երկու միջադեպ արձանագրվեց: Առաջինը 1880 թ. պաստառներ հայտնվեցին Սիրիայի անկախության և արաբերենը որպես երկրի պետական լեզու ընդունելու պահանջներով: Սակայն երբ սուլթանի գործակալներին հաջողվեց ընկնել կազմակերպիչների հետքի վրա, բողոքի նման դրսևորումներ այլևս չկրկնվեցին: Եվ երկրորդը սիրիացի գրող Աբդ ալ—Ռահման Քավաքիբիի երկու գրքերի հրատարակումն էր, որոնցում

հալեպցի հայրենասերը կոչ էր անում պայքարել օսմանյան լծի դեմ և ծրագիր մշակել անկախության հասնելու համար: Սակայն Քավաքիբիի արձակը լուրջ արձագանք չունեցավ արաբական լայն զանգվածների մոտ:

Բացառությամբ Եմենի, որը լայն ինքնավարություն էր վայելում Աբդուլ Համիդի իշխանության օրոք, արաբական մյուս երկրներում ընդհանուր առմամբ տիրում էր հանգիստ իրավիճակ: Եվ պատահական չէր, որ համիդյան դաժան լուծը թոթափվեց ոչ թե Օսմանյան կայսրության հպատակ ազգերի՝ արաբների, հայերի և այլոց, այլ հենց նույն թուրքերի, ավելի ճիշտ, ինչպես իրենք էին իրենց անվանում՝ երիտթուրքերի միջոցով:

3. Սիրիան, Լիբանանը և Պաղեստինը 19-րդ դարում. Արաբական զարթոնքը (Ալ-Նահդա) ու Թանզիմաթը

Անգլո-ֆրանիսական մրցակցությունը Արաբական Արևելքի երկրներում տիրապետող դիրքեր նվաճելու համար, ինչպես նաև օսմանյան կենտրոնացված կառավարման համակարգի թուլացումը, 19-րդ դարի սկզբին ներքաղաքական անկայուն իրավիճակ էին ստեղծել Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում: Ստեղծված իրավիճակն իր հերթին նպաստեց իշխանության համար պայքարող տեղացի փաշաների ակտիվացմանը: Միջֆեոդալական արյունալի բախումներին զուգընթաց փաշաներն արագորեն գահ էին բարձրանում և նույն արագությամբ էլ գահավիժում:

Արաբական այս երեք երկրների վիճակն էլ ավելի վատթարացավ վահաբիների արշավանքների ժամանակ (1801-1810 թթ.), նրանք կողոպտում էին արաբական քաղաքներն ու գյուղերը՝

մշտապես վերահսկելով Մաանայից մինչև Հալեպ ընկած ամբողջ տարածքը:

Ստեղծված անտանելի պայմաններում արաբ բնակչությունը բարձրացրեց ապստամբության դրոշը: Նախ 1820 թ. ապստամբեցին Լիբանանի գյուղացիները, որոնք դաժանորեն պատժվեցին երկու տարի անց: 1825-1830 թթ. խոշոր հուզումներ տեղի ունեցան Դամասկոսում և Երուսաղեմում, իսկ 1830 թ.՝ Նաբլուսում:

Օգտվելով Սիրիայում, Պաղեստինում և Լիբանանում ստեղծված անկայուն իրավիճակից՝ Մուհամմադ Ալին 1831-1833 թթ. ընթացքում գրավեց այդ երկրները, որոնք Եգիպտոսի իշխանության տակ մնացին մինչև 1840 թվականը:

Շուրջ 9 տարի Սիրիայում հաստատվեց Մուհամմադ Ալիի որդի Իբրահիմ փաշայի իշխանությունը: Այդ տարիներն, իրավամբ, կարելի է համարել առաջընթացի և բարենորոգումների աննախադեպ ժամանակամիջոց Սիրիայի համար: Վերջինս նույնպես արթնացավ «դարերի քնից» և ձեռք բերեց զարգացման այնպիսի մակարդակ, ինչպիսին ուներ միայն Եգիպտոսը:

Տնտեսական բարեփոխումներն իրականացնելիս Իբրահիմն ակնառու հաջողությունների հասավ: Քննադատելով Եգիպտոսում իր հոր իրականացրած հողերի բռնագրավման քաղաքականությունը՝ նա հարկային ավելի մեղմ համակարգ հաստատեց Սիրիայում՝ հավաքված գումարների մեծ մասն ուղղելով բժշկական, գյուղատնտեսական, ինժեներական և երաժշտական դպրոցների ստեղծմանը: Կրոնական հարցերում Իբրահիմը նույնպես իր հորից ավելի իմաստուն գտնվեց: Օրինակ, օսմանյան իշխանությունների օրոք ոչ քրիստոնյա հպատակներն իրավունք չունեին կառավարական պաշտոն զբաղեցնելու, նրանք չէին կարող նաև տյուրբան (թուրքական գլխաձածկ) հագնել կամ ձիու վրա նստած հայտնվել հասարակական վայրերում: Իբրահիմը ոչ միայն վերջ դրեց խտրականութ-

յան այդ բոլոր դրսևորումներին, այլև մահմեդականներից, քրիստոնյաներից և հրեաներից բաղկացած վարչական խորհուրդ կազմեց: Նա խրախուսեց Եվրոպայի և Միացյալ Նահանգների միսիոներների մուտքն ու գործունեությունը երկրում: Արևմտյան միսիոներները հիմնադրեցին դպրոցներ ու կրթական հաստատություններ: Այս հիմքի վրա է, որ հետագայում բացվեց տարածաշրջանում առաջին ամերիկյան համալսարանը Բեյրութում:

Իբրահիմ փաշան նույնպես հիմնադրեց ազգային միջնակարգ դպրոցներ ու քոլեջներ (Դամասկոս, Հալեպ, Անտիոք), որտեղ արաբերեն լեզու և գրականություն էր դասավանդվում, ինչն օսմանյան տիրապետության ժամանակ գրեթե մոռացության էր մատնվել:

Ա. Արաբական ազգային-մշակութային զարթոնքը՝ «Ալ-Նահդան»

Իբրահիմ փաշայի կառավարման ընթացքում կատարված բարեփոխումները մեծապես նպաստեցին 19-րդ դարի 40-ական թթ. արաբական իրականության մեջ ազգային-մշակութային **«Ալ-Նահդա»** (Զարթոնք) կոչված շարժման ձևավորմանը:

1840 թ. հետո, երբ անգլիացիների քաղաքական խաղերի հետևանքով Իբրահիմը ստիպված եղավ լքելու երկիրը, թուրքերը փակեցին արաբական դպրոցներն ու քոլեջները, սակայն, վախենալով Արևմուտքի հակազդեցությունից, թույլատրեցին կաթոլիկ և բողոքական առաքելությունների գործունեությունը: Այս վերջին հանգամանքի շնորհիվ քրիստոնյա արաբների թիվն ու ազդեցությունը երկրում աստիճանաբար մեծացավ: Եթե քրիստոնյաներն օգտվում էին այդ առաքելությունների հովանավորած կրթական հաստատություններից, ապա արաբ մահմեդականներն ու դրուզները զրկված էին ժամանակակից արաբական դպրոցներ հաճախելու

իրավունքից: Դա էր թերևս պատճառը, որ քրիստոնյա արաբները մեծ դժվարությամբ արթնացրին բնակչության լայն զանգվածների ազգային ինքնագիտակցությունը, նրանք դարձան արաբական Ալ-Նահդայի դրոշակակիրները, որովհետև, ինչպես արդեն նշեցինք, միայն նրանք էին ի վիճակի ուսումնասիրելու արաբ գրականությունն ու պատմությունը: Ալ-Նահդայի հիմնական նպատակն արաբների հոգևոր-մշակութային արժեքների՝ լեզվի, գրականության, գիտության, պատմության հերոսական էջերի, ինչպես նաև արաբ հասարակությանը եվրոպական մշակույթին և առաջադեմ հասարակական-քաղաքական մտքին հաղորդակից դարձնելն ու արաբական իրականության մեջ իշխող հետամնացության և խավարամոլության դեմ անզիջում պայքար մղելն էր: Նահդայական շարժման նշանակալից դեմքերն էին **Նասիֆ Յազիջին** ու **Բուտրուս ալ-Բուսթանին**[13]:

Ն. Յազիջին ծնվել էր 1800 թ. լիբանանյան աղքատ ընտանիքում: Չունենալով կրթություն ստանալու համապատասխան միջոցներ՝ նա երկար տարիներ վանական գրադարաններում զբաղվեց ինքնուսուցմամբ՝ խորությամբ ուսումնասիրելով արաբական հին բնագրերը: Ծանոթանալով արաբական գրականության ամենահարուստ ընտրանուն՝ Յազիջին կարողացավ վեր հանել արաբական ժողովրդի փառավոր անցյալը: Իր ստեղծագործական գրչով՝ թե՛ բանաստեղծություններով և թե՛ հոդվածներով, նա դարձավ արաբական միասնության եռանդուն քարոզիչներից մեկը:

Բուտրուս ալ-Բուսթանին, որը նույնպես ծնվել էր Լիբանանում (1819 թ.), ի տարբերություն Յազիջիի, լավ կրթություն էր ստացել մարոնիական տարբեր հաստատություններում: Լեզվաբանական բացառիկ ընդունակություններով օժտված Բուսթանին բացի արա-

[13] Տե՛ս Sharabi, Hisham, Arab Intellectuals and the West: The Formative Years, 1875-1914. Baltimore, 1970:

բերենից տիրապետում էր 8 լեզուների, 21 տարեկանից սկսել էր դասավանդել Բեյրութի Էլի Սմիթի ամերիկյան առաքելությունում: Նա Յազիջիի հետ միասին մասնակցել է Ավետարանի արաբերեն թարգմանությանը, ինչպես նաև ձեռնամուխ է եղել արաբերեն լեզվի բառարանի և Արաբական հանրագիտարանի կազմման աշխատանքներին: 1860 թ. նա հիմնադրում է արաբական առաջին քաղաքական ամսագիրը Սիրիայում, որը քարոզում էր հանդուրժողականություն և փոխըմբռնում կրոնական տարբեր խմբերի միջև, ինչպես նաև կարևորում էր գիտության դերը լուսավորության հաստատման և ծայրահեղականության վերացման գործում[14]:

Ալ-Բուսթանիի և Յազիջիի ամենանշանակալի գործը եղավ 1847 թ. Բեյրութում Արաբական գիտական ընկերության հիմնումը, որին անդամագրվեց երկրի մահմեդական, քրիստոնյա և դրուզ համայնքների մտավորականության ընտրանին: Նահդայական շարժման երևելի դեմքերից էին նաև **Ամին Շմեյիլը, Միքայել Մշակկան, Խալիլ ալ-Խուրին** և ուրիշներ: Շարժման կարևոր կենտրոններում՝ Եգիպտոսում, Սիրիայում և Լիբանանում բացվեցին ազգային դպրոցներ, հրատարակվեցին թերթեր, հիմնվեցին գրադարաններ, ինչպես նաև բացվեց Կահիրեի օպերան:

Արաբական զարթոնքի մեջ կարևոր դերակատարություն ունեցան նաև հայազգի գործիչները ևս, ինչպես՝ **Հովհաննես (Ճոն) Վարդապետը, Իսկենդեր Աբգարիոսը, Ռըզգալլահ Հասսուն/եան, Ադիպ Իսհակը** և ուրիշներ[15]:

Նահդայական շարժման գաղափարական հենքի վրա հետագայում ծավալվեց արաբական ազգային-ազատագրական հզոր շարժումը:

---

[14] Jamal Mohammed Ahmed. Intelectual Origins of Egyptian Nationalism. London, Oxford University Press, 1960, pp. 81-88.

[15] Տե՛ս Ազէզեան Հուրի, Արաբական զարթօնքը եւ հայ գործիչները, Հալէպ, 2008, Hovhannisyan, Nikolay, Arab National-Cultural Renaissance-Nahda and the Contribution of Armenians.Yerevan, 2007:

1840 թ. Լիբանանում ավարտվեց նաև Բեշիր 2-րդի կառավարումը: Վերջինիս իշխանության օրոք աճել էր մարոնիների ազդեցությունը երկրում: Ժամանակին Բեշիրը ապստամբած դրուզ ֆեոդալներին պատկանող հողերի վրա բնակեցրել էր մարոնի քրիստոնյա գյուղացիներին: Լիբանանից նրա հեռանալուց հետո դրուզ ֆեոդալները սկսեցին վերադառնալ երկիր՝ իրենց կալվածքները վերադարձնելու ու նախկին իրավունքները վերականգնելու նպատակով: Իրադրությունը Լիբանանում գնալով սրվում էր, քանի որ մարոնիները լուրջ հակազդեցություն էին ցուցաբերում վերադարձող դրուզներին: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը նաև, որ մարոնիներին աջակցում էին ֆրանսիացիները, իսկ դրուզներին պաշտպանում էր Անգլիան, ապա հասկանալի կդառնա եվրոպական մեծ տերությունների ապակայունացնող դերը տարածաշրջանում: Ապստամբություններ և արյունալի բախումներ տեղի ունեցան մարոնի և դրուզ համայնքների միջև, ինչը գերտերությունները փորձեցին ծառայեցնել իրենց սեփական շահերին:

Ղրիմի պատերազմից և 1856 թ. «Հաթթը հյումայունի» (Սուլթանական գիր) հրապարակումից հետո հակաֆեոդալական շարժումը Սիրիայում և Լիբանանում նոր թափ ստացավ: 1858 թ. հյուսիսային Լիբանանի գյուղացիներն ապստամբեցին մարոնի շեյխերի դեմ: Ֆրանսիան այդ դեպքերն օգտագործեց որպես պատրվակ ներխուժման համար: 1860 թ. ոչ առանց ֆրանսիացիների հրահրման Դամասկոսում տեղի ունեցան ընդհարումներ մարոնիների և դրուզների միջև: Եվ չնայած այն հանգամանքին, որ օսմանյան կառավարությունը քայլեր ձեռնարկեց դրուզների և մարոնիների միջև թշնամանքը վերացնելու ուղղությամբ, այնուամենայնիվ, Նապոլեոն 3-ը իր զորքերը մտցրեց Սիրիա և Լիբանան[16]: Սակայն շատ շուտով ֆրանսիական զորքերը դուրս բերվեցին, և 1861 թ.

հունիսի 9-ին Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան, Ավստրիան, Պրուսիան և Թուրքիան ստորագրեցին համաձայնագիր «Լիբանանի օրգանական կարգավիճակի» վերաբերյալ[17]: Այդ փաստաթղթի համաձայն՝ Լիբանանը դառնում էր Օսմանյան կայսրության ինքնավար մարզ, որի կառավարումը պետք է ստանձներ Բարձր դռան նշանակած քրիստոնյա փոխանորդ-նահանգապետը՝ մութասառիֆը, որին կից ստեղծվում էր 12 հոգանոց խորհրդակցական մարմին՝ վարչական խորհուրդ, իսկ այդ մարմնում նախատեսվում էր ընդգրկել մարզի հիմնական կրոնական 6 համայնքների երկուական ներկայացուցիչ՝ մարոնիներից, դրուզներից, սուննիներից, շիաներից, ուղղափառներից և հույն կաթոլիկներից: Լիբանանն իրավունք ստացավ կազմելու իր սեփական ոստիկանությունը, դատարանները և այլն, պարտավորվեց նաև ամենամյա տուրք վճարել օսմանյան սուլթանին:

Բ. Լիբանանը, Սիրիան և Պաղեստինը Թանզիմաթի ժամանակաշրջանում (1839-1876 թթ.)

1840 թ. Բրիտանական ներխուժման և Մուհամմադ Ալիի անձնատուր լինելուց հետո սկիզբ առավ եվրոպական տերությունների կողմից արաբական երկրների տնտեսական գաղութացման գործընթացը:

1838 թ. անգլո-թուրքական առևտրական համաձայնագիրն արաբական շուկաների դռները լայնորեն բացեց բրիտանական և այլ երկրների ապրանքների համար: Միայն 1840-1850 թթ. բրիտանական արտադրանքի ներմուծումն Օսմանյան կայսրություն աճեց

---

[16] Տարածաշրջանում Ֆրանսիայի քաղաքականության մասին տե՛ս Панченкова М. Т., Политика Франции на Ближнем Востоке и сирийская экспедиция 1860-1861 гг., Москва, 1964:

[17] Lutsky, V. Modern History of the Arab Countries, Moscow, 1969, pp. 137-138.

շուրջ 3 անգամ: Եվրոպական ապրանքատեսակների հոսքը հանգեցրեց արդյունաբերական հին կենտրոնների անկմանը և տեղական արդյունաբերության ու արհեստների ոչնչացմանը:

Արաբական երկրները մուտք գործեցին համաշխարհային շուկա որպես Եվրոպական արդյունաբերության համար գյուղատնտեսական և հումքային կցորդներ: Տնտեսական հարաբերությունները հիմնված էին անհավասար փոխանակման վրա, ինչն արդյունաբերական կապիտալի՝ արաբական երկրների շահագործման վառ ապացույցն էր: Օտարերկրյա կապիտալի ներթափանցման ոլորտն առևտրով չէր սահմանափակվում: Աստիճանաբար Եվրոպան սկսեց ձեռք բերել իրեն ձեռնտու կոնցեսիաներ:

Փոփոխություններ էին կատարվում նաև թուրքական շրջանակներում: Սակավաթիվ ազգային բուրժուազիայի ի հայտ գալով՝ սկիզբ դրվեց ֆեոդալական հարաբերությունների արագ փլուզմանն ու կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը:

Թուրք բուրժուազիայի ճնշման ներքո երկրում իրականացվեցին մի շարք բարենորոգումներ, որոնց նախաձեռնողն էր Ռեշիդ փաշան, որը զբաղեցնում էր արտաքին գործերի նախարարի պաշտոնը և արևմտամետ քաղաքական գործչի համբավ էր վայելում: Ռեշիդը փորձում էր աճող առևտրական բուրժուազիայի և ազատական գաղափարներով առաջնորդվող հողատերերի շահերը հարմարեցնել երկրում սուլթանի հաստատած կրոնաֆեոդալական միապետական համակարգին:

Մուհամմադ Ալիի բանակից կրած թուրքերի պարտությունը ստիպեց Բարձր դռանը ընդունել նոր բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը: 1839 թ. նոյեմբերի 3-ի՝ սուլթան Աբդուլ Մեջիդի (1839-1861 թթ.) «Հաթթե Շերիֆ Գյուլհանե»[18] կոչված հրովարտակով սկիզբ դրվեց բարենորոգումների ծրագրի իրականաց-

[18] Թարգմանվում է որպես «Վարդերի Պալատի սրբազան հրաման»:

մանը: Բարենորոգումների այս ծրագիրը կոչվեց «բարեգործական» (թանզիմաթ ալ-խայրիյա), որով էլ պատմության մեջ հայտնի դարձավ «Թանզիմաթ» անվանմամբ: Այն կիրառվեց երկու փուլով:

Թանզիմաթի առաջին փուլն իրականացվեց 1839-1856 թթ. ընթացքում: Այդ ժամանակաշրջանում բարենորոգումներ կատարվեցին հարկային համակարգում, վարչական կառուցվածքում և կրթության բնագավառում:

Սուլթանի վերոհիշյալ հրովարտակով ապահովվում էր Օսմանյան կայսրությունում բնակվող յուրաքանչյուր քաղաքացու անձի և մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը, ինչը երկրում ստեղծված փաշաների և սատրապների անսահմանափակ իշխանության առկայության պայմաններում չափազանց կարևոր քայլ էր համարվում: Եվ, առաջին հերթին, աճող թուրք գործարար խավի համար: Ոչ պակաս կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ անձեռնմխելիության իրավունքը տարածվում էր կայսրության բոլոր քաղաքացիների վրա՝ անկախ նրանց կրոնական դավանանքից: Նկատի ունենալով նաև այն, որ երկրի բուրժուազիան բաղկացած էր հիմնականում քրիստոնյա՝ հայ և հույն գործարարներից ու ձեռնարկատերերից, ապա միանգամայն հասկանալի է դառնում հրովարտակի այդ դրույթի նշանակությունը:

Հարկային համակարգում հաստատվեցին հստակ գրանցված հարկերի դրույքաչափեր, ինչպես նաև վերացվեց իլթիզամի համակարգը: Հատկանշական է, որ սուլթանի հրովարտակով արգելվեց Օսմանյան կայսրությունում լայն տարածում գտած պետական պաշտոնների վաճառքի արատավոր պրակտիկան:

Թանզիմաթը լուրջ հակազդեցություն և դիմադրություն առաջացրեց ֆեոդալական առավել հետադիմական շրջանների՝ հողատերերի, դատավորների և կրոնական իշխանությունների մոտ: Սուլթան Աբդուլ Մեջիդն անձամբ ստիպված լինելով ստորագրել

հրովարտակը՝ ոչ միայն չէր ցուցաբերում ակտիվ աջակցություն, այլև խոչընդոտում էր բարենորոգումների իրականացմանը: Այդ իսկ պատճառով թանզիմաթը չհանգեցրեց լուրջ համակարգային փոփոխությունների, իսկ նրա դրույթների մեծ մասն այդպես էլ չիրականացվեց: Այնուամենայնիվ, փորձեր կատարվեցին տարանջատելու քաղաքացիական և ռազմական վարչակազմերը և նոր իրավական ընթացակարգ ստեղծելու: 1843 թ. ընդունված զինապարտության մասին օրենքի համաձայն՝ սահմանվեց համընդհանուր զինվորական ծառայություն, իսկ ծառայության ժամկետը սահմանափակվեց 5 տարով: Բանակում կատարվեցին արմատական փոփոխություններ:

1840 թ. սուլթան Աբդուլ Մեջիդը փորձեց վերափոխել նաև իրավական ոլորտը: Թանզիմաթի ողջ ընթացքում շարունակվեցին աշխատանքները քրեական, առևտրական և քաղաքացիական նոր օրենսդրության մշակման ուղղությամբ:

Սիրիայի և Պաղեստինի վարչատարածքային բաժանման փոփոխություններ կատարվեցին: 1841 թ. Սայդայի և Տրիպոլիի վիլայեթները միավորվեցին մեկ էյալեթի՝ փաշայության մեջ, որի կենտրոնը դարձավ Բեյրութը: Իսկ Պաղեստինը հիմնականում ընդգրկվեց Երուսաղեմի սանջակի մեջ, որը ենթակա էր Բեյրութի փաշային: Էյալեթի փաշաները զրկվեցին զինվորական և ֆինանսական իրավունքներից: Մտցվեց ֆինանսական նոր պաշտոն՝ դեֆթերդար: Սիրիայում և Պաղեստինում տեղակայվեց թուրքական հինգերորդ բանակը, որի կենտրոնատեղին գտնվում էր Դամասկոսում: Բանակը լրիվ անկախ էր փաշայից և ենթարկվում էր զինվորական նախարարությանը:

Այս փոփոխությունները, տեղական բուրժուազիայի դիրքերի ամրապնդման գործում իրենց դրական դերն ունենալով հանդերձ, այնուամենայնիվ, բավարար չեղան երկրում հաստատված սոցիա-

լական համակարգը փոխելու համար: Այդ բարեփոխումները չվերացրին արտադրության ֆեոդալական ձևերը կամ ֆեոդալական պետությունը: Բարեփոխումները թուրքական բուրժուազիային շնորհելով որոշ անձնական արտոնություններ, չտվեցին քաղաքական որևէ իրավունք: Պետության մեջ ամբողջ իշխանությունը շարունակեց մնալ հին բյուրոկրատիայի ձեռքերում: Իրենց հերթին, Սիրիայի և Պաղեստինի գյուղացիները թանզիմաթն ընկալեցին որպես ազատություն ձեռք բերելու հնարավորություն: Այդ հողի վրա տեղի ունեցան հակաֆեոդալական մի շարք ընդվզումներ, որոնցից առավել նշանակալիցը Հալեպի 1850 թ. և Հաուրանիի 1852-1853 թթ. ապստամբություններն էին:

1840 թ. արևմտյան միսիոներներն ակտիվացրին իրենց գործունեությունը հիմնականում Արաբական Արևելքում՝ Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում: Այստեղ նույնպես խաչաձևվում էին մեծ տերությունների շահերը: Անգլիան, օրինակ, աջակցում էր կաթոլիկներին և, հետագայում, Պաղեստին հրեական ներգաղթին, ԱՄՆ-ն՝ բողոքական առաքելություններին: 1849 թ. Ռուսաստանն ուղղափառ առաքելություն հիմնեց Երուսաղեմում՝ նպատակ հետապնդելով իր ազդեցությունը տարածել երկրի հույն քրիստոնյաների շրջանում:

Մեծ տերությունների մրցակցությունն Օսմանյան կայսրությունում ընթանում էր հիմնականում կրոնական հակասությունների քողի ներքո: Յուրաքանչյուր տերություն ձգտում էր վերահսկողություն հաստատել կայսրության, համապատասխանաբար՝ կաթոլիկ, ուղղափառ և բողոքական բնակչության վրա: Տերությունների դիվանագիտական ջանքերի ակտիվացումն այս հարցում, ի վերջո հանգեցրեց 1853-1856 թթ. Արևելյան (կամ Ղրիմի) պատերազմի բռնկմանը, ինչն ավերիչ ազդեցություն ունեցավ Թուրքիայի տնտեսության վրա: 1854 թ. Բարձր դուռը ստիպված եղավ իր առաջին

արտասահմանյան վարկը վերցնել, որը կայսրության ֆինանսական ստրկացման սկիզբը դրեց:

Ղրիմի պատերազմի ամբողջ ընթացքում կայսրության տարբեր շրջաններում զարգանում և ընդլայնվում էր քրիստոնյա ժողովուրդների հակաթուրքական ազատագրական շարժումը:

Մոլդովայում առաջ քաշվեցին սահմանադրություն ընդունելու պահանջներ, Բոսնիայում և Բուլղարիայում բռնկվեցին զինված ապստամբություններ: Հուզումներից չխուսափեցին նաև Սիրիան և Լիբանանը: Այս ամենը լուրջ վտանգ էր թուրքական սուլթանի իշխանության, ինչպես նաև կայսրության հետագա գոյության համար:

Եթե Ռուսաստանը համարում էր, որ Թուրքիան անհույս «հիվանդ մարդ է» և անհրաժեշտ է Մեծ Բրիտանիայի հետ նախօրոք ընդհանուր համաձայնության գալ ու համապատասխան միջոցներ ձեռնարկել կայսրության տարածքն ազդեցության ոլորտների բաժանելու հարցում, ապա Բրիտանիան փորձում էր թույլ չտալ կայսրության փլուզումն ու մասնատումը և նույնիսկ համագործակցում էր Թուրքիայի հետ՝ երկրում ծավալված ազգային-ազատագրական շարժումները ճնշելիս: Երկրի ներսում իր դիրքերն ամրապնդելու, ինչպես նաև քրիստոնյաների իրավունքների ապահովման հարցերին միջամտելու՝ Ռուսաստանի հնարավորությունները սահմանափակելու նպատակով Բրիտանիան նախապատրաստեց կայսրության քրիստոնյա փոքրամասնությունների վիճակի բարենորոգման ծրագիր, որն էլ դրվեց 1856 թ. փետրվարի 18-ին սուլթանի կողմից ստորագրված նոր հրովարտակի (Հաթթե Հյումայուն) հիմքում: «Հաթթե հյումայուն»-ով սկսվեց թանզիմաթի՝ բարեփոխումների երկրորդ փուլը: Այն հաստատում էր Հաթթը Շերիֆ Գյուլհանեովը՝ կայսրության բոլոր հպատակներին խոստանալով հավասար իրավունքներ՝ «անկախ դասակարգից կամ կրոնից», նա վերացնում էր

գլխահարկը (ջիզյե), որը գանձվում էր միայն քրիստոնյա բնակչությունից և վերջիններիս հասանելի էր դարձնում զինվորական ու քաղաքացիական բոլոր պաշտոնները: Հրովարտակի համաձայն՝ հիմնվում էին խառը դատարաններ, օտարերկրացիներն իրավունք էին ստանում Թուրքիայում ձեռք բերելու հող և անշարժ գույք: Այն նախատեսում էր քաղաքացիական և քրեական օրենսդրության կոդիֆիկացում, հաղորդակցության ճանապարհների բարելավում, առևտրի համար վարկային հիմնարկների հիմնում, դրամական համակարգի բարեփոխում և անգամ պետական բյուջեի հրապարակում:

Կրոնական համայնքների իրավունքներից, հարկային, քաղաքացիական և քրեական ռեֆորմներից բացի, այս շրջանն առանձնանում է Օսմանյան կայսրությունում հողային օրենսգրքի (1867 թ.), ինչպես նաև տեղական վարչական նոր բաժանման ընդունմամբ: Սակայն Հաթթը Հյումայունի այս դրույթների մեծ մասն այդպես էլ մնաց չիրականացված: Հրովարտակի հրապարակումից հետո սրվեց իրավիճակը Սիրիայում: Լիբանանի գյուղացիությունը հրովարտակում հայտարարված հավասարությունների դրույթը փորձեց օգտագործել սոցիալական արդարություն հաստատելու և ֆեոդալական ծանր բեռից ազատվելու համար: 1858-1859 թթ. հակաֆեոդալական ապստամբություններ ծագեցին հյուսիսային Լիբանանում, ապա տարածվեցին Լիբանանի և Սիրիայի այլ շրջաններում:

Օսմանյան կայսրությունում առևտրական և քաղաքական գերակշռություն հաստատելու՝ Անգլիայի և Ֆրանսիայի անզիջում պայքարի հետևանքով Լիբանանում 1860 թ. արյունալի բախումներ տեղի ունեցան դրուզ և մարոնի համայնքների միջև:

4. Իրաքը Թանզիմաթի շրջանում[19]

Օսմանյան կայսրության ամենահետամնաց և թերզարգացած մարզերից մեկը համարվող Իրաքը, դուրս մնալով Մուհամմադ Ալիի իշխանության սահմաններից, չենթարկվեց բարեփոխումների: Դաուդ փաշայի գահընկեցությունից հետո (1831 թ.) թուրք կառավարիչներն Իրաքի լիիշխան տերերն էին և խստորեն պահպանում ու անշեղորեն կատարում էին Բարձր դռան հրահանգներն ու կարգադրությունները: Իրաքում իրավիճակը կտրուկ վատթարացավ Քուլեմեն տոհմի ոչնչացման հետևանքով: Երկիրը հայտնվել էր տնտեսական ծայրաստիճան թշվառ կացության մեջ: Սովի և համաճարակների հետևանքով ավերվում և ամայանում էին Իրաքի քաղաքներն ու գյուղերը: Այսպես, Բաղդադի երբեմնի 150-հազարանոց բնակչությունից մնացել էր միայն 20.000, իսկ Բասրայում՝ 80.000-ից 5 հազար բնակիչ: Խանութներն ու արհեստանոցները փակվել էին՝ մատնվելով անգործության: Այգիներն ու ցանքատարածքները չորացել էին ու ոչնչացել: Գրեթե զրոյական մակարդակի էր հասել երկրի առևտուրը:

Ա. Քրդական ապստամբությունն ու միջցեղային պատերազմները

Դաուդ փաշային հաջողվել էր հնազանդեցնել քուրդ բեկերին ու արաբ շեյխերին: Նա պատերազմ վարեց Բարձր դռան դեմ և կարողացավ իր իշխանության տակ միավորել ողջ Իրաքը: Սակայն, դրանից հետո Իրաքի փաշաները սկսեցին նշանակվել սուլթանի կողմից, իսկ երկիրը, դրվելով Բարձր դռան անմիջական

[19] Տե՛ս Saleh, Mesopotamia, 1600-1914, Baghdad. 1957, Stokes, Frank. Iraq. London, 1958, Longrigg, Stephen H. Four Centuries of Modern Iraq. Oxford, 1925:

վերահսկողության տակ, փաստորեն, կորցրեց իր նախկին անկախ կարգավիճակը: Սակայն փաշաների իշխանությունն Իրաքում թվացյալ էր: Նրանք չկարողացան ընդհանուր լեզու գտնել հարկերի վճարումից խուսափող ցեղերի, ինչպես նաև ֆեոդալ հողատերերի ընդդիմության հետ, որոնք հրաժարվում էին ընդունել փաշաների իշխանությունը: Նման իրավիճակում երկիրը դատապարտված էր շարունակական տնտեսական անկման, ապստամբությունների ու միջցեղային պատերազմների:

Մունթաֆիկի, Շամմառի, Անայզայի և արաբական այլ ցեղերը պատերազմում էին միմյանց դեմ կամ դաշինքներ էին ստեղծում ընդդեմ Բաղդադի փաշաների: Այսպես, 1833 թ. երեք ամիս շարունակ Շամմառի զինվորները պաշարել էին Բաղդադը:

Պարբերաբար քուրդ հողատերերի ապստամբություններ էին ծագում երկրի հյուսիսում: Նրանց աջակցություն էին ցուցաբերում Իրանի շահն ու Եգիպտոսի փաշա Մուհամմադ Ալին: Վերջինս, նպատակ ունենալով ավարտել «Արաբական կայսրության» միավորումը և վերահսկողություն հաստատել ռազմավարական կարևորություն ունեցող Միջերկրականից դեպի Պարսից ծոց առևտրական ճանապարհի վրա, ձգտում էր գրավել նաև Իրաքը: Այդ իսկ պատճառով երկրում Բարձր դռան իշխանության թուլացմանն ուղղված ցանկացած շարժում կամ ապստամբություն վայելում էր Մուհամմադ Ալիի աջակցությունը: Իր հերթին, Օսմանյան կայսրությունը բազմաթիվ պատժիչ ջոկատներ ուղարկեց Քուրդիստան, որոնք 1831-1842 թթ. ընկած ժամանակահատվածում դաժան հաշվեհարդար էին տեսնում քուրդ բեյերի և տեղի բնակչության հետ: Սակայն Բարձր դռան նման քաղաքականությունը չհանդարտեցրեց տարածաշրջանը և չկարողացավ հնազանդեցնել քրդերին: 1839 թ. քրդական ապստամբության ընթացքում պարսկական ուժերի օժանդակությունը և Սուլեյմանիե շրջանում նրանց առաջխաղացումը հան-

գեցրեց թուրք-պարսկական պատերազմի: Ռուսաստանի և Մեծ Բ-րիտանիայի ջանքերի շնորհիվ 1847 թ. մայիսի 31-ին կողմերի միջև կնքվեց Էրզրումի (երկրորդ) համաձայնագիրը, ըստ որի՝ Պարս-կաստանը հրաժարվեց Սուլեյմանիե և այլ շրջանների վրա իր պա-հանջներից: Որպես փոխհատուցում, Բարձր դուռը Իրանին զիջեց Մահմմերան (ներկայիս Խոռամշահր) և Շաթ ալ-Արաբ գետի աջ ա-փը:

Թուրք-պարսկական հարաբերությունների կարգավորումը, ինչպես նաև Մուհամմադ Ալիի պարտությունը չբարելավեցին Քուր-դիստանի ընդհանուր իրավիճակը: Քուրդիստանի շրջաններում թուրքական ուղղակի իշխանության հաստատմանն ուղղված ցան-կացած փորձ հանդիպում էր ապստամբ քրդերի կատաղի դիմադ-ությանը: Քրդական հաջորդ ապստամբությունը ծագեց 1843 թ. և շարունակվեց մինչև 1846 թվականը: Թուրքական բանակը չէր հասցրել ճնշել այն, երբ 1848 և 1849 թթ. նոր ընդվզումներ տեղի ու-նեցան: Իրաքի քրդական բնակավայրերում նման իրավիճակը շատ երկար պահպանվեց, իսկ օսմանյան զուտ ձևական իշխա-նությունը մատը մատին չխփեց:

1839 թ. նոյեմբերի 3-ի «Հաթթե շերիֆ Գյուլիանե»-ով հայտա-րարված բարեփոխումները չափազանց դանդաղ էին ներթափան-ցում Իրաք: Շարունակական ապստամբությունների ու տնտեսա-կան խոր ճգնաժամի մեջ գտնվող երկրում իրապես դժվար էր լուրջ փոփոխություններ իրականացնել: Սկզբում հռչակված բարեփո-խումները որևէ ազդեցություն չունեցան Իրաքում: Իրավիճակն այդ ուղղությամբ սկսեց փոխվել միայն 1842 թ., երբ որոշ փոփոխութ-յուններ կատարվեցին: Իշխանության զինվորական և վարչական բաժանումն իրականացվեց միայն 1848 թ., երբ թուրքական բանա-կի 6 ստորաբաժանումներ տեղակայվեցին Բաղդադում: Համընդ-հանուր զինվորական ծառայության մասին օրենքն Իրաքում չընդ-

դունվեց մինչև 1870 թվականը: Պետական մեքենայի վերակազմավորումից հետո որոշակի կենտրոնացում և մասնագիտացում նկատվեց նաև այդ բնագավառում: Բարեփոխումների շնորհիվ վերացվեց հողային տուրքի գործող համակարգը: Հատուկ պետական պաշտոնյաներին վստահվեց ֆինանսական և հարկային հարցերի վերահսկողությունը: Ի հայտ եկավ որոշ չափով «եվրոպականացված» բյուրոկրատական խավը:

Թանզիմաթն Իրաքում չհանգեցրեց սոցիալական որևէ լուրջ փոփոխության, իսկ նրա գործնական արդյունքները չնչին էին, գրեթե զրոյական: Բնակչության հիմնական մասը շարունակեց տառապել բռնագրավումների և հարկահավաքի դաժան մեթոդներից, պաշտոնյաների կամայականություններից ու կաշառակերությունից:

Երկար ժամանակ Իրաքի տնտեսությունը շարունակեց մնալ խորը ճգնաժամի մեջ: Միայն 19-րդ դարի 60-ականներին նկատվեց որոշակի աշխուժացում, երբ Իրաքը սկսեց համաշխարհային շուկա արտահանել ցորեն և ներմուծել պատրաստի արտադրանք: Արտասահմանում առկա գյուղատնտեսական մթերքների պահանջարկը բավարարելու նպատակով՝ Իրաքի կառավարիչները ձեռնամուխ եղան մրգատու այգիների վերականգնմանն ու ցանքատարածությունների ընդլայնմանը: Իրանը նույնպես մուտք էր գործում համաշխարհային շուկա և իր հիմնական առևտուրն իրականացնում էր Բաղդադի ու Բասրայի միջոցով, ինչը նույնպես եկամտաբեր էր Իրաքի համար: Իսկ 1861 թ. Իրաքում ներքին մաքսակետերի վերացման շնորհիվ առևտրի ծավալները կտրուկ աճեցին:

Արտաքին և տարանցիկ առևտրի ավելացումը նպաստեց նաև հաղորդակցման ու տրանսպորտային միջոցների զարգացմանը: Եթե 30-ական թթ. ապարդյուն փորձեր էին արվում Եփրատի երկայնքով կանոնավոր առևտուրը կազմակերպելու ուղղությամբ, իսկ

ամենահարմար տարանցիկ ճանապարհը դեպի Հնդկաստան համարվում էր Եգիպտոսը և Կարմիր Ծովը, ապա 1862 թ. թուրքական կառավարությունն արդեն իսկ կանոնավոր նավագնացություն կազմակերպեց Բաղդադի և Բասրայի միջև: Նույն թվականին Լինչի (Lynch) Բրիտանական ընկերությունը մշտական նավագնացություն նախաձեռնեց նույն ուղիով, իսկ հետո ծովային ճանապարհով՝ Բասրան կապելով Պարսից ծոցի և Հնդկաստանի նավահանգիստների հետ: 1864 թ. հեռագրակապ գործեց Բաղդադի, Ստամբուլի, Թեհրանի, Բասրայի և Հնդկաստանի միջև:

Բ. Միդհաթ փաշան Իրաքում

Իրաքի բարեփոխումների վերջնական փուլի իրականացման դժվարին պարտականությունը դրվել էր օսմանյան հեղինակավոր քաղաքական գործիչ Միդհաթ փաշայի վրա (1822-1883): Միդհաթ փաշան Օսմանյան կայսրությունում սահմանադրական շարժման առաջնորդն էր և 1876 թ. Սահմանադրության հեղինակը:

1869 թ. Բարձր դռան կողմից նա նշանակվել էր Բաղդադի նահանգապետ և վեցերորդ կորպուսի գլխավոր հրամանատար՝ ստանձնելով երկրի քաղաքացիական և զինվորական անսահմանափակ իշխանությունը:

Իրեն բնորոշ եռանդով Միդհաթ փաշան նախաձեռնեց բարենորոգումները, որոնք կոչված էին վերափոխելու Իրաքի կյանքի բոլոր բնագավառները: Նա մեծ ուշադրություն հատկացրեց տրանսպորտային ուղիների կառուցմանը՝ ընդլայնելով շոգենավային նավարկությունը Տիգրիսով և հիմնադրելով պետական շոգենավային ընկերությունը: Սուեզի ջրանցքի բացումից հետո Միդհաթ փաշան ձեռնամուխ եղավ Բասրայի, Ստամբուլի և Լոնդոնի միջև նավագնացության կազմակերպմանը: Իրաքի կառավարչի նախաձեռ-

նությամբ ընդլայնվեցին նավագնացության ուղիները՝ Տիգրիսով դեպի Մոսուլ և Եփրատով մինչև Հալեպ: Նշանակալի էր նաև Միդհաթ փաշայի դերը Իրաքում երկաթուղու կառուցման գործում: Նա ջանադրաբար աշխատեց «Եփրատի երկաթուղու» նախագծի վրա, սակայն ի վիճակի եղավ կյանքի կոչել միայն նրա 12 կիլոմետրանոց հատվածը՝ Բաղդադ-Ալ-Քազիմիյա գիծը:

Իր պաշտոնավարման ընթացքում Միդհաթ փաշան նաև վարչական և մշակութային բարեփոխումներ իրականացրեց երկրում: 1864 թ. Բարձր դուռը վիլայեթների մասին օրենք ընդունեց, որի համաձայն՝ դատական իշխանությունը բաժանվեց վարչականից, իսկ կայսրության ողջ տարածքում հիմնվեցին ընտրովի դատարաններ: 1868 թ. նշված օրենքը գործում էր կայսրության բոլոր նահանգներում՝ բացառությամբ Իրաքի և Եմենի: Միդհաթ փաշան նշված օրենքը գործադրեց նաև Իրաքում: Նա ստեղծեց նոր դատարաններ, հիմնադրեց տեղական խորհուրդներ (բալադիյե) և նոր դպրոցներ: Բաղդադի առաջին տպագիր թերթը լույս տեսավ Միդհաթ փաշայի կառավարման տարիներին:

Միդհաթ փաշայի հիմնական նպատակներն էին կենտրոնաձիգ իշխանության հաստատումը և ցեղային ու ֆեոդալական անջատողականության վերացումը Իրաքում: Այդ նպատակով նա համընդհանուր զինվորական ծառայությունը տարածեց նաև ցեղերի վրա՝ վերջինների վրա դնելով ընդհանուր հարկերն ու նրանցից պահանջելով պարբերաբար վճարումներ կատարել: Միևնույն ժամանակ Միդհաթ փաշան վճռականորեն ճնշում էր անհամաձայնության ցանկացած դրսևորում, ինչն առավել ցայտուն երևաց իր քաղաքականության դեմ արաբական որոշ ցեղերի 1869 թ. ապստամբության ժամանակ:

Այսուհանդերձ, Իրաքի կառավարիչը քաջ գիտակցում էր, որ միայն ճնշման միջոցներով անհնար է կոտրել ցեղերի դիմադրութ-

յունը: Ֆեոդալական ու ցեղական առաջնորդներին սիրաշահելու և շահագրգռելու նպատակով նա առաջ քաշեց գյուղացիներին «խաղաղ շահագործելու» գաղափարը: Դա նշանակում էր, որ իշխանությունները հանձն էին առնում խրախուսել պետական հողերի վաճառքը ցեղերի շեյխերին: 1858 թ. հողային օրենքի համաձայն՝ փաշան նախկին հողատերերին, ինչպես նաև շեյխերին արտոնեց համեմատաբար ցածր գներով վաճառել հողերը: Սակայն հողի սեփականատեր շարունակում էր մնալ պետությունը, որը հողի նոր սեփականատերերին տալիս էր հողի օգտագործման իրավունք (թապու):

Միդհաթ փաշայի գլխավորությամբ Քուվեյթի և Ալ-Խասայի գրավումը նույնպես ուղղված էր Իրաքում թուրքական իշխանության ամրապնդմանը: Նշված նահանգները վերակազմավորվեցին հատուկ վարչական միավորի՝ Նեջդի սանջաքի մեջ, որն ամբողջովին ենթարկվում էր Իրաքի թուրքական կառավարիչներին:

Միդհաթ փաշայի բարեփոխումների բոլոր դրական կողմերի հետ մեկտեղ, անհրաժեշտ է նշել նաև, որ նա, ներկայացնելով թուրքական ղեկավարության առաջադեմ խավը, այնուամենայնիվ, Բարձր դռան քաղաքականության իրականացնողն էր համարվում՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով հանդերձ: Արաբական ազգային շարժումների նկատմամբ նրա անհաշտ դիրքորոշումը, վարչական պաշտոններին նշանակելիս արաբների նկատմամբ բացահայտ խտրականությունը և շատ դեպքերում, բարեփոխումների իրականացման ընթացքում ցուցաբերած անվճռականությունը, անշուշտ, շոշափելի բարելավում չէին կարող բերել արաբ ժողովրդին:

5. Մահդիի ապստամբությունը Սուդանում[20]

Սուդանը որևէ լուրջ դերակատարություն չի ունեցել արաբական պատմության մեջ մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը: Արևմտյան Եվրոպայի (ներառյալ Սկանդինավիան) տարածքն ունեցող այս երկիրը զերծ է մնացել Հռոմեական տիրապետությունից: Նրա մեկ քառորդ մասը, որ կոչվում էր Նուբիա, արաբական բանակները միայն երեք անգամ են գրավել: Հաջորդաբար նրան են տիրել Սալլադինը, բերբերները և Մուհամմադ Ալին: Վերջինս անհիմն հույս էր փայփայում, որ այնտեղ ոսկու մեծ պաշարներ կարող է հայտնաբերել: Մինչիսլամական ժամանակաշրջանում արաբ ներգաղթյալները Նուբիա են ներթափանցել Եմենից, սակայն 6-րդ դարում, մինչև Մուհամեդ Մարգարեի ծնունդը, բյուզանդացի Նեստորիուս քահանայապետի առաքելական գործունեության հետևանքով, այն վերածվեց ավելի շուտ քրիստոնեական թագավորության: Անգամ արաբական բանակների կողմից 640 թ. Եգիպտոսի գրավումից հետո վերջինիս հետ սահմանակից բոլոր երկրներն ընկան արաբական տիրապետության տակ՝ բացառությամբ Նուբիայի: Մահմեդական տարբեր աղանդներ՝ խարիջիները, իսմաիլիտները, ասասինները և այլն, ներթափանցում էին Արևելյան Աֆրիկա, սակայն Նուբիան 7 դար շարունակ, անգամ 14-րդ դարում Սալլադինի արշավանքներից հետո, իր տարածքում պահպանում էր քրիստոնեական հավատքի գերիշխանությունը: Միայն մամլուքների իշխանության օրոք մահմեդականությունը սկսեց արագորեն տարածվել: Եվ արդեն 1820 թ., երբ Մուհամմադ Ալին գրավեց Նուբիան, մահ-

[20] Տե՛ս Holt, Peter, The Mahdist State in the Sudan, 1881-1898. Oxford, 1958, Holt, Peter. A Modern History of the Sudan. New York, 1961, Abd al-Rahman, Maddathir. Imperialism and Nationalism in Sudan, New York, 1969, Slatin, C. Robert. Fire and Sword in Sudan. London, 1896, Wingate, Sir Reginald. Mahdism and the Egyptian Sudan, London,1891, Collins. O.Robert. Land beyond the Rivers: The Southern Sudan, 1898-1918, New Haven, 1971:

մեդականությունն արդեն դարձել էր բնակչության մեծամասնության կրոնը:

Դեռևս հին ժամանակներից Նուբիան հայտնի էր ստրկավաճառությամբ: Նա ոչ միայն Մեքքայի, Դամասկոսի, Բաղդադի և Կահիրեի արքունիքներին ստրուկներ մատակարարող անմիջական աղբյուրն էր, այլև չափազանց հարմար տարանցիկ ուղի էր ստրկավաճառների համար, որոնք Նեղոսի երկայնքով շարունակում էին իրենց առևտրական առաքելությունը դեպի Արևելյան Աֆրիկայի խորքերը: Իսկապես, այն, ինչ այսօր մենք նկատի ունենք Սուդան անվան տակ՝ Նուբիա, Կորդոֆան, Դարֆուր, Բահր ել-Ղազալ և Էկվատորիա, ուղղակիորեն ներքաշված էին ստրկավաճառության մեջ:

Պատմության ընթացքում Սուդանն օտար ուժերի համար կարևորություն էր ներկայացնում նաև իր բարենպաստ աշխարհագրական դիրքով: Նեղոսի ջրերը սկիզբ էին առնում այստեղ, և համաձայն հայտնի ասացվածքի՝ «Ով տիրում է Խարթումին, նա իշխում է նաև Եգիպտոսին»: Փաստորեն, հսկելով Վերին Նեղոսը Սուդանը որոշակիորեն ապահովում էր Եգիպտոսի կենսունակությունը: Սուդանը նաև ամենահարմար ճանապարհն էր Կենտրոնական Աֆրիկա ներթափանցելու համար: Այսպիսով, Սուդանը կարևորվում էր 2 հիմնական գործոնով՝ տնտեսական (ստրկավաճառության, էկզոտիկ ապրանքների և փղոսկրի առևտուր և այլն) և աշխարհագրական:

1820 թ. Մուհամմադ Ալին որոշեց նվաճել Սուդանը: Հիմնական դրդապատճառները բանակի համար էժան ստրուկների, ինչպես նաև Նուբիայում ոսկու պաշարների առկայությունն էր: 1825 թ. Սուդանն արդեն աստիճանաբար վերածվել էր Եգիպտոսի նահանգներից մեկի: Մուհամմադ Ալին Սուդանում իրականացրեց այն, ինչ Նապոլեոնը՝ Եգիպտոսում. ստեղծեց տեղացիներից կազմված խոր-

հուրդ՝ հարկերը ժամանակին հավաքելու նպատակով: Նա բարձր հարկեր դրեց ստրկավաճառների վրա՝ վերջիններիս ստիպելով ստրուկներին հանձնել եգիպտական իշխանություններին: Սուդանում Մուհամմադ Ալին «ժամանակակից, կենտրոնացված և տնտեսապես շահութաբեր վերահսկողություն» էր իրականացնում կարևոր մի շրջանի վրա, որը կարող էր հետագայում հենակետ դառնալ այլ արշավանքների, մասնավորապես Եթովպիան զավթելու համար:

Եգիպտոսից հետո Անգլիան գրավեց Արևելյան Սուդանը: Եվրոպական վաճառականների ներթափանցումն այդ երկիր սկսվել էր դեռևս 19-րդ դարի 30-ական թվականներին: Եվրոպացիները Սուդան էին ներմուծում գործվածքներ, արտահանում էին թանկարժեք էկզոտիկ ապրանքներ, խեժ, փղոսկր, ջայլամի փետուրներ: Նրանք ստրուկ էին գնում քոչվոր ցեղերի առաջնորդներից, որոնք ավազակային հարձակումներ էին գործում թույլ հարևանների վրա, և եվրոպական տերությունների դրոշակներով Խարթումից Կահիրե էին ուղարկում «կենդանի ապրանքով» բեռնված նավեր: 1857 թ. եգիպտական կառավարությունն արգելեց ստրուկների վաճառքը: Սակայն ստրակատերերը, շրջանցելով օրենքը, շարունակում էին զբաղվել իրենց հանցավոր արհեստով:

1869 թ. Սուդանում գեներալ նահանգապետ նշանակվեց անգլիացի Բեյքերը, որը զբաղվեց Նեղոսի վերին հոսանքում նոր տարածքների, մասնավորապես՝ Ունիորո մարզի գրավմամբ:

1877 թ. Եգիպտոսի խեդիվ Իսմայիլն անգլիացի գեներալ Գորդոնին նշանակեց Սուդանի գեներալ նահանգապետ: Վերջինս միջոցներ ձեռնարկեց Սուդանի կիսանկախ կարգավիճակ ունեցող շրջաններում Եգիպտոսի իշխանությունը վերականգնելու, ստրկավաճառությունն արգելելու, կաշառակերությունը և տեղական կառավարիչների՝ անօրինական հարկեր հավաքելու արատավոր սովորույթը վերացնելու ողղությամբ:

Պետք է նշել, որ խորհրդային պատմագրությունը միանգամայն հակառակ բնութագիր է տալիս Գորդոնի գործունեությանը Սուդանում՝ նրան որակելով «դահիճ», «կողոպտիչ» «արյունարբու»: Կարծում ենք, որ նման քաղաքականացված մոտեցումը ծայրահեղական է և ամբողջությամբ չի համապատասխանում իրականությանը: Անշուշտ, իշխանության հաստատումը երկրի տարբեր մասերում հարթ չէր կարող ընթանալ, քանի որ տեղացի շեյխերը մեծ հարստություն էին կուտակում ստրկավաճառությունից և կատաղի դիմադրություն էին ցույց տալիս իրենց ինքնիշխանությունը սահմանափակող կենտրոնի փորձերին: Շատ դեպքերում Գորդոնը ստիպված է եղել բռնի ուժ և խստագույն միջոցներ գործադրել: Իհարկե, նա արաբերեն չգիտեր և շատ դեպքերում չէր հասկանում տեղի բնակիչների սովորություններն ու ավանդույթները: Սակայն անգլիացի նահանգապետի ամենագլխավոր ձեռքբերումը Սուդանում եղավ այն, որ կարճ ժամանակահատվածում նրան հաջողվեց վերացնել երկրի մասնատման գործընթացը և կենտրոնածիգ իշխանություն հաստատել:

1879 թ. Բրիտանիան նախաձեռնեց խեդիվ Իսմայիլի պաշտոնանկությունը, որին հաջորդեց Գորդոնի հրաժարականը: Վերջինիս փոխարինեց Ռաուֆ փաշան, որը Սուդանում քաոսային իրավիճակ ստեղծեց՝ ի չիք դարձնելով Գորդոնի օրոք ձեռք բերված դրական բոլոր տեղաշարժերը:

Համատարած կաշառակերության, դատական խոշտանգումների, «խորբաշների» կողմից շարունակվող դաժան կեղեքումների պայմաններում հասունանում էր համազգային բողոքի և ընդվզման պահը: Միայն բացակայում էր համազգային առաջնորդը, որն էլ ի հայտ եկավ մեկ տարի անց՝ Գորդոնի հրաժարականից հետո: Մուհամմեդ Ահմեդ Իբն Սայիդ Աբդալլահը, 1880 թ. իրեն անվանելով «Մահդի» (Առաքյալ), երդում տվեց ժողովրդին ազատել դաժան

լծից: Նա ծնվել էր 1848 թ. Դոնգոլայում, Նեղոսի ափին, նախկին քրիստոնեական թագավորության՝ Նուբիայի մայրաքաղաքում: Չնայած աղքատ և ծանր մանկությանը՝ Մուհամմեդը չափազանց իմաստասեր և խելացի մարդ էր: Նա ջանադրաբար սովորեց իսլամի տեսությունն ու գնաց Բերբեր՝ նախապատրաստվելու հոգևոր ծառայությանը: 22 տարեկանում նա արդեն ճանաչված ուսուցիչ էր և իսլամի քարոզիչ, ապրում էր Բերբերի մոտ գտնվող Աբբա կղզու քարանձավում՝ ասկետիկ կյանք վարելով: Որպես իսլամի եռանդուն քարոզիչ, դեռ մանուկ հասակից ատելությամբ էր լցվել բոլոր օտարերկրացիների նկատմամբ, որոնք իշխում էին իր սեփական հողում: Անկախ ազգային պատկանելությունից՝ թուրք, ալբանացի, եգիպտացի, բոլորին կոչում էր մեկ բառով՝ «թուրքեր»: Մուհամմեդը ատելությամբ էր լցված նրանց նկատմամբ ոչ միայն Սուդանի ժողովրդին հալածանքների ենթարկելու, այլև սրբազան Ղուրանի պատվիրանները խախտելու համար: Նրա բախումը իշխանությունների հետ երկար սպասեցնել չտվեց. և շատ շուտով Մուհամմեդ Ահմեդ-հոգևորականի կարիերան ավարտվեց՝ Աստծո պատվիրաններն աղավաղելու համար Բերբերի կառավարչին մեղադրանքներ ներկայացնելուց հետո: Վտարվելով Աբբայից՝ նա մեկնեց Նուբիա և Կորդոֆան, ուր քարոզչություն ծավալեց թուրքական իշխանության դեմ: Վերադառնալով Աբբա Ահմեդը ժողովրդին ուղղակի ապստամբության կոչեր արեց: Նա նրբորեն օգտագործեց օտար իշխանության նկատմամբ ժողովրդի ատելությունը, ինչպես նաև Աստծո առաքյալի երկրորդ գալստյան վերաբերյալ հավատացյալների սպասումները: Իր քարոզի ընթացքում ներկաներից մեկի հարցին, թե արդյոք ինքը Աստծո առաքյալն է, Մուհամմեդ Ահմեդը պատասխանեց. «Այո՛, ես Մահդի եմ»:

Սկզբնական շրջանում իշխանությունները լուրջ չէին վերաբերվում Մահդիի քարոզչությանը՝ համարելով այն խենթացած և ինք-

նահավան մարդու ցնդաբանություն: Սակայն երբ նրան իր ամբողջ հեծելազորով միացավ Բաղարա ցեղի ղեկավարը՝ Աբդալլահ ալ-Թաաշին, այն ժամանակ Ռաուֆ փաշան Մուհամմեդ Ահմեդին ձերբակալելու և Աբբայից Խարտում տեղափոխելու հրաման արձակեց: Փաշայի ուղարկած 200 զինվորներն ու նրանց հրամանատարը, հանդիպելով Մահդիի կողմնակիցների դիմադրությանը, ստիպված եղան վերադառնալ մայրաքաղաք: Կարճ ժամանակ անց Մուհամմեդ Ահմեդի հեղինակությունը սկսեց սրընթաց աճել: Նրան սկսեցին միանալ գյուղացիները, ստրուկներն ու արհեստավորները:

Մինչև 1881 թ. դեկտեմբեր, երբ մահդիստները հաղթեցին եգիպտական 1400 հոգանոց զորախմբին, զինված էին փայտերով և ցիցերով: Սակայն վերոհիշյալ հաղթանակից հետո նրանց ձեռքն ընկավ մեծաքանակ նորագույն ռազմամթերք ու զենք: Մուհամմեդ Ահմեդը «ջիհադ» հայտարարեց թուրքերին և Սուդանի բոլոր օտար զավթիչներին: Մահդին դարձավ ազգային հերոս, որը, ժողովրդի կարծիքով, նաև կոչված էր սրբազան պատերազմ վարելու: Նա կոչ էր անում առգրավել թուրք եգիպտացիների սեփականությունն ու պայքար մղել եղած բոլոր միջոցներով: Իր ելույթներում Մահդին խոստանում էր վերականգնել իսլամի նախկին մաքրությունը, հավասարությունը, եղբայրությունը, հավասար հիմունքներով ժողովրդին բաժանել հողն ու ունեցվածքը:

1882 թ. հունիսին Ֆաշոդայի մոտակայքում մահդիստները ջախջախեցին կառավարական 6-հազարանց ուժերը: Եգիպտական զորքերը, գտնվելով օտար հողում և անծանոթ պայմաններում, ի վիճակի չէին պարտիզանական պատերազմ վարելու Մուհամմեդ Ահմեդի դեմ: Նույն թվականի աշնանը Կորդոֆան և Դարֆուրը նույնպես ընկան ապստամբների ձեռքը: Մի քանի ամիս անց Մահդին գրավեց 100 հազար բնակչություն ունեցող Ալ-Օբեյդ քաղաքը: Համընթաց ամրապնդվում էր Մահդիի ապստամբության գաղա-

փարական հենքը: Մահդին հայտարարում էր, որ ինքը հոր կողմից սերում է անմիջապես Մուհամմադ մարգարեից և մոր կողմից՝ նահատակված Հուսեյնից: Իր հետևորդներին, որոնք մինչ այդ հայտնի էին որպես Դերվիշներ, նա սկսեց անվանել Անսար, ինչպես Մուհամմադ մարգարեի համախոհներին: Իր մտերիմ առաջնորդներին կոչեց խալիֆներ՝ տալով նրանց Մուհամմադին փոխարինած 4 խալիֆների անունները: Այսպես, Աբդուլլահ ալ-Թահաշիին՝ Աբու Բաքր, մեկ այլ ցեղախմբի ղեկավարի՝ Օմար, իր փեսային՝ Ալի, իսկ Կիրենաիկայի իշխան Սենուսին դարձավ Օսման:

1883 թ. Մահդին հայտարարեց, որ ամբողջ Սուդանը գրավելուց հետո նա կձեռնարկի Եգիպտոսի, սուրբ քաղաքներ Մեքքայի և Երուսաղեմի, այնուհետև ողջ աշխարհի գրավումը: Նույն թվականի սկզբին մահդիստները գրավեցին Կորդոֆան, ավելի ուշ Դարֆուր մարզը՝ պարտիզանական կռիվներ մղելով Կարմիր ծովի ափին: Անգլիական ջոկատներին չէր հաջողվում կասեցնել զանգվածային շարժումը: 1884 թ. փետրվարին Գեներալ Բեյքերին փոխարինեց Գորդոնը, որը բանակցությունների մեջ մտավ Մահդիի հետ, սակայն ապարդյուն: 1885 թ. ապստամբները երկարատև պաշարումից հետո գրավեցին Խարթումը: Գորդոնը սպանվեց: Ամբողջ երկիրը, բացառությամբ մի քանի ծայրամասային շրջանների, ընկավ մահդիստների իշխանության տակ: 1895 թ. հունիսին Մահդին մահացավ, և նրա տեղը որպես պետության ղեկավար՝ խալիֆա, գրավեց Աբդուլլահ ալ-Թահաշին: Մահդիստական պետությունը գոյատևեց 13 տարի՝ մինչև 1898 թվականը, երբ գեներալ Կիթչենները սեպտեմբերի 1-ին Օմդուրմանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախեց մահդիստներին:

Մահդիստական պետության պարտության պատճառները բազմաթիվ էին՝ ներքին պառակտումը (վերասերված վերնախավի և ժողովրդական զանգվածների միջև), ցեղերի միջև կապերի թու-

լացումն ու անհավասարությունը, հետզհետե աճող սոցիալական շերտավորումը, պետական կառավարման մարմինների անկարողությունը, տնտեսական քաղաքականության բացակայությունը ևն):

19-րդ դարավերջին գնալով ավելի սրվեց տերությունների պայքարը Սուդանի և Նեղոսի վերին հոսանքների համար: Եթովպիայում, օգտվելով 1896 թ. Իտալիայի պարտությունից, իր դիրքերն էր ամրապնդում Ֆրանսիան՝ ստանալով մի շարք ձեռնտու կոնցեսիաներ: Վերջինիս կողմից արևելյան Սուդանի գրավմանն ուղղված արշավախմբի նախապատրաստումը լուրջ հակազդեցություն առաջացրեց Անգլիայում, որը ռազմական ստորաբաժանում ուղարկեց այնտեղ Կիթչենների գլխավորությամբ: Ֆրանսիան ստիպված եղավ նահանջել և հրաժարվել արևելյան Սուդանի նկատմամբ իր հավակնություններից:

1899 թ. Սուդանը ձևականորեն դրվեց, այսպես կոչված, «կոնդոմինիումի»՝ Անգլիայի և Եգիպտոսի համատիրության տակ:

6. Ալժիրի գրավումը Ֆրանսիայի կողմից և Աբդ ալ-Քադիրի ապստամբությունը[21]

Ֆրանսիայի կողմից Ալժիրի շուրջ 100-ամյա գաղութացումը սկսվեց որպես պատժիչ արշավանք և ավարտվեց Ալժիրի՝ Ֆրանսիայից 4 անգամ մեծ տարածք ունեցող երկրի բռնազավթմամբ:

Ալժիրն Օսմանյան կայսրության տիրապետության տակ էր ընկել դեռևս 16-րդ դարում: Երկիրը բաժանված էր 4 հիմնական մա-

[21] Տե՛ս Л. Болье, Колонизация у новейших народов. СПб., 1870, Эгрето М., Алжирская нация существует, Москва, 1958, Emerit, Marcel. L'Algerie a l'Epoque d'Abd el-Kader. Paris: Editions Larose, 1951, Gillespie, Asell, S. et. al. Histoire d'Algerie. Paris: Boivin, 1927 Gsell, Marsais, Yver. Histoire d'Algerie, Paris, 1929, Blunt, W.J. Desert Hawk, Abd el-Kader, Paris: Presses Universitaires de France, 1947:

սերի, որոնք ղեկավարում էին դեյերը: Նրանցից գլխավորը՝ Ալժիրի դեյը երկրի ղեկավարն էր և հողի գլխավոր սեփականատերը: Դեյուրե Բարձր դռան հպատակության տակ գտնվող այդ երկիրը, դեֆակտո պահպանում էր կիսանկախ իր գոյությունը՝ ներքին հարցերի ինքնուրույն կառավարումը, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և այլ երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և այլն: Այսինքն, տարեկան սահմանված հարկերը օսմանյան գանձարան ժամանակին վճարելուց բացի, Ալժիրը գործնականում կենտրոնի հետ որևէ ուղղահայաց կապ չէր պահպանում:

Այդ երկրում ֆրանսիական զավեշտախաղը սկսվեց 1827 թ. երբ Հուսեյնը՝ Ալժիրի դեյը Ֆրանսիայի հյուպատոս Դևալի հետ Ալժիրին ֆրանսիացիների պարտքի վերաբերյալ հերթական տհաճ խոսակցության ժամանակ չկարողանալով իրեն զսպել, հովհարով հարվածեց հյուպատոսի երեսին: Դևալից միջադեպի մասին լուրն ստանալուն պես ֆրանսիական կառավարությունը բացատրություններ պահանջեց: Սակայն Հուսեյնը հրաժարվեց ներողություն խնդրել, նույնը արեց նաև Բարձր դուռը: Դրանից հետո ֆրանսիացիները դիմեցին Մուհամմադ Ալիին՝ հույս ունենալով, որ վերջինս, զայրացած լինելով թուրքական սուլթանի վրա Սիրիայի կառավարման հարցի կապակցությամբ,[22] վրեժխնդրության այդ հարմար առիթը բաց չի թողնի: Սակայն Մուհամմադ Ալին չցանկացավ ներքաշվել նոր արկածախնդրության մեջ և երեք տարի անարդյունք բանակցելուց հետո Ֆրանսիան, «դեմքը փրկելու» համար, 1830 թ. 100 ռազմանավերի վրա տեղակայված 30-հազարանոց հետևակա-

[22] Սուլթան Մահմուդ 2-րդը, հաշվի առնելով Եգիպտոսի ռազմական կարողությունները, Մուհամեդ Ալիի օգնությունն էր հայցել Արաբիայում, ինչպես նաև 1825 թ. Հունաստանում (Մորեա) ծագած ապստամբությունները ճնշելու համար: Որպես հատուցում՝ Մահմուդը Մուհամմադ Ալիին նվիրաբերեց Կրետե կղզու փաշալիկը, այլ ոչ թե Սիրիան, ինչպես Մուհամմադ Ալին ցանկանում էր: Այդ պատճառով 1832 թ. Մուհամեդ Ալին կազմակերպեց սիրիական արշավանքը և իր որդու՝ Իբրահիմ փաշայի իշխանությունը հաստատեց այնտեղ:

յին զորքն ուղարկեց Ալժիր: Մարսելից դուրս եկած ֆրանսիական նավատորմն Ալժիր հասավ հունիսի 14-ին, և չնայած դեյի հավաքագրած 60-հազարանոց բանակի դիմադրությանը՝ հուլիսի 4-ին ֆրանսիացիները գրավեցին Ալժիրը, ապա կարճ ժամանակ անց՝ նաև Օրանը: Դեյը փախավ Կ. Պոլիս, իսկ ֆրանսիական բանակը լծվեց Ալժիրի կողոպտման ու գաղութացման երկարատև գործին:

Եթե ֆրանսիական կառավարության առաջնային նպատակներից էր Ալժիրում պատժիչ գործողությունների իրականացումը, ապա գրավելով այն և այնտեղ անկառավարելի վիճակ ստեղծելով՝ ստիպված եղավ ժամանակավոր ֆրանսիական կառավարություն կազմավորել: Սկզբնական շրջանում տեղաբնիկ արաբները, բերբերները և կաբիլները ընդունեցին ֆրանսիական իշխանությունը՝ մի կողմից անտարբերության, իսկ մյուս կողմից օսմանյան լծից ազատվելու ուրախության խառը զգացմունքներով:

Երկու տարվա ընթացքում բազմաթիվ ֆրանսիական կառավարիչներ փոխվեցին Ալժիրում: Սակայն ծայրահեղ դաժանությամբ աչքի ընկավ Դյուկ դե Ռովիգոն՝ Ֆրանսիայի նախկին ոստիկանապետը, որը, ի պատասխան ֆրանսիացիներից մեկի սպանության, գազանաբար ոչնչացրեց ալժիրյան ցեղերից մեկը, թեև հետագայում ապացուցվեց, որ տվյալ ցեղը որևէ կապ չուներ այդ սպանության հետ:

Ալժիրյան ընդդիմադիր շարժումն ի հայտ եկավ անմիջապես այդ դեպքերից հետո: Այն գլխավորեց Մասկարայի՝ արևմտյան Ալժիրի արաբական շեյխերից Մուհյի ադ-Դինը, որը սրբազան պատերազմ՝ «ջիհադ» հայտարարեց Ֆրանսիային: Մուհյին առաջնորդ ընտրվեց նախկինում երկրում թուրքական ներկայության դեմ մղած անզիջում պայքարի շնորհիվ: 1828 թ. նա ու իր որդին՝ Աբդ ալ-Քադիրը, ձերբակալվել էին Օրանի օսմանյան դեյի կողմից, որոնք թուրքերին՝ որպես «Ղուրանը պղծողների», օրենքից դուրս էին հայ-

տարարել: Կալանավայրից դուրս գալուց որոշ ժամանակ անց Մուհ-յին հայտարարեց, որ նրան տեսիլք է եկել, ու շուտով Ալժիրում թուր-քական լուծը կվերանա, և Աբդ ալ-Քադիրը կհռչակվի Հյուսիսային Աֆրիկայի սուլթան: Երբ ֆրանսիացիները դուրս շպրտեցին թուրքե-րին երկրից և իրականացավ Մուհյիի կանխագուշակման առաջին մասը, հասարակ ժողովուրդն աստիճանաբար սկսեց հավատալ նաև նրա պատմության երկրորդ մասի ճշմարտացիությանը:

Որպես հասակն առած և զինվորական որևէ փորձառություն չունեցող մարդ՝ Մուհյին շուտով իր տեղը զիջեց որդուն: Ստանալով «Հավատացյալների հրամանատար» կոչումը՝ Աբդ ալ-Քադիրը կոչ արեց Ալժիրի բոլոր ցեղերին «հետևել իրեն և պայքարել հայրենիք ներխուժած թշնամու դեմ»: Ինչպես և հարևան Սուդանում պայքա-րող Մահդին, նա նույնպես հավատում էր, որ ցեղերի միավորման միջոցով ու համատեղ ջանքերով հնարավոր է հասնել հաղթանա-կի: Ինչպես և Մահդին, Աբդ ալ-Քադիրը ատում էր թուրքերին դպրոցական տարիներից ի վեր, երբ ստիպված էր շփվել «գոռոզ և մեծամիտ» օսմանյան պաշտոնյաների երեխաների հետ: Վերջին-ներս էլ նախանձով էին լցվում գեղեցկատես, բարձրահասակ և խե-լացի Աբդ ալ-Քադիրի նկատմամբ: Ընդգծելու համար իր անկա-խությունն ու թուրքական ամեն ինչի հանդեպ իր խորը ատելությու-նը Աբդ ալ-Քադիրն անգամ իր թուրք համադասարանցիների հա-գած մետաքսյա և թավշյա հագուստներին նախընտրում էր հասա-րակ և բամբակյա կոպիտ հանդերձանքը: Մինչև իր կյանքի վերջը Աբդ ալ-Քադիրը այդպես էլ չփոխեց թուրքերի կամ թուրքականի նկատմամբ իր ծայրահեղ անհանդուրժողական վերաբերմունքը:

Ապստամբությունը սկսվեց Ալժիրի հյուսիսարևմտյան մասում, ուր դեռևս չէին թափանցել ֆրանսիական զինվորական ստորաբա-ժանումները: Շուտով երկրի ներքին ողջ տարածքը հայտնվեց ապստամբների ձեռքում: Փարիզի առաջին արձագանքը հանգիստ

էր, սակայն զգացական: Դե Ռովիգոն ետ կանչվեց Փարիզ, և շատ ավելի հավասարակշռված կառավարիչ նշանակվեց ի դեմս Դեսմիշելի, ով Աբդ ալ-Քադիրին առաջարկեց հաշտություն կնքել, որի համաձայն՝ Ֆրանսիան, փաստորեն, ճանաչեց նրա իշխանությունը երկրի արևմտյան մասում: Զինադադարը ձեռնտու էր նաև Աբդ ալ-Քադիրին. նա ուժերը հավաքելու և պատերազմի երկրորդ փուլին նախապատրաստվելու հնարավորություն ստացավ: Սակայն ապստամբների և ֆրանսիական ուժերի միջև բախումները վերսկսվեցին 1835 թ. հունիսին, երբ Մակտա Գորջ կոչվող բնակավայրի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ, որի ավարտին չնայած Աբդ ալ-Քադիրը կորցրեց 1800, իսկ ֆրանսիացիները՝ 250 զինվոր, այնուամենայնիվ վերջիններս ստիպված էին նահանջել Օրան քաղաք: Ի պատասխան, Փարիզը նոր ուժեր ուղարկեց Ալժիր մարշալ Կլաուզելի հրամանատարության տակ: Սակայն դա էլ պարտությունից չփրկեց ֆրանսիացիներին: Աբդ ալ-Քադիրի ուժերը չթողեցին թշնամուն գրավել Արևմտյան Ալժիրի գլխավոր քաղաքը՝ Թլեմսեն, և խորանալով երկրի կենտրոնական մասերը՝ հարձակվեցին ու գրավեցին Ալժիրից 50 մղոն հեռավորության վրա գտնվող Մեդեա քաղաքը: Սակայն վերջին և խայտառակ պարտությունը Կլաուզելը կրեց Կոնստանտինա ամրոց-քաղաքում՝ երկրում մնացած թուրքական վերջին ստորաբաժանումների դեմ պայքարում: Անծանոթ լինելով տեղանքին և իրավիճակին՝ Կլաուզելը կորցրեց իր ուժերի կեսը (շուրջ 8 հազար զինվոր) և ստիպված եղավ վերադառնալ Ֆրանսիա՝ պարտված և հեղինակազրկված:

Ֆրանսիական զորքերի նոր գլխավոր հրամանատար նշանակվեց նրա տեղակալ Բուգոն, որը Ֆրանսիան «անարգանքից փրկելու» նպատակով ստիպված եղավ զինադադար կնքել Աբդ ալ-Քադիրի հետ՝ ճանաչելով վերջինիս իշխանությունն Արևմտյան և Կենտրոնական Ալժիրում՝ բացառությամբ Օրան և Ալժիր քաղաքների, ինչպես նաև նրանց միջև ընկած փոքր տարածքի:

Աբդ ալ-Քադիրը քաջ գիտակցում էր, որ զինադադարը ֆրանսիացիները փորձելու են օգտագործել ժամանակ շահելու և երկրում թուրքական ներկայությանը վերջ դնելուց հետո բանակի ողջ ուժն ու կարողություններն իր դեմ ուղղելու նպատակով: Այդպես էլ եղավ. 1837 թ. հոկտեմբերին ֆրանսիացիները գրավեցին Կոնստանտինան: Մեկ տարի անց նրանք լուրջ հայտ ներկայացրին ամբողջ Կաբիլիայի՝ Ալժիրի և Կոնստանտինայի միջև ընկած տարածքի վրա: Ֆրանսիացիների այդ նկրտումներն արդեն իսկ խախտում էին Աբդ ալ-Քադիրի հետ ձեռք բերված պայմանավորվածությունները:

1840 թ. մարտին երկրում ֆրանսիական ավելի քան 60-հազարանոց բանակ կար: Նույն թվականի մարտին օկուպացիոն զորքերը գրավեցին Մեդեան և Միլիանան՝ ոչնչացնելով ալժիրյան ուժերի 2/3-րդը: Զուգահեռաբար Բուգոն սկսեց իրականացնել, այսպես կոչված, «պատժիչ գործողություններ», որոնց ընթացքում անխնա ոչնչացվում էին գյուղեր և խաղաղ բնակիչներ:

Երբ ֆրանսիացիները 1842 թ. հունվարին գրավեցին ապստամբների վերջին կենտրոնը՝ Թլեմսեն, Աբդ ալ-Քադիրը փախուստի դիմեց և ապաստան գտավ Մարոկկոյում: Պետք է նշել, որ իշխանությունները ապստամբության ընթացքում որևէ կերպ չարձագանքեցին վերջինիս օժանդակելու վերաբերյալ ալժիրցիների բազմաթիվ կոչերին ու խնդրանքներին: Եվ միայն 1844 թ., երբ Ֆրանսիան որոշեց հետապնդել Աբդ ալ-Քադիրին և ոչնչացնել արդեն Մարոկկոյում, ղեկավարությունը ստիպված եղավ ներքաշվել պատերազմի մեջ: Ֆրանսիական ուժերի առաջխաղացումից հետո Մարոկկոյի սուլթանը ստիպված եղավ հնազանդվել ֆրանսիացիներին և իր հերթին Աբդ ալ-Քադիրից պահանջեց թողնել երկիրը: Արդեն 100-հազարանոց ֆրանսիական բանակն էր իրականացնում Աբդ ալ-Քադիրի հետապնդումը:

1847 թ. դեկտեմբերին Մարոկկոյի և Ալժիրի սահմանին Աբդ ալ-Քադիրի նոսրացած ջոկատը ընկավ շրջապատման մեջ, ապստամբության ղեկավարը ձերբակալվեց և ուղարկվեց Ֆրանսիա, որտեղ, չնայած ձերբակալման ժամանակ ֆրանսիացիների տված այն խոստումին, որ նա կուղարկվի մահմեդական որևէ երկիր, պահվեց բանտարկության մեջ մինչև 1852 թվականը՝ Ֆրանսիայի վարչակարգի իշխանափոխությունը: Բուրբոններին փոխարինած Լուի Նապոլեոնը «Ֆրանսիայի պատիվը վերականգնելու» նպատակով ոչ միայն ազատ արձակեց Աբդ ալ-Քադիրին, այլև մի շարք բարձր ընդունելություններից հետո նրան նշանակեց տարեկան թոշակ և ուղարկեց Թուրքիա:

Թուրքական իշխանությունների սառը ընդունելության պատճառով նա Բուրսայից տեղափոխվեց Դամասկոս: 1860 թ. Դամասկոսում տեղի ունեցան քրիստոնյա արաբների կոտորածներ, որոնք հրահրել էր թուրք կառավարիչը: Աբդ ալ-Քադիրն իր ձայնը բարձրացրեց այդ կոտորածների դեմ՝ ևս մեկ անգամ իր անմիջական միջամտությամբ մեծ թվով քրիստոնյաներ փրկելով անխուսափելի մահից: Նրա ազնիվ և խիզախ գործողությունները գովասանքի և բարձր գնահատանքի արժանացան եվրոպական տերությունների կողմից: Լուի Նապոլեոնը ավելացրեց Աբդ ալ-Քադիրի կենսաթոշակը՝ նրան շնորհելով «Պատվո լեգիոնի մեծ խաչ»: Նույն պատիվներին նա արժանացավ նաև Ռուսաստանի միապետի և Հունաստանի թագավորի կողմից: Մինչև իր մահը՝ 1883 թվականը, Աբդ ալ-Քադիրը զբաղվեց գիտությամբ:

Ճիշտ է Աբդ ալ-Քադիրը շուրջ 15 տարի պայքարեց Ֆրանսիայի դեմ, սակայն չկարողացավ անկախություն ձեռք բերել Ալժիրի համար: Նրա անհաջողության պատճառներից էին թերևս այն, որ բախվելով բազմաթիվ դժվարությունների՝ մերժեց թուրքական օգնության որևէ հնարավորություն, ինչպես նաև այն, որ Աբդ ալ-

Քադիրի հետ միասին պայքարող ցեղերի մոտ բացակայում էին «ասաբիյայի» հատկանիշները:

Ավելի ուշ արաբական այլ գործիչներ առաջնորդեցին արաբական ազգային շարժումը դեպի առավել նշանակալի հաղթանակների, քան այն, ինչ հասցրեց անել Աբդ ալ-Քադիրը: Սակայն շատ քչերը ցուցաբերեցին նրա նման քաջություն պայքարում, ասպետություն՝ հաղթանակում և վեհանձնություն՝ նրանց նկատմամբ, ովքեր իրեն և իր ժողովրդին այդքան տառապանք ու ցավ էին պատճառել:

Եթե Ֆրանսիան ու Անգլիան նույնպիսի մեծահոգություն և ըմբռնում ցուցաբերեին Արաբական աշխարհի նկատմամբ, կարծում ենք այլ կլիներ արյամբ գրված արաբների նորագույն պատմությունը:

7. Արաբիան 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին[23]

Իսլամի ծննդավայրը՝ Արաբական թերակղզին, միշտ պահպանել է իր կրոնական և հոգևոր նշանակությունը արաբների համար: Չնայած Արաբիայով չեն անցել առևտրական հիմնական ճանապարհները, և այնտեղ չեն գտնվել արաբական աշխարհի արդյունաբերական կենտրոնները, այնուամենայնիվ այն միշտ համարվել է կրոնական տարբեր շարժումների և հոսանքների հայրենիքը:

[23] Տե՛ս Яковлев А. И., Саудовская Аравия: Пути эволюции. Институт Востоковедения, РАН, Москва, 1999, Васильев А., История Саудовской Аравии, Москва, 1978, Герасимов О.Г. Саудовская Аравия из средневековья в XX век, Москва, 1978, Hopwood, Derek. The Arabian Peninsula. London, 1972, Winder, R. Bayly. Saudi Arabia in the Nineteenth Century. New York. 1965, Troeller, Gary. The Birth of Saudi Arabia: Britain and the Rise of the House of Saud. London, 1976, Kelly, B. John. Britain and the Persian Gulf, 1795-1800. New York, 1968, Amin, Abdul Amir. British Interest in the Persian Gulf. Leiden, 1966, Rihan, Ameen. Ibn Saud of Arabia. London, 1928:

Այսպես, 18-րդ դարի սկզբներին այստեղ մեծ տարածում գտավ վահաբիական կրոնաքաղաքական շարժումը, որի հիմնադիրն էր Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահաբը: Նա պահանջում էր վերադառնալ մուսուլմանների Սուրբ գրքին՝ Ղուրանին, և նրա ուղղափառ հոսանքին՝ սուննիականությանը: Վահաբականությունը մերժում էր բոլոր այն նորամուծությունները, որոնք կատարվել էին վաղնջական իսլամի մեջ: Այն կողմ էր միաստվածությանը և դեմ էր ոչ միայն կռապաշտությանը, այլև սրբերի պաշտամունքին, քարոզում էր սոցիալական հավասարություն և արդարություն: Մեկ միասնական հայեցակարգի (թավիիդ) հռչակումն ուներ իր հետևյալ պարզ բացատրությունը՝ կրոնական ձևերի տարբերությունը, որը հիմնականում սոցիալական ցածր զարգացման հետևանք էր, խոչընդոտում էր քաղաքական միավորմանը:

Վահաբականությունն ուներ նաև հակաթուրքական ուղղվածություն: Այն թուրքերին համարում էր վատ մահմեդականներ, իսկ Օսմանյան կայսրությունը՝ «արատավոր» և «կեղտոտ»: Վահաբականության հետնորդները դեմ էին միստիցիզմին և դերվիշականությանը:

Դեռևս 16-17-րդ դարերում ծավալված հակաթուրքական շարժումների ավարտին արաբներն արտաքսեցին թուրքերին Արևելյան Արաբիայից, ինչպես նաև Եմենից: Կենտրոնական Արաբիայում, որը նույնպես չէր մտնում Օսմանյան կայսրության կազմի մեջ, 18-րդ դարի սկզբին սկսեց աստիճանաբար հզորանալ Սաուդյան ընտանիքը, որը Նեջդի Դարիա օազիսում հիմնեց ոչ մեծ էմիրություն: Վահաբիների առաջնորդ Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահաբը, համաձայնության գալով Մուհամմադ իբն Սաուդի, ինչպես նաև նրա որդու՝ Աբդ ալ-Ազիզ Սաուդի հետ, վահաբիզմի դրոշի ներքո 19-րդ դարի սկզբին արդեն գրավել էր ոչ միայն Կենտրոնական Արաբիան, այլև Սիրիան ու Իրաքը: 19-րդ դարի երկրորդ կեսին պարտություն կրելով Մուհամմադ Ալիից՝ վահաբիները պատսպարվե-

ցին Նեջդի բարձրավանդակում և Արաբական թերակղզու արևելյան մասերում: Նրանց ազդեցությունն աստիճանաբար նվազեց մրցակից արաբական տոհմի՝ Ռաշիդիների բարձրացման (Շամմառի էմիրություն) և Մեքքայի շարիֆ Հուսեյնին օսմանյան իշխանությունների կողմից ցուցաբերված օժանդակության հետևանքով:

1890 թ. Ռաշիդիները ստիպեցին Սաուդներին թողնել Նեջդը և ապաստան գտնել Քուվեյթի շեյխի մոտ: 1899 թ. Գերմանիան ստացավ Բաղդադի երկաթուղու նախնական կոնցեսիան, որի վերջին կետը պետք է լիներ Քուվեյթը: Հեղաշրջում կազմակերպելով Քուվեյթում՝ Լոնդոնն իր դրածոյին բերեց իշխանության գլուխ և պատերազմ հրահրեց Քուվեյթի և Շամմառի էմիրության միջև՝ Քուվեյթի թիկունքում ամրանալու նպատակով: Ստեղծված առիթից չհապաղեց օգտվել Աբդ ալ-Ազիզ իբն Սաուդը, որին 1902 թ. հաջողվեց փոքրաթիվ ջոկատով գրավել Ռիադը: Ներքին հակասություններից թուլացած Ռաշիդիները չկարողացան դիմակայել վահաբիների աճող ազդեցությանն ու ուժին: Վերջիններս շատ կարճ ժամանակում իրենց ենթարկեցին ամբողջ Կենտրոնական Արաբիան և Խասան՝ մի շարք հաղթանակներ արձանագրելով Մեքքայի շարիֆի դեմ մղված պայքարում:

Այսպիսով, Իբն Սաուդը հաղթեց իր անձնական պայքարի առաջին փուլում: Երկու շաբաթ անց նա հոչակվեց Նեջդի էմիր և Վահաբիների իմամ: Շուտով նրան միացան մեծ թվով համախոհներ, և Իբն Սաուդը երկու տարվա ընթացքում համատեղ կարողացավ վերահսկողություն հաստատել Նեջդի ողջ տարածքի վրա: Իբն Ռաշիդն իր հերթին հայցեց Բարձր դռան օգնությունը: 1904 թ. ամռանը թուրքական ռազմական ստորաբաժանումը հասավ Ղասիմ՝ Նեջդի հյուսիսարևմտյան մասը, և պարտության մատնեց Իբն Սաուդին, որը բախման ընթացքում վիրավորվեց: Սակայն տեղի կլիմային անսովոր թուրքական զորքերի մեջ արագորեն տարած-

վեց համաճարակը, և նրանք ստիպված եղան լքել Շամմառի իրենց դաշնակցին:

1906 թ. ապրիլին մեկ այլ բախման ժամանակ Իբն Ռաշիդը սպանվեց, իսկ նրա կողմնակիցները հանձնվեցին Իբն Սաուդի զինվորներին: Այսպիսով, Իբն Սաուդի իշխանության տակ հայտնվեց ամբողջ Նեջդը: Իբն Սաուդի միակ անհանգստությունը Խասայի ցեղերն էին, որոնք արևելքից պարբերաբար հարձակումներ էին գործում սաուդյան ուժերի վրա: 1914 թ. Իբն Սաուդը գրավեց նաև Խասայի մայրաքաղաքը և վերահսկողություն հաստատեց Պարսից ծոցի մերձափնյա ողջ շրջանում՝ Քուվեյթից մինչև Բահրեյն: Եվ եթե թուրքերը, հանձին Բարձր դռան, այդուհետ հանգիստ թողեցին Իբն Սաուդին, ապա վերջինիս հաջողություններն անթաքույց հետաքրքրություն առաջացրին մեկ այլ ուժի՝ Մեծ Բրիտանիայի մոտ:

Սուեզի ջրանցքի կառուցումից հետո Արաբիայի ծովեզերքը հայտնվել էր Եվրոպայից Ասիա տանող գլխավոր ծովային ճանապարհին: Անգլիան վաղուց մի շարք հենակետային բազաներ էր գրավել այդ ծովափին: Ջրանցքի բացումից դեռևս շատ առաջ նա տիրել էր Ադենին՝ իր փաստական պրոտեկտորատի տակ պահելով Օման: 19-րդ դարի վերջին նա ձգտում էր իր դիրքերն ամրապնդել և ընդլայնել Արաբիայում: Մյուս տերությունները՝ Ֆրանսիան, Ռուսաստանը, Գերմանիան, նույնպես ձգտում էին բազաներ ձեռք բերել այստեղ: Պայքարն այդ երկրների միջև էլ ավելի սրվեց Առաջին աշխարհամարտի ընթացքում: Հիջազում, Սիրիայում և Հորդանանում Մեքքայի շարիֆ Հուսեյնի պայքարը թուրքերի դեմ ապահովելու համար բրիտանացիներին անհրաժեշտ էր հանգիստ և կայուն իրավիճակ պահպանել Արաբիայում[24]: Այդ նպատակով 1915 թ.

[24] Թուրքերի դեմ պայքարելու դիմաց Անգլիան Հուսեյնին խոստացավ պատերազմից հետո ստեղծել արաբական անկախ պետություն, որը պետք է ընդգրկեր Ասիայի արաբական բոլոր երկրները (Հուսեյն-Մաք Մահոն նամակագրությունը): Այդ խոստում-

դեկտեմբերին Բրիտանական կառավարությունը պայմանագիր կնքեց Իբն Սաուդի հետ, որով վերջինս ճանաչվեց Նեջդի սուլթան, և ամսական 5000 ֆունտ դրամաշնորհ հատկացվեց: Բրիտանիայի նպատակը միանգամայն հասկանալի էր՝ ապահովել Արաբիայի ներքին կայունությունը, որպեսզի Մեքքայի շարիֆն ի վիճակի լինի, բրիտանացիներին տված իր խոստման համաձայն, պատերազմ սանձազերծել թուրքերի դեմ Հիջազում, ինչպես նաև Հորդանանում և Սիրիայում: Նույն ժամանակ բրիտանացիները Հուսեյնի հետ բանակցում էին պատերազմի մեջ մտնելու պայմանների վերաբերյալ: Սակայն 1918 թ. Արաբական թերակղզում Հուսեյնի և Իբն Սաուդի կողմնակիցների միջև բախումն ավարտվեց հիջազցիների պարտությամբ:

Զբաղված լինելով իր հիմնական հակառակորդ Ռաշիդի դեմ պայքարով՝ Իբն Սաուդը մինչև 1924 թ. որևէ քայլ չձեռնարկեց Հիջազը գրավելու ուղղությամբ: Նույն թվականին Իբն Սաուդը գրավեց Մեքքան և Թայիֆը: 1925 թ. դեկտեմբերին վերցնելով Ջիզզան՝ Իբն Սաուդն ավարտեց Հիջազի գրավումը: 1927 թ. Բրիտանիան ճանաչեց Իբն Սաուդին որպես Հիջազի թագավոր, Ֆեյսալին՝ որպես Իրաքի թագավոր և Աբդալլահին՝ որպես Անդրհորդանանի էմիր: Այսպիսով, բացառությամբ 1936 թ. Սաուդյան Արաբիայի և Եմենի միջև ծագած կարճատև պատերազմի՝ Արաբական թերակղզում հաստատվել էր կայուն խաղաղություն:

Ինչպես նշել էինք, բրիտանացիներն ու օսմանյան թուրքերն այնտեղ միակ օտարերկրացիներն էին: Առաջին համաշխարհային պատերազմից հետո արևմտյան շահագրգիռ տերություններին ա-

---

ներից և անգլիական օժանդակությունից գոտեպնդված՝ Հուսեյնը 1916 թ. Հիջազի բեդվինական ցեղերին ապստամբության հանեց Թուրքիայի դեմ: Սակայն Ֆրանսիան և Անգլիան, նախօրոք համաձայնության գալով, արաբական երկրները «ազդեցության ոլորտների» բաժանեցին: Ավելին, խոստացված «Արաբների թագավորի» փոխարեն պաշտոնական Լոնդոնը Հուսեյնին ճանաչեց միայն որպես «Հիջազի թագավոր»՝ Արաբական թերակղզու առավել ամայի ու աղքատ շրջաններից մեկի թագավորը:

վելացավ ԱՄՆ-ն, որը լուրջ հետաքրքրություն էր ցուցաբերում այդ շրջանի նավթային հարուստ պաշարների նկատմամբ: Կարող ենք ասել, որ Երկրորդ աշխարհամարտից հետո Պարսից ծոցը դարձավ ԱՄՆ ռազմավարական և կենսական շահերի հետապնդման հիմնական հենարանը:

Ինչ վերաբերում է Պաղեստինում հրեաների և արաբների միջև ընթացող անհաշտ պայքարին, ինչպես նաև Սիրիայում, Լիբանանում և արաբական այլ երկրներում տեղի ունեցող ճակատագրական դեպքերին, ապա պետք է նշել, որ Իբն Սաուդը որդեգրել էր չեզոք դիրքորոշում: Չեզոք էր նրա դիրքորոշումը ինչպես Բրիտանիայի և ֆաշիստական Գերմանիայի միջև ընթացող պատերազմի, այնպես էլ Պաղեստինում հրեական պետության ստեղծման նկատմամբ:

Բրիտանիային մշտապես անհանգստացնում էր Հնդկաստանի վրա հարձակում իրականացնելու նպատակով այլ տերությունների կողմից Եփրատ-Պարսից ծոց ճանապարհի օգտագործման հնարավորությունը: Ֆրանսիայի, Ռուսաստանի, այնուհետև Գերմանիայի ազդեցությունն այդ տարածքում սահմանափակելու նպատակով, Անգլիան արդեն իսկ 1869 թ. տիրել էր Ադենը, իր փաստացի վերահսկողության տակ էր պահում Օմանը և Մուսկատը: Աստիճանաբար Լոնդոնն իր դիրքերն էր ամրապնդում և ընդլայնում Արաբիայում՝ պրոտեկտորատ հաստատելով 1880 թ. Բահրեյնի, 1891 թ. Մասկատի, իսկ 1916 թ.՝ նաև Կատարի վրա: Ինչ վերաբերում է Քուվեյթին, ապա 19-րդ դարի կեսից, որպես Պարսից ծոցի առանցքային նավահանգիստ, այն պետք է դառնար Գերմանիայի կառուցելիք Բեռլին–Բաղդադ–Պարսից ծոց երկաթուղու վերջնականգառը: Սակայն, Գերմանիայի ներկայությունն Արաբիայում թույլ չտալու նպատակով Անգլիան 1899 թ. հեղաշրջում իրականացնելով Քուվեյթում, ստիպեց վերջինիս պայմանագիր կնքել իր հետ, որի համաձայն՝ Քուվեյթի շեյխն «իր ժառանգների և սե-

ռունդների անունից» պարտավորվում էր իր տիրապետությունը չզիջել որևէ մեկին՝ բացի Անգլիայից: Գերմանիայի և Անգլիայի միջև ծավալված պայքարում Գերմանիան ստիպված եղավ հրաժարվել Բաղդադի երկաթուղին մինչև Պարսից ծոց շարունակելու իր մտադրությունից: 1914 թ. նոյեմբերի 3-ին Մեծ Բրիտանիան ճանաչեց Քուվեյթի անկախությունը բրիտանական խնամակալության տակ[25]:

Անգլիային հաջողվեց վերացնել նաև Ֆրանսիայի (1904 թ. անգլո-ֆրանսիական համաձայնություն) և Ռուսաստանի (1907 թ. անգլո-ռուսական պայմանագիր) հավակնությունները Պարսից ծոցի նկատմամբ: Բարձր դուռը նույնպես ստիպված եղավ ճանաչել Անգլիայի «հատուկ պայմանավորվածությունները» տարածաշրջանում:

Արաբական թերակղզու հարավարևմտյան մասը թե՛ աշխարհագրականորեն և թե՛ մշակութապես տարբերվում է մնացած արաբական շրջաններից: Գլխավորապես բարձունքներով և սարերով պատած այս տարածքն իր վրա է կրել Եթովպիայի, Իրանի և Հնդկաստանի զգալի ազդեցությունը: Անտիկ ժամանակներում հարավարևմտյան Արաբիան պաշտպանում էր ո՛չ արաբական, համենայն դեպս ո՛չ հյուսիսային արաբական քաղաքակրթությունները:

Արաբիայի բարձունքային մասի համեմատ ավելի խոցելի վիճակում գտնվելու և ընդարձակ նավահանգիստ լինելու պատճառով էր, որ արևմտյան առաջին ներթափանցումն իրականացվեց Ադենում (Եմեն): Անհանգստանալով Հնդկաստանի հանդեպ Նապոլեոնի ունեցած հավակնություններից՝ 1799 թ. Բրիտանիան փոքրա-

[25] Նշված երկրների վերաբերյալ տե՛ս Zahlan, Rosemarie Said. The Origins of the United Arab Emirates. New York, 1978, Risso, Patricia. Oman and Muscat. New York, 1986, Peterson, John. Oman in the Twentieth Century. London, 1978, Farrah, Talal. Protection and Politics in Bahrain, 1869-1915. Beirut, 1985, Lawson, Fred. Bahrain: Modernization of Autocracy. Boulder C., 1989, Zahlan, Rosemarie Said. The Creation of Qatar. London, 1979,

թիվ ստորաբաժանում ուղարկեց Պերիմ կղզին գրավելու նպատակով[26]: 1802 թ. անգլիացիները «Բարեկամության և առևտրի» համաձայնագիր կնքեցին Լահեջի սուլթանի հետ: Սակայն Նպոլեոնի ծրագրերի փոփոխությունից հետո Բրիտանիայի հետաքրքրությունն այդ շրջանի նկատմամբ նվազեց: Միայն 1838 թ. այս անգամ արդեն Մուհամմադ Ալիի սպառնալիքի առկայությունն էր, որ ստիպեց Բրիտանիային օգտագործել բրիտանական դրոշի ներքո նավարկող հնդկական նավի վրա հարձակման առիթը և գրավել Ադենը:

Ադենը՝ որպես խոշոր նավահանգիստ, որտեղ լիցքավորվում էին բրիտանական շոգենավերը, կարևորվում էր նաև «առևտրի և պատերազմի նկատառումներով»: Գրավելով Ադենը՝ անգլիացիները բնականաբար ձեռնամուխ եղան սահմանների պաշտպանությանը, ինչն իր հերթին չէր կարող չհանգեցնել հարևանների գործերին միջամտելուն: Շարունակ ենթարկվելով հարևան ցեղերի հարձակումներին՝ բրիտանացիները, այսպես կոչված, Ադենի պրոտեկտորատի կազմում աստիճանաբար ընդգրկեցին Սոկոտրան (1886), Կուրիա Մուրիա կղզիները (1854): Անգլիական նավատորմը շարունակում էր նավարկել Հադրամաութի ծովեզերքի երկայնքով՝ տեղական շեյխերին հարկադրելով ընդունել անգլիական պրոտեկտորատը: Իր հերթին անգլիական ակտիվությանը Հարավային Արաբիայում, մասնավորապես Եմենի հյուսիսում, հակադրվում էր Թուրքիան, որը 1872 թ. այնտեղ զորքեր ուղարկեց: Տեղական ցեղերի դեմ մղված կռիվներում Բարձր դուռը գրավեց այդ շրջանը: Հյուսիսային Եմենը վերածվեց Օսմանյան կայսրության վիլայեթի: Պետք է նշել նաև, որ թուրքերն այդպես էլ չկարողացան գրավել Արաբիայի ներքին շրջանները: Դրանք Օսմանյան կայսրության փլուզումից

Kour. Z. H., The History of Ade, London, 1981, Сейранян Б.Г. Новейшая история Йемена, 1917-1982, Москва, 1984:

[26] Կղզին կանգառ էր ծառայում Կարմիր ծով մուտքի ճանապարհին:

հետո՝ 1919 թ., հռչակվեցին անկախ: 1934 թ. Մեծ Բրիտանիան պայմանագիր կնքեց Եմենի հետ, որով ճանաչեց նրա անկախությունը: Եմենի հարավային մասը (Ադենի պրոտեկտորատը) համառ պայքարի գնով անկախություն ձեռք բերեց միայն 1967 թ. (Հարավային Եմենի Ժողովրդական Հանրապետություն, 1970 թվականից հետո՝ Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն): 1990 թ. մայիսի 22-ին Եմենի երկու հանրապետությունների ղեկավարները հայտարարեցին միասնական պետության՝ Եմենի Հանրապետության ստեղծման մասին:

ԳԼՈՒԽ Բ
ԵԳԻՊՏՈՍԸ 18-19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ: ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

1. Նապոլեոնի արշավանքը Եգիպտոս

Այն ժամանակ, երբ 18-րդ դարում Եվրոպայում ֆրանսիական հեղափոխությունը վերջ էր դնում ֆեոդալական համակարգին, թվում էր, թե արաբական երկրները պատրաստ չեն ընդունելու հեղափոխության հռչակած ազատական նոր գաղափարները: Սակայն շատ շուտով այդ գաղափարների ազդեցությունն իրեն զգացնել տվեց արաբական աշխարհում, մասնավորապես արաբական երկրներից ամենազարգացած Եգիպտոսում: Ֆեոդալիզմի փլուզումն այստեղ ընթացավ չափազանց արագ, քանի որ երկիրը կարծես սոցիալապես և տնտեսապես պատրաստ էր հակաֆեոդալական պայքարին:

Ֆրանսիան դեռևս բուրժուական հեղափոխությունից շատ առաջ ձգտում էր գրավել Եգիպտոսը, իսկ հեղափոխությունից հետո ֆրանսիական բուրժուազիան արտաքին քաղաքական օրակարգ մտցրեց եգիպտական հարցը: Ֆրանսիան մշտապես կարևորել է Միջերկրական ծովի արևելյան վերջնամասում գտնվող այդ երկրի ռազմավարական դիրքը: Եգիպտոսը գրավելու դեպքում Ֆրանսիան, որն արդեն իսկ իշխում էր Ապենինյան թերակղզում, հնարավորություն կստանար վերահսկողություն հաստատելու Միջերկրականի ողջ տարածքի վրա՝ մշտապես լարվածության մեջ պահելով իր վաղեմի հակառակորդ Անգլիային:

1797 թ. գրավելով Իտալիան և առաջանալով դեպի Բալկանյան թերակղզի՝ Նապոլեոն Բոնապարտը հասավ խորը ճգնաժամի մեջ գտնվող Օսմանյան կայսրության սահմաններին: Վերջինս,

պարտություններ կրելով Ավստրիայի և Ռուսաստանի հետ ունեցած պատերազմներում, թուլացել էր և անկարող էր Ֆրանսիային որևէ լուրջ դիմադրություն ցույց տալ: «Թուրքական կայսրությունը քայքայվում է և որևէ պատճառ չկա նրան պաշտպանելու»[27],– գրում էր Դիրեկտորիային Բոնապարտը: Վերջինս հուսով էր, որ Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի արաբական երկրների գրավման շնորհիվ Ֆրանսիան կվերածվի գաղութատեր հզոր կայսրության:

Ֆրանսիայի աճող ազդեցությունը լուրջ մտահոգում էր Անգլիային: Ֆրանսիայի տնտեսական զարգացումը սպառնում էր զրկել Լոնդոնին համաշխարհային շուկաներում հաստատած առաջնությունից, ինչպես նաև արդյունաբերական մենաշնորհից: Անգլիական բուրժուազիան ձգտում էր ճնշել իր հակառակորդին, գրավել նրա շուկաներն ու գաղութները: Համաշխարհային գերիշխանություն հաստատելու համար ընթացող պայքարը Անգլիայի և Ֆրանսիայի միջև երկարատև պատերազմների պատճառ դարձավ, ինչն էլ իր հերթին հանգեցրեց Անգլիայի հզորացմանն ու Նապոլեոնի կայսրության փլուզմանը:

Համաշխարհային գերիշխանության հաստատման ճանապարհին Ֆրանսիայի համար միակ խոչընդոտը Օսմանյան կայսրությունն էր: Պաշտոնական Փարիզը գաղտնաբար ծրագրեց կայսրության ամենահարուստ շրջաններից մեկի՝ Եգիպտոսի գրավումը: Անգլիայից ամենակարճ ուղին դեպի Հնդկաստան անցնում էր Եգիպտոսով: Չնայած այն ժամանակ դեռ կառուցված չէր Սուեզի ջրանցքը, իսկ Ալեքսանդրիայի և Սուեզի միջև դեռևս չէր բացվել ծովային ճանապարհը, սակայն բեռնափոխադրումների համար կառուցված կայաններն օգտագործվում էին բեռների, ուղևորների, փոստի և ցամաքային այլ անհրաժեշտ փոխադրումների համար:

[27] Ասիայի և Աֆրիկայի երկրների նոր պատմություն, Երևան, 1978, էջ 308:

Այսպես, բեռները Անգլիայից հասնում էին Ալեքսանդրիայի նավահանգիստ, որից հետո քարավանով տեղափոխվում Սուեզ՝ զգալիորեն կրճատելով Հնդկաստան տանող ճանապարհը: Գրավելով Եգիպտոսը՝ Նապոլեոնը մտադիր էր առաջին հերթին ձեռք բերել հարուստ գաղութ, երկրորդ՝ բարելավել իր սեփական դիրքերը Միջերկրականի արևելյան մասում, երրորդ՝ թուլացնել Անգլիայի կապերը Հնդկաստանի հետ, չորրորդ՝ ամուր հենակետ ստեղծել հետագայում դեպի Հնդկաստան արշավանք կազմակերպելու համար:

1798 թ. Բոնապարտը համոզեց Դիրեկտորիային որոշում ընդունել ֆրանսիական զորքերը Եգիպտոս ուղարկելու վերաբերյալ: Նույն թվականի ապրիլին նա նշանակվեց արևելյան բանակի հրամանատար, իսկ արդեն մայիսին ֆրանսիական 38-հազարանոց բանակը դուրս եկավ հարավային Ֆրանսիայի և Իտալիայի նավահանգիստներից և ճանապարհին առանց կորուստների գրավելով Մալթա կղզին՝ հասավ Աֆրիկայի ափին՝ Ալեքսանդրիային: Տասնյակ մալթացի արաբներ ընդգրկվեցին ֆրանսիական արշավախմբի մեջ որպես թարգմանիչներ և սկաուտներ:

Առանց Եգիպտոս ներխուժելու մանրամասների մեջ խորանալու անհրաժեշտ ենք համարում կանգ առնել Նապոլեոնի արշավանքի՝ ինչպես Եգիպտոսի, այնպես էլ տարածաշրջանի համար ունեցած ազդեցության ու հետևանքների վրա:

Նապոլեոն Բոնապարտը Ալեքսանդրիան գրավեց հուլիսի 2-ին՝ սկիզբ դնելով արաբական աշխարհում հաջորդ երկու հարյուրամյակներում տեղի ունեցած դեպքերին ու զարգացումներին: Այսպես՝ Մուհամմադ Ալիի հայտնությունն ու նրա իշխանության հաստատումը Եգիպտոսում, արևմտյան գիտության, մշակույթի և առաջադեմ գաղափարների տարածումը, ժամանակակից արաբական ազգայնականության առաջացումն ու զարգացումը Նապոլեոնի

արշավանքի անմիջական ազդեցության արդյունքն են: Ֆրանսիացիների ներխուժումը Եգիպտոս արթնացրեց արաբական աշխարհը «դարավոր քնից», հանեց Եգիպտոսը գավառական մոռացությունից և վերադարձրեց միջազգային քաղաքականության առաջնային շարքեր: Չնայած դրանից հետո՝ միայն 150 տարի անց, Եգիպտոսին հաջողվեց անկախություն նվաճել, այնուամենայնիվ ֆրանսիական արշավանքի հետևանքով Եգիպտոսը վերականգնեց Արևելքն Արևմուտքի հետ կապող առանցքային կամրջի իր նախկին կարևոր դերն արաբական աշխարհում:

Նապոլեոնի զինվորներն անշուշտ Արևմուտքի առաջին ներկայացուցիչները չէին, ոչ էլ անգամ առաջին ֆրանսիացիները, որոնք ոտք էին դնում Մերձավոր Արևելք սկսած այն ժամանակվանից, երբ վերջին խաչակիրները հեռացան տարածաշրջանից: 16-րդ դարի սկզբում եվրոպական վաճառականները հիմնեցին առևտրական համայնքներ Սիրիայում և Լիբանանում՝ օսմանյան իշխանություններից ստանալով արտոնյալ իրավունքներ (կապիտուլացիաների ռեժիմ), որոնց համաձայն՝ նրանք ազատված էին հարկերից և դատական հետապնդումներից: Անգամ Օսմանյան կայսրության տարածքում կատարված որևէ հանցանքի համար նրանց պատասխանատվության էին կանչում իրենց երկրների հյուպատոսական դատարաններում:

Առաջինը վենետիկցիներն էին, հետո՝ ֆրանսիացիները և անգլիացիները, որոնք ժամանեցին տարածաշրջան՝ առևտուր անելու նպատակով: Ֆրանսիացիներն անմիջապես լծվեցին արևելյան շքեղության մեջ արևմտյան պահանջները բավարարելու գործին: Ժամանակի ընթացքում ֆրանսիացիները վերածվեցին արաբ և եվրոպական կաթոլիկներին պաշտպանող ուժի: Ֆրանսիական և եվրոպական այլևայլ միսիոներներն ու ուսուցիչները սկսեցին հիմնադրել դպրոցներ ու եկեղեցիներ՝ իրենց քարոզչությունը իրակա-

նացնելու նպատակով: Այս բոլորը հանդուրժողաբար ընդունվում էր օսմանյան իշխանությունների կողմից որպես եվրոպական առևտրական համայնքների գոյության անխուսափելի պայմաններ:

Երբեմն եվրոպական այս նորարարությունները ողջունում և անգամ արժանանում էին տեղական կառավարիչների աջակցության: Օրինակ՝ Լիբանանում Եվրոպայի հետ ակտիվ շփումների շնորհիվ զարգանում էին ճարտարապետությունն ու գյուղատնտեսությունը, մեծ վերելք ապրեցին արվեստները, քաղաքաշինությունը: Բեքաա հարթավայրը ժամանակակից գյուղատնտեսական մեթոդների կիրառման շնորհիվ վերածվեց պտղատու այգիների և հացառատ մարզի: Լիբանանը դարձել էր Օսմանյան կայսրության առաջին հարկատու երկրներից մեկը՝ վճարվող հարկի չափերով: Այսուհանդերձ, երկու դար հետո Օսմանյան կայսրության տարածք ֆրանսիական բանակի ներխուժումը Բարձր դռան խիստ հակազդեցություն առաջացրեց: Նապոլեոնը կանխատեսում էր նման արձագանք և թուրքերի աչքերին թոզ փչելու նպատակով Ալեքսանդրիա մուտք գործելուց հետո անմիջապես հայտարարեց, որ ինքը եկել է՝ այդ «շուռ տված» մահմեդականներին՝ մամլուքներին պատժելու և Ալի Բեյի ապստամբությունից հետո որոշակիորեն խարխլված սուլթանի իշխանությունը Եգիպտոսում վերականգնելու նպատակով: Սակայն թուրքերը քաջ գիտակցում էին, որ Նապոլեոնի իրական նպատակը ֆրանսիական հենակետ հիմնելն էր, որը կխոչընդոտեր Անգլիայի կապերը Հնդկաստանի և Արևելքի հետ: Թուրքերը նաև հասկանում էին, որ եթե Ֆրանսիային հաջողվի գրավել Եգիպտոսը, ապա դրան կհետևի օսմանյան այլ տարածքների զավթումը: Եթե ֆրանսիացի վաճառականների ծավալած առևտուրը ողջունելի էր, իսկ ֆրանսիացի ուսուցիչների ու միսիոներների գործունեության վրա Բարձր դուռը աչք էր փակում, ապա

վերջինիս համար ֆրանսիական զորքերի ներկայությունը կայսրության տարածքում անհանդուրժելի էր:

Ֆրանսիացիները սկզբնական շրջանում հաջողություն արձանագրեցին Մուրադ բեյի գլխավորած բանակի դեմ պայքարում: Առաջին ընդհարումներից հետո մամլուքների հեծելազորը նահանջեց և հուլիսի 21-ին բուրգերի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախվեց, Մուրադ բեյի զորքերի մնացուկները փախան Վերին Եգիպտոս: Բնակիչներից շատերը, հիմնականում՝ մեծահարուստներ, հեռացան Կահիրեից: Ֆրանսիացիները գրավեցին Կահիրեն, այնուհետև՝ Նեղոսի դելտայի մյուս քաղաքները:

Գրավելով Ստորին Եգիպտոսը՝ իր նվաճումները պահպանելու նպատակով Նապոլեոնը զբաղվեց երկրի վարչական համակարգի ամրապնդմամբ ու կարգավորմամբ:

Սեպտեմբերին կազմվեց Մեծ Դիվանը, որի մեջ մտնում էին մահմեդական շեյխերի երեք ներկայացուցիչ, երեք առևտրական, երեք գյուղական շեյխ, մեկ ֆելլահ և մեկ բեդվին: Նույն օրինակով կազմվեցին նահանգային դիվանները, որոնք գործնականում չունեին որևէ իշխանություն, սակայն պարտավոր էին «հսկել նահանգի շահերը, գանգատներն ուղարկել Բոնապարտին, թույլ չտալ բախումներ գյուղերի միջև»[28]: Ֆրանսիական կառավարիչները ոչ միայն պահպանեցին նախկին հարկային համակարգը, այլև հսկայական ռազմատուգանքներ դրեցին Կահիրեի, Ռոզետայի, Ալեքսանդրիայի և այլ քաղաքների վաճառականների և արհեստավորության վրա: Հարկահավաքը երկրում իրականացնում էին ղպտիները, որոնք այդ պաշտոնի համար հատուկ հարկ էին վճարում: Հարկեր դրվեցին նաև վաքֆային հողերի վրա: Ֆրանսիացիների համար հարստահարման լրացուցիչ միջոց դարձավ արտոնագրերի

[28] Ասիայի և Աֆրիկայի երկրների նոր պատմություն, Երևան, 1978, էջ 309:

վաճառքը արհեստավորներին, խանութպաններին: 40 ամսում ֆրանսիական գանձարանը Եգիպտոսից կորզեց 80 միլիոն ֆրանկ:

Եգիպտոսի բնակչությունը լուրջ դիմադրությունն էր ցույց տալիս կողոպուտներին և բռնություններին: Բարձր դուռն իր հերթին կենտրոնացնում էր իր բոլոր ռազմական ուժերը ֆրանսիացիների դեմ պայքարելու նպատակով: Կոչ անելով «բոլոր իսկական հավատացյալներին զենք վերցնել այդ խոզ դավաճանների՝ ֆրանսիացիների դեմ»՝ սուլթանը հրամայեց փաշաներին զավթիչների «գիշերը ցերեկի վերածել»[29]:

Սուլթանը սիրաշահում էր բրիտանական նավատորմի հրամանատար, ադմիրալ Նելսոնին՝ նրան սամույրի մորթուց վերարկու, սեփական գլխաձածկից ադամանդե շղթա և ադամանդե շարվածքով տուփ և այլ նվերներ ուղարկելով: Նելսոնն իր հերթին առավելագույնս փոխհատուցեց սուլթանին 1798 թ. օգոստոսի 1-ին, երբ Աբուքիր նավահանգստում ափ իջավ անգլո-թուրքական զորք ափ հանեց: Ֆրանսիական 15 նավերից միայն 4-ին հաջողվեց փախչել Մալթա: Մնացածը կա՛մ այրված էին, կա՛մ գերի վերցված, կա՛մ խորտակված: Պարտությունը լիակատար էր: Ֆրանսիական արշավախումբը, կտրված լինելով Ֆրանսիայից, հայտնվել էր չափազանց խոցելի վիճակում: Հնդկաստանի դեմ պատերազմը կարծես թե հանվեց օրակարգից:

Աբուքիրի ճակատամարտը վերջ դրեց Բարձր դռան տատանումներին, 1798 թ. սեպտեմբերին սուլթան Սելիմ 3-րդը պատերազմ հայտարարեց Ֆրանսիային: Բարձր դռան մուտքը պատերազմ նոր ուժ և լիցք հաղորդեց եգիպտացիներին, որոնք շարունակեցին իրենց պայքարը ֆրանսիացիների դեմ:

Օգտագործելով բնակչության կրոնական զգացմունքները՝ Նապոլեոնը որդեգրել էր մահմեդական ղեկավարի պահվածք՝ իրեն

[29] Nutting, Anthony. The Arabs. New York: Mentor Books, 1964, p. 219.

անգամ անվանելով Ալի Բոնաբարդա փաշա: Նա դուրս էր գալիս արևելյան շրջազգեստով, տյուրբանով և ռուբայով: Կանոնավոր կերպով Նապոլեոնը հաճախում էր մզկիթ ուրբաթ օրերին, մասնակցում էր ավանդական արարողություններին, անգամ ստիպեց մահմեդականություն ընդունել իր գեներալներից մեկին՝ Ժակ Մենուին, որին նաև անվանափոխեց՝ Աբդալլահի: Սակայն այս ամենը չփրկեց Եգիպտոսում գտնվող զորքերին համաժողովրդական զայրույթից ու ատելությունից:

1798 թ. հոկտեմբերին մեծ ապստամբություն ծագեց Կահիրեում, որի հիմնական պատճառը ֆրանսիացիների սահմանած նոր հարկն էր և անշարժ գույքի հաշվառումը: Վրդովված 25-հազարանոց ժողովուրդը հավաքվեց Ալ-Ազհար մզկիթի մոտ՝ պահանջելով ֆրանսիական իշխանություններից վերացնել վերոնշյալ հարկը: Սակայն բանակցություններն ապարդյուն ավարտվեցին, իսկ ապստամբությունը դաժանորեն ճնշվեց բռնի միջոցներով, անգամ հրետանու օգնությամբ:

Կահիրեի ապստամբությունը ճնշելուց հետո Նապոլեոնը, կտրված լինելով Ֆրանսիայից, որոշեց շարժվել դեպի հյուսիս՝ պատմաաշխարհագրական Սիրիա: Այդ նպատակով նա փորձեց կապեր հաստատել սիրիական կառավարիչների հետ, սակայն հանդիպեց դիմադրության: Սիրիայի դեմ արշավանքը Նապոլեոնը սկսեց 1799 թ. փետրվարին: Սկզբնական շրջանում ֆրանսիական զորքերն առանց դժվարության գրավեցին Ալ-Այիշը, Գազան, Ջաֆֆան, Հայֆան՝ ջախջախելով Դամասկոսի փաշայի դուրս բերած 20-հազարանոց մամլուքյան բանակը: Ֆրանսիացիների առաջխաղացումը կասեցվեց միայն Աքքայի մոտ: Ֆրանսիացիների պաշարողական հրետանին, որը մոտենում էր ծովով, ընկավ անգլիացիների ձեռքը: Անգլիական նավախումբը, մտնելով Աքքայի ծովախորշը, օգնություն էր ցույց տալիս պաշարվածներին: Ֆրանսիացի-

ների բոլոր հարձակումները ետ մղվեցին, և 70 օրվա պաշարումից հետո որոշվեց նահանջել Եգիպտոս: Սիրիական արշավանքն ավարտվեց լիակատար անհաջողությամբ:

Եգիպտական արշավանքը նույնպես անհաջող ավարտ էր խոստանում: Անգամ անմիջապես Եգիպտոս վերադառնալուց հետո՝ 1799 թ. հուլիսի 25-ին Աբուքիրում անգլո-թուրքական զորքերի դեմ Բոնապարտի տարած հաղթանակը չփրկեց իրավիճակը: Շուրջ երկու ամիս անց՝ օգոստոսի 22-ին, Նապոլեոնը մեկնեց Ֆրանսիա՝ Դիրեկտորիան ցրելու և իրեն Առաջին հյուպատոս հռչակելու նպատակով: Նա մեկնեց գաղտնի, առանց իր զորքերին տեղեկացնելու: Նապոլեոնը անգամ չէր զգուշացրել գեներալ Կլեբերին, որը հրամանատար էր նշանակվել իր բացակայության ընթացքում:

1800 թ. հունվարին Ալ-Արիշում Կլեբերը թուրքերի և բրիտանացիների հետ պայմանգիր կնքեց, որի համաձայն՝ Մուրադ բեյը հաստատվում էր Վերին Եգիպտոսի կառավարիչ, փոխարենը նա ֆրանսիացիներին էր հանձնում հարկերից հավաքված օսմանյան գանձի մի մասը: Մուրադ բեյը Կլեբերին մատակարարում էր վառելիք, ձիեր և պարենամթերք:

1801 թ. մարտին անգլիացիները 20-հազարանոց զորք ուղարկեցին Եգիպտոս և ջախջախեցին Կահիրեում ու Ալեքսադրիայում մնացած ֆրանսիական ուժերը: 1801 թ. հոկտեմբերին Ֆրանսիան համաձայնագիր ստորագրեց Թուրքիայի հետ: Պատերազմն ավարտվեց, Ֆրանսիան կորցրեց Եգիպտոսը, Մալթան և ռազմավարական նշանակություն ունեցող Իոնիական կղզիները, որոնք գրավել էր 1797 թվականին:

Նապոլեոնի արշավանքի ամենակարևոր արդյունքը եղավ այն, որ ֆրանսիական շուրջ երեք տարվա իշխանության ընթացքում Եգիպտոսը ձեռք բերեց ազգային-ազատագրական շարժման առա-

ջին փորձառությունը: Իսկ ֆրանսիացիների համար միակ օգուտն այդ արշավանքից եղավ այն, որ բանակում գտնվող տարբեր մասնագետներ տարբեր ուսումնասիրություններ կատարեցին մաթեմատիկայի, աստղագիտության, ջրաբանության, բժշկության, ինէաբանության, պատմության, իրավունքի, արվեստի, լեզվաբանության բնագավառներում[30]:

Արշավանքի ընթացքում նրանք կարողացան համակողմանիորեն հետազոտել Եգիպտոսը և սերունդներին թողնել 20 հատորանոց "Description de l'Egypte" արժեքավոր աշխատությունը, որում զետեղված են տարբեր տեղեկություններ Եգիպտոսի ջրամատակարարման, գյուղատնտեսության, արհեստների, ավանդույթների, մշակութային հուշարձանների, ժողովրդական երաժշտության, սոցիալական հարաբերությունների և այլ ոլորտների մասին:

Նապոլեոնի եգիպտական արշավանքի շնորհիվ փոխվեց նաև եվրոպական մեծ տերությունների քաղաքականությունը Արաբական Արևելքում: Ֆրանսիան, դուրս մղվելով այնտեղից, շարունակեց վերադարձի հույսեր փայփայել, իսկ Անգլիան, վախենալով Հնդկաստանը կորցնելու հեռանկարից, կրկնապատկեց տարածաշրջանում ամրապնդվելու իր ջանքերը: Օսմանյան կայսրությունն իր հերթին, տպավորված արևմտյան երկրների բանակների հզորությունից, ձեռնամուխ եղավ սեփական բանակի արդիականացմանն ուղղված տարբեր ծրագրերի իրականացմանը:

---

[30] Հարկ է նշել Նապոլեոնի հատուկ վերաբերմունքը գիտնականների հանդեպ: Մամլուքների հետ կայացած ճակատամարտերից մեկի սկզբում Նապոլեոնը հրամայել է. «Էշերին և գիտնականներին մեջտեղ»: Դա նշանակում էր, ըստ Ե. Տարլեի, Նապոլեոնի ցանկությունը՝ ճակատամարտի ընթացքում արշավանքի համար կենսական նշանակու-

2. Եգիպտոսը Մուհամմադ Ալիի իշխանության օրոք

Եգիպտոսից ֆրանսիացիներին դուրս մղելուց հետո երկրում շարունակում էին մնալ անգլիական (20.000), թուրքական (40.000) և մամլուքյան (4.000) բանակները: Ըստ Արաբ պատմիչ Ջաբարթիի՝ նրանք «խուզարկում էին վաճառականների խանութները, արհեստավորներին ստիպում էին չորս անգամ ավելի մեծ հարկ վճարել և բռնաբարում էին կանանց»[31]: Այլ կերպ ասած՝ երկիրը կողոպտվում էր, իսկ իրավազուրկ բնակչությունն աստիճանաբար հայտնվել էր թշվառության եզրին:

Գնալով խորացան նաև հակասությունները Թուրքիայի և Անգլիայի միջև: Թուրքերի դեմ պայքարում Անգլիային աջակցում էին մամլուքները: Բրիտանացիների հրամանատարը պահանջեց եգիպտական փաշայից վերադարձնել մամլուքների ունեցվածքն ու վերականգնել նրանց պետական պաշտոնները: Սակայն փաշան թուրքական սուլթան Սելիմ 3-րդից մամլուքներին ոչնչացնելու հրաման էր ստացել: Բրիտանացիները շարունակաբար պահանջում էին ազատ արձակել 2500 անվանի մամլուքներին՝ հակառակ դեպքում սպառնալով ռմբակոծել Կահիրեն: Ի վերջո, մամլուքները հանձնվեցին բրիտանական ղեկավարությանը: Վերջինս նրանց ընդունեց զինվորական պատիվներով և կազմեց նոր ստորաբաժանում: Սակայն, 1801 թ. Թուրքիայի և Ֆրանսիայի միջև կնքված պայմանագրի և անգլո-ֆրանսիական Ամիենի հաշտության համաձայն՝ Եգիպտոսն արդեն ձևականորեն դրվեց թուրքական սուլթանի իշխանության տակ: Բրիտանացիները, իհարկե, փորձեցին ձգձգել զորքերի դուրսբերումը Եգիպտոսից, սակայն 1802 թ. դեկ-

---

թյուն ունեցող բեռնակիր կենդանիների հետ մեկտեղ պաշտպանելու նաև գիտության ներկայացուցիչներին: Տե՛ս Е. В. Тарле, Наполеон, Москва, 1939, с. 67:

[31] Ал-Джабарти Абд ар-Рахман, Египет в период экспедиции Бонапарта (1798-1801), Москва, 1962, с. 54.

տեմբերին նրանց հիմնական ուժերը լքեցին երկիրը, իսկ 1803 թ. մարտի վերջին ստորաբաժանումները հեռացան Ալեքսանդրիայից:

Բրիտանական զորքերի դուրսբերումից հետո փաշան որոշեց վերսկսել պատերազմը մամլուքների դեմ: Արդեն 1802 թ. նա իր ստորաբաժանումներն ուղարկեց Վերին Եգիպտոս, որտեղ տեղակայված էին մամլուքները: Վերջիններս, իրենց հերթին ռազմական դաշինք կնքելով արաբ բեդվինների շեյխերի հետ, կազմեցին մեծաթիվ բանակ և կատաղի դիմադրություն ցույց տվեցին թուրքական փաշայի զորքերին: Մամլուքների բանակում կռվում էր նաև նուբիացիներից կազմված մի ջոկատ: Բախման արդյունքը եղավ թուրքերի ծանր պարտությունը: Դամանհուրի ճակատամարտում մամլուքներին հաջողվեց ոչնչացնել 5000 թուրք զինվոր, որից հետո նրանք միացան դեռևս Ալեքսանդրիայում գտնվող բրիտանական ուժերին: Սակայն բրիտանացիների տարհանումից հետո (1803 թ. մարտին) մամլուքները ստիպված եղան նորից շարժվել դեպի Վերին Եգիպտոս: Այդ ընթացքում Կահիրեում իրար էին հաջորդում զինված ապստամբությունները: Թուրքական բանակի խոշոր ստորաբաժանումներից մեկը, որ կազմված էր հիմնականում ալբանական վարձկաններից, անցավ մամլուքների կողմը: 1803 թ. մայիսին Կահիրեն գրավեցին ալբանական և մամլուքների միացյալ ուժերը: Իշխանությունը փոխանցվեց եռիշխանությանը (տրիումվիրատ)՝ Մուհամմադ Ալիին և մամլուք երկու բեյերին:

Մուհամմադ Ալին, որը շոշափելի դերակատարություն ունեցավ Եգիպտոսի նոր պատմության մեջ, դեռ բավական երիտասարդ էր: Ծնվել էր 1769 թ. մակեդոնյան Կավալա քաղաքում (ներկայումս՝ Հունաստանում)[32]: Չափազանց շատ են նրա մանկության մասին պատմությունները: Դրանցից մեկի համաձայն՝ մանուկ հասակում

[32] Նա սիրում էր ասել, որ ինքը ծնվել է Ալեքսանդր Մակեդոնացու հայրենիքում և նույն թվականին, ինչ Նապոլեոնը:

Մուհամմադ Ալին զրկվել է ծնողներից և մեծացել է օտար ընտանիքում: Երիտասարդ տարիքում սկսել է զբաղվել ծխախոտի առևտրով, սակայն 30 տարեկանում նրա կյանքը շրջադարձային փոփոխություն է կրել: Բարձր դռան կարգադրությամբ Կավալան փոքր, 300-հոգանոց ստորաբաժանում է ուղարկում Եգիպտոս, իսկ Մուհամմադ Ալին նշանակվում է այդ ստորաբաժանման երկրորդ ղեկավար: Առաջին իսկ ռազմական գործողությունների ընթացքում ցուցաբերած խիզախության համար նա դառնում է Եգիպտոսում ալբանական ուժերի գլխավոր հրամանատար:

Մուհամմադ Ալին, Եգիպտոսում դաշինք կնքելով մամլուքների հետ, պատերազմ է նախաձեռնում փաշայի դեմ, որն ավարտվում է 1804 թ. հունվարին, թուրքերի դաժան պարտությամբ: Մամլուքները նորից վերականգնեցին իրենց իշխանությունը Եգիպտոսի համարյա բոլոր նահանգներում և վերսկսեցին ժողովրդի կողոպուտը: Բրիտանացիները, որոնք Ֆրանսիայի հետ պատերազմի մեջ էին գտնվում, որոշեցին օգտվել Եգիպտոսում մամլուքների հաղթանակից և բրիտանական նավով Ալեքսանդրիա ուղարկեցին իրենց գործակալին՝ մամլուք բեյ Մուհամմեդ ալ-Ալֆիին: Սակայն մամլուքների մեկ այլ ղեկավար Օսման Բարդիսին ապստամբեց բրիտանական դրածոյի դեմ և ջախջախեց Մուհամեդ ալ-Ալֆիի ստորաբաժանումը, իսկ ալ-Ալֆին փախուստի դիմեց: Օգտվելով մամլուքների միջև ծագած հակասություններից՝ Կահիրեի բնակչությունը (արհեստավորները, բանվորները, վաճառականները) ապստամբություն բարձրացրեց մամլուքների դեմ, որը գլխավորում էին Ալ-Ազհարի շեյխերը: Բնակչության ատելությունն ուղղված էր նաև ալբանացիների դեմ, որոնք օժանդակում էին մամլուքներին: Որպես հմուտ քաղաքական գործիչ՝ Մուհամմադ Ալին, քաջ գիտակցելով ուժերի հարաբերակցության փոփոխման վտանգը, անցավ ապստամբների կողմը և Ալ-Ազհարի շեյխերին խոստացավ վերացնել հարկերը:

Հայտարարելով իրեն Եգիպտոսի ժողովրդի շահերի պաշտպան՝ նա ալբանական ուժերն ուղղեց մամլուքների դեմ: Հմտորեն հաշվարկված այս քայլը Մուհամմադ Ալիին հնարավորություն տվեց պահպանելու իր իշխանությունը Եգիպտոսում: Շեյխերի ժողովը նրան ընտրեց ղայմաղամ՝ եգիպտական փաշայի տեղակալ, իսկ Ալեքսանդրիայի թուրք կառավարիչ Խորշիդին՝ փաշա:

Աստիճանաբար աճում էր Մուհամմադ Ալիի հեղինակությունը Եգիպտոսում: 1804-1805 թթ. ձմռանը նա զբաղված էր մամլուքների հետապնդմամբ Վերին Եգիպտոսում: Իսկ այդ ընթացքում Խորշիդ փաշայի յենիչերները կողոպտում էին բնակչությանը, բռնագրավում նրանց ունեցվածքը: Փաստորեն, թուրքական փաշայի իշխանության վերականգնումը ոչ մի կերպ չթեթևացրեց Կահիրեի բնակչության վիճակը: 1805 թ. մայիսին Կահիրեում նոր ապստամբություն բռնկվեց, որի հետևանքով փաշան արտաքսվեց: Եգիպտացի շեյխերի ժողովը նոր փաշա հռչակեց Մուհամմադ Ալիին: Օսմանյան սուլթան Սելիմ 3-րդը ստիպված եղավ ճանաչել նրան որպես Եգիպտոսի կառավարիչ:

Փաստորեն, Մուհամմադ Ալին իշխանության եկավ Եգիպտոսում մամլուքների դեմ պայքարի բովում: Բայց դա չխանգարեց նրան 1804-1807 թթ. շարունակել այդ պայքարը, 1807 թ. համաձայնության գալ մամլուքների հետ՝ համատեղ պայքարելու երկրում բրիտանական ներկայության դեմ: Մուհամմադ Ալին այդ քայլին դիմեց, քանի որ անգլո-թուրքական պատերազմի ժամանակ անգլիացիները 1807 թ. մեծ զորախումբ իջեցրին Ալեքսանդրիայում և Ռոզետայում: Այդ պատճառով Մուհամմադ Ալին ստիպված եղավ պայքարի հանել բնակչության լայն զանգվածներին՝ անգլիացիներին երկրից դուրս մղելու նպատակով: Սակայն հաղթանակ տանելով բրիտանական ուժերի նկատմամբ՝ Մուհամմադ Ալին կրկին շրջվեց մամլուքների դեմ, 1808 թ. ճնշեց նրանց խռովությունը, իսկ

1811 թ. ոչնչացրեց խոշորագույն մամլուք ֆեոդալներին: Այդ ժամանակվանից Մուհամմադ Ալին դարձավ Եգիպտոսի լիիրավ ղեկավարը:

Մուհամմադ Ալին ձգտում էր ստեղծել հզոր և անկախ Եգիպտոս: Նա ձեռնամուխ եղավ բարեփոխումների իրականացմանը տնտեսության, պետական կառավարման, լուսավորության և ռազմական բնագավառներում: Մուհամմադ Ալին այն սակավաթիվ մարդկանցից էր Եգիպտոսում, որը հասկացել էր ֆրանսիացիների և ընդհանրապես արևմտյան քաղաքակրթության իրական ուժի գաղտնիքը: Նապոլեոնի արշավանքը ստեղծեց այն պարարտ հողը, որի վրա հնարավոր եղավ իրականացնել Մուհամմադ Ալիի բարեփոխումները: Մուհամմադ Ալիի վրա չափազանց մեծ ազդեցություն ունեցավ Նապոլեոնի անձը: Ինչպես և Նապոլեոնը, նա օտարերկրացի էր այն երկրում, որը պետք է իր սեփականը դարձներ, ինչպես և Նապոլեոնը, նա պետք է գրավեր ընդարձակ կայսրությունը[33]:

1808 թ. սկսվեցին հողային բարեփոխումները, այդ նպատակով բռնագրավվեցին մուլթազիմների կալվածքները, իսկ 1814 թ. իսպառ վերացվեց իլթիզամի համակարգը: Հարկման ենթարկվեցին ֆաքուֆային հողերը, բռնագրավվեցին նաև մամլուք բեյերին պատկանող բոլոր հողերը: Կարևորագույն նշանակություն ունեցավ հողային նոր ամփոփ ցուցակի կազմումը, ըստ որի՝ ցուցակագրվեցին բոլոր հողերը և ամբողջ Եգիպտոսի համար սահմանվեց հողային տարածության միասնական չափ: Յուրաքանչյուր գյուղացուն տրվում էր հաստատված հողամաս, որի համար, ըստ հողի որակի, հողատերը պետք է վճարեր համապատասխան գումար: Գյուղացին սկսեց հարկն ամբողջությամբ վճարել պետությանը: Ձեռնարկ-

[33] Antonius, George, The Arab Awakening: The Story of the Arab National Movement, 2nd ed., N.Y., Capricorn Books, 1965, p. 31.

ված բարեփոխումները նպաստեցին արտադրողական ուժերի հետագա զարգացմանը, պետական եկամուտների զգալի աճին և եգիպտացի գյուղացու դրության բարելավմանը: Եվ, վերջապես, այս բոլորի շնորհիվ ոչնչացվեց ֆեոդալների հին, առավել հետադիմական խավը, և ձևավորվեց ֆեոդալական նոր ավագանին, որն էլ դարձավ Մուհամմադի սոցիալական հենարանը:

Մուհամմադ Ալին խթանեց արդյունաբերության զարգացումը երկրում: Նրա օրոք կառուցվեցին ձուլարանները, տեքստիլի և շաքարի գործարանները, բամբակեղենի, մետաքսի ու բրդի ֆաբրիկաները, ռազմական նավաշինարան Ալեքսանդրիայում, ինչպես նաև վառոդի ու սելիտրայի գործարանները: Կառուցվեցին նաև ապակու երկու գործարաններ, թղթի գործարան և տպարան, բրնձի մաքրման գործարաններ Ռոզետայում և Դամիետայում:

1815 թվականից Մուհամմադ Ալին ձեռնարկեց ռազմական բարեփոխումները (Նիզամ ջադիդ)[34]: Այդ բարեփոխումների նպատակն էր ստեղծել նոր, կանոնավոր բանակ ու նավատորմ: Արդեն 1820 թ. կազմակերպվեց ուսումնական ճամբար, որտեղ ռազմական արվեստ էին սովորեցնում ֆրանսիացի գեներալները: Բացվեցին հատուկ ուսումնարաններ, որտեղ պատրաստում էին սպաներ բանակի երեք զորատեսակների՝ հետևակի, հեծելազորի և հրետանու համար: Մուհամմադ Ալին մեծ ուշադրություն էր դարձնում նաև ռազմական նավատորմի կազմակերպմանը: Եթե սկզբում նավերը բացառապես արտադրվում էին Եվրոպայում, ապա հետագայում սկսեցին կառուցվել Ալեքսանդրիայի նավաշինարանում: Եգիպտական զորքերին վարժեցնող հիմնականում ֆրանսիական և իտալական փորձագետներն աստիճանաբար փոխարինվում էին եգիպտացի մասնագետներով: Այսպիսով, Մուհամմադ Ալիին հաջողվեց

[34] Polk, William, The Arab World Today, Harward University Press, London, 1991, p. 73.

ստեղծել ժամանակակից մարտունակ 276-հազարանոց բանակ, որը, հիմնվելով ֆրանսիական բանակի փորձի վրա, որոշ չափով զինված էր նաև եգիպտական զենքով և ռազմական տեխնիկայով:

Պետական շինարարության գործընթացում Մուհամմադ Ալին հաճախ էր զգում ազգային որակյալ մասնագետների պակասը: Օտարերկրյա մասնագետների օգտագործումը չափազանց թանկ հաճույք էր պետության համար: Այդ իսկ պատճառով Եգիպտոսում բազմաթիվ աշխարհիկ դպրոցների բացման հետ մեկտեղ, Եգիպտոսի իշխանությունները սկսեցին Եվրոպա ուսման ուղարկել եգիպտացի երիտասարդներին, որոնք տարբեր բնագավառներում մասնագիտանալուց հետո (բժշկություն, ճարտարապետություն, երկրագործություն, լեռնարդյունաբերություն, դիվանագիտություն և այլն) վերադառնում էին հայրենիք և գրավում զանազան պաշտոններ:

Մուհամմադ Ալիի օրոք շոշափելի զարգացում ստացան գիտությունն ու մշակույթը: 1828 թ. հիմնվեց առաջին եգիպտական թերթը՝ «Եգիպտական իրադարձություններ»:

Ինչ վերաբերում է Մուհամմադ Ալիի կիրառած վարչական բարեփոխումներին, ապա դրանց նպատակը կառավարման ուժեղ և կենտրոնացված համակարգ ստեղծելն էր: Երկրի գլխին կանգնած էր Մուհամմադ Ալին, նրան կից գործում էր մասնավոր խորհուրդը: Հիմնվեցին մի շարք նախարարություններ՝ ներքին, արտաքին գործերի, ռազմական, լուսավորության, ֆինանսների և այլն: Եգիպտոսը բաժանվեց 7 գլխավոր մարզերի, որոնք ղեկավարում էին կառավարիչները, իսկ մարզերն իրենց հերթին՝ շրջանների, իսկ շրջանները՝ գավառների: Երեք քաղաքներ՝ Կահիրեն, Դամիետան և Ռոզետան, կառավարում էին հատուկ նշանակված նահանգապետերը:

Ինչպես Պետրոս 1-ի բարեփոխումները Ռուսաստանում, այնպես էլ Մուհամմադ Ալիինը՝ Եգիպտոսում, առաջադիմական էին: Մուհամմադ Ալին, ստեղծելով հզոր և կայուն պետություն, իրավամբ համարվում է ժամանակակից Եգիպտոսի հիմնադիրը: Չնայած երբեմն Մուհամմադ Ալիի հասցեին արված քննադատություններին՝ նրա օրոք գործադրվող խիստ հարկային համակարգի, հարկահավաքի ընթացքում օգտագործվող ծայրաստիճան կոշտ մեթոդների և այլ սխալների համար, պետք է խոստովանել, որ հենց նրա շնորհիվ միայն հնարավոր եղավ ամբողջապես օգտագործել Եգիպտոսի ներուժը, ապահովել երկրի արագ առաջընթացը, զարգացումն ու բարգավաճումը:

Ինչպես նշում է անգլիացի արևելագետ Հենրի Դոդվելը, «էականը ոչ թե այն է, որ Մուհամմադ Ալին կառավարեց ինչպես թուրք, այլ այն, որ նա, ինչպես ոչ մի թուրք, կարողացավ արևմտյան նոր գաղափարներն ընդունել ու դրանք հարմարեցնել միանգամայն տարբեր արևելյան պայմաններին»[35]:

3. Արաբիայի գրավումը Եգիպտոսի կողմից

Եգիպտոսում իր իշխանությունն ամրապնդելուց հետո Մուհամմադ Ալին որոշեց ընդլայնել պետության սահմանները: 1811 թվականից սկսած նա շարունակական պատերազմներ մղեց և երկու տասնամյակում գրավեց Արաբական Արևելքի գրեթե բոլոր երկրները:

Վահաբիների դեմ իր պայքարը Մուհամմադ Ալին նախաձեռնեց Բարձր դռան խնդրանքով, որին անհանգստացնում էին վահաբիների անընդմեջ հարձակումները: Թուրքական Սելիմ III և Մահ-

[35] Henry Dodwell, Founder of Modern Egypt: A Study of Mohammed Ali. London: Cambridge University Press, 1931, pp. 55-58.

մուդ II սուլթաններն Արաբիայում ստեղծված Վահաբիների պետությունը լուրջ վտանգ էին համարում իրենց իշխանության համար: Զբաղված լինելով Բալկաններում ծագած ապստամբություններով, Ռուսաստանի հետ պատերազմով և երկրի ներքին կայունության ապահովման հարցերով՝ վահաբիներին դիմակայելու գործում Բարձր դուռը ապավինում էր հիմնականում Բաղդադի, Դամասկոսի և Ջիդդայի փաշաների զինվորական ուժին: Դա, սակայն, բավարար չէր վահաբիների առաջխաղացումը վերջնականապես կանգնեցնելու համար: Այդ նպատակով 1811 թ. Սուլթան Մահմուդ 2-րդը ստիպված էր դիմել Եգիպտոսի հզոր կառավարիչ Մուհամմադ Ալիի աջակցությանը: Վերջինս, հաշվի առնելով եգիպտացի առևտրականների անթաքույց հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը Արաբիայում իրենց սեփական դիրքերն ամրապնդելու հարցում, արագ արձագանքեց սուլթանի խնդրանքին: Վահաբիները հսկայական վնասներ էին հասցնում Եգիպտոսի ձեռներեցներին առևտրի, ուխտագնացության և մի շարք այլ ասպարեզներում, ահա թե ինչու եգիպտացի գործարար խավը գումարներ չխնայեց Մուհամմադ Ալիի արշավանքը ֆինանսավորելու համար: Ինչ վերաբերում է Մուհամմադ Ալիին, ապա Արաբիայի գրավումով նա նպատակ էր հետապնդում նաև հենակետ ձեռք բերել՝ Սիրիայի և Իրաքի վրա հարձակվելու համար: Վահաբիներն Օսմանյան կայսրության արաբական նահանգների գրավման ճանապարհին Մուհամմադ Ալիի հիմնական հակառակորդներն էին:

Մուհամմադ Ալին 10-հազարանոց բանակ ուղարկեց Արաբիա իր տասնվեց տարեկան որդու՝ Թուսուն Բեյի գլխավորությամբ: Վերջինիս խորհրդականն ու զորքերի իրական հրամանատարն էր Ահմեդ Աղան, որն ուներ Բոնապարտ ծածկանունը և Մուհամմադ Ալիի ամենափորձառու գեներալներից էր: Եգիպտական զորքերին ուղեկցում էր նաև Կահիրեի հայտնի վաճառականներից մեկը՝ Ալ-

Մախրուկին, նա մատակարարման գլխավոր սպան էր և Թուսուն բեյի քաղաքական խորհրդատուն:

1811 թ. սեպտեմբերին եգիպտացիները գրավեցին Արաբական թերակղզու Յենբո նավահանգիստը՝ այն վերածելով հետագա գործողությունների հենակետի: Վահաբիների դեմ ձեռնարկված արշավանքը մեծ զոհողություններ պահանջեց եգիպտացիներից: Տառապելով սարսափելի շոգից և ջրի պակասից՝ հազարավոր զինվորներ մահացան ծարավից և հիվանդություններից: Խոլերան, մալարիան, դիզենտերիան նոսրացնում էին թշնամական շրջապատման մեջ հայտնված եգիպտական բանակի շարքերը:

Եգիպտական բանակը գտնվում էր Յենբոյում: Բեդվին ցեղերը հարձակումներ էին գործում եգիպտական պահակախմբերի և մթերքով բեռնված քարավանների վրա: Նրանք փորձում էին կտրել կապը բանակի առաջատար դիրքերի և թիկունքի սակավաթիվ հենակետերի միջև: Վահաբիները՝ իրենց գործի արդարության հանդեպ ունեցած մեծ հավատով, գերազանցում էին մեծաքանակ եգիպտական բանակին: Սակայն եգիպտացիներն այլ առավելություն ունեին. զինված էին առավել արդիական զենքով և գործում էին Մուհամմադ Ալիի ռազմական վարժարաններում բարձրակարգ կրթություն ստացած գեներալների գլխավորությամբ: Պատերազմը փոփոխական հաջողությամբ շարունակվեց մի քանի տարի:

1812 թ. հունվարին եգիպտական բանակը դուրս եկավ Յենբոյից և առաջացավ Մեդինայի ուղղությամբ: Ալ-Սաֆրայի մոտ վահաբիները հանկարծակի հարձակվեցին ու գլխովին ջախջախեցին եգիպտական բանակը, որի գրեթե կեսը՝ շուրջ 5 հազար զինվոր, ընկավ մարտի դաշտում: Յենբոյում ուժերը կենտրոնացնելուց հետո և Եգիպտոսից համալրում ստանալով՝ Թուսուն բեյի զորքերը 1812 թ. նոյեմբերին կրկին անցան հարձակման և վերջապես գրավեցին Մեդինան, 1813 թ. հունվարին՝ Մեքքան, Թաիֆը, Ջեդդան:

Այսպիսով, ամբողջ Հիջազը հայտնվեց Եգիպտոսի վերահսկողության տակ, սակայն բանակի վիճակը չբարելավվեց. բանակում գնալով ավելանում էր հիվանդություններից մահացածների թիվը, եգիպտացիներն ամեն քայլափոխի հանդիպում էին տեղի բնակչության թշնամական վերաբերմունքին, բանակային ստորաբաժանումները պարբերաբար ենթարկվում էին հարձակումների: Այդ վճռական պահին Մուհամմադ Ալին որոշեց արշավանքի ղեկավարումն իր ձեռքը վերցնել: 1813 թ. սեպտեմբերին նոր ուժերի հետ նա հասավ Ջիդդա և որպես առաջին քայլ ձեռնամուխ եղավ Հիջազում իր դիրքերի ամրապնդմանը: Մուհամմադ Ալին փոխարինեց Մեքքայի շերիֆ Ղալիբին և իր մտերիմներից մեկին նշանակեց նրա պաշտոնում, վերջ դրեց հարձակումներին՝ հնազանդության դիմաց կաշառելով բեդվին շեյխերին: Այնուամենայնիվ, Արաբիայի ներքին տարածքները խորանալու՝ նրա բոլոր ջանքերն անհաջողության մատնվեցին:

1814 թ. մայիսին Էմիր Սաուդը մահացավ, նրա փոխարեն նոր էմիր դարձավ հյուսիսի ընդդիմության ղեկավար Աբդալլահը: Արաբիայի հարավում վահաբիների մեծաթիվ ուժերը կենտրոնացված էին Թուրաբա օազիսում, որտեղից վերահսկում էին Նեջդից Եմեն տանող ճանապարհը: Վահաբիներն այդ հենակետից երկրի հարավում ռազմական գործողություններ էին իրականացնում:

Մուհամմադ Ալին հիմնականում գործում էր Հիջազի հարավում և Ասիրում: Նա անձամբ վահաբիական ուժերի դեմ բազմաթիվ ճակատամարտեր մղեց հարավում: Այսպես՝ հունվարի 20-ին, Բասալի ճակատամարտում (Թաիֆից արևելք) եգիպտացիները պարտության մատնեցին Աբդալլահի եղբոր՝ Ֆեյսալի գլխավորած «հարավայինների» 30-հազարանոց բանակը: Խարխլելով վահաբիների դիրքերը հարավում՝ եգիպտական բանակը գրավեց Թուրաբան և Բիշան, սակայն 1815 թ. մայիսին Մուհամմադ Ալին ստիպված եղավ

շտապ մեկնել Եգիպտոս՝ ժամանակավորապես հետաձգելով Եմենի գրավման գաղափարը:

Հյուսիսում եգիպտական ուժերի հրամանատարն էր Թուսուն բեյը, որը, զինվորներ հավաքագրելով Նեջդից, Ալ-Խասայից և Օմանից, շարունակեց պայքարն Աբդալլահի դեմ: 1815 թ. գարնանը Թուսուն Բեյը պարտության մատնեց Աբդալլահին և ստիպեց վերջինիս հաշտություն կնքել, որի համաձայն՝ Նեջդն ու Կասիմը մնում էին վահաբիների իշխանության տակ, իսկ Հիջազը՝ Եգիպտոսի: Աբդալլահը իր հպատակությունը հայտնեց թուրք սուլթանին, ինչպես նաև հնազանդությունը՝ Մեդինայի եգիպտացի կառավարչին: Նա նաև պարտավորվեց ապահովել ուխտագնացների անվտանգությունը, վերադարձնել Մեքքայում վահաբիների գողացած հարստությունները, թույլատրել կրոնական նորամուծությունները և անվերապահորեն կատարել սուլթանի բոլոր ցուցումներն ու կարգադրությունները:

Վահաբիներն իրենց հերթին չէին կարողանում հաշտվել Թուսուն բեյի պարտադրած հաշտության նվաստացուցիչ պայմանների հետ: Ձևականորեն նրանք ընդունեցին հաշտության պայմանները, սակայն գործնականում ակտիվորեն նախապատրաստվում էին ազատագրական նոր շարժման: Մուհամմադ Ալին և սուլթանը նույնպես չհաստատեցին պայմանագիրը: Նոր պատերազմն իրեն սպասեցնել չտվեց, և 1816 թ. եգիպտական ջոկատները Մուհամմադ Ալիի ավագ որդու՝ Իբրահիմի գլխավորությամբ ու ֆրանսիական հրահանգիչների ուղեկցությամբ մեկնեցին Արաբիա: Իբրահիմի նպատակն էր ամեն գնով հարված հասցնել շարժմանը՝ ներթափանցելով Արաբիայի սիրտը: Շուրջ երկու տարի տևած ռազմական գործողություններից հետո Իբրահիմի զորքերը գրավեցին գլխավոր կենտրոններ Կասիմն ու Նեջդը՝ անապատի վերածելով ծաղկուն օազիսները, կտրելով արմավենիներն ու վառելով տները: Եգիպ-

տացի զինվորները բռնաբարում էին և սպանում կանանց, նրանք, ովքեր ողջ էին մնացել, մահանում էին սովից կամ ծարավից: Տեղի բնակչությունը եգիպտական զորքերի մոտենալուն պես զանգվածաբար փախչում էր՝ ապաստան գտնելով առավել հեռու բնակավայրերում:

1817 թ. ավերիչ պատերազմի ընթացքում եգիպտացիները գրավեցին Ռասը, Բուրայդան և Անայզան: 1818 թ. սկզբում նրանք, ներխուժելով Նեջդ, գրավեցին Շաքրան, իսկ նույն թվականի սեպտեմբերի 15-ին՝ հնգամսյա պաշարումից հետո, մտան վահաբիների մայրաքաղաք Դերայե: Ավերակների վերածված քաղաքի բնակիչները դիմեցին փախուստի, իսկ վահաբիների էմիր Աբդալլահը հանձնվեց: Վերջինիս ուղարկեցին Կոստանդնուպոլիս, որտեղ էլ 1818 թ. դեկտեմբերին գլխատեցին:

Դերայեի գրավումից հետո Իբրահիմի բանակը շարժվեց դեպի Կաթիֆ և Ալ-Խասսան: Էմիրի ազգականները գերի ընկան և ուղարկվեցին Եգիպտոս:

1819 թ. դեկտեմբերին Իբրահիմը վերադարձավ Կահիրե, իսկ նրա բանակի մի մասը մնաց Հիջազի և Նեջդի քաղաքներում՝ մշտական հարձակումների թիրախ դառնալով Արաբիայի լեռներում և անապատներում ապաստանած վահաբիների համար:

Եգիպտական արշավանքի միակ արդյունքը եղավ այն, որ թեև Արաբիայի մեծ մասը պաշտոնապես ընդգրկվեց Օսմանյան կայսրության կազմում, սակայն իրականում այն պատկանում էր Եգիպտոսին:

Հիջազը վերածվեց եգիպտական նահանգի, որի փաստացի կառավարիչն էր Եգիպտոսի փաշան: Հենց նա էր նշանակում և պաշտոնազրկում Մեքքայի շերիֆին: Վերջինս վայելում էր զուտ ձևական իշխանությունը և հնազանդորեն կատարում եգիպտական իշխանությունների բոլոր հրահանգները:

Եմենը, որը գրավել էին եգիպտացիները 1819 թ. պահպանեց իր ինքնավարությունը: Այնտեղ իշխում էր Զայիդիտ Իմամը, որի նստավայրն էր Սանան: Նա Բարձր դռան հպատակն էր և պարտավորված էր տարեկան հարկ վճարել Եգիպտոսին:

Բազմաթիվ ցեղեր և տեղական կառավարիչներ բացահայտորեն հրաժարվում էին ենթարկվել Իմամին: 1823-1826 թթ. եգիպտացիները մի քանի արշավանք ձեռնարկեցին Եմենի դեմ, սակայն ստիպված եղան լքել երկիրը Մորեական պատերազմի պատճառով: 1834 թ. նրանք նորից գրավեցին Եմենի Թիհաման և Թաիզ քաղաքները:

Եգիպտական փոխկառավարիչները իշխում էին Նեջդում: Յուրաքանչյուրն անտեսում էր Իբրահիմի դրածո, Աբդալլահի կրտսեր եղբայր Մաշհար էմիրին: Երկիրն ավերված էր և գտնվում էր խորը ճգնաժամի մեջ: Աստիճանաբար սրվում էին ֆեոդալական և ցեղային հակասությունները: Շամմառում, Կասիմում և այլ շրջաններում տեղական տոհմերը պահպանում էին ինքնավարության որոշ աստիճան և խուսավարում էին եգիպտական իշխանությունների և Սաուդյան տոհմի ապստամբ Վահաբի էմիրների միջև, որոնք շարունակում էին պայքարել օտար զավթիչների դեմ:

Իբրահիմի՝ Նեջդից դուրս քշվելուց հետո՝ 1820 թ., վահաբիական ապստամբություն ծագեց Դերայեում, որը ղեկավարում էր սպանված էմիր Աբդալլահի ազգականներից մեկը: Ապստամբությունը ճնշվեց, սակայն 1821 թ. վահաբիները նորից ապստամբեցին: Այս անգամ այն առավել հաջող ընթացք ունեցավ ապստամբների համար: Վերջիններիս գլխավորում էր վախճանված էմիրի ազգական Թուրքին (1821-1834), որը, գահընկեց անելով եգիպտական դրածոյին, վերականգնեց վահաբիների պետությունը՝ մայրաքաղաքն ավերված Դերայեից տեղափոխելով առավել պաշտպանված Ռիյադ (1822 թ.): Վահաբիների դեմ պայքարող եգիպտական բա-

նակը տառապում էր սովից, ջրի պակասությունից, համաճարակներից և շարունակական պարտիզանական հարձակումներից: Այդ պատճառով էլ եգիպտական ստորաբաժանումները ստիպված էին սահմանափակվել Նեջդում՝ միայն Կասիմի և Շամմառի վրա վերահսկողություն հաստատելով: Նեջդի մնացած մասը մաքրվել էր եգիպտական բանակի մնացորդներից:

Վահաբիները վերականգնեցին իրենց իշխանությունը նախկին տիրույթներում և 1827 թ. դուրս քշեցին եգիպտացիներին նաև Կասիմից ու Շամմառից: 1830 թ. նրանք վերագրավեցին Ալ-Խասան:

Մուհամմադ Ալին այնքան էր տարված Հունաստանում և Սիրիայում ընթացող զարգացումներով, որ չէր կարողանում զբաղվել Արաբիայի հարցերով: Սակայն Սիրիայի գրավումից հետո նա որոշեց վերստին գրավել Նեջդը: 1836 թ. Խուրշիդ փաշայի գլխավորած մեծ բանակը ներխուժեց Նեջդ: Երկարատև ու սաստիկ պատերազմն ավարտվեց եգիպտացիների հաղթանակով: 1838 թ. էմիր Ֆեյսալը արտաքսվեց Կահիրե: Եգիպտական ուժերը գրավեցին Ռիյադը, Ալ-Խասան, Կաթիֆը և անգամ փորձեցին պաշարել Բահրեյնը:

Եգիպտական երկրորդ ներխուժումը Նեջդ և Ալ-Խասայի գրավումը էլ ավելի վատթարացրին Եգիպտոսի՝ առանց այդ էլ լարված հարաբերությունները Բրիտանիայի հետ և դարձան 1839-1941 թթ. ծագած Արևելյան ճգնաժամի պատճառներից մեկը: Մուհամմադ Ալին ներքաշվեց միջազգային լուրջ հակամարտության մեջ և արդեն 1840 թ. ստիպված եղավ ետ կանչել իր զորքերը Արաբիայից: Վահաբիներն օգտագործեցին առիթը էմիր Խալիդին գահընկեց անելու և իրենց իշխանությունը Ռիյադում վերականգնելու համար:

Վահաբիների պարտությունը Արաբիայի արևելյան և հարավային շրջաններում լուրջ անհանգստություն պատճառեց Լոնդո-

նին, որը ձգտում էր իր լիակատար գերիշխանությունը հաստատել Արաբական ծովում և Պարսից ծոցում:

1819 թ. Մուհամմադ Ալին մերժեց Բրիտանիայի համագործակցության առաջարկը՝ Սանայից հարավ-արևմուտք ընկած տարածքները «խաղաղեցնելու» գործում: Այնուհետև կողմերը սկսեցին գործել միմյանցից անկախ: 1820 թ. դեկտեմբերին բրիտանական ծովային էսկադրան ռմբակոծեց եմենական Մոկա նավահանգիստը իսկ 1821 թ. հունվարի 15-ին պարտադրեց Իմամին պայմանագիր ստորագրել: Ստորագրված փաստաթղթի համաձայն՝ Արաբիայի հարավային նավահանգիստներում բրիտանացիներին տրվում էին մի շարք արտոնություններ: 1834 թ. «Արևելյան Հնդկաստանի ընկերության» (East India Company) զինվորական ստորաբաժանումները գրավեցին Սոկոտրա կղզին, որն ավելի ուշ՝ 1866 թ., վերածվեց բրիտանական պրոտեկտորատի: Վերջապես 1839 թ. պատժիչ ծովային արշավանքի ընթացքում բրիտանացիները զավթեցին Ադենը: Իրենց գործողություններին որոշակի առևտրական գործարքի բնույթ հաղորդելու նպատակով բրիտանացիները նավահանգստում քարածխի պահեստ կառուցելու պատճառաբանությամբ «գնեցին» ծովախորշը, 500 բնակիչ ունեցող Ադեն գյուղը, ինչպես նաև Լահեջի սուլթանին[36] պատկանող մերձակա տարածքը:

1820-1840 թթ. ժամանակահատվածում Բրիտանիան Օմանի, Մասկատի և Բահրեյնի կառավարիչներին պարտադրեց պայմանագրեր ստորագրել: Մեղադրելով վերջիններիս այն բանում, որ նրանք խախտել են Պարսից ծոցում ծովահենությունն ու ստրուկների առևտուրը արգելող օրենքը, Բրիտանիան միջամտեց նրանց ներքին գործերին՝ Պարսից ծոցը վերածելով ոչ ավել, ոչ պակաս՝ «Բրիտանական լճի»:

---

[36] Լահեջի սուլթանաթը անջատվել էր Եմենից և 1728 թ. դարձել անկախ պետություն:

Լոնդոնի վարած քաղաքականության հետևանքով եգիպտացիները զրկվեցին Պարսից ծոցում իրենց ձեռքբերումներից: 1821 թ.՝ Նեջդում վահաբիների ապստամբությունից հետո, եգիպտացիները աստիճանաբար դուրս մղվեցին Նեջդից, 1830 թ.՝ Ալ-Խասայից: Հատկապես Մուհամմադ Ալիի երկրորդ արշավանքի ընթացքում և դրանից հետո անգլիացիները ակտիվորեն ուղիներ էին փնտրում եգիպտացիներին Արաբիայից հեռացնելու համար: Աստիճանաբար թուլացնելով Մուհամմադ Ալիի իշխանությունը Սիրիայում (ապստամբությունների հրահրում և այլն)՝ Բրիտանիան ի վերջո կարողացավ ձերբազատվել Պարսից ծոցում իր վտանգավոր հակառակորդից:

4. Եգիպտոսը 1841-1876 թթ.

1831 թ. Մուհամմադ Ալին արդեն հաջողությամբ ավարտել էր Սիրիայի նվաճումը: Սիրիական արշավանքի ընթացքում եգիպտական տիրույթներին միացվեցին Սիրիան, Լիբանանը և Պաղեստինը: Սակայն Անգլիան, անհանգստանալով Եգիպտոսի ուժեղացումից, ոչ առանց Բարձր դռան դրդման, 1839 թ. ամռանը պատերազմական գործողություններ սկսեց Եգիպտոսի դեմ: Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում ծագած ապստամբությունները մեծապես դժվարացրին Մուհամմադ Ալիի խնդիրը: Եվ երբ 1840 թ. նոյեմբերին անգլիական նավատորմը մոտեցավ Ալեքսանդրիա նավահանգստին, և հրամանատար Նապիեռը վերջնագիր ներկայացրեց Մուհամմադ Ալիին, վերջինս, գիտակցելով իր դիրքերի խոցելիությունը (Ֆրանսիայի անորոշ դիրքորոշումը, ապստամբությունները և եգիպտական բանակի պարտությունը), ստիպված եղավ ընդունել անգլիացիների առաջարկած պայմանները: Եգիպտական հարցը լուծվեց 1841 թ. հունիսի 1-ի հատուկ հրովարտակով՝

«Սրբազան գրով» (Հաթթ-ը շերիֆ), որի համաձայն՝ Եգիպտոսում ժառանգական փաշալիկի հաստատման դիմաց Մուհամմադ Ալին իր հնազանդությունը հայտնեց սուլթանին, հրաժարվեց բոլոր տիրույթներից (բացառությամբ Եգիպտոսից և Սուդանից), ինչպես նաև պարտավորվեց կրճատել իր զորքերի թիվը մինչև 18 հազար՝ զրկվելով գեներալներ նշանակելու և նավեր կառուցելու իրավունքից:

Մուհամմադ Ալիի պարտությունը ճանապարհ հարթեց Եգիպտոս օտարերկրյա կապիտալի ներհոսքի համար: 1842 թ. սկսած՝ անգլո-թուրքական առևտրական պայմանագրի դրույթները (1838 թ.) տարածվեցին նաև Եգիպտոսի վրա: Այդ ժամանակվանից եվրոպական տերությունների կողմից սկիզբ դրվեց Եգիպտոսի արագ գաղութացման գործընթացին[37]:

Եգիպտոսը թուլացավ՝ հզոր արևելյան ուժից վերածվելով Բարձր դռան խոնարհ վասալի: Իսկ թուրքերը, որոնք դժվարանում էին անգամ իրենց սեփական գործերը տնօրինել, անզոր էին արդյունավետ կերպով վերահսկել Եգիպտոսը[38]: Իրականում, Եգիպտոսը գտնվում էր Անգլիայի և Ֆրանսիայի համատեղ պաշտպանության տակ, և միայն այդ երկու ուժերի միջև ընթացող մրցակցությունն էր հնարավորություն ընձեռում եգիպտական կառավարիչներին պահպանելու անկախության որոշ աստիճան: Երկրի իշխող շրջանակներում ձևավորվել էին երկու հակադիր ուժեր: Առաջինը հին հասարակարգի ներկայացուցիչներից, հիմնականում խոշոր հողատերերից կազմված խումբն էր, որը ձգտում էր պահպանել կապերը Թուրքիայի և, իհարկե, Անգլիայի հետ, որի ազդեցությունը Բարձր դռան վրա բավական մեծ էր: Երկրորդ խումբը կազմված էր վաճառականներից և լիբերալ հողատերերից, որոնք կողմնակից

[37] Ротштейн Ф. А., Захват и закабаление Египта, Москва, 1959, с. 29.
[38] Cromer, Lord. Modern Egypt. London, Macmillan, 1908, p. 51.

էին կապիտալիստական զարգացմանը և հանդես էին գալիս բարեփոխումների շարունակման և Ֆրանսիայի հետ հարաբերությունների սերտացման օգտին: Այս երկու խմբերի միջև պայքարը ցայտուն կերպով արտահայտվեց Իբրահիմ փաշայի և նրան հաջորդած Աբբաս փաշայի գործունեության ընթացքում:

Գալով իշխանության՝ Մուհամմադ Ալիի որդին՝ Իբրահիմ փաշան՝ շարունակեց ուշադրության կենտրոնում պահել Եգիպտոսի տնտեսական զարգացման հարցը՝ ձգտելով բարեփոխել երկրի կոռումպացված քաղաքացիական ծառայությունը, մասնավորապես, շտկել ֆինանսական վիճակը, որը 1840թ. իրադարձություններից հետո հայտնվել էր խորը ճգնաժամի մեջ: Իբրահիմ փաշան ներկայացրեց կանոնավոր պետական բյուջե, իսկ 1842 թ. ընդլայնեց հողատերերի իրավունքները՝ թույլատրելով նրանց վաճառել հողերը: 1845-1846 թթ. նա ճանապարհվեց երկարատև եվրոպական շրջագայության, ամենուր (մասնավորապես Ֆրանսիայում) ընդունվեց ամենաբարձր պատիվներով: 1848 թ. Իբրահիմ փաշան դարձավ Եգիպտոսի պաշտոնական կառավարիչը, սակայն երեք ամիս անց մահացավ: Իշխանությունն անցավ Մուհամմադ Ալիի թոռանը՝ Աբբաս փաշային, որը 1848 թ. դեկտեմբերի 24-ին պաշտոնապես ստանձնեց կառավարումը: Նա չափազանց հետադիմական հայացքների տեր մարդ էր և կարծես իր ամբողջ գործունեությամբ ձգտում էր ոչնչացնել հոր և պապի դրական ձեռքբերումները: Նա փակեց Մուհամմադ Ալիի հիմնած բոլոր արհեստանոցները, հրամայեց կանգնեցնել Նեղոսի մեծ ջրամբարի կառուցման աշխատանքները, փակեց մեծ թվով գործարաններ և դպրոցներ, զգալիորեն նվազեցրեց բանակի թվակազմը: Ի տարբերություն Մուհամմադ Ալիի և Իբրահիմի, որոնք երազում էին անկախության մասին, Աբբասը շեշտում էր իր նվիրվածությունը թուրքական սուլթանին և թուրքական հին ավանդույթներին: Նա հրապարակավ մերժում էր արևմտյան մշակույթը՝ քննադատության թիրախ դարձնելով եվրո-

պացիներին: Վերջին հանգամանքը, սակայն, չէր խանգարում նրան հնազանդորեն կատարելու անգլիացիների բոլոր հրահանգները:

Այսպես, Անգլիայի համար ռազմավարական մեծ նշանակություն ունեցավ 1851 թ. Աբբասի կողմից առաջին կոնցեսիայի տրամադրումը՝ Ալեքսանդրիայից դեպի Կահիրե և Սուեզ երկաթուղի կառուցելու համար: Այն դարձավ Անգլիան Հնդկաստանի հետ կապող հիմնական ճանապարհը: Երկաթուղու կառուցումն անկասկած մեծացրեց նաև Եգիպտոսի՝ որպես բեռնափոխադրումների համար հարմարավետ տարանցիկ երկրի կարևորությունը:

1854 թ. Աբբաս փաշան սպանվեց իր թիկնապահների ձեռքով: Եգիպտոսի հաջորդ փաշան դարձավ Մուհամմադ Ալիի որդին՝ Սայիդը: Վերջինս արևմտամետ էր, ազատական գաղափարների տեր մարդ: Եգիպտոսի պատմության մեջ նա թերևս հայտնի է որպես Սուեզի ջրանցքի կառուցման նախաձեռնող[39]: Դեռևս 19-րդ դարի սկզբում Նապոլեոնը կարգադրել էր ինժեներ Լեպեռին նախապատրաստել ջրանցքի կառուցման նախագիծը: Սակայն այս մասնագետը սխալ ենթադրություն էր արել. ըստ նրա, քանի որ Կարմիր և Միջերկրական ծովերը տարբեր մակարդակներ ունեն (Կարմիր ծովինն ավելի բարձր է), և տեխնիկական նկատառումներից ելնելով՝ ջրանցքի կառուցումն անհնար է իրականացնել: Չնայած վերոհիշյալ ինժեների եզրակացությունը շատ արագ հերքվեց, այնուամենայնիվ Մուհամմադ Ալին մերժում էր այդ ծրագիրը՝ մտահոգված լինելով այն հանգամանքից, որ, հաշվի առնելով ջրանցքի ռազմավարական նշանակությունը, մեծ տերությունները կստեղծեն «երկրորդ Դարդանելները»[40]: Նա վախենում էր նաև, որ ձեռք բերելով Եգիպտոսի ներքին գործերին միջամտելու հզոր ազդակ՝ եվ-

[39] Marlo, John. World Ditch: The Making of the Suez Canal. New York, 1964, p. 25.

[40] Marsot Afaf Lutfi al-Sayyid, Egypt in the Reign of Muhammad Ali. Cambridge. 1984, p. 77.

րոպական ուժերը պայքար կսկսեն Սուեզի ջրանցքի համար: Նա կտրականապես մերժեց ջրանցքի կառուցման գաղափարը՝ վստահ լինելով, որ այդ քայլով կարող է ապահովել Եգիպտոսի անկախ կարգավիճակը: Անգլիան նույնպես դեմ էր արտահայտվում ջրանցքի կառուցմանը՝ հաշվի առնելով Ֆրանսիացիների ներգրավման հանգամանքը: Սակայն Սայիդ փաշան իշխանության գալուց անմիջապես հետո ֆրանսիացի հայտնի գործարար Ֆերդինանդ դը Լեսսեպսին տվեց Սուեզի ջրանցքի կառուցման կոնցեսիան: Ջրանցքի կառուցումը տևեց տասը տարի (1859-1869 թթ.): Ֆրանսիացիների համար ստեղծվեցին բարենպաստ պայմաններ. անվճար տրամադրեցին Սուեզի երկու կողմն ընկած հողերը, իրավունք տվեցին Եգիպտոսի տարածքում ազատորեն ձեռք բերելու քար և անհրաժեշտ բոլոր նյութերը, ինչպես նաև առանց հարկեր վճարելու Եգիպտոս ներմուծել տարբեր շինանյութեր: Սկզբնական շրջանում՝ մինչև 1863 թ. հարկադիր աշխատանքի վերացումը, եգիպտական կառավարության համաձայնությամբ, Սուեզի ջրանցքի ընկերությունն օգտագործեց եգիպտական ֆելլահների կոռային աշխատանքը:

Պետք է ընդունել, որ կոնցեսիայով կողոպտիչ պայմաններ էին սահմանված Եգիպտոսի համար[41]: Սակայն չի կարելի համաձայնել այն կարծիքին, թե ջրանցքի կառուցումը ոչ մի օգուտ չտվեց Եգիպտոսին: Ջրանցքը, անշուշտ, ռազմավարական մեծ նշանակություն ունեցավ Եգիպտոսի հետագա զարգացման համար: Ջրանցքի առկայությունը, խթանելով երկրի տնտեսական զարգացմանը, Եգիպտոսը վերածեց տարանցիկ առևտրի կարևորագույն կենտրոնի, իսկ ջրանցքի բացման արարողությունը, որին հրավիրված էին եվ-

[41] Կոնցեսիայի պայմաններով եգիպտական կառավարությունը պետք է ստանար եկամուտների միայն 15%-ը, իսկ ջրանցքի կառավարման հանձնումը Եգիպտոսին պետք է ուժի մեջ մտներ նրա բացման օրից 99 տարի հետո: Ջրանցքի 400.000 բաժնետոմսերից եգիպտական կառավարությունը ստացավ միայն 177.642-ը:

ропական միապետեր ու տարբեր երկրների ղեկավարներ, ոչ միայն դիվանագիտական յուրօրինակ ու շքեղ ընդունելության վերածվեց, այլև Եգիպտոսին դիվանագիտական մեծ ճանաչում բերեց: Իտալացի հռչակավոր կոմպոզիտոր Ջուզեպպե Վերդին այդ կապակցությամբ գրեց անզուգական «Աիդա» օպերան:

5. Ահմադ Արաբիի ապստամբությունը և Եգիպտոսի նվաճումը Անգլիայի կողմից

Ինչպես արդեն նշել ենք, 1854 թ. Աբբաս փաշային սպանեցին իր թիկնապահները, հուլիսի 14-ին Եգիպտոսի կառավարիչ դարձավ Մուհամմադ Ալիի որդի Սայիդ փաշան (1854-1863): Սայիդին փոխարինած Իսմայիլը (1863-1879), որը 1867 թ. սկսեց կրել խեդիվ (տեր, հրամայող) տիտղոսը, այնպիսի գերածախսեր կատարեց զարգացման տարբեր ծրագրերի ուղղությամբ (դպրոցների կառուցում, թերթերի հրատարակում, նոր գործարանների, երկաթուղիների կառուցում և այլն), որ եվրոպական վարկատուներին վճարելու համար ստիպված եղավ Սուեզի ջրանցքի՝ Եգիպտոսին պատկանող բոլոր բաժնետոմսերը վաճառել անգլիական կառավարությանը: Եգիպտոսը հայտնվել էր սնանկության եզրին: Այս հանգամանքից ճարպկորեն օգտվեցին Անգլիան և Ֆրանսիան, որոնք հսկողություն սահմանեցին Եգիպտոսի ֆինանսների, իսկ ապա նաև ամբողջ տնտեսության վրա: Հետագայում՝ 1878 թ. ապրիլին, ստեղծվեց խեդիվի պարտքի միջազգային հանձնաժողովը, որի կազմում էին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ավստրիայի ներկայացուցիչները: Վերջիններիս պահանջով Իսմայիլը 1878 թ. օգոստոսի 28-ին ստեղծեց նոր կառավարություն, այսպես կոչված «եվրոպական կաբինետ», որի մեջ որպես նախարարներ մտան վերոհիշյալ եվրոպական չորս պետությունների ներկայացուցիչները:

Վարչապետ դարձավ Եգիպտոսի ականավոր պետական գործիչ, հայազգի Նուբար Նուբարյանը: «Եվրոպական կաբինետի» ստեղծումով խեդիվ Իսմայիլը զրկվեց պետական գործերին անմիջականորեն մասնակցելու հնարավորությունից: Սակայն եգիպտացի գյուղացիների, արհեստավորների և վաճառականների վիճակը գնալով էլ ավելի վատթարացավ նրանցից գանձվող անասելի բարձր հարկերի պատճառով: Նուբարյանի կառավարությունից դժգոհ էին նաև զինվորականները, այդ իսկ պատճառով 1879 թ. մարտի 9-ին նա ստիպված հրաժարական տվեց: Մեկ ամիս անց՝ 1879 թ. ապրիլի 7-ին, Իսմայիլը ցրեց «Եվրոպական կաբինետը» և նոր կառավարություն կազմեց, որը գլխավորեց Շերիֆ փաշան: Կառավարությունը նախապատրաստեց Սահմանադրության նախագիծը, որն արժանացավ Ներկայացուցիչների պալատի հավանությանը: Սակայն Իսմայիլը չհասցրեց այն ստորագրել. 1879 թ. հունիսի 19-ին Անգլիան և Ֆրանսիան Իսմայիլից պահանջեցին հրաժարվել խեդիվի գահից և հեռանալ երկրից: 1879 թ. հունիսի 25-ին սուլթան Աբդուլ Համիդ II-ը հայտարարեց, որ Իսմայիլը գահընկեց է արվել: Նոր խեդիվ հռչակվեց նրա որդի Թևֆիկը՝ թուլամորթ մի անձնավորություն, որ խաղալիք էր անգլիացիների ձեռքում: Կառավարության ղեկավար նշանակվեց Ռիյադ փաշան, որը նույնպես անգլիացիների կամակատարն էր: Եգիպտոսում հաստատվեց հետադիմական վարչակարգ: Երկիրն ընկավ քաղաքական խոր ճգնաժամի մեջ: Այսպիսի իրադրության մեջ ձևավորվեցին, ապա միավորվեցին եգիպտական ընդդիմադիր ուժերը՝ ազգային բուրժուազիան, զինվորականությունը, հատկապես սպայական կազմը, մտավորականությունը, ինչպես նաև հայրենասիրական տրամադրություններ ունեցող կալվածատերերը:

1881 թ. հիմնվեց Ազգային կուսակցությունը՝ «Հիզբ ալ-Վաթանը»: Զինվորականների մեջ առանձնապես աչքի էր ընկնում գնդա-

պետ Ահմադ Արաբին, որի շուրջը համախմբվեցին ընդդիմադիր ուժերը՝ առաջ քաշելով «Եգիպտոսը եգիպտացիների համար» կարգախոսը: Նրանց նպատակն էր Եգիպտոսի քաղաքական անկախության նվաճումը[42]:

1881 թ. սեպտեմբերի 9-ին Կահիրեում տեղի ունեցավ եգիպտական բանակի զինված ընդվզումը: Ահմադ Արաբին և վաթանիստ սպաները պահանջեցին կառավարության հրաժարականը, սահմանադրության ընդունումը, բանակի թվակազմի ավելացումը և այլն: Խեդիվը հարկադրված էր բավարարել վաթանիստների պահանջները: Կազմվեց ազգային կառավարություն Մահմուդ Սամիի գլխավորությամբ, իսկ Արաբին դարձավ զինվորական նախարար, Սամի-Արաբի զույգի կառավարությունը սկսեց իրականացնել վաթանիստների ծրագիրը: Երկրում լայն շարժում սկսվեց ի պաշտպանություն վաթանիստների և Ահմադ Արաբիի: Կահիրեում, Ալեքսանդրիայում և այլ վայրերում տեղի էին ունենում հակաանգլիական ցույցեր:

Նոր կառավարությունը ձեռնամուխ եղավ առավել ժողովրդավարական ընտրական օրենսգրքի մշակմանը, կոռային աշխատանքների վերացմանն ուղղված օրինագծի նախապատրաստմանը, գյուղատնտեսական բանկի ստեղծմանը, խառը դատարանների բարեփոխմանը, կրթության բնագավառի բարելավմանը, ինչպես նաև վարչական համակարգի վերակազմավորմանը: Փոփոխություններ մտցվեցին հողի վարձակալության և կոնցեսիաների տրման կարգերում: Այդ նպատակով հիմնվեց հատուկ հանձնաժողով, որը պետք է քններ անգլիացիների ձեռնարկած հողային կադաստրի գործերը: Պարզվեց, որ հողերի ցուցակագրումը սկսելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, հսկայական միջոցներ էին

[42] Ал-Шафии А., Развитие национально-освободительного движения в Египте (1882–1952), Москва, 1962.

ապարդյուն ծախսվել: Նշված միջոցառումներից դժգոհ գյուղացիների լայնածավալ շարժում սկսվեց:

Բարեփոխումներին զուգընթաց գլուխ բարձրացրեց նաև երկրի ֆեոդալա-կալվածատիրական ընդդիմությունը, որը Շերիֆ փաշայի (նախկին վարչապետ) և նախկին ռազմական նախարարի գլխավորությամբ դավադրություն կազմակերպեց նոր կառավարության դեմ: Շուտով ամեն ինչ բացահայտվեց, դավադիր ղեկավարներին դատեցին և դատապարտեցին աքսորի: Սակայն խեդիվը մեղմացրեց դատավճիռը և աքսորը փոխարինեց Կահիրեից արտաքսումով: Ի պատասխան՝ վաթանիստները որոշեցին տապալել խեդիվին, ինչը նրանց նույնպես չհաջողվեց:

1882 թ. մայիսին Անգլիան և Ֆրանսիան ռազմանավեր ուղարկեցին Ալեքսանդրիա իրենց հպատակների կյանքի ապահովությունը պաշտպանելու պատճառաբանությամբ: Վերջնագիր ներկայացնելով խեդիվին՝ նրանք պահանջեցին Մահմուդ Սամիի կառավարության հրաժարականը: Խեդիվը համաձայնեց և հրաման ստորագրեց կառավարության հրաժարականի մասին: Սակայն Կահիրեի զինվորական կայազորն ու ոստիկանությունը հրաժարվեցին ենթարկվել խեդիվի կարգադրությանը: Երկրի բնակչությունն ակտիվորեն արձագանքեց այդ իրադարձություններին՝ բազմաթիվ ժողովներ և ցույցեր կազմակերպելով ի պաշտպանություն Արաբիի և վաթանիստների կառավարության: Ժողովրդական ճնշման տակ խեդիվը ստիպված եղավ նահանջել և վերականգնել վաթանիստների կառավարությունը: Բարձր դռան խաղաղարար միջնորդության փորձերը, ինչպես նաև Ֆրանսիայի առաջարկով հրավիրված միջազգային համաժողովն անարդյունք ավարտվեցին: Անգլիան, անհանգստանալով Եգիպտոսում նախաձեռնությունը կորցնելու վտանգից, անհապաղ միակողմանի քայլեր ձեռնարկեց իրավիճակն իր վերահսկողության տակ վերցնելու ուղղությամբ: Իրավի-

ճակի հետագա սրման պատճառով Անգլիան որոշում ընդունեց Հնդկաստանից և Մալթայից զինուժ ուղարկել Եգիպտոս: Հուլիսի 11-ին անգլիական նավատորմը գնդակոծեց Ալեքսանդրիան: Երկու օր անց անգլիական դեսանտն ափ իջավ Ալեքսանդրիայում և գրավեց քաղաքը: Այդ իրադարձություններից հետո խեդիվն անգլիացիների օգնությամբ փախավ Ալեքսանդրիա՝ այնտեղ կազմելով ընդդիմադիր կառավարություն: Այդ ընթացքում Կահիրեում կազմավորված Արտակարգ խորհուրդն Արաբիին հռչակեց ռազմական նախարար և գլխավոր հրամանատար, իսկ խեդիվին գահազրկեց: Արաբին հայտարարեց ռազմական դրություն և ձեռնամուխ եղավ երկրի պաշտպանությանը: Միակ կողմը, որտեղից Եգիպտոսը պատշաճ պաշտպանված չէր, Սուեզի ջրանցքն էր, որն էլ ճակատագրական հետևանք ունեցավ Արաբիի համար: Անգլիացիները, շեղելով եգիպտական լավագույն զորքերի ուշադրությունը Ալեքսանդրիայի մոտ ծավալած կռիվներով, բացեցին երկրորդ ճակատը Արևելքում և առանց դժվարության գրավեցին Սուեզը՝ դեսանտայիններ իջեցնելով Իսմայիլիայում և Պորտ-Սաիդում:

1882 թ. սեպտեմբերի 13-ին Կահիրեի մատույցներում՝ Թել ալ-Քաբիրի մոտ տեղի ունեցած ճակատամարտն ավարտվեց անգլիացիների հաղթանակով: Հաջորդ օրը նրանք մտան Կահիրե: Ապստամբության ղեկավարները, այդ թվում նաև Արաբին ձերբակալվեցին ու կանգնեցին դատարանի առջև. Արաբին և նրա մերձավոր զինակիցները դատապարտվեցին մահվան, որն այնուհետև փոխարինվեց ցմահ բանտարկությամբ: Սեպտեմբերի ընթացքում անգլիացիներն ավարտեցին Եգիպտոսի գրավումը, և նույն ամսվա 24-ին խեդիվ Թեվֆիկը վերադարձավ Կահիրե: Եգիպտոսի կառավարիչ դարձավ անգլիական հյուպատոս մայոր Բելինգը՝ լորդ Կրոմերը, որն այդ պաշտոնը զբաղեցրեց մինչև 1907 թվականը: Ձևականորեն Եգիպտոսը թեև նախկինի պես կազմում էր Օսմանյան

կայսրության բաղկացուցիչ մասը, սակայն իրականում վերածվեց անգլիական գաղութի:

Արաբների հետ շուրջ մեկդարյա առնչության ընթացքում Մեծ Բրիտանիայի ամենամեծ խնդիրը Մերձավոր Արևելքում նրա նպատակների հստակ ձևակերպման բացակայությունն էր: Անշուշտ նրա գաղութային քաղաքականության հենքը կազմում էին տնտեսական շահերը: Սակայն այն հարցին, թե ինչ չափով պաշտոնական Լոնդոնը պետք է վերահսկի արաբական աշխարհը՝ տարածաշրջանում առևտրական մայրուղիների անվտանգությունն ապահովելու համար, ժամանակ առ ժամանակ տարբեր մեկնաբանություններ ու պատասխաններ էին տրվում: Անգլիական քաղաքական գործիչներից մեկը գրել է. «Անգլիան գնաց Եգիպտոս առանց քաղաքականության և հակառակ իր կամքի՝ կանխարգելելու կոտորածներն ու հանդարտեցնելու ապստամբներին: Սակայն ներքաշվելով այնտեղ խրվելով՝ նա չցանկացավ առաջանալ, թեև անհարմար համարեց նաև նահանջել»[43]:

Մինչև 1882 թ. Ահմադ Արաբիի ապստամբությունը Բրիտանիան Եգիպտոսում ոչ ավելի, քան զուտ ֆինանսական դիտորդի կարգավիճակ ուներ: Խեդիվ Իսմայիլի իշխանության օրոք Եգիպտոսի արտաքին պարտքը 3 միլիոն ֆունտ ստերլինգից հասավ 94 միլիոնի: Իսմայիլը ստիպված Սուեզի ջրանցքի բաժնետոմսերը վաճառեց իր եվրոպական վարկատուներին: Դրանից հետո Բրիտանիան, Ֆրանսիան և եվրոպական այլ ուժեր միջազգային հանձնաժողովի միջոցով ուղղակի վերահսկողություն սահմանեցին Եգիպտոսի հանրային ծախսերի վրա: Չնայած խեդիվի բանակում բրիտանացի սպաներ ծառայում էին, այնուամենայնիվ, բրիտանական ստորաբաժանումները չէին գրավել Եգիպտոսի տարածքի և ոչ մի հողակտոր: Այս ամենը փոխվեց 1882 թ. սեպտեմբերին՝ Արաբիի

[43] Langer, William L., The Diplomacy of Imperialism. New York, 1935, p. 18.

ապստամբության պարտությունից հետո, երբ Եգիպտոսը փաստացի հայտնվեց անգլիական իշխանության ենթակայության տակ: Բրիտանիան, երկրում տեղակայելով իր բանակը, արդեն իսկ վերահսկողություն հաստատեց ոչ միայն Եգիպտոսի ֆինանսների, այլև երկրի ողջ տարածքի վրա:

1884 թ. լորդ Կրոմերը նշանակվեց Եգիպտոսում «Նորին Բրիտանական մեծության գլխավոր հյուպատոս»[44]: Նա անմիջապես նախաձեռնեց քաղաքական ինստիտուտների և հարկային համակարգի բարեփոխումները: Անձնական հեղինակությամբ և համեմատաբար փոքրաթիվ բանակի օժանդակությամբ Կրոմերը հստակ հրահանգ տվեց խեդիվին ու նրա կառավարությանը՝ իր կարգադրություններն անվերապահորեն կատարելու մասին: Հակառակ դեպքում ցանկացած մեղավոր նախարար կամ պաշտոնյա ստիպված կլիներ թողնել զբաղեցրած պաշտոնը: Նման խիստ միջոցները, ըստ Կրոմերի, առաջին հերթին ուղղված էին կենտրոնաձիգ իշխանության ստեղծմանն ու պետական պաշտոնյաների կամայականությունների վերացմանը: Երկրում վերջ տրվեց կոռային աշխատանքին ու հարկահավաքի ծայրահեղ միջոցներին: Փոխարենը ներկայացվեց հողերի հարկման նոր համակարգ (ըստ եկամուտների): Ջրային ցանցն արդիականացվեց, և առաջին անգամ ապահովվեց պետության վճարունակությունը: Ինչպես Իբն Խալդունն է նշում իր արաբական բնավորության վերաբերյալ հետազոտության մեջ. «Եգիպտոսի նվաճված ժողովուրդն արագորեն ընդունեց իրեն նվաճողների նոր համակարգը»[45]: Սակայն Կրոմերի տեսադաշտից դուրս մնաց մի շատ կարևոր բնագավառ՝ կրթությու-

---

[44] Տե՛ս Lord Cromer, Modern Egypt. London, 1908, ինչպես նաև՝ al-Sayyid, Afaf Lutfi. Egypt and Cromer . London, 1968:

[45] Ibn Khaldun, Abd al-Rahman. Muqaddimah, trans. Franz Rosental, New York: Pantheon, 1958, Mahdi, M. Ibn Khaldun's Philosophy of History. London: Cresset Press, 1954, p. 65.

նը: Որոշ չափով դա բացատրվում էր կրոնական հարցերին առնչվող բարդություններով: 12 դար շարունակ կրթությունը գտնվում էր Եգիպտոսի կրոնական իշխանությունների ձեռքում, իսկ **Կրոմերը հակված չէր** վերացնելու այդ ուժեղ իսլամական ավանդույթները՝ երկրում կրթության նոր, աշխարհիկ համակարգ ներդնելու նպատակով[46]: Այսուհանդերձ, մի քանի մասնավոր դպրոցներ հիմնվեցին, ինչպես, օրինակ, Վիկտորիա քոլեջն Ալեքսանդրիայում: Սակայն եգիպտացիների մեծամասնության համար ժամանակակից բրիտանական կրթական համակարգն այդպես էլ մնաց անհասանելի: Եվ դա միանգամայն բնական էր, քանի որ Կրոմերը ցուցում էր ստացել Լոնդոնից՝ բարեփոխումներ ձեռնարկելու միայն կարճ ժամանակահատվածի համար, որի ընթացքում Բրիտանիան նախատեսում էր պահպանել Եգիպտոսի ամբողջական խնամակալությունը: Իսկ Եգիպտոսի բնակչության կրթությունը երկարատև խնդիր էր:

Կրոմերի գործելակերպը Եգիպտոսում շատ պարզ և հստակ էր՝ Եգիպտոսի կառավարական պաշտոնյաներին վերածել բրիտանական իշխանությունների հնազանդ կամակատարների և սահմանափակել նրանց գործունեության դաշտը՝ ապահովելով խիստ վերահսկողություն: Այդ նպատակով դեռևս 1892 թ. Կրոմերը կրճատեց խեդիվ Աբաս Հիլմիի գործառույթները:

Կրոմերի նորամուծություններից էր նաև ազատ մամուլը Եգիպտոսում, որտեղ սկսեցին լույս տեսնել տասնյակ օրաթերթեր ու ամսագրեր: Ընձեռված ազատությունից շտապեց օգտվել խեդիվը. նա թերթերի միջոցով ակտիվ քարոզչություն սկսեց Կրոմերի դեմ:

---

[46] Մեր կարծիքով Կրոմերը չէր կարող շահագրգռված լինել Եգիպտոսում աշխարհիկ կրթական համակարգ ներդնելու մեջ, քանի որ այն կհակասեր Մեծ Բրիտանիայի գաղութային քաղաքականությանը, որին ձեռնտու չէր ունենալ իր գաղութում աշխարհիկ կրթությամբ վերնախավ, որը կգլխավորեր ազատագրական շարժումն իր դեմ:

Կրոմերի օրոք Եգիպտոսում ստեղծվեցին նաև տեղական և կենտրոնական օրենսդրական խորհուրդներ, որոնք ապահովում էին բնակչության մասնակցությունը՝ սեփական գործերն ինքնուրույն տնօրինելու ասպարեզում: Վերջին հանգամանքը նույնպես խեդիվն օգտագործեց երկրում անգլիացիների ներկայության և մասնավորապես Կրոմերի դեմ հասարակական կարծիքը տրամադրելու նպատակով: Սակայն 1907 թ.՝ Կրոմերի պաշտոնանկությունից հետո, Անգլիայի նորանշանակ գլխավոր հյուպատոս Էլդոն Գորստը վերականգնեց խեդիվի գործառույթներն ու լիազորությունները:

Արևելագետները Կրոմերի գործունեությունը Եգիպտոսում տարբեր կերպ են գնահատել՝ բացարձակ դրականից մինչև ծայրահեղ բացասական: Այնուամենայնիվ, վերոնշյալ երկու գնահատականներն էլ համարելով իրականությանը չհամապատասխանող՝ պետք է արձանագրենք, որ չնայած տեղական պայմանների բարդությանն ու Կրոմերի գործունեության և դերի «սահմանափակված» լինելու հանգամանքին՝ նա՝ որպես գաղութային իշխանությունների ղեկավար, օգտագործեց իր բոլոր հնարավորությունները երկրում իրավիճակը բարելավելու ուղղությամբ: Այլ հարց է, որ շուրջ քառորդ դար ապրելով արաբական երկրում՝ Անգլիայի ներկայացուցիչն անգամ ի վիճակի չեղավ կամ էլ չցանկացավ սովորել արաբերեն, ինչն ինքնին ցայտուն կերպով բացահայտում է Կրոմերի անձն ու Եգիպտոսի նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքը:

6. Անգլիայի և Ֆրանսիայի մրցակցությունը Եգիպտոսում[47]

Բրիտանական զորքերի Կահիրե մուտք գործելուց կարճ ժամանակ անց Ֆրանսիայի վարչապետ Դուկլերկը դիմեց Բրիտանիայի արգործնախարար Գրանվիլին՝ Եգիպտոսում նրա կառավարության նպատակների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար: Գրանվիլը պատասխանեց, որ երկրի գրավումը կրում է ժամանակավոր բնույթ և կավարտվի այն ժամանակ, երբ Եգիպտոսի ներքին իրավիճակը կկայունանա ու իշխանություններն իրենց սեփական ուժերով ի վիճակի կլինեն կառավարելու երկիրը: Բրիտանական պաշտոնյաները հրապարակավ հայտարարում էին, որ իրենց զորքերը դուրս կբերվեն Եգիպտոսի տարածքից միմիայն երկրում կարգ ու կանոն հաստատվելուց հետո: 1884 թ. Բրիտանիայի վարչապետ Գլադսթոնը, ելույթ ունենալով խորհրդարանում, նշեց, որ «բրիտանական ուժերի դուրսբերումը Եգիպտոսից պատվի հարց է Բրիտանիայի համար»[48]:

Բրիտանիան դեռևս անեքսիայի չէր ենթարկել Եգիպտոսը, քանի որ նման քայլը կարող էր միջազգային լուրջ ճգնաժամի հանգեցնել: Լոնդոնը քաջ գիտակցում էր, որ Ֆրանսիան կընդդիմանա Եգիպտոսի բռնազավթմանը և այս հարցում կարող է ակնկալել նաև Ռուսաստանի աջակցությունը: Թուրքիան նույնպես դրան դեմ կլիներ, սակայն Բրիտանիայի համար ամենակարևորը ոչ թե Բարձր դռան զայրույթն էր, այլ Ֆրանսիայի և Ռուսաստանի դիրքորոշումները Եգիպտոսի հարցի վերաբերյալ:

---

[47] Թեմայի վերաբերյալ մանրամասները տե՛ս Blunt, Wilfrid S. The Secret History of the English Occupation of Egypt. New York, 1922, Glubb, Lt. Gen. Sir John. Britain and the Arabs. London: Hoder&Stoughton, 1957, Anderson, Matthew S. The Eastern Question, 1774-1923, New York, 1966, Feis, Herbert. Europe: The World's Banker. New Haven, 1930, Landes, David S. Bankers and Pashas. Cambridge, 1958:

1884 թ. Ֆրանսիան Գրանվիլից պահանջեց դուրս բերել զորքերը Եգիպտոսից: Գրանվիլը խոստացավ այն իրականացնել 1888 թ. սկզբին:

1885 թ. Ֆրանսիայի ճնշման տակ Բրիտանիան Կ. Պոլսում բանակցություններ սկսեց Եգիպտոսից իր զորքերի էվակուացման շուրջ: Բրիտանացիները հնարավորինս ձգձգում էին բանակցությունները՝ առաջարկելով Եգիպտոս ուղարկել բրիտանական և թուրքական երկու բանագնաց: Միայն 1887 թ. նախապատրաստվեց անգլո-թուրքական համաձայնագրի նախագիծը, ըստ որի՝ Բրիտանիան պարտավորվում էր համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում դուրս բերել իր զորքերը Եգիպտոսից, «եթե այդ ընթացքում Եգիպտոսի անվտանգությանը սպառնացող որևէ ներքին կամ արտաքին վտանգ ի հայտ չգա»: Այս վերապահում չափազանց խոցելի էր դարձնում ողջ համաձայնագիրը: Նույնիսկ դրանից հետո Բրիտանիան շարունակում էր պահանջել, որ համաձայնագիրն ապահովի Եգիպտոսը վերագրավելու նրա իրավունքը արտաքին կամ ներքին սպառնալիքի դեպքում: Սուլթանը կտրականապես մերժեց համաձայնագրի նախագիծը:

Իսկ ինչպիսի՞ն էր մյուս տերությունների վերաբերմունքը համաձայնագրի այդ նախագծի նկատմամբ: Նախապատրաստվելով Ֆրանսիայի և Ռուսաստանի դեմ պատերազմին՝ Գերմանիան 1882 թ. ստեղծել էր Եռյակ դաշնություն, որին անդամագրվել էին Իտալիան և Ավստրո-Հունգարիան: Մյուս կողմից, Գերմանիայից սպասվող հարաճուն վտանգը հանգեցրեց ռուս-ֆրանսիական մերձեցմանը: Բրիտանիան փորձում էր դատավորի դեր խաղալ այդ երկու խմբավորումների միջև՝ որդեգրելով, ինչպես հետագայում անվանվեց, «փայլուն մեկուսացման» (“splendid isolation”) քաղաքակա-

[48] Lutsky, V. Modern History of the Arab Countries, Moscow, 1969, p. 233.

նությունը[49]: Լոնդոնը չմիացավ բլոկներից ոչ մեկին և ընտրելով դատավորի դերակատարությունը՝ փորձեց իր վերահսկողության տակ վերցնել եվրոպական քաղաքականությունը: Այսուհանդերձ, նրա համակրանքը Եռյակ դաշնության կողմն էր, իսկ ֆրանս-ռուսական դաշինքի նկատմամբ Լոնդոնը «թշնամական չեզոքություն» էր պահպանում: Ֆրանսիայի հետ Բրիտանիայի հարաբերությունների հիմնական բաղադրիչներն Աֆրիկայում առկա հակասություններն էին, իսկ Ռուսաստանի հետ՝ Մերձավոր Արևելքում: Գերմանիան, Ավստրո-Հունգարիան պաշտպանեցին Եգիպտոսի գրավումը Անգլիայի կողմից, ինչը մեծ գոհունակությամբ ընդունվեց Լոնդոնում: Ռուսաստանն ու Ֆրանսիան սատարեցին սուլթանին և պահանջեցին Բրիտանական ստորաբաժանումների անհապաղ դուրսբերումը Եգիպտոսից: Ահա այսպիսին էին պայմանները, երբ սուլթանը մերժեց նախագծի բրիտանական առաջարկը:

Բնական էր, որ համաձայնագիրը չստորագրվեց և բրիտանական բանակը մնաց Եգիպտոսում:

Եգիպտոսը շարունակում էր Օսմանյան կայսրության մաս կազմել, իսկ Բրիտանիան վերահաստատում էր իր մտադրությունները՝ մոտ ապագայում Եգիպտոսից իր զորքերը դուրս բերելու վերաբերյալ:

1888 թ. հունվարին բրիտանական պաշտոնյաներից մեկը հայտնել էր ֆրանսիացի բարձրաստիճան դիվանագետ դե Լաբուլայեին, որ երկու երկրներին բաժանում է միայն եգիպտական հարցը, իսկ Ֆրանսիայում սխալմամբ կարծում են, որ Բրիտանիան պատրաստվում է հավերժ մնալ Եգիպտոսում: Նա ավելացրել էր, որ Բրիտանիայում չկա որևէ քաղաքական գործիչ, որ հանդես գա Եգիպտոսում բրիտանական ուժերի մշտական տեղակայման օգտին՝ նշելով, որ Բրիտանիան պատրաստվում է դուրս գալ միայն

[49] Lutsky, V. Modern History of the Arab Countries, Moscow, 1969, էջ 235:

Եգիպտոսում հստակ կարգ ու կանոնի հաստատումից հետո: Ահա այսպիսին էր բրիտանական դիրքորոշումը եգիպտական հարցի վերաբերյալ: Հրապարակավ նրանք պատրաստ էին թողնել Եգիպտոսը, սակայն գործնականում անում էին ամեն ինչ իրենց ներկայությունն այնտեղ երկարաձգելու համար: 1887 թ. հետո ֆրանսիական և թուրքական դիվանագետները շարունակում էին պնդել բրիտանական ուժերի դուրսբերման վերաբերյալ իրենց դիրքորոշումը:

Եթե Արևմուտքում ֆրանս-անգլիական հակասությունները հարթվեցին 1898 թ. հունիսի 14-ի Կոնվենցիայով, ապա Արևելքում նրանց հետապնդած շահերը մշտական բախման մեջ էին գտնվում: Եվրոպական այդ երկու տերությունների միջև պայքարը հիմնականում ծավալվեց Վերին Նեղոսի վերահսկողության հարցի շուրջ: Անգլիայի համար այդ շրջանը չափազանց կարևոր նշանակություն ուներ, քանի որ Եգիպտոսի կենսունակությունն ամբողջովին կախված էր Նեղոսի ջրերից: 1894-1895 թթ. ընթացքում ազդեցության գոտիների բաժանման հարցում Ֆրանսիայի հետ համաձայնության գալուն ուղղված Անգլիայի փորձերն անարդյունք ավարտվեցին: Ֆրանսիացիներն ընդհանրապես առիթը բաց չէին թողնում՝ նշելու համար այն փաստը, որ հիմնականում շնորհիվ ֆրանսիական երկչոտության Անգլիան կարողացավ բացառիկ տիրապետություն հաստատել Եգիպտոսում: Ֆրանսիայի վարած գաղութատիրական գործողությունների ընդլայնման կողմնակիցները հույսեր էին փայփայում, որ ի վիճակի կլինեն ապահովել Ատլանտյան օվկիանոսից մինչև Կարմիր ծով կամ Հնդկական օվկիանոս ընկած տարածքի շարունակական շրջափակումը: Նշված ծրագրերն իրականացնելու, ինչպես նաև Անգլիայի վրա Եգիպտոսում ճնշում գործադրելու առումով Վերին Նեղոսը չափազանց կարևոր նշանակություն էր ձեռք բերում: Այդ ուղղությամբ առաջին քայլը կատարվեց 1896 թ., երբ Ֆրանսիան զինվորական ստորաբաժանում ուղարկեց Ֆաշոդա՝ ֆրանսիական դրոշն այնտեղ բարձրացնելու

նպատակով: Նույն թվականին պաշտոնական Լոնդոնը ֆելդմարշալ Հերբերթ Կիթչեներին ուղարկեց Սուդան՝ անգլիական իշխանությունը հաստատելու համար: 1898 թ. անգլիական զորքերը գրավեցին Խարտումը: Նույն թվականի սեպտեմբերի 25-ին Ֆաշոդայում հանդիպելով ֆրանսիական ստորաբաժանումներին՝ անգլիացիները խնդրեցին վերջիններիս դուրս բերել զորքերը: Անգլո-ֆրանսիական հարաբերություններում ծագեց 1815 թ. ի վեր ամենախորը ճգնաժամերից մեկը:

Բրիտանական կառավարությունը մոբիլիզացրեց անգլիական մամուլն ի պաշտպանություն իր դիրքորոշման, իսկ երկրի ծովային ուժերը ժամանակավորապես դրվեցին Արտաքին գործերի նախարարության վերահսկողության ներքո, որը բացառեց որևէ բանակցությունների հնարավորությունը մինչև ֆրանսիական զորքերի ամբողջական դուրսբերումը Սուդանից: 19-րդ դարի 90-ական թթ. երկրորդ անգամ էր[50], որ Անգլիան և Ֆրանսիան հայտնվել էին պատերազմի շեմին: Սակայն քաջ գիտակցելով, որ տվյալ պահին Ֆրանսիան ի վիճակի չէ պատերազմ մղելու ծովային հզորագույն տերության՝ Անգլիայի դեմ, Ֆրանսիայի նորանշանակ արտգործնախարար Դելկասսեն նոյեմբերի 3-ին կարգադրեց էվակուացնել ֆրանսիական զորքերը: 1899 թ. մարտի 21-ին ստորագրվեց Անգլո-ֆրանսիական կոնվենցիան, որով սահմանվեցին բրիտանական և ֆրանսիական ազդեցության գոտիները տարածաշրջանում՝ Վերին Նեղոսի հարցը, բնականաբար, լուծելով Անգլիայի օգտին:

Ֆաշոդայի ճգնաժամը հավելյալ ապացույց էր այն բանի, որ Ֆրանսիան այլևս անկարող է արդյունավետ մրցակցել Անգլիայի հետ Եգիպտոսում վերահսկողություն հաստատելու համար: Ֆրանսիայի իշխող շրջանակները պահանջեցին Անգլիայից Եգիպտոսում նրա դերի ճանաչման դիմաց ճանաչել Ֆրանսիայի իրավունքը Մա-

րոկկոյի վրա: Սա ուղղակի առևտուր էր, որը մի քանի տարի անց դարձավ նրանց միջև կնքվելիք դաշինքի հիմքը: Դելկասսեն, անշուշտ, այդպես հեշտ չզիջեց ֆրանսիական իրավունքները Եգիպտոսում: Չնայած երկուստեք մերձեցմանն ուղղված քայլերին, այնուամենայնիվ, հարաբերությունները Անգլիայի և Ֆրանսիայի միջև շարունակվում էին մնալ լարված:

Թեև եվրոպական ընդհանուր զարգացումներից դուրս եվրոպական տերությունների միջև ընթացող սուր մրցակցությունն ու լուրջ միջադեպերը[51] չէին կարող էապես խախտել Եվրոպայում հաստատված դաշինքների համակարգը, այնուամենայնիվ դրանք ցույց տվեցին այդ համակարգի թույլ տեղերը: Այդ միջադեպերի արդյունքը եղավ այն, որ պատերազմական գործողություններ սկսելու իրական վտանգը Եվրոպայում ստեղծեց անապահովության մթնոլորտ, ինչը եվրոպական մեծ տերություններին ստիպեց ամրապնդել իրենց դիրքերը՝ մեծացնելով յուրաքանչյուրի զինված ուժերի բյուջեն: Այսպես՝ 1878 թ. սկսած՝ Անգլիան և Ֆրանսիան գրեթե երկու, իսկ Գերմանիան երեք անգամ ավելացրին ռազմական ծախսերը:

Ռուսաստանի և Ճապոնիայի միջև հարաբերությունների սրումը, ինչպես նաև իրավիճակի փոփոխությունը Մարոկկոյում՝ Ֆրանսիայի հյուսիսաֆրիկյան կալվածքներից մեկում, նպաստեցին Ֆրանսիայի և Անգլիայի միջև հարաբերությունների բարելավմանը:

Մարոկկոյի սուլթան Մուլեյ Հասանի կառավարման օրոք Մարոկկոն ամբողջովին ֆրանսիական ենթակայության տակ էր գտնվում՝ զերծ մնալով օտար այլ ուժերի ազդեցությունից: Սակայն

---

[50] Առաջին անգամ հարաբերությունները ծայրաստիճան սրվեցին 1893 թ. Սիամի խնդրի շուրջ:

[51] Ֆաշոդայի ճգնաժամից բացի՝ վատթարացել էին հարաբերությունները Անգլիայի և Գերմանիայի միջև Հարավային Աֆրիկայում վերահսկողության հաստատման հարցի շուրջ:

1894 թ. Հասանի մահից հետո Մարոկկոյում իրավիճակը սրվեց, քանի որ եվրոպական այլ ուժեր կարող էին փորձել իրենց օգտին ծառայեցնել ստեղծված իրավիճակը՝ վնասելով սահմանակից Ալժիրի անվտանգությունը: Դելկասսեն որոշեց ամեն գնով Մարոկկոյում հասնել իր առանձնահատուկ հետաքրքրությունների ճանաչմանը Անգլիայի կողմից: Վերոհիշյալին նպաստեց Անգլիայում ֆրանսամետ Էդվարդ 7-րդ թագավորի գահ բարձրանալը: Անգլիան իր հերթին փորձում էր առիթն օգտագործել և ստիպել Ֆրանսիային ճանաչելու Եգիպտոսում անգլիական իրավունքները:

Վերջիվերջո, 1904 թ. ապրիլի 8-ին Բրիտանիան և Ֆրանսիան մի շարք պայմանագրեր ստորագրեցին, որոնք ազդարարեցին անգլո-ֆրանսիական նոր դաշինքի ստեղծման սկիզբը: Այդ համաձայնագրերից առավել նշանակալին անգլո-ֆրանսիական հռչակագիրն էր Եգիպտոսի և Մարոկկոյի վերաբերյալ, որը բաղկացած էր մի շարք գաղտնի և հրապարակային կետերից: Համաձայնագիրը հատկապես կարևորվում էր այն առումով, որ Ֆրանսիան գործելու ազատություն էր տալիս Անգլիային, իսկ վերջինս ճանաչում էր Ֆրանսիայի նկրտումները Մարոկկոյի հանդեպ: Փաստորեն, 1904 թ. անգլո-ֆրանսիական տարաձայնությունները հարթվեցին ոչ միայն Եգիպտոսի, այլև Սուեզի ջրանցքի, ինչպես նաև Եգիպտոսի միջազգային պարտքի հետ կապված հարցերի շուրջ:

Այսպիսով, Ֆրանսիան, համաձայնության գալով Անգլիայի, ինչպես նաև Իտալիայի և Իսպանիայի հետ, կարողացավ ապահովել իր վերահսկողությունը Մարոկկոյում, սակայն այդ հարցում չխորհրդակցեց Գերմանիայի հետ: Ավելի ուշ նա ստիպված եղավ «մարսել» դրա հետևանքները 1905-1911 թթ. ընթացքում՝ հատկապես Թանժերի և Ագադիրի միջադեպերի ժամանակ: Գերմանական հակազդեցությունը Մարոկկոյում Ֆրանսիայի ներկայության դեմ հարթվեց 1911 թ. նոյեմբերի 4-ին կնքված ֆրանս-գերմանական համաձայնագրով, որով Գերմանիան ստացավ ֆրանսիական

Կոնգոյի մի մասը՝ Ֆրանսիայի իրավունքը Մարոկկոյում պրոտեկտորատ հաստատելու դիմաց: Կարծում ենք մեկնաբանություններն ավելորդ են:

7. Ներքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակը Եգիպտոսում[52]

Եգիպտոսը թեև ձևականորեն համարվում էր Օսմանյան կայսրության մի մասը և կառավարվում էր խեդիվի կողմից, բայց իր այդ փաստացի գաղութային կարգավիճակը պահպանեց մինչև 1914 թվականը:

1892 թ. Թեվֆիկ խեդիվին փոխարինեց նրա որդին՝ Աբբաս Հիլմի 2-րդը, որն այդ պաշտոնում մնաց մինչև 1914 թվականը: Աբբասի կառավարման ժամանակաշրջանում ստեղծվեց 6 նախարարներից բաղկացած կաբինետը: 1883 թ. մայիսի 1-ին խեդիվը հրապարակեց «Օրգանական» օրենքը, որի համաձայն՝ Եգիպտոսում ստեղծվեց երկպալատ խորհրդարան՝ Օրենսդրական խորհուրդը և Գլխավոր ասամբլեան: Օրենսդրական խորհուրդը բաղկացած էր 30 անդամներից, որոնցից 14-ը նշանակվում էին, իսկ 16-ին ընտրում էին շրջանային խորհուրդները: Գլխավոր ասամբլեան կազմված էր 82 անդամներից, ներառյալ բոլոր նախարարները, Օրենսդրական խորհրդի անդամներին, իսկ մնացյալ 46-ը ընտրվում էին մեծամասնական սկզբունքով: Երկու պալատները համատեղ նիստ էին գումարում երկու տարին մեկ անգամ: Նրանք օրենսդրական որևէ նախաձեռնության իրավունք չունեին և քննարկում էին միայն կառավարության ներկայացրած օրինագծերը: Նրանց կայացրած որոշումները պարտադիր կատարման ուժ չունեին:

---

[52] Տե՛ս Baer, Gabriel, A Social and Economic History of Egypt. Chicago, 1969, Tignor, Robert L. Modernization and British Colonial Rule in Egypt, 1882-1914, Princeton, 1966, Holt, Peter M. Political and Social Change in Modern Egypt. London, 1968:

Նույն լիազորություններից զուրկ էին նաև խեդիվն ու նրա կառավարությունը, որոնք ուղղակի կատարում էին Բրիտանիայի գլխավոր հանձնակատարի հանձնարարություններն ու հրահանգները: Բրիտանական ներկայացուցիչը, վայելելով երկրում բրիտանական մեծաթիվ բանակի աջակցությունը, գործնականում Եգիպտոսի միանձնյա ղեկավարն էր: 1883-1907 թթ. գլխավոր հանձնակատարի (գլխավոր հյուպատոս կամ գլխավոր ներկայացուցիչ) պաշտոնը զբաղեցնում էր լորդ Կրոմերը:

Անգլիական իշխանությունների հիմնական խնդիրներից մեկը եգիպտական ծայրաստիճան հյուծված տնտեսության բարելավումն էր և կուտակված պարտքերի պատճառով ֆինանսական ճգնաժամի կանխումը:

Առաջին քայլն այդ ուղղությամբ կատարեց Բրիտանիան՝ տեղեկացնելով Ֆրանսիային Եգիպտոսի ֆինանսների երկկողմ վերահսկման ավարտի մասին: Լոնդոնը, զրկելով Ֆրանսիային Եգիպտոսի ներքին գործերին միջամտելու հզորագույն լծակից, իր մենաշնորհը հաստատեց երկրի ֆինանսական ոլորտում: Եգիպտոսի բյուջեի դեֆիցիտին ուղղված մի շարք միջոցառումներ իրականացրին անգլիացիները, որի շնորհիվ արդեն 1888 թ. նրանց հաջողվեց հավասարակշռել երկրի բյուջեն: Դրանից առաջ՝ 1885 թ., բրիտանական իշխանությունները ձեռնարկեցին դրամական բարեփոխումներ. հողային տուրքը (ուշրիյա) և խարաջը հավասարեցվեցին, կրճատվեց Եգիպտոսի վարչական ապարատը: 1898 թ. Բրիտանիան հիմնեց Եգիպտոսի ազգային բանկը, որը, չնայած անվանմանը, մասնավոր էր, այն էլ ոչ թե եգիպտական, այլ՝ անգլիական: Ազգային բանկի գործառույթների մեջ էր մտնում եգիպտական արժույթի թողարկումն ու կառավարության՝ կանխիկ դրամի շրջանառության վերահսկումը:

Բնական էր, որ Բրիտանիայի ֆինանսական քաղաքականությունը ուղղվում էր սեփական, այնուհետև՝ եվրոպական բանկերի

շահերի պաշտպանությանը: Եգիպտոսում օտարերկրյա կապիտալը գրավել էր ոչ միայն բանկային ոլորտը, այլև՝ խոշոր արդյունաբերությունն ու տրասնպորտը: Այդ պայմաններում ազգային բուրժուազիան ստիպված էր սահմանափակվել մանր արտադրությամբ կամ էլ մտնել օտարերկրյա ընկերությունների մեջ կրտսեր գործընկերոջ իրավունքով: Ազգային կապիտալի մեծ մասը ներդրվում էր հողի և գյուղատնտեսության մեջ, որտեղ կապիտալի մրցակցությունը համեմատաբար թույլ էր:

Եգիպտոսի տնտեսության զարգացող հիմնական ճյուղը բամբակագործությունն էր: Անգլիայի տնտեսական քաղաքականությունը նպատակ էր հետապնդում Եգիպտոսը վերածելու այնպիսի երկրի, որը էժան ու բարձրորակ բամբակ կմատակարարեր սեփական տեքստիլ արդյունաբերությանը: Ցանքատարածությունների բաշխումը, դաշտերի մշակման մեթոդները, ցանքաշրջանառությունը և ոռոգման ցանցը, այսինքն գրեթե ամեն ինչ ուղղորդված էր բամբակի արտադրության ավելացման խնդրի լուծմանը: Գրեթե ողջ բամբակն արտահանվում էր Անգլիա: Բամբակի ամբողջ առևտուրը կենտրոնացված էր անգլիացիների ձեռքերում: Նրանց բանկերը Եգիպտոսում ունեին բամբակի հատուկ բաժանմունքներ, որոնք վարկեր էին տրամադրում ներքին և արտաքին առևտրի համար:

Բամբակն արտահանվում էր երկաթուղով, ինչպես նաև նավերով, որոնք տարբեր գետերով ու ջրանցքներով հումքը հասցնում էին Ալեքսանդրիայի նավահանգիստ, այնտեղից էլ՝ Եվրոպա: Եգիպտոսում գոյություն չուներ բամբակի մշակման որևէ գործարան: Անգլիացիները նախընտրում էին արտահանել հումքը, այնուհետև այն մշակել Անգլիայում և եվրոպական այլ երկրներում ու պատրաստի արտադրանքը ներմուծել Եգիպտոս: Այսինքն՝ Եգիպտոսը դիտվում էր որպես Անգլիայի հումքային կցորդ, որտեղ արդյունաբերության և տնտեսության այլ ճյուղերի զարգացումը նպատակահարմար չէր դիտվում: Անգամ ջրային մեծ պաշարներ ունե-

ցող Եգիպտոսը, որտեղ առկա էին բազմաթիվ ամբարտակներ, հիդրոէլեկտրակայանների կառուցման համար չափազանց գրավիչ էր: Սակայն, անգամ 1902 թ. Ասուանի ջրամբարտակի վրա հիդրոէլեկտրակայան կառուցելու միակ նախագիծն այդպես էլ մնաց թղթի վրա:

Օտարերկրյա խոշոր մոնոպոլիաները չնչին գներով գնում էին անջրդի հողերը, կատարում էին ոռոգման անհրաժեշտ աշխատանքներ և այնուհետև այդ հողերը սպեկուլյատիվ գներով վաճառում կամ էլ տալիս էին վարձով: 1899 թ. օտարերկրյա կապիտալը վերահսկում էր բոլոր մասնավոր սեփականատիրական հողերի 34 տոկոսը:

Ինչ վերաբերում է արդյունաբերության մյուս ճյուղերին, ապա այստեղ էլ պատկերն անմխիթար էր: Այսպես՝ շաքարի արդյունաբերությունը գտնվում էր ֆրանսիացիների ձեռքում, իսկ շաքարի ազգային արտադրությունը ոչնչացված էր: 1898 թվականից հետո Բարդիս, Նագ-Համադի, Մամարրիս և այլ քաղաքների ձեռնարկատերերը շաքարի գործարաններ կառուցեցին, բայց դրանցից ոչ մեկը չդիմացավ ֆրանսիական հզոր մոնոպոլիստների մրցակցությանը: 1904 թ. անգլիացիները գրավեցին աղի արդյունահանման մենաշնորհը: Ավստրիացիները տիրացել էին երկրի՝ ֆեսերի և ավանդական ապրանքատեսակների արտադրությանը: Շվեդական մի ընկերություն, քայքայելով լուցկու տեղական արտադրությունը, ստիպեց փակել այդ գործարանը:

1883 թ. Եգիպտոսում արգելվեց թութուն աճեցնել՝ վերջինիս համար հատկացված հողատարածքները բամբակի տակ օգտագործելու նպատակով, իսկ թութուն մշակող եգիպտական ձեռնարկությունները հարկադրաբար կամ ճարահատյալ սկսեցին աշխատել Թուրքիայից և Բալկանյան այլ երկրներից ներմուծվող հումքով:

Օտարերկրյա կապիտալը սկսեց գերիշխել նաև երկաթուղային տրանսպորտում: Արտասահմանյան ընկերությունների երկաթուղիները առանձնակի դեր էին խաղում երկրի տնտեսական կյանքում: Տրամվայի գծերի կառուցումն ու շահագործումը Կահիրեում, Ալեքսանդրիայում և Պորտ-Սաիդում ամբողջովին պատկանում էին եվրոպական բաժնետիրական ընկերություններին: Փաստորեն, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Եգիպտոսի տնտեսության մեջ առաջնային դերակատարություն ուներ անգլիական կապիտալը, որը եվրոպական այլ երկրների խոշոր բիզնեսի ներկայացուցիչների հետ միասին Եգիպտոսում զարգացնում էր այն ճյուղերը միայն, որոնք կապված էին հումքի նախնական մշակման հետ: Բնականաբար, նման քաղաքականությունը բերում էր երկրի արդյունաբերության անկմանը՝ Եգիպտոսին վերապահելով գաղութային երկրի կարգավիճակ:

Շուրջ քսան տարի **Սուեզի ջրանցքի կարգավիճակի հարցը** բուռն քննարկման առարկա էր Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև: Վախենալով, որ Եգիպտոսի գրավումը անգլիացիների կողմից կվնասի Սուեզի ջրանցքով նավագնացությանը՝ Ֆրանսիան պահանջում էր լուծել միջազգային վերահսկողության մարմնի ստեղծման խնդիրը: Նրա նախաձեռնությամբ 1885 թ. կազմվեց միջազգային հանձնաժողով, որը պետք է քայլեր ձեռնարկեր ջրանցքի անխափան օգտագործումն ապահովելու ուղղությամբ: Երկար պայքարից հետո հանձնաժողովը նախապատրաստեց Կոնվենցիայի նախագիծը, որը կոչված էր ապահովելու ազատ նավագնացությունը ջրանցքով: 1888 թ. հոկտեմբերի 29-ին Ռուսաստանի, Ֆրանսիայի, Բրիտանիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի, Իսպանիայի, Հոլանդիայի և Թուրքիայի ներկայացուցիչները վերջապես ստորագրեցին կոնվենցիան:

Նծված փաստաթղթի համաձայն՝ բոլոր նավերի համար հաստատվում էր «խաղաղ և ռազմական պայմաններում ազատ ու բաց» նավագնացությունը: Միևնույն ժամանակ նավերը չէին կարող գտնվել ջրանցքի գոտում 24 ժամից ավելի: Վերջին դրույթը չէր կարող չանհանգստացնել Անգլիային, քանի որ նա զրկվում էր այդ գոտում նավատորմ և ռազմական բազաներ պահելու, նաև շինարարական և այլ գործողություններ իրականացնելու հնարավորությունից: Այդ իսկ պատճառով պաշտոնական Լոնդոնն անում էր ամեն ինչ՝ իրականում կոնվենցիայի կիրարկումը ձախողելու և խոչընդոտելու համար: Կոնվենցիան ստորագրելով հանդերձ՝ Բրիտանիան հանդես եկավ վերապահությամբ, ինչը փաստորեն իրավական հիմքերից զրկում էր նրա մասնակցությունը կոնվենցիային: Միայն 1904 թ. ֆրանս-անգլիական հարաբերությունների կարգավորումից հետո այդ լրացումը հանվեց Կոնվենցիայի տեքստից, և այդ պահից սկսած՝ Բրիտանիան դարձավ այդ կոնվենցիայի լիիրավ անդամ:

Պետք է նշել, որ հետագայում՝ 1906 թվականին, Բրիտանիան բռնակցեց Սինայի թերակղզին, ինչը հարուցեց Բարձր դռան խիստ զայրույթն ու բողոքը: Եվ քանի որ Ֆրանսիան այլևս չէր խառնվում Եգիպտոսում և նրա շուրջ կատարվող զարգացումներին, Բրիտանիան ձեռք բերեց մի շատ կարևոր ռազմավարական տարածք՝ Սուեզի ջրանցքը պաշտպանելու և գալիք համաշխարհային պատերազմի ժամանակ Պաղեստինի վրա հարձակվելու նպատակով:

Ա. Ազգային-ազատագրական շարժումը Եգիպտոսում[53]

Արաբի փաշայի ապստամբությունից հետո, 19-րդ դարի 80-ական թթ. Եգիպտոսում կազմակերպված ազգային շարժում չկար: Վերջինս սկսեց ձևավորվել միայն 1882 թ.՝ Անգլիայի կողմից երկիրը գրավելուց հետո: 90-ականներին ի հայտ եկան տարբեր ազգային կազմակերպություններ, իսկ եգիպտական ազգային բուրժուազիայի գաղափարախոսները վերսկսեցին իրենց գործունեությունը: Այդ տարիներին եգիպտական բուրժուազիան չէր հավատում ժողովրդական զանգվածային շարժման հնարավորությանը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ ցանկացած նման շարժում կարժանանա անգլիական իշխանությունների խիստ հակազդեցությանը: Եգիպտական բուրժուազիայի որոշ ներկայացուցիչներ անգամ հայտարարում էին Բրիտանիայի դեմ պայքարի վնասակարության մասին՝ հույս փայփայելով, որ համագործակցությունն առաջադեմ և հզոր եվրոպական տերության հետ Եգիպտոսին կարող է ապահովել առավել բարգավաճ ապագա: Նրանք գտնում էին, որ հիմնական պայքարը պետք է ծավալել բարեփոխումների իրականացման և Եգիպտոսի ներքին կառուցվածքը վերափոխելու ուղղությամբ:

Վերոհիշյալ գաղափարների եռանդուն քարոզիչն էր Մուհամեդ Աբդոն, որն իր կողմնակիցների հետ միասին դրեց Եգիպտոսում մահմեդական բարեփոխումների հիմքերը: Նա ծնվել էր 1849 թ. գյուղացու ընտանիքում և ավելի ուշ կրթություն էր ստացել Ալ-Ազհարում: 1872 թ. ընկերացել է Ջամալ ադ-Դին ալ-Աֆղանիի հետ,

---

[53] Ал-Шафии А., Развитие национально-освободительного движения в Египте (1882–1956), Москва, 1961, Котлов Л. Н., Становление национально-освободительного движения на Арабском Востоке, Москва, 1976, Kedourie, Elie. Afghani and Abduh: An Essay on Religious Unbeleif and Political Activism in Modern Islam. London, 1966, Hourani, Albert A. Arabic Thought in the Liberal Age., 1798-1939, London, 1962, Safran, Nadav. Egypt in Search of Political Community. Cambridge, 1961, Keddie, R. Nikki. An Islamic Response to Imperialism. Berkely. 1968.

որը մեծ ազդեցություն ունեցավ Աբդոյի վրա: Արաբի փաշայի ապստամբությունից հետո խռովարարների հետ համագործակցելու պատճառով Աբդոն արտաքսվեց երկրից և բնակություն հաստատեց Բեյրութում: 1889 թ. նա վերադարձավ Կահիրե և նույն թվականին անգլիացիների օժանդակությամբ նշանակվեց Եգիպտոսի Մուֆթի՝ երկրի բարձրագույն կրոնական պաշտոնյա:

Աբդոն և մահմեդական բարեփոխիչները պայքարում էին ֆեոդալ հողատերերի և նրանց հետ կապված պահպանողական մահմեդական հոգևորականության քաղաքական և գաղափարական գերիշխանության դեմ: Նրանք կոչ էին անում վերականգնել Իսլամի սկզբնական մաքրությունն ու վերադառնալ նրա բուն արմատներին: Այսուհանդերձ, Մուհամեդ Աբդոն կողմնակից էր Եգիպտոսում արևմտյան լուսավորության և տեխնիկական առաջընթացի ձեռքբերումների օգտագործմանը, համոզված լինելով, որ Իսլամը չի հակասում գիտությանը: Մուհամեդ Աբդոյի և նրա կողմնակիցների քարոզչությունը մեծ ազդեցություն ունեցավ եգիպտացի մահմեդական լայն զանգվածների մտածելակերպի և երկրում սոցիալական ու քաղաքական մտքի հետագա զարգացման վրա:

Կրոնի բարեփոխմանն ուղղված շարժումը մեծապես նպաստեց Եգիպտոսում ազգային-ազատագրական պայքարի ակտիվացմանն ու նրա հետագա ծավալմանը: Արաբական ազգայնական գաղափարների ու սկզբունքների տարածումը սերտորեն կապված էր կրոնի բարենորոգչական շարժման հետ: Մուհամեդ Աբդոն կոչ էր անում պայքարել Օսմանյան կայսրությունում արաբ բնակչության թրքացման դեմ՝ անհրաժեշտ համարելով դասական արաբերենի վերականգնումն ու արաբական ազգի միասնության ապահովումը:

Վերջին խնդիրն առավել խորությամբ և հետևողականությամբ շոշափելի տեղ էր զբաղեցնում ոչ թե մահմեդական բարեփոխիչնե-

րի գործունեության, այլ արաբ հրապարակագիր, սիրիացի Աբդ ել—Ռահման ալ-Քավաքիբիի աշխատությունների մեջ: Նրա երկու հայտնի գրքերում՝ «Բռնատիրության բաղադրիչները» (Թաբաի ել-Իսթիբդադ) և «Քաղաքների մայրը» (Ումմ ալ-Ղուրա)[54], քննադատության է ենթարկվում բռնատիրությունը և պաշտպանության տակ են առնվում աղքատներն ու չքավորները: Նրա գաղափարներն ու վերլուծության համակարգը չափազանց նման էին 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի ֆրանսիական և իտալական լուսավորիչների գաղափարներին, որոնք, մերժելով սխոլաստիկ աստվածաբանությունը և կրոնական ծայրահեղականությունը, գովերգում էին ժողովրդավարությունը և միասնական արաբական պետություն ստեղծելու կոչ էին անում: Քավաքիբիի համար հայրենիքն ավելի վեհ ու բարձր նշանակություն ուներ քան կրոնը, իսկ հայրենասիրությունը գերիշխում էր կրոնական զգացմունքների վրա: Այսուհանդերձ, Քավաքիբիի աշխատություններում առկա էր իսլամն իդեալականացնելու միտումը՝ հատկապես պանիսլամիզմի գաղափարների լուսաբանման ներքո:

Ազգային-ազատագրական գաղափարախոսության հիմնադիրներից և ակտիվ քարոզիչներից էր Մուսթաֆա Քամիլը, որն առաջնային դերակատարություն ունեցավ Եգիպտոսում ազգային կազմակերպությունների և քաղաքական պայքարի զարգացման գործում: Մուսթաֆա Քամիլը հույս ուներ անկախություն նվաճել իր երկրի համար՝ օգտագործելով երկու մեծ տերությունների՝ Բրիտանիայի և Ֆրանսիայի հակասությունները: Նրա ամբողջ գործունեությունն ուղղված էր այդ նպատակի իրականացմանը:

Մուսթաֆա Քամիլի ուշադրության կենտրոնում էին մշտապես գտնվում նաև լուսավորությանը և ազգայնական գաղափարների քարոզչությանը վերաբերող հարցերը: Նա ընկերական սերտ հա-

[54] Ղուրանում այս անվան տակ նշվում է Մեքքան:

բաբերություններ էր հաստատել ոչ միայն Եգիպտոսի խեդիվ Աբբաս 2-րդ Հիլմիի, այլև օսմանյան սուլթան՝ Աբդուլ-Համիդ 2-րդի հետ: Մուսթաֆան կարծում էր, որ Ֆրանսիայի դավաճանության և արտաքին օգնության անհրաժեշտության դեպքում Եգիպտոսը կարող է ապավինել Թուրքիայի, ինչպես նաև Եվրոպայում իր դաշնակիցների՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի վրա: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Մուսթաֆա Քամիլը չէր պայքարում Եգիպտոսի ամբողջական անկախության համար, այլ պանիսլամիզմի գաղափարախոսական հենքի վրա նա կողմ էր, որ Եգիպտոսը ընդգրկվի Օսմանյան կայսրության կազմի մեջ: Վերջին հանգամանքը գնահատելով՝ 1904 թ. թուրքական սուլթանը նրան շնորհեց փաշայի տիտղոս:

Եգիպտոսում ազգային-ազատագրական պայքարի առավել նշանակալից պոռթկումը տեղի ունեցավ 1906 թ. հունիսին, երբ Թանթա քաղաքի մերձակայքում գտնվող Դենշավայ փոքր գյուղում տեղի գյուղացիների հետ ընդհարման պատճառով սպանվեց բրիտանական բանակի սպաներից մեկը: Դրան ի պատասխան՝ մեծ թվով գյուղացիներ ձերբակալվեցին, իսկ նրանցից չորսը մահվան դատապարտվեցին: Դատարանի անարդար որոշումը ցասումի և բողոքի մեծ ալիք բարձրացրեց Եգիպտոսում: Ցույցեր էին տեղի ունենում երկրի ողջ տարածքում, լրատվական միջոցները հերոսացնում էին եգիպտական գյուղացիներին, որոնք դիմադրություն ցույց տվեցին բրիտանացիներին նրանց անարգալից և սանձարձակ կեցվածքի համար: Ցուցարարները պահանջում էին ազատ արձակել ձերբակալված գյուղացիներին: Դենշավայի միջադեպը ներքին և արտաքին այնպիսի արձագանք ունեցավ, որ 1907 թ. գյուղացիներին ներում շնորհվեց:

1907 թ. Լորդ Քրոմերին Եգիպտոսում եկավ փոխարինելու Էլդոն Գորսթը, որը փորձեց պառակտել երկրում աստիճանաբար

աճող ազգային շարժումը[55]: Նրա նախաձեռնությամբ 1907 թ. մի խումբ անգլիամետ եգիպտացիները ստեղծեցին «Բարեփոխումների կուսակցությունը» (Հիզբ ալ-Իսլահ), որին անդամակցեցին երկրի բարձրաստիճան պաշտոնյաներ, ծառայողներ ու անգլիացիների հետ համագործակցելու հակված մտավորականության ներկայացուցիչներ: Կուսակցությանը անմիջական օժանդակություն էր ցուցաբերում անգլիական առաքելությունը: Կազմակերպությանն էին պատկանում եգիպտական ամենամեծ տպաքանակ ունեցող օրաթերթերը՝ «Ալ-Մուղաթթամը» և «Ալ-Ահրամը»:

1907 թ., ի հակակշիռ «Բարեփոխումների կուսակցությանը», Մուսթաֆա Քամիլը հիմնադրեց իր սեփական քաղաքական «Հայրենիքի կուսակցություն» (Հիզբ ալ-Վաթան), որի առաջին համագումարը կայացավ 1907 թ. դեկտեմբերի 7-ին ազգային բուրժուազիայի առաջադեմ և ազատասեր ներկայացուցիչների մասնակցությամբ:

1906 թ. ստեղծվել էր «Ժողովրդի կուսակցությունը» (Հիզբ ալ-Ումմա), որում ներկայացված էին Եգիպտոսի բուրժուական և ֆեոդալական խավերի ներկայացուցիչները: Կուսակցությունը որոշ չափով միջին դիրք էր գրավում վերոհիշյալ երկու կուսակցությունների միջև:

Քաղաքական ակտիվության հետ մեկտեղ Եգիպտոսում զարգանում էր արհմիութենական շարժումը: Երկրում առաջին արհմիությունը ստեղծվեց 1908 թ., որը համախմբեց բանվորներին: Արդեն 1911 թ. Եգիպտոսում գրանցված էր 11 արհմիութենական կազմակերպություն:

1908 թ. երիտթուրքական հեղափոխությունը և 1876 թ. սահմանադրության վերականգնումը դրականորեն ընդունվեցին Եգիպ-

[55] Տե՛ս Heller, Joseph, British Policy Towards the Ottoman Empire 1908-1914, London, 1983:

տոսում և նոր լիցք հաղորդեցին ազգային-ազատագրական շարժմանը: Երկրում բրիտանական ներկայության դեմ բողոքի նոր ցույցեր տեղի ունեցան: Քաղաքական բոլոր կուսակցությունները պահանջում էին սահմանդրության վերականգնումը և պնդում էին, որ գործող Օրենսդրական խորհուրդն ու Գլխավոր ասամբլեան փոխարինվեն իրական ներկայացուցչական հաստատություններով: Սահմանադրական այդ շարժումն առաջնորդեց «Հայրենիքի կուսակցությունը», որը, ի տարբերություն քաղաքական այլ կուսակցությունների, սերտ կապեր էր հաստատել երիտթուրքերի հետ:

Սակայն, ինչպես Օսմանյան կայսրության այլ մասերում, այնպես էլ Եգիպտոսում հեղափոխության առաջացրած խանդավառությունը երկար չտևեց: Արդեն 1909 թ. բրիտանական իշխանությունները նոր օրենսդրական ակտերով փորձեցին իրավական հիմքեր ստեղծել Եգիպտոսում ազգային շարժումը կասեցնելու համար: Այսպես, 1909 թ. մարտի 25-ին ընդունված օրենքով եգիպտական լրատվական միջոցները զրկվում էին բրիտանական իշխանություններին քննադատելու իրավունքից: Հուլիսի 4-ի մեկ այլ օրենքով արտոնվում էր իշխանություններին՝ ցանկացած անձի, որը «կկասկածվի ազգայնական գաղափարներին համակրելու մեջ», առանց դատավարության կամ հետաքննության արտաքսել երկրից[56]: «Հայրենիքի կուսակցությունը» ստիպված եղավ անցնել ընդհատակ և իր հաջորդ համագումարներն անցկացնել Եվրոպայում:

1911 թ. Էլդոն Գորսթը մահացավ, Եգիպտոսում բրիտանական գլխավոր հյուպատոս նշանակված գեներալ Կիթչենները շարունակեց Գորսթի քաղաքականությունը[57]:

[56] Lutsky, V., Modern History of the Arab Countries, Moscow, 1969, p. 249.

8. Եգիպտոսի հայ համայնքը 18-19-րդ դարերում

Եգիպտոսը կամ, ինչպես հնում հայերն անվանել են, Մսրը, Հին Արևելքի այն երկրներից է, որը գործուն փոխհարաբերությունների մեջ է գտնվել պատմական Հայաստանի նախաբնիկների հետ դեռևս փարավոնյան շրջանում: Հայ-եգիպտական առնչությունները շարունակվել են հետագայում սելևկյան և հռոմեական տիրապետության շրջաններում:

Եգիպտական հողի վրա հաստատված առաջին հայ հատվածի մասին հասած հավաստի տեղեկությունը վերաբերում է առաջին դարին մեր թվարկությունից առաջ, երբ ըստ պատմիչների, Եգիպտոսում բավականին թվով հայեր ապրում և իշխող դիրքեր էին գրավում[58]:

Եգիպտահայ համայնքը հետագա զարգացումն ու բարգավաճումն է ստացել Արաբական խալիֆայությունների, մասնավորապես Ֆաթիմյանների ժամանակաշրջանում, երբ Եգիպտոսում բարենպաստ պայմաններ են ստեղծվել հայ բնակչության կենտրոնացման և հայ արհեստավորության ու առևտրականների համար: Եթե չհաշվենք առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ փախստականների կամքից անկախ կենտրոնացումը Եգիպտոսում, իր երկարաձիգ պատմության ընթացքում ամենաշատ բնակչությունը եգիպտահայ համայնքը ունեցել է XI-XII դարերում՝ շուրջ 30.000[59]: Եգիպտահայությունը ծանր վիճակի մեջ է ընկնում Այուբյան դինաստիայի, իսկ հետագայում մամլուքների տիրապետության հաստատման ժամանակաշրջանում (1171-1517):

---

[57] Ավելի ուշ՝ 1914 թ., նա նշանակվեց Բրիտանիայի պատերազմի նախարար (War Minister):

[58] Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 128:

[59] Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 121:

Եգիպտոսի հայ համայնքը շարունակում է իր գոյապայքարը նաև Թուրքիայի տիրապետության շրջանում (սկսած 1517 թվականից):

Տնտեսական կյանքի լճացումը, թուրք տիրակալների կեղեքումներն ու հարստահարություններն իրենց ծանր կնիքն են դրել Եգիպտոսի հասարակական, տնտեսական կյանքի, այդ թվում՝ նաև եգիպտահայության վրա: Այդ որոշակի երևում է Սիմեոն Լեհացու «Ուղեգրությունից»[60]: Հեղինակը 1615 թ. եղել է Եգիպտոսում և գրի է առել իր տպավորությունները: Նրա նկարագրությունից երևում է, որ Եգիպտոսի նախկին բարգավաճ գաղթավայրը 17-րդ դարում գտնվել է ողբալի վիճակում: Կահիրե քաղաքում նա հիշում է միայն 200 հայ տուն, որոնք ապրում են «Հայկական» կոչվող թաղամասում և Եգիպտոս են եկել 1600 թ.՝ Ջալալիների ապստամբության ժամանակ: Եգիպտահայերը, ըստ Ս. Լեհացու տեղեկության, գլխավորապես զբաղվում էին արհեստներով: Նա Կահիրեի Խանխալ թաղամասում հանդիպել է դիարբեքիրցի, հալեպցի և պոլսեցի հայ արհեստավորների, որոնք զբաղված են եղել ոսկերչությամբ ու զինագործությամբ: 16-17-րդ դարերում եգիպտահայ համայնքի նվազման հետևանքով հայերն անգամ սեփական աղոթատներ չեն ունեցել և օգտվել են ղպտիների տված մի մատուռից: Ըստ 17-րդ դարի եվրոպացի ճանապարհորդ Գևորգ Սենիսի տեղեկության, որն անձամբ եղել է Կահիրեում և արձանագրել, որ հայերը քաղաքի «ամենից աղքատներն են և ամենից մեծ պատիվ ունեցողները. նրանք չարքաշ աշխատում են և համեստ ապրում»[61]:

Տարբեր աղբյուրներից կարելի է տեղեկանալ նաև Եգիպտոսում հայերի կատարած շինարարական բազմաթիվ աշխատանքների ու ճարտարապետական կառույցների մասին: Շվեդացի մի

---

[60] Սիմեոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն, տարեգրութիւն և յիշատականօք, Վիեննա, 1936, էջ 216:

ճանապարհորդ բժիշկ, որը 1749-1752 թթ. ուղևորություն է կատարել Մերձավոր Արևելք, Եգիպտոսի ճարտարապետության մասին խոսելիս, նախ քննադատում է թուրքերին, որոնք չգիտեն, թե ինչպես կարելի է քարը քարի վրա դնել և պատ շարել. «Հայերն են նրանց ճարտարապետները,– գրում է նա: –Սրանք բնական հակում ունեն դեպի այս արհեստը»: Վերջում նա ցանկություն է հայտնում, որ եթե այս կառուցողները գան Եվրոպա, ճարտարապետական հրաշալի կոթողներ կկառուցեն այստեղ, կկարողանան «իրենց վարպետությամբ մրցել հների հետ և անցնել նորերից»[62]:

Եգիպտահայերը, երախտագիտորեն գնահատելով եգիպտացիների ազնիվ վերաբերմունքն իրենց ապաստան տալու և աշխատելու հարմար պայմաններ ստեղծելու համար, ոչ միայն ջանադիր են գտնվել Եգիպտոսի՝ իրենց երկրորդ հայրենիքի, տնտեսության և մշակույթի զարգացման բնագավառներում, այլև հավատարմորեն կանգնել են եգիպտական ժողովրդի կողքին նրանց մղած ազատագրական շարժումների ժամանակ: Եվ միանգամայն բնական է, որ եգիպտահայերը, որոնք եգիպտական ժողովրդի նման իրենց սեփական մաշկի վրա զգացել են հարստահարիչների կեղեքումներն ու դաժանությունները, չէին կարող անմասն մնալ և գործուն մասնակցություն չցուցաբերել Եգիպտոսի ազգային ազատագրման վեհ գործին: Այդ տեսանկյունից ուշագրավ է պատմական հետևյալ փաստը. 1771 թ., երբ Ռուսաստանը պատերազմական գործողությունների մեջ էր գտնվում Թուրքիայի հետ, և ռուսական նավատորմը մտել էր Միջերկրական ծով, Եգիպտոսի կառավարիչ Ալի բեյը երկու պատգամավոր է ուղարկում ռուսական զորահրամանատար իշխան Օրլովի մոտ՝ կնքելու զինակցության և

[61] George Sanys. Relation of a Journey Begun. A.Q. 1610, p. 198.
[62] Ա. Ալպոյաճեան, Եգիպտոսի նահանգը և հայերը, Գահիրէ, 1960, էջ 50-51:

բարեկամության դաշինք՝ ընդդեմ Թուրքիայի[63]: Այդ երկու պատգամավորներից մեկը հայ էր՝ Հակոբ անունով: Առաքելությունը եղել է Պետերբուրգում, և Հակոբը հաջողությամբ կատարել էր իր առջև դրված խնդիրն ու վերադարձել երկու ռուս սպաների հետ, որոնք հանձնարարություն են ունեցել քննելու եգիպտական դաշնակից երկրի բանակի վիճակը: Հետագայում Ռուսաստանից Եգիպտոս են ուղարկվել թնդանոթներ և այլ զինամթերք: Հակոբն արել է ամեն ինչ, որ Եգիպտոսը կարողանա ձեռք բերել և պահպանել իր առավել անկախ կարգավիճակը:

1798 թ. Նապոլեոնի արշավանքը Եգիպտոս և նրան հետևած 1811-1849 թթ. Եգիպտոսում հաստատված Մուհամմադ Ալիի իշխանության ժամանակաշրջանը, փաստորեն, նոր էջ բացեցին Եգիպտոսի պատմության մեջ: Եթե Նապոլեոնի արշավանքն արթնացրեց Եգիպտոսը «դարերի քնից» և վերջինիս ազգային-ազատագրական պայքարի լուրջ փորձառություն տվեց, ապա Մուհամմադ Ալիի իրականացրած բարեփոխումները Եգիպտոսում, ինչպես Պետրոս 1-ինը Ռուսաստանում, Եգիպտոսը վերածեցին հզոր և կայուն պետության՝ ամուր հիմքեր ստեղծելով նրա տևական զարգացման և բարգավաճման համար:

Մուհամմադ Ալիի վարչական և տնտեսական ռեֆորմներն իրենց դրական ազդեցությունն ունեցան նաև եգիպտահայ համայնքի վրա: Արևմտյան Հայաստանից, Թուրքիայից և հարևան արաբական այլ երկրներից տեղափոխվելով Եգիպտոս՝ հայերը գործուն աջակցություն էին ցուցաբերում երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացմանը: Նրանք զգալի դերակատարություն ունեին արհեստների զարգացման, առևտրական կապերի ընդլայնման և Եգիպտոսի ֆինանսական համակարգի հաստատման գոր-

[63] Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 145:

ծում: Եգիպտոսի հայ համայնքը աստիճանաբար մեծանում էր: Առևտրափոխատվական կապիտալի խոշոր ներկայացուցիչները մտնում էին պետական-քաղաքական ոլորտ: Նրանք բարձր պաշտոններ էին զբաղեցնում Մուհամմադ Ալիի կաբինետում և դիվանում՝ ազդեցություն ունենալով երկրի արտաքին և ներքին քաղաքականության վրա:

Եգիպտոսի առևտրական բուրժուազիայի բնորոշ գծերից էր ազգային կազմի բազմազանությունը: Բացի արաբներից և ղպտիներից՝ նրա բաղկացուցիչ մասն էին կազմում հայերը, հույները, հրեաները և սիրիացիները[64]: Հարաբերակցությունը հաճախ փոխվում էր, սակայն այդ ոլորտում իշխող դիրքեր էին գրավում կա՛մ ղպտիները, կա՛մ հայերը: Ֆրանսիական տիրապետության ժամանակ եգիպտական շուկայում գերիշխում էին ղպտիները, որոնք վայելում էին ֆրանսիացիների աջակցությունը:

Ղպտիական և հայկական առևտրափոխատվական կապիտալի հարաբերակցությունը վերջնականապես փոխվում է հայերի օգտին այն ժամանակ, երբ հայ սառաֆները Բոսֆորից սկսում են գործարքների մեջ մտնել Մուհամմադ Ալիի հետ: 1814-1818 թթ. Եգիպտոսի տնտեսության համար կարևորագույն այդ բնագավառում հայերն այլևս առաջնային դիրքեր էին զբաղեցնում: Վերոհիշյալի մասին է հաղորդում նաև ֆրանսիացի ճանապարհորդ Ֆորբենը[65]: 1824-1829 թթ. եգիպտա-հունական ռազմական գործողությունների հետևանքով հույն սառաֆները լքեցին եգիպտական շուկան, իսկ հայերի և ղպտիների միջև շուկայական պայքարն ավարտվեց 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում, երբ քաղաքական հետապնդումներին համընթաց աճեց հայկական կապիտալի ներհոսքը Եգիպտոս: Հզորության գագաթնա-

[64] О. Х. Топузян, Армянский торгово-ссудный капитал Египта в первой половине XIX века, Арабские страны, История, Экономика, Наука, Москва, 1974, с. 191.

կետին հասնելով՝ հայ սառաֆները 1837 թ. Կահիրեում հիմնադրեցին առաջին բանկը:

Սառաֆները միավորված էին արհեստակցական միություններ-ի (ցեխերի) սկզբունքով: Սառաֆների ողջ գործունեությունը վերահսկում էր նրանց գլխին կանգնած գլխավոր սառաֆը (սառաֆ բաշին), որը նշանակվում էր փոխարքայի կամ էլ կառավարության կողմից և մեծ հեղինակություն էր վայելում երկրի ֆինանսական ոլորտներում: Հայ սառաֆները ֆինանսական կապիտալի թե՛ քանակով և թե՛ ծավալներով շոշափելի դիրքեր զբաղեցնելով միություններում, փաստորեն, մշտապես պահպանում էին նաև գլխավոր սառաֆի պաշտոնը: Մինչև 1827 թ. Մուհամմադ Ալիի սառաֆ բաշին էր Եղիազար ամիրա Պետրոսյանը, իսկ 1828–1847 թթ.՝ Ալեքսան Միկասյանը[66]:

Եգիպտոսում հայ սառաֆներն էին տնօրինում նաև դրամատունը (զարբանե), որը ավանդաբար գլխավորում էր Մուհամմադ Ալիի գլխավոր սառաֆի տեղակալը: Առկա են բազմաթիվ տեղեկություններ, որ դրամահատման մենաշնորհը տարբեր ժամանակներում պատկանել է հայերին՝ սառաֆ բաշի Գևորգին (1832 թ.), Հակոբին (1834 թ.), Համբարձում ամիրա Գրիգորյանին (1835–1840), Միհրանին և Կարապետին (1847 թ.) և այլն[67]:

Իրենց ձեռքում կենտրոնացնելով վերոհիշյալ առանցքային պաշտոնները՝ հայ սառաֆներն անկաշկանդ ներթափանցում էին Եգիպտոսի գյուղատնտեսության, արդյունաբերության և առևտրի ոլորտները:

Հայ և հույն առևտրականներն իշխում էին նաև Եգիպտոսում հայտնի Խան ալ-Խալիլա կոչվող շուկայում, և Ալ-Ջաբարթիի համաձայն՝ «հենց նրանք էին, որ առաջինը հաստատվեցին նոր շու-

---

[65] M. le Cte. De Forbin. Viyage dans le Levant en 1817 et 1818, Paris, 1819, p. 209.

[66] «Ազգասեր», Կալկաթա, 1847, էջ 166:

[67] J. Deny, Sommaire des Archives Turques du Caire, le Caire, MCMXXX, p. 218.

կաներում՝ վարձակալելով խանութներ մինչև նրանց շինարարության ավարտը և բարձր գներ վճարելով նրանց համար»[68]:

Ըստ եվրոպացի ճանապարհորդների պատմությունների՝ հայերի պահեստները մշտապես լի էին լինում, խանութները տարբերվում էին իրենց առատությամբ և ապրանքների լայն տեսականիով: Նրանք զբաղվում էին գորգերի, մուշտակների, մարգարիտի, ոսկու, անտառանյութի, տեղական ու եվրոպական կտորեղենի վաճառքով, կապեր էին հաստատում Սուդանի, Եթովպիայի, Սիրիայի և հատկապես Թուրքիայի հետ:

Հայ սառաֆները նկատելի դեր էին խաղում նաև գետային տրանսպորտի զարգացման գործում: Ճանապարհների բացակայության պատճառով Նեղոսն ու նրա նավագնաց ջրանցքները մեծ նշանակություն ունեին ապրանքաշրջանառության համար:

Առավել քան 3 հազար առագաստանավերից ու նավակներից միայն 800-ն էին պատկանում պետությանը, իսկ մնացածը՝ առևտրային տրանսպորտի վարձակալներինն էին, որոնց մեջ ակնառու տեղ էին զբաղեցնում սառաֆներ Գալուստը, Գրիգորը և Մկրտիչ Ռեյիսյանը:

1830 թ. նրանք արդեն նոր ոլորտներ էին փնտրում իրենց կուտակած խոշոր միջոցների ներդրման համար, սակայն նրանց նեղություն էր պատճառում պետական մենաշնորհի համակարգը: Եվ իսկապես, պետական մենաշնորհի վերացումից հետո անմիջապես բացվեցին հայերին պատկանող տարբեր ձեռնարկություններ:

Հայկական կապիտալի խոշոր ներկայացուցիչները, որոնք այդչափ խորը արմատներ էին ձգել եգիպտական տնտեսության տարբեր ճյուղերում, ձգտում էին մտնել պետական-քաղաքական գործունեության ոլորտ:

---

[68] Аль-Джабарти, Египет под властью Мухамеда Али (1806-1821), Москва, 1963, с. 683.

Ի տարբերություն Եգիպտոսի բուրժուազիայի մյուս խավերի, հայերը փոխարքայի կաբինետում առաջավոր դիրքեր էին զբաղեցնում, նրա թարգմանիչներն էին, խորհրդատուները, քարտուղարները: Ինչպես գրում է Ամոնը, «նրանցից շատերը զբաղեցնում են փոխարքայի կաբինետի ու դիվանների բարձրագույն պաշտոնները»[69]:

Եվրոպական գործերի ու եգիպտական առևտրի դիվանը, որը միաժամանակ արտգործնախարարության ու առևտրի նախարարության գործառույթներն էր իրականացնում, գրեթե ամբողջովին ղեկավարում էին հայերը և մինչև 1850 թվականը նրա նազիրներն էին համարվում: Իրենց գերակշիռ մեծամասնությամբ նրանք ղեկավար պաշտոններ էին զբաղեցնում դիվանի տարբեր բաժիններում, իսկ արտասահմանում այդ կառույցի ներկայացուցիչներն էին: Արտասահմանցիները սրամտորեն դիվանն անվանում էին «պալե արմենիեն» («հայկական պալատ»):

Նկատենք նաև, որ ըստ դարավոր ավանդույթի՝ վեզիրներն ու էմիրները սովորաբար մահմեդական էին լինում, պատկերը միանգամայն այլ էր արտաքին գործերի ու առևտրի նազիրների պարագայում. Պողոս Յուսուֆյանը, Արթին Չրաքյանը և տարբեր դիվաններում բարձր պաշտոններ զբաղեցնող Ստեփան Դեմիրճյանը, Հովսեփ Հեքեքյանը, Խոսրով Չրաքյանը, Առաքել Նուբարյանը, Ալթուն Արիստակեսյանը և պետական այլ գործիչներ պահպանել էին իրենց ազգությունը:

Տեղափոխված լինելով Կ. Պոլսից՝ նրանք հավատարիմ էին մնացել իրենց ազգային ավանդույթներին, սովորույթներին ու լեզվին, իսկ Եգիպտոսը համարում էին իրենց երկրորդ հայրենիքը:

Պետական պաշտոններ զբաղեցնող այս այրերի քաղաքական կողմնորոշումը համապատասխանում էր եգիպտական բուրժուազիայի շահերին և կրում էր հակաբրիտանական բնույթ: Քանի որ անգլիացիները դեմ էին հեռավոր Հնդկաստանի մատույցներում

[69] P. H. Hamont, L'Egypte sous Me'hemet-Ali, Paris,1843, t. 1, p. 425.

արաբական անկախ պետության կազմավորմանը, իրենցից կախված ամեն ինչ անում էին Եգիպտոսի տնտեսական հիմքերը խարխլելու ու խորտակելու նպատակով:

1918 և 1838 թթ. այդ երկրների միջև առևտրային հարաբերությունների բարելավման քողի տակ կնքված անգլո-թուրքական պայմանագրերն իրականում ուղղված էին եգիպտական մենաշնորհների դեմ[70]:

Անգլո-եգիպտական դիվանագիտական պայքարում պետական հայ գործիչները մեծ դեր էին խաղում: Նախ և առաջ հիշենք Պողոս Յուսուֆյանին (1768-1844), որը եղել է Մուհամմադ Ալիի ամենավստահված անձանցից մեկը և հաճախ է փոխարինել նրան:

Պողոս բեյի նախաձեռնությամբ ստեղծվել էր պետական մենաշնորհի համակարգ, նրա անվան հետ են կապված անգլո-թուրքական պայմանագրերի դեմ պայքարի բազում փուլեր՝ ի պաշտպանություն մենաշնորհի: Անգլիացի հյուպատոսները դավեր էին նյութում՝ ձգտելով Մուհամմադ Ալիին տրամադրել նրա դեմ: Սակայն այդ փորձերն ապարդյուն էին, և ինչպես նշում է Ա. Պատոնը, Մուհամմադ Ալին ասել է. «Կյանքում գրեթե մշտապես ստիպված եմ եղել գործերս միայնակ վարել: Բացի Պողոս-բեյից՝ ինձ փոխարինող մեկը չկար»[71]:

Մեկ այլ նշանավոր հայ գործիչներից էր Արթին Զրաքյանը, որը Եգիպտոսի արտաքին գործերի ու առևտրի նախարարն էր 1844-1850 թթ.՝ այն ժամանակ, երբ Անգլիայի ղեկավարած եվրոպական պետությունների միությանն արդեն հաջողվել էր մեկուսացնել մենաշնորհները: Ի վիճակի չլինելով կանխել արտասահմանյան կապիտալի մուտքը՝ Զրաքյանը ջանքեր էր գործադրում, երկիրը կրկին չընկնի կապիտուլյացիայի ցանցը: Նա կարողացավ անգլիական

[70] H. Dodwell, The Founder of Modern Egypt, Cambridge, 1931, p. 222.
[71] A.A. Paton, History of the Egyptian Revolution, London, 1863, Vol. II, p. 231.

ընկերության ազդեցությունից փրկել գետային ու ցամաքային տրանսպորտի միջոցները, կանխեց անգլիական հյուպատոսների միջամտությունը՝ մաքսատուն, փոստահեռագրային վարչություն, առևտային նավեր, Սինարի բամբակի դաշտավայրեր և այլուր խցկվելու փորձերը: Սակայն, այնուամենայնիվ, անգլիացիներին հաջողվեց նրան հեռացնել այդ պաշտոնից:

Անգլիային համարելով անկախ Եգիպտոսի խոշորագույն թշնամի՝ Ա. Չրաքյանը «կարողացավ անգլիական հյուպատոսների ոտնձգություններից պաշտպանել մաքսային և փոստ-հեռագրային վարչությունները, առևտրական դատարանները, բամբակի պլանտացիաները»[72]:

Անգլիայի ու Եգիպտոսի միջև նյարդային պայքարը պսակվեց անգլիական բուրժուազիայի հաղթանակով, որն իր հերթին հանգեցրեց երբեմնի հզոր հայկական առևտրական կապիտալի վախճանին:

Եգիպտահայ առևտրական կապիտալի պատմական արժեքն այն է, որ նրա ներկայացուցիչները, հասնելով կապիտալի կուտակման բարձր մակարդակին, անխտիր նպաստել են Եգիպտոսում արտադրության կապիտալիստական ձևի անցման գործընթացի արագացմանը:

Արտասահմանյան կապիտալի հետ մրցակցային պայքարում հայկական կապիտալն ամեն կերպ ձգտում էր ամրապնդել տեղական բուրժուազիայի դիրքերը եգիպտական շուկայում: Պետական մենաշնորհի համակարգը Եգիպտոսի ռազմաքաղաքական հզորության տնտեսական հիմքն էր: Հայ պետական գործիչները, պաշտպանելով մենաշնորհային համակարգը, օբյեկտիվորեն սատարում էին Եգիպտոսի անկախությանն հասնելու ձգտումներին:

---

[72] Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920թ.), հ. 2, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, 2003, էջ 301:

Արթին Չրաքյանի որդին՝ Հակոբ Արթին փաշա Չրաքյանը (1842-1919), հսկայական դերակատարություն է ունեցել Եգիպտոսի է կրթության բնագավառում: Մեծ Ուսուչիչ (Ուսթազ ալ-Քաբիր) տիտղոսին արժանացած հայազգի այդ գործիչը հիմնադրեց Եգիպտոսի կրթության նախարարությունը:

Եգիպտոսի անկախության պահպանման և պետականության ամրապնդման գործում կարևորագույն դերակատարություն է ունեցել հատկապես պետական և քաղաքական անվանի գործիչ, հայազգի Նուբար Նուբարյանը (1825-1899), որն առանցքային պաշտոններ էր զբաղեցնում եգիպտական վարչակազմում 1849-1895 թվականներին: Նա իր ծառայողական կարիերան սկսել է որպես Մուհամմադ Ալիի երկրորդ քարտուղար, եղել է Եգիպտոսի ներկայացուցիչը Վիեննայում և Բեռլինում, վարել է առևտրի, արդարադատության, շուրջ 15 տարի՝ արտաքին գործերի նախարարի պաշտոնները:

1882 թ. սեպտեմբերին անգլիացիները բռնազավթեցին Եգիպտոսը՝ երկրում պահպանելով նախկին իշխանության մարմինները: 1884 թ. հունվարից եգիպտական նախարարների կաբինետը գլխավորեց Նուբար փաշան: Կարճատև ընդմիջումներով նա այդ պաշտոնին մնաց մինչև 1895 թ. իր հրաժարականը, որից հետո մեկնեց Փարիզ և իր կյանքի վերջին տարիներն անցկացրեց այնտեղ:

Անգլիական օկուպացիայի պայմաններում, երբ Եգիպտոսում մշտապես գտնվում էին բրիտանական զորքերը, իսկ երկրի փաստացի ղեկավարը Բրիտանիայի գլխավոր հյուպատոս լորդ Կրոմերն էր, Նուբար փաշան, լինելով վարչապետ, փորձում էր դիմակայել երկրի ներքին կառավարման մարմինների աստիճանաբար փոխանցմանը օտարերկրացիներին՝ խոչընդոտելով բրիտանական հանձնակատարի և եգիպտական նախարարություններում ծառա-

յության մեջ գտնվող բազմաթիվ խորհրդակաների ու հսկիչների ազդեցության տարածմանը: Նուբար փաշան՝ որպես իրատես քաղաքական գործիչ, փորձում էր հնարավորության սահմաններում պայքարել երկրի գոնե մասնակի անկախության պահպանման համար:

Նշանակալի է Նուբար Նուբարյանի՝ Եգիպտոսի արդարադատության համակարգի վերակառուցման, հասարակական աշխատանքների նախարարության ստեղծման, Կահիրեն և Սուեզը կապող Սուեզի ջրանցքի և երկաթուղու շինարարությունների իրականացման վերաբերյալ բանակցությունների վարման գործում: Որպես իր ժամանակի ամենաառաջադեմ և ամենակրթված մարդկանցից մեկը՝ Նուբար փաշան չէր թաքցնում արևմտյան մշակույթն ու քաղաքական կառավարման եվրոպական ձևերը Եգիպտոսում ներդնելու իր անկեղծ ձգտումը: Նուբարը՝ որպես Եգիպտոսում աճող բուրժուազիայի ներկայացուցիչ, խոշոր բաժնետեր, գործարանների սեփականատեր, ֆեոդալական հետամնացության և քաղաքական դեսպոտիզմի դեմ պայքարի միակ միջոցը համարում էր երկրի եվրոպականացումը:

Կրոմերի կարծիքով Նուբարն իր մտավոր ներուժով, գիտելիքներով և կեցվածքով շատ էր տարբերվում Եգիպտոսի քաղաքական գործիչներից: «Նա փայլուն զրուցակից էր: Կրթված եվրոպացուն շշմեցնում էին նրա արագ ընկալման ունակությունը, խիզախ եզրահանգումները»[73]: Կոլվինը համարում էր, որ «դիվանագիտության ասպարեզում, լեզուների իմացության, մտահորիզոնի լայնության, անձնական հմայքի մեջ Նուբարը հավասարը չուներ»[74]:

---

[73] Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920թ.), հ. 2, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, 2003, էջ 337:

[74] A.Colvin, The Making of Modern Egypt, London, 1906, pp. 53-54.

Ուսումնասիրելով Նուբար Նուբարյանի գործունեությունը՝ չի կարելի չանդրադառնալ անգլիացի հեղինակներին, ովքեր նրան ներկայացնում են որպես նախարար-բարենորոգիչ, ում մեծ դեր է հատկացվում խառը դատարանների ստեղծման գործում[75]: Ի դեպ, անգնահատելի է Նուբարի դերը տեղական եգիպտական դատարանների և նահանգային ոստիկանության ինքնուրույնության ու անկախության վերականգնման առումով: Վստահորեն կարելի է ասել, որ նրա ջանքերի շնորհիվ շոշափելի հաջողություններ են արձանագրվել այդ բնագավառում: Բրիտանացի որոշ խորհրդականներ պաշտոնազրկվել են, իսկ բրիտանամետ փոփոխությունների իրականացմանն ուղղված ծրագրերը Նուբարի վարչապետության օրոք հետաձգվել են մի քանի տարով: Սակայն, Նուբար փաշայի դիմադրությունը բրիտանական աճող ազդեցությանը, այդպես էլ չարժանացավ ինչպես խեդիվի ու եգիպտական նախարարների, այնպես էլ բնակչության լայն զանգվածների պատշաճ աջակցությանը, ինչն էլ հանգեցրեց նրա հրաժարականին: Արաբիի ապստամբությունից մնացած սարսափի հիշողությունը, վախը զանգվածային նոր ելույթների նկատմամբ, որոնք կարող էին խարխլել կենտրոնական իշխանության դիրքերը, ստիպեցին երկրի ղեկավարին հաշտեցման գնալ անգլիացիների հետ, որոնց ներկայությունը ապահովում էր համեմատական կայունություն նրա վարչակազմի համար[76]:

Նշանակալի էր հայազգի Տիգրան Բագրատունու (Դ'Աբրո) (1846-1904) պետական գործունեությունը, որը 1891 թվականից մինչև իր մահը զբաղեցնում էր արտաքին գործերի նախարարի պաշտոնը: Բագրատունին մեծ ազդեցություն ունեցավ երիտասարդ խեդիվ Աբբաս 2-րդի հայացքների ձևավորման հարցում, որով էլ

[75] E. Cromer, Modern Egypt. London, Vol. 11, p. 335.

ուրվագծվեցին վերջինիս հակաբրիտանական գործունեության ուղղությունները: Տիգրանի և Աբբասի միջև ծագած պետական կառավարման հարցերի առումով լիակատար փոխըմռնում էր հաստատված: Նրանք համատեղ պայքարում էին եգիպտական կառավարության գործառույթների մեջ սկզբունքային հետևյալ դրույթներն ամրագրելու համար՝ օկուպացիոն զորքերի դուրսբերում երկրից, բրիտանական ֆինանսական խորհրդական Է. Պալմերի իրավունքների ու պարտականությունների հստակ սահմանում, եգիպտական զինված ուժերի քանակական ավելացում և այլն:

Հարկ է նշել, որ 1808 թվականից մինչև 1908 թվականն ընկած ժամանակահատվածում՝ 64 տարի, հայ նախարարներ են ղեկավարել Եգիպտոսի արտաքին գործերի նախարարությունը[77]:

Այնուամենայնիվ, Եգիպտոսի հայազգի պետական անվանի ղեկավարների գործունեությունը քննարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ ժամանակահատվածում ստեղծված պատմական պայմանները՝ եվրոպական տերությունների գաղութային քաղաքականության ակտիվացումը, եգիպտական խնդրի շուրջ առաջացած դիվանագիտական սուր պայքարը, երկրի բռնազավթումը Բրիտանիայի կողմից և այլն: Նուբար Նուբարյանի խոստովանությամբ հայ գործիչները պատասխանատվություն էին կրում այն քաղաքականության համար, որն իրենք չէին առաջադրում, և որին շատ հաճախ նույնիսկ հավանություն չէին տալիս: Սակայն հեղինակություն վայելելով իրենց երկրորդ հայրենիքում՝ նրանք բոլորն էլ պաշտպանում էին Եգիպտոսի ազգային շահերը, որին անվերապահորեն ու անմնացորդ նվիրված էին:

---

[76] Հարությունյան Ս. Ա., Նուբար-փաշայի գործունեությունը Եգիպտոսում անգլիական օկուպացիայի տարիներին (19-րդ դարի 80-90 թթ.), Ժամանակակից սովետական արաբագիտության պրոբլեմներ, Երևան, 1990, էջ 11:

[77] Ձէյթլեան Սոնա, Հայության ներդրումը վաղմիջնադարյան և արդի Եգիպտոսի պատմության մեջ, TriA Publications, Canada, 2004, էջ 108:

ԲԱԺԻՆ II

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Որպես նորագույն պատմության սկզբնական բնագիծ պաշտոնական պատմագրության մեջ պայմանականորեն ընդունված է 1918 թվականը, երբ Առաջին աշխարհամարտից հետո արաբական երկրները երկարատև ազգային-ազատագրական պայքարի արդյունքում հաջորդաբար ձեռք բերեցին անկախություն: Այնուհետև՝ 1948 թ., Պաղեստինում Իսրայելի պետության ստեղծումը հանգեցրեց արաբա-իսրայելյան տևական հակամարտությանն ու մինչ օրս լուծում չստացած Պաղեստինի հիմնախնդրի առաջացմանը

Իսկ մինչև Առաջին համաշխարհային պատերազմը արաբական երկրների մեծ մասը (Եգիպտոսը, Իրաքը, Սիրիան, Եմենը, Սաուդյան Արաբիան) գտնվում էր Օսմանյան կայսրության տիրապետության, իսկ արաբական մյուս երկրները՝ եվրոպական տերությունների, հիմնականում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի հովանավորության (պրոտեկտորատի) տակ:

Արաբական երկրները ներքաշվել էին պատերազմի մեջ որպես արևմտյան պետությունների և օսմանյան գաղութներ, իսկ նրանց ներուժն ու պաշարներն օգտագործվում էին պատերազմ վարելու նպատակով: Այսպես, Ալժիրից և Թունիսից հավաքագրված հազարավոր զինվորներ զոհվում էին եվրոպական ռազմաճակատներում: Պատերազմը խիստ վատթարացրեց արաբական երկրների տնտեսական վիճակը: Արաբական աշխատուժի զգալի մասը զորակոչվեց բանակ, ռազմական նպատակների համար գյուղացիներից բռնագրավվեցին անասունները և պարենամթերքը, տասնյակ հազարավոր գյուղացիներ հարկադրաբար ուղարկվում էին պաշտպա-

նական շինությունների վրա աշխատելու և այլն: Մի շարք վայրերում ժողովուրդը կանգնեց քաղցի եզրին: Միայն Լիբանանում սովից և ավերածություններից պատերազմի տարիներին մահացավ 100 հազար մարդ:

Անգլիան, որ արաբների օգնության կարիքն էր զգում, վարպետորեն խաղաց արաբների հակաթուրքական և ազատագրական զգացմունքների վրա և կեղծ խոստումներով նրանց զինված պայքարի հանեց Թուրքիայի դեմ: Իրականում Անգլիան, ինչպես նաև Ֆրանսիանարաբական անկախ պետություն ստեղծելու ոչ մի մտադրություն չունեին: Ավելին, Հիջազի կառավարիչ և Մեքքայի շարիֆ Հուսեյնի ու Եգիպտոսում անգլիական գլխավոր կոմիսար Մակ Մահոնի միջև ընթացող նամակագրությանը համընթաց (1915 թ. հուլիսից — 1916 թ. մարտ)[78], երբ Անգլիան, թեև փոփոխված սահմաններով, այնուամենայնիվ, համաձայնեց արաբական անկախ պետության գաղափարին, 1915 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. մայիս Անգլիան և Ֆրանսիան գաղտնի բանակցություններ էին վարում արաբապատկան տարածքների բաժանման և գաղութացման ուղղությամբ: Ի վերջո եվրոպական այդ տերությունների միջև կնքվեց «Սայքս-Պիկո» հայտնի համաձայնագիրը: Ֆրանսիայի տիրապետության տակ էին անցնում Ադանայի վիլայեթը, սիրիա-լիբանանյան ծովափնյա մասը, ներկայիս Սիրիայի ողջ տարածքը, ինչպես նաև Մոսուլի (Իրաք) հարուստ նավթային շրջանը, որը 1918 թ. Ֆրանսիան ստիպված եղավ վերադարձնել բրիտանացիներին: Վերջիններիս, ըստ պայմանագրի, անցնում էր Միջագետքի արևելյան մասը, իսկ արևմտյան մասն ու ներկայիս Հորդանանի տարածքը հռչակվում էր Բրիտանիայի ազդեցության գոտի: Պաղեստինը

[78] Woodward, L., Ernest and Butler, Rohan. Documents on British Foreign Policy, 1919-1939, first series, vol.4. London, 1952, Correspondence between Sir Henry McMahon and the Sharif Hussein of Mecca, July 1915 - March 1916. London, 1939, Report of a Committee Set Up to Consider Certain Correspondence between Sir Henry McMahon and the Sharif of Mecca in 1915 and in 1916. London, 1939.

դրվում էր միջազգային վերահսկողության տակ, միայն Հայֆա և Ակրա նավահանգիստներն էին անցնում Բրիտանիային: Պետք է նշել, որ համաձայնագիրը վավերացրեց նաև Ռուսաստանը, որին հատկացվեց Օսմանյան կայսրության հյուսիսարևելյան մասը, Կ. Պոլիսը, Բոսֆորի արևմտյան ափը, Մարմարայի ծովը, Դարդանելներն ու Սև ծովի մերձափնյա որոշ շրջաններ: Համաձայնագիրը չանտեսեց նաև Հունաստանի և Իտալիայի շահերը, որոնք ձեռք բերեցին, համապատասխանաբար, Անատոլիայի արևմուտքում Զմյուռնիայի փոքր հատվածը, ինչպես նաև կայսրության ողջ հարավային մասը:

Մեծ տերությունների ծրագրի համաձայն՝ միայն Արաբական թերակղզին պետք է ստանար անկախություն՝ Հաշիմյանների առաջնորդությամբ:

Գերմանիան նույնպես իր սեփական նպատակներն էր հետապնդում Մերձավոր և Միջին Արևելքում, առաջին հերթին Եգիպտոսում, ինչպես նաև Միջագետքում և Սիրիայում:

Բնականաբար, արաբական երկրների անկախության ամենամեծ թշնամին էր Օսմանյան կայսրությունը: Գերմանա-ավստրիական բլոկում հանդես եկած Թուրքիան նպատակ էր հետապնդում ոչ միայն ճնշել արաբական երկրների ազգային-ազատագրական պայքարը, այլև պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու իր տիրապետությունները Սիրիայում, Պաղեստինում, Միջագետքում և Արաբիայում, գրավել Եգիպտոսն ու խորանալ Անդրկովկասում, Ղրիմում, Պովոլժյեում, Թուրքեստանում, ինչպես նաև Հյուսիսային և կենտրոնական Աֆրիկայում: Մի խոսքով, անկախ այն հանգամանքից, թե որ կողմը կհաղթանակեր պատերազմում, արաբական երկրներն ազատագրվելու հույս չունեին: Սակայն վերոհիշյալն ամենևին էլ չի նշանակում, որ արաբները հրաժարվել էին թուրքական լծի դեմ ակտիվ պայքարից: Ռազմաճակատում թուրքական անհաջողություններին զուգընթաց ուժեղանում էր ա-

բաբական ազգայնական կազմակերպությունների հակաթուրքական գործունեությունը: Արաբ զինվորները չէին ցանկանում պատերազմել հանուն Թուրքիայի և զանգվածաբար փախչում էին թուրքական բանակից ու կազմակերպում պարտիզանական ջոկատներ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի կառավարող շրջանները, օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորություններից, փորձեցին ռազմական ուժով և զանգվածային ֆիզիկական բնաջնջման ուղով լուծել ազգային, նաև առաջին հերթին՝ հայկական և արաբական հարցերը: 1915 թ. իրագործելով 1.5 մլն հայերի հրեշավոր ցեղասպանությունը՝ երիտթուրքերը մեկ տարի անց փորձեցին նույնպիսի հաշվեհարդար տեսնել արաբների հետ: Թուրքական ոճրագործները, համոզվելով, որ արաբները պատրաստ են զինված ապստամբությամբ Թուրքիայից անջատվելու և անկախություն նվաճելու, դաժան ահաբեկչական գործողություններ ձեռնարկեցին արաբական մի շարք երկրներում:

Արաբները, որոնք ոչինչ չգիտեին վերը նշված «Սայքս-Պիկո» համաձայնագրի գոյության մասին, 1916 թ. հունիսին, իրենց վերցրած պարտավորությանը հավատարիմ, ապստամբության դրոշ բարձրացրին Թուրքիայի տիրապետությունից վերջնականապես ազատվելու համար: 1916 թ. հունիսի 5-ին Հուսեյնի որդիներ Ալին ու Ֆեյսալը Համզայում՝ Մեդինայի մոտ, Հուսեյնի անունից հռչակեցին արաբների անկախությունը: Այսպիսով, հասունանում էր թուրքական լծից ազատվելու և անկախ պետություն ստեղծելու արաբների դարավոր երազանքը:

ԳԼՈՒԽ Ա

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. Հին օսմանները և երիտթուրքերը[79]

1908 թ. օսմանյան բանակը «Իթթիհադ վե Թերաքքը» («Միություն և Առաջադիմություն») երիտթուրքական կոմիտեի ղեկավարությամբ հեղաշրջում իրականացրեց և գրավեց ավելի քան երեսուն տարի իշխող Աբդուլ Համիդ 20-րդ բռնապետ-սուլթանի իշխանությունը: Վերջինս համաձայնվեց վերականգնել 1876 թ. սահմանադրությունը, ազատ արձակել քաղբանտարկյալներին, ցրել իր գործակալների (դաֆթարջիների) հոծ բանակը: Միապետությունն օսմանյան կայսրությունում պահպանվեց, սակայն իրական իշխանությունն անցավ բյուրոկրատական-զինվորական վերնախավի ձեռքը: Իթթիհադականները, չեզոքացնելով ընդդիմադիրներին, երկրում աստիճանաբար բռնապետական կարգեր հաստատեցին:

Հեղաշրջումից ինն ամիս անց իշխանությունից հեռացված Աբդուլ Համիդը հակահեղափոխության անհաջող փորձ կատարեց, իթթիհադականներն անմիջապես նրան հեռացրին գահից և սուլ-

---

[79] Թեմայի վերաբերյալ տե՛ս Սիմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, Ավագյան Ա., Պանթուրքիզի գաղափարախոսության ընդունումը «Միություն և առաջադիմություն» կուսակցության 3-րդ և 4-րդ համագումարներում // «Հայոց ցեղասպանություն. Պատճառներ և դասեր». հ. 3, Երևան, 1995, էջ 5-20, Алиев Г. З., Турция в период правления младотурок (1908-1918 гг.), Москва, 1972, Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны 1914-1918 гг., Москва, 1966, Петросян Ю. А., Младотурецкое движение, Москва, 1971, Шпилькова В. И., Младотурецкая революция, Москва, 1977, Фадеева И. Л., Официальные доктрины в идеологии и политике Османской империи.(Османизм-пантуркизм), Москва, 1985, Feroz, Ahmad. The Young Turks. The Committee of Union and Progress in Turkish Politics 1908-1914. Oxford, 1969:

թան հռչակեցին նրա եղբորը՝ Մուհամմեդ Ռաշադին, որը պարզապես խաղալիք դարձավ նրանց ձեռքում:

1876 թ. Սահմանադրության վերականգնումն արաբներն ընդունեցին գոհունակությամբ: Նրանք հույս ունեին, որ Օսմանյան կայսրությունում կհաստատվի ազատություն, կվերանան ազգային ճնշումները, և արաբները հնարավորություն կստանան հասնելու իրենց երազանքների իրագործմանը: Ելնելով դրանից՝ արաբ ազգային գործիչները որոշեցին համագործակցել երիտթուրքերի հետ և աջակցել նրանց: Այդ տրամադրություններն արտահայտվեցին «Արաբա-օսմանյան եղբայրություն» կազմակերպության ստեղծումով, որը հիմնվեց Ստամբուլում 1908 թ. սեպտեմբերի 2-ին: Կազմակերպությունը նույնիսկ չէր դնում արաբների անկախության կամ ինքնավարության հարցը: «Միավորել բոլոր ազգությունները և հպատակվել Սուլթանին, ինչպես նաև ապահովել արաբական նահանգների բարգավաճումը կայսրության այլ ազգությունների հետ հավասարազոր».– գրված էր կազմակերպության կանոնադրության մեջ:

«Արաբա-օսմանյան եղբայրության» անդամները ընդունում էին երիտթուրքերի տեսակետը օսմանյան ազգի մասին՝ ընդգծելով, որ արաբները լոկ այդ ազգի միլլեթներից մեկն են: Կազմակերպության ղեկավար Սադիկ ալ-Ազըմը և նրա զինակիցները բավարարվեցին միայն արաբների իրավահավասարության, արաբերենով կրթություն ստանալու և արաբական ավանդույթների պահպանման պահանջներով: Սակայն շատ շուտով «մեղրամիսն» արաբ գործիչների և երիտթուրթերի միջև ավարտվեց. վերջիններս, ամրապնդելով իշխանությունը, բացահայտեցին իրենց իսկական՝ հետադիմական էությունը (այդ թվում՝ և ազգային հարցում): Արդեն իսկ խորհրդարանական առաջին ընտրությունների ժամանակ արաբներն իթթիհադականների իրական «լիբերալության» հետ մո-

տիկից ծանոթանալու լավ հնարավորություն ստացան: Կայացած ընտրություններում թուրքերը գրավեցին խորհրդարանի 150, իսկ արաբները՝ միայն 60 տեղ: Այսինքն՝ խորհրդարանում զբաղեցրած տեղերի հարաբերակցությունը ստացվում էր 5–2-ի, այն դեպքում, երբ կայսրության արաբ և թուրք բնակչության հարաբերակցությունը 2-3 էր: Օսմանյան սենատում պատկերն ավելի խայտառակ էր. ընդհանուր 40 տեղից արաբները ստացել էին ընդամենը 3-ը: 1909 թ. ապրիլին երիտթուրքերը փակեցին «Արաբա-օսմանյան եղբայրություն» կազմակերպությունը, ապա՝ նաև արաբական ազգային դպրոցները, խիստ սահմանափակեցին արաբերենի գործածության շրջանակները:

Երիտթուրքերը վերանայեցին նաև տիրապետող գաղափարախոսությունը՝ պանիսլամիզմը, որը փոխարինվեց պանթյուրքիստական ազգայնամոլական հայեցակարգով: Որդեգրելով բռնի թուրքացման քաղաքականությունը՝ երիտթուրքերը հալածանքներ սանձազերծեցին կայսրության ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ՝ կիրառելով անգամ ջարդերի քաղաքականությունը, ինչպես նրանք վարվեցին Ադանայի հայության հետ 1909 թվականին:

Իթթիհադականների գաղափարախոսության փոփոխությունը և վարած ներքին քաղաքականությունը սթափեցրեց արաբ ազգային գործիչներին, որոնք համագործակցությունից անցան ընդդիմության: 1909 և 1911 թթ. ստեղծվեցին գաղտնի մի շարք կազմակերպություններ, որոնցից հատկապես «Ալ-Ղահթանիան» հանդես էր գալիս երկակի միապետության ստեղծման գաղափարով՝ Թուրքական և Արաբական (Ավստրո-Հունգարիայի օրինակով), որում արաբական մասը պետք է լիներ առավել ինքնավար: Հաջորդ ազդեցիկ կուսակցությունն էր «Ալ-Ֆաթաթը», որը պահանջում էր արաբների համար լիակատար ինքնակառավարում բոլոր բնագավառներում՝ արտաքին, ռազմական և ֆինանսական:

Այնուհանդերձ, արաբական քաղաքական առաջնորդները չկանգնեցին արաբների անկախության նվաճման տեսակետի վրա և հանդես էին գալիս Օսմանյան կայսրության ապակենտրոնացման պահանջով: Այդ տեսակետները պաշտպանում էր ազդեցիկ Օսմանյան վարչական ապակենտրոնացման կուսակցությունը, որը հիմնվեց 1912 թ. դեկտեմբերին: Նրա ծրագրային կարևոր պահանջները հանգում էին հետևյալին. արաբական վիլայեթները դարձնել ինքնավար մարզեր իրենց կառավարություններով և մարզային ժողովներով, արաբների լայն մասնակցություն կայսրության կառավարության և պետական այլ մարմինների գործընթացներին, արաբերենի պարտադիր ուսուցում արաբական դպրոցներում և այլն: Այս կազմակերպությունն իր մասնաճյուղերն ուներ Սիրիայի, Պաղեստինի և Իրաքի տարբեր քաղաքներում: Սակայն շուտով արաբ քաղաքական գործիչները համոզվեցին, որ հնարավոր չէ երիտթուրքերի հետ համաձայնության գալ ինքնավարության և արաբների ազգային այլ պահանջների բավարարման հարցում: Նրանք սկսեցին ավելի ու ավելի հակվել զինված պայքարի մտքին: Այդ տեսակետը որդեգրեց Ազիզ Ալի ալ-Մըսրին, որը թուրքական բանակի սպա էր, եգիպտացու և թուրքի խառնածին ծագումով: Նա գտնում էր, որ թուրքական լուծը հնարավոր է և պետք է տապալել զինված ապստամբության միջոցով:

1908 թ. հեղաշրջման ժամանակ նա «Իթիհադ վե Թերաքքը» ակտիվ անդամներից մեկն էր, որից հետո, հիասթափվելով վերջիններից, անդամակցում էր «Ալ-Ղահթանիա» կազմակերպությանը, որը, վերածվելով ընդհատակյա ռազմական կազմակերպության, 1913 թ. անվանափոխվում է «Ալ-Ահդ»-ի (Պատգամ): Այն իր բաժանմունքներն ուներ Դամասկոսում, Բաղդադում, Հալեպում, Մոսուլում և այլ քաղաքներում:

Ազիզ Ալի ալ-Մըսրին մեծ հեղինակություն էր վայելում և իր կենսագրության մեջ արդեն գրանցված ուներ բազմաթիվ նվաճումներ: Նրան հաջողվել էր խաղաղություն հաստատել Եմենում, ինչպես նաև 1911 թ. իտալացիների ներխուժման դեմ պայքարում օգնել Կիրենաիկայի (Լիբիա) առաջնորդին: Սակայն, վախենալով արաբ այդ գործչի աճող հեղինակությունից և ազդեցությունից՝ թուրքական իշխանությունները նրան ձերբակալում են և պետական դավաճանության մեջ մեղադրելով՝ դատապարտում մահապատժի: Երիտթուրքերի այդ քայլը խորը ցասում է առաջացնում արաբական աշխարհում, մասնավորապես Եգիպտոսում: Բազմամարդ ցույցեր են տեղի ունենում Կահիրեում, ապա արաբ սպաները սպառնում են վրեժխնդիր լինել դատավճիռն իրականացնելու դեպքում: Կ. Պոլսում բրիտանական դեսպանի միջնորդությամբ դատավճիռը փոխվում է 15 տարվա ազատազրկմամբ, որից հետո ճնշումների շնորհիվ նաև պայմանավորվածություն է ձեռք բերվում Բարձր դռան հետ Ազիզ Ալի ալ-Մըսրիին Եգիպտոս արտաքսելու վերաբերյալ: Նա վերադառնում է հայրենիք որպես ազգային հերոս և վերականգնվում աշխատանքի եգիպտական բանակում, որից հետո նշանակվում Եգիպտոսի զինված ուժերի գլխավոր տեսուչ:

Արաբ ժողովուրդն աստիճանաբար ավելի ու ավելի էր համոզվում, որ անկախության ձեռքբերման միակ միջոցը զինված պայքարն է: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին այս գիծը որդեգրեց արաբական կազմակերպությունների ճնշող մասը:

1914 թ. հոկտեմբերի 29-ին Օսմանյան կայսրությունը մտավ պատերազմի մեջ ընդդեմ Անտանտի: Ինքնաբերաբար պատերազմի մեջ ներքաշվեցին արաբական երկրները: Պատերազմը սկսվելուց հետո արաբների առջև կանգնեց անսխալ դիրքորոշվելու խնդիրը: Արաբների ազգային-քաղաքական առաջնորդներն ու կազմակերպությունների մեծ մասն արտահայտվեց հօգուտ թուր-

քական լծից ազատագրվելու և քաղաքական անկախության: Նրանք գտնում էին, որ այդ հարցում կարող են համագործակցել Անգլիայի ու Ֆրանսիայի հետ և նրանցից ստանալ համապատասխան օգնություն: Եվ երբ օսմանյան սուլթանն Անտանտի երկրներին ջիհադ հայտարարեց, արաբները չպաշտպանեցին ու չհետևեցին նրանց կոչին: Զորակոչված շատ արաբ զինվորներ լքում էին թուրքական բանակը, բազմաթիվ էին դեպքերը, երբ նրանք կամավոր գերի էին հանձնվում անգլիացիներին և ֆրանսիացիներին: Շատ վայրերում, մանավանդ Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում, ընդդեմ թուրքերի, ծայր առավ պարտիզանական պայքարը:

1914 թ. նոյեմբերի 2-ին Անգլիան Եգիպտոսում մտցրեց ռազմական դրություն, իսկ դեկտեմբերի 18-ին հայտարարեց Եգիպտոսի անջատումն Օսմանյան կայսրությունից և նրա վրա իր հովանավորության (պրոտեկտորատի) հաստատումը: Եգիպտոսում մտցվեց անգլիական գլխավոր կոմիսարի պաշտոնը: Դեկտեմբերի 19-ին անգլիական իշխանությունները գահընկեց արեցին խեդիվ Աբբաս 2-րդ Հիլմիին, որը չէր ցանկանում ենթարկվել նրանց, և նրա փոխարեն սուլթանի տիտղոսով Եգիպտոսի «կառավարիչ» նշանակեցին Հուսեյն Քամիլին: Պատերազմի ժամանակ անգլիական բանակի կարիքների համար բռնագրավում էին պարենը, գյուղատնտեսական հումքը, արդյունաբերական և մյուս ապրանքները: Տասնյակ հազարավոր եգիպտացիներ հարկադրաբար ներգրավվում էին, այսպես կոչված, աշխատանքային կորպուսների մեջ, որոնք կատարում էին ամենատաժանակիր աշխատանքները՝ ճանապարհների շինարարություն և այլն:

Պատերազմական գործողությունները Եգիպտոսում հիմնականում ընթացան Սուեզի ջրանցքի գոտում: 1915 թ. փետրվարի 3-ին թուրքական 4-րդ բանակը Ջեմալ փաշայի հրամանատարությամբ և

գերմանացիների աջակցությամբ հարձակում սկսեց Սուեզի ջրանցքի գոտում, բայց չհասավ ոչ մի հաջողության: Անհաջողությամբ ավարտվեցին նաև 1916 թ. Սուեզը գրավելու փորձերը: Թուրքերը պարտություն կրեցին նաև Սինայի ռազմաճակատում: Այդ ռազմական գործողությունների, մանավանդ Սուեզի ջրանցքի պաշտպանության ժամանակ, զոհվեցին տասնյակ հազարավոր եգիպտացիներ:

Անգլիային հաջողվեց դուրս մղել թուրքերին և Եգիպտոսը պահել իր իշխանության ներքո:

1914 թ. նոյեմբերին պատերազմական գործողություններ սկսվեցին իրաքյան ճակատում: Մինչև նոյեմբերի 22-ը անգլիական զորքերը գրավեցին Ֆաոն և Բասրան, ապա՝ ամբողջ Հարավային և Կենտրոնական Իրաքը: 1915 թ. ամռանը անգլիական զորքերը շարժվեցին դեպի Բաղդադ, սակայն Կուտ ալ-Ամարայի մոտ անհաջողության մատնվեցին և ընկան շրջապատման մեջ: 1916 թ. ապրիլին նրանք գեներալ Թաունսհենդի հրամանատարությամբ անձնատուր եղան թուրքերին: Անգլիացիները ռազմական գործողությունները վերսկսեցին հաջորդ տարի և 1917 թ. մարտի 11-ին գեներալ Մոդի զորքերը մտան Բաղդադ՝ հետագայում գրավելով ամբողջ Իրաքը:

Պատերազմի հենց սկզբում արտակարգ ծանր, անտանելի վիճակ ստեղծվեց Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում: Սուլթանը վերացրեց Լեռնալիբանանի ինքնավարությունը (վերջինիս մութասառիֆը նույնպես հայ էր՝ Հովհաննես Գույումջյան): Սիրիայում տեր ու տնօրենն էր Ջեմալ փաշան: Նրա հրամանով բռնագրավում էին պարենը, անասունները, իսկ խաղաղ բնակչությունը բռնի քշվում էր ռազմական շինարարական աշխատանքների: Սիրիայում և Լիբանանում զգացվում էր սննդամթերքի խիստ պակաս, որի հետևանքով տասնյակ հազարավոր մարդիկ սովամահ եղան:

Արաբները բռնի զորակոչվում էին բանակ, որտեղ տիրապետող էր արհամարհանքը նրանց նկատմամբ: Վերջիններս խուսափում էին զինվորական ծառայությունից և ամեն ինչ անում էին թուրքերի ռազմական ծրագրերը ձախողելու համար:

Սիրիայում և Լիբանանում լայն արձագանք գտավ Ապակենտրոնացման կուսակցության կոչը՝ թուրքական լծից ազատագրվելու համար ապստամբության նախապատրաստվելու վերաբերյալ: Թուրքերն անցան դաժան հալածանքների ու պատժիչ միջոցառումների կիրառմանը: Ջեմալ փաշայի հրամանով ձերբակալվեցին Սիրիայի և Լիբանանի ազգային երևելի գործիչները, որոնց մի մասը կախաղան հանվեց 1915 թ. մայիսի 6-ին Դամասկոսում և Բեյրութում: Տասնյակ հազարավոր մարդիկ, ամբողջ ընտանիքներ բռնի տեղահան արվեցին և քշվեցին հատուկ ճամբարներ՝ Անատոլիայի խորքերում, իսկ նրանց գույքը բռնագրավվեց: Այդ սպանդի ընթացքում թուրք գործիչներն օգտագործում էին հայերի բռնի տեղահանման ժամանակ ձեռք բերած հանցավոր փորձը:

2. Արաբական ապստամբությունը Հիջազում[80]

Մենք արդեն նշել ենք, որ Ազիզ Ալիի հետ կապված դեպքերը էլ ավելի ամրապնդեցին արաբական քաղաքական կազմակերպությունների դիրքորոշումն առ այն, որ Բարձր դռան հետ փոխզիջումն անհնար է, և միայն զինված պայքարի միջոցով է հնարավոր հասնել անկախության: Այդ նպատակի իրականացման գործում արաբական աշխարհում առաջնային դերակատարություն ունեցավ Մեքքայի շարիֆ Հուսեյն Իբն Ալին՝ Բենի Հաշեմ ցեղից, որը Մուհամեդ Մարգարեի անմիջական հետնորդն էր՝ Ալիի և Ֆաթիմայի ավագ որդու Հասանի ճյուղով:

Աբդուլ Համիդի իշխանության օրոք նա իր չորս որդիների՝ Ալիի, Աբդալլահի, Ֆեյսալի և Զայիդի հետ միասին սուլթանի հրամանով ստիպված էր բնակվել Կ. Պոլսում այն պարզ պատճառով, որ Աբդուլ Համիդը չէր վստահում Հուսեյնին, որը, ըստ սուլթանի, ծայրահեղ ու անհաշտ ազգայնամոլ էր: Թերևս վախենալով Մարգարեի հետ ազգակցական կապ ունեցող այդ մարդուն որևէ վնաս պատճառել՝ Աբդուլ Համիդը նրան պահում էր իր աչքի տակ՝ սեփական արքունիքում: Սակայն երիտթուրքերն այլ կերպ էին մտածում: Մեծապես տպավորվելով Հուսեյնի արժանապատիվ և ազն-

[80] Տե՛ս Арабы в борьбе за независимость, Москва, 1957, Амин Саид. Восстания арабов в XX в., Москва, 1964, Бэзил Генри и Лиддел Гарт. Полковник Лоуренс, Москва, 2002, Fromkin, David. A Peace to End all Peace. The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East.New York, 1989, Bremond, General Er. Le Hedjaz dans la guerre mondiale. Paris, 1931, Hourani, Albert. The Emergence of the Modern Middle East. Berkely, 1981, Hurewitz, J.C. Diplomacy in the Near and Middle East: A Documentary Record: 1914-1956. 2 Vols., Princeton, Toronto, London and New York, 1956, Lawrence, T.E. Evolution of a Revolt: Early Postwar Writings of T. E. Lawrence. ed. by Stanley and Rodelle Weintraub. The Pennsylvania University Press, 1968, Sachar, Howard M., The Emergence of the Middle East: 1914-1924. New York, 1969, Zeine, N. Zeine. The Struggle for Arab Independence. Beirut,1960, Antonius, George. The Arab Awakening: The Story of the Arab National Movement, 2nd ed., N.Y., Capricorn Books, 1965, Hussein, Abd Allah. Memoirs of King Abdullah of Transjordan, ed. by Philip P.Graves. London, 1950:

վական պահվածքից, երիտթուրքերը կարծեցին, որ նա կարող է ավելի օգտակար լինել իրենց շարժմանը, եթե Հիջազում՝ արաբական այդ կարևոր նահանգում, պետական բարձր պաշտոն զբաղեցնի: Սակայն շատ շուտով երիտթուրքերը հասկացան Հուսեյնին Մեքքա ուղարկելու իրենց սխալը: Վերջինս սրընթաց իր իշխանությունը վերականգնեց Մեքքայից դուրս Հիջազի արաբական բոլոր ցեղերի վրա: Մեկը մյուսի հետևից Ութայբայի, Հարբի, Ջուհայմահի, Բենի Աթիյահի և Հովեյդադի ցեղերն իրենց հպատակությունն էին հայտնում Հուսեյնին: Եվ երբ երիտթուրքերը որոշեցին հիշեցնել, որ Հիջազը գտնվում է իրենց իշխանության տակ, և նրա բոլոր բնակիչները պետք է զորակոչվեն թուրքական բանակ, Հուսեյնը ընդվզեց և սպառնաց արաբական ցեղերը հանել երիտթուրքերի դեմ: Բարձր դուռը ստիպված նահանջեց, նույնիսկ նրա նշանակած գեներալ-նահանգապետն այցելեց Հուսեյնին՝ ի նշան իր հնազանդության:

Արդեն 1914 թ. սկզբին ձեռք բերելով համապատասխան հոգևոր իշխանություն, ինչպես նաև ստանալով արաբական ցեղերի աջակցությունը՝ Հուսեյնն ամրապնդեց իր դիրքերը Հիջազում: Թուրքական տիրապետությանը վերջ դնելու համար, բացի սեփական դիրքերի ռազմավարական անխոցելիությունն ապահովելուց, Հուսեյնին անհրաժեշտ էր նաև որևէ մեծ տերության ռազմական օժանդակությունը: Հուսեյնի ընտրությունը կանգնեց բրիտանացիների վրա, որոնց հետ դեռևս Բարձր դռան մայրաքաղաքում գտնվելու ժամանակ սերտ կապեր էր հաստատել: Նշված դիվանագիտական առաքելության իրականացումը Հուսեյնը վստահեց իր երկրորդ որդուն՝ Աբդալլահին, որը նաև պատգամավոր էր թուրքական խորհրդարանում: Չնայած իր երեսնամյա տարիքին՝ Աբդալլահը խորամանկ դիվանագետ էր և բնածին քաղաքական գործիչ, որի մոտ անկախության ձգտումն այնքան խորն էր, որ նույնիսկ

մերժում էր բարձր պաշտոնների նշանակման վերաբերյալ երիտթուրքերի բազմաթիվ առաջարկները:

1914 թ. Աբդալլահը դիմեց Կահիրեում բրիտանական գլխավոր հանձնակատար և Եգիպտոսի փաստացի կառավարիչ լորդ Կիթչեներին: Վերջինիս ներկայացնելով Հիջազում ստեղծված իրավիճակը, Աբդալլահը հետաքրքրվեց, թե ինչպիսին կլինի Բրիտանիայի վերաբերմունքը Հիջազում թուրքերի դեմ ապստամբության հնարավոր բռնկման նկատմամբ: Կիթչեները պատասխանեց, որ Բրիտանիան ունի Թուրքիայի հետ հաստատված երկարատև բարեկամություն, և Լոնդոնը չի կարող միջամտել նրա ներքին գործերին: Այստեղ հետաքրքիր հարց է ծագում՝ այդ դեպքում ինչ են անում անգլիացիները Եգիպտոսում: Սակայն Գերմանիայի տնտեսական և ռազմական ներկայության ընդարձակումը Օսմանյան կայսրությունում (զինվորական առաքելության հիմնում, օժանդակություն բանակին, Բաղդադի երկաթուղու կոնցեսիայի ձեռքբերում և այլն), ինչպես նաև Գերմանիայի հետ միասին պատերազմի մեջ մտնելու և Անգլիայի դեմ «ջիհադի» (սրբազան պատերազմի) կարգախոսի տակ արաբական երկրներին համախմբելու հնարավորությունից մտահոգված՝ Կիթչեները իր խորհրդական Ռոնալդ Սթորին ուղարկում է Հուսեյնի մոտ: Հանդիպման ընթացքում Հուսեյնը ուղղակիորեն դիմում է բրիտանական կողմին՝ իրեն զինամթերք մատակարարելու խնդրանքով: Սթորի պատասխանն ինչպես միշտ դիվանագիտական էր՝ չեզոք ու անորոշ:

Իրադրությունը էապես փոխվեց պատերազմի մեջ Բրիտանիայի մտնելուց հետո: Կիթչեները, որն արդեն պատերազմի նախարարն էր բրիտանական կառավարությունում, հարցում է ուղարկում Հուսեյնին, որտեղ հստակ պարզաբանում է խնդրում արաբների դիրքորոշման վերաբերյալ՝ Բրիտանիայի դեմ Գերմանիայի և Թուրքիայի պատերազմական գործողությունների դեպքում: Կիթչե-

ներին հետաքրքրում էր մեկ բան. արդյո՞ք արաբները հանդես կգան Թուրքիայի կողմից, թե՞ կնախընտրեն համագործակցել բրիտանացիների հետ: Հուսեյնը սպասում էր հենց այս պահին: Նա անձնապես կողմ էր բրիտանացիների հետ միասին թուրքերի դեմ պայքար մղելու գաղափարին, սակայն նրա որդիներն այլ կարծիքի էին: Եթե Աբդալլահը համամիտ էր այդ հարցում հոր հետ, ապա Ֆեյսալը թուրքերի հետ համագործակցության կողմնակից էր: Նա գտնում էր, որ Ֆրանսիան և Անգլիան նկրտումներ ունեն Սիրիայի և Իրաքի նկատմամբ, որոնք անմիջապես կգրավեն թուրքերին այնտեղից դուրս մղելուց հետո:

1915 թ. փետրվարին՝ թուրքերի կազմակերպած՝ Հուսեյնի անհաջող մահափորձից հետո, իրադարձություններն առավել արագ զարգացում ստացան: Սիրիական գաղտնի կազմակերպությունները («Ալ-Ֆաթաթ» և «Ալ-Ահադ») Ֆեյսալի այցելության ընթացքում վերջինիս ներկայացրին հուշագիր, որտեղ թուրքերի դեմ ապստամբության բարձրացման դիմաց Բրիտանիայից պահանջեցին ճանաչել Սիրիայի, Լիբանանի, Իրաքի և Արաբական թերակղզու անկախությունը՝ բացառությամբ Ադենի, և պաշտպանական դաշինք կնքել անկախ արաբական պետության հետ, որը պետք է ստեղծվեր այդ տարածքների վրա:

1915 թ. հուլիսի 14-ին Հուսեյնը նամակ հղեց Կահիրեում Կիթչեներին փոխարինած Մակ Մահոնին՝ նշելով հուշագրում արծարծված բոլոր խնդիրները: Բրիտանացիների պատասխանը երկար սպասել չտվեց և հաջորդ ամսին Մակ Մահոնը Լոնդոնից ստացված հանձնարարականի հիման վրա հրապարակավ հայտարարեց, որ Բրիտանիան պատրաստ է ճանաչելու Արաբական թերակղզին որպես անկախ արաբական պետություն՝ Մեքքայի և Մեդինայի վրա տարածվող ինքնիշխանությամբ: Եվ քանի որ հանձնարարականի մեջ որևէ խոսք չկար Սիրիայի, Լիբանանի, Իրաքի

և Պաղեստինի մասին, ապա Մակ Մահոնը չկարողացավ հստակ պատասխան տալ Հուսեյնի վերոհիշյալ նամակին: Վերջինս, ի պատասխան բրիտանացիների հայտարարության, Մակ Մահոնին ուղղված մեկ այլ նամակում հետևյալ կերպ ձևակերպեց իր նպատակը՝ «վստահ լինել, որ մեր ապագայի համար կենսական պայմաններ կապահովվեն իրական (reality), այլ ոչ թե ձևական արտահայտությունների և խոսքերի հիման վրա»:

1915 թ. հոկտեմբերի 24-ին Մակ Մահոնը պատասխանեց ավելի որոշակի: Ըստ նրա՝ Բրիտանիան կճանաչի Հուսեյնի նամակում նշված բոլոր տարածքների անկախությունը՝ բացառությամբ հյուսիս-արևմուտք և արևելք ընկած տարածքները, որոնք զուտ արաբական չէին (purely Arab) կամ էլ բրիտանական շահերից ելնելով պահանջում էին հատուկ մոտեցում: Այդ տարածքներն էին՝ 1) Կիլիկիայի Մերսին և Ալեքսանդրետի շրջանները, 2) Լիբանանը և Սիրիայի մի մասը, որն ընկած է Հալեպի և Դամասկոսի գծից արևմուտք, 3) Հարավային Իրաքը՝ Բաղդադից մինչև Բասրա:

Մակ Մահոնի և Հուսեյնի միջև նամակագրությունը շարունակվեց որոշ ժամանակ, և, ի վերջո, նրանք պայմանավորվեցին սահմանների վերջնական ճշգրտումը թողնել պատերազմի ավարտից հետո:

Այսպիսով, հավատալով բրիտանացիների խոստումներին, չստանալով նրանցից որևէ իրավական փաստաթուղթ՝ Հուսեյնը գլխավորեց Հիջազում բռնկված ապստամբությունը:

Եթե հետագայում Անգլիայի և Ֆրանսիայի միջև գաղտնի համաձայնագրի կնքմամբ (Սայքս-Պիկո) և Բալֆուրի հռչակագրով անգլիացիները, փաստորեն, դրժեցին իրենց խոստումը արաբներին, ապա Հուսեյնի նման փորձառու և հմուտ քաղաքական գործչի նման դյուրահավատությունն անգլիացիների նկատմամբ առավել քան զարմանալի է թվում: Թերևս դա կարելի է բացատրել նրանով,

որ Հուսեյնը, ժամ առաջ ցանկանալով ապստամբել թուրքերի դեմ և կախված լինելով բրիտանական զենքի առաքումներից, «ստիպված էր հավատալ» Լոնդոնին: Այդ ընթացքում արաբական ազգայնական ընդհատակյա շարժումը մեծ թափ էր հավաքում նաև Սիրիայում և Լիբանանում, որտեղ կառավարում էր Ջեմալ փաշան: Վերջինս, Եգիպտոսը գրավելու անհաջող փորձերից և երկրի ներսում աճող շարժման դեմ ձեռնարկված անարդյունք միջոցառումներից զայրացած, դիմեց ծայրահեղ միջոցի՝ 1916 թ. մայիսի 6-ին հակապետական գործունեության մեջ մեղադրանքով ձերբակալելով և մահապատժի դատապարտելով 21 արաբ հայտնի քաղաքացիների: Հետագայում անկարող գտնվելով ճնշել արաբների ազգային-ազատագրական պայքարը՝ Ջեմալը միտումնավոր տնտեսական այնպիսի քաղաքականություն որդեգրեց, որից նրա իշխանության տակ գտնվող նահանգներում սովամահ եղավ շուրջ 300.000 մարդ: Դաժան վարչակարգը և համատարած սովը ստեղծեցին այնպիսի կացություն, որ, երբ Հուսեյնը ապստամբության կոչ արեց, սիրիացիներն այլևս ի վիճակի չեղան գործնականորեն արձագանքելու:

Չնայած սովը միակ պատճառը չէր, որ Հիջազից դուրս բնակվող արաբներին ստիպեց ձեռնպահ մնալ Հուսեյնի հետ լիարժեքորեն համագործակցելուց: Ասենք, Եմենի Իմամ Յահյան և Շամմառի Իբն Ռաշիդը հակված էին թուրքերի կողմը: Կիրենաիկայի Սենուսիները և Սուդանի Դարֆուր նահանգի ցեղերն ավելի շատ մտահոգված էին իտալացիներին և անգլիացիներին դիմադրություն ցույց տալով, քան օսմանյան տիրապետության դեմ պայքարով: Եվ վերջապես, Նեջդում Իբն Սաուդը չնայած արտաքուստ կողմ էր արտահայտվում թուրքերի դեմ ապստամբությանը, գործնականում որդեգրել էր չեզոք դիրքորոշում: Վերջինս մեծապես պայմանավորված էր ինչպես ներքին, այնպես էլ որոշակիորեն այն

հանգամանքով, որ 5 տարի առաջ տեղի ունեցած սահմանային սաստիկ բախումներից հետո Հուսեյնը այնքան անհեռատես գտնվեց, որ իրեն հռչակեց «Արաբական երկրների թագավոր»: Եվ անգամ հետագայում, չնայած բրիտանացիները ճանաչեցին Հուսեյնին միայն որպես «Հիջազի թագավոր», նա շարունակում էր իրեն համարել բոլոր արաբների առաջնորդ: Այդ պատճառով էլ Իբն Սաուդը հակադրվեց Հուսեյնին և մտադրվեց առաջին իսկ հնարավորության դեպքում «ջարդել այդ Հաշիմյանականի ամբիցիաները»: Այնուամենայնիվ, թուրքերին չհաջողվեց խափանել 1916 թ. հունիսի 5-ին բռնկված Արաբական ապստամբությունը: Այդ օրը Հուսեյնի որդիներ Ալին և Ֆեյսալը Մեդինայի մոտ Հուսեյնի անունից հռչակեցին արաբների անկախությունը: Ապստամբները ստեղծեցին երեք բանակ՝ Հուսեյնի որդիներ Ալիի, Ֆեյսալի և Աբդալլահի հրամանատարությամբ: Ապստամբությանը, բացի հիջազցիներից, մասնակցում էին նաև սիրիացիները, լիբանանցիները, իրաքցիները, պաղեստինցիները, հորդանանցիները և այլն: Համագործակցելով անգլիական զորքերի հետ՝ նրանք ջախջախիչ հարվածներ էին հասցնում թուրքական բանակին, որը 1916 թ. երկրորդ կեսից արաբական բոլոր ռազմաճակատներում անցավ պաշտպանության: Թուրքերին վռնդելով Հիջազից՝ արաբական զորքերը 1917 թ. սկզբին մտան Պաղեստին, որի ազատագրումն ամբողջացավ նույն տարեվերջին: Դրանից հետո անգլիական և արաբական ուժերը ձեռնամուխ եղան Սիրիայի ազատագրմանը: Այդ տեսանկյունից կարևոր էր Արարայի (Նաբլուսի մոտ) ճակատամարտը, որը տեղի ունեցավ 1918 թ. սեպտեմբերի 19-ին: Այստեղ առաջին անգամ կռիվներին մասնակցեց Արևելյան կամ Հայկական լեգեոնը, որը ստեղծվել էր դեռևս 1916 թ. նոյեմբերին ֆրանսիական կառավարության հետ ձեռք բերված համաձայնության հիման վրա: Լեգեոնում, որի հիմնական կորիզը հայերն էին, ընդգրկված էին նաև սի-

րիացիները: Արարայի ճակատամարտում հայ և սիրիացի զինվորներն ավելի քան 12 ժամ քաջաբար մարտնչում էին թուրքական զորքերի դեմ, որոնք չդիմացան և փախուստի դիմեցին:

1918 թ. սեպտեմբերի 30-ին ֆեյսալի զորքերը մտան Դամասկոս: Թուրքական դրոշը ցած նետվեց և Դամասկոսի վրա ծածանվեց Հուսեյն թագավորի Արաբական եռագույն դրոշը: Հոկտեմբերի 8-ին ազատագրվեց Բեյրութը, այնուհետև՝ Հոմսը և Համան: 1918 թ. հոկտեմբերի 25-ին Հալեպից հարավ, Խան Թումանի մոտ տեղի ունեցած, ըստ էության, վերջին ճակատամարտում արաբական զորքերը ջախջախեցին թուրքերին և ազատագրեցին Հալեպը: Դա ռևանշ էր 1516 թ. Մարջ Դաբիքում կրած պարտության դիմաց:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում կնքված զինադադարով Թուրքիան իրեն պարտված ճանաչեց և պարտավորվեց Անգլիային և Ֆրանսիային հանձնել Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում, Իրաքում, Ասիրում և Եմենում գտնվող իր կայազորները:

3. Դավաճանված արաբները

Դամասկոսի գրավումը մի կողմից հրճվանքի, մյուս կողմից նոր բարդությունների պատճառ դարձավ ֆեյսալի համար: Էմիրն առաջին հերթին մտահոգված էր, թե ինչպես պետք է որևէ իշխանություն չհանդուրժող իր քոչվոր ցեղակիցներին օրինապահ քաղաքացիներ դարձնել և համոզել նրանց, որ հին պաշտոնյաները, որոնք դեռևս թուրքական տիրապետության ժամանակաշրջանում կառավարման անհրաժեշտ փորձ էին կուտակել, մնան իրենց տեղերում: Ֆեյսալը նաև մտավախություն ուներ, որ թուրքերի պարտությունից հետո վերջիններիս տեղը կարող են զբաղեցնել Ֆրանսիան և Անգլիան, ինչը հաստատվեց Սայքս-Պիկո համաձայնագրի կնքմամբ և Բալֆուրի հռչակագրով:

Սայքս-Պիկո համաձայնագիրն ամոթալի փաստաթուղթ էր, որը բացահայտեց մեծ տերությունների, մասնավորապես Անգլիայի երկդիմի քաղաքականությունն արաբների նկատմամբ: Այն ժամանակ, երբ նոր էր ավարտվել մեր կողմից արդեն նշված Հուսեյնի և Մակ Մահոնի միջև նամակագրությունը, Լոնդոնն ու Փարիզն անմիջապես գաղտնի բանակցություններ ձեռնարկեցին Իրաքի և Մեծ Սիրիայի բաժանման վերաբերյալ:

Ինչպես ցույց էին տվել ամբողջ 19-րդ դարի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները, եվրոպական մեծ տերությունները երբեք չեն հապաղել իրենց գաղութային տիրույթների ընդարձակման հարցում: Այսպես, Ֆրանսիան գրավեց Թունիսը, Մարոկկոն և Ալժիրը, Իտալիան՝ Լիբիան, Ռուսաստանը՝ Արևելյան Հայաստանը, Բրիտանիան՝ Եգիպտոսը, Կիպրոսը, Ադենը և Պարսից ծոցի էմիրությունները: Առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի կողքին Օսմանյան կայսրության հանդես գալը նոր հեռանկարներ բացեց դաշնակից տերությունների համար կայսրության բաժանման առումով: Ռուսաստանը ձգտում էր տիրանալ Կ. Պոլսին ու Բոսֆորին, ինչպես Մուհամմադ Ալիի ժամանակաշրջանում Ֆրանսիան՝ Սիրիային, որի հետ դեռևս Օսմանյան կայսրության ստեղծման ժամանակներից կապված էր տնտեսական սերտ կապերով, և որի քրիստոնյա բնակչության նկատմամբ մշակութային և կրոնական պատասխանատվություն էր կրում: Բրիտանիան նկրտումներ ուներ Պաղեստինի, Իրաքի և Պարսից ծոցի (Քուվեյթից մինչև Մասկատ) նկատմամբ: Այդ իսկ պատճառով Մակ Մահոնի և Հուսեյնի միջև վերջին նամակագրությունից վեց շաբաթ անց բրիտանացի Մարկ Սայքսն ու ֆրանսիացի Ջորջ Պիկոն նախանշեցին Օսմանյան կայսրության բաժանման ծրագիրը: Ռուսաստանը, որն այդ ժամանակ Ֆրանսիայի և Բրիտանիայի դաշնակիցն էր, ակնկալում էր ստանալ Կ. Պոլիսն ու Բոսֆորը, ինչպես

նաև Արևելյան Անատոլիայի մեծ մասը: Ֆրանսիան նախատեսում էր ձեռք բերել ամբողջ Սիրիան, Իրաքի Մոսուլի վիլայեթը և Հարավային Անատոլիայի մի մասը: Բրիտանիային շնորհվելու էր Իրաքի մնացած մասը: Պաղեստինը, որ կռվախնձոր էր դարձել Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև, պետք է դրվեր միջազգային վերահսկողության տակ:

Ինչպես արդեն նշել ենք, Մակ Մահոն-Հուսեյն նամակագրության մեջ բրիտանական կողմը խոստանում էր ճանաչել արաբների անկախությունը՝ բացառությամբ հետևյալ տարածքների՝ Կիլիկիայի Մերսին և Ալեքսանդրետի շրջանների, Լիբանանի և Սիրիայի մի մասի, որը ընկած է Հալեպի և Դամասկոսի գծից արևմուտք, ինչպես նաև Հարավային Իրաքի՝ Բաղդադից մինչև Բասրա: Նամակի մեջ չէր հիշատակվում Հյուսիսային Իրաքը և Սիրիայի մնացած մասը՝ Դամասկոսից և Հալեպից արևելք ընկած տարածքները: Արաբները, բնականաբար, վստահ էին, որ գոնե այդ տարածքներում Բրիտանիան կճանաչի արաբների անկախ պետությունը: Հակառակը՝ Սայքս-Պիկո համաձայնագիրը վերածում էր Սիրիան և Իրաքը գաղութների և կիսանկախ պրոտեկտորատների: Նման բաժանմամբ, պատմական և մշակութային տեսանկյունից այնպիսի զարգացած քաղաքներ, ինչպիսիք էին՝ Բեյրութը, Բաղդադը և Բասրան, դրվում էին ֆրանսիական կամ բրիտանական իշխանությունների անմիջական ղեկավարության տակ: Մեծ տերություններիս նման պարզունակ մոտեցումը քաղաքակիրթ սիրիացիների կամ իրաքցիների նկատմամբ, որոնց կրթական արմատները սնուցել են Պլատոնի Հունաստանը, ու որոնց նախնիները, պահպանելով հելլենիստական և պարսկական մշակույթը, դուրս հանեցին Եվրոպան «դարավոր խավարից», առնվազն անբարոյական էր:

Բրիտանիան դրժեց Հուսեյնին տված իր խոստումը: Հուսեյնին այդպես էլ տեղյակ չպահեցին Սայքսի և Պիկոյի միջև ձեռք բերված

համաձայնության մասին, չնայած դա կարելի էր անել համաձայնագրի ստորագրումից մեկ տարի անց՝ Հուսեյնին տեսակցելու նպատակով Ջեդդա կատարած նրանց այցելության ժամանակ: Եվ պարզ չէ, թե ինչպիսին կլիներ իրադարձությունների հետագա զարգացումը, եթե Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո բոլշևիկները չհրապարակեին գաղտնի այդ համաձայնագրի տեքստը:

Ստեղծված իրավիճակից շտապեց օգտվել Ջեմալ փաշան, որը 1917 թ. նոյեմբերին Հուսեյնին հղած իր նամակում կոչ էր անում թողնել դավաճան եվրոպացիներին և միանալ Թուրքիային՝ խոստանալով պատերազմից հետո լիակատար ինքնավարություն տրամադրել արաբներին: Սակայն ստանալով Մակ Մահոնի փոխանորդ Վինգեյթից հավելյալ հավաստիացումներ այն մասին, որ համաձայնագրի տեքստը սխալ է մեկնաբանվել, և որ Բրիտանիան պատրաստակամ է փոխել արաբների օգտին նրա որոշ հոդվածները, Հուսեյնը նորից հավատաց անգլիացիներին: Զարմանալին այն էր, որ Հուսեյնը չպահանջեց անգամ տեսնել համաձայնագրի տեքստը, որն ամբողջովին ուղղված էր Բրիտանիայի, Ֆրանսիայի և Անգլիայի շահերի առաջխաղացմանը՝ արաբների անկախության հաշվին: Դեռ ավելին, Անգլիայի արտգործնախարար Բալֆուրը քաջատեղյակ էր, որ Ֆրանսիան երբեք չի համաձայնի արաբների օգտին համաձայնագրի փոփոխմանը, ինչպես նաև այն, որ իրենք Իրաքից հրաժարվելու որևէ մտադրություն չունեն: Իսկ ինչ վերաբերում է Պաղեստինին, ապա Բալֆուրը հրապարակեց իր հայտնի հռչակագիրը, ուր անգլիական կառավարության աջակցությունն էր հայտնում Պաղեստինում «հրեական տան» ստեղծմանը՝ հիմնական նպատակ ունենալով Պաղեստինում հաստատել բրիտանական գաղութային վարչակարգ և ռազմակայաններ:

Նշված զարգացումներին զուգադիպեց Խաիմ Վայցմանի (քիմիայի դասախոս էր Մանչեստրի համալսարանում) և Բրիտանիայի արտգործնախարարի միջև ընկերական սերտ հարաբերությունների հաստատումը[81]: Նրանք երկուսն էլ շատ լավ ըմբռնեցին պահի կարևորությունը Սիոնիզմի ու Բրիտանիայի շահերը համատեղելու և միմյանց ծառայեցնելու տեսանկյունից: Վայցմանը հակադրվում էր Թեոդոր Հերցլին, որը 1903 թ. հակված էր անգամ ընդունելու Ուգանդայում հրեաների համար «ազգային տուն» ստեղծելու բրիտանական առաջարկը: Վայցմանը կտրականապես դեմ էր հարցի նման լուծմանը, և այդ նպատակի իրականացման համար որպես միակ ընդունելի տարբերակ էր համարում Պաղեստինը՝ ընդգծելով նրա հրեապատկան լինելը մինչքրիստոնեական ժամանակներում: Այդ պատճառով էլ նա քննադատության ենթարկեց նաև Սայքս-Պիկո համաձայնագրով նախատեսված դրույթը՝ Պաղեստինը միջազգային վերահսկողության տակ դնելու վերաբերյալ:

Վայցմանի ճնշման տակ, ինչպես նաև պատերազմում Եվրոպայի և Ռուսաստանի հրեաների նյութական և քաղաքական օժանդակությունը ապահովելու նպատակով Բալֆուրը հրապարակեց հայտնի հռչակագիրը, որը լուրջ ընդվզում առաջացրեց արաբական աշխարհում: Սակայն կրկին անգլիացիներից ստանալով հավաստիացումներ այն մասին, որ «հրեական տան» ստեղծումը պետք է համապատասխանի արաբ բնակչության քաղաքական և տնտեսական ազատությանը», Հուսեյնը ոչ միայն հանձնարարեց իր որդիներին և արաբ մյուս ղեկավարներին համագործակցել Բրիտանիայի հետ և հանդարտեցնել արաբների կրքերը, այլև հորդորեց աջակցել հետապնդումների ենթարկվող հրեաներին Պաղեստինում ապաստան ստանալու հարցում:

---

[81] Մանրամասն տե՛ս Weizmann, Chaim. The Letters and Papers of Chaim Weizman. Edited by Dvorah Barzilay and Barnet Litvinoff. Jerusalem, Israel University Press, 1977,

Իր հերթին, Բալֆուրը շարունակում էր հանգստացնել արաբներին: Այդ նպատակով 1918 թ. մարտին Վայցմանը մեկնեց Կահիրե և Երուսաղեմ, որտեղ Եգիպտոսի և Պաղեստինի առաջնորդներին փորձեց համոզել այն բանում, որ հրեաների ներգաղթը Պաղեստին «որևէ կերպ չի ոտնահարի արաբների իրավունքները»: Հունիսին բրիտանական արտգործնախարարությունը հայտարարեց, որ արաբների ազատագրած տարածքներին (Հիջազ ու Անդրհորդանան) կշնորհվի «լիակատար և ինքնիշխան անկախություն» (“complete and sovereign independence”)[82], ինչ վերաբերում է Պաղեստինի և Իրաքի տարածքներին, որոնք ազատագրվել են բրիտանացիների օգնությամբ, ապա նրանք կկառավարվեն՝ համաձայն այդ երկրների բնակչության կամքի: Իսկ այն երկրները, որոնք դեռևս չեն ազատագրվել՝ Սիրիա և Լիբանան, ապա նրանք պետք է պայքարեն իրենց ազատությունն ու անկախությունը ձեռք բերելու համար: Վերջապես, 1918 թ. նոյեմբերին՝ Թուրքիայի անձնատուր լինելուց հետո, հրապարակվեց անգլո-ֆրանսիական համատեղ հռչակագիրը, որի համաձայն՝ այդ երկու տերությունները նախատեսում էին Պաղեստինում, Սիրիայում և Իրաքում ստեղծել այնպիսի վարչակարգեր, որոնք «իշխանությունը կստանան տեղի բնակչության ընտրությամբ և նախաձեռնության ազատ իրականացմամբ»: Փաստորեն, հռչակագրով չեղյալ էր համարվում Սայքս-Պիկո գործարքը, և Սիրիան, Իրաքը, Պաղեստինն ու Արաբական թերակղզին հնարավորություն էին ստանում ընտրելու իրենց կառավարիչներին: Բայց սա միայն թղթի վրա: Իսկ իրականում Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները մտադիր էին բաժանել այդ երկրները միմյանց միջև: Եվ դա հայտնի դարձավ անմիջապես Դամասկոսում Ֆեյսալի հայտնվելուց հետո: Բրիտանական քաղաքացիական և զինվորական կառավարություն ստեղծվեց

Weizmann, Chaim. Trial and Error: The Autobiography of Chaim Weizmann. New York. 1949:

[82] Nutting, Anthony. The Arabs. New York: Mentor Books, 1964, p. 293.

Երուսաղեմում և Բաղդադում, ֆրանսիացիները վերցրին Լիբանանի և հյուսիսարևմտյան Սիրիայի կառավարումը, իսկ արաբներին տրվեց Սիրիայի կենտրոնական մասը և Անդրհորդանանը՝ Հալեպից մինչև Աքաբա: Ֆեյսալը, բողոքելով արաբական տարածքների նման բաժանման ծրագրից, որը միանգամայն հակասում էր արաբներին նախկինում տված խոստումներին, մեկնեց Փարիզ և Լոնդոն: Լոնդոնում արժանանալով սառը ընդունելության՝ Ֆեյսալը ձեռնունայն մեկնեց Փարիզ, որտեղ պետք է կայանար խաղաղության վեհաժողովը:

Ֆրանսիայի և Բրիտանիայի միջև անվստահության մթնոլորտի առկայության պայմաններում[83] նրանք երկուսն էլ հրաժարվեցին ճանաչել Ֆեյսալին որպես արաբների ներկայացուցիչ և բանակցել նրա հետ: Միակ բանը, որին Ֆեյսալը կարողացավ հասնել Ֆրանսիայի ղեկավար Կլեմանսոյի հետ 1919 թ. նոյեմբերին, համաձայնությունն էր Աքաբայի և Հալեպի միջև ընկած տարածքի վրա (ներառյալ Դամասկոսը) արաբների իշխանության ճանաչման, ինչպես նաև Բրիտանիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի ստեղծման ու տարածաշրջան գործուղման վերաբերյալ: Իրականում միայն ամերիկացիներից բաղկացած հանձնաժողով ստեղծվեց, որը հայտնի դարձավ «Քինգ-Քրեյնի հանձնաժողով» անվամբ:

Քինգ-Քրեյն հանձնաժողովն իր առաքելությունը կատարեց մեծագույն պատասխանատվությամբ և առաջարկեց, որ ժամանակավոր մանդատներ նախատեսվեն Սիրիայի, Պաղեստինի և Իրաքի համար: Հանձնաժողովի կարծիքով Սիրիայի և Պաղեստինի մանդատները պետք է հանձնեին Միացյալ Նահանգներին, իսկ Իրաքի մանդատը՝ Բրիտանիային, ընդ որում, միապետի հարցը պետք է

---

[83] Բրիտանացիները փորձում էին ֆրանսիացիներից խլել Մոսուլի նավթային հարուստ շրջանը, իսկ ֆրանսիացիները Բալֆուրի հռչակագրից հետո իրենց խաբված էին համարում անգլիացիների կողմից:

լուծվեր հանրաքվեի միջոցով: Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա հանձնաժողովը, հաշվի առնելով արաբների մոտ բացարձակ հակաֆրանսիական տրամադրությունների առկայությունը, խորհուրդ էր տալիս Ֆրանսիային արաբական ոչ մի երկրի կառավարման մանդատ չհանձնել: Պաղեստինում «հրեական տան» ստեղծման հարցում հանձնաժողովը կողմ էր հրեաների սահմանափակ և աստիճանական ներգաղթի իրականացմանը: Սակայն Անգլիայի և Ֆրանսիայի պատվախնդրության և շարունակվող պայքարի շնորհիվ Քինգ-Քրեյնի հանձնաժողովի դրույթներն այդպես էլ մնացին չիրագործված: Մինչ այդ Ֆեյսալը վերադարձավ Դամասկոս, որտեղ «Ալ-Ֆաթաթը» և «Ալ-Ահադը» միավորվելով ստեղծեցին Արաբական անկախության կուսակցություն: Վերջինս 1920 թ. մարտին հրավիրեց սիրիական ազգային համաժողով, որի ընթացքում ընդունվեց Ֆեյսալ թագավորի գլխավորությամբ Մեծ Սիրիայի անկախությունը պահանջող և Բալֆուրի հռչակագիրն ու Սայքս-Պիկո համաձայնագիրը չեղյալ հայտարարող արձանագրություն: Այն մերժում էր ֆրանսիական վերահսկողության որևէ ձև: Սիրիական համաժողովին հաջորդեց նմանատիպ հավաք Իրաքում, որտեղ երկրի առաջնորդները հռչակեցին Իրաքի անկախությունն Աբդալլահի գլխավությամբ: Ֆրանսիան և Բրիտանիան այդ արձանագրություններն ու որոշումները որակեցին իրավական ուժից զուրկ և խիստ քննադատության ենթարկեցին: Իսկ Սան-Ռեմոյում աշխարհի հզորները բաժան-բաժան արեցին արաբական տարածքները. Անգլիան ստացավ Պաղեստինը՝ ավելացնելով նաև Մոսուլի շրջանն իր՝ Իրաքի մանդատին, իսկ Ֆրանսիան ստացավ ամբողջ Սիրիան ու Լիբանանը: Սան-Ռեմոյի արդյունքը եղավ այն, որ Ֆեյսալն ու արաբները զրկվեցին անգամ Սիրիայի մի մասից, ներառյալ Հալեպից և Դամասկոսից, որոնք տրվել էին նրանց հետպատերազմյան բաժանումից հետո, և որոնք 5 ամիս առաջ նրանց խոստացել էր Ֆրանսիայի վարչապետ Կլեմանսոն:

Արաբները պարտվեցին աշխարհաքաղաքական այս «մեծ խաղում»՝ քաղելով հզոր տերությունների «ուժային քաղաքականության» ու սեփական թուլության պտուղները: Արաբները այսուհետ իրենց հույսը պետք է դնեին միմիայն սեփական ուժերի վրա: Այդպես էլ եղավ Սիրիայում և Իրաքում: Ծավալված անհավասար պայքարում չկարողանալով փոքրաթիվ ուժերով ետ գրավել Սիրիան՝ Աբդալլահը ստիպված եղավ ընդունել Անդրհորդանանի էմիրի կարգավիճակը բրիտանական մանդատի ներքո: Իսկ Հուսեյնն իր անհեռատես քաղաքականությամբ ոչ միայն վատթարացրեց հարաբերությունները բրիտանական կառավարության հետ, այլև ներքաշվեց պատերազմի մեջ Իբն Սաուդի վահաբական ջոկատների դեմ: Մի շարք պարտություններից հետո վատառողջության պատճառով Հուսեյնը շերիֆի պաշտոնը զիջեց իր ավագ որդուն՝ Ալիին: Սակայն 1924-1925 թթ. վահաբիների ռազմական հաջողությունները (Մեքքայի և Ջեդդայի գրավումը) ստիպեցին Ալիին հանձնել երկիրը Իբն Սաուդին: Հուսեյնը մեկնեց Կիպրոս, որտեղ տեղի բրիտանական կառավարիչ Ռոնալդ Սթորսից ստացավ սուրբ Միքայել և սուրբ Գևորգի Մեծ խաչի շքանշան սեփական գահի, ինչպես նաև արաբներին խոստացած ազատության ու անկախության փոխարեն[84]:

[84] Storrs, Sir Ronald. The Memoirs of Sir Ronald Storrs. New York, 1937, pp. 99-112.

4. Արաբական երկրների ազգային-ազատագրական պայքարը և Ֆրանսիան[85]

Թունիսի նախագահներից մեկը ժամանակին ասել է. «Բրիտանական և ֆրանսիական իմպերիալիզմի միջև տարբերությունն այն է, որ ֆրանսիացիները նման են գյուղացիների, որոնք կառչում են այն ամենից, ինչ իրենց է պատկանում, ի տարբերություն անգլիացիների, որոնք առևտրականներ են և ավելի շատ շուկաներ են փնտրում, քան տարածքներ: Ֆրանսիացիների համար յուրաքանչյուր տնտեսություն, գրասենյակ, շինություն, փոստ և խանութ պետք է լինի իրենց սեփականությունը՝ անպայմանորեն նրանց վրա ծածանվող ֆրանսիական դրոշով»[86]: Ֆրանսիական գաղութատիրության ամենացայտուն օրինակը Ֆրանսիայի հարաբերություններն են Արաբական աշխարհի հետ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը և նրանից հետո:

16-րդ դարից սկսած՝ Ֆրանսիան տնտեսական լուրջ շահեր ուներ Սիրիայում և Լիբանանում: Իրեն համարելով այնտեղ բնակվող քրիստոնյա մարոնի համայնքի պաշտպանը՝ Ֆրանսիան մտահոգված էր, որ անկախ արաբական կառավարությունների հաստատումը Սիրիայում և Լիբանանում կարող էր ապակայունացնել իրավիճակը Հյուսիսային Աֆրիկայի իր տիրույթներում: Այդ իսկ պատճառով Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում

---

[85] Ալժիրի մասին տե՛ս Ланда Р. Г., Национально-освободительное движение в Алжире, (1939-1962), Москва, 1962, Ланда Р. Г., Кризис колониального режима в Алжире, 1931-1954, Москва, 1980, Ланда Р. Г., История алжирской революции, Москва, 1983, Gillespie, Joan, Algeria, Rebellion and Revolution. London, 1960:

Մարոկկոյի և Թունիսի վերաբերյալ տե՛ս Луцкая Н. Ц., Очерки новейшей истории Марокко, Москва, 1973, Манасерян Л. П., Марокко в борьбе за независимость, Ереван, 1969, Landau, Ron, Morocco Independent. London: Allen&Unwin, 1961, Чистов А. А., По Тунису и Ливии, Москва, 1966, Ланда Р. Г., У арабов Африки. М., 1968, Burguiba, Habib. La Bataille de l'Evacuation Discours de la Victoire. Tunis, 1959:

[86] Burguiba, Habib. La Bataille de l'Evacuation Discours de la Victoire. Tunis, 1959, pp. 56-57.

նա փորձում էր զսպել արաբական ապստամբության տարածումը Արաբիայի սահմաններից դուրս՝ դեպի Սիրիա և Լիբանան: Վերոհիշյալ նպատակի իրականացման անհաջող ավարտը հիմք տվեց ֆրանսիացիներին եզրակացնելու, որ անգլիացիներն արաբների հետ համատեղ ձգտում են դուրս մղել իրենց ոչ միայն Պաղեստինից, այլև Սիրիայից: Բնականաբար, ֆրանսիացիները չէին կարող հանդուրժել անգլիացիների օժանդակությունը վայելող էմիր Ֆեյսալի ներկայությունը Դամասկոսում: Ստիպելով բրիտանացիներին դուրս գալ այնտեղից, իսկ հետո՝ 1920 թ., Սան-Ռեմոյում ստանալով Սիրիայի և Լիբանանի կառավարման մանդատները, Ֆրանսիան դուրս քշեց Ֆեյսալին և գրավեց Սիրիայի ամբողջ տարածքը: Այնուհետև Փարիզն իրականացրեց «բաժանիր, որ տիրես» քաղաքականության դասական տարբերակը: Լիբանանը և Սիրիան դիտվեցին որպես տարբեր երկրներ[87], իսկ Սիրիան բաժանվեց 3 «պետությունների», հետագայում՝ «մուհաֆազաների» (Հալեպի, որի մեջ մտավ Ալեքսանդրետի սանջաքը[88], Ալավիների (Ջեբել Դրուզ) և Մեծ Լիբանանի), յուրաքանչյուրը՝ իր սեփական ֆրանսիական վարչակազմով, որոնք էլ իրենց հերթին ենթարկվում էին Ֆրանսիայի բարձրագույն հանձնակատարին (նստավայրը՝ Դամասկոս): Լիբանանի տարածքը, որն Օսմանյան կայսրության ժամանակ կազմված էր Բեյրութի, Սիդոնի և Թիրի շրջաններից, ֆրանսիացիների իշխանության տակ ընդլայնվեց՝ ներառելով նախկինում Սի-

[87] 1919 թ. հուլիսի 2-ին Դամասկոսում հրատարակված «Առաջին համասիրիական վեհաժողովի» որոշումների համաձայն՝ «Մեծ Սիրիան» ընդգրկում է Տարտուս լեռները հարավում, Ակաբան և Ռաֆահը՝ հյուսիսում, Միջերկրականը՝ արևմուտքում, Եփրատն ու Խաբուր գետերը՝ արևելքում: Այդ սահմանները ներառում են այսօրվա Սիրիան, Լիբանանը, Հորդանանը, Իսրայելը և Պաղեստինը: «Մեծ Սիրիայի» հայեցակարգի արմատները գնում են դեպի Օմայանների խալիֆայության ժամանակները, երբ Հիջազից հյուսիս ընկած տարածքը («Բիլադ ալ-Շամ», Հյուսիսային Երկիր) քաղաքական առանձին միավոր էր:

[88] Ալեքսանդրետի սանջաքի վերաբերյալ մարամասն տե՛ս Բայրամյան Ա. Ա., Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-1939 թթ.), Երևան, 1998:

րիայի Տրիպոլին և Բեկաա հարթավայրը: Այսպիսով, պաշտոնական Փարիզը, Լիբանանին տրամադրելով Սիրիայի ամենաբերրի հողն ու առաջնային նավահանգիստը, ոչ միայն երկակի ավելացրեց Լիբանանի տարածքն ու բնակչությունը, այլև մահմեդական մեծամասնության հաշվին հարստացրեց իր տիրույթների քրիստոնեական մասը, որտեղ արաբական ազգային շարժումն ամենահզորն էր:

Մանդատի առաջին հինգ տարիների ընթացքում ֆրանսիացիները իշխանության խիստ համակարգ էին հաստատել երկու երկրներում, երբեմն էլ ավելի խիստ, քան օսմանյան տիրապետության ժամանակ: Վարչական մարմիններում աշխատանքի էին ընդունվում միայն նրանք, ովքեր չեզոք էին մանդատային իշխանությունների նկատմամբ և հնազանդորեն կատարում էին վերջիններիս հրամաններն ու կարգադրությունները: Կրոնական հարցերում մանդատային իշխանությունները փոխանակ քաջալերելու քրիստոնյաների և մահմեդականների խաղաղ գոյակցությունն ու համագործակցությունը, կողմնապահ վերաբերմունք էին դրսևորում՝ առաջնայնությունը տալով քրիստոնյաներին: Կրթության բնագավառում ֆրանսիացիները պարտադրում էին ֆրանսերենի ուսուցումը դպրոցներում արաբերենին հավասարաչափ: Չնայած լեզվի իմացությունը տեղի բնակչության համար անհերքելի մշակութային առավելություններ էր տալիս, այնուամենայնիվ պարտադրման ձևն ինքնին նվաստացուցիչ էր արաբների համար, որոնք մայրենի լեզվի ուսուցումը համարում էին օտար տիրապետության դեմ պայքարում հիմնական ձեռքբերումներից մեկը: Ֆրանսիական դպրոցների բարգավաճման հետ մեկտեղ նվազագույնի էր հասցված արաբական մշակույթի դասավանդումը, որը ոչ թե արգելված էր, այլ ուղղակի ուսուցիչների, դպրոցների համար համապատասխան շինությունների պակասի հետևանքով գտնվում էր անկումային վիճա-

կում: Դպրոցական դասագրքերից դուրս էին մնացել արաբ ժողովրդի անցյալի փառավոր էջերը, որտեղ հերքվում էր անգամ կապը Սիրիայի և իր արաբ հարևանների միջև: Արաբների ազգայնականության ցանկացած դրսևորում արգելված էր: Մամուլի գործունեությունն ամբողջապես կախված էր մանդատային իշխանությունների քմահաճույքից, ինչն անհնարին էր դարձնում ազատ մամուլի գոյությունը:

Եթե Լիբանանում քրիստոնեական մեծամասնությանը հաջողվեց որոշ ժամանակ պահպանել հանդուրժողական և կայուն իրավիճակ կառավարիչների ու հպատակների միջև, ապա Սիրիայում ֆրանսիական իշխանությունների ճնշող և արհամարհական վերաբերմունքը մահմեդական բնակչության նկատմամբ հանգեցրեց ազգային-ազատագրական տևական պայքարի ծավալման, երկուստեք նյութական և մարդկային ծանր կորուստների գնով ձեռք բերված անկախության:

Ֆրանսիացիները չէին կարող հասկանալ, թե ինչպես որևէ «հետամնաց» ժողովուրդ կարող է չընդունել ֆրանսիական «քաղաքակրթական առաքելության» առավելությունները: Այդ նույն պատճառն էր հիմնականում ընկած Հյուսիսային Աֆրիկայի երկրներում Ֆրանսիայի ունեցած անհաջողությունների հիմքում: 1847 թ.՝ Ալժիրում Աբդ ալ-Քադիրի ապստամբությունը ճնշելուց հետո, ֆրանսիան իր ուշադրությունը կենտրոնացրեց նրա հարևան երկու երկրների՝ Թունիսի և Մարոկկոյի վրա: Քանի որ Բրիտանիան եվրոպական որևէ տերության չէր թույլատրում գրավել Ջիբրալթարի (ռազմավարական դիրք ունեցող անգլիական կալվածք Եվրոպայում) դիմաց գտնվող Մարոկկոն, իսկ Օսմանյան կայսրությունը դեռ շարունակում էր վերահսկել Թունիսը, Ֆրանսիան որոշեց ամրապնդել սեփական դիրքերը Ալժիրում: Ֆրանսիացի գաղութարարները, կտրելով Միջերկրական ծովը, բնակություն էին հաստա-

տում Ալժիրում՝ հրապուրվելով այնտեղ ֆրանսիական կառավարության տրամադրած անհատույց հողատարածքներով: Երկրորդ կայսրության կարճատև ժամանակաշրջանում Լուի Նապոլեոնը փորձեց կասեցնել գաղութացման գործընթացը և պաշտպանել տեղի բնակչության իրավունքները՝ վերացնելով ֆրանսիացիների պարտադրած հողի վաճառքի բռնի և անարդար համակարգը: Սակայն ֆրանս-պրուսական պատերազմից (1870) հետո, կորցնելով Էլզասն ու Լոթարինգիան, Ֆրանսիան նորից վերադարձավ Ալժիրում իր վարած նախկին քաղաքականությանը՝ նոր լիցք հաղորդելով այնտեղ ֆրանսիացիների զանգվածային ներգաղթին: Ֆրանսիացիները լքում էին գերմանացիների գրաված տարածքները և նոր բախտի ու հաջողության ակնկալիքով մեկնում Ալժիր:

Մեծ թվով հայրենակիցներ տեղավորելով Ալժիրում՝ Ֆրանսիայի ղեկավարները որոշեցին վերջնականապես «ձուլել» այն Ֆրանսիայի հետ: Ալժիրի կառավարման հետ կապված հարցերը փոխանցվեցին ներքին գործերի նախարարության իրավասությանը, իսկ երկրի տարբեր շրջանների ղեկավարները կոչվեցին «պրեֆեկտներ», ինչպես Ֆրանսիայում: Ֆրանսերենն Ալժիրում հռչակվեց պաշտոնական լեզու՝ փոխարինելով արաբերենին: Իսկ երբ Ֆրանսիայից ներգաղթը սկսեց աստիճանաբար դադարել, ֆրանսիացիները սկսեցին խրախուսել Իսպանիայից և Իտալիայից օտարերկրացիների ներգաղթը Ալժիր պայմանով, որ վերջիններս ֆրանսիական հպատակություն ընդունեն: Այն տեղացիներից, որոնք անցել էին, այսպես կոչված, ֆրանսիական նատուրալիզացիան, արհեստականորեն երկրում ստեղծվել էր վերնախավ, որը, վայելելով ֆրանսիացիների անսահմանափակ օժանդակությունը, օգտվում էր տարբեր տեսակի արտոնություններից: Այդ անհավասարությունը, բնականաբար, դժգոհությունների հիմք էր տալիս՝ երբեմն էլ հանգեցնելով ուղղակի բախումների ֆրանսիացիների և տեղի բնակ-

չության միջև: Այսպես, արևելյան Ալժիրի Կաբիլները խռովություն բարձրացրին, որն ավարտվեց անհաջողությամբ: Արաբները դաժանաբար պատժվեցին, իսկ ֆրանսիացի կառավարիչներն առիթն օգտագործեցին, որ այնուհետև առանց որևէ փոխհատուցման բռնագրավեն խռովությանը մասնակցած արաբների հողերը: Բայց, միևնույնն է, ֆրանսիացիները ի զորու չէին հողեր տրամադրել Ալժիրում բնակություն հաստատած բոլոր եվրոպացիներին, և 1881 թ. Ֆրանսիան, օգտվելով Օսմանյան կայսրության անկման գործընթացից, գրավեց Թունիսը: Այստեղ էլ գաղութացման գործընթացը կատարվեց այնպես, ինչպես դա տեղի էր ունեցել Ալժիրում: Սակայն Թունիսը, ավելի մոտ գտնվելով Եգիպտոսին, ուներ առավել արտահայտված մահմեդական ինքնություն և սովորույթներ: Այդ իսկ պատճառով Թունիսը մինչև անկախության ձեռքբերումը՝ 1955 թվականը, ավելի շուտ Ֆրանսիայի պրոտեկտորատն էր համարվում, քան Ալժիրի պես՝ նրա նահանգներից մեկը, իսկ երկրի կառավարիչը՝ Թունիսի Բեյը, օժտված էր զուտ ձևական իշխանությամբ և կատարում էր ֆրանսիական գլխավոր-ռեզիդենտի հանձնարարությունները: Այդուհանդերձ, Ֆրանսիան բավարարված չէր իր հյուսիսաֆրիկյան ձեռքբերումներով: Եթե արևելքում գտնվող Լիբիան չէր հրապուրում, ապա Ալժիրից արևմուտք ընկած Մարոկկոյի արգավանդ հողը չափազանց մեծ հետաքրքրություն էր ներկայացնում Ֆրանսիայի համար: Օսմանյան կայսրությանը երբեք չի հաջողվել իշխանություն հաստատել Մարոկկոյում, սակայն այն հաջողվել է իսպանացիներին, որոնք, 16-րդ դարից սկսած, տիրել են նրա՝ միջերկրականի ափին գտնվող Մելիլլա և Կեոտա քաղաքներին: Բրիտանացիները ձգտում էին ամեն կերպ հեռու պահել Ֆրանսիային Մարոկկոյից: Սակայն 1904 թ.՝ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև բարեկամական դաշնագրի ստորագրումից հետո, ֆրանսիացիները ընդունեցին Եգիպտոսում Անգլիայի ունեցած

հետաքրքրությունները: Ի պատասխան դրա՝ Անգլիան Մարոկկոյում ազատ գործելու իրավունք տվեց Ֆրանսիային: Այնուհետև համաձայնագիր կնքվեց Իսպանիայի և Ֆրանսիայի միջև, որով վերջինս ճանաչեց իսպանական գերիշխանությունը Մարոկկոյի հյուսիսում, իսկ Իսպանիան իր հերթին համաձայնեց Մարոկկոյի մնացած մասում Ֆրանսիայի վերահսկողության հաստատմանը: Օգտագործելով 1907 և 1908 թթ. Մարաքեշում և Տանժեռում բռնկված խռովության ժամանակ մի քանի ֆրանսիացիների սպանության հանգամանքը, ինչպես նաև Մարոկկոյի իշխող սուլթան Մոուլայ Հաֆիդի խնդրանքը՝ Ֆրանսիան շտապեց իր զորքերը մտցնել Մարոկկո ֆրանսիացիներին պաշտպանելու պատճառաբանությամբ: Այդ ընթացքում Գերմանիան, իրեն համարելով գաղութների բաժանման գործընթացից դուրս մնացած, սկսեց հետաքրքրություն ցուցաբերել Մարոկկոյի նկատմամբ, և երբ 1911 թ. ծագեց գերմանական նավի հետ կապված խնդիրը (Ագադիրի), օգտվելով Օսմանյան կայսրության թուլացումից և գերմանացիների նկատմամբ սուլթանի վերաբերմունքից՝ Ֆրանսիան 1912 թ. մարտին Բարձր դռան հետ համաձայնագիր կնքեց, որով նրան տրվեց Մարոկկոյի պրոտեկտորատը, ինչպես նաև ֆրանսիական ջոկատների տեղակայման իրավունքը նույն պայմաններով, ինչ Թունիսում: Դրան հաջորդեց Ֆրանսիայի և Իսպանիայի միջև համաձայնագրի ստորագրումը, ըստ որի՝ իսպանական կառավարությունը ճանաչում էր Ֆրանսիայի պրոտեկտորատը և համաձայնում էր Տանժերը միջազգային գոտու վերածելու առաջարկին:

Մարոկկոյի ժողովուրդը շարունակ պայքարել է երկրում ֆրանսիական ներկայության դեմ: Առաջինը Ռիֆ լեռներից բերբերների առաջնորդ Աբդ ալ-Քարիմն էր, որը, 1921 թ. հռչակելով բերբերական հանրապետություն, ապստամբություն բարձրացրեց սկզբում իսպանացիների, ապա՝ ֆրանսիացիների դեմ, որն ավարտվեց

բերբերների առաջնորդի 21-տարվա բանտարկությամբ: 1927 թ. Մարոկկոյի սուլթան Մոուլայ Յուսուֆին փոխարինեց նրա որդին՝ Մոհամմեդ 5-րդը, որը համարվում է ժամանակակից Մարոկկոյի հիմնադիրը: Նրա ղեկավարությամբ ստեղծված Մարոկկոյի գործողությունների կոմիտեն (Comite d՝Action Marocaine) դարձավ ազգային-ազատագրական պայքարի դրոշակակիրը: Մարոկկոյի ժողովրդի ծավալած երկարատև պայքարի շնորհիվ 1955 թ. Ֆրանսիան ստիպված եղավ ճանաչել Մարոկկոյի անկախությունը:

Թունիսում նույնպես 30-ականների սկզբից ևեթ երիտասարդ իրավաբան Հաբիբ Բուրգիբան լծվել էր ֆրանսիական գաղութարարներից երկրի ազատագրման և անկախության նվաճման դժվարին գործին: 1934 թ., չնայած բազմաթիվ ձերբակալություններին, հիմնելով «Նեո-Դեսթուր» ազգայնական կուսակցությունը՝ Բուրգիբան համառորեն շարունակեց պայքարը Թունիսի անկախության համար, որն իրականություն դարձավ 1955 թվականին: 1956 թ. մարտին Բուրգիբան դարձավ անկախ Թունիսի առաջին վարչապետը:

Ալժիրում մասամբ օբյեկտիվ, մասամբ էլ Մոհամմեդ 5-րդի և Բուրգիբայի նման ազգային առաջնորդներ չունենալու պատճառով ազգային-ազատագրական պայքարը գտնվում էր ցածր մակարդակի վրա: Դրան, անկասկած, նպաստում էր այն հանգամանքը, որ Ֆրանսիան, կորցնելով իր գաղութները Հնդկաչինում, չէր կարող հեշտությամբ հրաժարվել արաբական իր վերջին տիրույթից: Ֆրանսիացիները համարում էին, որ Ալժիրն ավելի բարգավաճ և զարգացած էր դարձել իրենց իշխանության շնորհիվ: Նրանք կարծում էին, որ Ալժիրի հիմնական բնակչության համար անկախությունը որևէ արժեք չունի, իսկ անկախության կոչերը հրահրվում էին Եգիպտոսից՝ Նասերի կողմից: Չնայած 1945 թ. Ֆրանսիացիները տեղական համայնքներում ալժիրցիների ազգաբնակչության քա-

նակն ավելացնելով հասցրին 33-40 տոկոսի, իսկ ընտրության իրավունք ունեցողների թիվը՝ 200.000-ից կես միլիոնի, այնուամենայնիվ նրանք չկարողացան կանխել 1954 թ. նոյեմբերին բռնկված Ալժիրյան ապստամբությունը, որը տևեց մինչև 1962 թ. մարտին ձեռք բերված անկախությունը:

Պատմության մեջ շատ քիչ ապստամբություններ են եղել, որոնք այնքան թանկ են նստել իշխող ուժի վրա, որքան Ալժիրում տեղի ունեցածը: Ֆրանսիան տարեկան մի քանի միլիարդ դոլար էր ծախսում այնտեղ 500.000 զինվոր պահելու համար: «Ալժիրի ազգային-ազատագրական ճակատը» (F.L.N) մի քանի հարյուր ապստամբներից աստիճանաբար հասավ 100.000-անոց հզոր ուժի: Վերոհիշյալ կազմակերպության ստեղծումն ու հաջողություններն անմիջականորեն կապված էին նրա ղեկավար Ահմեդ Բեն Բելլայի հետ, որը, չնայած հնգամյա ձերբակալությանը (1956 թ. դեպի Թունիս թռիչքի ժամանակ ֆրանսիացիներն իջեցրին նրա օդանավը և ձերբակալեցին), այնուամենայնիվ, վերադառնալով Ֆրանսիայից, գլխավորեց անկախ Ալժիրի առաջին կառավարությունը: Ալժիրի անկախացումը հնարավոր դարձավ միայն Ֆրանսիայում գեներալ դե Գոլի վարչապետ ընտրվելուց հետո: Ֆրանսիայի քաղաքական գործիչներից միայն նա ի զորու եղավ դրսևորելու անհրաժեշտ քաղաքական կամք ու խիզախություն՝ «գորդյան այդ հանգույցը» կտրելու համար:

5. Ազգային-ազատագրական պայքարը Սիրիայում և Լիբանանում (1920-1946 թթ.)[89]

1918 թ. հոկտեմբերին թուրքերը վռնդվեցին Սիրիայից և Լիբանանից Հիջազում ապստամբություն բարձրացրած արաբական ջոկատների ուժերով:

Դամասկոսը և Սիրիայի մեծ մասն ազատագրելուց հետո սիրիացիները կասկած չունեին, որ եկել է իրենց անկախ պետությունը ստեղծելու պահը: Նրանք, հավատով լի, ձեռնամուխ եղան ազգային պետական մարմինների կազմավորմանը:

Անհրաժեշտ է նշել, որ այդ շրջանում Սիրիա ասելով հասկանում էին ոչ միայն այն տարածքը, որ զբաղեցնում է ժամանակակից Սիրիան, այլ նաև Լիբանանը, Հորդանանը, Իսրայելը և Պաղեստինը, այսինքն՝ ամբողջ այն տարածաշրջանը, որը կազմում է պատմաաշխարհագրական Սիրիան: Հետևաբար, երբ ասում ենք սիրիական պետական մարմիններ կամ կառավարություն ստեղծելու աշխատանքներ՝ նկատի ունենք նաև վերոհիշյալ երկրները:

1918 թ. հոկտեմբերի 3-ին Դամասկոս է ժամանում Մերձավոր Արևելքում անգլիական ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Ալլենբին, որը, հանդիպելով Ֆեյսալի հետ, փաստորեն, շարադրում է «Սայքս-Պիկո» համաձայնագրի պայմանները: Նա նշում է, որ Լոնդոնից ցուցում է ստացել թույլատրելու ֆրանսիացիներին վերահսկողություն հաստատել Դամասկոս–Հոմս–Համա–Հալեպ գծից

[89] Տե՛ս Հովհաննիսյան Ն., Սարգսյան Հ., Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1946 թթ.), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975, ինչպես նաև Հովհաննիսյան Ն., Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում, Երևան, 1967, Khoury, Philip. Syria and the French Mandate, London, 1987, Nourani, H. Albert. Syria and Lebanon. London, 1946, Ziadeh, A. Nicola, Syria and Lebanon. London, 1957, Zeine, N. Zeine. The Struggle for Arab Independence. Beirut, 1960:

արևմուտք ընկած տարածքի վրա, ներառյալ Բեյրութն ու ամբողջ Լիբանանը:

1918 թ. հոկտեմբերի 24-ին Ալլենբիի հրամանով Պաղեստինը և Սիրիան, որոնք համարվում էին «Թշնամու օկուպացված տարածքներ», բաժանվեցին երեք գոտիների՝ հարավային, հյուսիսային և արևելյան: Հարավային գոտու մեջ էին մտնում Պաղեստինն ու Անդրհորդանանի մի մասը, որն անցնում էր անգլիական, իսկ Հյուսիսային գոտին՝ ֆրանսիացիների ռազմական իշխանության տնօրինության տակ: Վերջինիս մեջ էր մտնում Ակրից մինչև Ալեքսանդրետ ընկած տարածքը: Եվ վերջապես, «արևելյան գոտին», ներառելով արևելյան Սիրիան և Անդրհորդանանի մյուս մասը, հանձնվում էր Էմիր Ֆեյսալին՝ արաբների վերահսկողությանը: Սակայն, անկախ այս բաժանումից, բոլոր 3 գոտիներում էլ, քանի դեռ պատերազմը շարունակվում էր և հաշտության պայմանագիր չէր կնքվել, բարձրագույն իշխանությունը պատկանում էր անգլիական ուժերի հրամանատարին: Նրան էին ենթարկվում 3 գոտիների թե՛ ռազմական և թե՛ քաղաքացիական իշխանությունները:

Պատերազմի ավարտից հետո Փարիզի խաղաղության համաժողովը նույնպես անկախություն չբերեց Սիրիային և Լիբանանին:

1920 թ. ապրիլին՝ երկարատև սակարկումներից հետո, Անտանտի բարձրագույն խորհուրդը, որ նիստ էր գումարել Սան-Ռեմոյում, որոշում կայացրեց Անգլիային հանձնել Իրաքի և Պաղեստինի, իսկ Ֆրանսիային՝ Սիրիայի և Լիբանանի մանդատները:

Արաբական տարածքները բաժանելու մասին Սան-Ռեմոյի որոշումները խոր ցասում առաջացրին արաբական աշխարհում: Դամասկոսում, Հալեպում և երկրի մյուս շրջաններում ու քաղաքներում տեղի ունեցան բազմահազարանոց ցույցեր և զանգվածային գործադուլներ: Սիրիայի արևելյան շրջանները, փաստորեն, հայտնվեցին պատերազմական վիճակում: Չնայած սիրիացիների հերո-

սական դիմադրությանը, այնուամենայնիվ 1920 թ. հուլիսի 25-ին ֆրանսիական զորքերը մտան Դամասկոս: Մինչև հուլիս ամսվա վերջը նրանք գրավեցին Հալեպը և մյուս քաղաքները:

Այսպիսով, Ֆեյսալ թագավորը գահընկեց արվեց, իսկ երկրում հաստատվեց ֆրանսիական մանդատային իշխանություն, որը վերացվեց միայն Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից և 1946 թ. ապրիլին անկախության նվաճումից հետո:

1918-1946 թթ. ընթացքում վարած համառ պայքարի շնորհիվ սիրիական հայրենասիրական ուժերին հաջողվեց հասնել իրենց առջև դրված ծանր ու բարդ խնդրի իրականացմանը՝ երկրի քաղաքական անկախության նվաճմանը:

Սիրիան գրավելուց հետո ֆրանսիան երկրում մտցրեց ռազմական դրություն, որը պահպանվեց մինչև 1925 թվականը: Ֆրանսիական ուժերը դաժան հաշվեհարդար տեսան ապստամբ ժողովրդի հետ: Սիրիայում մոլեգնում էին ռազմական դատարանները, որոնք առանց մանրազնին քննության ձերբակալում և աքսորում էին ազատագրական շարժման մասնակիցներին: Ժողովրդի գլխին մեծ չարիք դարձան ֆրանսիական պատժիչ էքսպեդիցիաները, որոնք ուղարկվում էին ազատագրական պայքարով բռնկված Սիրիայի տարբեր շրջաններ: Սիրիայի հյուսիսային մասերում պարբերաբար բռնկվում էին ապստամբություններ: Արաբ պարտիզանները կատաղի կռիվներ էին մղում ֆրանսիական ջոկատների դեմ:

1920-1925 թթ. ծավալված ազգային-ազատագրական պայքարի ընթացքում ֆրանսիացիները մեծ կորուստներ կրեցին: Ֆրանսիական պաշտոնական տվյալներով սիրիական հայրենասերները ոչնչացրել էին 5 հազար ֆրանսիական զինվոր և սպա: Ֆրանսիան հարկադրված էր Սիրիայում պահել 70-հազարանոց բանակ, որի ծախսերը 1919-1925 թթ. կազմեցին 2 մլրդ 595 մլն ֆրանկ:

Հիշատակման է արժանի 1925 թ. Սիրիայի մայրաքաղաքում ծավալված համաժողովրդական ապստամբությունը: Սիրիական երեք ջոկատներ, հոկտեմբերի 18-ին ֆրանսիացիներից մաքրելով Շաղուր և Մեյդան թաղամասերը, շարժվեցին դեպի քաղաքի կենտրոն: Փողոցային մարտեր մղելով ֆրանսիական զորքերի դեմ՝ ապստամբները գրավեցին քաղաքի մեծ մասը: Ի պատասխան դրա՝ ֆրանսիացիները Դամասկոսը ենթարկեցին հրետանային և օդային ռմբակոծման, որը տևեց երկու օր և դադարեցվեց, երբ օ-տարերկրյա պետությունների հյուպատոսությունները բողոքեցին ու պահանջեցին դադարեցնել ռմբակոծությունը:

Դամասկոսի վայրագ ռմբակոծումը հսկայական վնասներ պատճառեց քաղաքին և բնակչությանը: Ամբողջովին ավերվեցին մի շարք թաղամասեր, հողին հավասարվեցին Միդհատ փաշա, Սակ ալ-Խառռաթին և ուրիշ շուկաներ, քանդվեցին պատմական տասնյակ շենքեր ու ճարտարապետական հուշարձաններ: Քանդ-վեց ալ-Քուաթլի պալատը՝ արաբական արվեստի կոթողներից մե-կը: Պաշտոնական տվյալներով ռմբակոծության զոհ դարձավ 1500 մարդ: Ֆրանսիական զինվորականությունը կարծում էր, թե Դա-մասկոսի ռմբակոծումով վերջ կտրվի սիրիացիների ապստամբութ-յանը: Սակայն այդ հաշվարկները սխալ դուրս եկան: Դամասկոսը և նրա շրջակայքը վերածվեցին ազգային-ազատագրական պատե-րազմի թատերաբեմի: Չնայած 1925-1927 թթ. պատերազմն ա-վարտվեց սիրիացիների պարտությամբ, սակայն այն մեծ նշանա-կություն ունեցավ: Երկու տարի տևած ազգային-ազատագրական պայքարում սիրիացի ժողովուրդն անգնահատելի փորձ ձեռք բե-րեց, որը հետագայում օգտագործեց ֆրանսիական նվաճողներին իր երկրից դուրս վռնդելու համար մղած պայքարի ընթացքում: Ապստամբությունն ավելի ամրապնդեց Սիրիայի տարբեր մասերի

բնակիչների ազգային միասնությունը, ամրացրեց մահմեդական և քրիստոնյա համայնքների բարեկամությունը:

Ֆրանսիացիները թեև ճնշեցին սիրիական ժողովրդի զինված ապստամբությունը, սակայն հասկանում էին, որ պետք է դիմել որոշ զիջումների և համագործակցություն հաստատել սիրիական բուրժուակալվածատիրական վերնախավի հետ:

Ժողովրդավարական ուժերը պահանջում էին Սիրիայի անկախության և միասնության ճանաչում, սահմանադիր ժողովի գումարում և սահմանադրության ընդունում, քաղաքական համաներում, դեմոկրատական իրավունքների հաստատում: 1927 թ. վերջերին ֆրանսիական իշխանությունները թույլատրեցին «Ազգային բլոկ» (Քութլա Վաթանիյա) բուրժուական բարենորոգչական խմբավորման գործունեությունը: 1928 թ. ապրիլի 24-ին բացվեց Սահմանադիր ժողովի առաջին նիստը, որն ընտրեց Սահմանադրություն մշակող հանձնաժողովի կազմը:

1930 թ. մարտի 14-ին ընդունված Սահմանադրությունը ուժի մեջ էր թողնում ֆրանսիական մանդատը և արձանագրում, որ սահմանադրության մեջ որևէ փոփոխություն կարելի է մտցնել միայն հատուկ ֆրանս-սիրիական համաձայնագիր կնքելու միջոցով:

1931 թ. սեպտեմբերին որոշում ընդունվեց դեկտեմբերին խորհրդարանական ընտրություններ անցկացնելու մասին, որոնք անցան բռնության և կեղծիքների պայմաններում՝ հաղթանակ բերելով ֆրանսամետ ֆեոդալական-կոմպրադորական ուժերին:

Ուշագրավ է, որ ֆրանսիացիներն Ազգային լիգայի մանդատային հանձնաժողովում միշտ պնդել են, որ անհրաժեշտ է միջամտել Սիրիայի ներքին կյանքի գործընթացներին՝ պատճառաբանելով, թե իբր սիրիացիները ի վիճակի չեն պետություն կառավարելու: Այս մտադրությամբ կազմվեց ֆրանս-սիրիական պայմանագրի նախա-

գիծը, որը հագեցած էր ֆրանսիացիների՝ երկրի քաղաքական կյանքի բոլոր բնագավառներին միջամտելու ոգով: Այդ պայմանագիրը, որ մեծ նշանակություն պիտի ունենար ֆրանս-սիրիական հետագա հարաբերությունների զարգացման գործում, չէր համապատասխանում Սիրիայի անկախության նպատակներին և նրա ժողովրդի շահերին:

Սիրիական ժողովուրդը միասնաբար հանդես գալով՝ տապալեց այդ պայմանագիրը, որովհետև այն չէր երաշխավորում երկրի լիիրավ անկախությունը:

1936 թ. երբ Ֆրանսիայի խորհրդարանական ընտրություններում հաղթանակած սոցիալիստների ու կոմունիստների վրա հենվող կառավարությունը սեպտեմբերի 9-ին ստորագրեց «Ֆրանսիայի և Սիրիայի միջև բարեկամության և դաշինքի մասին» պայմանագիրը, համաձայն որի, թեև Սիրիան ձևականորեն դառնում էր ինքնուրույն պետություն, բայց նրա կախվածությունը Ֆրանսիայից ամբողջությամբ չէր վերանում[90]:

Ֆրանս-սիրիական պայմանագիրը, այնուամենայնիվ, կարևոր քայլ էր Սիրիայի անկախության նվաճման ուղղությամբ: Ֆրանսիան պաշտոնապես հրաժարվում էր մանդատից և սկզբունքորեն ճանաչում Սիրիայի անկախությունն ու միասնությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ մեծ տերությունների միջև դիվանագիտական ուժեղ պայքար էր գնում Սիրիայի շուրջ, երկրի ներսում դրությունը քանի գնում, այնքան լարվում էր: Սիրիայում մտցվել էր արտակարգ դրություն, գործում էին ռազմական օրենքներ: 1939 թ. սեպտեմբերի 2-ին ֆրանսիական կառավարությունը Սիրիան հայտարարեց ռազմական գոտի և պնդեց բանակային նոր միավորումներ այնտեղ ուղարկելու

[90] 5 տարի պահպանվում էր զորքերի ներկայությունը Սիրիայում, ռազմական ուժերը կարող էին ազատ շարժվել Սիրիայի տարածքով, արտաքին քաղաքական հարցերում Սիրիան պարտավորվում էր խորհրդակցել Ֆրանսիայի հետ:

իր պահանջը: Սիրիայում և արաբական այլ երկրներում գնալով ուժեղանում էր գերմանամետ տրամադրությունը, որը, սակայն, հետզհետե տեղիք տվեց հակահիտլերյան դաշինքի պաշտպանությանն ուղղված աշխատավորական զանգվածների վճռական կեցվածքին:

Ֆրանսիայի կապիտուլյացիան և Վիշիի կառավարությունը Սիրիայի համար նոր դժվարություններ առաջացրին: Զինվորական դիկտատորական ռեժիմի հաստատմամբ, ժողովրդավարական ազատությունների սահմանափակումը և ազգային հայրենասիրական ուժերի գործունեության արգելումը շիկացրել էին քաղաքական մթնոլորտը: Չդիմանալով քաղցին և զրկանքներին՝ սիրիական ժողովուրդը ոտքի ելավ: 1941 թ. փետրվարի վերջին սկսվեց համընհանուր գործադուլը:

1942-1943 թթ. Սիրիայում տեղի ունեցած բացահայտ հակաֆրանսիական ելույթները և երկրում տիրող ընդհանուր դժգոհությունն ակնհայտ ցույց էին տալիս, որ Սիրիայում շատ լուրջ իրադարձություններ են հասունանում:

Որոշ տատանումներից հետո Ֆրանսիան հարկադրված զիջեց: 1943 թ. մարտի 25-ին վերակնքվեց 1930 թ. մարտի 14-ի Սահմանադրությունը:

1943 թ. դեկտեմբերի 22-ին Ֆրանսիան համաձայնագրեր ստորագրեց թե՛ Լիբանանի և թե՛ Սիրիայի հետ՝ այդ երկրներին փոխանցելով կառավարման մի շարք գործառույթներ, իսկ իր ձեռքում պահելով ամենակարևորը՝ ազգային բանակը:

1944-1945 թթ. ստորագրված մի շարք ակտերի շնորհիվ Սիրիայի և Լիբանանի կառավարություններն սկսեցին ինքնուրույն իրականացնել ներքին կառավարման գործառույթները:

1944 թ. հուլիսի 21-ին դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին ԽՍՀՄ-ի հետ: 1946 թ. ապրիլի 17-ին ֆրանսիա-

կան և անգլիական զորքերի տարհանմամբ ավարտվեց սիրիական ժողովրդի անկախության համար մղված պայքարը:

Ինչպես արդեն նշել ենք, 1920 թ. ապրիլին Սան-Ռեմոյում տեղի ունեցած խաղաղության վեհաժողովում որոշվեց Սիրիայի և Լիբանանի կառավարման մանդատը հանձնել Ֆրանսիային:

Լիակատար իշխանությունը Լիբանանում և Սիրիայում անցավ ֆրանսիական գլխավոր հանձնակատարին (կոմիսար), որն իր գործունեության մեջ հիմնվում էր ֆրանսիական բանակի և տարբեր ոլորտներ ներթափանցած հետախուզական ապարատի վրա: Ֆրանսիական իշխանությունները Լիբանանը վերածեցին «Մեծ Լիբանան» հատուկ պետության, որի սահմանները պատերազմից առաջ գոյություն ունեցածի համեմատությամբ շոշափելիորեն ընդլայնվեցին: Նրա կառավարիչն էր ֆրանսիացի նահանգապետը: Լիբանանում ստեղծվել էր վարչական կոմիտե, որն օժտված էր խորհրդակցական գործառույթներով: 1922 թ. այդ կոմիտեն փոխարինվեց ներկայացուցչական խորհրդով:

Լիբանանում իրենց իշխանության ամրապնդման հետ մեկտեղ ֆրանսիական իշխանություններն ազգային-ազատագրական ուժերից նախաձեռնությունը խլելու նպատակով վարչական բարեփոխումներ ձեռնարկեցին: Այսպես՝ 1926 թ. նրանք գործի մեջ դրեցին հանրապետության մի նոր սահմանդրություն, որի համաձայն՝ երկրում ստեղծվում էր երկպալատ խորհրդարան: Այնուհանդերձ, միջազգային հարաբերությունների և պաշտպանության ոլորտները շարունակում էին մնալ ֆրանսիացիների վերահսկողության ներքո: Լիբանանի կառավարության ցանկացած որոշում Ֆրանսիայի գլխավոր հանձնակատարը կարող էր չեղյալ համարել: Սահմանադրությունը, սակայն, երկար չգործեց. 1927 թ. ֆրանսիական իշխանությունները ցրեցին սենատը և 1932 թ. մայիսին երկրում ծայր առած ազգային-ազատագրական շարժման պատճառով վերջ դրե-

ցին սահմանադրության գործողությանը, որը վերականգնվեց 1934 թվականին:

1934 թ. Լիբանանում տնտեսության որոշակի առաջընթաց արձանագրվեց: Տնտեսության մեջ, բնականաբար, իշխող դիրք էր գրավում ֆրանսիական կապիտալը, որն էլ թելադրում էր տնտեսության զարգացման ուղիներն ու առաջնահերթությունները: Երկրում արագությամբ իրականացվում էր ռազմավարական նշանակություն ունեցող օբյեկտների՝ Բեյրութի նավահանգստի, ճանապարհների և ռազմական բազաների շինարարությունը:

1936 թ. նոյեմբերին Լիբանանի և Ֆրանսիայի միջև ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի՝ Ֆրանսիան պարտավորվում էր երեք տարի հետո վերացնել մանդատը, հրաժարվել մաքսակետերի, ֆինանսական և կապի համակարգերի վերահսկողությունից: Սակայն արտաքին քաղաքական հարցերում Լիբանանի կառավարությունը պետք է խորհրդակցեր Փարիզի հետ: Բացի դրանից՝ Լիբանանի տարածքում շարունակում էին մնալ Ֆրանսիայի զինված ուժերը, որոնց գործառույթների մեջ էր մտնում երկրում կրոնական և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը: Փաստորեն, Ֆրանսիան պահպանում էր Լիբանանի ներքին գործերին միջամտելու հնարավորությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը նոր տառապանքներ բերեց Լիբանանի ժողովրդին: 1939 թ. սեպտեմբերին ցրվեց երկրի խորհրդարանը, իսկ կառավարությունը փոխարինվեց «հանրային անվտանգության քարտուղարությամբ»:

1940 թ. հունիսին՝ Ֆրանսիայի կապիտուլյացիայից հետո, ֆրանսիական իշխանությունները հայտարարեցին Լևանտի երկրներում իրենց առաքելության շարունակության մասին: Լիբանանում նորանշանակ գլխավոր հանձնակատար գեներալ Դենցը գործում էր Բեյրութ ժամանած՝ հաշտության իտալա-գերմանական

հանձնաժողովի հսկողության ներքո: 1941 թ. Լիբանան մտան անգլիական զորքերն ու «Ազատ Ֆրանսիայի» զինված ստորաբաժանումները: Ֆրանսիական զորքերի հրամանատար գեներալ Կարտրուն հայտարարեց մանդատի վերացման մասին: Այսպիսով, անգլիական զորքերի և «Ազատ Ֆրանսիայի» զինված ստորաբաժանումներ սկսեցին Լիբանանը զավթելու գործընթացը:

1941 թ. օգոստոսին Անգլիայի կառավարության և գեներալ Շառլ դը Գոլի միջև համաձայնություն ձեռք բերվեց Սիրիայում և Լիբանանում Ֆրանսիայի «հատուկ շահերի» ճանաչման, ինչպես նաև Մերձավոր և Միջին Արևելքում անգլիական ռազմական հրամանատարության գերիշխանության վերաբերյալ:

Անգլո-ֆրանսիական մրցակցության սաստկացման պայմաններում «Ազատ Ֆրանսիա» կոմիտեն Լիբանանի հայրենասիրական ուժերի ճնշման տակ ստիպված եղավ 1941 թ. նոյեմբերի 26-ին պաշտոնապես վերահաստատել մանդատի վերացումն ու Լիբանանին անկախության տրամադրումը: 1943 թ. սկզբին գեներալ Կարտրուն համաձայնություն տվեց լիբանանյան սահմանադրության վերականգնմանն ու խորհրդարանական ընտրությունների անցկացմանը:

Խորհրդարանական ընտրություններում, որոնք կայացան 1943 թ. օգոստոսին, անգլիացիների ակնհայտ աջակցությամբ հաղթանակ տարավ ազգայնական, խոշոր առևտրական բուրժուազիայից և ֆեոդալներից կազմված Սահմանադրական բլոկը՝ Բիշարա ալ-Խուրիի գլխավորությամբ: Վերջինս մեկ ամիս անց ընտրվեց Լիբանանի Հանրապետության նախագահի պաշտոնում, իսկ վարչապետ դարձավ Ռիյադ Սոլիը: Այստեղ ֆրանսիացիները նորից փորձեցին միջամտել Լիբանանի ներքին գործերին՝ ձերբակալելով նախագահին, վարչապետին և կառավարության մի շարք անդամներին ու կասեցնելով սահմանադրության գործունեությունը: Սակայն

Լիբանանի ժողովրդի և ազգային բոլոր ուժերի միահամուռ դիմադրության շնորհիվ 1943 թ. նոյեմբերի 22-ին երկրի խորհրդարանի վրա կրկին ծածանվեց պետական դրոշը: Սահմանադրությունը, նախագահը և կառավարությունը նորից վերականգնվեցին: Այդ օրն այդուհետ հայտարարվեց Լիբանանի ազգային տոնի՝ Անկախության օր:

Բիշարա ալ-Խուրիի և Ռիյադ Սոլիի միջև համաձայնություն ձեռք բերվեց անկախ Լիբանանի պետական կառուցվածքի (Ազգային դաշինք National Pact) սկզբունքների վերաբերյալ, որի համաձայն՝ Լիբանանը հռչակվում էր անկախ ինքնիշխան պետություն, որտեղ քրիստոնյաները պետք է զերծ մնան օտար ուժերին ապավինելուց կամ Լիբանանում նրանց ազդեցության հաստատումից: Երկրի մահմեդական բնակչությունն իր հերթին պետք է ձեռնպահ մնար Սիրիայի կամ արաբական այլ երկրների հետ Լիբանանի միավորման փորձերից:

Ըստ Ազգային դաշինքի՝ Լիբանանը համարվում էր արաբական երկիր և արաբական աշխարհի մի մասը, որն առանց խտրականության հավասարազոր հարաբերություններ պետք է հաստատի արաբական բոլոր երկրների հետ: Ազգային դաշինքի ամենահիշարժան դրույթը վերաբերում էր երկրում առկա կրոնական համայնքների միջև պետական պաշտոնների բաշխմանը: Այն Լիբանանի պետության կառուցվածքի հիմքում ամրագրեց համայնքային սկզբունքը, ինչը թուլացրեց պետական միասնական համակարգի գործունեության արդյունավետությունը, երկիրը դարձրեց էլ ավելի խոցելի արտաքին ուժերի միջամտության համար, ինչն էլ ցայտուն կերպով արտահայտվեց ավելի ուշ՝ երկրում ծավալված երկարատև քաղաքացիական պատերազմում:

Ազգային դաշինքի կանոնակարգի համաձայն՝ երկրի բարձրագույն պետական պաշտոնները բաշխվում էին հետևյալ կերպ.

նախագահի պաշտոնը հատկացվում էր երկրի մարոնի համայնքին, վարչապետինը՝ մահմեդական սուննիներին, իսկ խորհրդարանի նախագահինը՝ մահմեդական շիաներին:

Լիբանանի սահմանադրությամբ և Ազգային դաշինքով ամրագրվում էր Լիբանանի քրիստոնյա բնակչության առաջնային դիրքը: Նախագահն օժտվում էր լայն լիազորություններով՝ վարչապետի և կառավարության անդամների նշանակման և պաշտոնանկության իրավունքով, օրենսդրական և օրենքների հրապարակման, խորհրդարանի լուծարման իրավունքներով:

Ֆրանսիան, այնուամենայնիվ, 1945 թ. ընթացքում ապարդյուն փորձեր արեց Լիբանանում իր ռազմավարական, տնտեսական և մշակութային ազդեցությունը պահպանելու ուղղությամբ: 1946 թ. դեկտեմբերի 31-ին երկրից դուրս բերվեցին վերջին օտարերկրյա ստորաբաժանումները:

6. Սուդանը և Լիբիան անկախության համար մղված պայքարում[91]

Սուդանը («Բիլադ աս-Սուդան»–Սևերի երկիր), որը 19-րդ դարավերջից՝ 1899 թվականից ձևականորեն դրվեց, այսպես կոչված,

[91] Լիբիայի նորագույն պատմության վերաբերյալ տե՛ս Прошин Н., История Ливии, Конец XIX в.-1969 г., Москва, 1975, Аршаруни Н. А., Ливия, Москва, 1965, Маслов Ю. А., Ливия, Экономика и внешняя торговля, М., 1965, Яхимович. З. П., Итало-Турецкая война 1911-1912, Москва, 1967, Segre, G. Claudio. Fourth Shore: The Italian Colonization of Libya. Chicago, 1975, Joffe E.G.H. and McLachan K.S. Social and Economic Development of Libya. Boulder, Colo., 1982, Allen, J.A. Libya since Independence. New York, 1982, Mason, P. John. Island of the Blest: Islam in a Libyan Oasis Community. Athens, Ohio, 1977, Wright, John. Libya: A Modern History. Baltimore,1982: Սուդանի վերաբերյալ տե՛ս Bechtold, K. Peter. Politics in the Sudan: Parliamentary and Military Rule in an Emerging African Nation. New York, 1986, Voll, John and Voll, Sarah. The Sudan. Boulder, Colo., 1985, Malwal, Bona. People and Power in Sudan. London, 1981, Niblock, Tim. Class and Power in Sudan. Albany, 1987, Fluehr-Lobban, Carolyn. Islamic Law and Society in the Sudan. London, 1987:

«կոնդոմինիումի», այսինքն՝ Անգլիայի և Եգիպտոսի համատեղ կառավարման տակ, գործնականում անգլիական գաղութ էր:

1899 թ. ստորագրված կոնվենցիայի համաձայն՝ գերագույն իշխանությունը կենտրոնացված էր անգլիացի գեներալ-նահանգապետի ձեռքում: Վերջինիս ձևականորեն նշանակում էր եգիպտական Խեդիվը, սակայն, պարտադիր՝ անգլիական կառավարության համաձայնությամբ: Մինչև 1910 թվականը, երբ նրան կից ստեղծվեց հիմնականում անգլիացիներից բաղկացած խորհուրդ, Սուդանի միանձնյա կառավարիչը գեներալ-նահանգապետն էր:

Երկիրը բաժանված էր նահանգների, որոնք ղեկավարում էին անգլիացի սպա-նահանգապետերը: Սուդանի արտաքին քաղաքականության հետ կապված բոլոր հարցերը վերահսկում էին անգլիացիները: Համաձայնագրում ասված էր. «Հյուպատոսային ոչ մի ներկայացուցիչ չի կարող հավատարմագրվել Սուդանում առանց բրիտանական կառավարության համաձայնության»: Անգլիացիները գերիշխող դիրքեր էին գրավում Սուդանի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում:

Ինչ վերաբերում է եգիպտացիներին, ապա նրանց ներկայությունը Սուդանում սահմանափակվում էր Խարտումում տեղակայված զինվորական ստորաբաժանումով, ինչպես նաև գաղութային վարչակազմի մի քանի տասնյակ եգիպտացի պաշտոնյաներով: Այդուհանդերձ, Եգիպտոսը Անգլիայի հետ հավասարապես կիսում էր բազմահազարանոց բանակի և գաղութային ուռճացված ադմինիստրացիայի պահպանման ծախսերը:

Սուդանն Անգլիայի հումքային կցորդն էր և վերջինիս բամբակ, փղոսկր, կաշի և էկզոտիկ այլ ապրանքներ էր մատակարարում: Անգլիացիների վերահսկողության տակ էին գտնվում ներմուծումն ու արտահանումը, տրանսպորտը, ֆինանսները, բամբակի և այլ գյուղմթերքների նախնական վերամշակումն ու արդյունաբերական

բոլոր գործարանները, ինչպես նաև ամենաբերրի հողերն (հիմնականում բամբակի խոշոր պլանտացիաները) ու օգտակար հանածոները:

1916 թ.ի աստատվեցին Սուդանի ներկայիս սահմանները. անգլիացիները վերացրին Դարֆուր մարզի ինքնավարությունը:

Սուդանում անգլիացիները ստեղծեցին քաղաքացիական ծառայության համակարգ՝ Հնդկաստանի տարբերակով, որտեղ անդամագրվում էին հիմնականում Քեմբրիջի համալսարանն ավարտած անգլիացիներ (որոնց անվանում էին «կապույտ»): Այսպես կոչված «Սևերի կառավարումը կապույտների կողմից» տևեց մինչև Սուդանի անկախացումը՝ 1956 թ. հունիսի 1-ը: Նույն թվականին Սուդանը դարձավ ՄԱԿ-ի և Արաբական երկրների Լիգայի անդամ: Սակայն անգլիացիների համար հեշտ չանցան Սուդանի գաղութացման այդ տարիները: 20-ական թվականներին բազմաթիվ զանգվածային ցույցեր և ապստամբություններ տեղի ունեցան: Այսպես՝ 1921 թ. սուդանյան 9-րդ ստորաբաժանման երիտասարդ կապիտան Ալի Աբդ ալ-Լատիֆին ստեղծեց Միացյալ սուդանական ցեղերի միությունը, որը զինված ապստամբության կոչ էր անում և պահանջում Սուդանի անկախության հռչակումը: Անգլիացիները դաժանաբար ճնշեցին խռովությունը, իսկ կազմակերպիչներն Ալի Աբդ ալ-Լատիֆի գլխավորությամբ մահապատժի ենթարկվեցին:

1925 թ.՝ Սուդանի գեներալ-նահանգապետ Լի Սթեկի սպանությունից և ազգային-ազատագրական շարժման ճնշումից հետո, Անգլիան միակողմանի չեղյալ հայտարարեց 1899 թ. Եգիպտոսի հետ Սուդանի համատեղ կառավարման համաձայնագիրը՝ երկրում ուղղակի հաստատելով ռազմական դիկտատուրա:

1929-1933 թթ. տնտեսական ճգնաժամից հետո որոշակիորեն աշխուժացավ երկրի տնտեսական վիճակը: Բամբակագործության զարգացումը, որը տնտեսության հիմնական ուղղություններից մեկն

էր, իր դրական ազդեցությունն ունեցավ նաև տնտեսության այլ ճյուղերի, մասնավորապես տրանսպորտի զարգացման վրա: Կառուցվեցին ընդհանուր 346 կմ երկարությամբ երկաթուղային գծեր, աստիճանաբար աճեց ոռոգման կառույցների շինարարությունը, գործարկվեցին բամբակի վերամշակման նոր գործարաններ: Սուդանում աստիճանաբար ձևավորվում էր ազգային բուրժուազիան, որը թեև հիմնականում փոքր և միջին ձեռնարկատիրությամբ էր զբաղված, այնուամենայնիվ հետագա առաջընթացի և բարեփոխումների հույս էր ներշնչում:

Բամբակի՝ արագորեն ընդլայնվող ցանքատարածությունների համար Նեղոսի ջրերի օգտագործման խնդիր ծագեց: Եգիպտական բուրժուազիային սիրաշահելու նպատակով 1929 թ. Անգլիան «Նեղոսի ջրերի մասին» համաձայնագիր կնքեց Եգիպտոսի հետ, որի համաձայն՝ պարտավորվում էր Սուդանի տարածքում ոռոգման աշխատանքներ կատարելիս հաշվի առնել Եգիպտոսի շահերը:

Հաշվի առնելով Սուդանի քաղաքական շրջաններում Եգիպտոսի հետ համագործակցության և հակագաղութային համատեղ պայքար վարելու վերաբերյալ հաճախակի դարձող խոսակցությունները՝ Լոնդոնը 1936 թ. վերականգնեց Սուդանի համատեղ կառավարման վերաբերյալ 1899 թ. եգիպտա-անգլիական համաձայնագրի գործողությունը՝ երկու երկրների միջև անվստահություն սերմանելու և հակասություններ առաջացնելու նպատակով: 1936 թ. ստորագրված պայմանագրի համաձայն՝ Եգիպտոսը նորից իրավունք ստացավ իր զորքերը Սուդան ուղարկելու:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Սուդանը դարձավ ֆաշիստական բլոկի դեմ դաշնակիցների պայքարի հիմնական հենակետերից մեկը: Երկրում կառուցվեցին արդյունաբերական և սննդի նախնական վերամշակման գործարաններ, ռազմական հանդերձանքի արտադրության արհեստանոցներ, օդանա-

վակայաններ, որտեղ տեղակայվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների և Անգլիայի օդուժը:

Պատերազմից հետո նկատելի էր քաղաքական ակտիվությունը երկրում: 1945 թ. ստեղծվեցին երկու խոշոր կուսակցություններ՝ «Եղբայրների կուսակցություն» (Հիզբ ալ-Աշիկա) և «Ազգի կուսակցություն» (Հիզբ ալ-Ումմա): Երկու քաղաքական կազմակերպություններն էլ հանդես էին գալիս Սուդանի անկախության օգտին: Սակայն, եթե առաջինը կողմնակից էր Եգիպտոսի հետ համատեղ պայքարի, իսկ հետագայում՝ միավորման, ապա երկրորդը տրամադրված էր անգլիացիների հետ համագործակցության և անկախության աստիճանական ձեռքբերման:

Ազգային-ազատագրական շարժումը պառակտելու նպատակով անգլիական իշխանությունները 1948 թ. հունիսի 18-ին հանդես եկան սահմանադրական բարեփոխումների նախագծով, որը գենեռալ-նահանգապետին կից գործող խորհրդի փոխարեն նախատեսում էր Գործադիր կոմիտե (կառավարություն) ստեղծել. վերջինում կեսը պետք է լինեին սուդանցիներ, մյուս կեսը՝ անգլիացիներ: Նախատեսվում էր նաև Օրենսդիր ժողովի (խորհրդարանի) ստեղծում, հաստատվում էին ընտրությունների կարգը, գործադիր իշխանության լիազորություններն ու պարտականությունները:

Սուդանցիները մերժեցին անգլիացիների այդ նախագիծը, իսկ մի քանի տարի անց՝ 1952 թ. դեկտեմբերին, երկրի քաղաքական բոլոր կուսակցություններն ու խմբավորումները միավորվեցին «Ազգային արհմիութենական կուսակցության» (ԱԱԿ) մեջ, որը գլխավորեց Իսմայիլ ալ-Ազհարին:

1953 թ. փետրվարի 12-ին Կահիրեում ստորագրված եգիպտա-անգլիական համաձայնագրով ճանաչվում էր Սուդանի ինքնորոշման իրավունքը, հաստատվում էր երեքամյա անցումային շրջան, որի ընթացքում երկրում պետք է գործեին ժամանակավոր

խորհրդարանն ու ազգային կառավարությունը: Գերագույն իշխանությունն անցումային շրջանում շարունակում էր մնալ գեներալ-նահանգապետի ձեռքում:

Նույն տարվա նոյեմբերին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարավ ԱԱԿ-ն, որը հանդես էր գալիս Սուդանից անգլիական զորքերը դուրս բերելու և Եգիպտոսի հետ միություն կազմելու օգտին:

1954 թ. հունվարի 9-ին գեներալ-նահանգապետը հրապարակեց Սուդանի անկախ զարգացման անհրաժեշտության մասին իր հատուկ որոշումը: Նույն օրը ԱԱԿ առաջնորդ Իսմայիլ ալ-Ազհարին կազմեց ազգային անցումային առաջին կառավարությունը: Չնայած անգլիական իշխանությունների՝ Սուդանի անկախացման գործընթացը ձգձգելու և հավելյալ դժվարություններ հարուցելու փորձերին՝ 1955 թ. օգոստոսին Խարտումում գումարվեց խորհրդարանի արտակարգ նիստ, որի ընթացքում բոլոր կուսակցությունները ներկայացնող պատգամավորները միաձայն հանդես եկան Սուդանին անհապաղ անկախության տրամադրման և երկրից օտարերկրյա ուժերի դուրսբերման օգտին:

Մի քանի ամիս անց անգլիական և եգիպտական զորքերը թողեցին երկիրը: Պետության ղեկավարի պարտականություններն իրականացնելու նպատակով Սուդանի խորհրդարանը ընտրեց 45 հոգուց բաղկացած Գերագույն հանձնաժողով: 1956 թ. հունվարի 1-ին Խարտումում տեղի ունեցավ Սուդանի անկախության հռչակման հանդիսավոր արարողությունը:

Լիբիան հաճախ անվանում են «Եգիպտոս առանց Նեղոսի»: Նրա մշակվող հողատարածքները սահմանափակվում են Միջերկրականի մերձափնյա շրջաններով: Սիրտի ծոցը պատմականորեն Լիբիան բաժանում է երկու մասի. մեկը Տրիպոլիտանիա կոչվող դեպի Թունիս ընկած արևմտյան հատվածն է, մյուսը՝ Կիրենաիկան

զբաղեցնում է դեպի Եգիպտոս ընկած արևելյան մասը: Տրիպոլիտանիան պատմությանը հայտնի է որպես Փյունիկիայի գաղութ, իսկ Կիրենաիկան բնակեցված է եղել հույներով: Մշակութապես և սոցիալապես այդ երկու մասերը զարգացման տարբեր պատմություն են ունեցել. Կիրենաիկան արաբական է եղել հազարամյակի ընթացքում, իսկ Տրիպոլիտանիան՝ Լեվանտական: Մի կողմը բնակեցված է եղել հիմնականում քոչվոր ցեղերով, մյուսը՝ գյուղացիներով և նստակյաց քաղաքաբնակներով:

Չնայած Լիբիան 642 թ. գրավել էին արաբները, սակայն մինչև 11-րդ դարը լիովին արաբականացված չէր: 16-րդ դարում Լիբիան ընկնում է Օսմանյան տիրապետության տակ: 20-րդ դարի սկզբին Իտալիան Գերմանիայից և Ավստրո-Հունգարիայից Լիբիան բռնազավթելու համաձայնություն ստացավ որպես Եռյակ դաշնության վերականգնման փոխհատուցում: Այդ պահից սկսած՝ Իտալիան իր դիրքերն աստիճանաբար ամրապնդեց աֆրիկյան այս երկրում: Լիբիա էին գործուղվում իտալացի առևտրականներ և միսիոներներ, հետազոտողներ ու հետախույզներ: Իտալական կիսապաշտոնական մամուլը սկսեց Լիբիան անվանել «Ավետյաց երկիր»:

1911 թ. Իտալիան դիմեց ռազմական գործողության, սակայն Հռոմին չհաջողվեց կոտրել երկրի արաբական ցեղերի դիմադրությունը:

Բալկաններում նոր պատերազմի սպառնալիքը միայն ստիպեց Թուրքիային 1912 թ. հոկտեմբերի 18-ին ստորագրելու Լոզանի հաշտության պայմանագիրը, ըստ որի՝ Թուրքիան զուտ ձևականորեն չճանաչեց Իտալիայի ինքնիշխանությունը Լիբիայի նկատմամբ, բայց պարտավորվեց այնտեղից դուրս բերել իր զորքերը և ետ կանչել պաշտոնյաներին՝ երկիրը, փաստորեն, հանձնելով իտալացիներին: Չնայած Լիբիայի արաբական ցեղերի համառ պայքա-

ին՝ իտալացիները 1914 թ. իրենց ենթարկեցին երկրի ներքին շրջանները:

Միջազգային իրավիճակը բարենպաստ էր լիբիական ժողովրդի համար այն առումով, որ Իտալիան, 1915 թ. մայիսին մտնելով պատերազմի մեջ և պարտություններ կրելով Եվրոպայում, ինչպես նաև Լիբիան կորցնելու մտավախությունից դրդված, ստիպված եղավ բանակցություններ սկսել լիբիացիների հետ:

1917-1922 թվականներին մի կողմից Իտալիայի, մյուս կողմից Սայիդ Մուհամեդ Իդրիս ալ-Սենուսիի[92] և տրիպոլիտանական առաջնորդների միջև կնքվեցին մի շարք պայմանագրեր, որոնցով նախատեսվում էր կրակի դադարեցում, Կիրենաիկայի երկու մասերի միջև (իտալացիների կողմից գրավված և Իդրիս ալ-Սենուսիի կողմից ղեկավարվող) առևտրի վերսկսում և այլն:

Այլ էր իրավիճակը Լիբիայի մյուս շրջանում՝ Տրիպոլիտանիայում: 1918 թ. նոյեմբերին այնտեղ հանրապետություն էին հռչակել ազգային-ազատագրական շարժման առաջնորդներ Սուլեյման ալ-Բարունը, Ռամադան ալ-Սուվեյխիլը և Ահմեդ ալ-Մուրայիդը: Հանրապետական կառավարությունը երկրամասի մայրաքաղաք էր ընտրել Գարիանը:

1920 թ. հոկտեմբերին նոր պայմանագիր կնքվեց Իդրիս ալ-Սենուսիի հետ, որի համաձայն՝ վերջինս ստացավ էմիրի տիտղոսը, իսկ նրա իշխանությունը ճանաչվեց Կիրենաիկայի ողջ տարածքում:

Լիբիայում իրավիճակը կտրականապես փոխվեց Իտալիայում ֆաշիստների իշխանության գալով (1922 թ. հոկտեմբեր): Լիբիայի

---

[92] Սենուսիտների՝ մահմեդական կրոնաքաղաքական միաբանությունը հիմնադրվել է Կիրենաիկայում 19-րդ դարի կեսին Մուհամմեդ իբն ալ-Սենուսիի կողմից: Այն արտահայտում էր ցեղերի ֆեոդալականացվող վերնախավի շահերը և կոչ էր անում վերականգնել իսլամի սկզբնական մաքրությունը: Իդրիս ալ-Սենուսին 1917 թ. Ահմեդ ալ-Շարիֆից հետո դարձավ միաբանություն ղեկավար:

իտալացի քաղաքացիական գեներալ-նահանգապետը փոխարինվեց զինվորականով, որը չեղյալ հայտարարեց նախկինում ստորագրված բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը: Հատուկ նպատակադրված՝ իտալական իշխանությունները թշնամանք էին սերմանում բերբերների և արաբների միջև՝ վերջիններիս դեմ օգտագործելով բերբերներից կազմված ջոկատները: Այդ իրավիճակում բռնկվեց ազգային-ազատագրական պայքարը Օմար ալ-Մուխթարի գլխավորությամբ, որով 1923-1931 թթ. պարտիզանական գործողությունների ընթացքում նյութական և մարդկային շոշափելի կորուստներ պատճառեց իտալացիներին: Լիբիացիները հերոսացնում էին Օմար ալ-Մուխթարին ու նրա մասին առասպելներ պատմում: Սակայն 1931 թ. սեպտեմբերին նա վիրավորվեց, գերի ընկավ ու մահապատժի ենթարկվեց:

Լիբիայում ընթացող ռազմական գործողությունների հետևանքով շոշափելիորեն նվազեց բնակչության թիվը: Այսպես՝ միայն Կիրենաիկայում 1923-1929 թթ. տեղահանվեց կամ սպանվեց շուրջ 142.000 մարդ:

Լիբիան անհրաժեշտ էր Իտալիային նաև որպես հարմար հենակետ Աֆրիկա և Մերձավոր Արևելք ներթափանցման համար: Իտալացի գաղութարարները նաև տնտեսական շահույթ ստանալու հեռավոր նպատակներ էին մշակում: Այդ ուղղությամբ Իտալիայի իշխանությունները հողերի բռնագրավման և ակտիվ բնակեցման քաղաքականություն էին վարում: Սննդի արդյունաբերության կազմակերպման և իտալական ապրանքների սպառման շուկա ապահովելու նպատակով Հռոմն այնտեղ մեծ թվով իտալացիներ էր գործուղում: Վերջիններիս համար արտոնյալ պայմաններ ստեղծելու մասին 1922 թ. հուլիսի 10-ին ընդունված որոշմամբ չմշակվող ու ամայի բոլոր հողերը հայտարարվում էին պետության սեփականություն: Դրան հետևեցին մի շարք այլ որոշումներ, որոնք արտոնում

էին հողի բռնազավթումը տարբեր «պայմանների» առկայության դեպքում: Իտալիայի հողագործներն ու Լիբիայում պատերազմին մասնակցած զինվորներն անհատույց հողատարածքներ էին ստանում: Ընդհանուր առմամբ գյուղատնտեսությամբ զբաղվելու և երկրում բնակություն հաստատելու նպատակով Լիբիա էին տեղափոխվել շուրջ 110 հազար իտալացիներ:

Փաստորեն, Լիբիան վերածվում էր գյուղատնտեսական երկրի, որտեղ մեծածավալ ներդրումներ էին անում իտալացիները: 30 տարվա ընթացքում իտալական ներդրումները գյուղատնտեսության մեջ կազմեցին շուրջ 159 մլն ԱՄՆ դոլար: Ինչ վերաբերում է արդյունաբերության զարգացմանը Լիբիայում, ապա այդ ուղղությամբ չնչին ներդրումներ էին կատարվում, այն էլ հիմնականում սննդի վերամշակման բնագավառում: Երկրում գործում էր ընդամենը 426 գործարան և նման կազմակերպություն, որոնք հիմնականում մանր և փոքրաթիվ բանվորներից կազմված ձեռնարկություններ էին՝ ձեռքի աշխատանքի գերակայությամբ:

Սկսած 1933-1934 թվականներից, երբ Իտալիայի ղեկավար Մուսոլինին Եթովպիան գրավելու ծրագրեր էր մշակում, Լիբիան նույնպես արժանացավ իտալացիների սևեռուն ուշադրությանը: Լիբիայի ֆեոդալական վերնախավին սիրաշահելու նպատակով մի շարք քայլեր ձեռնարկվեցին՝ տեղական վարչական միավորներում արաբներին ընդգրկելու, բռնագրավված որոշ հողատարածքներն արաբ ֆեոդալներին վերադարձնելու, բնիկներին գյուղատնտեսական կոնցեսիաներ և վարկեր տրամադրելու ուղղությամբ:

Իտալացիները մեծ նշանակություն էին տալիս լիբիական զորքերին: Ֆաշիստական խորհրդի որոշմամբ և Լիբիայի գեներալ-նահանգապետի գլխավորությամբ ստեղծվեց լիբիական կորպուսի հատուկ գլխավոր հրամանատարություն: Նախապատրաստվելով պատերազմին՝ իտալացիները սկսեցին Լիբիայում արագորեն կա-

ռուցել ճանապարհներ, ռազմական բազաներ և ռազմավարական նշանակություն ունեցող այլ օբյեկտներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին Իտալիան մեծաթիվ ռազմական ուժեր ուներ տեղակայված Լիբիայում (շուրջ 250.000): Պատերազմի ընթացքում գրավելով Եգիպտոսը և Արևելյան Աֆրիկայում Անգլիայի որոշ գաղութները՝ Իտալիան նպատակ ուներ ստեղծելու իտալական գաղութային կայսրություն: Հիշարժան է, որ եթե իտալական բանակում մարտնչում էր լիբիական կորպուսը, ապա բրիտանական զինված ուժերի հետ կողք կողքի կռվում էր լիբիական 14.000-անոց ստորաբաժանումը: Դեռևս 1940 թ. Մուհամեդ Իդրիսը համաձայնության էր եկել անգլիացիների հետ, որ օժանդակության փոխարեն պատերազմի հաջող ավարտի դեպքում Բրիտանիան կօգնի նրան ամրապնդվել Կիրենաիկայում: Լիբիական ուժերի ցուցաբերած օգնության համար Մուհամեդ Իդրիսին շնորհվեց Մեծ Բրիտանիայի դեսպանի կոչում: Պետք է նշել, որ իտալական զորքերի և Եգիպտոսում գտնվող բրիտանական ուժերի (շուրջ 86.000) միջև տեղի ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում թերևս ամենահայտնի հրասայլային ճակատամարտը: Ռազմական գործողությունները Լիբիայի տարածքում շարունակվեցին մինչև 1943 թ. հունվար՝ երբ իտալա-գերմանական զորքերը դուրս քշվեցին երկրից:

Պատերազմի ավարտից հետո մեծ տերությունները հանդիպեցին իտալական գաղութների ճակատագիրը որոշելու համար: Սակայն հետպատերազմյան շրջանում տարվելով նոր համաշխարհային համակարգի ձևավորման խնդրով, հետապնդելով իրար հակասող շահեր՝ աշխարհի հզորները չկարողացան որևէ գործնական արդյունքի հասնել Լիբիայի հարցի շուրջ: Հարցի վերջնական լուծումը հանձնարարվեց ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեային, որի Քաղաքական կոմիտեն որոշեց՝ Լիբիան պետք է դառնա անկախ ոչ ուշ,

քան 1952 թ. հունվարի 1-ը: Գործընթացին աջակցելու նպատակով Լիբիա մեկնեց ՄԱԿ-ի հանձնակատարը: 1951 թ. դեկտեմբերի 24-ին հռչակվեց Լիբիայի Միացյալ Թագավորությունը՝ Իդրիս աս-Սենուսիի իշխանության ներքո:

ԳԼՈՒԽ Բ

ԱՐԱԲԱ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ. ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ

1. Իսրայել պետության ստեղծումը[93]

Երկրորդ համաշխարհային պատերազմը հիմնովին փոխեց Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական պատկերը՝ արագացնելով տարածաշրջանում արաբական երկրների անկախացման և հրեաների՝ սեփական պետություն ստեղծելու դարավոր երազանքի իրականացման գործընթացը:

Իսրայելի պետության ստեղծումն իրականացվեց սիոնիստական գաղափարախոսությամբ ղեկավարվող հրեական կազմակերպությունների ծրագրված նպատակասլաց աշխատանքի և լավ կազմակերպված լոբբիստական գործունեության շնորհիվ: Եթե մինչև Երկրորդ աշխարհամարտը սիոնիստների հիմնական ջանքերն ուղղված էին գաղութատեր ամենահզոր ուժերից մեկի՝ Մեծ

[93] Թեմայի վերաբերյալ տե՛ս Пырлин Е., 100 лет противоборства (1897-1997). Генезис, Эволюция, современное состояние и перспективы решения палестинской проблемы, Москва, 2001, Примаков Е., Анатомия ближневосточного конфликта, Москва, 1978, Дмитриев Е., Палестинский узел, Москва, 1978, Шейндлин П. Рэймонд. Летописи еврейского народа, Москва. 1997, Кон-Шербок Ден, эль-Алами Дауд. Палестино-израильский конфликт. Две точки зрения, Москва, 2002, Рубби Антонио. Палестинский Марафон. 30 лет борьбы за мир на Ближнем Востоке. М., 2001, Бар-Зохар Микаэль. Бен-Гурион. Ростов на Дону, 1998, Гойтейн Ш. Д., Евреи и арабы. Мосты культуры, Москва, 2001, Said, Edward W. The Question of Palestine, Routledge and Kegan Paul, London, 1980, Ibrahim Abu-Lughod, Transformation of Palestine (Evanston, Ill.: Northeastern University Press, 1971), Walid Khalidi, From Haven to Conquest: Readings in Zionism and the Palestine Problem until 1948 (Beirut: Institute for Palestine Studies, 1971), Sami Hadawi, Bitter Harvest, Palestine 1914-67 (New York: New World Press, 1967). Տե՛ս նաև աշխատության վերջում առաջարկվող գրականության ցանկը:

Բրիտանիայի կողմը, ապա պատերազմից հետո, քաջ գիտակցելով համաշխարհային բեմահարթակի վրա ուժերի փոփոխվող հարաբերակցությունն ու ձևավորվող երկբևեռ աշխարհակարգը, սիոնիստները շրջվեցին դեպի Միացյալ Նահանգներ: ԱՄՆ-ում հրեաների իրագործած արդյունավետ քարոզչության շնորհիվ ամերիկացիների զգալի մասը համակվեց Հոլոքոստը (ցեղասպանությունը) վերապրած հրեա ժողովրդի և Իսրայելի պետության գոյատևման նկատմամբ ինչպես զուտ մարդկային համակրանքի, այնպես էլ «պատասխանատվության» զգացումներով[94]: ԱՄՆ-ն դատապարտված էր պաշտպանելու հրեաների դատը:

1948 թ. Իսրայել պետության ստեղծումից հետո Մերձավոր Արևելքը վերածվեց միջազգային քաղաքականության բարդ հանգույցի և դարձավ երկրագնդի թեժ կետերից մեկը: Այդ հակամարտության պատմությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է իմանալ, որ հրեաները գրեթե ամբողջովին արտաքսվել էին Պաղեստինից դեռևս Հռոմեական կայսրության ժամանակաշրջանում: Պաղեստինը դարեր շարունակ մնացել է հրեաների համար որպես Սիոնի զգացական կենտրոն և «Ավետյաց երկիր»: Հրեաների ներգաղթի առաջին ալիքը Պաղեստին տեղի ունեցավ 19-րդ դարի վերջին Եվրոպայում[95], այնուհետև՝ Ուկրաինայում ու Ռուսաստանում հրեաների հետապնդումների հետևանքով:

Որպես հակազդեցություն՝ Եվրոպայում աստիճանաբար սկսեց ձևավորվել սիոնիզմի գաղափարախոսությունը: Վերջինիս առաջնորդ Թեոդոր Հերցլը[96] հիմնավորեց միասնական հրեական ազգի

---

[94] "Foreign Affairs", Vol. 71, No. 4, 1994, p. 110.

[95] Եվրոպայում հակասեմականության՝ հրեաների նկատմամբ անհանդուրժողականության առաջին դրսևորումներն ի հայտ եկան Ֆրանսիայում «Դրեյֆուսի» հայտնի գործի հետևանքով: Ֆրանսիական բանակում ծառայող ազգությամբ հրեա սպա Դրեյֆուսը մեղադրվում էր Գերմանիայի օգտին լրտեսության մեջ, սակայն երկարատև դատավարությունից հետո նա արդարացվեց:

[96] Թ. Հերցլը (1860-1904) ավստրիացի լրագրող էր, մինչ Դրեյֆուսի գործն անգամ չէր էլ հիշում իր հրեական արմատների մասին: Նրա գաղափարները հիմնականում

գոյությունը և «մշտական հակասեմականության» առկայության պայմաններում՝ նախնիների հայրենիքում հրեաների համախմբման անհրաժեշտությունը: Հայտարարելով Պաղեստինը ամբողջ աշխարհի հրեաների «հոգևոր և ազգային կենտրոն»՝ սիոնիստները կոչեցին այն Իսրայել Երկիր (Էրեց Իսրայել):

1897 թ. Բազելում կայացած սիոնիստական առաջին համաժողովում (Շվեյցարիա) ընդունվեց, այսպես կոչված, «Բազելյան ծրագիրը», որի համաձայն՝ պետք է գործնական քայլեր ձեռնարկվեին Պաղեստինում «հրեական օջախ» ստեղծելու ուղղությամբ: Համաժողովում ստեղծվեց նաև «Սիոնիստական համաշխարհային կազմակերպությունը»:

Անհաջողությամբ ավարտելով Օսմանյան իշխանությունների հետ վերոհիշյալ նպատակի իրականացմանն ուղղված շփումները՝ սիոնիստական առաջնորդները Պաղեստինի գաղութացման հարցով դիմեցին եվրոպական մեծ տերությունների աջակցությանը: Այդ նպատակով սկզբում նրանք իրենց հույսերը կապեցին Գերմանիայի հետ, որը 20-րդ դարի վերջին արդեն նախապատրաստվում էր աշխարհի բաժանմանը և Պաղեստինը դիտարկում էր որպես ռազմավարական կարևոր տարածաշրջան: Սակայն շուտով սիոնիստական ղեկավարները փոխեցին կուրսը և փորձեցին ձեռք բերել Անգլիայի օժանդակությունը, որը նույնպես հետաքրքրություն էր ցուցաբերում Պաղեստինի նկատմամբ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Պաղեստինում բնակվող հրեաների թիվը կազմում էր ընդամենը 55 հազար, այսինքն՝ 700.000 բնակչության միայն 8 %-ը: Մնացած 92 %-ը արաբներ էին, որոնց 4/5 մասը մահմեդականներ էին, իսկ մյուսը՝ քրիստոնյաներ:

ամփոփված են 1896 թ. Վիեննայում հրատարակված՝ «Հրեական պետություն. Հրեական հարցի լուծման ժամանակակից փորձը» աշխատության մեջ:

Ինչպես գիտենք, 1916 թ. մայիսին Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև կնքված Սայքս-Պիկոյի պայմանագրի համաձայն՝ Պաղեստինը հանձնվում էր Ֆրանսիային, ինչը առ ոչինչ էր դարձնում Հուսեյն-Մակ Մահոն նամակագրությամբ արաբական անկախ պետություն ստեղծելու՝ անգլիացիների խոստումը:

1917 թ. նոյեմբերի 2-ի Բալֆուրի հռչակագրով[97] Բրիտանիան խոստանում էր աջակցել հրեաներին Պաղեստինում «ազգային տուն» (national home) հիմնելու գործում[98]: Սակայն 1919-1920 թթ. Փարիզում գումարված խաղաղության համաժողովը չլուծված թողեց գրավյալ տարածքների, մանդատների, փոխհատուցումների (ռեպարացիաների), այդ թվում՝ և Պաղեստինի հարցերը: Վերջինս իր ձևակերպումը ստացավ 1920 թ. ապրիլի 19-26-ին Սան-Ռեմոյում, որտեղ վերջնականապես վճռվեց Պաղեստինի մանդատը Մեծ Բրիտանիային հանձնելու հարցը:

Պետք է նշել, որ սկզբնական շրջանում, մասամբ իրենց քանակական գերազանցության, մասամբ էլ այն պատճառով, որ Պաղեստինում ապրող հրեա հնաբնակները դեմ էին հրեական պետության ստեղծմանը, արաբները լուրջ դիմադրություն չցուցաբերեցին սիոնիստական ներկայությանը Պաղեստինում: Կարծում ենք, որ արաբների նման բարյացակամության պատճառներից էր նաև այն, որ Մեքքայի շարիֆ Հուսեյնը շարունակում էր հավատալ բրիտանացիների այն հավաստիացումներին, որ հրեական բնակավայրե-

---

[97] Բրիտանիայի արտգործնախարար Արթուր Ջեյմս Բալֆուրի նամակն ուղղված բրիտանաբնակ հրեաների ներկայացուցիչ, խոշոր ֆինանսիստ Վոլթեր Ռոթշիլդին: Բալֆուրի հռչակագիրը հրեաների համար դարձավ ոչ միայն կարևորագույն իրավաբանական փաստաթուղթ, որն առաջին անգամ հաստատում էր Պաղեստինում «հրեական տուն» ստեղծելու հրեաների իրավունքը, այլև որոշակիորեն կանխորոշեց սկզբնական շրջանում (մինչև Արաբական ապստամբությունը) Լոնդոնի հրեամետ քաղաքականությունը Պաղեստինում:

[98] Stein, Leonard, The Balfour Declaration, London, 1961, Sanders, Ronald. The High Walls of Jerusalem: A History of the Balfour Declaration and the Birth of the British Mandate for Palestine. New York, 1983.

ը ոչ մի կերպ չեն սահմանափակի արաբների քաղաքական և տնտեսական ազատությունը: Անգամ, երբ 1928 թ. մարտին սիոնիստական հանձնաժողով ժամանեց Պաղեստին՝ հրեաների և բրիտանական մանդատային իշխանությունների միջև կապեր հաստատելու նպատակով, արաբները շարունակեցին հանգիստ և անվրդով դիտել, թե ինչպես են հրեաները միջոցառումների ընթացքում հրապարակավ բարձրացնում իրենց դրոշն ու կատարում ազգային օրհներգը: Ավելին, 1919 թ. հունվարին Անդրհորդանանի էմիր Ֆեյսալը համաձայնագիր էր ստորագրել սիոնիստների առաջնորդ Խ. Վայցմանի հետ, որով աջակցություն էր հայտնել Պաղեստին հրեական ներգաղթին, ինչպես նաև պարտավորվել էր պահպանել հրեական սրբավայրերն ու կրոնի ազատ դավանումը: Իրենց հերթին հրեաները խոստացել էին տնտեսական աջակցություն ցուցաբերել արաբներին:

Մի խոսքով, Պաղեստինում բրիտանական մանդատի առաջին հինգ տարիների ընթացքում արաբները ընդհանուր առմամբ հանդուրժողական կեցվածք էին ընդունել հրեաների նկատմամբ: Եվ դա այն պայմաններում, երբ մանդատային իշխանությունները բացահայտ հրեամետ քաղաքականություն էին վարում (Բրիտանական գրասենյակում (Colonial office) աշխատող արաբներին փոխարինում էին հրեաներով և այլն), իսկ հրեաները 1920 թ. կայացած խորհրդաժողովի ընթացքում հայտարարում էին, որ սիոնիզմի նպատակը ոչ թե հրեաների համար «ազգային տուն», այլ ազգային անկախ պետություն ստեղծելն է: Արաբների նման կեցվածքը թերևս կարելի է բացատրել. ի տարբերություն հրեաների՝ նրանք չունեին ոչ միայն սիոնիզմին հակադրելու համարժեք գաղափարախոսություն ու մշակված ծրագիր, այլև այնքան անհրաժեշտ ազգային միասնություն: Արաբ առաջնորդների փոխհակասությունները, ինչպես նաև նրանց հետապնդած տարբեր նպատակները խոչընդ-

դոտում էին միասնական և արդյունավետ քաղաքականության իրականացմանը:

Պաղեստինի արաբ բնակչությունը, անշուշտ, անհանգստացած էր հրեական ներգաղթով, որի համար բրիտանական իշխանությունները սահմանել էին տարեկան քվոտա՝ 16.500 մարդ: Արաբների բողոքներից հետո՝ 1921 թ., ներգաղթը կասեցվեց, մինչև որ 1922 թ. գաղութների հարցերով նախարար Վինսթոն Չերչիլը չհստակեցրեց Պաղեստինում բրիտանական կառավարության վարած քաղաքականությունը: Նախարարի անունից հրապարակվեց մի փաստաթուղթ, որում մասնավորապես ասվում էր՝ «անպատասխանատու հայտարարություններն այն մասին, որ Անգլիան նպատակ է հետապնդում ստեղծելու ամբողջությամբ հրեական Պաղեստին, անիրատեսական են և չեն համապատասխանում Բրիտանիայի իրական նպատակներին: Խոսքը ոչ թե ամբողջ Պաղեստինը հրեական ազգային տան վերածելու մասին է, այլ որ այդպիսի տուն պետք է ստեղծվի Պաղեստինում»:

1931 թ. Պաղեստինում հրեա բնակչությունն արդեն ավելացել էր 2 անգամ և կազմում էր ընդհանուր բնակչության 17 %-ը, հրեա նորաբնակների թիվը հասել էր 170.000-ի: Արաբներին մտահոգում էր այն, որ Պաղեստինի համար չափազանց կարևոր այնպիսի հարցեր, ինչպիսիք էին ներգաղթը, հողային խնդիրները գտնվում էին 1929 թ. ստեղծված Հրեական գործակալության (Jewish Agency) «արդյունավետ» վերահսկողության տակ:

Ներգաղթի հետ մեկտեղ հրեաները հատուկ մշակված քաղաքականություն էին իրականացնում Պաղեստինում հողատարածքների ձեռքբերման ուղղությամբ: Այդ նպատակով ստեղծված Հրեական ազգային հիմնադրամը ձեռնամուխ էր եղել Պաղեստինում հողերի գնմանը արտասահմանում բնակվող հրեաների հանգանակությունների հաշվին: Հիմնադրամի գնած հողը չէր կարող վերա-

վաճառվել: Այն հրեա գաղթականներին վարձակալության էր տրվում 35-49 տարով: Այսպես՝ արդեն 1928 թ. հիմնադրամի կառավարման տակ էր գտնվում 214 հազ. դունամ հողատարածք (դունամ=0,1 հեկտար)[99]:

30-ականների առաջին կեսին հրեաներն ամրապնդեցին իրենց դիրքերը նաև Պաղեստինի արդյունաբերության ասպարեզում, ինչին հիմնականում նպաստեց երկու հանգամանք. առաջին, Հրեական գործակալության ստեղծումից հետո վերջինիս հաջողվեց Պաղեստինի գաղութացման գործընթացում ներգրավել Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ-ի հրեական համայնքները: Երկրորդ, ներգաղթի ավելացման հետ մեկտեղ մեծանում էր նաև Պաղեստին տեղափոխված գործարար մարդկանց թիվը: Վերջիններիս թվին էին պատկանում 5 հազար ԱՄՆ դոլարից ավել կապիտալ ներմուծողները: Մասնավոր կապիտալի ներհոսքի շարունակական աճը նյութական բարենպաստ հիմքեր էր ստեղծում Պաղեստինի տնտեսության վրա հրեաների վերահսկողությունն հաստատելու համար: Եթե 1930 թ. արդյունաբերության մեջ ներդրվել էր շուրջ 2 մլն պաղեստինյան ֆունտ, ապա 1937 թ. այդ թիվը հասավ 11 մլն-ի, իսկ հրեաներին պատկանող քաղաքային արդյունաբերական ձեռնարկությունների քանակը 1930 թ. 2,5 հազարից 1937 թ. հասավ շուրջ 5,5 հազարի:

Չնայած այդ հարցերի կարգավորմանն ուղղված մանդատային իշխանությունների փորձերին՝ ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ռուսաստանում հրեական գործակալության ծավալած քարոզչության շնորհիվ բրիտանական իշխանությունները ստիպված թույլ տվեցին

---

[99] Հողերի ձեռքբերումը հեշտացնելու նպատակով մանդատային իշխանությունները 1928 թ. հանրային կարիքների համար հողերի վաճառքի մասին ընդունեցին հատուկ օրենք, որը թույլ էր տալիս անգլիական բարձրագույն հանձնակատարին բռնագրավել ցանկացած հողատարածք՝ հնարավորություն ընձեռելով գաղութային իշխանություններին ռազմական բազաներ, երկաթուղի, նավահանգիստ կառուցելու և հանձնելու կոնցեսիայիով:

հրեաներին գործելու շահավետ ու իրենց նպատակահարմար ձևով՝ միաժամանակ խուսափելով հակահրեական դիրքորոշման համար մեղադրանքներից:

1933 թ. Հիտլերի իշխանության գալով և Գերմանիայում հրեաների հետապնդումների հետևանքով հրեական ներգաղթը Պաղեստին եռապատկվեց՝ տարեկան 10.000-ից հասնելով 30.000-ի: 1934 թ. այն կազմեց 43.000, 1935 թ.՝ 62.000: Երբ Պաղեստինում հրեա բնակչության տոկոսը հասավ 30-ի, մանդատային իշխանությունները վերջապես սկսեցին գիտակցել, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել արաբ բնակչությանը պաշտպանելու ուղղությամբ: Բրիտանական կառավարությունը հայտարարեց, որ Պաղեստինի օրենսդրական խորհուրդը կհաստատվի համամասնական ներկայացուցչության հիմքի վրա, ինչը ձեռնտու էր Պաղեստինի բնակչության մեծամասնությունը կազմող արաբներին, սակայն հակընդդեմ էր սիոնիստների հիմնական ծրագրի իրականացմանն ու հրեական պետության ստեղծմանը: Հրեաների ակտիվ գործողություններից և Բրիտանիայի խորհրդարանում ծավալված բուռն քննարկումներից հետո կառավարության այդ առաջարկի ընդունումը, փաստորեն, տապալվեց հատկապես Չերչիլի զգացական ելույթի շնորհիվ:

Արաբները նորից խաբվեցին: 1936 թ. ապրիլին ուշացումով հիմնադրվեց «Արաբական բարձրագույն կոմիտե» (Arab Higher Committee) կազմակերպությունը, որը կոչված էր ղեկավարելու արաբների պայքարը Պաղեստինում: Երուսաղեմի մահմեդականների առաջնորդ մուֆթիի Հաջ Ամինը ընտրվեց նրա նախագահ և անմիջապես համընդհանուր գործադուլ հայտարարեց Պաղեստինի ամբողջ տարածքում: Արաբները սպառնում էին շարունակել գործադուլն այնքան ժամանակ, մինչև բրիտանական կառավարությունը ընդհանրապես չկասեցնի հրեական ներգաղթը: Զուգահեռա-

բար արաբները գործողություններ էին ձեռնարկել բրիտանական կառավարության հեռախոսային, ճանապարհային և երկաթուղային համակարգերի աշխատանքը խափանելու նպատակով: Բրիտանացիները թեև արհամարհեցին մուֆթիի պահանջները, սակայն ի վիճակի չեղան անտեսելու դրան հաջորդած բռնություններն ու զանգվածային ելույթները: Բրիտանական կառավարությունը մեկ անգամ ևս փորձեց շեղել արաբների ուշադրությունը դիվանագիտական միջոցներով՝ հայտարարելով Թագավորական հանձնաժողովի ստեղծման մասին, որը պետք է զբաղվեր Պաղեստինում տիրող իրավիճակով: Բրիտանացիների այդ քայլն այս անգամ էլ տվեց իր արդյունքը: Արաբական բարձրագույն կոմիտեի կոչով 6 ամիս տևած գործադուլը դադարեցվեց հիմնականում Անդրհորդանանի էմիր Աբդալլահի և արաբական այլ ղեկավարների ճնշման տակ: Սակայն արաբները թույլ տվեցին քաղաքական չափազանց լուրջ սխալ: Տեղեկանալով, որ մանդատային իշխանությունները կազմել են հրեական ներգաղթի նոր ժամանակացույց, նրանք մուֆթիի գլխավորությամբ որոշում կայացրին բոյկոտել Թագավորական հանձնաժողովի աշխատանքները: Ավելի անտրամաբանական, ավելի անիրատեսական ու անարդյունավետ պայքարի միջոց դժվար էր մտածել: Հանձնաժողովը ժամանեց Պաղեստին, հանդիպեց հարյուրավոր բրիտանացիների և հրեաների, իսկ այցելության վերջում՝ նաև որոշ արաբների հետ: Եվ ահա ծնվեց մի փաստաթուղթ՝ Թագավորական հանձնաժողովի վերջնական զեկույցը, որն իր էությամբ խիստ հրեամետ և հակաարաբական էր: Զեկույցում անհիմն էին նկատվում արաբների դժգոհությունները, իսկ վերջիններիս պահանջները՝ մանդատի պայմանների ներքո ինքնակառավարման հաստատություններ ստեղծելու վերաբերյալ, համարվում էին «ոչ գործնական»: Միաժամանակ առաջարկվում էր Պաղեստինը բաժանել 2 մասի՝ արաբների և հրեաների միջև: Բոլորին է

հայտնի Պաղեստինի բաժանման վերաբերյալ հանձնաժողովի վերոհիշյալ զեկույցը: Սակայն հաճախակի է մոռացության մատնվում այն հանգամանքը, որ բրիտանական այդ առաջարկով բնակչության 30 %-ը կազմող հրեաներին տրվում էր Պաղեստինի մշակելի հողերի 60 %-ը: Հրեաներին էին հատկացվում հյուսիսում Գալիլեյը, արևմուտքում՝ հարուստ Էսդրաելոն շրջանը, իսկ արաբներին՝ վայրի Հուդեայի և Սամարիայի (Հորդանան գետի Արևմտյան ափը) ու Նեգևի անապատային շրջանները:

Արաբները, զայրացած Բրիտանիայի նման քաղաքականությունից, 1937 թ. օգոստոսին պատերազմ հայտարարեցին: Երուսաղեմի մուֆթիի Հաջ Ամինը սպառնաց մահապատժի ենթարկել բոլոր այն արաբներին, որոնք կհամաձայնեն կամ կընդունեն Պաղեստինի բաժանման գաղափարը: Ի պատասխան սեպտեմբերին արաբների ձեռքով բրիտանական շրջանային հանձնակատարի (British District Commissioner) սպանությանը՝ բրիտանական իշխանությունները խիստ պատժիչ միջոցառումներ ձեռնարկեցին Պաղեստինի արաբ բնակչության նկատմամբ: Առաջին հերթին ուժեղացվեցին Պաղեստինում տեղակայված բրիտանական զինվորական ստորաբաժանումները, զենք ու զինամթերք պահելու համար մահապատիժ մտցվեց, արգելվեց Արաբական բարձրագույն կոմիտեի գործունեությունը, նրա անդամներից շատերը ձերբակալվեցին և արտաքսվեցին երկրից: Չնայած բրիտանացիների վերոհիշյալ գործողություններին և մարդկային կորուստներին (1936-1937 թթ. ընթացքում արաբները կորցրին 1000 մարդ, իսկ հրեաները՝ 82)՝ արաբները շարունակեցին իրենց պայքարը Պաղեստինում:

1938 թ. ապրիլին՝ 18-ամսյա արյունահեղությունից հետո, Բրիտանիան ստիպված եղավ մեկ այլ հանձնաժողով ուղարկել Պաղեստին: Այն նորից առաջարկեց Պաղեստինի բաժանումը: Այս անգամ հրեաներին էին հատկացվում մերձափնյա հարթավայրերը,

իսկ Գալիլեյն ու Նեգևը դրվում էին Բրիտանական մշտական մանդատի տակ: Ինչ վերաբերում է արաբներին, ապա նրանք կտրվում էին Նեգևով Կարմիր ծովից՝ իրենց տրամադրության տակ պահելով միայն Սամարիան, Հուդեան և անապատային Գազայի հատվածը: Հասկանալի է, որ արաբները թշնամաբար ընդունեցին բրիտանական նաև այդ ծրագիրը: Նրանք մանդատային իշխանություններից պահանջեցին ամբողջովին կասեցնել հրեաների ներգաղթը Պաղեստին և ստեղծել ներկայացուցչական արաբական կառավարություն: Հրեական գործակալությունը իր հերթին մերժեց ներգաղթի սահմանափակման և արաբական կառավարության ստեղծման գաղափարը և ձեռնամուխ եղավ զինվորական միավորումների ստեղծմանը, որոնք պետք է պայքարեին արաբների դեմ: Միևնույն ժամանակ հրեաները սկսեցին անօրինական ներգաղթի իրականացումը: 1938-1939 թթ. շուրջ 35 հազար հրեա մուտք գործեց Պաղեստին՝ առանց մանդատային իշխանությունների թույլտվության:

Պայքարն արաբների և հրեաների միջև գնալով սաստկանում էր: Բրիտանացիների համար անբարենպաստ իրավիճակ էր ստեղծվել Եվրոպայում, երբ Մյունխենից հետո Հիտլերը գրավեց Չեխոսլովակիան: Անհրաժեշտ էր արագ կարգավորել իրավիճակը Պաղեստինում՝ Սուեզի ջրանցքի պաշտպանությանն ուղղված ռազմավարությունն առավելագույնս ապահով իրականացնելու համար: 1939 թ. սկզբին Լոնդոնում կազմակերպվեց համաժողով՝ Պաղեստինի արաբների, Հրեական գործակալության և արաբական երկրների մասնակցությամբ: Միանգամայն կանխատեսելի էր, որ համաժողովը չի կարողանա գործնական որևէ արդյունք ունենալ: Արաբները պահանջում էին անկախ Արաբական Պաղեստին, որտեղ ապահովված կլինեն հրեա փոքրամասնության բոլոր իրավունքները: Հրեա պատվիրակները հենց սկզբից բացառեցին այն-

պիսի լուծում, որն անգամ կնվազեցներ Պաղեստինում Հրեական պետության ստեղծման հնարավորությունը: Հասկանալի է հրեաների նման կեցվածքը. տասնյակ միլիոնավոր գումարներ էին ներդրվել Պաղեստինում հողեր գնելու և բնակավայրեր ստեղծելու համար, որոնց թիվն արդեն հասել էր 250-ի: Եթե 1920 թ. հրեա և արաբ բնակչության հարաբերակցությունը մեկը տասներկուսի էր, ապա 1939 թ. այն արդեն կազմում էր մեկը երկուսի՝ կես միլիոնանոց հրեա բնակչությամբ:

1939 թ. մայիսին բրիտանական կառավարությունը հայտարարեց խնդրի կարգավորման իր սեփական տարբերակը: Այն հայտնի է «Սպիտակ թուղթ» (White Paper) անվան տակ և շատ կարևոր փաստաթուղթ է համարվում այս տարածաշրջանի հիմնախնդրի համար: Մանդատին հակառակ՝ «Սպիտակ թուղթը» ճանաչում էր անկախ կառավարություն ստեղծելու, հրեական ներգաղթից ու հողային ձեռքբերումներից պաշտպանվելու արաբների իրավունքը: Բրիտանացիները, ընդունելով իրենց քաղաքականության «չաշխատող» և «անարդար» լինելու հանգամանքը, գտնում էին, որ Պաղեստինում հրեական պետության ստեղծումը կհակասի նախկինում արաբներին տված իրենց խոստումին, քանի որ այն կհանգեցնի արաբ բնակչության, նրա լեզվի և մշակույթի նվաստացմանը: Բրիտանացիներն առաջարկում էին սահմանել 10-ամյա անցումային շրջան, որից հետո Պաղեստինը պետք է դառնար երկազգային պետություն, որտեղ կառավարությունը կազմված կլինի արաբներից և հրեաներից այնպիսի ձևով, որը «կապահովեր յուրաքանչյուր համայնքի կենսական շահերի պաշտպանությունը»: Ներգաղթի խնդրի վերաբերյալ պաշտոնական Լոնդոնն առաջարկում էր հաջորդ 5 տարիների ընթացքում թույլատրել 75 հազար հրեաների մուտքը Պաղեստին, ապա՝ ներգաղթի հետ կապված բոլոր հարցերն անմիջականորեն համաձայնեցնել Արաբների հետ: Բրիտանական բարձրագույն հանձնակատարին իրավունք էր վերապահ-

վում հրեաներին արգելել հողեր գնելու Պաղեստինի որոշ հատվածներում:

«Սպիտակ թուղթը» կարելի է հաջողություն համարել արաբների համար: Քսան տարվա ընթացքում առաջին անգամ Բրիտանական կառավարությունը հրապարակավ ընդունեց Պաղեստինում արաբ մեծամասնության իրավունքները: Եթե հրեաներն ու արաբները ընդունեին բրիտանացիների այդ առաջարկը և համաձայնեին կառուցել երկազգ պետություն, ապա ոչ միայն հնարավոր կլիներ խուսափել Իսրայելի պետության ստեղծումից հետո տեղի ունեցած արյունահեղությունից, այլև Պաղեստինը՝ որպես տարածաշրջանի ամենազարգացած և մտավոր հզոր ներուժ ունեցող երկիր, վերածել Մերձավոր Արևելքում առաջընթացի և զարգացման հիմնական երաշխավորի:

1939 թ. դեռևս հնարավոր էր ապահովել հրեաների և արաբների համատեղ խաղաղ ու բարիդրացիական կյանքը, եթե երկու կողմերի ղեկավարները պատրաստ լինեին փոխզիջումների: Սակայն ցավալին այն էր, որ արաբներն ու հրեաները կտրականապես մերժեցին ընդունել բրիտանական առաջարկները՝ երկուստեք ձգտելով վերահսկողություն հաստատել ամբողջ Պաղեստինում: Արաբական քաղաքական վերնախավից և ոչ մեկը ի վիճակի չեղավ հասնել հարցի կարգավորմանն այն ժամանակ, երբ արաբները դեռևս պահպանում էին երկուսը-մեկի քանակական առավելությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի սանձազերծման հետևանքով Բրիտանիայի ուշադրությունը կենտրոնացավ եվրոպական ճակատի վրա, իսկ «Սպիտակ թուղթը» այդպես էլ մնաց թղթի վրա՝ չիրագործված: Չնայած արաբների և հրեաների միջև հաստատված հարաբերական խաղաղությանը՝ սիոնիստները սկսեցին պատրաստվել Բրիտանիայի դեմ պայքարին: Նրանք սկսեցին զինյալ խմբերի վարժեցումն ու զինումը՝ համընթաց ահաբեկչական

գործողություններ իրագործելով Պաղեստինում բրիտանական բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ (Բրիտանական նախարար-ռեզիդենտ Լորդ Մոյնի սպանությունը, Պաղեստինի բարձրագույն հանձնակատար Հարոլդ Մակ Մայքլի մահափորձը):

Պատերազմի ավարտից հետո սիոնիստները կրկնապատկեցին իրենց ջանքերը՝ Պաղեստինը վերահսկելու և այդ նպատակով միջազգային աջակցություն ապահովելու ուղղությամբ: Հիտլերի իրականացրած ոճրագործությունը հրեաների նկատմամբ բարենպաստ պայմաններ ստեղծեց հրեական պետություն ստեղծելու համար, որն էլ փայլուն կերպով օգտագործեցին սիոնիստները:

1947 թ. փետրվարի 17-ին Բրիտանիայի արտգործնախարար Էռնստ Բեվինը հայտարարեց. «Նորին գերազանցության կառավարությունը չունի այն ուժը, որպեսզի կարողանա Պաղեստինը հանձնել կա՛մ արաբներին, կա՛մ հրեաներին, կա՛մ էլ անգամ բաժանել այն նրանց միջև: Ուստի մենք հանգեցինք այն եզրակացությանը, որ միակ հնարավոր տարբերակը փոխանցելն է խնդիրը «Միացյալ ազգերի կազմակերպության» իրավասությանը»: Բրիտանիան հայտնեց 1948 թ. մայիսի 15-ին Պաղեստինից իր ուժերը դուրս բերելու մտադրության մասին: Մինչև նշված ժամկետը նորաստեղծ ՄԱԿ-ը ստիպված եղավ ուղիներ փնտրել Պաղեստինի խնդիրը կարգավորելու համար: Այդ պահին միջազգային քաղաքական շրջանակներում 2 տարբերակ էր քննարկվում Պաղեստինի ապագայի վերաբերյալ: Մեկը երկիրը հրեական և արաբական երկու պետությունների բաժանելու առաջարկն էր, որն ընդունելի էր հրեա և անընդունելի արաբ համայնքի համար, իսկ մյուսը՝ միացյալ պետության (երկրում բնակվող մահմեդական, քրիստոնյա և հրեա համայնքների հավասար ներկայությամբ) ստեղծման առաջարկն էր, որն ընդունվում էր արաբների և մերժվում հրեաների կողմից:

Խնդիրը քննարկելու և առաջարկություններ ներկայացնելու նպատակով 1947 թ. մայիսին ՄԱԿ-ը Պաղեստինի հատուկ կոմիտե

(UNSCOP) նշանակեց: Պաղեստին այցելությունից հետո՝ 1947 թ. սեպտեմբերի 1-ին, կոմիտեն ներկայացրեց զեկուցագիր, որում մասնավորապես նշված էր, որ «միայն բաժանման միջոցով է հնարավոր գտնել իրար հակասող այս երկու ազգային ձգտումների (արաբների և հրեաների) ամբողջական արտահայտումը, ինչպես նաև օգնել երկու ժողովուրդներին, որ նրանք՝ իբրև անկախ պետություններ, իրենց արժանի տեղը զբաղեցնեն միջազգային հանրության և Միացյալ ազգերի ընտանիքում»: 1947 թ. նոյեմբերին վերոհիշյալ զեկուցագիրը հանձնվեց ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի քննարկմանը: Նոյեմբերի 29-ին սիոնիստական շարժման առաջնորդներն ԱՄՆ օժանդակությամբ աննախադեպ եռանդուն լոբբիստական գործունեություն սկսեցին, իսկ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան 33 կողմ և 13 դեմ ձայներով քվեարկեց Պաղեստինի բաժանման և բրիտանական մանդատի ավարտից հետո՝ Իսրայելի պետության ստեղծման օգտին[100]:

Քվեարկությունից հետո Արաբական լիգայի առաջին գլխավոր քարտուղար Աբդուլ Ռահման Հասսան Ազզամը[101] ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի դահլիճից դուրս գալիս նախազգուշացրեց. «Բաժանման գիծը Պաղեստինում դառնալու է կրակի և արյան գիծ»[102]: Եվ իսկապես, մայիսի 15-ին՝ բրիտանական ուժերի դուրսբերումից և Իսրայելի պետության հռչակումից անմիջապես հետո, արաբական երկրների զինվորական ստորաբաժանումները մտան Պաղեստին: Բռնկվեց առաջին արաբա-իսրայելյան պատերազմը՝ սկիզբ դնելով

---

[100] ԽՍՀՄ-ը նույնպես քվեարկեց բաժանման օգտին և մեծապես նպաստեց Իսրայելի պետության ստեղծմանը: Млечин Л., Иосиф Сталин-создатель Израиля, Москва, 2006.

[101] Աբդուլ Ռահման Հասսան Ազզամը կամ Ազզամ Փաշան (Abdul Rahman Hassan Azzam (*արաբ*: عبد الرحمن حسن عزام) եգիպտացի դիվանագետ էր և Արաբական պետությունների լիգայի գլխավոր քարտուղարի պաշտոնը զբաղեցրել է 1945-1952 թթ.:

[102] Bregman, Ahron, El-Tahri, Jihan. The Fifty Rears War. Israel and the Arabs. Penguin Books, BBC Books, London, 1998, p. 26.

20-րդ դարի դեռևս չկարգավորված, ամենատևական ու արյունալի հակամարտությանը:

2. 1948 թ. առաջին արաբա-իսրայելյան պատերազմը[103]

Արաբական ղեկավարները ոչ միայն չէին հասցրել լավ նախապատրաստվել պատերազմին, այլև նրանց միջև առկա էին տարաձայնություններ Իսրայելի հետ պատերազմ վարելու անհրաժեշտության հարցի շուրջ: Այսպես՝ Արաբական բարձրագույն կոմիտեի նախագահ և աքսորում պաղեստինյան գլխավոր խոսնակ Հաջ Ամին Հուսեյնին արաբական բանակների՝ Պաղեստին ներխուժման դեմ էր արտահայտվում: Նա չէր թաքցնում իր այն մտավախությունը, որ Պաղեստին ներխուժման դեպքում Հորդանանի թագավոր Աբդալլահը կօգտագործի առիթը Երուսաղեմը գրավելու և այն իր թագավորությանը բռնակցելու համար: Եգիպտոսի վարչապետ Մահմուդ Ֆահմի Ալ-Նողրաշի փաշան նույնպես ընդդիմանում էր ներխուժմանը: Վերջինիս համոզմամբ Եգիպտոսի առաջնային նպատակը ոչ թե սիոնիստների դեմ պատերազմ վարելն էր, այլ Սուեզի ջրանցքից Բրիտանիայի հեռացումն ապահովելը: Իսկ Պաղեստին ներխուժելու միակ կողմնակից Ազզամ փաշան շարունակաբար ահազանգ էր հնչեցնում արաբական կողմի դանդաղկոտության և անպատրաստ վիճակի վերաբերյալ: Նրա օգնականի խոսքերով արաբները կարծում էին, որ հրեաներն արաբական կանոնավոր բանակները տեսնելուն պես պետք է անմիջապես փա-

[103] Արաբա-իսրայելյան առաջին պատերազմի վերաբերյալ տե՛ս Kimche, Jon. Seven Fallen Pillars. New York: Praeger, 1953, O'Ballance, Edgar. The Arab-Israeli War, 1948. New York, 1957, Safran, Nadav. From War to War.: The Arab-Israeli Confrontation, 148-1967. New York, 1969, Rubin, Barry. The Arab States and the Palestine Conflict. Syracuse, N. Y., Syracuse University Press, 1981, Pablo De Azcarate. Mission in palestine, 1948-1952. Washington, 1966:

խուստի դիմեն: Ներխուժումից ընդամենը մեկ շաբաթ առաջ միայն եգիպտական բանակի ստորաբաժանումները պատերազմին նախապատրաստվելու հրաման ստացան: Եգիպտացի բարձրաստիճան զինվորականներից մեկի կարծիքով բանակը ո՛չ բարոյական, ո՛չ էլ ռազմական առումներով պատրաստ չէր պատերազմական գործողություններին: Պատերազմին մասնակցող ամենամեծ՝ 15-հազարանոց եգիպտական բանակը չուներ մարտական գործողությունների անհրաժեշտ փորձ ու կարողություններ և հույսը դրել էր իրաքյան, սիրիական, լիբանանյան և հորդանանյան ուժերի օգնության վրա:

Մեկ ամսվա ընթացքում եգիպտական հարձակումը փաստորեն կասեցվեց, իսկ հրեական զորքերը համոզվեցին այն բանում, որ արաբական ուժերը սակավաթիվ են ու թերզինված, և որ նրանցից վախենալու լուրջ հիմքեր չկան: Արաբական ուժերին հաջողվեց միայն գրավել Երուսաղեմի մի մասը, որը բաժանման ծրագրով միջազգային քաղաք էր համարվում: Հրեական բանակը չնայած որոշ առաջխաղացում արձանագրեց, այնուամենայնիվ ժամանակի կարիք ուներ զինամթերք ձեռք բերելու և հաջողությունն ամրապնդելու համար: Հունիսի 10-ին հաստատված զինադադարի ընթացքում Իսրայելին հաջողվեց մեծ քանակությամբ զենք ստանալ Չեխոսլովակիայից[104]: Կարծում ենք, որ հիմնականում վերոնշյալ հանգամանքի շնորհիվ Իսրայելն ի վիճակի եղավ ոչ միայն շարունակել, այլև հաղթանակած դուրս գալ այդ պատերազմից:

Հուլիսի 8-ին, երբ արաբները, խախտելով զինադադարը, վերսկսեցին ռազմական գործողությունները, հրեաները հարձակումներ ձեռնարկեցին և հուլիսի 11-ին գրավեցին Թել-Ավիվի մոտակայքում գտնվող Լիդդա և Ռամլա արաբական գյուղերը, որից հետո

[104] Սառը պատերազմի տարիներին օտարերկրյա պետություններին զենքի առաքումները քողարկելու նպատակով ԽՍՀՄ-ն այն իրականացնում էր հիմնականում Չեխոսլովակիայի միջոցով:

սկսվեց արաբ բնակչության զանգվածային արտագաղթը նաև այլ գյուղերից ու քաղաքներից: Ընդհանուր առմամբ, պատերազմի հետևանքով շուրջ 700.000 պաղեստինցիներ դարձան մշտական փախստականներ: Հուլիսի 16-ին՝ Իսրայելի կառավարության նիստերից մեկի ընթացքում, պետության հիմնադիր և երկրի վարչապետ Բեն-Գուրիոնը նկատեց. «Նրանք (Պաղեստինցիները) պարտվեցին և փախուստի դիմեցին: Ներկայումս անհրաժեշտ է արգելել նրանց վերադարձը: Եվ ես նույնպես դեմ կլինեմ նրանց վերադարձին պատերազմից հետո»:

Հոկտեմբերին եգիպտական 9-րդ բրիգադի շուրջ 5 հազար զինվոր ընկավ շրջափակման մեջ Ֆալուգա կոչվող շրջանում: Իրավիճակը շտկելու նպատակով հոկտեմբերի 24-ին եգիպտական և իսրայելյան հրամանատարությունը հանդիպեց հրեական Կիբուց Գատում: Պատերազմը գործնականում կարելի էր արդեն ավարտված համարել:

Արաբական բանակները պարտություն կրեցին: Պատերազմը պաշտոնապես ավարտվեց 1949 թ. փետրվարին, երբ հունական Ռոդոս կղզում Եգիպտոսը համաձայնեց հաշտություն կնքել այն պայմանով, որ Ֆալուգայում գերի ընկած բոլոր զինվորներն իրենց զենքերով ազատ արձակվեն: Միջազգային սահմանագիծը Պաղեստինի մանդատի և Եգիպտոսի միջև համարվեց զինադադարի գիծ եգիպտական և իսրայելյան բանակների միջև: Մի քանի ամսվա ընթացքում Հորդանանը, Սիրիան և Լիբանանը նույնպես առանձին զինադադարի համաձայնագրեր ստորագրեցին Իսրայելի հետ:

Իսրայելը, հաղթանակած դուրս գալով պատերազմից, ի վիճակի եղավ պահպանել գրավված որոշ տարածքներ, ինչպիսիք էին Ռամլան, Լիդդան և Բիրշեբան, որոնք Պաղեստինի բաժանման ծրագրով Արաբական հատվածի մաս էին կազմում:

Պաղեստինի արաբները պատերազմից հետո փորձեցին փրկել դրությունը՝ Պաղեստինի պետության ստեղծման հարցը մտցնելով Արաբական լիգայի խորհրդի օրակարգ: Քննարկելով Իսրայելի կողմից դեռևս չգրավված Արևմտյան ափում և Գազայի հատվածում պաղեստինյան պետության ստեղծման հնարավորությունները, տեղի տալով Հորդանանի թագավոր Աբդալլահի ճնշմանը՝ խորհրդի անդամներն այդպես էլ որևէ հստակ որոշման չհանգեցին: Պատերազմից հոգնած և իրենց սեփական երկրներում բազում չլուծված ներքաղաքական խնդիրներ ունենալով՝ Սիրիան, Եգիպտոսը և Իրաքը չցանկացան ավելորդ հակամարտության մեջ մտնել այս անգամ արաբական երկրի՝ Հորդանանի հետ, որը պատերազմի ավարտին վերահսկողություն էր հաստատել Արևմտյան ափի վրա: Հարցի լուծումը հետաձգվեց ցայսօր, իսկ Պաղեստինի արաբները մնացին առանց սեփական պետության:

3. Սիրիան 1945-1970 թթ.

1920 թ. ֆրանսիական մանդատի հաստատումից մինչև անկախ Սիրիայի Հանրապետության հռչակումը (1946 թ. ապրիլի 17-ը)[105] Սիրիան թևակոխել էր նեղ սիրիական շրջանակներից դուրս եկած և համաարաբական նշանակություն ձեռք բերած ազգային-ազատագրական պայքարի շատ կարևոր մի ժամանակաշրջան: Անգլիացի արևելագետ Պ. Սիլը 40–50-ական թվականները որակում է որպես «Սիրիայի համար պայքարի» ժամանակահատված[106]: Հենց այդ երկու տասնամյակում էր, երբ դրսից հրահրվող ներքին անկայունությունն ու երկրի աշխարհագրական մասնատու-

[105] De jure Սիրիան անկախություն ձեռք բերեց ՄԱԿ-ի և ֆրանսիական մանդատի ավարտից հետո՝ 1945 թ. հոկտեմբերի 24-ին:

[106] Seale, Patrick. The Struggle for Syria.A study of Past War Politics. 1945-1958, London, 1965.

մը գաղութային ուժերի կողմից Սիրիան վերածել էին «փաստորեն գոյություն չունեցող մի միավորի»: Սիրիական պաշտոնական պատմագրության մեջ այդ երկտասնամյակը հիշատակվում է որպես «ազգայնական վարչակարգերի» ժամանակաշրջան, որոնք ներկայացնում էին «բուրժուական» ժողովրդավարության կամ զինվորական մենիշխանության տարբեր ձևերը[107]:

Եթե Սիրիայի նորագույն պատմության անկախացումից հետո ընկած ժամանակահատվածը բաժանելու լինենք շրջանների, ապա վերոհիշյալ «ազգայնական վարչակարգերի» հերթագայության տարիները (1945-1958 թթ.) կարելի է առանձնացնել որպես առաջին շրջան: Եգիպտոսի հետ միավորման երեք ու կես տարի տևած երկրորդ շրջանը (1958-1961 թթ.) թուլացրեց Սիրիան քաղաքականապես, երբ անտեսվեցին «նրա զարգացման առանձնահատկություններն ու տարաբնույթ պայմանները»՝ համեմատած Եգիպտոսի հետ[108]: Երրորդ շրջանն ընդգրկում է 1961-1970 թթ. փոթորկալից ինը տարիները, երբ Եգիպտոսից անջատվելուց հետո միայն տարածաշրջանային քաղաքականության օրակարգում դրվեց Սիրիան այլ պետությունների ազդեցության ոլորտից հանելու և «ինքնուրույն» պետություն դարձնելու հարցը: Սիրիայի նորագույն պատմության չորրորդ և վերջին ժամանակաշրջանը 1970-2000 թվականներն էին, երբ Հաֆեզ Ասադի երկարատև իշխանության ընթացքում Սիրիան վերածվեց տարածաշրջանային հզոր և կայուն պետության:

1963 թվականը շրջադարձային եղավ Սիրիայի ներքաղաքական կյանքի համար: Մարտի 8-ի հեղաշրջման հետևանքով երկ-

---

[107] Quandt W. Ed., The Middle East, Ten Years after Camp-David, The Brookings Institution, 1988, p. 331.

[108] Է. Պ. Փիր-Բուդաղովա, Քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Սիրիայում (1962-1970 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, ժողովածու, IX հատոր, Արաբական երկրներ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1978, էջ 27:

ռում իշխանության եկավ «Արաբական սոցիալիստական վերածննդի կուսակցությունը» (Բաաս)։ Երեք տարի անց՝ 1966 թ. փետրվարի 23-ին՝ արյունալի միջկուսակցական պայքարից հետո, իշխանության գլուխն անցավ կուսակցության «ձախ» թևը՝ հաղթանակ տանելով աջերի և նասերականների նկատմամբ։ Սիրիայի փաստացի ղեկավարումը կենտրոնացավ «Բաասի» քաղաքական քարտուղար Սալահ Ջադիդի ձեռքում։ Երկրի նախագահի պաշտոնը, ըստ օրենքի, պետք է զբաղեցներ բնակչության 70 տոկոսը կազմող սուննի մահմեդական համայնքի ներկայացուցիչը։ Այդ իսկ պատճառով Ջադիդը, ներկայացնելով Սիրիայի ալավի փոքրամասնությունը, պաշտոնապես չհայտարարեց իրեն նախագահ՝ սահմանափակվելով «Բաաս» կուսակցության տարածաշրջանային քարտուղարի օգնականի պաշտոնով։ Սակայն իրականում թիվ 1 մարդը երկրում Ջադիդն էր։ Նա առանցքային պաշտոնների նշանակեց իր բոլոր մտերիմներին և համախոհներին։ Վարչապետ դարձավ դոկտոր Յուսուֆ Զուայինը, նախագահ՝ Նուր ադ-Դին ալ-Ատասին։ Չնայած այդ ընթացքում բանակում հեղինակություն վայելող գնդապետ Հաֆեզ Ասադի և Սալահ Ջադիդի միջև օրըստօրե աճող տարաձայնություններին՝ վերջինս Ասադին վստահեց պաշտպանության նախարարի պաշտոնը։ Զուայինի գլխավորած կառավարությունը հաճախ բնութագրվում է իբրև «լենինյան ոճի կառավարություն»[109], որը հետապնդում էր հեղափոխական գաղափարներ՝ հենվելով հիմնականում միջին դասի զինվորականների, գավառական ուսուցիչների, կրոնական և ազգային փոքրամասնությունների ու չքավոր խավերի վրա։ Ջադիդի օրոք հիմք դրվեց երկրի տնտեսության պետական հսկողությանը։ Ունևոր և հարուստ սիրիացիների մեծ մասը լքեց հայրենիքը։ Երկիրը բաժանվեց երկու խավերի՝ բարեկամ «բանվորների», «զինվորների», «գյուղացիների», «ուսա-

[109] P. Seale, The Assad and the Struggle for the Middle East, p. 64.

նողների», «կանանց» ու թշնամի՝ «ֆեոդալների» և «ռեակցիոներների»: Այսուհանդերձ, այդ բոլոր փոփոխություններն ունեին նաև դրական կողմեր. Ջադիդի թիմը հիմնականում կազմված էր ազնիվ մարդկանցից, որոնք փորձում էին «պլանավորել» երկրի տնտեսական զարգացումն ու իրականացնել արդյունաբերական բազմաթիվ նախագծեր, ինչպիսիք էին մայրուղիների և երկաթգծերի կառուցումը, երկրի հյուսիսում նոր հայտնաբերված նավթահորերի շահագործումը և այլն:

Պետք է նշել, որ այս նախագծերի մեծամասնությունն իրականացվեց Խորհրդային Միության օգնությամբ, օրինակ՝ Եփրատի ափին նոր հիդրոէներգետիկ համալիրի, Հոմսում նավթամշակման գործարանի կառուցումը և այլն[110]: Սիրիայի կոմունիստական կուսակցության ղեկավար Խալեդ Բաղդաշը ութ տարվա աքսորից հետո վերադարձավ Սիրիա, իսկ երկրի պատմության մեջ առաջին անգամ համայնավար Սամիհ Ատիյան՝ որպես հաղորդակցության նախարար, դարձավ կառավարության անդամ: Այս բոլորը հիմք տվեց Վաշինգտոնին հաստատելու, որ «Սիրիան վերածվել է տարածաշրջանում համայնավարների հենարանի»[111]:

1966 թ. մարտի 10-ին Դամասկոսում գումարված «Բաասի» տարածաշրջանային արտակարգ համաժողովի ընթացքում հաստատվեց, որ «Սիրիան առաջադիմական բոլոր ուժերի հետ կպայքարի իմպերիալիզմի և գաղութատիրության հին ու նոր ձևերի դեմ»: Համաժողովի մասնակիցները միևնույն ժամանակ նշեցին, որ սոցիալիստական ճամբարի պայքարը իմպերիալիզմի դեմ «զարգացող երկրների ժողովուրդների բարգավաճման ամենալավ գրավականն է»: 1967 թ. վեցօրյա պատերազմի հետևանքով Սիրիան կորցրեց կենսական նշանակություն ունեցող Գոլանի բար-

---

[110] В. В. Вавилов, Социально-экономические преобразования в Сирии (1946–1970 гг.), Москва, 1972, с. 100.

[111] «Ալ-Բաաս», 16.03.1966:

ձունքները, որոնց ռազմավարական կարևորությունը պայմանավորված է առաջին հերթին նրանց յուրահատուկ աշխարհագրական դիրքով. ծովի մակերեսից ավելի քան 2000 մետր բարձրության վրա գտնվող և հրաբխային լավայից առաջանալով՝ դրանք ձգվում են արևելքում դեպի իսրայելյան Հալա դաշտավայրը և Գալիլեյան ծովը: Պատմությունն ապացուցել է, որ այն բանակը, որը տիրել է Գոլաններին, վերահսկողություն է հաստատել ոչ միայն Գալիլեայի, այլ նաև Դամասկոս տանող ճանապարհի վրա:

Պատերազմը թուլացրեց և խարխլեց Ս. Ջադիդի ծայրահեղական սոցիալիստական վարչակազմի հիմքերը: «Բաաս» կուսակցության չափավորական զինվորական և ծայրահեղական քաղաքացիական թևերի միջև, ի դեմս Ասադի և Ջադիդի, աստիճանաբար զարգացավ հակասությունը, որն իր գագաթնակետին հասավ 1970 թ. սեպտեմբերին՝ Հորդանանի ճգնաժամի օրերին:

ԱՄՆ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների խզմանը զուգընթաց նույն շրջանում Դամասկոսը վատթարացրեց հարաբերությունները նաև պահպանողական արաբական երկրների հետ՝ անկարող գտնվելով նաև գործնական փոխշահավետ կապեր հաստատել Եգիպտոսի և Իրաքի հետ: Բաասական ղեկավարներն ի վիճակի չեղան արդյունավետ ուղիներ գտնել ստեղծված ծանր կացությունից դուրս գալու համար: Անբարենպաստ զարգացումները Սիրիայի արտաքին քաղաքական ճակատում ուղղակի ազդեցություն ունեցան երկրի ներքաղաքական կյանքի վրա՝ հանգեցնելով երկրի ղեկավարության, մասնավորապես նրա զինվորական և քաղաքացիական թևերի միջև լուրջ տարաձայնությունների առաջացմանը:

1969 թ. մայիսի 20-ին Սիրիայի սահմանադրությունն ու նոր կառավարության կազմը հաստատելու նպատակով հրավիրված «Բաասի» արտակարգ համաժողովը նույնպես չկարողացավ հարթել կուսակցության վերնախավում գոյություն ունեցող հակասութ-

յունները, որոնք գնալով խորանում էին[112]: Այսուհանդերձ, ակնհայտ էին դրական տեղաշարժերը երկրի տնտեսության մեջ: Կարճ ժամանակահատվածում հաջողությամբ իրականացվում էին բազմաթիվ տնտեսական ծրագրեր: Այսպես՝ 1967 թ. Խորհրդային Միության օգնությամբ սկիզբ դրվեց Եփրատի հիդրոէներգետիկ համալիրի շինարարությանը: 1968 թ. հուլիսի 27-ին առաջին բեռնատար նավը լիաբեռնվեց սիրիական նավթով: Հատկանշական է այն փաստը, որ Սիրիան դարձավ արաբական երկրներից առաջինը, որն առանց արտասահմանյան ընկերությունների մասնակցության կարողացավ իրականացնել նավթահանումը, նրա վերամշակումն ու արտահանումը: Միանգամայն հասկանալի է, որ բացի տնտեսական շահույթից՝ այն նաև քաղաքական մեծ նշանակություն ունեցավ Սիրիայի համար:

Կարելի է հաստատել, որ արտաքին քաղաքականության մեջ առկա լուրջ խնդիրների հետ մեկտեղ Սիրիայում հաստատված վարչակազմը հետևողականորեն կիրառում էր «սոցիալ-տնտեսական առաջադիմական, Սիրիայի համար մինչ այդ չտեսնված և արմատական բնույթ կրող վերափոխումներ»[113]:

Սիրիայում 1970 թ. սեպտեմբերին (հորդանանյան դեպքերից հետո) հակասություններն ու տարաձայնություններն իշխող «Բաաս» կուսակցության մեջ գնալով էլ ավելի սրվեցին: Կուսակցության վերնախավում ստեղծված իրավիճակը քննարկելու նպատակով հոկտեմբերի 30-ին Դամասկոսում գումարվեց «Բաասի» 10-րդ արտահերթ համաժողովը, որի պաշտոնական օրակարգով նախատեսվում էր արաբական աշխարհում առկա միջպետական հարաբերությունների քննարկումը: Սակայն, փաստորեն այն վերածվեց կուսակցության ղեկավարության և Ասադի կողմնակիցնե-

[112] «Ալ-Բաաս», 29.05.1969:

[113] Ն. Հ. Հովհաննիսյան, Հ. Ս. Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան, 1975, էջ 316–316:

րի միջև սուր բանավեճի: Համաժողովի ընթացքում պարզ դարձավ, որ Ասադն ու իր հիմնական զինվորական համախոհ Մուսթաֆա Տլասը գրեթե ամբողջովին մեկուսացված են: Եվ երբ պաշտպանության նախարար Ասադին և սպայակույտի պետ Տլասին պաշտոնանկ անելու որոշում ընդունվեց, վերջիններս անմիջապես պատասխան գործողությունների դիմեցին:

Նոյեմբերի 13-ին Ասադը հրամայեց զինվորներին գրավել կուսակցության քաղաքացիական թևի, ինչպես նաև բաասական մեծամասնությունը կազմող «ժողովրդական կազմակերպությունների» գրասենյակները: Դրան հետևեցին կուսակցության նշանավոր գործիչների, ներառյալ Ջադիդի և երկրի նախագահ Նուր ալ-Դին ալ-Ատասիի ձերբակալությունները: Ի դեպ, Ջադիդը մինչև իր մահը՝ 1993 թ. օգոստոսի 19-ը, պահվեց Դամասկոսի Մազզա կոչվող բանտում, իսկ Նուր ալ-Դին ալ-Ատասին ազատ արձակվեց միայն 1992 թվականին: Նոյեմբերի 16-ին Ասադի խումբը հսկողություն հաստատեց երկրի ողջ տարածքում: Նոյեմբերի 13-ին նորաստեղծ Ժամանակավոր տարածաշրջանային ղեկավարության հրապարակած հայտարարության մեջ նշվում էր, որ «նման գործողությունների նպատակն է «Բաասի» նախկին ղեկավարության կողմից թույլ տված սխալների ուղղումն ու կուսակցական համագումարների որոշումների հետևողական իրականացումը»[114]:

Նոյեմբերի 21-ին Ասադի գլխավորությամբ կազմվեց «ազգային միասնության» կառավարություն: Կառավարության կազմում, «Բաասի» անդամներից բացի, ընդգրկվեցին նաև քաղաքական այլ կուսակցությունների ու խմբավորումների անդամներ, այդ թվում՝ «Արաբական սոցիալիստական միության» և կոմունիստական կուսակցության ներկայացուցիչները: Մինչև նախագահի ընտրությունը երկրի ղեկավար նշանակվեց Ահ մեդ ալ-Խատիբը: Նշված իրա-

[114] Современная Сирия. Справочник, Москва, Наука, 1974, с. 224.

դարձությունները սիրիական պատմագրության մեջ հայտնի են որպես «նոյեմբերի 16-ի ուղղիչ շարժում»:

Ասադն իշխանության եկավ ոչ միայն իր երկրի, այլև ամբողջ արաբական աշխարհի համար շրջադարձային և դժվարագույն պահին, երբ Նասերի մահից հետո էլ ավելի սերտացել ու ամրապնդվել էր ԱՄՆ-ի և Իսրայելի ռազմավարական համագործակցությունը:

Իշխանության գլուխն անցնելուն պես Ասադը ձեռնամուխ եղավ իր կառավարության կազմակերպչական ենթակառույցների ստեղծմանը և կենտրոնացված հսկողության հաստատման աշխատանքներին: «Բաաս» կուսակցության ժամանակավոր տարածաշրջանային ղեկավարությունը 173 անդամից բաղկացած օրենսդիր մարմին՝ Ազգային խորհուրդ նշանակեց: Նորաստեղծ խորհրդում «Բաասը» 87 տեղ զբաղեցրեց: Մնացած տեղերը բաշխվեցին «ազգային կազմակերպությունների» և փոքր կուսակցությունների միջև: 1971 թ. մարտին կայացավ «Բաասի» տարածաշրջանային համագումարը, որն ընտրեց 21 հոգուց բաղկացած նոր Տարածաշրջանային ղեկավարություն՝ Ասադի գլխավորությամբ: Նույն ամսին տեղի ունեցավ ազգային հանրաքվե, որի արդյունքներով Ասադը երկրի նախագահ ընտրվեց 7 տարի ժամկետով: 1972 թ. մարտին իր իշխանության հիմքերն ամրապնդելու և ընդարձակելու նպատակով Ասադը ստեղծեց «Ազգային առաջադիմական ճակատ» կուսակցությունների կոալիցիա՝ «Բաասի» գլխավորությամբ: Դրան հետևեցին տեղական իշխանությունների ընտրությունները Սիրիայի 14 նահանգներում: Այնուհետև կայացան Ազգային խորհրդի՝ 1962 թվականից հետո առաջին ընտրությունները: 1970-1973 թվականները համառոտ կարելի է բնութագրել որպես Ասադի իշխանության ամրապնդման, ղեկավարման համակարգի ձևավորման, օրենսդրական և իրավական դաշտի ստեղծման, երկրի ներ-

քին և արտաքին քաղաքականության մշակման ժամանակաշրջան: Այդ տարիները նշանավորվեցին երկրի հիմնական օրենքի՝ 1973 թ. Սահմանդրության ընդունումով, որն ամրագրեց «Բաաս» կուսակցության գերակայությունը պետության և հասարակության մեջ՝ լայն իրավունքներ վերապահելով երկրի նախագահին, որը դարձավ նաև Սիրիայի զինված ուժերի գլխավոր հրամանատարը[115]:

Միջարաբական հարաբերություններում Սիրիայի նոր վարչակազմը ձգտում էր վերջ դնել երկրի մեկուսացմանն ու ամրապնդել նրա դիրքերը արաբական աշխարհում: Ի տարբերություն Ջադիդի՝ Իսրայելի դեմ համատեղ ռազմական ճակատ ստեղծելու նպատակով Ասադը փորձեց բարելավել հարաբերությունները Եգիպտոսի, Հորդանանի, ինչպես նաև Սաուդյան Արաբիայի հետ: 1970 թ. նոյեմբերին Սիրիան միացավ Եգիպտոսի, Լիբիայի և Սուդանի կառավարությունների կողմից ընդունված Տրիպոլիի խարտիային, որը ծրագրում էր միասնական արաբական պետություն ստեղծել: 1971 թ. ապրիլի 17-ին հռչակվեց Արաբական Հանրապետությունների Դաշնությունը, որի նպատակն էր «պահպանել արաբական հայրենիքի ամբողջականությունն ու անկախությունը, կառուցել արաբական սոցիալիստական հասարակարգ, ազատագրել գրավված արաբական տարածքները, ամրապնդել արաբական ազգային-ազատագրական պայքարը»:

Արտաքին քաղաքականության հարցերում Հ. Ասադն ավելի իրատես էր, գաղափարախոսական հարցերին ավելի քիչ ուշադրություն էր դարձնում, քան իր գործընկերները: Այսպես՝ աջակցությունը պաղեստինյան ֆիդայիներին շարունակելով հանդերձ՝

[115] «Բաասի» վերաբերյալ տե՛ս K. Abu Jaber, The Arab Ba'th Socialist Party. Syracuse, NY, 1966, Delvin J.F., The Ba'th Party: A History. Stanford, Calif.,1976, «Ֆի Սաբիլ ալ-Բաաս», Բեյրութ, 1969, Մունիֆ ալ-Ռազզազ, «Ալ-Թաջրիբա ալ-Մուռռա», Բեյրութ, 1967, Սամի ալ-Ջունդի, «Ալ-Բաաս», Բեյրութ, 1969, «Նիդալ հիզբ ալ-Բաաս, 1943-1975» Դամասկոս, 1978 և այլն:

նա ջանք չխնայեց նրանց սիրիական քաղաքականության նպատակների իրականացմանը ծառայեցնելու համար: Ըստ Ասադի՝ գաղափարական օժանդակությունը չէր նշանակում, որ մի քանի հազար զինված երիտասարդ պաղեստինցիներ կարող են մարտնչել ցանկացած պահին և ցանկացած վայրում: ՊԱԿ-ը շարունակում էր իր գործունեությունը Դամասկոսում, ֆիդայիները զինվում և մարզվում էին սիրիական ճամբարներում: Չնայած Ասադի հավաստիացումներին, որ «Սիրիան այն թոքերն են, որոնցով շունչ է առնում պաղեստինյան շարժումը», պաղեստինյան ջոկատները, այնուամենայնիվ, գտնվում էին սիրիական իշխանությունների հսկողության տակ և ի վիճակի չէին առանց վերջիններիս համաձայնության Իսրայելի դեմ ինքնակամ գործողություններ ծավալել[116]:

1970-ականների երկրորդ կեսը բարգավաճման ու առաջընթացի շրջան էր Սիրիայի համար: Ֆինանսական ներարկումները, Ծոցի արաբական երկրներից և նավթատարից ստացված եկամուտները հանգեցրին աննախադեպ, տարեկան 13%-անոց տնտեսական աճի: Թերևս ձեռք բերված տնտեսական հաջողություններով կարելի է բացատրել Ասադի հրաժարումը Իսրայելի դեմ համաարաբական հակազդեցության ճակատի ստեղծման գաղափարից և սեփական ուժերով «սիոնիստական թշնամու հետ ռազմավարական հավասարակշռություն» հաստատելու ձգտումը:

1979 թ. Քեմփ-Դևիդում Իսրայելի հետ համաձայնագիրը ստորագրելուց հետո Եգիպտոսը դուրս եկավ «արաբական խաղից»՝ Սիրիային վերապահելով արաբա-իսրայելյան հակամարտության մեջ առաջնային դերակատարությունը: Այսուհետ ոչ միայն արաբական երկրները, այլև գերտերությունները սկսեցին ընդունել խաղաղության հաստատման գործում Սիրիայի ռազմավարական նշանա-

[116] Moshe Maoz: Syria and Israel From War to Peacemaking, Claredon Press, Oxford, 1995, p. 113.

կությունը տարածաշրջանում: Այդ գիտակցումն էր թերևս պատճառը, որ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի համաձայնությամբ Սիրիան միջամտեց Լիբանանում ընթացող քաղաքացիական պատերազմին և օգտվելով առիթից՝ հետագայում իր ռազմաքաղաքական ներկայությունը հաստատեց այդ երկրում:

ԽՍՀՄ-ի փլուզումը լուրջ մարտահրավեր էր Հաֆեզ Ասադի վարչակարգի համար, որը մինչ այդ երկբևեռ աշխարհի գոյության պայմաններում իր անվտանգության կարիքները գլխավորապես ապահովում էր գերտերություններից մեկի՝ Խորհրդային Միության օգնությամբ: Ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրավիճակը ստիպեց Ասադին համարժեք ուղիներ փնտրել ԱՄՆ-ի հետ հարաբերությունները բարելավելու և խաղաղության գործընթացում Սիրիայի մասնակցությունն ապահովելու համար:

4. Սառը պատերազմի տարածումը Արաբական Արևելքում. հեղաշրջումներ ու հակամարտություններ

1952 թ. հուլիսի 23-ին Եգիպտոսում տեղի ունեցած պետական հեղաշրջումն արաբական աշխարհի կարևորագույն իրադարձություններից մեկն էր: Այդ հեղաշրջումը, ի տարբերություն արաբական այլ երկրներում, ասենք, Իրաքում 30-ականների կամ Սիրիայում 1948-1950-ականների հեղաշրջումների, որակապես այլ հետևանքներ ունեցավ ինչպես Եգիպտոսի, այնպես էլ ողջ արաբական աշխարհի համար:

Սկզբից ևեթ այն շատերին անհրաժեշտ բարեփոխում էր թվում (հին վարչակարգի ամբողջական վերացում) նախքան իրական առաջընթացի հաստատումը: Ցնծության մեջ գտնվող մյուս երկրների արաբները (a' l'Egyptienne) հեղաշրջում էին պահանջում:

Նույնիսկ Լիբանանում, որտեղ մարդիկ փյունիկյան ժամանակներից ի վեր աչքի էին ընկնում սառը դատողությամբ և առևտրային խորաթափանցությամբ, «հեղափոխության» կոչեր էին հնչում: Հզոր գործադուլների սպառնալիքների և բանակի կողմից անպաշտպանվածության պայմաններում 1952 թ. սեպտեմբերի 19-ին Լիբանանի նախագահը հրաժարական տվեց: Բանակի շտաբի պետ ժամանակավորապես դարձավ վարչապետը, իսկ սեպտեմբերի 23-ին Պատգամավորների պալատը նոր նախագահ ընտրեց: Լիբանանում, այնուամենայնիվ, բանակը հրաժարվեց մնալ քաղաքական ասպարեզում և իշխանությունը փաստացի այնքան հապճեպ վերադարձրեց քաղաքացիական իշխանություններին, որ նոր նախագահը, հարկադրված լինելով համաձայնության գալ այդ ուժերի հետ և առաջնորդվելով նրանց՝ խորհրդարանի կողմից ներկայացվող հետաքրքրություններով, ստիպված փոխարինաբար ստանձնեց պաշտոնը: Լիբանանում այդ զորեղ դժգոհության ալիքը դարձյալ պիտի բարձրանար արդեն 1958 թվականին, երբ երկիրը հայտնվեց քաղաքացիական պատերազմի շեմին:

Իրաքում այդ նույն ժամանակամիջոցին փոփոխությունները հիմնականում իրականացվում էին 1950 թ. հատուկ ձևավորված Զարգացման խորհրդի ղեկավարության ներքո[117]: 1950-ականների սկզբներին արտադրությամբ և շահույթով պայմանավորված նավթային վիթխարի հարստությունը մեծապես ազդեց երկրի տնտեսության և ողջ հասարակության վրա: Թվում էր, թե առջևում բացվում է նոր լուսավոր աշխարհի իրական ու անմիջական հեռապատկերը: Այնպիսի տպավորություն կար, թե ամեն ինչ պատ-

[117] Իրաքում ծավալված ազգային-ազատագրական պայքարի մասին տե՛ս Оганесян Н. О., Национально-освободительное движение в Ираке (1917-1958 гг.), Ереван, 1976, Федченко А. Ф., Ирак в борьбе за независимость (1917-1969), М., 1970, Longrigg, H. Stephen. Iraq, 1900-1950: A Political, Social and Economic History, London, 1953, Sluglett, Peter. Britain in Iraq, 1914-1932. London, 1976. Nuri es-Said. Arab Independence and Unity. Baghdad, 1943:

բաստ է փոփոխությունների համար: Բայց և այնպես, զարգացումների ընթացքը շատերին չէր գոհացնում: Երիտասարդ իրաքցի կանայք, որոնք մինչ այդ իրենց «լիբանանցի ու եգիպտացի քույրերի համեմատ» հասարակությունից առավել մեկուսացված խավն էին համարվում, հանկարծ հայտնվեցին հասարակական ակտիվ շփումների մեջ: Արտասահմանում կրթություն ստանալու նպատակով նրանք սկսեցին անդամակցել կառավարական և գիտական միություններին, «ազատագրվել» իրենց կաշկանդող ու սոցիալական անհավասարությունը խորհրդանշող երկար ու սև զգեստներից՝ աբբայից: Սակայն կաշկանդվածությունից այս ձերբազատումը որոշ իմաստներով հանգեցնում էր զգացմունքային մեծ լարվածության, միայնակության, հույսերի խորտակման ու երկյուղածության առաջացմանը, որն անցյալ դարի 50-ականներին հետապնդում և խաթարում էր Իրաքի մտավոր կյանքը:

1952 թ. գարնանը իրաքցի մի երիտասարդ կին պատմվածք գրելու պատճառով հեռացվում է քոլեջից: Նա պարզապես նկարագրել էր երիտասարդ կնոջ՝ տվյալ ժամանակաշրջանի «անճաշակ դատարկությունն» արտահայտելու բաղձանքը, երբ «տգետ, առաջնորդ տղամարդիկ» դեռևս կառչում են «խեղված ու բարոյազուրկ սոցիալական նորմերից»: Նա խոսում էր շատերի անունից[118]: Նույն կերպ իրաքցի երիտասարդներն արտասահմանում երկարատև ուսումնառությունից վերադառնալուն պես բախվում էին իրաքյան հասարակությունում առկա խոչընդոտներին ու բյուրոկրատիային: Հետադեմ Իրաքը, ուր նրանք վերադառնում էին, դժվարին կացության մեջ էր դնում ու արհամարհանքով մերժում նրանց: Նրանք արգելքների էին հանդիպում իրենց ձեռք բերած նոր գիտելիքների կենսագործման հարցում և օտար էին զգում նույ-

[118] Polk, William. The Arab World Today, Harward University Press, London, 1991, p. 197.

նիսկ իրենց սեփական տանը: Պատահական չէ, որ այդ տարիներին երիտասարդության մեջ ամենատարածվածը Տուրգենևի «Հայրեր և որդիներ» գրքի արաբերեն թարգմանությունն էր: Սակայն, եթե 1950-ականների սկզբներին ունակ ու եռանդուն մարդկանց թիվն Իրաքում չնչին էր, ապա տասնամյակի վերջում այն նկատելիորեն մեծացավ: Եթե 1951-1952 թթ. Իրաքում կար ընդամենը հինգ ինժեներ-մեխանիկ, ապա 1958 թ. երկրի կառավարման և տնտեսության բնագավառներում արտասահմանում կթություն ստացած իրաքցիների թիվն արդեն հասնում էր շուրջ հարյուրի: Զուգահեռաբար կարևոր փոփոխություններ իրականացվեցին ինչպես բոլոր մասնագիտությունների գծով կադրերի պատրաստման, այնպես էլ հասարակական այլ ոլորտներում:

Բաղդադում հասունանում էր փոփոխությունների անհրաժեշտությունը: Կառավարությունը գտնվում էր մի խոհեմ ու փորձառու քաղաքական գործչի՝ Նուրի Սաիդի ձեռքում, որը զինվորական կրթություն էր ստացել Օսմանյան բանակում և պայքար մղել արաբական հեղափոխության տարիներին: Նուրիի ղեկավարած Իրաքի կառավարությունն ամուր ձեռքերում էր: Նրան նույնիսկ իր ախոյաններն էին հարգում և նա այնքան մեծ համբավ ուներ (կամ այդպես ընդունված էր համարել), որն անգամ ամենաոխերիմ թշնամիների խոստովանությամբ կարող էր հաղթել նույնիսկ ազատ ընտրությունների դեպքում: Նա գիտեր, թե ինչ է ուզում և ինչպես հասնել նպատակին: Սակայն Նուրիի կառավարությունը ստեղծում էր նոր Իրաք, որտեղ անձամբ ինքն ու հին դպրոցի մարդիկ այլևս տեղ չպիտի ունենային: Տնտեսական ու սոցիալական հսկայական փոփոխություններն անհարիր էին հին քաղաքական կյանքին, ուստի պատնեշի պես կասեցնում էին ըմբոստ ուժերին: Ճնշումներն անընդմեջ ավելանում էին ընդհուպ մինչև 1958 թվականը:

1952 թ. հուլիսի 23-ին Եգիպտոսում հեղաշրջում կազմակերպած զինվորական սպաները, հայտնվելով անորոշ իրավիճակում, պարզապես լավ չէին պատկերացնում, թե ինչպես պետք է վարվեն իշխանության հետ[119]: Նրանք համոզված էին, որ պարտավոր են վերջ դնել միապետի իշխանությանը, և թագավոր Ֆարուկին հարկադրեցին մի քանի օրում հեռանալ երկրից: Այնուամենայիվ, միապետության պաշտոնական վերացման համար պահանջվեց 11 ամիս: Նոր իշխանությունները չէին թաքցնում իրենց կապերը նախկին քաղաքական վերնախավի հետ: Սկզբնական շրջանում կառավարությունը վստահություն հայտնեց հին վարչակարգի «մաքուր» քաղաքական գործիչներին: Սպաները հասարակական պայքար ծավալեցին նախկինների ճանաչման դեմ՝ վերացնելով ինչպես միապետությանն առնչվող տիտղոսները, այնպես էլ նրանց իշխանության հիմքը հանդիսացող Նեղոսի երկայնքով ձգվող բերրի հողատարածքների հսկայական սեփականությունը:

Սեպտեմբերի 7-ին, երբ բանակը պաշտոնապես ստանձնեց իշխանությունը, «Ազատ սպաների» անվանական ղեկավար գեներալ Նագիբը վարչապետ նշանակվեց: Այնուհանդերձ, նախարարների մեծ մասը քաղաքացիական անձինք էին, իսկ 1954 թ. մարտի վերջին սպաները դեռևս մտադիր էին կառավարման քաղաքացիական ձևին վերադառնալ: Հետադարձ հայացքով երևում է, որ

[119] Եգիպտական հեղափոխության, Նասերի և նրա գործընկերների մասին տե՛ս Беляев И. П., Примаков Е. М., Египет: время президента Насера, Москва, 1974, Курдгелашвили Ш.Н., Революция 1952 года и крах британского господства в Египте, Москва, 1966, Сейранян Б. Г., Египет в борьбе за независимость, 1945-1952. М., 1970, Stephens, Robert. Nasser: A Political Biography. New York: SImon&Schuster, 1971, Nutting Anthony. Nasser. New York: E. P. Dutton&Co, 1972, Lacouture, Jean and Simon. Egypt in Transition. New York. 1958, Wheelock, Keith. Nasser's New Egypt., New York, 1960, Wynn, Wilton. Nasser of Egypt: The Search fo Dignity (Cambridge, Mass., 1959), P. J. Vatikiotis. Nasser and His Generation (New York, 1978), Waterbury, John. The Egypt of Naser and Sadat (Princeton, 1983), Shoukri Ghali. Egypt:Portrait of a President-Sadat's Road to Jerusalem (London,1981), Naguib, Mohammmed. Egypt's Destiny. (New York, 1955), Abdel-Malek, A Nouar.Egypt: Military Society (New York, 1968):

«Ազատ սպաները» իրականում հստակ պատկերացում չունեին Եգիպտոսի պետական նոր կառուցվածքի մասին:

Նասերը հայտարարում էր, թե ինքը երբեք իր խմբով նոր հասարակարգ ստեղծելու մտադրություն չի ունեցել, նրա խնդիրը հինը ոչնչացնելն էր: Իր «Հեղափոխության փիլիսոփայությունը» գրքում նա անդրադառնում է հեղաշրջումից հետո կրած «նեղություններին», «շոկին» և «դառնություններին»: «Նախքան այդ օրը ինձ թվում էր, թե ողջ ազգը ծածուկ գործի անցնելու է պատրաստվում, թե նա սպասում է ավանգարդի հարձակման, որպեսզի հոծ բազմությամբ միախառնվի կուռ ֆալանգներին՝ անձնվեր ընթանալով դեպի մեծ նպատակ: Հուլիսի 23-ին հաջորդած իրապատկերն ինձ ցնցեց: Ավանգարդը կատարեց իր խնդիրը. գրոհելով բռնապետական ամրոցի պարիսպների վրա՝ Ֆարուկին հարկադրեց հրաժարվել գահից, իսկ զանգվածներին՝ զորավիգ լինելով հասնել իրենց վերջնանպատակին: Այնուհետև սպասեց ամբոխին, որը պետք է միանար իրեն: Սակայն իրականությունը երևակայական պատկերից շատ էր տարբերվում: Վրա հասած ամբոխը ցիրուցան երիտասարդներից էր կազմված: Մեզ կարգապահություն էր անհրաժեշտ, սակայն քաոսի հանդիպեցինք մեր շարքերի թիկունքում: Մենք միության կարիք ունեինք, սակայն երկպառակտման առջև կանգնեցինք: Մենք մարտնչելու կարիք ունեինք, սակայն բացի անձնատուր լինելուց ու անգործությունից՝ ոչնչի չհանդիպեցինք: Անձնային ու համառ եսամոլությունն օրվա հրամայականն էին: Բոլորի շուրթերին «ես» բառն էր»[120]:

Ըստ էության, զինվորականության՝ իշխանության պահպանման հաստատուն մտադրության մասին անգամ խոսք լինել չէր կարող. եթե նրանք նույնիսկ այն մեկ այլ խմբի վերադարձնելու մտադրություն ունենային, ապա «Ազատ սպաները» հազիվ թե այդպես

[120] Nasser, Gamal Abdel. Philosophy of the Revolution. Cairo, 1963, pp. 52-54.

վարվեին: Այս հանգամանքն էլ ի հայտ բերեց Նագիբի և փոխ-գնդապետ Նասերի միջև իշխանական պայքարը, որի հիմքում ընկած էին հակասությունները բանակի, «Մահմեդական եղբայրների» և քաղաքացիական իշխանությունների միջև: Ի վերջո, գաղտնի ու բացահայտ երկարատև պայքարից և խուսանավումներից հետո Նագիբը վտարվեց իշխանությունից ու տնային կալանքի տակ առնվեց 1954 թ. նոյեմբերի 1-ին: Սակայն ներքին խնդիրներում նոր իշխանությունը դեռևս շատ հեռու էր հաստատուն ու համաձայնեցված քաղաքականություն վարելուց:

Արտաքին քաղաքականության մեջ նոր վարչակարգի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից էր Մեծ Բրիտանիայի հետ հարաբերությունների հստակեցումը: 1945-1946 թթ., երբ բրիտանացիները էվակուացվեցին Կահիրեից, նրանց ռազմուժի մեծ մասը՝ 80.000 մարդ, տեղափոխվեց Սուեզի ջրանցքի շրջանում տեղակայված բազաները: Եգիպտոսից նրանց հեռացնելու՝ նոր իշխանությունների բազմաթիվ փորձերն ապարդյուն էին: Միացյալ ազգերին ուղղված բողոքարկումները նույնպես հաջողություն չունեցան: Փաստորեն, ազգային խնդիրները հոգալու հարցում նախկին իշխանությունների անզորությունը նրանց հեղինակազրկման գլխավոր պատճառներից մեկը դարձավ: Ինչ վերաբերում է նոր կառավարությանը, ապա այն հեղաշրջումից անմիջապես հետո Իսրայելի ղեկավարության հետ ուղղակի կապ հաստատելու անհաջող փորձ կատարեց ՝ խնդրելով հրեական լոբբիի աջակցությունը երկրից անգլիական ուժերի դուրսբերումն ապահովելու համար: Փոխարենը եգիպտական ղեկավարությունը, ի դեմս Նասերի, խոստանում էր խաղաղություն հաստատել Իսրայելի հետ: 1954 թ. հոկտեմբերին՝ անգլիացիների հետ երկարատև բանակցություններից հետո, ստորագրվեց անգլո-եգիպտական համաձայնագիրը: 1956 թ. ապրիլի 14-ին բրիտանացիները Եգիպտոսից դուրս բերեցին իրենց վերջին ռազմական տեխնիկան:

Ինչ վերաբերում է Սիրիային, ապա այնտեղ նույնպես դժվար էր ընթանում ազգային անկախության ամրապնդմանն ուղղված գործընթացը: Անգլիացի արևելագետ Պ. Սիլը 40-50-ականները որակում է որպես «Սիրիայի համար պայքարի» ժամանակաշրջան[121]: Հենց այդ ժամանակ էր, երբ դրսից հրահրվող ներքին անկայունությունն ու երկրի աշխարհագրական մասնատումը գաղութային ուժերի կողմից, Սիրիան վերածել էին «փաստորեն գոյություն չունեցող մի միավորի»: Սիրիական պաշտոնական պատմագրության մեջ այդ ժամանակաշրջանը հիշատակվում է որպես «ազգայնական վարչակարգերի» ժամանակաշրջան, որոնք ներկայացնում էին «բուրժուական» ժողովրդավարության կամ զինվորական մենիշխանության տարբեր ձևերը: 1949-1951 թթ. հեղաշրջումները հաջորդում էին մեկը մյուսին: Եվ քաղաքագետներից շատերը նույնիսկ հարց էին բարձրացնում Սիրիան որպես անկախ պետություն պահպանելու կամ Իրաքի և Հորդանանի հետ միություն (Մեծ Սիրիա) կազմելու նպատակահարմարության մասին:

Մերձավոր Արևելքում ԽՍՀՄ-ի և Միացյալ Նահանգների պայքարի սաստկացումն անխուսափելիորեն բաժանարար նոր գծեր էր ստեղծում տարածաշրջանում: Այն հիմնականում կենտրոնանալով արաբա-իսրայելյան հակամարտության շուրջը՝ իր հերթին աստիճանաբար ձևավորեց երկու հակադիր ճամբարներ, որոնցից առաջինն ընդգրկում էր ԽՍՀՄ և «ազգայնական» վարչակարգեր ունեցող Եգիպտոսը, Սիրիան, 1958 թվականից հետո՝ նաև Իրաքը, իսկ երկրորդը՝ ԱՄՆ-ն, Իսրայելը և «չափավորական» ամերիկամետ արաբական թագավորությունները՝ Հորդանանը, Սաուդյան Արաբիան, Քուվեյթը և այլն:

Արաբա-իսրայելյան առաջին պատերազմից հետո իրականում խաղաղություն այդպես էլ չհաստատվեց տարածաշրջանում՝ բա-

[121] Patrick Seale.The Struggle for Syria.A study of Past War Politics. 1945-1958, London, 1965.

ցառությամբ 1949 թ. գարնանը կնքված զինադադարի, երբ Իսրայելի սահմաններն ավելի շատ ռազմաճակատ, քան սահմանագիծ էին հիշեցնում: Գրոհներն ու հակագրոհները, հետախուզական առաքելությունները, կոմանդոսական հարձակումներն ու ռազմարշավները դարձել էին օրվա հրամայական: Սիրիա-Իսրայել, Հորդանան-Իսրայել, Եգիպտոս-Իսրայել սահմանագծերի երկայնքով իրականացվող փոխհրաձգությունները սովորական գործընթացներ էին: «Միացյալ ազգերի կազմակերպության» համատեղ զինադադարի հանձնաժողովը (UNMAC) զբաղված էր հակամարտող կողմերի հայցերի ու մեղադրանքների տարորոշմամբ ու դատավճիռների կայացմամբ կամ Անվտանգության խորհրդի հանձնարարությամբ ագրեսիվ գործողությունների դեմ հորդորների արձակմամբ: 1949-1955 թթ. ընթացքում հազարավոր միջադեպեր են գրանցվել:

Շուրջ 150.000 պաղեստինցի փախստականներ զրկված էին ապրուստի միջոցներ հայթայթելու և իրենց կենսագործունեությունն ապահովելու պատշաճ հնարավորությունից: Իրենց բնակավայրեր վերադառնալու սին հեռանկարի ակնկալիքով գործնականում փախստականներ չհամարվող այս մարդիկ ամբողջապես կրում էին պատերազմի ծանր հետևանքները: Նրանք, մեծ մասամբ բնակություն հաստատելով Հորդանանում, ապակայունացում հաղորդեցին ոչ միայն երկրի ներքաղաքական կյանքին, այլև ողջ տարածաշրջանին:

Գրեթե 1 միլիոնի հասնող պաղեստինցի փախստականներ ապաստան էին գտել հարևան արաբական երկրներում՝ Սիրիայում և Եգիպտոսում: Ճամբարներում հաստատված փախստականների մեծ մասի խնամքը հոգում էր ՄԱԿ-ի գործակալություններից մեկը՝ յուրաքանչյուր անձին հատկացնելով ամսական երկու դոլարից պակաս գումար, ցուցաբերելով բժշկական հոգածություն ու սննդամթերք հասցնելով: Սակայն նրանք՝ այդպես անգործ ու թշվառ, շա-

ռունակում էին տոկալ՝ աստիճանաբար ընդգրկվելով Իսրայելի դեմ զինված պայքարի մեջ:

Պաղեստինցիների իրականացրած սահմանային խախտումների դեմ Իսրայելը որդեգրեց «զանգվածային վրիժառության» քաղաքականությունը, որն առավել ցայտուն արտահայտվեց 1954 թ. մարտին՝ Նահհալինի (Հորդանան), իսկ 1955 թ. փետրվարին՝ Գազայի դեմ կազմակերպված կանոնավոր զորամիավորումների հարձակումների ժամանակ: Վերջին թիրախը դարձավ Գազայում գտնվող եվրոպական բանակի կենտրոնակայանը, որտեղ եգիպտացիների կորուստները կազմեցին 69 մարդ: Ըստ երևույթին, իսրայելյան այդ հարձակումները, տագնապի լուրջ ազդանշան հանդիսանալով եգիպտական ղեկավարության համար, օրակարգում դրեցին եգիպտական բանակի սպառազինման անհրաժեշտության խնդիրը: Մերժում ստանալով Արևմուտքից, մասնավորապես՝ ԱՄՆ-ից ռազմական օգնություն ստանալու խնդրանքին՝ 1955 թ. սեպտեմբերին Եգիպտոսի ղեկավար Գամալ աբդել Նասերը հայտարարեց, թե Չեխոսլովակիան Եգիպտոսին կտրամադրի պահանջված ռազմական օժանդակությունը:

Նասերին առաջինն արաբական աշխարհում հաջողվեց օգտագործել սառը պատերազմի հանգամանքը և ակնհայտորեն լծակներ ձեռք բերել թե՛ Արևմուտքի և թե՛ ԽՍՀՄ-ի նկատմամբ առավել բարենպաստ պայմաններ կորզելու նկատառումներով:

Պետք է նշել նաև, որ 1955 թ. Եգիպտոսում Խորհրդային Միության դիրքերի ամրապնդման պատճառով ամերիկյան քաղաքականությունը տարածաշրջանում էլ ավելի ակտիվացավ՝ ուժեղացնելով երկու գերտերությունների միջև առճակատումն ու անմիջական բախման հնարավորությունը: 50-ականներին ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև ընթացող սառը պատերազմը Եվրոպական մայրցամաքից տեղափոխվեց Մերձավոր և Միջին Արևելք՝ այնտեղ տեղի

ունեցող նշանակալի զարգացումները ենթարկելով գերտերությունների գլոբալ դիմակայության տրամաբանությանը: Միևնույն ժամանակ սահմանային ընդհարումները նվազելու փոխարեն ավելի հաճախակի էին դառնում: Իսրայելական ուժերը հոկտեմբերին 22-ին հարձակում գործեցին Սիրիայի, նոյեմբերի 2-ին՝ եգիպտական դիրքերի, իսկ դեկտեմբերի 11-ին՝ սիրիական առաջապահ ուղեկալի վրա: Հարձակումների համար Իսրայելն արժանացավ միայն Անվտանգության խորհրդի հորդորներին: Արաբներն Իսրայելը համարում էին Արևմտյան պետություն, և արաբական, հատկապես եգիպտական քարոզչամեքենան գնալով առավել խիստ հակաարևմտյան բնույթ էր ստանում: Այդ ընթացքում Հորդանանում, 1955 թ. դեկտեմբերին արևմտամետ կառավարության ու Բաղդադի պակտի դեմ բողոքի ցույցեր կազմակերպվեցին, ապա կառավարությունը տապալվեց, իսկ բռնությունները շարունակվեցին այնքան ժամանակ, մինչև որ 1956 թ. մարտի 2-ին Հուսեյն թագավորը ծառայությունից հեռացրեց հորդանանյան ռազմական ուժերի հրամանատար, բրիտանացի սպա Գլաբ փաշային՝ փոխարենը նշանակելով երիտասարդ արաբ ազգայնականի:

Եգիպտոսի և ԽՍՀՄ-ի միջև հարաբերությունների սերտացման հետևանքով ԱՄՆ պետքարտուղարը 1956 թ. հուլիսի 19-ին, Վաշինգտոնում Եգիպտոսի դեսպանին տեղեկացրեց, որ ԱՄՆ-ն հրաժարվում է Եգիպտոսին տրամադրել նախկինում խոստացված 270 մլն դոլարի փոխառությունը՝ Ասուանի ջրամբարի առաջին հերթի կառուցման նպատակով: Պատասխան քայլը եղավ հուլիսի 26-ին Սուեզի ջրանցքի ազգայնացման մասին Նասերի հայտարարությունը: Արևմուտքի հակազդեցությունն իրեն երկար սպասեցնել չտվեց: Օգոստոսի 2-ին Բրիտանիայի և Ֆրանսիայի արտգործնախարարներն ու ԱՄՆ պետքարտուղարը հանդիպում ունեցան Լոնդոնում: Նշված երկրները նաև փոխզիջումային լուծում գտնելու

նպատակով սեպտեմբերի 5-ին Կահիրե առաքելություն ուղարկեցին, որը հաջող ավարտ չունեցավ: Եգիպտոսը շարունակում էր օգտագործել ջրանցքը: Նասերը տեղի չտվեց նույնիսկ Եգիպտոսի արտասահմանյան հաշիվները սառեցնելու վերաբերյալ հնչած սպառնալիքներին: Եգիպտոսը հանդես եկավ ընկերության բաժնետերերին փոխհատուցում վճարելու առաջարկությամբ, սակայն պնդեց, որ ջրանցքը «եղել է ու պետք է լինի եգիպտական»: Մասնակից բոլոր կողմերի ձեռնարկած տարբեր միջոցառումներից ու պաշտոնական հայտարարություններից հետո Իսրայելը, չնայած ՄԱԿ-ի նախազգուշացումներին, հոկտեմբերի 29-ին հարձակվեց Եգիպտոսի վրա: Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան երկու կողմերին էլ վերջնագիր ներկայացրին: Այնուհետև՝ հոկտեմբերի 31-ին, ռմբակոծեցին Կահիրեն և Ալեքսանդրիան, իսկ նոյեմբերի 2-ին ներխուժեցին ջրանցքի գոտի: Նոյեմբերի 5-ին անգլո-ֆրանսիական ուժերը գրավեցին Պորտ-Սաիդը, սակայն նոյեմբերի 7-ին տեղի տալով ԱՄՆ և ԽՍՀՄ ճնշումներին՝ համաձայնեցին կրակի դադարեցմանը[122]:

Հավանական է թվում նաև այն վարկածը, որ Բրիտանիան ու Ֆրանսիան, դաշնակիցների պատերազմ սանձազերծելով Եգիպտոսի դեմ, Նասերին տապալելու ուղղակի նպատակ են հետապնդել: Ինչ վերաբերում է Իսրայելին, ապա նա հասավ իր նպա-

[122] 1956 թ. պատերազմի վերաբերյալ տե՛ս Политика Англии на Ближнем и Среднем Востоке. М., 1966, Медведко Л.И. К востоку и западу от Суэца. М., 1980, Neff, Donald. Warriors at Suez: Eisenhower Takes America into the Middle East. New York: Simon & Schuster, 1981, Kunz, B. Diane. The Economic Diplomacy of the Suez Crisis. Chapel Hill: University of North Carolina Press, 1991, Freiberger, Z. Steven. Dawn over Suez: The Rise of the American Power in the Middle East. Chicago, 1992, Kyle, Keith. Suez. New York: Str. Martin's Press. 1991, Lucas, W. Scott. Divided We Stand: Britain, the US and the Suez Crisis. London: Holder and Stoughton, 1991, Louis, Roger William and Owen Robert. Suez 1956: The Crisis and its Consequences. Oxford: Claredon Press, 1989, Childers, B. Erskine. The Road to Suez. London, 1962, Nutting, Anthony. No End of a Lesson. London, 1967, ԱՄՆ պետքարտուղարության հատուկ հրապարակումը՝ The Suez Canal Problem. Washington, 1956, Lloy, Selwyn. Suez 1956: A Personal Account, London, 1978:

տակին՝ ապահովելով անարգել մուտքը Տիրանի նեղուցից Աքաբայի ծոցում գտնվող իր Էյլաթ նավահանգիստ: Եգիպտոսի կողմից Իսրայելի նավարկության համար ներքին տարածքային ջրեր համարվող շրջանների փակման իրավունքի հարցը մեկ տասնամյակ անց՝ 1967 թ. հունիսին, նոր կռվի բռնկման շարժառիթ հանդիսացավ: Սակայն 1956 թ. պատերազմի ամենակարևոր արդյունքն այն էր, որ բրիտանական ու ֆրանսիական բանակների անհաջողությունն ու նրանց ուժերի հարկադրաբար դուրսբերումը Եգիպտոսից ազդարարեցին Մերձավոր Արևելքում եվրոպական (Անգլիայի և Ֆրանսիայի) օտար գերիշխանության դարաշրջանի ավարտը. առաջին բանը, որ եգիպտական զորքերն արեցին Սուեզ մուտք գործելուն պես, ֆերդինանդ դը Լեսսեպսի արձանի պայթեցումն էր:

Սուեզի ճգնաժամը Նասերին արաբական հերոս դարձրեց: Պատերազմին նա հավելեց Սուեզի ջրանցքի ընկերության ազգայնացումը և ապահովեց Խորհրդային Միության ռազմական օգնության տրամադրումը: Արաբների կարծիքով Եգիպտոսը մարտնչեց Բրիտանիայի, Ֆրանսիայի ու Իսրայելի դեմ, իսկ Նասերը մարտահրավեր նետեց աշխարհին ու հաղթող դուրս եկավ:

Եգիպտոսում տեղի ունեցող դեպքերն ու զարգացումներն իրենց ազդեցությունն էին թողնում արաբական մյուս երկրների վրա: Այսպես՝ Լիբանանը, հետևելով Եգիպտոսի օրինակին, պայթեցրեց «Իրաք Պետրոլիում» ընկերության նավթատարը: Նասերամետ զգացմունքային ալիքն այնքան ուժգնորեն էր համակել արաբներին, որ Հորդանանի երիտասարդ թագավոր Հուսեյնը, համոզված լինելով գահի մոտալուտ կորստյան հարցում, 1957 թ. ապրիլին անձամբ հարված հասցրեց առավել ծայրահեղորեն տրամադրված ազգայնամոլներին՝ աշխատանքից հեռացնելով իր վարչապետին ու բանակի հրամանատարին, և կառավարությունը վերակազմավորեց իր պապի՝ Աբդալլահ թագավորի ոճով:

Սիրիայի երկարատև անկայուն վիճակը 1958 թ. փետրվարին հանգեցրեց Եգիպտոսի հետ Սիրիայի միավորմանը՝ Միացյալ Արաբական Հանրապետության կազմավորման միջոցով: Երկու երկրների միջև որոշակի սերտ միասնության ուղղությամբ քայլեր ձեռնարկվել էին դեռևս 1956 թվականին: Նույն տարվա հունվարին Եգիպտոսի նոր Սահմանադրությամբ հռչակվեց, որ եգիպտացիները «կազմում են արաբ ազգի մի մասը», իսկ հուլիսին Սիրիայի խորհրդարանը Եգիպտոսի հետ դաշնային միության նախագծերի ուսումնասիրության նպատակով բանակցային հանձնաժողով կազմավորեց: Մի քանի ամիս անց՝ 1957 թ. նոյեմբերին, Դամասկոսում համատեղ խորհրդարանական նիստ գումարվեց, որի ընթացքում դաշնային միության ստեղծման ուղղությամբ պահանջվեց լրացուցիչ քայլեր ձեռնարկել: Վերջապես, 1958 թ. փետրվարին Սիրիայում կոմունիստական գաղափարների տարածումն ու համապատասխան իշխանության հնարավոր ձևավորումը կասեցնելու նպատակով հայտարարվեց Միացյալ Արաբական Հանրապետության (ՄԱՀ) ստեղծումը:

Արաբական մյուս երկրները հրավիրվում էին միանալ ՄԱՀ-ին: Առավել հետաքրքրական էր Եմենի՝ արաբական միակ երկրի որոշումը նորաստեղծ պետական կազմավորմանը միանալու վերաբերյալ:

Ի հակազդեցություն ՄԱՀ-ին՝ «արևմտամետ» Իրաքի ու Հորդանանի կառավարությունները փետրվարի 14-ին անմիջապես կազմավորեցին Արաբական Միությունը՝ խորհրդանիշ ընդունելով Արաբական հեղափոխության դրոշը:

Սաուդյան Արաբիայում, որտեղ նավթային անսպասելի ու անսահման հարստությունից առաջացած շռայլության ու կոռուպցիայի դեմ բողոքի ալիքը 1958 թ. ապրիլին հանգեցրեց պալատական թավշյա հեղաշրջման, 1953 թ. իր մահկանացուն կնքած Աբդուլ

Ազիզ թագավորի որդի թագավոր Սաուդը իշխանությունը հանձնեց իր եղբորը՝ գահաժառանգ Ֆեյսալին:

Ուղիղ մեկ ամիս անց բազմադեմ Լիբանանի քաղաքական ու կրոնական ֆրակցիաները, որոնք, 1830-ականներից սկսած, սաստիկ պայքար էին մղում միմյանց դեմ, դարձյալ բացահայտ պատերազմի մեջ մտան: Խնդիրն այժմ այն էր, թե Լիբանանը ԱՄՆ նախագահ Էյզենհաուերի հայտնի հայեցակարգի միջոցով կընդգրկվի Արևմուտքի ազդեցության ոլորտում, թե կկապվի Արաբական աշխարհի հզոր տերություններին, մասնավորապես Եգիպտոսին ու Սիրիային: Արևմուտքի հետ սերտ կապերը ողջունող քրիստոնեական և արաբական երկրներին նախապատվություն տվող մահմեդական համայնքների միջև հակասությունները հանգեցրին Լիբանանում քաղաքացիական պատերազմի բռնկմանը: Լիբանանի նախագահը, անձամբ իշխանության գալով 1952 թ. հեղաշրջման միջոցով, դիմեց Միացյալ ազգերի ու, վերջապես, Միացյալ Նահանգների օգնությանը: Այդ ընթացքում իրաքյան բանակն անսպասելիորեն հեղաշրջում իրականացրեց՝ տապալելով Նուրի Սաիդի արևմտամետ կառավարությունը[123]: Արևմուտքի դիրքերը տարածաշրջանում լրջորեն խարխլվեցին: Ստեղծված պայմաններում Վաշինգտոնը չէր կարող հապաղել:

Ամերիկյան հակազդեցությունը շտապ և ուժգին էր. ընդամենը ժամերի ընթացքում ամերիկյան Վեցերորդ նավատորմի առաջին ռազմանավերը ծովային դեսանտ ափ հանեցին, իսկ Բրիտանիան օդային ստորաբաժանումներ մտցրեց Հորդանան: Ի տարբերություն Սուեզի՝ այս ներխուժումն իրականացավ Լիբանանի կառավարության պահանջի համաձայն: Ամերիկացիների միջամտությունն

[123] 1958 թ. հեղափոխության վերաբերյալ տե՛ս Slaglett, Peter and Farouk-Slaglett, Marion. Iraq since 1958: From Revolution to Dictatorship. London: KPI Limited, 1987, Lous, William Roger and Fernea, A. Robert. The Iraqi Revolution of 1958: The Old Social Classes Revisited. London: I.B.Tauris, 1991:

ավարտվեց փոխզիջումային լուծումով, որի համաձայն՝ լիբանանյան բանակի հրամանատար գեներալ Ֆուադ Շիհաբի վրա դրվեց երկրի նախագահի ծանր պարտականությունը:

Իրաքում Աբդուլ-Քարիմ Քասեմի նոր կառավարությունը զգալիորեն տարբերվում էր Նասերի կառավարությունից: Թագավորը, գահաժառանգ արքայազնը, վարչապետը բռնվեցին ու գնդակահարվեցին, ամենուր դաժան տեսարաններ էին ու խառնամբոխի հիստերիա: Իշխանությունը բռնագրաված ռազմական ուժերն արագ պառակտվեցին: Չափավոր, ազգայնական խմբերին 1959 թ. փոխարինելու եկած ուժերն աստիճանաբար թեքվում էին դեպի ձախակողմյան արմատականները: 1959 թ. անհաջող հեղաշրջման փորձ կատարվեց, որին հաջորդեցին կառավարության անդամալուծումն ու հակաքրդական արշավի սանձազերծումը:

1961 թ. ամռանը Իրաքի կառավարության դեմ ապստամբած Մոլլա Մուստաֆա Բարզանու քուրդ հետևորդներն արագ գրավեցին Հյուսիսային Իրաքի ողջ լեռնային շրջանը (Քուրդիստանը) և կասեցրին դեպի տափաստաններ կառավարական զորքերի հետքաշումը: Ի պատասխան՝ Քասեմի կառավարությունը ռմբակոծեց քրդական գյուղերը: Պաշտոնական հաղորդագրությունների հեղեղ էր տեղում՝ գուժելով, թե ապստամբությունն ամբողջովին ճնշված է կամ շուտով կճնշվի: 1962 թ. օգոստոսին աշխարհին ու իրաքցիներին իրենց հզորությունը ցուցադրելու նպատակով քրդերը պայթեցրին Իրաքից Միջերկրականի նավահանգիստ ձգվող նավթամուղը: Իրաքյան բանակի՝ ապստամբությանը վերջ տալու անկարողությունը պայմանավորված էր թե՛ Քասեմի կողմում գտնվող կադրային սպաների նկատմամբ վստահության պակասով և թե՛ նրա ռեժիմի՝ վճռական գործելու անզորությամբ: Վերջապես, այս խնդիրներն էին, որ զուգակցվելով նրա թույլ տված մի շարք այլ սխալներին՝ արագացրին հեղաշրջման գործընթացը, որը 1963 թ. փետրվարի

8-ին ավարտվեց Քասեմի կառավարության տապալմամբ ու նրա մահապատժով:

Ըստ էության, Միացյալ Արաբական Հանրապետությանը վիճակված չէր երկար գոյատևել: Պետք է նշել, որ Եգիպտոսի հետ միավորման երեք ու կես տարին (1958-1961 թթ.) Սիրիան թուլացրեց քաղաքականապես, երբ անտեսվեցին նրա զարգացման առանձնահատկություններն ու պայմանների տարբերությունները՝ Եգիպտոսի հետ համեմատած: Ի վերջո, Սիրիայում կենտրոնախույս ուժերն ամրապնդեցին իրենց դիրքերը, իսկ 1961 թ. սեպտեմբերի 28-ին բանակային խունտան (քաղաքական խումբ) ընդվզեց Դամասկոսում՝ հռչակելով ազգային կառավարություն ու բոլոր եգիպտացիներին հորդորելով երկրից հեռանալ: Հոկտեմբերի 19-ին Սիրիան նորից դարձավ Արաբական լիգայի անդամ: Չնայած դեկտեմբերի 1-ին երկրում կայացած գլխավոր ընտրություններին՝ նոր կառավարությունը ևս տապալվեց 1962 թ. մարտի 28-ին:

Արաբիայի հարավ-արևմուտքում գտնվող Ադեն նավահանգիստն անգլիական վերահսկողության տակ վերածվել էր համեմատաբար բարգավաճ ու կազմակերպված անկլավի: Նավթային արդյունաբերության ու նավարկության աճը, ինչպես նաև Բրիտանիայի համար ռազմավարական կարևոր հենակետ լինելու հանգամանքը հարստացրին Ադեն նավահանգիստը, մինչդեռ Դաշնություն կոչված ցեղային տարածքները որևէ զարգացում չապրեցին և, ըստ էության, կանխամտածված աչքաթող արվեցին: Հեռավոր տարածության վրա, բրիտանական վերահսկողությունից դուրս Եմենը հետամնաց մի ծայրագավառի էր նման: Սակայն հետագայում ո՛չ բրիտանացիների դեմ կիպլինգյան կռիվներ մղող եմենցիներին, ո՛չ էլ երկրի խորքի ցեղաբնիկներին, այլ փորձառու ու համեմատաբար բարգավաճ Ադեն քաղաքի արհմիությունների աշխատավորներին էր վիճակված խարխլելու բրիտանական կայսրության դիրքերը Հարավարևմտյան Արաբիայում:

Մենք արդեն նշել էինք, որ 1937 թ. Ադենը պաշտոնապես դարձավ բրիտանական գաղութ: 1956 թ. հոկտեմբերին անգլո-ֆրանս-իսրայելյան ինտերվենցիայի հետևանքով, երբ Սուեզի ջրանցքը շրջափակվեց, Ադեն նավահանգիստը ևս փակվեց: Սա առևտրի անկման, ֆինանսական ճգնաժամի և նոր ձևավորված աշխատավորների շրջանում գործազրկության աճի պատճառ դարձավ:

Խորհրդային Միությունն առիթն օգտագործելով՝ Եմենին ռազմական օգնություն ցուցաբերեց, որն էլ գործի դրվեց արդեն իսկ 1957 թ. առաջին ամիսներին՝ բրիտանացիների հետ սահմանային ընդհարումների ժամանակ: Ադենից բրիտանացիներին դուրս մղելուն էր ուղղված նաև միապետական Եմենի միավորվելու որոշումը, որի համաձայն՝ 1958 թ. փետրվարին հռչակվեց Միացյալ Արաբական Հանրապետությունը: Երկրի հարավում, հասարակության լայն շրջաններում սրընթաց աճում էր Եգիպտոսի նախագահ Աբդել Նասերի հեղինակությունը: Մեկ տարի անց՝ 1959 թ. փետրվարի 11-ին, հռչակվեց Հարավի Էմիրությունների Դաշնությունը:

1962 թ. սեպտեմբերի 9-ին իր մահկանացուն կնքեց Եմենի Իմամ Ահմեդը, որին հաջորդեց նրա որդի Բադրը՝ անվճռական ու թուլամորթ մի երիտասարդ: Հոր մահից երեք շաբաթ չանցած, նոր Իմամը տապալվեց իր հովանավորյալի՝ բանակի հրամանատար Աբդալլահ աս-Սալեհի ղեկավարած հեղաշրջման պատճառով: Եմենում տեղի ունեցած հեղաշրջումը Եգիպտոսին հնարավորություն ընձեռեց Հարավարևմտյան Արաբիայում իր դիրքերն ամրապնդելու համար: Եմենի նոր կառավարությունն օգնության խնդրանքով դիմեց Կահիրեին, որն էլ շատ արագ արձագանքեց: Այդ ժամանակ Եգիպտոսի ռազմուժի ու խորհրդատուների քանակը հասել էր 70.000-ի: Եմենը դարձավ Եգիպտոսի Վիետնամը, որտեղ իրական պատերազմական գործողություններ ծավալվեցին պարտիզանական ուժերի դեմ:

Արևմուտքը՝ Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն, անհանգստացած էին եգիպտական ներխուժման հետևանքով Արաբիայի նավթային միապետություններում անկայուն իրավիճակի ստեղծման, ինչպես նաև այնտեղ խորհրդային ազդեցության տարածման կապակցությամբ: Եգիպտացիները Եմենի հեղափոխությունը սկզբում համարում էին իրենց սեփական հեղափոխության շարունակությունը, իսկ այնուհետև՝ բազում թշնամիներից եգիպտական հեղափոխության պաշտպանության միջոց: Շուտով եգիպտացիները, փաստորեն, գրավեցին երկիրը՝ կազմելով իրենց սեփական կառավարությունը, քանի որ Եմենի իշխանություններն արդեն իսկ պատերազմի ընթացքում ապացուցել էին իրենց անկարողությունը:

Սպանությունները, ռմբակոծություններն ու ահաբեկչական հարձակումները սովորական երևույթ էին դարձել Հարավարևմտյան Արաբիայի համար: Ի վերջո, բրիտանացիները գիտակցեցին, որ խաղը տանուլ են տվել և 1967 թ. օգոստոսին երկրից դուրս բերեցին իրենց վերջին զորքերը:

Նոյեմբերի 29-ին Ադենում հռչակվեց Հարավային Եմենի Ժողովրդական Հանրապետությունը, որի քաղաքացիները, պատերազմական գործողությունների մեծ փորձ ունենալով հանդերձ, բացարձակ անկարող գտնվեցին երկրի կառավարման գործում: Հեղափոխության նկատմամբ ոչ միանշանակ վերաբերմունքը նոր պառակտում մտցրեց առանց այդ էլ ճգնաժամային վիճակում գտնվող նորաստեղծ պետության հասարակության մեջ: Չափավորները, որոնք հանդես էին գալիս բրիտանացիների հետ համագործակցության օգտին, շատ արագ մոռացության մատնվեցին, իսկ իշխանական պայքարի մեջ գտնվող ձախակողմյան ուժերը պայքար մղեցին այնքան ժամանակ, մինչև որ Հարավային Եմենը դարձավ թերևս ամենաարմատական արաբական պետությունը:

Արաբական աշխարհում կատարվող հեղաշրջումներից չխուսափեցին նաև Սուդանն ու Լիբիան: Սուդանում անկախության ձեռքբերումից ուղիղ երկուսուկես տարի անց՝ 1956 թ. հունվարի 1-ին, բանակը միջամտեց: 1958 թ. նոյեմբերի 17-ի հեղաշրջումն իրականացվեց առանց արյունահեղության, սակայն ձեռք բերված հաջողություններն ի չիք դարձան 1964 թ. հոկտեմբերի 21-ի նշանավոր քաղաքացիական ցույցերի ժամանակ՝ անդամալուծելով երկիրը: Մինչև 1969 թ. քաղաքացիական դաշինքի ձևավորումը մի շարք կառավարություններ հաջորդեցին իրար: Ազգային տնտեսության աճի տեմպերի նվազումը, հարավում այլախոհության աճը, ազգային խնդիրների ուղղությամբ համաձայնության բացակայությունը պատճառ դարձան 1969 թ. մայիսի 25-ին արդեն մեկ այլ ռազմական միջամտության՝ Ջաֆար Նումեյրիի հովանու ներքո սպանների փոքր խմբի առաջնորդությամբ: Իր հերթին, այս կառավարությունը ենթարկվեց մեկ այլ կատաղի հեղաշրջման, որը 1971 թ. հուլիսին կազմակերպել էր Սուդանի կոմունիստական կուսակցությունը, սակայն մոտ տասնօրյա բանտարկությունից հետո Նումեյրին վերադարձվեց իշխանության և 1971 թ. հոկտեմբերին ընտրվեց նախագահ: Այսպիսով, իր անկախության մի քանի տարիների ընթացքում Սուդանն ունեցավ միակուսակցական, կոալիցիոն, ձախակողմյան ռազմական կառավարություններ, քաղաքացիական երկու ռազմական հեղաշրջումներ, իշխանության ստանձնած կոմունիստական կուսակցություն, հաջողված հակահեղաշրջում ու զինվորական կառավարության «քաղաքացիականացում»:

Անկախացումից հետո, չնայած Երկրորդ համաշխարհային պատերազմում մղած երկար ու հուսահատ պայքարին, Լիբիայում չհաջողվեց միասնական ամուր ազգային պետություն ստեղծել: Օտարների համար Լիբիան կարծես մեծ կարևորություն չէր ներկայացնում: Երկրի ներսում իրականացվող բարեփոփոխումների

տեմպերը դանդաղ էին, խղճուկ ու հետամնաց. այնտեղ առաջընթացի որևէ նշույլ իսկ չէր նկատվում: Իրավիճակը փոխվեց 1959 թ.՝ նավթի պաշարների հայտնաբերումից հետո:

1969 թ. սեպտեմբերի 1-ին լիբիական բանակի կրտսեր սպաների մի խումբ՝ Մուամմառ ալ-Քադաֆիի ղեկավարությամբ, առաջնորդվելով նախագահ Նասերի եգիպտական մոդելով, տապալեց թագավորական ռեժիմը և հռչակեց Սոցիալիստական Լի7բիական Ժողովրդական Արաբական Հանրապետությունը (Ջամահիրիյա): Լիբիան ընտրեց զարգացման երրորդ՝ ո՛չ սոցիալիստական և ո՛չ էլ կապիտալիստական, միայն իրեն հատուկ զարգացման ուղին, որի հիմնադրույթները զետեղվեցին Քադաֆիի հեղինակած «Կանաչ գրքում» (Քիթաբ ալ-Ախդառ)[124]:

5. 1967 թ. արաբա-իսրայելյան «վեցօրյա» պատերազմը[125]

1964 թ. մերձավորարևելյան թատերաբեմում հայտնված «Պաղեստինի ազատագրման կազմակերպությունը» (ՊԱԿ), իր ուրույն ապակայունացնող դերակատարությունն ունեցավ տարածաշրջանում: Արաբական աշխարհում գոյություն ունեցող հակասություններ-ի պայմաններում պաղեստինցիների հարցը շահարկման առար-

[124] 1968 թ. հեղափոխության և Լիբիայում Քադդաֆիի կառավարման վերաբերյալ տե՛ս Deeb, Marius and Deeb, Jane. Libya since the Revolution. New York, 1982, Bearman, Jonathan. Qadhafi's Libya. London, 1986, Cooley, K.John. Libyan Sandstorm. New York, 1982, Muscat, Frederick. My President, My Son. Malta, 1983, Davis, John. Libyan Politics: Tribe and Revolution. Berkeley, 1988:

[125] Թեմայի վերաբերյալ տե՛ս Laquer, Walter. The Road to war: The Origins and Aftermath of the Arab-Israeli conflict, 1967–8. Baltimore: Penguin Books, 1968, Neff. Donald. Warriors for jerusalem: The Six Days that Changed the Middle East. New York: Simon&Schuster, 1984, Kosut, Hal. Israel and the Arabs: The June 1967 War. New York: Facts on File, 1968, Howard, Michael and Hunter, Robert. Israel and the Arab World: The Crisis of 1967, London 1967, O'Ballance, Edgar. The Third Arab-Israeli War. Hamden: Archon Books, 1972:

կա դարձավ արաբական երկրների ղեկավարների համար, որի շնորհիվ վերջիններս փորձում էին ամրապնդել իրենց դիրքերը տարածաշրջանում: Ասենք, ի տարբերություն Հորդանանի, սիրիական իշխանությունները թույլատրեցին պաղեստինցիներին (Ալ-Ֆաթահին) որպես հենարան օգտագործել երկրի տարածքը՝ Իսրայելի վրա հարձակումներ գործելու համար[126]:

Հատկանշական է, որ ալ-Ֆաթահի հարձակումների կապակցությամբ իսրայելյան մեղադրանքներին պաշտոնական Դամասկոսը պատասխանում էր հետևյալ կերպ. «Մենք հստակորեն չգիտենք, թե որտեղ են գտնվում «Ալ-Ֆաթահի» ջոկատները և որևէ կերպ պատասխանատու չենք նրանց իրականացրած հարձակումների համար»[127]: Կամ էլ ուղղակի՝ «Ալ-Ֆաթահը» ստեղծել և ղեկավարում է ԿՀԳ-ն՝ Սիրիայի վարչակարգը տապալելու նպատակով, և մենք որևէ կերպ պատասխանատու չենք նրա գործունեության համար»:

Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Սիրիայի ղեկավար շրջանակները, քաջ գիտակցելով Իսրայելի ռազմական գերակայության փաստը, ոչ միայն չէին ցանկանում Իսրայելի հետ պատերազմել, այլև, չնայած ծայրաստիճան լարված հարաբերություններին, չէին էլ ակնկալում: Չէին սպասում, քանի որ սխալմամբ կարծում էին, թե Իսրայելի կառավարությունը երկրում տիրող ներքաղաքական և տնտեսական ճգնաժամի խորացման պայմաններում կխուսափի լայնածավալ պատերազմ սանձազերծելուց: Ընդհանրապես բաասական գաղափարախոսության մեջ կենտրոնական տեղ էին զբաղեցնում Պաղեստինի ազատագրմանն ու ազգային-ազատագրական պայքարին վերաբերող հարցերը, որոնց հա-

[126] Itamar Rabinovich. Syria under Baath: 1963-1966: The Army-Party Symbiosis. Israel University Press, Jerusalem, 1972, pp. 180-208.

[127] Winston Burdett. Encounter with the Middle East. An Intimate Report What Lies Behind The Arab-Israeli Conflict. Atheneum, New York, 1969, p. 169.

ջող իրականացումը հնարավոր էր միայն արաբական աշխարհի միասնականության պայմաններում, իսկ պատերազմն Իսրայելի հետ դիտվում էր որպես հեռավոր նպատակ:

Կարծում ենք, որ մի շարք օբյեկտիվ պատճառներից ելնելով՝ տվյալ ժամանակաշրջանում Եգիպտոսը նույնպես ձգտում էր խուսափել Իսրայելի հետ պատերազմից: Նույնիսկ 1966 թ. Սիրիայի և Եգիպտոսի միջև ստորագրված համատեղ պաշտպանության վերաբերյալ համաձայնագիրը, որը, անկասկած, ԽՍՀՄ-ի ակտիվ դիվանագիտական ջանքերի արդյունք էր, ընդհանուր զինվորական հրամանատարություն էր հաստատում Եգիպտոսի գլխավորությամբ՝ առաջին հերթին նպատակ հետապնդելով վերահսկել պաշտոնական Դամասկոսի ձեռնարկելիք հնարավոր անկանխատեսելի քայլերը:

Գոյություն ունեցող մեկ այլ տեսակետի համաձայն՝ 1967 թ. նախօրեին իրավիճակի վատթարացումը սիրիա-իսրայելյան սահմանին անմիջական կապ ուներ Սիրիայում սրված ներքաղաքական իրավիճակի հետ: Այս տեսակետի կողմնակիցները պնդում են, որ 1967 թ. մայիսին Սիրիայի լարված ներքաղաքական կացությունն անգամ սպառնում էր բաասական վարչակարգի գոյությանը: Վերջինս փրկելու և երկրում ներքին լարվածությունը թուլացնելու նպատակով ԽՍՀՄ-ն ամեն կերպ ձգտում էր ակտիվացնել սիրիա-եգիպտական պաշտպանական համաձայնագիրը՝ տեղեկություններ հաղորդելով Եգիպտոսի սահմանին իսրայելյան զորքերի կուտակումների վերաբերյալ, ինչի պատճառով էլ իրավիճակն էլ ավելի սրվեց:

Բախումները սիրիա-իսրայելյան սահմանին նոր թափ ստացան ապրիլի 7-ից հետո, երբ խփվեց վեց սիրիական օդանավ: 1967 թ. ապրիլի 9-ից մինչև մայիսի 8-ը ընկած ժամանակահատվածում 14 ռազմական միջադեպ արձանագրվեց սիրիա-իսրայել-

յան սահմանի վրա: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Ու. Թանը սահմանային այս միջադեպերը որակեց որպես «պայթունավտանգ»՝ մատնանշելով նրանց մեջ ներգրավված «հատուկ պատրաստություն» ունեցող անձանց[128]: ԱՄՆ պետքարտուղարությունը խուսափում էր հանդես գալ սիրիա-իսրայելյան սահմանային բախումների վերաբերյալ որևէ հստակ դիրքորոշմամբ՝ նախընտրելով հարցի քննարկումը ՄԱԿ-ում, հայտնի ընթացակարգի շրջանակներում:

Եթե սիրիա-իսրայելյան սահմանային բախումներն անմիջական շարժման մեջ դրեցին «վեցօրյա» պատերազմին նախորդող գործընթացը, ապա Եգիպտոսի՝ Սինայի թերակղզում զորքերի կենտրոնացումն ու մայիսի 22-ին Տիրանի նեղուցի փակումը հանգեցրին իրավիճակի կտրուկ սրմանը՝ պատրվակ դառնալով պատերազմը սկսելու համար: Ըստ Վ. Քվանդտի՝ եգիպտական այս վերջին գործողությունների հետևանքով «Վաշինգտոնը ստիպված եղավ պատերազմելու հարցում իր սկզբնական կարմիր լույսը փոխել դեղինի», որն էլ բավարար եղավ Իսրայելի խորհրդարանի համար՝ հունիսի 4-ին պատերազմ սկսելու վերաբերյալ որոշում կայացնելու, նաև հաջորդ օրը, առանց պատերազմ հայտարարելու, ՄԱՀ-ի, Սիրիայի և Հորդանանի վրա հարձակվելու համար[129]:

1967 թ. հունիսի 5-ին սկսված և վեց օր տևած արաբա-իսրայելյան պատերազմի ավարտին Իսրայելին հաջողվեց գրավել արաբական երկրներին պատկանող ընդարձակ տարածքներ՝ 60 հազար քառ. կմ: Իսրայելը ՄԱՀ-ից զավթեց Սինայի թերակղզին՝ դուրս գալով Սուեզի ջրանցքի արևելյան ափը, Շարմ ալ-Շեյխը, Հորդանանի ամբողջ արևմտյան մասը մինչև Հորդանան գետը,

---

[128] US Policy and Diplomacy in the Middle East Crisis, May 15-June 10, 1967. Unpublished Manuscripts, National Security File, NSC History, Middle East Crisis, Johnsons Papers, pp. 7-8.

[129] W. B. Quandt. Peace Process, American Diplomacy and the Arab-Israeli conflict since 1967, Brookings Institution, Washington D.C. 1993, p. 26.

Երուսաղեմ, Բեթղեհեմ ու Նաբլուս քաղաքները, ինչպես նաև Սիրիային պատկանող Ալ-Կունեյտրան ու Գոլանի բարձունքները՝ կանգ առնելով Դամասկոսից ընդամենը 40 կմ հեռավորության վրա:

«Վեցօրյա» պատերազմը հիմնովին խախտեց Մերձավոր Արևելքում ուժերի միջև հաստատված ռազմավարական հավասարակշռությունը՝ փոխելով տարածաշրջանի ընդհանուր քաղաքական պատկերը: Անգամ 90-ականների խաղաղության գործընթացը կոչված էր կարգավորելու հիմնականում հենց այդ պատերազմի հետևանքով առաջացած խնդիրները: ԱՄՆ ղեկավար շրջանակները պետք է բավարարված լինեին պատերազմի արդյունքներով. Իսրայելի վիճակն էլ ավելի անվտանգ էր, քան երբևիցե, իսկ Խորհրդային Միությանը հարող հիմնական արաբ հակառակորդները պարտված ու նվաստացված էին:

1967 թ. սեպտեմբերին կայացած «Բաասի» 9-րդ արտակարգ համագումարը որպես արաբների պարտության հիմնական պատճառ մատնանշեց արաբական ժողովուրդների միասնականության բացակայությունը, ինչը չափազանց ծանր հետևանքներ ունեցավ ամբողջ արաբական աշխարհի համար: Այստեղ հարկ է նշել, որ հետպատերազմյան շրջանում նույնպես չկար միասնություն արաբական երկրների միջև: Եթե պատերազմից ամենաշատ տուժած արաբական երկրները՝ Եգիպտոսն ու Հորդանանը, չէին բացառում Իսրայելի հետ հարաբերությունների քաղաքական կարգավորման հնարավորությունը, ապա Սիրիան միանշանակ դեմ էր այդ ուղղությամբ դիվանագիտական որևէ քայլի: Եվ չնայած այն հանգամանքին, որ Դամասկոսը պաշտոնապես արգելել էր Սիրիայի տարածքի օգտագործումը Իսրայելի վրա հարձակումներ կատարելու համար, այնուամենայնիվ կողմնակից էր Իսրայելի դեմ ահաբեկչական գործողությունների իրականացմանը:

1967 թ. օգոստոսի 26-ին Խարտումում կայացավ արաբական 13 երկրների արտգործնախարարների խորհրդակցությունը, որտեղ հաստատվեցին Իսրայելի նկատմամբ արաբական երկրների քաղաքականության՝ 3 «ոչ»-երից բաղկացած հիմնադրույթները՝ «ոչ» Իսրայելի հետ խաղաղությանը, «ոչ» Իսրայելի ճանաչմանն ու «ոչ» Իսրայելի հետ բանակցություններին: Խորհրդակցության ընթացքում ճանաչվեց Պաղեստինի ժողովրդի՝ անկախ պետություն ստեղծելու իրավունքը: Այդուհանդերձ, ի հայտ եկան տարաձայնություններ Արևմուտքի նկատմամբ նավթային էմբարգոյի շարունակման հարցում: Եթե Սիրիան և Եգիպտոսը հանդես էին գալիս էմբարգոյի շարունակման օգտին, ապա Սաուդյան Արաբիան, Քուվեյթը և այլ պետություններ տրամադրված էին բացասաբար՝ պատճառաբանելով, որ նավթի վաճառքից ստացված եկամուտները կարող են ավելի արդյունավետ ներդրում ունենալ Իսրայելի զավթած արաբական տարածքներն ազատագրելու գործում: Խարտումում նաև որոշում կայացվեց 1967 թ. պատերազմից տուժած արաբական երկրներին ֆինանսական օգնություն տրամադրելու վերաբերյալ[130]:

1967 թ. նոյեմբերի 22-ին ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդն ընդունեց հ. 242 հայտնի բանաձևը, որը, «անթույլատրելի համարելով պատերազմի միջոցով տարածքների գրավումը», կոչ արեց Իսրայելին «դուրս բերել զինված ուժերը գրավված տարածքներից» և կարևորեց «արդար և տևական խաղաղության հաստատումն ու տարածաշրջանի բոլոր պետությունների համար անվտանգության պայմանների ստեղծումը»:

Արժանի է հիշատակման այն փաստը, որ բանաձևի նախագծի հեղինակներից մեկը՝ Բրիտանիայի արտգործնախարար լորդ Քե-

[130] Yergin, Daniel, The Prize: The Epic Quest for Oil, Money and Power. New-York, Simon & Schuster, 1991, pp. 554-558, А.М. Васильев. История Саудовской Аравии, с. 432.

ռադոնը, երկու կողմերի՝ արաբների և հրեաների հավանությանն արժանացնելու նպատակով բանաձևի տեքստում միտումնավոր բաց է թողել անգլերեն որոշիչ հոդը (the) «տարածքներ» բառից առաջ, որը հետագայում սխալ մեկնաբանությունների տեղիք տվեց: Արաբները սկսեցին պնդել, որ իսրայելյան զորքերի դուրսբերումը պետք է իրականացվի գրավված բոլոր տարածքներից, իսկ Իսրայելը նույն համառությամբ հայտարարում էր, որ դուրսբերումը պետք է հասկանալ գրավված արաբական որոշ տարածքներից:

Հ. 242 բանաձևը նաև կողմերին կոչ էր անում հարգել տարածաշրջանի բոլոր երկրների ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը, ինչպես նաև նրանց՝ խաղաղ պայմաններում, անվտանգ ու միջազգայնորեն ճանաչված սահմաններում ապրելու իրավունքը:

Բանաձևը ընդգծում էր տարածաշրջանի ջրային ուղիներով ազատ ու անխափան նավագնացության, պաղեստինյան փախըստականների խնդրի արդար կարգավորման, ինչպես նաև բոլոր երկրների տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունն ապահովելու նպատակով Իսրայելի և արաբ հարևանների սահմանամերձ շրջաններում ապառազմականացված գոտիների ստեղծման անհրաժեշտությունը:

Վաշինգտոնը որոշակի վերապահումներով (հիմնականում անվտանգության խնդիրներին վերաբերող) ընդհանուր առմամբ կողմ էր արտահայտվում իսրայելյան ուժերի դուրսբերմանը գրավված արաբական բոլոր տարածքներից, այդ թվում՝ նաև Սիրիայի՝ Գոլանի բարձունքներից: Պետք է նշել, որ մինչև հ. 242 բանաձևի ընդունումը Վաշիգտոնն ու Լոնդոնը Փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին, որում ասվում էր. «իսրայելյան զորքերի դուրսբերման տակ պետք է հասկանալ դուրսբերում Եգիպտոսից, Հորդանանից և Սիրիայից գրավված բոլոր տարածքներից»:

Այսպիսով, միջազգային հանրության ընդունած վերոհիշյալ բանաձևն այդպես էլ մնաց չիրականացված, իսկ վեցօրյա պատերազմի հետևանքներն արաբական աշխարհը «մարսում է» մինչ օրս:

6. 1970 թ. հորդանանյան ճգնաժամը[131]

1967-1970 թթ. էլ ավելի սաստկացավ տարածաշրջանում դիմակայությունը գերտերությունների միջև: Խորհրդային Միությունը շարունակում էր Սիրիայի և Եգիպտոսի բանակների զինումն ու վարժեցումը, ինչին ԱՄՆ-ն հակադրեց համազոր և երբեմն էլ ավելի գերազանցող ռազմական օգնությունն Իսրայելին:

1970 թ. հուլիսի 2-ին, ելույթ ունենալով հեռուստատեսությամբ, ԱՄՆ նախագահ Ռ. Նիքսոնը Սիրիան և Եգիպտոսը ներկայացրեց որպես «Իսրայելի թշնամի հարևանների»[132]: Տարածաշրջանում ստեղծված իրավիճակը չափազանց պայթունավտանգ համարելով՝ Նիքսոնը չբացառեց ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև բախման հնարավորությունը: Նա իր ելույթում անդրադարձավ նաև Մերձավոր Արևելքում ԱՄՆ քաղաքականությանը՝ շեշտելով, որ այն գլխավորապես հիմնված է այն համոզմունքի վրա, որ խաղաղության, ինչպես նաև տարածաշրջանի յուրաքանչյուր պետության անվտանգության ապահովումը բխում է ԱՄՆ շահերից: Նիքսոնը նշեց նաև՝ ԱՄՆ-ն վստահ է, որ Իսրայելը «չի պատրաստվում ծովը նետել որևէ պե-

---

[131] Տե՛ս Clinton, Bailey. Jordan's Palestinian Challenge, 1948–1983. Westview, Boulder, 1984, Quandt, William. Decade of decisions. Imerican Policy Toward the Arab-Israeli Conflict, 1967–1976. University of California Press, 1977, Dann, Uriel. King Hussein and the Challenge of Arab Radicalism: Jordan, 1955–1967. New York: Oxford University Press, 1989, Kaplan, S. Stephen. United States Aid and Regime Maintenance in Jordan, 1957-1973. "Public Poplicy", (Spring, 1975):

[132] Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996), Երևան, 2000, էջ 32:

տության, մինչդեռ արաբական պետությունները ցանկանում են այդ անել Իսրայելի հետ»[133]: Ըստ Նիքսոնի՝ ուժերի հավասարակշռության խախտումն ու Իսրայելի թուլացումն անմիջապես կարող են հանգեցնել պատերազմական գործողությունների վերսկսման: Ուստի հավասարակշռության պահպանումը նույնպես բխում է Ամերիկայի շահերից:

Իրավիճակը տարածաշրջանում շարունակում էր մնալ լարված. Եգիպտոսը 1968 թ. մարտից ձեռնարկել էր, այսպես կոչված, «հյուծիչ պատերազմ» Իսրայելի դեմ, որն ավարտվեց միայն 1970 թ. օգոստոսի 8-ին զինադադարի կնքումով: 1969 թ. դեկտեմբերից մինչև 1970 թ. փետրվար ընկած ժամանակահատվածում տեղի ունեցան արաբական 2 համաժողովներ՝ մեկը Ռաբաթում, մյուսը՝ Կահիրեում, որոնց ընթացքում դատապարտվեց ԱՄՆ-ի «հակաարաբական կեցվածքը», և կոչ արվեց արաբական երկրների «բոլոր ուժերն ու հնարավորությունները կենտրոնացնելու հանուն ընդհանուր թշնամիների՝ սիոնիզմի և իմպերիալիզմի դեմ զինված պայքարի»[134]:

1968 թվականից սկսած՝ Հորդանանում ծայրաստիճան ակտիվացել էր պաղեստինցի ֆիդայիների շարժումը: Պետք է նշել, որ 1967 թ. պատերազմի հետևանքով հարյուր հազարավոր պաղեստինցիներ ապաստան էին գտել Հորդանանում՝ աստիճանաբար դառնալով «պետություն պետության մեջ»[135]:

1970 թ. սեպտեմբերին Ջ. Հաբբաշի գլխավորած «Պաղեստինի ազատագրման ազգային ճակատը» (ՊԱԱՃ) իրականացրեց քաղաքացիական 4 օդանավի առևանգում, որոնցից երեքն իջեցրեց

---

[133] Mahmoud Riad, The Struggle for Peace in the Middle East. Quartet Books, UK, 1981, p. 142.

[134] International Documents on Palestine, 1970, p. 756.

[135] John F. Delvin, Syria: Modern State in an Ancient Land, Westwiew Press, Boulder, Colo., 1983, p. 101.

Հորդանանի անապատում, իսկ մեկը՝ Կահիրեում: Ահաբեկիչների նպատակն էր ճնշում գործադրել Իսրայելի վրա, վերջինս ազատ արձակի իր բանտերում գտնվող պաղեստինցի ֆիդայիներին: ՊԱԱՃ-ը, ինչպես նաև ՊԱԿ-ը հակադրվում և հակամարտություն էին գրգռում Հորդանանի Հուսեյն թագավորի և պաղեստինցիների միջև: Հարկ է նշել, որ 1970 թ. «հորդանանյան ճգնաժամին» նախորդել էին պաղեստինցիների և Հորդանանի կառավարական ուժերի միջև ընդհարումները, որոնց հիմնական պատճառը հորդանանյան վարչակազմի պատրաստակամությունն էր՝ իր հսկողության տակ վերցնելու «Ռոջերի ծրագրով» նախատեսված Հորդանան գետի Արևմտյան ափը:

1970 թ. ամռանը Հորդանանը նորից կանգնել էր քաղաքացիական պատերազմի շեմին: Պաղեստինյան որոշ խմբավորումներ առաջ էին քաշել «հորդանանյան վարչակազմի դեմ ազգային-ազատագրական պայքարի» ծայրահեղական ու անիրատեսական կարգախոսը՝ այն համարելով Պաղեստինի համար մղվող «պատմական պայքարի անբաժան մասը»[136]:

Սիրիական ղեկավարությունն ուղղակի կապ էր տեսնում Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի վարած քաղաքականության և հորդանանա-պաղեստինյան ճգնաժամի խորացման մեջ: Արևելագետ Ե. Դմիտրիևի կարծիքով 1970 թ. ամռանը Հորդանանի կառավարությունը պատրաստվում էր պայքար սկսել պաղեստինցիների դեմ: Միևնույն ժամանակ ԱՄՆ-ն զենք ու ռազմամթերք էր առաքում Հորդանանին: Սիրիայի ԱԳՆ-ի հայտարարություններից մեկում ասվում էր, որ «Հորդանանի ղեկավարությունը երբեք չէր համարձակվի հարվածել ֆիդայիներին, եթե վստահ չլիներ Միացյալ Նահանգների աջակցության մեջ»[137]:

---

[136] Дмитриев Е., Палестинский узел, Москва, 1978, с. 77.

[137] Նույն տեղում, էջ 78:

Կարծում ենք՝ սիրիա-իսրայելյան սահմանին ռազմական գործողությունների սաստկացման պայմաններում Վաշինգտոնը, օգտվելով միջարաբական հակասություններից, փորձում էր թուլացնել արաբական շարքերի միասնականությունը: Իսկ Հորդանանը դիտվում էր որպես արաբական այդ շղթայի ամենաթույլ օղակ:

Պետք է համաձայնել, որ Սպիտակ տունը միանշանակ անհանդուրժողական կեցվածք էր որդեգրել ահաբեկիչների նկատմամբ և, անկասկած, ճնշում էր գործադրում Հորդանանի վրա՝ կոչ անելով Հուսեյնին ջախջախել ֆիդայիներին: Այսուհանդերձ, Վաշինգտոնը չէր ցանկանում ճգնաժամի խորացումն ու տարածումը Հորդանանի սահմաններից դուրս:

Իր հերթին, Հուսեյնը քաջ գիտակցում էր Հորդանանի համար պաղեստինցիների հետ ընդհարման բացասական հետևանքները ինչպես երկրի ներսում, այնպես էլ արաբական աշխարհում: Այդ իսկ պատճառով ճգնաժամի սկզբում նա փորձեց հարթել հակասությունները խաղաղ ճանապարհով՝ հաշվի չառնելով անգամ 1970 թ. հունիսին իր վրա կատարված անհաջող մահափորձը: Սակայն վերոհիշյալ առևանգումները, ինչպես նաև երկրորդ անհաջող մահափորձը, ստիպեցին Հուսեյնին 1970 թ. սեպտեմբերի 15-ին հրաման արձակել բանակին՝ շարժվելու պաղեստինցի ֆիդայիների դեմ: Հորդանանում քաղաքացիական պատերազմ բռնկվեց:

Հորդանանում կատարվող դեպքերին առաջինն արձագանքեց Սիրիան՝ պաղեստինցիներին օգնության հասնելու նպատակով իր ցամաքային ու օդային ուժերը մարտական պատրաստականության բերելով և տանկային ստորաբաժանումները կենտրոնացնելով հորդանանյան սահմանին: Սեպտեմբերի 20-ին սիրիական տանկերը ներխուժեցին Հորդանան:

ԱՄՆ նախագահ Նիքսոնը սիրիական ներխուժումը բնութագրեց որպես «ամենալուրջ ապառնալիքն աշխարհի խաղաղությա-

նը»[138], իսկ պետքարտուղար Ռոջերը հրապարակայնորեն դատապարտեց սիրիական «ներխուժումը»[139]: Այստեղ հարկ է նշել, որ դեռևս սեպտեմբերի 17-ին Նիքսոնը հայտարարել էր, թե «Միացյալ Նահանգները պատրաստ է միջամտել, եթե Սիրիան և Իրաքը փորձեն օժանդակել պաղեստինցիներին»[140]: Եվ իսկապես, Սպիտակ տունը վճռականորեն էր տրամադրված. սեպտեմբերի 19-ին Նիքսոնը մարտական պատրաստականության բերեց Արևմտյան Գերմանիայում տեղակայված իր օդային ուժերը՝ 6-րդ նավատորմին հրամայելով շարժվել դեպի Միջերկրականի արևելյան շրջանները:

Սիրիական տանկերին օդային հարված հասցնելու նպատակով Հուսեյնը սկզբից պահանջեց ամերիկյան կամ անգլիական անմիջական միջամտությունը, իսկ հետո համաձայնվեց իսրայելյան միջամտության ու ամերիկյան «հովանոցի» ապահովման հետ: Այդ օրերին նորից ի հայտ եկան գոյություն ունեցող տարաձայնությունները Ռոջերի և Քիսինջերի միջև: Ռոջերը ճգնաժամի կարգավորման հարցում կողմնակից էր ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի ջանքերի համադրմանը: Հավատացած լինելով, որ սիրիական ներխուժման հետևում կանգնած է Մոսկվան, Քիսինջերը գտնում էր, որ Հորդանանի ճգնաժամը վերածվել է ԱՄՆ-ի և Խորհրդային Միության մրցակցության՝ Մերձավոր Արևելքում ազդեցության գոտիներ հաստատելու նպատակով: Նա վստահ էր, որ «եթե Վաշինգտոնը չգործի, ճգնաժամը գնալով էլ ավելի կխորանա, իսկ Մոսկվան նախաձեռնությունը կվերցնի իր ձեռքը»[141]: Քիսինջերին հաջողվեց համոզել Նիքսոնին, որ վերջինս համաձայնություն տա Իսրայելի ներկա-

---

[138] US Foreign Policy for the 1970's. A Report to the Congress by Richard Nixon, February 25, 1974.

[139] "New York Times", September 21, 1970.

[140] "Chicago Sun-Times", September 17, 1970.

[141] H. Kissinger, White House Years. Boston: Little, Brown & Co, 1979, pp. 617-619.

յացրած ծրագրին, ըստ որի՝ միայն օդային հարվածը բավարար չէր. նախատեսում էր Իրբիդի շրջանում օդային հարվածի հետ մեկտեղ նաև ցամաքային հարձակում իրականացնել սիրիական դիրքերի վրա: Այդ ծրագրի իրագործման համար Նիքսոնը շտապ 500 մլն ԱՄՆ դոլարի օգնություն, ինչպես նաև 18 «Ֆանտոմ» տեսակի ռմբակոծիչ տրամադրեց Իսրայելին:

Սեպտեմբերի 23-ին Սիրիայի ԱԳՆ-ն հանդես եկավ հայտարարությամբ՝ քննադատելով Սիրիայի դեմ ռազմական գործողությունների իրականացմանն ուղղված ԱՄՆ-ի փորձերը, ինչպես նաև կոչ արեց դատապարտել ԱՄՆ-ի սադրիչ գործողությունները:

Սիրիական տանկային միավորումները, չստանալով օդային աջակցություն և կորցնելով 120 տանկ, ստիպված եղան նահանջել: Նույն օրը Հուսեյնը հայտնեց ԱՄՆ դեսպանին, որ Հորդանանի տարածքում իսրայելյան օդային հարվածների կարիքը չկա, և որ Իսրայելը կարող է իր ցամաքային գործողություններն ուղղել Սիրիայի դեմ[142]: Սակայն Իսրայելը չցանկացավ ցամաքային բախում ունենալ սիրիական բանակի հետ: Վաշինգտոնն իր հերթին «ողջունեց» սիրիական զորքերի դուրսբերումը Հորդանանից: Երեք տարի անց Քիսինջերը կհայտարարի ամերիկյան Սենատում, որ «սիրիական ներխուժումը Հորդանան մեզ ավելի մոտ էր կանգնեցրել պատերազմի շեմին, քան որոշ շատ ավելի հայտնի ճգնաժամեր»[143]:

Ճգնաժամի արդյունքները դրական գնահատեց Միացյալ Նահանգները. Հուսեյնը շարունակեց կատարել առաջին դեմքի պարտականությունները, ֆիդայիները ծայրաստիճան թուլացան, սիրիական ներխուժումը կասեցվեց առանց իսրայելյան կամ ամերիկյան անմիջական միջամտության, ինչպես նաև Խորհրդային Միության ներքաշման:

---

[142] Marvin and Bernard Kalb. Kissinger. Boston:Little Brown, 1974, p. 204.
[143] “The Economist”, 19.11.1977.

Մեր կարծիքով, սակայն, Հորդանանի ճգնաժամի ընթացքում ամերիկյան քաղաքականության կերտողներն անտեսել էին հետևյալ երկու հանգամանքները: Առաջինը՝ թերագնահատելով սիրիական գործողությունների հիմքում ընկած իրական դրդապատճառները՝ նրանք չկարողացան հասկանալ այն պարզ իրողությունը, որ սիրիական բանակի ներխուժումը, ինչպես նաև նրա դուրսբերումը Հորդանանից, կատարվեց ոչ թե Խորհրդային Միության ճնշման կամ ցուցաբերած «վճռական կեցվածքի» պատճառով, այլ Սիրիայի ներքին քաղաքական զարգացումների պատճառով: Սիրիական տանկերի դուրսբերման հիմնական պատճառն այն էր, որ Ասադը, գիտակցելով ռազմական գործողությունների համար անբարենպաստ պայմաններն ու բանակի համար դրա հնարավոր ծանր հետևանքները, չցանկացավ երկրի օդային ուժերը ներքաշել կասկածելի արկածախնդրության մեջ: Ասադի այդ որոշման վրա անկասկած ազդեցություն ունեցան նաև նրա և Ջադիդի միջև առկա հակասություններն ու նրանց միջև ընթացող պայքարը. ներխուժման անարդյունք ավարտն էլ ավելի կհեղինակազրկեր Ասադի հակառակորդին:

Ճգնաժամի օրերին Ասադի կայացրած այդ որոշման պատճառների վերաբերյալ գոյություն ունի նաև մեկ այլ տեսակետ: Այն, որ Հորդանան ներխուժումն Ասադն արդեն կայացել էր որպես Սիրիայի de facto ղեկավար, ուստի տանկերի ներխուժումը Հորդանան չէր կարող իրականացվել առանց նրա համաձայնության: Եվ քանի որ Ասադն այդքան էլ բարյացակամ վերաբերմունք և հարգանք չուներ պաղեստինցիների ու նրանց ղեկավարության նկատմամբ, բնականաբար, չէր ցանկանում, որ վերջիններս հաղթանակած ու էլ ավելի ուժեղացած դուրս գան այդ պայքարից:

Ամերիկյան քաղաքականության երկրորդ թերացումը եղավ այն, որ Նիքսոնն ու Քիսինջերը, հորդանանյան դեպքերը նույնպես

դիտարկելով ԽՍՀՄ-ի հետ համընդհանուր դիմակայության տեսանկյունից, գերագնահատեցին ԽՍՀՄ-ի դերը և չկարողացան հասկանալ, որ Մոսկվան նվազագույն հետաքրքրությունն ունի Հորդանանում, որ ՊԱԿ-ի հետ նրա հարաբերությունները լավ չեն, որ Սիրիան այնքան անկայուն էր ու անկանխատեսելի, որ նրան ռազմական և տնտեսական օժանդակություն ցուցաբերելով հանդերձ՝ Խորհրդային Միությունը, այնուամենայնիվ, զգուշավոր քաղաքականություն էր որդեգրել այդ երկրի նկատմամբ: Ուստի մեզ անհիմն են թվում հայտարարություններն այն մասին, որ Հորդանան սիրիական ներխուժման հետևում կանգնած էր Մոսկվան: Եվ եթե հաշվի առնենք, որ ամերիկյան դիվանագիտական ջանքերը ճգնաժամի օրերին ուղղված էին նաև դեպի ԽՍՀՄ, ապա միանգամայն պարզ կդառնա, որ նրանք չէին կարող որևէ գործնական բան ավելացնել Մոսկվայի առանց այդ էլ զսպողական կեցվածքին:

Ճգնաժամից հետո Միացյալ Նահանգները շարունակեց տարածաշրջանում ռազմական հավասարակշռության պահպանման քաղաքականությունը, որը Վաշինգտոնը դիտում էր որպես կայունության, եթե ոչ խաղաղության բանալի: Զենքի առաքումներն Իսրայելին, ինչպես նաև Հորդանանին առաջնային խնդիր էին ներկայացնում ամերիկյան վարչակազմի համար, ավելի առաջնային, քան խաղաղարար նախաձեռնությունները[144]:

ԱՄՆ-ի և Իսրայելի միջև հարաբերությունները, չնայած մնալով հովանավորող-հովանավորյալ մակարդակին, աստիճանաբար վերաճեցին փոխադարձ ամուր ռազմավարական նշանակություն ունեցող դաշինքի: ԱՄՆ-ի համար այդ դաշինքի ռազմավարական անհրաժեշտության հիմնավորումն այն էր, որ Իսրայելը կարող է ոչ

[144] Այդ առաքումները գագաթնակետին հասան 1971 թ., երբ ԱՄՆ-ն 545 մլն ԱՄՆ դոլարի վարկ տրամադրեց Իսրայելին զինամթերքի գնման համար: 1972-1973 թթ. Իսրայելն իր «հովանավորից ստացավ համապատասխանաբար 300 և 307 մլն ԱՄՆ դոլարի վարկեր (Cordesman, H. Anthony. Perilous Prospects: The Peace Process and the Arab-Israeli Military Balance, Westview Press, 1996):

միայն ամուր պատնեշի դեր կատարել տարածաշրջանում Խորհրդային ազդեցության տարածման ճանապարհին, այլև ի վիճակի լինել պաշտպանելու «չափավոր» արաբական վարչակարգերը «ծայրահեղականներից» և ապահովելու տարածաշրջանային կայունությունը: Ելնելով վերոհիշյալ նկատառումներից, երբեմն առանց հաշվի առնելու ԱՄՆ-ի և Իսրայելի շահերի ընդհանրությունն ու համատեղելիությունը՝ պաշտոնական Վաշինգտոնը քաղաքական, դիվանագիտական և բարոյական լուրջ օժանդակություն էր ցուցաբերում Իսրայելին:

7. 1973 թ. արաբա-իսրայելյան պատերազմը[145]

Ամերիկյան տարածաշրջանային քաղաքականության որոշակի ակտիվացում նկատվեց 1973 թ. փետրվարին, երբ Վաշինգտոն հաջորդաբար այցելեցին Հորդանանի թագավոր Հուսեյնը և Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթի ազգային անվտանգության գծով խորհրդական Հաֆիզ Իսմայիլը: Սակայն Խարտումում ամերիկյան դեսպանի և նրա տեղակալի սպանությունները շեղեցին ԱՄՆ պետքարտուղարության ուշադրությունը հորդանանյան և եգիպտական ճակատներից՝ կենտրոնացնելով այն «պաղեստինյան ահաբեկչության»» վրա: Միանգամայն հասկանալի է, որ 1972 թ. սեպտեմբերին Մյունխենում օլիմպիական խաղերի ընթացքում իսրայելյան 11 մարզիկների, ինչպես նաև նոյեմբերին Հորդանանի վարչապետի սպանությունները չէին կարող հարմար պահ նկատվել ամերիկյան նոր նախաձեռնությունների համար:

---

[145] Տե՛ս Laquer, Walter, Confrontation: The Middle East and World Politics. New York: Quadrangle/ New York Times Book, 1974, Heikal, Mohammed. The Road to Ramadan. New York, 1975, El-Badri, Hasan. The Ramadan War, 1973: An Egyptian Report. Boulder, Colo., Westview Press, 1977, Eshel, David. The Yom-Kippur War, Tel Aviv, Eshel-Dramit, 1978, Herzog, Chaim. The War of Atonement: October 1973. Boston: Little, Brown&Co., 1975,

1973 թ. Միացյալ Նահանգների առջև անհանգստության մեկ այլ հիմնախնդիր ծառացավ՝ նավթը: ԱՄՆ-ում նկատվող գազի և նավթամթերքի պակասի պայմաններում Սաուդյան Արաբիայում կոչեր էին հնչում օգտագործել նավթային գործոնը՝ Վաշինգտոնի վրա ճնշում գործադրելու և գրավված արաբական տարածքներից Իսրայելի զորքերի դուրսբերումն ապահովելու նպատակով:

Ա. Սադաթը, իր հերթին, Եգիպտոսից արտաքսեց խորհրդային մասնագետներին՝ սխալմամբ կարծելով, որ այդ քայլից հետո Վաշինգտոնը ստիպված կլինի վերանայել իր քաղաքականությունը տարածաշրջանում և կապահովի «արաբական տարածքների վերադարձը»[146]: Սակայն, դրանից հետո որևէ գործնական և հստակ արձագանք չստանալով Վաշինգտոնից, ինչպես նաև տեղեկանալով Իսրայելին նոր ռազմական առաքումներ իրականացնելու Նիքսոնի որոշման մասին՝ Ա. Սադաթը վերջնականապես կանգ առավ իր այն մտադրության վրա, որ միայն նոր, «հաջող», սակայն «սահմանափակ» ռազմական գործողությունները կարող են ակտիվացնել բանակցային գործընթացը և հանգեցնել եգիպտա-իսրայելյան կարգավորմանը: 1973 թ. մարտի 26-ին Ա. Սադաթը կազմեց «Պատերազմի» կառավարություն՝ իր գլխավորությամբ: Երեք օր անց նա հայտարարեց, որ «պատերազմն Իսրայելի հետ անխուսափելի է»[147]:

Դամասկոսը չեզոք դիրք էր գրավել Եգիպտոսից խորհրդային մասնագետների վտարման հարցում՝ հայտարարելով, որ դա Եգիպտոսի ներքին գործն է: Պետք է նշել, որ Ասադը ոչ միայն չփորձեց շահարկել ստեղծված իրավիճակն իր օգտին, այլև որոշակի «միջնորդ» դարձավ Մոսկվային և Կահիրեին հաշտեցնելու և եր-

---

O'Ballance, Edgar. No Victor, No Vanquished: The Yom Kippur War. San Rafael, Calif., Presidio Press, 1978:

[146] "Middle East Journal", No. 27, 1973, pp. 192-193.

[147] "Newsweek", April 9, 1973.

կու երկրների միջև եղած տարաձայնությունները հարթելու գործում: Ասադը՝ որպես սառնասիրտ ու հավասարակշռված քաղաքական գործիչ, չնայած հրապարակավ հանդես էր գալիս Իսրայելի դեմ ռազմական գործողությունների օգտին, այնուամենայնիվ փորձում էր օգտագործել հնարավոր բոլոր քաղաքական և դիվանագիտական լծակները (հիմնականում Մոսկվայի միջոցով)՝ Իսրայելի վրա ԱՄՆ-ի ճնշումը գործադրելու նպատակով: Ասադի պահանջով Ա. Սադաթը նույնիսկ ստիպված եղավ պատերազմը հետաձգել մինչև 1973 թ. հունիս՝ Բրեժնևի և Նիքսոնի հանդիպումը:

Արաբական Արևելքում պատերազմի բռնկման հնարավորությունների վերաբերյալ ԽՍՀՄ-ի նախազգուշացումները Նիքսոնն ու Քիսինջերը[148] համարեցին «հոգեբանական ճնշում» և մերժեցին համագործակցել Մոսկվայի հետ խնդրի խաղաղ կարգավորմանը հասնելու գործում[149]: Իսրայելի հետ հարցերի կարգավորման դիվանագիտական ուղին վերջնականապես փակվեց հուլիսի 13-ին, երբ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում քննարկվեց բանաձև, որով դատապարտվում էր Իսրայելի՝ արաբական հողերի շարունակվող բռնագրավումը: Չինաստանը ձեռնպահ մնաց քվեարկությունից՝ այն չափազանց մեղմ համարելով, իսկ ԱՄՆ-ն դեմ քվեարկեց՝ խափանելով բանաձևի ընդունումը: Սիրիայի և Եգիպտոսի համար պարզ էր, որ ՄԱԿ-ի հ. 242 բանաձևի իրականացմանը սպասում է նույն վախճանը՝ ամերիկյան վետոն:

Ասադը նույնպես, կորցնելով արաբական հարցը խաղաղ ճանապարհով լուծելու իր հույսերը, վերջնականապես ընտրեց պատերազմելու ուղին: 1973 թ. առաջին կիսամյակում Սիրիան Խորհրդային Միությունից ստացավ մոտ 200 մլն ԱՄՆ դոլարի զինամթերք, որը նախորդ տարվանից երկու անգամ ավելի էր: Հունիսի վերջին

---

[148] Հենրի Քիսինջերը ԱՄՆ պետքարտուղար նշանակվեց 1973 թ. օգոստոսի 22-ին:
[149] H. Kissinger, Years of Upheaval, Boston: Little, Brown &Co. 1982, p. 461.

Սիրիայի և Եգիպտոսի նախագահները հաստատեցին Իսրայելի դեմ պատերազմի ծրագիրը՝ «Բադր» ծածկանվամբ:

Օգոստոսին սիրիական և եգիպտական զինվորական հրամանատարությունը գաղտնի հանդիպումներ ունեցավ Ալեքսանդրիայում և Բլուդանում՝ Իսրայելի դեմ ձեռնարկվելիք պատերազմի մանրամասները ճշտելու նպատակով: Սեպտեմբերի 6-ին Դամասկոսի Մեծ մզկիթի իմամը Իսրայելի դեմ «ջիհադի» կոչ արեց:

Սեպտեմբերի 13-ին օդային խոշոր ճակատամարտ տեղի ունեցավ, երբ իսրայելյան օդանավերը փորձեցին հետախուզական նպատակով թռիչք կատարել սիրիական զինվորական օբյեկտների վրայով: Ընդհարման արդյունքում խփվեց 13 սիրիական օդանավ, իսկ Իսրայելը կորցրեց ընդամենը մեկը[150]: Հարկ է նշել, որ այս միջադեպը նույնպես ազդեց պատերազմ սկսելու՝ Ասադի որոշման վրա:

Սեպտեմբերի 25-ին Հորդանանի Հուսեյն թագավորը գաղտնի զգուշացրեց Իսրայելի վարչապետ Մեիրին, որ Սիրիան և Եգիպտոսը պատրաստվում են հարձակվել Իսրայելի վրա: Սակայն, Քիսինջերի խոսքերով, իսրայելյան և ամերիկյան ղեկավարներն այն կարծիքին էին, որ «Եգիպտոսն ու Սիրիան ռազմական տեսանկյունից ի վիճակի չեն զենքի ուժով ետ գրավել արաբական տարածքները»[151]:

Միացյալ Նահանգներն անտեսեց նաև 1973 թ. պատերազմի նախօրեին ստացվող ահազանգերը: 1973 թ. հոկտեմբերի 6-ի ռազմական գործողությունների սկիզբն անսպասելի էր ինչպես Վաշինգտոնի, այնպես էլ Թել-Ավիվի համար: Չնայած երկու երկրներն էլ բազմաթիվ տեղեկություններ ունեին իրենց տրամադրության տակ եգիպտական և սիրիական ռազմական նախապատրաստումների ու զորքերի տեղաշարժի վերաբերյալ, այնուամենայնիվ չկա-

---

[150] “New York Times”, September 14, 1973.

[151] «Եդիոտ Ահարոնոթ», 15.09.1973:

ղողացան կատարել հետախուզության տվյալների ճշգրիտ վերլուծություն ու հանգել հստակ եզրակացության:

Թերևս նման անուշադրության պատճառներից մեկն էլ 1967 թ. պատերազմից հետո ձեռք բերված ծայրահեղ ինքնավստահությունն էր: Ամերիկացիները սխալմամբ կարծում էին, թե «երբ արաբները զրկված կլինեն Իսրայելի վրա ռազմական և քաղաքական ճնշում բանեցնելու հնարավորություններից, միայն այդ դեպքում նրանք մի կողմ կդնեն իրենց հպարտությունը և ստիպված կլինեն ընդունել իսրայելյան ուժի գերազանցության փաստը»: 1973 թ. հոկտեմբերի 6-ին բռնկված արաբա-իսրայելյան չորրորդ պատերազմը եկավ հաստատելու միանգամայն հակառակը՝ 1967 թ. ի վեր ամերիկյան քաղաքականության որդեգրած «ռազմական հավասարակշռության» պահպանման սկզբունքի բացարձակ անկատարությունն ու անարդյունավետությունը:

Չցանկանալով խորանալ պատերազմի ընթացքի և եգիպտական ու սիրիական ճակատներում ծավալված պատերազմական գործողությունների մանրամասների մեջ՝ պետք է նշենք, որ Սիրիան պատերազմի հետևանքով շատ ավելի մեծ կորուստներ կրեց, քան Եգիպտոսը: Պատերազմի վերջում, չնայած սկզբնական շրջանի հաջողություններին ու իսրայելյան բանակին պատճառած զգալի վնասին, սիրիացիները ոչ միայն չկարողացան ազատագրել գրավված տարածքները, այլև 600 քառ. կմ նոր տարածք կորցրին: Սիրիան շոշափելի կորուստներ կրեց ոչ միայն ռազմական ուժի, այլև քաղաքացիական և տնտեսական առումներով: Իսրայելի օդուժը շոշափելի վնաս հասցրեց սիրիական տնտեսական և քաղաքացիական օբյեկտներին: Այդ իմաստով սիրիացիները շատ ավելի դառնացած ու նվաստացած էին, քան եգիպտացիները: Այստեղ հարկ է նշել, որ Ասադն ավելի հետևողական գտնվեց Իսրայելի դեմ իր անհաշտ կեցվածքի մեջ, քան Անվար Սադաթը: Եթե վերջինս

1973 թ. պատերազմը նախապատրաստական կարևոր քայլ էր համարում Իսրայելի հետ հետագա բանակցությունների և խաղաղություն հաստատելու ուղղությամբ, ապա Ասադը պատերազմեց հիմնականում Գոլանները հետ վերադարձնելու և Իսրայելին պատժելու նպատակով: Եթե Ա. Սադաթի նպատակն էր սահմանափակ պատերազմ վարելով խաղաքարտ ապահովել Իսրայելի հետ հետագա բանակցություններում, ապա Ասադը անկեղծորեն ձգտում էր լայնածավալ պատերազմի միջոցով հետ նվաճել Սինայն ու Գոլանի բարձունքները: Պատերազմից հետո սիրիա-եգիպտական հարաբերությունների սառնության հիմնական պատճառներից մեկը եղավ Ասադի մեղադրանքն այն բանում, որ եգիպտական բանակը, հակառակ նախնական պայմանավորվածության, անցնելով Բար Լևի գիծը, անմիջապես չառաջացավ, ինչը հնարավորություն տվեց Իսրայելին ուժերը կենտրոնացնելու սիրիական ճակատում և կասեցնելու սիրիական առաջխաղացումը Գոլաններում: Իսրայելի համար Գոլանները շատ ավելի «ներքին և զգացական» հարց էր, քան Սինայի թերակղզին: Այդ իսկ պատճառով Իսրայելը շատ ավելի վճռականորեն ու համառ էր պայքարում սիրիական ճակատում:

Ասադի կարծիքով «Սադաթն անկեղծ չէր Սիրիայի հետ և իրականացնում էր համագործակցության ամենավատ ձևը»[152]: Հենրի Քիսինջերին փոխարինած ԱՄՆ պետքարտուղար Սայրուս Վենսը նշում էր, որ «Սադաթը պատերազմում հետապնդում էր գլխավորապես քաղաքական և դիվանագիտական նպատակներ»[153]: Անգամ Քիսինջերը հիշատակում էր, որ պատերազմի ընթացքում Ա. Սադաթն ակտիվացրել էր ամերիկացիների հետ իր գաղտնի կապը: «Իսկ ինչ վերաբերում է սիրիացիներին, ապա պատերազմի

[152] Е. М. Примаков, История одного сговора, Москва, 1985, с. 47.

[153] Vance C. Hard Choices, Critical Years in America's Foreign Policy, New York, 1983, p. 161.

ընթացքում մենք որևէ ուղղակի շփում չենք ունեցել»[154],– նշում է Քիսինջերը:

Միևնույն ժամանակ հոկտեմբերյան պատերազմը կարևոր նշանակություն ունեցավ ամբողջ տարածաշրջանի և արաբական աշխարհի համար: Առաջին հերթին այն վերականգնեց 1967 թ. պատերազմից հետո կորցրած արաբների ինքնավստահությունը: Արաբական երկրները կարողացան ցրել Իսրայելի ռազմական անպարտելիության վարկածը: Պատերազմի սկզբնական շրջանում արաբների ձեռք բերած մասնակի ինքնավստահությունը հնարավոր դարձրեց հետագայում եգիպտա-իսրայելյան և սիրիա-իսրայելյան Տարանջատման համաձայնագրերի (Disengagement agreements) կնքումը: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ պատմաբաններից շատերը հաճախակի ընգծում են պատերազմի ընթացքում ցուցադրված արաբական միասնականության հազվադեպ փաստը: Հոկտեմբերյան պատերազմում արաբական աշխարհն ավելի շուտ «հոգեբանական» հաղթանակ տարավ, և այն կարելի է համարել արաբական միասնականության հաղթանակը՝ որոշակի վերապահումով:

Թեպետ Սիրիան և Եգիպտոսը «միասնաբար» պատերազմեցին, սակայն ոչ միայն հաջողության չհասան Իսրայելի դեմ արաբական հավելյալ ռազմաճակատ բացելու գործում, այլև պատերազմում հետապնդած տարբեր նպատակների պատճառով չկարողացան արդյունավետ համագործակցել և, փաստորեն, ռազմական տեսանկյունից տանուլ տվեցին պատերազմը: Արաբական երկրները պատերազմի ընթացքում հաջողությամբ օգտագործեցին նավթը՝ որպես քաղաքական զենք, սակայն ոչ առանց տարաձայնությունների (նավթային էմբարգոյի շարունակման նպատակահարմարության, դադարեցման և այլ հարցերի շուրջ): Այդ իսկ պատճառով

[154] H. Kissinger, Years of Upheaval, Boston: Little, Brown &Co. 1982, p. 574.

արաբական միասնականության վերաբերյալ հաստատումները չափազանցված են թվում մեզ: Հետաքրքրական է Ասադի պատասխանը «Ալ-Անվար» թերթի տված այն հարցին, թե ինչպես հարյուրմիլիոնանոց արաբ ժողովուրդը իր դրամով, նավթով և զենքով երկուսուկես միլիոն հրեաներից մշտապես պարտված է դուրս գալիս, Հ. Ասադը պատասխանել է հետևյալ կերպ. «Այդ հարյուր միլիոն արաբները երբեք չեն պայքարել, չի պայքարել արաբական հեղափոխության անգամ մի մասը, չի պայքարել նաև արաբական նավթը: Այն ժամանակ, երբ այդ հարյուր միլիոն արաբները, արաբական նավթն ու արաբական հեղափոխությունը միասնաբար կմարտնչեն, հաղթանակը մերը կլինի»[155]:

Ըստ Հ. Քիսինջերի՝ պատերազմից հետո ԱՄՆ-ն սկիզբ դրեց տարածաշրջանում «դաշինքների վերանայման» քաղաքականությանը: Վաշինգտոնը կարծես թե սկսեց գիտակցել այն հանգամանքը, որ միայն Իսրայելի ռազմական գերակայությունը չի կարող կայունություն ապահովել տարածաշրջանում: Այստեղ իր ազդեցությունն ունեցավ նաև ԱՄՆ-ի դեմ հաջողությամբ իրականացված նավթային էմբարգոն[156]:

Հոկտեմբերյան պատերազմը ոչ միայն վճռորոշ դեր խաղաց Մերձավոր Արևելքում ամերիկյան քաղաքականության վերանայման հարցում, այլև նոր հնարավորություններ ստեղծեց սիրիա-ամերիկյան հարաբերությունների հետագա զարգացման համար: Ամերիկյան քաղաքականության հիմնական փոփոխությունը եղավ

---

[155] «Ալ-Անվար», 10.08.1972:

[156] 1973 թ. հոկտեմբերի 20-ին Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալը հայտարարեց այն մասին, որ կրճատում է նավթի արտահանումը և արգելում է նրա վաճառքը Միացյալ Նահանգներին՝ սկիզբ դնելով արաբական երկրների իրականացրած նավթային էմբարգոյին, որի հետևանքով էլ նավթի մեկ բարելի գինը համաշխարհային շուկայում բարձրացավ 5.12-ից մինչև 11.65 ԱՄՆ դոլար՝ տնտեսական լուրջ ճգնաժամի պատճառ դառնալով Արևմուտքում՝ ԱՄՆ-ում, Արևմտյան Եվրոպայի երկրներում և Ճապոնիայում:

այն, որ արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորման հարցում Քիսինջերը հրաժարվեց, այսպես կոչված, «փաթեթային լուծումից» և որդեգրեց «քայլ առ քայլ» նոր քաղաքականությունը: Դեռևս պատերազմի ընթացքում Քիսինջերը համոզված էր, որ «քայլ առ քայլ» քաղաքականության իրականացման դեպքում, եթե հաջողվի հասնել եգիպտա-իսրայելյան համաձայնագրի կնքմանը, ապա Սիրիան, ինչպես նաև Հորդանանն ու Լիբանանը նույնպես կհետևեն այդ օրինակին:

8. Քաղաքացիական պատերազմը Լիբանանում (1975-1989 թթ.)[157]

1975 թ. քաղաքացիական պատերազմի բռնկմանը նախորդած 20 տարիների ընթացքում Լիբանանում տեղի ունեցան վիթխարի փոփոխություններ: Նավթային հարստության աճի պայմաններում Լիբանանը վերածվեց արևմտյան և ամերիկյան տնտեսություններն ու արաբական աշխարհը կապող առանցքային երկրի: Այն լինելով տարածաշրջանում առավել ազատական տնտեսություն ունեցող երկիրը՝ կլանում էր Արաբական ծոցից կամ «սոցիալիստական կապանքների մեջ» գտնվող Սիրիայից, Եգիպտոսից և Իրաքից հոսող կապիտալը: 1970 թ. Լիբանանում ծառայությունների (ֆինանսական, բանկային, առևտրական, զբոսաշրջության) բնագավառը կազմում էր երկրի ներքին համախառն արտադրանքի (ՀՆԱ) շուրջ

[157] Տե՛ս Ն. Հովհաննիսյան, Լիբանանյան կոնֆլիկտը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982), Երևան, 1982, Rabinovich Itamar. The War for Lebanon, 1970-1983. Ithaca, NY: Cornell University Press, 1984, Salibi, S.Kamal. Crossroads to Civil War. Lebanon 1958-1976. New York: Caravan Books, 1976, Bulloch, John. Final Conflict: The War in the Lebanon. London, 1983, Deeb, Marius. The Lebanese Civil War. New York: Praeger Publishers, 1980, Weinberger, Naomi Joy. Syrian Intervention in Lebanon: The 1975-1976 Civil War. New York: Oxford University press, 1986, Dawisha. A.I. Syria and the Lebanese Crisis. New York: St. Martin's Press, 1980:

40 տոկոսը, որն ամենաբարձրներից մեկն էր աշխարհում: Այս շարքում բանկային ոլորտը կենտրոնական և գերիշխող տեղ էր զբաղեցնում երկրի տնտեսության մեջ: Սակայն Լիբանան մուտք գործող կապիտալը և նրանից ստացված շահույթը հավասարաչափ չէին բաշխվում համայնքային հենքի վրա ստեղծված այդ երկրի բնակչության միջև: Պետության անկարողությունը հատկապես տնտեսական բնագավառում իր հերթին բացառում էր սոցիալական լուրջ քաղաքականության իրականացման հնարավորությունը:

Ներքին քաղաքական իրավիճակն էլ ավելի սրեց հետևյալ կարևոր հանգամանքը: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում բրիտանացիների օգնությամբ և ԱՄՆ համաձայնությամբ 1943 թ. Լիբանանում քրիստոնյա մարոնիների[158] և սուննի մահմեդականների միջև հաստատված Ազգային դաշինքը (National Pact) անփոփոխ պահպանվեց մինչև 1960-ական թվականները՝ Լիբանան պաղեստինցիների ներհոսքը (մասնավորապես 1967 թ. «վեցօրյա» պատերազմից և 1970 թ. Հորդանանի ճգնաժամից հետո) և վերջիններիս՝ որպես Լիբանանի համայնքային կառուցվածքի մեկ այլ բաղկացուցիչ մաս ի հայտ գալը:

Կազմելով Լիբանանի բնակչության 15 %-ը՝ պաղեստինցիները սկսեցին լրջորեն ազդել երկրի քաղաքական կյանքի վրա: Նրանց թվաքանակի աստիճանաբար աճը, զինումն ու հզորացումը խախտեցին Լիբանանում համայնքային ուժերի միջև հաստատված հավասարակշռությունը՝ առաջացնելով քրիստոնյա մարոնիների դժգոհությունն ու գործնական հակազդեցությունը: Քրիստոնեա-

---

[158] Արաբախոս ***Մարոնիները*** դեռևս 7-րդ դարում բնակվել են Սիրիայում՝ դավանելով մոնոթեիզմ (միաստվածություն): Նրանց եկեղեցու հիմնադիրն է ասորիքյան սուրբ Մար Մարոնը: Բյուզանդիայի կողմից հետապնդումների հետևանքով 10-րդ դարում մարոնիները ապաստան են գտնում Լիբանանի լեռներում: Խաչակիրների արշավանքի ժամանակ՝ 12-րդ դարում, նրանք ճանաչում են Հռոմի Պապի գերագահությունը՝ պահպանելով սեփական ծիսակատարությունները, արարողակարգը և պատրիարքական համակարգը:

կան ճամբարում ձևավորվել էին երկու հիմնական ուժեր՝ Բաշիր Ժմայելի «Քաթայիբ» (Ֆալանգա)[159] և Լիբանանի նախկին նախագահ Քամիլ Շամունի որդու՝ Դանիի ղեկավարած «Ան-Նումուռ» (Առյուծներ) խմբավորումները:

Պետք է նշել, որ 50–60-ականներին Լիբանանում տեղի ունեցած սոցիալական փոփոխություններն ակտիվացրին նաև Լիբանանի դրուզներին[160], որոնք Քամալ Ջումբլադի ղեկավարությամբ սկսեցին բողոքել երկրի քաղաքական անարդար բաժանման դեմ՝ էլ ավելի մեծ մասնաբաժին պահանջելով իրենց համայնքի համար:

Իրավիճակը Լիբանանում գնալով շիկանում էր և, ի վերջո, երբ 1975 թ. ապրիլի 13-ին Բեյրութի Այն առ-Ռումաննա թաղամասում գտնվող եկեղեցու վրա կրակ բացվեց, որի հետևանքով 4 քրիստոնյա սպանվեց, աջքրիստոնեական «Քաթայիբի» զինված մարտիկ-

---

[159] **«Քաթայիբը»** մարոնիների հիմնական քաղաքական կուսակցությունն է, որը հիմնադրվել է 1936 թ. նոյեմբերի 21-ին դեղագործ Պիեռ Ժմայելի կողմից: Հենվելով Լիբանանի փյունիկյան ժառանգության վրա՝ կուսակցությունը որդեգրել էր «Աստված, ընտանիք, պետություն» կարգախոսը: Բաշիրը Պիեռ Ժմայելի փոքր որդին էր: 1976 թ. նա դարձավ աջակողմյան քրիստոնեական կոալիցիայի՝ «Լիբանանյան ուժերի» հրամանատարը, որը համախմբում էր իր սեփական կուսակցության 15.000-անոց միլիցիան, երկրի նախագահ Սուլեյման Ֆրանջիյեի խմբավորումը հյուսիսում, Շամունի 3.500 հոգանոց խումբը, ինչպես նաև Հայր Կասսիսի մարոնիական եկեղեցական ուժերը: Բաշիր Ժմայելը կողմնակից էր Իսրայելի հետ համագործակցությանը և պայքարում էր Լիբանանում ինչպես ՊԱԿ-ի և սիրիական ներկայության դեմ, այնպես էլ իր քաղաքական ընդդիմախոսների դեմ (անգամ մարոնիների շրջանակում): Այսպես՝ 1978 թ. հունիսին նա կազմակերպեց սիրիամետ Ֆրանջիյեի ընտանիքի անդամների (որդու՝ Թոնիի, նրա կնոջ ու փոքր դստեր) սպանությունը, իսկ 1980 թ. հուլիսի 7-ին Ժմայելի ուժերը ներխուժեցին «Առյուծների» կենտրոնակայան և սպանելով շուրջ 80 հոգու՝ հաջողությամբ ավարտեցին Քամիլ Շամունի ղեկավարած «Ազգային լիբերալ կուսակցության» ոչնչացումը: 1982 թ. օգոստոսի 23-ին Բաշիրը ընտրվեց Լիբանանի նախագահ:

[160] ***Դրուզները*** մահմեդական շիա համայնքի աղանդներից մեկի հետևորդներն են: Այն հիմնադրվել է 10-րդ դարում Կահիրեում: Ֆաթիմյան խալիֆ Ալ-Հաքիմը իրեն հռչակել էր Աստված: Խալիֆի մահից հետո նրա հետևորդները ենթարկվեցին հետապնդումների, իսկ նրա վեզիրներից մեկը, որի անունով էլ կոչվում է աղանդը, ապաստան գտավ Սիրիայում՝ աստիճանաբար ընդլայնելով իր համախոհների թիվը: Նրանց հայեցակարգի վրա մեծ ազդեցություն է թողել հնդկական և հունական փիլիսոփայությունը: Առաջին դրուզների ամիրայությունը ստեղծվել է 12-րդ դարում Լեռնային Լիբանանում, որտեղ ընդհուպ մինչև 16-րդ դարը մարոնիաբնակ շրջանները կա՛մ ուղղակի ենթարկվել, կա՛մ էլ տնտեսական և այլ կապերով առնչվել են դրուզական ամիրայությանը:

ները հարձակում գործեցին Թել Զաթառ պաղեստինցի փախստականների ճամբարի վրա՝ սպանելով 27 պաղեստինցի: Երկրում բռնկվեց քաղաքացիական պատերազմ:

Կասկած չի հարուցում այն փաստը, որ Լիբանանի ճգնաժամն առաջին հերթին ապակայունացնող ազդեցություն կարող էր ունենալ հարևան երկրների, մասնավորապես Սիրիայի համար: Հարկ է նշել, որ լիբանանյան ճգնաժամի ամբողջ ընթացքում Սիրիայի գործողությունները հիմնականում ուղղված էին ապահովելու հետևյալը՝ Լիբանանի միասնականությունն ու անկախությունը, երկու երկրների միջև հատուկ հարաբերությունները և, վերջապես, Սիրիայի ազգային անվտանգության կարիքները: Պաշտոնական Դամասկոսի կարծիքով Լիբանանում կատարվող դեպքերը, որոնք սպառնում էին խախտել այնտեղ հաստատված սոցիալական, քաղաքական և կրոնական նուրբ հավասարակշռությունը, «իմպերիալիստական դավադրության արդյունք էին համարվում, որի նպատակն էր շեղել Սիրիայի ուշադրությունը Իսրայելի դեմ պայքարից և «մասնատել Լիբանանը»[161]:

Սիրիայի համար Լիբանանը երբեք չի եղել որպես զուտ հարևան երկիր և միշտ դիտարկվել է որպես «Մեծ Սիրիայի» անբաժան մասը: Այս է թերևս պատճառը, որ երկու երկրների միջև երբևիցե գոյություն չեն ունեցել դիվանագիտական հարաբերություններ: Հ. Ասադի խոսքերով «Սիրիան և Լիբանանը պատմության ընթացքում իրար կապող ընդհանուր շահերով մեկ երկիր և մեկ ժողովուրդ են եղել: Սա պետք է լավ ընկալվի բոլորի կողմից: Գործնականում ընդհանուր շահերն ու միասնական անվտանգությունն են եղել նպատակը: Չափազանց դժվար է բաժանման գիծ քաշել Լիբանանի և Սիրիայի անվտանգության խնդիրների միջև»: Այդ իսկ պատճառով, Լիբանանի միասնականության և անկախության

[161] Լիբանանյան ճգնաժամի վերաբերյալ 1975 թ. հուլիսի 20-ի Ասադի ելույթից:

պահպանման նպատակով Սիրիան որդեգրեց «լա ղալիբ վա լա մաղլուբ» (ոչ հաղթող և ոչ պարտվող) կարգավորման տարբերակը: Այսինքն՝ Սիրիային ձեռնտու չէր ոչ պաղեստինյան ուժերի հաղթանակը, ոչ էլ քրիստոնյա մարոնիների կողմից ղեկավարվող Լիբանանի գոյությունը: Եթե վերջին դեպքում ամեն ինչ հասկանալի է թվում, ապա պաղեստինցիների վերաբերյալ պետք է նշել, որ նրանց հաղթանակը, վտանգելով Լիբանանում բազմադեմ համայնքների խաղաղ գոյակցությունը և ստեղծված կոնֆեսիոնալ համակարգի հավասարակշռությունը, կարող էր բացասական արձագանք ունենալ Իսրայելում և պատճառ դառնալ սիրիա-իսրայելյան նոր բախման համար, որը տվյալ պահին Սիրիային ցանկալի չէր: Եվ, վերջապես, ազգայնական, հեղափոխական Լիբանանը, քաղաքական և գաղափարական առումներով ավելի ձախ, քան բաասական Սիրիան, չէր կարող ընդունվել Դամասկոսի կողմից, որի համար «մրցակից բաասական Իրաքը միանգամայն բավական էր»[162]:

Պետք է նշել, որ սիրիացիները զգացական մակարդակի վրա երբեք հակառակ չեն եղել պաղեստինցիներին: Սակայն վերջիններս Սիրիայի կողմից հիմնականում դիտարկվում էին որպես կարևոր և գործուն միջոց տարածաշրջանում իր սեփական ծրագրերի իրականացման համար: Ուստի, ըստ Դամասկոսի, պաղեստինցիներին արդյունավետ օգտագործելու համար անհրաժեշտ էր, որ նրանք կառավարելի լինեն: Բնականաբար, Արաֆաթի անկախ դիրքորոշումը չէր կարող դուր գալ սիրիացիներին: Հ. Ասադի համար Արաֆաթը նման էր «անզոր հրետանու», որը կարող էր միայն պատերազմ հայտարարել, սակայն ի վիճակի չէր այն հաղթել: Հ. Ասադի և Արաֆաթի միջև գոյություն ունեցող տարաձայնությունները գնալով վերածվել էին բացահայտ թշնամանքի:

---

[162] “Le Monde”, 14 April, 1976.

Ուստի պետք է հիշել, որ **Սիրիան միջամտեց Լիբանանում տեղի ունեցող իրադարձություններին ոչ թե պաղեստինցիներին կամ քրիստոնյաներին օգնելու, այլ Լիբանանը որպես քաղաքական միավոր փրկելու համար, որի կայունությունն ու անվտանգությունը կենսական նշանակություն ուներ Սիրիայի համար**: Պաշտոնական Դամասկոսի՝ Լիբանանի ներքաղաքական փխրուն հավասարակշռությունը պահպանելու հենց այդ անկեղծ շահագրգռվածությունն էր, որ վերածեց նրան de-facto և ավելի ուշ de-jure Լիբանանում կայունությունն ապահովող միակ գործնական ուժի:

Հաշվի առնելով Լիբանանում ստեղծված համեմատաբար կայուն իրավիճակը՝ մինչև 1975 թ. աշունը Սիրիան նախընտրեց ձեռնպահ մնալ լիբանանյան դեպքերին անմիջականորեն միջամտելուց: 1975 թ. սեպտեմբերին եգիպտա-իսրայելյան համաձայնագրի ստորագրումից և Լիբանանում բախումների սաստկացումից հետո Դամասկոսը որոշեց ՊԱԲ-ին (Պաղեստինյան ազատագրության բանակ) և «Սաիղային» ենթարկվող երկու պաղեստինյան ստորաբաժանում ուղարկել Լիբանան, որոնք, տեղակայվելով Հյուսիսային Տրիպոլի քաղաքի մոտակայքում, փորձեցին վերջ դնել այնտեղ ընթացող ռազմական գործողություններին[163]: Եվ չնայած այդ ստորաբաժանումները Լիբանանի կառավարության պահանջով շուտով դուրս բերվեցին երկրից, այնուամենայնիվ նրանց միջամտությունը նախադեպ ստեղծեց երեք ամիս անց՝ 1976 թ. հունվարի 19-ին, ՊԱԲ-ի Յարմուկ բրիգադի ջոկատների՝ Լիբանան ներխուժման համար, երբ քրիստոնյա ուժերը լայնածավալ ռազմական գործողություններից հետո երկիրը կանգնեցրել էին մասնատման վտանգի առջև: Այս անգամ Սիրիայի միջամտությունն ավարտվեց 1976 թ. հունվարին հաստատված զինադադարով և փետրվարի 14-ին Լիբանանի նախագահ Սուլեյման Ֆրանջիյեի «ազգային համաձայ-

[163] SANA, 25 September, 1975, «Ալ-Հավադիս», 12.12.1975: «Ալ-Սաֆիր», 21.05.1976:

նության» վրա հիմնված կարգավորման ծրագրային նոր հայտարարությամբ:

Արաբների մեծամասնության կարծիքով լիբանանյան ճգնաժամն ամենաշատը ձեռնտու էր Իսրայելին: Որոշ քաղաքագետներ էլ համոզված էին, որ լիբանանյան պատերազմից շահեցին նաև Եգիպտոսն ու Միացյալ Նահանգները այն իմաստով, որ այդ երկրում կատարվող դեպքերը շեղեցին արաբական աշխարհի ուշադրությունը Սինայ-2 (երկրորդ եգիպտա-իսրայելյան) համաձայնագրից, և նվազեցրին Իսրայելի ու ԱՄՆ-ի վրա գործադրվող միջազգային ճնշումը: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ լիբանանյան ճգնաժամը Վաշինգտոնի ընդարձակ ծրագրի մաս էր կազմում ու նպատակ էր հետապնդում ոչնչացնել ՊԱԿ-ը և ամերիկյան հովանավորությամբ խաղաղություն հաստատել Սիրիայի, Եգիպտոսի, Հորդանանի և Իսրայելի միջև[164]:

Մենք համաձայն ենք այն կարծիքին, որ «լիբանանյան ճգնաժամը ժամանակ շահելու և հանգստանալու հնարավորություն էր ընձեռում Իսրայելին»: Սակայն, ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա անհրաժեշտ ենք համարում նշել, որ ճգնաժամի սկզբում Վաշինգտոնը փորձում էր զսպել Իսրայելին ու Սիրիային լայնածավալ պատերազմ սանձազերծելուց՝ միաժամանակ զբաղվելով Լիբանանից ամերիկացիների դուրսբերման հարցերով[165]: Իսրայելյան «Մաարիվ» օրաթերթի համաձայն՝ ամերիկյան քաղաքական շրջանակները հավատացած էին, որ ԱՄՆ-ի միջամտությունը Լիբանանում այնպես, ինչպես դա կատարվեց 1958 թ., «անհնար է և անցանկա-

[164] W. Quandt, Decade of Decisions: American Policy toward the Arab-Israeli Conflict 1967-1976, Berkeley University of California Press, 1977, p. 281.

[165] Բեյրութից ամերիկացիների էվակուացման հարցում հիշատակման արժանի են Լիբանանում ամերիկյան դեսպանության և ՊԱԿ-ի հետ ուղղակի շփումներն ու համագործակցությունը, ինչը հիմք տվեց որոշ քաղաքագետների խոսելու անգամ ԱՄՆ-ի կողմից պաղեստինցիների ճանաչման մասին:

լի»[166]: Այնտեղ տեղի ունեցող իրադարձությունները Միացյալ Նահանգները համարեց Լիբանանի «ներքին գործը» և մերժեց արտաքին միջամտության որևէ հնարավորություն:

Հարկ է հիշատակել, որ լիբանանյան ճգնաժամի նախօրեին և սկզբնական շրջանում հաճախակի էր խոսվում այն մասին, որ ԱՄՆ-ի և Իսրայելի միջև հաստատված հատուկ հարաբերություններում նկատվում է սառնություն, և որ այլևս Իսրայելը չի կարող համարվել ԱՄՆ-ի միակ դաշնակիցը տարածաշրջանում, որ Եգիպտոսը նույնպես կարող է հավակնել այդ դերին: Որոշ քաղաքագետներ դրանով բացատրեցին Թել-Ավիվի և Վաշինգտոնի միջև ի հայտ եկած տարաձայնությունները, մասնավորապես Լիբանան սիրիական ներխուժման հարցի վերաբերյալ: Իսրայելը, ի տարբերություն ամերիկացիների, ներխուժման հենց սկզբից ծայրահեղ բացասական դիրքորոշում որդեգրեց՝ հայտարարելով, որ «Իսրայելը երբեք չի թույլատրի արտաքին ներխուժում Լիբանան», և որ «Իսրայելը չի կարող անկողմնակալ մնալ Սիրիայի ներխուժման դեպքում՝ անկախ նրա հետապնդած նպատակներից»[167]: Սակայն աստիճանաբար ամերիկյան ազդեցության, ինչպես նաև պաղեստինցիների հետ Սիրիայի առճակատման հետևանքով իսրայելյան դիրքորոշումը սկսեց փոխվել: Գտնվելով նախընտրական շրջանում՝ Իսրայելի ղեկավար շրջանակները վերջապես որդեգրեցին «սպասելու, սակայն չգործելու» քաղաքականությունը: Իսրայելի պաշտպանության նախարարի խոսքերով. «Այնքան ժամանակ, քանի դեռ սիրիացիները պայքարում են պաղեստինցիների դեմ քրիստոնյաների կողքին, ու, ընդհակառակը, և քանի դեռ սիրիական գործողություններն ուղղված չեն Իսրայելի դեմ, մեր ռազմական միջամտությունն անիմաստ է»[168]:

---

[166] «Մաարիվ», 08.01.1976:
[167] «Մաարիվ», 06.06.1976:
[168] Նույն տեղում:

Այստեղ քննության է արժանի Վաշինգտոնի դիրքորոշումը սիրիական միջամտության նկատմամբ: 1975 թ. հոկտեմբերի 16-ին Դամասկոսում ամերիկյան դեսպան Ռիչարդ Մերֆին կոչ էր արել Հ. Ասադին ձեռնպահ մնալ Լիբանան ներխուժումից՝ շեշտելով, որ «արտաքին որևէ միջամտություն չափազանց մեծ սպառնալիք կհամարվի Իսրայելի կողմից»: Սակայն 1976 թ. փետրվարից սկսած՝ ամերիկյան դիրքորոշումը փոփոխության ենթարկվեց, և Վաշինգտոնը սկսեց պաշտպանել Լիբանանում սիրիական միջնորդական ջանքերը: ԱՄՆ-ն խորհուրդ էր տալիս Իսրայելին, ինչպես նաև ԽՍՀՄ-ին և եվրոպական տերություններին, չձեռնարկել որևէ գործողություն Լիբանանում՝ նախընտրելով կարգավորման հասնել չափավոր արաբական երկրների, մասնավորապես Եգիպտոսի, Սաուդյան Արաբիայի և Քուվեյթի միջոցով:

Խնդրի քաղաքական կարգավորմանն ուղղված ամերիկյան անհաջող փորձերից հետո, ինչպես նաև Լիբանանում բախումների շարունակման ու Ք. Ջումբլադի գլխավորած ձախակողմյան ուժերի ռազմական հաջող գործողությունների պայմաններում ԱՄՆ-ն ու Իսրայելը սկսեցին ընդունել Սիրիայի «կայունացնող» դերը Լիբանանում:

Վաշինգտոնն անհանգստացած էր, որ ձախակողմյան Լիբանանը կթույլատրի պաղեստինցիներին հարձակումներ գործել Իսրայելի վրա իր տարածքից, ինչը ամենայն հավանականությամբ կարող էր հանգեցնել պատերազմի բռնկման՝ ներքաշելով Սիրիային, հնարավոր է նաև՝ Եգիպտոսին: Ստեղծված իրավիճակում Միացյալ Նահանգները ոչ միայն չփորձեց կանխել սիրիական ռազմական ներխուժումը Լիբանան, այլև նշեց, որ սահմանափակ սիրիական միջամտությունը կարող է կայունացնել իրավիճակը և ապահովել երկրի անվտանգությունը: Պ. Սիլը նշում է անգամ գոյություն ունեցող ԱՄՆ-Սիրիա-Իսրայել եռակողմ «կարմիր գծի» համաձայնագրի մասին, ըստ որի՝ Իսրայելը նույնպես համաձայնել էր Լի-

բանանում սիրիական ներկայությանը[169]: Ամերիկյան լրատվական միջոցները պնդում էին, թե Վաշինգտոնին հաջողվել է համոզել Թել-Ավիվին, վերջինս հարավային Լիբանանում Իսրայելի անվտանգության շահերի ճանաչման դիմաց համաձայնի այնտեղ սիրիական ռազմական ներկայությանը՝ մինչև հյուսիսում անցնող Սիդոն-Ջեզին գիծը («կարմիր գիծը»)[170]:

Կարծում ենք՝ ԱՄՆ-ի նման «բարյացակամ» կեցվածքը սիրիական ներխուժման հանդեպ կարելի է բացատրել այն հանգամանքով, որ 1976 թվականը կայանալիք ընտրությունների առումով նախագահ Ֆորդի համար որոշիչ տարի էր: Այդ իսկ պատճառով, նրան անհրաժեշտ էր ոչ միայն կանխել Մերձավոր Արևելքում նոր ճգնաժամի առաջացումն իր բացասական բոլոր հետևանքներով, այլև լուրջ դիվանագիտական հաջողության հասնել: Դրա համար անհրաժեշտ էր, որ Սիրիան համաձայնի մայիսի 30-ին Գոլաններում «կարմիր բերետների» մանդատի երկարաձգմանը: Հակառակ դեպքում հօդս կցնդեին Քիսինջերի դիվանագիտական բոլոր հաջողությունները և կստիպեին Ֆորդին իր նախընտրական պայքարն իրականացնել Մերձավոր Արևելքում ընթացող նոր ճգնաժամի ստվերի ուղեկցությամբ:

Ամերիկացիները միևնույն ժամանակ նշում էին, որ «սիրիացիների ներկայությունը Լիբանանում Իսրայելի օգտին է, քանի որ Դամասկոսի կողմից ղեկավարվող ուժերը կարգելեն միջադեպերը Իսրայելի հյուսիսային սահմանում»: Ամերիկացիները շեշտում էին, որ «ներխուժումը Լիբանան իր հերթին կթուլացնի Սիրիային և կստիպի նոր համաձայնագիր ստորագրել Գոլանների վերաբերյալ»[171]:

---

[169] P. Seale, Asad of Syria. The Struggle for the Middle East, Berkeley&Los Angeles, 1988, p. 279.

[170] “The Times”, 13.09.1976: Ford Library, WHCF CD 71, Box 27, 13 April, 1976.

[171] «Yedioth Ahronoth» 24.03.1976, «Haaretz», 11.06.1976.

Ապրիլի վերջին Լիբանանում նորանշանակ ամերիկյան դեսպան Ֆրենկ Մելոյը անգամ քննադատեց Քիսինջերին. «Իսրայելցիներին սիրաշահելու նպատակով մենք չափազանց երկար զսպեցինք սիրիացիներին: Դրա հետևանքով էլ ավելի շատ զոհեր եղան»: Այդ օրերին իսրայելյան «Դավար» օրաթերթը հետևյալ կերպ էր վերլուծում ամերիկյան դիրքորոշումը լիբանանյան ճգնաժամի նկատմամբ. «Ամերիկյան տեսանկյունից լիբանանյան խնդրում միակ լուսավոր կետը Սիրիայի հետ գաղտնի համագործակցությունն է: Պետքարտուղարության պաշտոնյաներն անկեղծորեն նշում էին, որ Քիսինջերը մեծ սխալ թույլ տվեց՝ փորձելով առանձնացնել Սիրիան և Եգիպտոսը: Դրա հետևանքով Եգիպտոսը մեկուսացվեց և կորցրեց արաբական երկրների վրա ազդելու իր կարողությունը: Այդ քաղաքականության արդյունքն էր նաև այն, որ ամերիկացիները չկարողացան համագործակցել սիրիացիների հետ լիբանանյան ճգնաժամի սկզբնական շրջանում»:

Ներխուժումից հետո կարճ ժամանակում Լիբանանի մեծ մասը հայտնվեց սիրիական հսկողության տակ, սակայն բախումները շարունակվեցին (մասնավորապես Բեյրութում): Սիրիական ներխուժումը դատապարտեցին արաբական երկրների, հատկապես Եգիպտոսը, որը, միանալով Իրաքին, Լիբիային և ՊԱԿ-ին փորձեց հակազդել սիրիական գործողություններին:

Հիշատակման է արժանի նաև գոյություն ունեցող այն տեսակետը, որի համաձայն՝ սիրիական միջամտությունը իրականացվեց Քիսինջերի կողմից մշակված քաղաքականության շրջանակներում: Ըստ այդ քաղաքականության՝ ներխուժման ավարտին Սիրիան ջախջախելով ՊԱԿ-ը որպես փոխհատուցում պետք է ստանար Գոլանները, իսկ Հորդանանը՝ Արևմտյան ափը: Այնուհետև պետք է Pax Americana-ն հաստատվեր տարածաշրջանում՝ թուլացնելով ծայրահեղական վարչակարգ ունեցող արաբական երկրները և նվազագույնի հասցնելով այնտեղ Խորհրդային Միության ազդե-

ցությունը[172]: Սակայն Վաշինգտոնը, իրականում չունենալով համապարփակ մշակված քաղաքականություն լիբանանյան ճգնաժամի վերաբերյալ, շփոթված և խառնված էր Լիբանանում ընթացող պատերազմից՝ այն զուտ դիտարկելով որպես արաբա-իսրայելյան հակամարտության շարունակություն: Իսկ ինչ վերաբերում է Սիրիային, ապա նա ո՛չ ամերիկյան, ո՛չ առավել ևս իսրայելյան «խաղ էր խաղում» Լիբանանում թեկուզ այն պարզ պատճառով, որ ո՛չ Քիսինջերը և ո՛չ էլ Ֆորդը որևէ լուրջ խաղ չունեին իրենց մտքերում՝ բացի արդեն վերը նշվածից՝ չթույլատրել լայնածավալ արաբա-իսրայելյան պատերազմի սանձազերծումը:

1976 թ. հոկտեմբերի 18-ին Էռ-Ռիյադում կայացավ արաբական երկրների ղեկավարների համաժողովը, որին մասնակցեց նաև ՊԱԿ-ի նախագահ Յասիր Արաֆաթը: Համաժողովի մասնակիցները քննարկեցին Լիբանանում ստեղծված իրավիճակը և կրակի դադարեցման հնարավորությունները: Համաժողովի ընթացքում Հ. Ասադին հաջողվեց որոշակի առաջխաղացման հասնել սիրիա-եգիպտական հարաբերություններում, ինչպես նաև Եգիպտոսի կողմից Լիբանանում Սիրիայի առաջնային դերի ճանաչման ուղղությամբ: Մի քանի օր հետո՝ հոկտեմբերի 25-26-ին, Կահիրեում տեղի ունեցավ արաբական երկրների ղեկավարների հաջորդ հանդիպումը, որի ընթացքում վավերացվեցին Ռաբաթում ընդունված որոշումները, այդ թվում՝ ամենակարևորը՝ Լիբանանում «կարգն ու օրինականությունը վերականգնելու նպատակով արաբական խաղաղապահ ուժերի կազմավորման մասին»[173]: Այդ որոշման համաձայն՝ Սիրիան, փաստորեն, հատուկ կարգավիճակ էր ստանում Լիբանանում, քանի որ վերոհիշյալ ուժերը կազմված էին լինելու հիմնականում սիրիացիներից:

---

[172] W. Quandt, Decade of Decisions: American Policy toward the Arab-Israeli Conflict 1967-1976, Berkeley University of California Press, 1977, p. 283.

[173] Սիրիական զորքերի քանակը սահմանվեց 30 հազար: Խաղաղապահ ուժերի մեջ մտան նաև Սաուդյան Արաբիայի, Լիբիայի, Սուդանի և այլ երկրների զինվորներ:

1982 թ. Իսրայելի ներխուժումը Լիբանան բեկումնային նշանակություն ունեցավ քաղաքացիական պատերազմի ընթացքի համար: Այն լայն հնարավորություններ ընձեռեց մի կողմից այդ երկրում Սիրիայի դիրքերի հետագա ամրապնդման, իսկ մյուս կողմից էլ՝ օտարերկրյա, մասնավորապես՝ Իրանի ու ԱՄՆ-ի ռազմական միջամտության ակտիվացման համար: Սակայն եթե Լիբանանում իրանական ներկայությունը ձեռնտու էր Դամասկոսին՝ Իսրայելի դեմ պայքարը շարունակելու հարցում, ապա ծավալվեց անողոք պայքար՝ հաճախ ահաբեկչական միջոցներով: Այդ պատճառով էլ ԱՄՆ-ում աճող ընդդիմությունը, լիբանանյան բանակի հետագա կազմալուծումն ու Ժմայելի կառավարության տապալումը որևէ այլընտրանք չթողեցին ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանին, քան 1984 թ. փետրվարի 7-ին հրաման ստորագրել Բեյրութից նավատորմի դուրսբերման վերաբերյալ:

Հաջողությամբ ավարտելով Լիբանանից օտարերկրյա ուժերի դուրսբերումը՝ բացառությամբ հարավային «անվտանգության գոտում» տեղակայված իսրայելական սահմանափակ ուժերի՝ Սիրիայի առաջնային խնդիրը դարձավ կարգ ու կանոնի հաստատումն այդ պառակտված երկրում: 1985 թ. դեկտեմբերի 28-ին Դամասկոսը նախաձեռնեց շիաների ղեկավար Նաբիհ Բերիի, դրուզների ղեկավար Վալիդ Ջումբլատի և մարոնիների ղեկավար Ելիե Հոբեյկայի միջև եռակողմ համաձայնագրի ստորագրումը, որը, սակայն, նույնպես չիրագործվեց: 1986-1987 թթ. գնալով սրվեցին հարաբերությունները Սիրիայի և Հեզբոլլահի միջև, իսկ Իրանի միջամտությունը Լիբանանի ներքին գործերին՝ իր հերթին զգալիորեն վատթարացրեց Սիրիայի հարաբերությունները Թեհրանի հետ:

1985-1986 թթ. հաճախակի դարձան բախումները սիրիա-իսրայելական սահմանին, հատկապես սիրիական հսկողության

տակ գտնվող Լիբանանի Բեքաա հարթավայրի օդային տարածքում: 1985 թ. նոյեմբերի 15-ին Իսրայելը սիրիական 2 «Միգ-23» ինքնաթիռ խփեց Լիբանանի տարածքի վրա: Դրան Դամասկոսը պատասխանեց Բեքաայում իր հակաօդային հրթիռների տեղադրումով: Ամերիկյան դիվանագիտական միջնորդությունից հետո Դամասկոսը հետ քաշեց հրթիռները Բեքաայից, սակայն ոչ լիբանանյան սահմանամերձ շրջանից, ինչը թույլ տվեց սիրիացիներին՝ վերահսկողություն հաստատել Լիբանանի օդային տարածքի նկատմամբ և վերջ դնել իսրայելական հետախուզական թռիչքներին:

Իրավիճակը Լիբանանում սրվեց 1987 թ. վարչապետ Ռաշիդ Քարամեի սպանությունից հետո և 1988 թ. սեպտեմբերին, երբ նախագահ Ամին Ժմայելի նախագահության մանդատի ավարտով առաջացավ սահմանադրական ճգնաժամ: Գործող սահմանադրության համաձայն՝ Ժմայելը, չունենալով վերընտրվելու իրավունք, նախագահական թեկնածու գեներալ Միշել Աունին նշանակեց վարչապետի պաշտոնակատար: Փաստորեն երկրում հաստատվեց երկիշխանություն, մի կողմից, ի դեմս Միշել Աունի, մյուս կողմից՝ ի դեմս նախկին վարչապետ Սալիմ ալ-Հուսսի, որը փոխարինել էր Քարամեին: Իրար հետ մրցակցող կառավարությունները, ապակայունացնելով իրավիճակը, լրջորեն մտահոգեցին Սիրիային, հատկապես, երբ 1989 թ. գեներալ Աունը անհաջող «ազատագրական պայքար» սկսեց Լիբանանում սիրիական ներկայության դեմ:

Շուլցի գործընկերներից մեկն ասել է, որ «ԱՄՆ պարտությունը Լիբանանում խորապես ազդել էր» պետքարտուղարի վրա: Հետաքրքրական է, որ պարտության պատճառների շարքում ամերիկյան քաղաքական գործիչներն ու լրատվական միջոցները, Լիբանանում ամերիկյան քաղաքականության իրականացման

ճանապարհին որպես հիմնական խոչընդոտ նշում էին նաև Հ. Ասադի «դաժան վարչակարգը»[174]: Այդուհանդերձ, Վաշինգտոնն աստիճանաբար սկսեց գիտակցել, որ ԱՄՆ քաղաքականությունը Լիբանանում պետք է հաշվի առնի սիրիական գործոնը: Սիրիայի արտգործնախարար Շարաայի կարծիքով «ԱՄՆ վարչակազմն ընդունել է Լիբանանում իր վարած քաղաքականության սխալը և ճանաչել է Սիրիայի կենտրոնական դերն այդ տարածաշրջանում»[175]:

Լիբանանյան ճգնաճամը հարթելու նպատակով ամերիկացիները բանակցություններ նախաձեռնեցին սիրիացիների հետ: Այսպես՝ 1988 թ. ապրիլի 4-ին և սեպտեմբերի 14-ին Դամասկոսում էր գտնվում ԱՄՆ պետքարտուղարի խորհրդատու Ռիչարդ Մերֆին, որը սիրիական կողմի հետ քննարկեց Լիբանանում ստեղծված իրավիճակը: Համաձայնություն ձեռք բերվեց մի շարք սկզբունքային հարցերի վերաբերյալ՝ Լիբանանում բոլոր կողմերի շահերը հաշվի առնող համաձայնագրի ստորագրման անհրաժեշտությունը, Լիբանանի բաժանման անթույլատրելիությունը, Լիբանանում նախագահական ընտրություններ անցկացնելու առաջնայնությունը[176]:

Անհրաժեշտ է նշել, որ սիրիա-ամերիկյան համագործակցությունը չափազանց կարևոր դեր ունեցավ Լիբանանում խաղաղության հաստատման գործում: Այդ համագործակցության, ինչպես նաև սաուդյան «օրհնության» շնորհիվ հնարավոր դարձավ Թաիֆի համաձայնագրի ստորագրումը 1989 թ. հոկտեմբերին:

---

[174] Dickey, Christopher. Assad and his Allies: Irreconcilable Differences, Foreign Affairs, Vol. 66, N1,1987, p. 61.

[175] “Ալ-Հավադիս”, «الحوادث », 14 հոկտեմբեր, 1984:

[176] Հետաքրքրական է, որ Լիբանանում մարոնիների պատրիարք Բուտրուս Սֆեյրի խոսքերով ինքը **ԱՄՆ-ի միջոցով Սիրիային էր ներկայացրել նախագահական թեկնածուների ցուցակը** (Foreign Broadcasting Information Service, December 30, 1988):

Համաձայնագիրը կազմված էր 4 մասերից: Առաջինը վերաբերում էր ներքին քաղաքական վերափոխումներին, երկրորդը՝ Լիբանանի տարածքում լիբանանյան պետականության վերահաստատմանը, երրորդը՝ հարավային Լիբանանից իսրայելական զորքերի դուրսբերմանը, չորրորդը՝ Սիրիայի հետ «հատուկ» հարաբերությունների հաստատմանը: Այսպիսով, կարելի է նշել, որ վերջ դնելով Լիբանանում զինված հակամարտությանը՝ համաձայնագիրը հատուկ հարաբերություններ հաստատեց Սիրիայի և Լիբանանի միջև բոլոր բնագավառներում («ֆի շաթա ալ-մաջալաթ»), ներառյալ արտաքին քաղաքականության, անվտանգության, պաշտպանության, տնտեսության, կրթության և տեղեկատվության ոլորտները: Համաձայնագրով ստեղծվում էր Գերագույն խորհուրդ, որը կազմված էր յուրաքանչյուր երկրի նախագահից և երեք պաշտոնյաներից: Համաձայնագրում ամրագրվեց նաև Լիբանանի ձևական խնդրանքը՝ որոշակի հիմունքների վրա սիրիական ջոկատները այնտեղ թողնելու վերաբերյալ[177]: Այդ առիթով Սիրիայի արտաքին գործերի նախարար Ֆարուկ Ալ-Շարաան հայտարարեց, որ «լիբանանցիների և սիրիացիների մեծամասնությունը կողջուներ մեր երկու երկրների միացումը»՝ միևնույն ժամանակ ավելացնելով, որ իր կառավարությունը ներկայումս այդպիսի մտադրություն չունի: Փաստորեն, Թաիֆի համաձայնագրով Սիրիային հնարավորություն տրվեց ևս երկու տարի իր զորքերը պահելու Լիբանանում՝ չնայած այն հանգամանքին, որ դեռևս 1982 թ. ավարտվել էր ԱՊԼ-ի կողմից Սիրիային Լիբանանում խաղաղապահ առաքելություն իրականացնելու վերաբերյալ տրված մանդատի ժամկետը:

Թաիֆի համաձայնագիրը չբավարարեց լիբանանյան հակամարտության մեջ ներքաշված բոլոր կողմերին, այնուամենայ-

[177] Pipes Daniel. Damascus Courts the West: Syrian Politics, 1989-1991.

նիվ իրավական տեսանկյունից այն հնարավոր դարձրեց Pax Syriana-ի հաստատումը Լիբանանում: Վերջինիս վերահսկումը Հ. Ասադին տվեց Իսրայելի դեմ նոր ռազմական ճակատ բացելու հնարավորություն, ինչն էլ իր հերթին չափազանց կարևոր խաղաքարտ և տարածաշրջանում պայթյունավտանգ իրավիճակը ղեկավարելու արդյունավետ միջոց դարձավ Հ. Ասադի համար:

Լիբանանի վերաբերյալ զեկույցներից մեկում նշվում էր, որ Սիրիան «հրամաններ է տալիս, ղեկավարներ է նշանակում, կազմակերպում է խորհրդարանական և այլ ընտրություններ, առաջ է քաշում և պաշտոնանկ է անում, ում որ ցանկանա, միջամտում է Լիբանանի վարչական, իրավական, տնտեսական և հատկապես քաղաքական հարցերին»[178]: Դամասկոսի կողմից Լիբանանի վերահսկումը այլևս սկսեց կրել համապարփակ բնույթ:

Պետք է նշել, որ 1990 թ. քրիստոնյա ազգայնական ուժերը՝ Միշել Աունի ղեկավարությամբ, դեմ էին Թաիֆի համաձայնագրի ստորագրմանը, որը, թեև «ժամանակավորապես», այնուամենայնիվ երկարաձգում էր և օրինականացնում սիրիական ներկայությունը Լիբանանում: Աունը փորձեց ապստամբել և պայքար ծավալել սիրիամետ լիբանանյան կառավարության դեմ: Վերջինս հայցեց սիրիական բանակի օգնությունը: Արդյունքում արդեն 1991 թ. բոլոր «միլիցիաները» զինաթափվեցին՝ բացառությամբ Դամասկոսի օժանդակությունը վայելող «Հեզբալլահի»: Նույն թվականի մայիսի 20-ին Լիբանանը և Սիրիան ստորագրեցին «Բարեկամության, համագործակցության և կոորդինացման» վերաբերյալ պայամանագիր, որը վերջնականապես օրինականացրեց սիրիական վերահսկողությունը: Այսուհանդերձ, փոխզիջման վրա

Washington Institute for Near East Policy, p. 71.

[178] Rubin, Barry. The Truth abouth Syria, p.121.

հիմնված Թաիֆի համաձայնության առանցքային այն դրույթը, որի համաձայն՝ խորհրդարանում քրիստոնյաներն ու մահմեդականները հավասար ներկայացուցչություն էին ստանում, «անկյունաքարի նշանակություն» ունեցավ ոչ միայն կողմերի հաշտեցման, այլ նաև Լիբանանի ապագայի համար:

Թեև պահպանվեց երկրի կառավարման բաշխման «եռյակի» հին սկզբունքը՝ մարոնի նախագահ, սուննի վարչապետ և շիա խորհրդարանի նախագահ, սակայն մի շատ կարևոր փոփոխություն տեղի ունեցավ. եթե նախկինում վարչապետին նշանակում էր նախագահը, ապա Թաիֆի համաձայնագրից հետո խորհրդարանն է հաստատում վարչապետի թեկնածուին:

«Քրիստոնյաները (մարոնիները) հրաժարվեցին մոտ 65 տարի տևած իրենց մենաշնորհից, իսկ մուսուլմանները, չնայած այժմ կազմում էին բնակչության մեծամասնությունը, չպնդեցին, որ խորհրդարանում մեծամասնություն պետք է ունենան»[179]:

Առաջին անգամ Լիբանանի կառավարման կրոնահամայնքային բնույթը վերանայման ենթարկվեց՝ ճանապարհ հարթելով ապագայում նաև պետականությունը թուլացնող այդ դրույթը ամբողջությամբ վերացնելու համար:

Թաիֆի համաձայնագրի պատմական նշանակությունը կայացավ նրանում, որ այն պաշտոնապես վերջ դրեց Լիբանանում 15-ամյա քաղաքացիական պատերազմին:

---

[179] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3, էջ 658-659:

9. 1978 թ. Քեմփ-Դևիդի համաձայնագիրը Եգիպտոսի և Իսրայելի միջև

Տարածաշրջանում լարվածության թուլացմանն ու համընդհանուր խաղաղության հաստատմանն ուղղված գործընթացը նոր թափ ստացավ 1976 թ. ԱՄՆ նոր նախագահի՝ Ջիմի Քարթերի ընտրություններից հետո: Վերջինս իրականացնելով բաց արտաքին քաղաքականություն՝ փաստորեն վերջ դրեց քիսինջերյան գաղտնի, «մեկ հոգանոց» դիվանագիտությանը: Քիսինջերի «քայլ առ քայլ» քաղաքականությանը Ջ. Քարթերը հակադրեց համապարփակ կարգավորմանն ուղղված մի նոր քաղաքականություն, որը «ճանաչում էր պաղեստինցիների իրավունքը և կոչված էր իրական խաղաղություն հաստատելու արաբների և հրեաների միջև»[180]:

Վաշինգտոնում բացասաբար ընդունվեց 1977 թ. մայիսին Իսրայելի վարչապետի պաշտոնում Մենախեմ Բեգինի ընտրությունը, որը, խոչընդոտելով արաբա-իսրայելյան կարգավորմանը, էլ ավելի դժվարացրեց ամերիկյան քաղաքականության իրականացումը: Խոսվեց անգամ Վաշինգտոնի և Թել-Ավիվի միջև գոյություն ունեցող լուրջ տարաձայնությունների մասին: Իսրայելյան մեկնաբան Զեև Պլիցերը գրում էր, որ տարաձայնությունները հիմնականում վերաբերում էին պաղեստինյան հարցին: Ըստ Պլիցերի՝ Միացյալ Նահանգները տեղեկացրել էր Իսրայելին, որ ԱՄՆ-ի ներկայիս մերձավորարևելյան քաղաքականությունը հիմնված է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի հ. 242 և հ. 338 բանաձևերի վրա: Պաշտոնական Վաշինգտոնը վճռականորեն կողմ էր Գազայից և Արևմտյան ափից իսրայելյան ուժերի դուրսբերմանը:

---

[180] Ջ. Քարթերն առաջին ամերիկյան նախագահն էր, որը 1977 թ. մարտին իր ելույթում հրապարակավ ընդունեց «Պաղեստինյան հայրենիքի» ստեղծման անհրաժեշտությունը:

Բեգինի կարծր դիրքորոշումն անհանգստացնում էր ԱՄՆ վարչակազմին, քանի որ առանց պաղեստինցիների մասնակցության և վերոհիշյալ գրավված տարածքներից դուրսբերման, անիմաստ և անհավանական էր դառնում Ժնևում համաժողովի գումարումը, որին ձգտում էր Ջ. Քարթերը:

Եթե Սիրիան վստահ էր, որ միայն ԱՄՆ-ի հետ արաբական երկրների համաձայնեցված և միասնական գործելակերպը կարող է լուրջ նախադրյալներ ստեղծել արաբա-իսրայելյան լիակատար կարգավորման համար, ապա Եգիպտոսը՝ հանձին նախագահ Անվար Սադաթի, շարունակում էր մրցակցությունը Հ. Ասադի հետ արաբական ճամբարի առաջնորդության համար: Պաշտոնական Դամասկոսը կարծում էր, որ եթե այս անգամ խափանվի մեկ այլ առանձին եգիպտա-իսրայելյան համաձայնագրի՝ «Սինայ-3»-ի ստորագրումը, իսկ Իսրայելը ստիպված լինի գնալ զիջումների, ապա Ա. Սադաթը ոչ միայն մերժում էր միասնական արաբական պատվիրակության մասնակցությունը Ժնևի համաժողովին, այլև նախընտրում էր առանձին համաձայնագիր ստորագրել Իսրայելի հետ: Արդեն օգոստոսի 2-ին Ա. Սադաթը, Կահիրեում հանդիպելով ԱՄՆ պետքարտուղար Վենսին և առանց խորհրդակցելու Սիրիայի հետ, առաջարկեց կազմակերպել արաբական երկրների և Իսրայելի արտգործնախարարների հանդիպումը Վաշինգտոնում՝ այնտեղ կայանալիք համաժողովի ընթացակարգի հետ կապված հարցերն «աշխատանքային խմբում» քննարկելու նպատակով: Ա. Սադաթի այս «ինքնագլուխ» քայլը չնայած մտահոգիչ համարվեց Դամասկոսում, սակայն դրանից լուրջ հետևություններ չարվեցին: Հանդիպելով Վենսին՝ վերջինիս տարածաշրջան այցելության ընթացքում Հ. Ասադը մերժեց Ա. Սադաթի առաջարկը՝ նշելով, որ «եղբայր Սադաթը, առաջարկելով այդ խմբի ստեղծումը, ամենայն հավանականությամբ նպատակ ուներ նոր լիցք հաղորդելու խաղաղության

գործընթացին»: Հ. Ասադը հայտնեց Վենսին նաև այն մասին, որ «առաջին հայացքից Սիրիան որևէ մեծ օգուտ չի տեսնում այսպիսի խմբի ստեղծումից և ոչ ուղղակի, ոչ էլ անուղղակի որևէ հանդիպում տեղի չի ունենա Իսրայելի և արաբական երկրների արտգործնախարարների միջև»[181]: Մինչ այդ Հ. Ասադի թիկունքում Ա. Սադաթի օգնական Հասան Թուհամին և Իսրայելի արտգործնախարար Դայանը սեպտեմբերին Մարոկկոյում գաղտնի բանակցություններ էին վարում՝ քննարկելով Ժնևի շրջանակներից դուրս համաձայնագրի կնքման հնարավորությունները: Հետագայում արդեն պարզ դարձավ, որ Եգիպտոսը, արաբական միասնական շահերին հակառակ, նախապատրաստվում էր Իսրայելի հետ նոր գործարք կնքելու:

Վաշինգտոնին, որը ձգտում էր Ժնևում համաժողովի անցկացմանը, տվյալ պահին չէր կարող հրապուրել առանձին եգիպտա-իսրայելյան համաձայնագրի ստորագրման հեռանկարը: Ամերիկացիները, սակայն, պատշաճ ուշադրություն չդարձրեցին Հ. Ասադի և Ա. Սադաթի մրցակցությանը՝ հավատալով վերջինիս հավաստիացումներին այն մասին, որ նա չի կարող «մարսել» Իսրայելի հետ նոր համաձայնագրի ստորագրումը: Իսրայելյան ղեկավարությունը, ձեռնարկելով ուղղակի բանակցություններ Եգիպտոսի հետ և օգտագործելով հետագայում ավանդական ամերիկյան լոբբիի ճնշումը, ստիպեց ամերիկյան վարչակազմին աջակցել իր որդեգրած քաղաքականությանը: Հաճախ է խոսվում այն մասին, որ համաժողովի անցկացումը Ժնևում անցանկալի էր Սադաթին, քանի որ Սիրիայի և ԽՍՀՄ-ի ակտիվ մասնակցությունը կարող էր «կապել Սադաթի ձեռքերը» և խոչընդոտել Բեգինի հետ գործարքի կնքմանը: Որոշ հեղինակներ դրանով են բացատրում 1977 թ. նոյեմբերին Ա. Սադաթի Երուսաղեմ այցելությունը, ինչպես նաև նրանով, որ

[181] Damascus Domestic Service, 4, 12 August, 1977.

Ա. Սադաթը ցանկանում էր Խորհրդային Միությանը և այդ թվում նաև Սիրիային հեռու պահել մերձավորարևելյան կարգավորման դիվանագիտական գործընթացից: Անկասկած, ձգտելով «չընկնել խորհրդա-սիրիական ծուղակը»՝ Ա. Սադաթն իր սեփական կապի միջոցները հաստատեց Իսրայելի հետ, որտեղից ստացավ հավաստիացումներ այն մասին, որ առանձին խաղաղության նոր համաձայնագիր ստորագրելու դեպքում կստանա Սինայը: Դեռևս հոկտեմբերին Ա. Սադաթը փորձում էր հասկանալ, թե ինչ ակնկալիքներ կարող է ունենալ ամերիկացիներից: Կարծիքներ էին հնչում նաև, որ ամերիկա-խորհրդային հայտարարությունից հետո Սադաթը, «հոգնելով» Ջ. Քարտերի՝ իսրայելյան ճնշմանը հակազդելու անկարողությունից և ժամանակ վատնելուց, վերջնականապես համոզվեց Իսրայելի հետ ցանկացած գնով համաձայնության գալու մտադրության մեջ՝ նախաձեռնելով իր այցելությունը Երուսաղեմ:

Ե. Պրիմակովը, հերքելով ամերիկացիների վարկածն այն մասին, որ Վաշինգտոնը որևէ կերպ չի մասնակցել Երուսաղեմ Ա. Սադաթի այցելության նախապատրաստմանը, նշում է անձամբ Քարտերի և նրա վարչակազմի ակտիվ աշխատանքները՝ Սադաթի նախաձեռնությունը քաջալերելու ուղղությամբ[182]: Ամերիկացիներին հաջողվեց համոզել Սադաթին, որ նրա այցելությունը Երուսաղեմ «պատմական բացառիկ հնարավորություն կընձեռի» ԱՄՆ-ին՝ սիոնիստական ճնշմանը դիմագրավելու և իսրայելյան ղեկավարությանը խաղաղություն պարտադրելու համար այն պարզ հիմնավորմամբ, որ «Սադաթն ինքն է խաղաղություն առաջարկել Իսրայելին, իսկ վերջինս այն մերժել է»[183]:

---

[182] Е. М. Примаков, История одного сговора: (Ближневосточная политика США в 70-е начале 80-х годов), Москва, էջ 165:

[183] «Ալ-Ուսբու Ալ-Արաբի», 05.12.1977:

Պաշտոնական Դամասկոսը հավատացած էր, որ ամերիկյան օժանդակությունը Սադաթին չի ծառայում խաղաղության հարցի լուծմանը, և որ Միացյալ Նահանգներն իր սեփական քայլերը համապատասխանեցնում է Սադաթի նախաձեռնություններին: Այցից առաջ Հ. Ասադը նախազգուշացրել էր Սադաթին «Արաբական հարցի համար Երուսաղեմ այցելության ծանր ու անցանկալի հետևանքների մասին»[184]: Հ. Ասադի կարծիքով Սադաթի այցելությունն Իսրայել «նշանակում էր Իսրայելի ճանաչում: Նրա այցելությունն Երուսաղեմ նշանակում էր Երուսաղեմի՝ որպես Իսրայելի անբաժան մայրաքաղաք ճանաչում: Այդ այցելությամբ Սադաթը կոտրեց արաբական միասնականությունն ու ոչնչացրեց տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված բոլոր ջանքերը: Նա թուլացրեց արաբական ճակատն ու գործեց արաբական զանգվածների ձգտումներին ու ցանկություններին հակառակ»[185]:

Ա. Սադաթի այցելությունը դատապարտվեց արաբական երկրների մեծամասնության, մասնավորապես Սիրիայի, Իրաքի, Լիբիայի, Ալժիրի, Հարավային Եմենի, ՊԱԿ-ի կողմից: Այցելությունից անմիջապես հետո պաղեստինյան և սիրիական ղեկավարների հանդիպումն ավարտին հրապարակված համատեղ հայտարարություն մեջ նշվեց, որ ամերիկյան օժանդակությամբ կայացած «Սադաթ-Բեգին երկխոսությունը՝ հարցականի տակ դնելով Ժնևում համաժողովի անցկացման հնարավորությունը, նպատակ է հետապնդում առանձին եգիպտա-իսրայելյան (հաշվով երրորդ) համաձայնագրի կնքումը»[186]: Ալժիրը և Լիբիան համաձայնեցին տրամադրել Սիրիային երկարաժամկետ ֆինանսական օժանդակություն՝ «Իսրայելի դեմ արաբական առաջնային ճակատի պահպան-

[184] «Ալ-Նահար», 18.11.1977:
[185] “Newsweek”, 16.01.1997.
[186] «Ալ-Ուսբու Ալ-Արաբի», 05.12.1977:

ման նպատակով[187]: Ծոցի արաբական երկրներն ավելի զգուշավոր դիրքորոշում որդեգրեցին:

Հետաքրքիր է, որ նոյեմբերի 22-ին Դամասկոս այցելության ընթացքում Հորդանանի վարչապետ Մուդար Բադրանը հայտարարեց, որ Ամմանը Ա. Սադաթի այցելությունը դիտարկում է որպես «իմաստուն» քայլ և իրերը զգացականորեն չդատելու համար նախընտրում է սպասել այցելության հետևանքներին»: Դամասկոսը պահանջեց Ամմանից 72 ժամվա ընթացքում հայտնել հորդանանյան վերջնական պաշտոնական դիրքորոշումն այդ հարցի վերաբերյալ: Սիրիական աղբյուրների համաձայն՝ Ամմանի այսպիսի կեցվածքը պայմանավորված էր ամերիկյան ուժեղ ճնշմամբ և միանգամայն տեղավորվում էր Երուսաղեմ Սադաթի այցելությունից հետո Միացյալ Նահանգների որդեգրած ռազմավարության շրջանակներում՝ «նվազագույնի հասցնել Սադաթի նախաձեռնության հասցրած վնասը»[188]: Այդ իսկ պատճառով Վաշինգտոնի համար անցանկալի էին ոչ միայն Սադաթի այցելության գործում ամերիկյան դերակատարության մասին բացահայտումները, այլև այցից հետո արաբական աշխարհի բաժանումը և Սիրիայի շուրջ արաբական «մերժողական ճակատի» ստեղծումը:

Վաշինգտոնը Ա. Սադաթի այցելությունը Երուսաղեմ որակեց ոչ թե որպես անձնական գործողություն, այլ որպես խաղաղության գործընթացի մաս և Ժնևում համաժողովի աշխատանքները վերսկսելուն ուղղված փորձ»[189]: Դրանից հետո լուրեր տարածվեցին, թե Ջ. Քարթերի վարչակազմը պատրաստվում է ճնշում գործադրել Բեգինի վրա, վերջինս զիջումների գնա ոչ միայն եգիպտական, այլև արաբական բոլոր, հատկապես պաղեստինյան ճակատնե-

[187] «Ալ-Սաֆիռ», 25.11.1977:

[188] Vance C. Hard Choices. Critical Years in America's Foreign Policy, N.Y., 1983, p. 203.

[189] «Ալ-Նահար ալ-Արաբի վա ալ-Դավլի», 26.11.1977:

ում[190]: Սակայն, եթե անգամ ենթադրենք, որ ԱՄՆ նախագահը իրականում նման մտադրություններ ուներ, ապա ինչպես բացատրենք նրա ազգային անվտանգության գծով խորհրդական Զ. Բժեզինսկու ծրագիրը, որտեղ կենտրոնական տեղ էր հատկացվում Եգիպտոսի և Իսրայելի միջև հարաբերություններին: Իսկ ինչ վերաբերում է պաղեստինցիներին, ապա, ըստ Բժեզինսկու, նախատեսվում էր համաձայնության գալ միայն Արևմտյան ափի և Գազայի վերաբերյալ, այն էլ՝ առանց ՊԱԿ-ի[191]:

Արդեն միանգամայն կանխատեսելի էր, որ Ա. Սադաթի այցելությանը Երուսաղեմ կհետևի առանձին եգիպտա-իսրայելյան համաձայնագրի ստորագրումը: Ըստ Սիրիայի փոխվարչապետ և արտգործնախարար Աբդուլ Հալիմ Խադդամի՝ «սիրիական որևէ ղեկավար կասկած չունի, որ եգիպտա-իսրայելյան համաձայնագրի ստորագրումը քաջալերվում ու հովանավորվում է Վաշինգտոնի կողմից»[192]:

Այստեղ հիշատակման արժանի են Ջ. Քարթերի մերձավորարևելյան քաղաքականության մեջ կատարված հետևյալ փոփոխությունները. եթե պաղեստինյան հարցի վերաբերյալ իր նախագահության սկզբնական շրջանում Ջ. Քարթերն արտահայտվում էր ընդգծված ջերմությամբ և կողմնակից էր «պաղեստինյան հայրենիքի» ստեղծմանը, ապա արդեն 1979 թ. հայտարարեց. «Ես դեմ եմ Պաղեստինյան պետության ստեղծմանը: Ես չեմ կարծում, որ դա լավ կլինի պաղեստինցիների համար: Ես չեմ կարծում, որ դա լավ կլինի Իսրայելի համար: Ես չեմ կարծում, որ դա լավ կլինի անգամ հարևան արաբական երկրների համար»[193]:

---

[190] «Ալ-Նահար ալ-Արաբի վա ալ-Դավլի», 26.11.1977:

[191] «Ալ-Ֆաջր», 11.01.1978 (Երուսաղեմում տպագրված Արևմտյան ափի պաղեստինյան թերթ):

[192] «Ալ-Սաֆիռ», 15.01.1978:

[193] William R. Polk The Arab World Today.Harvard University Press, London, 1991, p. 442.

Ի հակազդեցություն ԱՄՆ, Իսրայել և Եգիպտոս ձևավորվող առանցքի՝ 1977 թ. դեկտեմբերի սկզբներին Տրիպոլիում ստեղծվեց Արաբական կայունության և հակազդեցության ճակատ՝ Սիրիայի գլխավորությամբ, որին, Սիրիայից բացի, անդամագրվեցին Ալժիրը, Լիբիան, Հարավային Եմենը, Իրաքը և ՊԱԿ-ը: Սակայն ամերիկյան հովանավորությամբ Եգիպտոսի որոշակի մեկուսացումն արաբական պայքարից և տարածաշրջանային ուժերի հավասարակշռության խախտումը, ինչպես նաև ամերիկա-իսրայելյան հարաբերությունների էլ ավելի սերտացումը ստիպեցին Հ. Ասադին խորացնել ռազմավարական հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ:

Ահա այդպիսին էր իրավիճակը տարածաշրջանում, երբ 1978 թ. սեպտեմբերի 17-ին Քեմփ-Դևիդում (ԱՄՆ) ամերիկյան նախագահի ակտիվ հովանավորությամբ Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթն ու Իսրայելի վարչապետ Մենախեմ Բեգինը ստորագրեցին երկու փաստաթուղթ: Առաջինը պարունակում էր երկու երկրների միջև խաղաղության պայմանագրի կնքման համար այն շրջանակը, որը հիմք հանդիսացավ 1979 թ. մարտի 22-ին եգիպտա-իսրայելյան համաձայնագրի ստորագրման համար, իսկ երկրորդը, մասամբ հիմնվելով ՄԱԿ-ի հ. 242 բանաձևի վրա, կոչվում էր «Մերձավոր Արևելքում խաղաղության շրջանակ» և հիմնականում առնչվում էր պաղեստինյան խնդրին: Այն նախատեսում էր Արևմտյան ափում և Գազայի հատվածում խնդրի երեք փուլային կարգավորում՝ հինգ տարվա անցումային շրջանում: Այդ ընթացքում Իսրայելն ու Հորդանանը պետք է խաղաղության պայմանագիր ստորագրեին, որին պետք է հաջորդեին բանակցությունները Արևմտյան ափի և Գազայի հատվածի կարգավիճակի վերաբերյալ: Բանակցությունների ընթացքում պետք է ճանաչվեին «պաղեստինցիների օրինական իրավունքներն ու նրանց արդար պահանջները»: Բանակցությունները նախատեսվում էր անցկացնել Եգիպտոսի, Իսրայելի և Հորդանանի միջև՝ աստիճանաբար Արևմտյան ա-

փի և Գազայի հատվածի բնակիչներին «լիակատար ինքնավարություն ապահովելու» նպատակով: Ըստ համաձայնագրի՝ վերոհիշյալ երեք երկրները պետք է ինքնակառավարման մարմին (վարչական խորհուրդ) ստեղծեին Արևմտյան ափում և Գազայի հատվածում, իսկ այնտեղի բնակիչներից ընտրված ներկայացուցիչները Իսրայելի, Եգիպտոսի և Հորդանանի հետ պետք է մասնակցեին վերջնական կարգավիճակի շուրջ բանակցություններին[194]:

Փաստորեն, Քեմփ-Դևիդում ստորագրված համաձայնագիրն առաջարկում էրՊաղեստինյան ինքնավարություն Արևմտյան ափի և Գազայի հատվածի «բնակիչներին», այլ ոչ թե տարածքին: Այն հաստատում էր այնպիսի ինքնակառավարման մարմին, որն օժտված չէր ո՛չ օրենսդրական, ո՛չ էլ դատական ուժով: Համաձայնագիրը շնորհում էր պաղեստինցիներին ոչ թե ինքնորոշում, այլ պարզապես հնարավորություն՝ մասնակցելու «իրենց սեփական ապագայի որոշմանը»: Այնտեղ ոչ մի խոսք չկար Երուսաղեմի մասին:

Համաձայնագրի ստորագրումը Եգիպտոսի և Իսրայելի միջև ԱՄՆ-ում համարվեց Ջ. Քարթերի վարչակազմի արտաքին քաղաքական ամենամեծ հաջողություններից մեկը: Սակայն արդյո՞ք կարելի է հաջողություն համարել մի համաձայնություն, որը փակուղի տարավ մերձավորարևելյան համապարփակ կարգավորումը, նոր բաժանումներ ստեղծեց տարածաշրջանում և էլ ավելի ամրապնդեց իսրայելյան ծայրահեղական ուժերը: Իրականացվեց ԱՄՆ նախագահի մշակած (Բզեժինսկու կազմած) ծրագրի առաջին «կենտրոնական մասը»՝ եգիպտա-իսրայելյան համաձայնագրի կնքումը: Այն ոչ միայն համապատասխան պայմաններ չստեղծեց հաջորդ մասերի՝ պաղեստինյան և սիրիական ճակատներում համաձայնագրերի կնքման համար, այլ, հակառակը, էլ ավելի ուժեղացրեց նրանց անապահովության և սեփական անվտանգության խոցելիության

[194] Alain Gresh and Dominique Vidal. A to Z of the Middle East. Zed Books Ltd. London. 1990, pp. 239-241.

զգացումները: Քեմփ-Դևիդում կնքված համաձայնագիրը մեկ անգամ ևս ապացուցեց Վաշինգտոնի անկարողությունը կամ ցանկության բացակայությունը՝ ձերբազատվելու մասնակի լուծումների քաղաքականությունից, որը խաղաղության փոխարեն ապակայունացում բերեց տարածաշրջանին: Ջ. Քարթերի նախագահության վերջին տարիներին Մերձավոր և Միջին Արևելքում ամերիկյան դիրքերին շոշափելի հարված հասցրին Իրանում տեղի ունեցած հեղափոխությունը, ԻԻՀ-ում ամերիկյան դեսպանատանը պատանդների հետ կապված ճգնաժամը և, անշուշտ, խորհրդային ՀՈՒ ներխուժումն Աֆղանստան:

Այսպիսով, տարածաշրջանում խաղաղություն հաստատելու Վաշինգտոնի փորձերն ավարտվեցին բացարձակ անհաջողությամբ: Անվերապահ աջակցություն ցուցաբերելով իսրայելյան քաղաքականության իրականացմանը՝ ԱՄՆ-ն ոչ միայն վատթարացրեց իր հարաբերությունները Սիրիայի և «առաջադեմ» արաբական երկրների հետ, այլև, փորձելով շահարկել Լիբանանում ստեղծված իրավիճակը, տարածաշրջանում լարվածության սաստկացման անուղղակի պատճառ դարձավ:

Քեմփ-Դևիդի համաձայնագրի ստորագրումը լուրջ փորձությունների առջև կանգնեցրեց առաջին հերթին Սիրիային: Ուժերի նոր հարաբերակցություն ստեղծելով տարածաշրջանում՝ այն Սիրիային հատկացվեց արաբա-իսրայելյան հակամարտության ամենագլխավոր դերերից մեկը: «Արաբական պայքարից Եգիպտոսի դուրս գալուց» հետո Դամասկոսն իր հսկողության տակ առավ արաբա-իսրայելյան հակամարտությունը, որը ռազմական տեսանկյունից կարելի է ասել, վերածվեց սիրիա-իսրայելյան հակամարտության[195]:

---

[195] Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996), Երևան, 2000, էջ 6:

Եգիպտա-իսրայելյան համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո Սիրիայի արտաքին քաղաքականության առջև ծառացան հետևյալ երեք հիմնախնդիրները՝ հակազդեցությունը Քեմփ-Դևիդից հետո էլ ավելի ինքնավստահ դարձած ու հզորացած Իսրայելին, պայքարը արաբական աշխարհում համաձայնագրի գործընթացի օրինականացման դեմ և բազմաբնույթ օժանդակության ապահովումը արաբական աշխարհի կողմից:

Սիրիայի արտաքին քաղաքականության մեջ կենտրոնական տեղ էին զբաղեցնում Իսրայելի դեմ պայքարում արաբական միասնականությանն ու ջանքերի համադրմանը վերաբերող հարցերը: Քեմփ-Դևիդից հետո տարածաշրջանում հաստատված ուժերի նոր հավասարակշռությանը Սիրիան փորձեց հակադրել նոր դաշինքի ստեղծումն ու Իրաքի հետ մերձեցմանն ուղղված ռազմավարությունը: Դեռևս 1977 թ. դեկտեմբերին՝ Ա. Սադաթի Երուսաղեմ կատարած այցելությունից հետո, Հ. Ասադը Իրաքի (չնայած երկկողմ հարաբերություններում առկա մշտական լարվածությանը) և արաբական այլ պետությունների հետ միջարաբական նոր դաշինքի ստեղծմանն ուղղված քայլեր ձեռնարկեց: 1978 թ. հոկտեմբերին Հ. Ասադն ու Բաքրը Բաղդադում ստորագրեցին «Համատեղ ազգային գործողության» խարտիան, որի համաձայն՝ երկու երկրների միջև նախատեսվում էր «լիակատար ռազմական, ինչպես նաև տնտեսական, քաղաքական և մշակութային միություն»: Խարտիայի ստորագրումը երկուստեք որակվեց որպես «պատմական համաարաբական քայլ» և «կարևոր քայլ՝ սիոնիզմին դիմակայելու ուղղությամբ»:

Սիրիայի և Իրաքի միջև շփումները շարունակվեցին նաև Քեմփ-Դևիդից և Իրաքում Սադդամ Հուսեյնի իշխանության գալուց հետո: Այնուհանդերձ, կողմերի միջև շարունակ պահպանվում էր անվստահության ու մրցակցության մթնոլորտը: Այդ իսկ պատճա-

ռով Հ. Ասադը մերժում էր իրաքյան առաջարկները՝ երկու երկրների գործնական միավորման, ինչպես նաև սիրիական տարածքում իրաքյան զորքերի տեղակայման վերաբերյալ: Դամասկոսի և Բաղդադի միջև անհամաձայնությունը գագաթնակետին հասավ 1979 թ. ամռանը, երբ Իրաքի նախաձեռնությամբ խզվեցին հարաբերությունները երկու երկրների միջև: 1980 թ. Բաղդադը երկրից վտարեց Սիրիայի դեսպանին Ս. Հուսեյնի վարչակարգը տապալելու «մեկ այլ սիրիական դավադրություն կազմակերպելու» մեղադրանքով: Սիրիա-իրաքյան մերձեցման փորձերն ավարտվեցին անհաջողությամբ, ավելին, իրանա-իրաքյան երկարատև ու հյուծիչ պատերազմի ընթացքում Դամասկոսը թեքվեց Իրանի կողմը:

Քեմփ-Դևիդից հետո էլ ավելի վատթարացան Սիրիայի հարաբերությունները Հորդանանի հետ: Դրա հիմնական պատճառը Սիրիա-ՊԱԿ հարաբերությունների բարելավումն ու Սիրիայի ծայրահեղ անհանդուրժողական վերաբերմունքն էր Քեմպ-Դևիդի գործարքի նկատմամբ: Հուսեյն թագավորը, չնայած նույնպես դժգոհ էր Ա. Սադաթից, որովհետև վերջինս չէր խորհրդակցել Ամմանի հետ նախքան Իսրայելի հետ համաձայնության գալը, այնուամենայնիվ ոչ բացահայտ պաշտպանում էր գործարքը՝ հույս ունենալով կարգավորել Պաղեստինյան խնդիրն իր շահերին համապատասխան: Սիրիա-հորդանանյան հարաբերություններն էլ ավելի սրվեցին 1980 թ. նոյեմբերին՝ Ամմանում կայացած Արաբական երկրների գագաթնաժողովից հետո: Սիրիական իսլամական ընդդիմությանն աջակցելու մեղադրանքով Սիրիան 30-հազարանոց զորք կենտրոնացրեց Հորդանանի հետ սահմանին:

Արաբական աշխարհում տիրող անհամաձայնության և բաժանվածության մթնոլորտը, հիասթափությունը ԱՄՆ-ից, ինչպես նաև երկրում ստեղծված ներքաղաքական անկայուն իրավիճակը ստիպեցին «թուլացած և մեկուսացված» Սիրիային օգնություն և

պաշտպանություն փնտրել Խորհրդային միությունում[196]: Միացյալ Նահանգների և Եգիպտոսի միջև դաշինքին Սիրիան փորձեց հակադրել ԽՍՀՄ-ի հետ Բարեկամության համաձայնագիրը (1980 թ.), որը միաժամանակ պետք է հնարավորություն ընձեռեր Իսրայելի հետ «ռազմավարական հավասարակշռություն» (ալ-թավազուն ալ-իսթրաթիջի) հաստատելու, ինչը, զինվելուց բացի, պահանջում էր տարածաշրջանում դաշնակիցների շրջանակի ընդլայնում՝ Իսրայելի վրա ճնշման նոր կետեր ստեղծելու նպատակով, որոնք կարող էին փոխարինել Եգիպտոսի կորուստը:

10. 1982 թ. Իսրայելի ներխուժումը Լիբանան

1976 թ. վերջին՝ Լիբանանում որոշակի ներքին կայունության հաստատումից հետո, քրիստոնյա ուժերը՝ հիմնականում Բաշիր Ժմայելի «Քաթայիբը» և Քամիլ Շամունի «Ան–Նումուռը», պայքար էին ծավալել երկրում սիրիացիների ներկայության դեմ: Իսկ իսրայելյան կառավարությունը, հատկապես Բեգինի իշխանության գլուխ անցնելուց հետո սկսել էր բացահայտորեն համագործակցել նրանց հետ: Բեգինը, պետք է նշել, իր նախորդի պես Լիբանանի քրիստոնյաների հարցը դիտում էր ոչ միայն քաղաքական և հումանիտար, այլև գաղափարախոսական ու քաղաքական-ռազմավարական տեսանկյունից: Նա հավատացած էր, որ Իսրայելը պետք է օգնի քրիստոնյաներին «մոլեռանդ» մահմեդական թշնամու դեմ պայքարելու գործում[197]: Ստանալով իսրայելյան օժանդակությունը և

---

[196] Ամերիկյան քաղաքականությանը հակազդելու անհրաժեշտությունն էր, որ ստիպեց Սիրիայի արտգործնախարար Աբդ ալ-Հալիմ Խադդամին կոչ անել արաբական երկրներին ԽՍՀՄ-ի հետ պաշտպանական համաձայնագրեր ստորագրելու, իսկ 1978 թ. հոկտեմբերին՝ Բաղդադում կայացած Կայունության և Հակազդեցության ճակատի երկրների արտգործնախարարների հանդիպման ընթացքում, հայտարարել, որ «Սիրիան կարող է միանալ Վարշավյան Դաշինքին» (Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996), Երևան, 2000, էջ 93):

[197] Moshe Maoz Syria and Israel. From War to Peacemaking. Claredon Press, Oxford 1995, p. 168.

վայելելով Բեգինի անձնական համակրանքն իրենց պայքարի նկատմամբ՝ մարոնիներն Իսրայելի և Լիբանանում տեղակայված սիրիական բանակի միջև անմիջական բախում հրահրելու փորձեր կատարեցին, որոնք, սակայն, ի դերև ելան:

Ներքաղաքական իրավիճակը Լիբանանում գնալով սրվում էր: Օգտվելով Քեմփ-Դևիդում եգիպտա-իսրայելյան համաձայնագրի ստորագրումից հետո Սիրիայի տարածաշրջանային դիրքերի թուլացումից և Լիբանանում նրա ունեցած դժվարություններից՝ Ժմայելը 1980 թ. վերջին հսկողություն հաստատեց Լիբանանի արևելքում գտնվող Բեկաա հարթավայրի կենտրոնական քրիստոնեական Զահլե քաղաքի վրա: 1981 թ. ապրիլին, երբ սիրիական ուժերը փորձեցին Զահլեից դուրս մղել քրիստոնյա «Լիբանանյան ուժերին», Ժմայելը օգնություն խնդրեց իսրայելցիներից, որոնք ապրիլի 28-ին սիրիական տրանսպորտային երկու ուղղաթիռ խփեցին Զահլեի մոտակայքում: Ի պատասխան՝ Սիրիան, որը նոր էր ստորագրել ԽՍՀՄ-ի հետ Բարեկամության և համագործակցության պայմանագիրը, մայիսի 8-ին հայտարարեց, որ խորհրդային հակաօդային հրթիռներ է տեղակայելու Զահլեի շրջանում և լիբանանյան սահմանի մոտ:

Սիրիա-իսրայելյան պատերազմի բռնկման հնարավորությունը և Մոսկվայի հետ առճակատումը կանխելու նպատակով Ռեյգանը տարածաշրջան ուղարկեց փորձառու դիվանագետ Ֆիլիպ Հաբիբին[198], որին հաջողվեց ժամանակավորապես զինադադար հաստատել Սիրիայի և Իսրայելի միջև[199]: Այնուհետև Միացյալ Նահանգներն առաջարկեց լիբանանյան ճգնաժամի համապարփակ կարգավորման ծրագրի իր տարբերակը, որը նախատեսում էր Լի-

[198] Ֆ. Հաբիբի առաքելության մասին մանրամասն տե՛ս Boykin, John, Cursed Is the Peacemaker, The American Diplomat Versus the Israeli General, Beirut 1982. Belmont: Applegate Press, 2002.

բանանից սիրիական զորքերի, ներառյալ Զահլեում տեղակայված հրթիռների և Լիբանանի հարավից ՊԱԿ-ի ծանր հրետանու դուրս-բերումը, ինչպես նաև իսրայելյան ռազմական գործողությունների կասեցումը Հարավային Լիբանանում: Սակայն կողմերից ոչ մեկը պատրաստ չէր ընդունելու ամերիկյան առաջարկը: Պաղեստինցի-ները շարունակում էին հարձակումներ գործել, իսկ մեկ ամիս անց Իսրայելն օդային հարված հասցրեց Բեյրութում տեղակայված ՊԱԿ-ի գրասենյակին, որի հետևանքով զոհվեց 200 և վիրավորվեց 800 մարդ: Դրան հետևեց կատաղի փոխհրաձգությունը տեղի հրեաների և պաղեստինցիների միջև՝ իսրայելա-լիբանանյան սահ-մանի երկայնքով: Վաշինգտոնը թեպետ որոշակիորեն կիսում էր Իսրայելի մտահոգությունը Լիբանանում պաղեստինցիների աճող ազդեցության կապակցությամբ, սակայն կողմնակից էր վերջիննե-րիս նկատմամբ «սահմանափակ» գործողությունների իրականաց-մանը: Ֆ. Հաբիբը միայն Սաուդյան Արաբիայի օգնությամբ ի վի-ճակի եղավ կրկին զինադադար հաստատել Իսրայելի և Պաղես-տինցիների միջև:

Նկատենք, որ Լիբանանում իրավիճակի սրումը պետք է բա-ցատրել ոչ միայն պաղեստինցիների աճող ազդեցությամբ և քրիս-տոնյա մարոնիների գործունեության ակտիվացմամբ, այլև ֆինան-սական դժվարությունների հետևանքով Լիբանանից որոշ ստորա-բաժանումներ դուրս բերելու Դամասկոսի որոշումով, ինչպես նաև ՊԱԿ-ի նկատմամբ Սիրիայի քաղաքականության փոփոխությամբ (հարաբերությունները բարելավելու և Իսրայելի դեմ հարձակումներ իրականացնելու նպատակով պաղեստինյան փախստականների ճամբարներն օգտագործելու): Վերոհիշյալ զարգացումներն իրենց հերթին նպաստեցին Լիբանանում հաստատված ուժերի փխրուն

[199] Alexander M. Heig. Jr. Caveat: Realism, Reagan and Foreign Policy. New York: Macmillan, 1984, p. 180.

հավասարակշռության խախտմանը: Դրան ավելացնենք 1981 թ. Իսրայելում տեղի ունեցած ներքին քաղաքական իրադարձությունները. արտաքին գործերի և պաշտպանության նախարարի պաշտոններում համապատասխանաբար նշանակվեցին ծայրահեղականներ Արիել Շարոնն ու Իցխակ Շամիրը, որոնք դարձան իսրայելյան ռազմատենչ նոր քաղաքականության գաղափարախոսները: Լիբանանում պատերազմի բռնկմանը մեծապես նպաստեց նաև ամերիկյան նոր վարչակազմի որդեգրած քաղաքականությունը, որն էլ ավելի մեծ ինքնավստահություն հաղորդեց Իսրայելի իշխանություններին: Ամերիկացիները, դեռևս 1981 թ. հոկտեմբերին տեղյակ լինելով Լիբանան ներխուժման իսրայելյան նախապատրաստությունների մասին, գործնական որևէ քայլ չձեռնարկեցին այն կանխելու ուղղությամբ[200]:

Այն ժամանակ, երբ ակնհայտ էին արաբական աշխարհում տարաձայնությունները, բաժանվածությունն ու «շարունակական հոգեբանական անկումը», Իսրայելում գնալով հաճախակի էին լսվում Լիբանանում ռազմական միջամտություն իրականացնելու կոչերը: Կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ Իսրայելը բռնել էր պատերազմելու ուղին: Լիբանան ներխուժումից վեց ամիս առաջ Իսրայելի պաշտպանության նախարար Արիել Շարոնը հետևյալ կերպ հիմնավորեց Իսրայելի ռազմավարությունը. «Մեծ տերության վերածվելու համար Իսրայելը պետք է առաջին հերթին գրավի Լիբանանի հարավային շրջանները, որտեղից իրականացվում են հարձակումները Իսրայելի վրա»: Միաժամանակ Շարոնն

[200] Ամերիկյան հայտնի ռազմական մասնագետ Բըրթոն Կաուֆմանի հաստատմամբ պետքարտուղար Հեյգը Լիբանան՝ իսրայելյան սպասվելիք ներխուժման մասին տեղեկացել էր Եգիպտոսում Անվար Սադաթի թաղման ժամանակ: Ավելին, Հեյգը 1982 թ. մայիսի 26-ին՝ Չիկագոյում ելույթի ժամանակ, «միջազգային գործողությունների» կոչ է արել լիբանանյան քաղաքացիական պատերազմին վերջ դնելու նպատակով: Այս ելույթը, ըստ որոշ քաղաքագետների, Իսրայելի կողմից մեկնաբանվել է, որպես «կանաչ լույս»՝ Լիբանան ներխուժելու համար:

անհրաժեշտ էր համարում ՊԱԿ-ի լիակատար ոչնչացումը Բեյրութում (և ոչ միայն ռազմականապես): Ըստ Շարոնի՝ վերոհիշյալ գործողությունը կկազմալուծի և կբարոյալքի պաղեստինյան ընդդիմությունը Գազայում և Արևմտյան ափում: Հաջորդ քայլով նախատեսվում էր Բեյրութում իշխանության բերել հիմնականում քաթայիբականներից կազմված մարոնիների կառավարությունը, որի օրոք Լիբանանը խաղաղության համաձայնագիր կստորագրեր Իսրայելի հետ և «կչեզոքացվեր»: Դրանից հետո Իսրայելը պետք է քաջալերեր Գազայից և Արևմտյան ափից պաղեստինցիների ներգաղթը Հորդանան, որը աստիճանաբար կվերածվեր Պաղեստինի: Ռազմավարության մշակողների կարծիքով դեպքերի այսպիսի ընթացքը կապակայունացներ իրավիճակը Հորդանանում և հնարավորություն կընձեռեր Իսրայելին միջամտելու և նոր կառավարության ստեղծումից հետո խաղաղության համաձայնագիր կնքելու նաև Հորդանանի հետ: Այսպիսով, ըստ Շարոնի՝ Սիրիան՝ որպես միակ «ճակատային» պետություն, կհայտնվեր մեկուսացման մեջ: Ստեղծված պայմաններում Հորդանանի միջոցով մոտենալով և համագործակցելով Սաուդյան Արաբիայի հետ՝ Իսրայելը կվերածվեր «ազդեցիկ աֆրո-ասիական ուժի»[201]: Պետք է արձանագրենք, որ 1982 թ. իսրայելյան ներխուժումը Լիբանան լիովին համապատասխանում էր Շարոնի վերոնշյալ ռազմավարությանը:

Երուսաղեմի նախկին փոխքաղաքապետ Մերոն Բենվենիցկու խոսքերով 1982 թ. պատերազմի իրական նպատակն էր՝ «վերջին տարիների ընթացքում Բեյրութում ձևավորված և զարգացած Պաղեստինյան քաղաքական և մտավորական կենտրոնի վերացումը»[202]: Ինչ խոսք, ՊԱԿ-ի ոչնչացումը և Լիբանանում իսրայելամետ կառավարության հաստատումն անխուսափելիորեն պետք է հան-

[201] Zeev Schiff, Lebanon: Motivations and Interest in Israel's Policy. "Middle East Journal", 38, 1984, p. 220.

գեցնեին սիրիական ուժերի դուրսբերմանը երկրից: Ուստի առնվազն միամտություն կլիներ հավատալ իսրայելյան ղեկավարության այն հավաստումներին, որոնց համաձայն՝ Իսրայելը չէր ցանկանում պատերազմել Սիրիայի դեմ Լիբանանում[203]: Հակառակ դեպքում ինչպես բացատրել այն հանգամանքը, որ հարևան երկրում «նոր քաղաքական վարչակարգ» հաստատելու ուղղությամբ ամերիկյան աջակցությունն ապահովելու նպատակով Շարոնը նախ շեշտում էր իսրայելյան գործողությունների կարևորությունը Մերձավոր Արևելքում խորհրդայնամետ ուժերը՝ Սիրիան և ՊԱԿ-ը թուլացնելու գործում: Պետքարտուղար Հեյգի խիստ հակախորհրդային հայացքները, Մերձավոր Արևելքում կատարվող իրադարձությունները գերտերությունների համընդհանուր դիմակայության ենթատեքստում դիտարկելու նրա հակվածությունը, ինչպես նաև նրա համոզմունքը, որ Իսրայելն ԱՄՆ-ի հզոր և կարևոր դաշնակիցն է, մեծապես հեշտացրին Շարոնի խնդիրը: 1982 թ. մայիսին, հանդիպելով Շարոնի հետ, Հեյգը նշեց, որ Վաշինգտոնը դեմ չի լինի Լիբանանում Իսրայելի «սահմանափակ ռազմական գործողություններին» պայմանով, որ դրա համար բավարար հիմնավորում գտնվի[204]:

Հարմար առիթն իրեն երկար սպասեցնել չտվեց: Լոնդոնում պաղեստինյան ահաբեկչի կողմից (Աբու Նիդալի խմբի) իսրայելյան դեսպան Շլոմո Արգովի վրա անհաջող մահափորձից հետո՝ 1982 թ. հունիսի 6-ին, Իսրայելը ներխուժեց Լիբանան: Ներխուժման պահին 26-28-հազարանոց սիրիական զորք կար տեղակայված Լիբանանում, որը գտնվում էր գեներալ-մայոր Սաիդ Բայրակադարի հրամանատարության տակ: Սիրիական զորքերը կենտրոնացված էին Շթորայում: Նրանց օժանդակում էր նաև, այսպես կոչված, «Ալ-

[202] New York Review of Books, October 13, 1983.
[203] R. Avi-Ran, The War of Lebanon: Arab Documents, Tel-Aviv, 1987.

Ֆուրսան ալ-Արաբ» սիրիական միլիցիան, որը հիմնականում տեղակայված էր Տրիպոլիի շրջանում և գտնվում էր Հ. Ասադի եղբայր Ռիֆաատի ուղղակի ենթակայության տակ:

Իսրայելյան հարձակման մեջ Սիրիան անմիջապես մեղադրեց Վաշինգտոնին: Քննադատության ենթարկվեցին նաև «ամերիկամետ և հետադիմական» արաբական վարչակարգերը: Սիրիան հարձակման հենց սկզբից հստակ արտահայտեց Լիբանանը՝ պաշտպանելու իր պատրաստակամությունն ու վճռականությունը:

Ի տարբերություն ԱՄՆ-ի՝ Լիբանանում Խորհրդային Միությունը որդեգրել էր հավասարակշռված, զգուշավոր քաղաքականություն: Եթե Վաշինգտոնն իր զորամասերն ու ծովային ուժերը խաղաղապահ ուժերի անվան տակ տեղակայեց Բեյրութում, ապա Մոսկվան ձեռնպահ մնաց սիրիական ուժերի հետ մեկտեղ ուղղակի ռազմական միջամտությունից: Ամերիկյան քաղաքականությունը, հաշվի չառնելով լիբանանյան ճգնաժամի քաղաքական, կրոնական և ազգամիջյան դրդապատճառները, հանգեցրեց նրան, որ ամերիկյան նավաստիները շիաների և դրուզների թիրախ դարձան: Ավելին, մարոնիներին օգնության հասնելու պատրվակով ամերիկյան ներխուժումն ու հետագայում անփառունակ փախուստը Լիբանանից հարված հասցրին ԱՄՆ հեղինակությանն արաբական աշխարհում:

Մի կողմից, հունիսի 9-ին Վաշինգտոնն օգտագործում էր վետոյի իրավունքը՝ իսրայելյան ներխուժումը դադարեցնելու վերաբերյալ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի քվեարկության ժամանակ, մյուս կողմից, զինադադարի հաստատման ու արաբական աշխարհում ամերիկյան դիրքերի ամրապնդման նպատակով տարածաշրջան էր ուղարկում բանագնաց Ֆիլիպ Հաբիբին:

---

[204] Journal of Paletsine Studies, Vol.XVII, No. I, Autumn, 1987.

Ըստ Ե. Պրիմակովի՝ Հաբիբի այցն ուղղված էր նաև Սիրիայի հետ ամերիկյան շփումների պահպանմանը[205]: Հունիսի 10-13-ը Դամասկոսում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում Հաբիբը բանակցեց զինադադարի հնարավորությունների շուրջ և սիրիական կողմին հանձնեց Բեգինի գրությունը, որով Իսրայելի վարչապետը հավաստիացնում էր սիրիական ղեկավարությանը, որ Իսրայելը չի ձեռնարկի հարձակումներ Արևմտյան Բեյրութի վրա:

Հաբիբի միջնորդությամբ հաջողվեց զինադադար կնքել Իսրայելի և Սիրիայի միջև հունիսի 11-ին, սակայն, ըստ որոշ հեղինակների, առանց Բեգինի համաձայնության, Շարոնի ու բանակի գլխավոր շտաբի պետ Էյթանի հրամանով հունիսի 12-ին իսրայելյան զորքերը շարժվեցին դեպի Դամասկոս-Բեյրութ մայրուղու արևմտյան մասը և պաշարեցին Բեյրութը[206]: Իսրայելյան բանակին հաջողվեց մոտենալ Բեյրութին՝ պարտության մատնելով սիրիական զորքերին ու ոչնչացնելով 50-100 օդանավ, 145 տանկ, ինչպես նաև Բեկայայի հակաօդային հրթիռային համակարգը[207]: Իսրայելը շարունակեց ռազմական գործողությունները ընդհուպ մինչև հունիսի 25-ը և ճնշեց պաղեստինյան դիմադրությունը, իսկ նրա մարտիկները ստիպված եղան թողնել Լիբանանը՝ ապաստան գտնելով արաբական երկրներում: Իսրայելի և ՊԱԿ-ի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ Բեյրութում ժամանակավորապես պահպանվում էր ՊԱԿ-ի քաղաքական գրասենյակը և 600 հոգանոց պաղեստինյան ստորաբաժանումը: Ամերիկյան ճնշմանն ու պահանջներին հակառակ՝ Իսրայելը վերսկսեց Բեյրութի ռմբակոծումը, որը նյութական և մարդկային մեծ կորուստներ պատճառեց

---

[205] Примаков Е., История одного сговора: (Ближневосточная политика США в 70-е начале 80-х годов), Москва, Политиздат, 1985.

[206] Y. Evron, War and the Intervention in Lebanon: The Israeli-Syrian Deterrence Dialogue, Baltimore, 1987.

[207] Ընդհանրապես սիրիական խփված օդանավերի թիվը, ըստ տարբեր աղբյուրների, տատանվում է 20-ից մինչև 100:

քաղաքին: Ըստ օգոստոսի վերջին ստորագրված համաձայնագրի՝ ՊԱԿ-ը դուրս եկավ Լիբանանից և հաստատվեց Թունիսում[208]:

Պատերազմի ընթացքում սիրիական բանակի ընդհանուր կորուստը կազմեց 400 սպանված և 1400 վիրավոր: Չնայած պատերազմի արդյունքները միանգամայն բացասական էին Սիրիայի համար, այնուամենայնիվ պաշտոնական լրատվական միջոցները ավարտը հաղթական համարեցին: Ուշագրավ էր հունիսի 19-ին ժողովրդին ուղղված Հ. Ասադի հայտարարությունը: Սիրիայի նախագահը շեշտում էր արաբա-իսրայելյան հակամարտության սկզբունքային բնույթը՝ իբրև երկու քաղաքակրթությունների բախում: Այդ հայտարարության մեջ Հ. Ասադն անդրադարձավ նաև լիբանանյան ճգնաժամի քաղաքական ասպեկտներին:

Միացյալ Նահանգներն ամբողջությամբ աջակցեց Իսրայելին:

Պատերազմի նպատակն էր արաբա-իսրայելյան հակամարտությունն ավարտել ԱՄՆ-ին և Իսրայելին ձեռնտու պայմաններով:

Պատերազմն ուղղված էր պաղեստինյան դիմադրության և լիբանանյան ազգային շարժման դեմ:

1982 թ. սեպտեմբերի 1-ին Ռեյգանը հանդես եկավ «խաղաղության ծրագրով», որտեղ կոչ էր անում դուրս բերել բոլոր օտարերկրյա ուժերը Լիբանանից և, մերժելով Պաղեստինյան պետության ստեղծման գաղափարը, առաջարկում էր հաստատել Պաղեստինյան ինքնավարություն Արևմտյան ափում և Գազայի հատվածում Հորդանանի հետ կոնֆեդերատիվ հիմունքներով:

Բեյրութից զորքերի վերջնական դուրսբերման հաջորդ օրը հրապարակված ամերիկյան այս ծրագիրը մեկ անգամ ևս բացահայտեց Վաշինգտոնի քաղաքականության հակասիրիական բնույթը: Ամերիկյան նախագահի դիվանագիտական նոր նախաձեռ-

---

[208] Սկզբնական զինադադարից հետո Սիրիան համաձայնել էր ընդունել ՊԱԿ-ին, սակայն հետագայում Սաուդյան Արաբիայի ճնշման տակ դրժեց իր խոսքը: Տե՛ս B. Caufman, The Arab Middle East and the US, Twayne Publishers, New York, 1996, p. 128:

նության մեջ չէր նշված Գոլանների հարցը և Հորդանանի հետ Պաղեստինյան ինքնավարության ստեղծումից բացի՝ նպատակ էր հետապնդում արաբա-իսրայելյան խաղաղության գործընթացում ներգրավելու Հորդանանը և պաղեստինցիներին (ոչ թե ՊԱԿ-ին): Միանգամայն հասկանալի է, որ Սիրիան անտեսող ամերիկյան վերոհիշյալ ծրագրի իրականացումը կնպաստեր տարածաշրջանում արաբական այդ կարևոր երկրի էլ ավելի մեկուսացմանը:

Սեպտեմբերի 14-ին Բեյրութում նախագահ Բաշիր Ժմայելի սպանությունից և պաղեստինյան Սաբրա և Շատիլա ճամբարներում հարյուրավոր պաղեստինցիների կոտորածներից հետո իրավիճակն էլ ավելի սրվեց: Վաշինգտոնը պահանջեց Իսրայելից անմիջապես դուրս բերել զորքերը Բեյրութից: Ռեյգանը հրամայեց ՊԱԿ-ի էվակուացումից հետո երկիրը լքած ամերիկյան նավատորմին վերադառնալ Լիբանան: ԱՄՆ նախագահը միևնույն ժամանակ պահանջեց արաբական երկրների ղեկավարներից ազդել Սիրիայի վրա՝ Լիբանանում վերջինիս տեղակայված զորքերը դուրս բերելու նպատակով: Ռեյգանի կարծիքով սիրիական զորքերի դուրսբերումից հետո ինքն ի վիճակի կլիներ համոզել Իսրայելին նույնպես դուրս բերել ուժերը[209]:

Ստեղծված իրավիճակում Սիրիան հոկտեմբերին ընդունեց Ռեյգանի ծրագիրը՝ տեղեկացնելով ամերիկյան բանագնացներին, որ Դամասկոսը համաձայն է իսրայելյան և սիրիական ուժերի զուգահեռ դուրսբերման գաղափարի հետ: Սակայն Ռեյգանի ծրագիրը չիրականացավ հիմնականում Իսրայելի և ՊԱԿ-ի մերժողական կեցվածքի, ինչպես նաև առանց պաղեստինցիների լիազորության բանակցություններ վարելուց Հորդանանի հրաժարվելու պատճառով:

---

[209] George P. Shultz, Turmoil and Trimph: My Years as Secretary of State, New York, Charles Scribners Sons, 1993. pp. 107-111.

1982 թ. վերջում ԱՄՆ-ն ուշադրությունը սևեռել էր Իսրայելի և Լիբանանի միջև համաձայնագրի ստորագրման վրա, որին պետք է հետևեր երկրից օտար ուժերի դուրսբերումը: Ամերիկյան վարչակազմն այստեղ էլ երկրորդական դեր հատկացրեց Սիրիային, որը, ըստ Վաշինգտոնի, միայն Իսրայելի և Լիբանանի միջև համաձայնագրի ստորագրումից հետո պետք է միանար գործընթացին:

Լիբանանը դարձավ այն կռվախնձորը, որի շուրջ բախվեցին Սիրիայի և Միացյալ Նահանգների շահերը՝ առաջին անգամ երկու երկրների ուղղակի առճակատման հնարավորություն առաջացնելով: Վաշինգտոնն ընդարձակեց իր քաղաքական և ռազմական աջակցությունը Լիբանանի նոր նախագահ Ամին Ժմայելին: Դամասկոսում, իհարկե, տեղյակ էին, որ ԱՄՆ-ն ձգտում է մարոնիների իշխանությունը հաստատել Լիբանանում, որը բաց և խաղաղասեր հարևան կարող է դառնալ Իսրալելի համար: Այս բոլորը, անկասկած, շատ ավելի լուրջ քաղաքական և ռազմական վտանգ էր պարունակում Սիրիայի համար, քան Քեմփ-Դևիդի գործարքը:

Ամերիկյան քաղաքականությանը հակազդելու նպատակով Սիրիան փորձեց ամեն կերպ խափանել Լիբանանի և Իսրայելի միջև համաձայնագրի կնքումը: Դամասկոսում մտածում էին հետևյալ կերպ. «Եթե մենք ի վիճակի չենք խաղաղություն հաստատել մեզ հարմար պայմաններով, ապա գոնե թույլ չտանք այնպիսի խաղաղություն, որը մեզ անուշադրության է մատնում»[210]: Այդ նպատակով Սիրիան Մոսկվայի օգնությամբ ձեռնամուխ եղավ իր բանակի վերականգնմանն ու վերազինմանը: Միաժամանակ Լիբանանում Իսրայելի, ԱՄՆ-ի և մարոնի Ֆալանգիստների դաշինքին Սիրիան հակադրեց շիաների Ամալական ուժերի, Իրանի հովանավորությունը վայելող «Հեզբալլահի» և Վալիդ Ջումբլատի գլխավորած դրուզների՝ ոստիկանության հետ ռազմաքաղաքական համագործակ-

[210] Bahgat Korany and Ali E. Hillal Dessouki, The Foreign Policies of Arab States, Westwiew Press, London, 1984, p. 315.

ցությունը[211]: Այսպիսով, Իսրայելի ժամանակավոր հաղթանակը Լիբանանում ստիպեց Դամասկոսին նոր ռազմավարություն իրականացնել, որից հետո վերջինս Մոսկվայի օգնությամբ ընդլայնեց իր ռազմական կարողությունները և սերտացրեց հարաբերությունները Թեհրանի հետ՝ Լիբանանում ինչպես իսրայելյան, այնպես էլ ամերիկյան ու ֆրանսիական ջոկատների և օբյեկտների դեմ համատեղ պայքար մղելու նպատակով: Սիրիական բարձրաստիճան դիվանագետներից մեկի կարծիքով «ստեղծված իրավիճակում Հ. Ասադը կանի ամեն ինչ ամերիկացիներին համոզելու համար այն բանում, որ Լիբանանում խաղաղության ճանապարհին անցնում է Դամասկոսով, և որ ինքն ի վիճակի է անգամ հարվածել ԱՄՆ-ին»[212]:

Եվ իսկապես, 1983 թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսներին իրանամետ «Հեզբալլահ» խմբավորումը մի շարք հարձակումներ իրականացրեց ամերիկացիների և ֆրանսիացիների դեմ: Այսպես՝ ապրիլի 18-ին բեռնատար մեքենայի մեջ տեղադրած ականի պայթյունից զգալի վնաս հասցվեց Բեյրութում ամերիկյան դեսպանությանը, որի հետևանքով զոհվեց 63 մարդ, որոնցից 17-ը՝ ամերիկացիներ: Հոկտեմբերի 23-ին պայթեցվեցին ամերիկյան և ֆրանսիական զինվորական կացարանները, զոհվեցին 241 ամերիկացի և 58 ֆրանսիացի[213]:

ԱՄՆ դեսպանության վրա կատարված հարձակումն առաջ քաշեց Լիբանանում ամերիկյան ռազմական ներկայության նպատա-

---

[211] Սիրիայի և ԽՍՀՄ հարաբերությունների որոշակի վատթարացումը Լիբանանյան ճգնաժամի օրերին փոխվեց Բրեժնևի մահից հետո, երբ Անդրոպովը համաձայնվեց 2.5 մլրդ ԱՄՆ դոլարի ռազմական սարքավորումներ և զինտեխնիկա, այդ թվում նաև հակաօդային հրթիռներ առաքել Սիրիա: Դրանից բացի՝ խորհրդային ռազմական մոտ 8.000 մասնագետներ վարժեցնում և տեխնիկական աջակցություն էին ցուցաբերում սիրիական բանակին: “Foreign Affairs” Robert G. Neumann. Assad and the Future of the Middle East, Winter 1983/84, pp. 237-356.

[212] Նույն տեղում, էջ 241:

[213] Bob Schieffer and Gary Paul Gates, The Acting President, New York: E.P. Dutton, 1989, pp. 215-216.

կահարմարության հարցը, որի վերաբերյալ տարաձայնություններ կային ԱՄՆ վարչակազմում: Մի կողմից պաշտպանության նախարար Կասպար Վայնբերգերը դեմ էր արտահայտվում ամերիկյան ուժերի օգտագործմանը, հատկապես բազմազգ խաղաղապահ ուժերի կազմում: Պենտագոնը հավատացած էր, որ նման խաղաղապահ առաքելությունը լուրջ վտանգի տակ է դնում ամերիկյան ջոկատները, մասնավորապես Իսրայելի և Սիրիայի գերազանցող ուժերի ընդհարմանը միջամտելու դեպքում: Մյուս կողմից, արտգործնախարար Շուլցը Լիբանանում անհրաժեշտ ամերիկյան ռազմական ներկայության պահպանման տեսակետն էր պաշտպանում՝ նշելով, որ անթույլատրելի է ահաբեկիչների ճնշման տակ Միացյալ Նահանգների՝ իր ջոկատների դուրսբերումը Լիբանանից:

Սիրիայի նկատմամբ ԱՄՆ քաղաքականության վերաբերյալ նույնպես տարբեր տեսակետներ էին հնչում Վաշինգտոնում: Եթե Շուլցը կողմ էր Սիրիայի նկատմամբ ուժի գործադրմանը, ապա պաշտպանության պետքարտուղարը Սիրիայի հետ հարաբերություններում առաջնային էր համարում դիվանագիտական միջոցների օգտագործումը: Իր դիրքորոշումը Շուլցը բացատրում էր այն հանգամանքով, որ Սիրիան «կլսի Միացյալ Նահանգներին այն դեպքում, եթե տեսնի, որ ԱՄՆ-ն և Իսրայելը միասին են»: Այլ կերպ ասած, եթե Շուլցը Իսրայելին ռազմավարական դաշնակից էր համարում, ապա Վայնբերգերը կարևորում էր այդ երկրի նկատմամբ ԱՄՆ պարտավորությունները: Պաշտպանության քարտուղարը գտնում էր, որ «առաջադեմ արաբական երկրների բարի կամքը կենսական նշանակություն ունի ծոցում ամերիկյան շահերը պաշտպանելու համար, ինչը, սակայն, վտանգվում է Իսրայելի հետ ռազմական և տնտեսական սերտ կապերի պատճառով»: Ռեյգանը կիսում էր պետքարտուղարի տեսակետը, որն էլ ամրագրվեց 1983 թ.

հոկտեմբերին՝ Ազգային անվտանգության որոշման հ. 111 ցուցումի մեջ (National Security Decision Directive 111)[214]:

Մայիսին Լիբանանից իսրայելյան զորքերի դուրսբերման վերաբերյալ համապատասխան համաձայնագրի ստորագրման հնարավորությունները քննարկելու նպատակով Մերձավոր Արևելք ժամանեց Շուլցը: Վերջինս համոզված էր, որ իսրայելա-լիբանանյան համաձայնագրի ստորագրումը պետք է նպաստեր նաև Դամասկոսի և Բեյրութի միջև նմանատիպ համաձայնագրի կնքմանը: Մերձավորարևելյան բազմաթիվ մայրաքաղաքներ Շուլցի կատարած այցելությունների և միջնորդական ջանքերի արդյունքը եղավ այն, որ (չնայած սիրիական հակազդեցությանը) 1983 թ. մայիսի 17-ին Իսրայելի և Լիբանանի միջև քաղաքական համաձայնագիր ստորագրվեց: Այսպիսով, իսրայելյան զորքերի դուրսբերման դիմաց Լիբանանը համաձայնեց վերջ դնել Իսրայելի հետ 1948 թ. ի վեր գոյություն ունեցող պատերազմական վիճակին: Թեև Լիբանանը դեռևս պատրաստ չէր Իսրայելի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, սակայն դեմ չեղավ Բեյրութում իսրայելյան ներկայացուցչության բացմանը: Լիբանանը խոստացավ արգելել իր տարածքի օգտագործումը Իսրայելի վրա հարձակումներ իրականացնելու նպատակով, ինչպես նաև համաձայնություն տվեց երկրի հարավում անվտանգությանն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ:

Համաձայնագիրը բացասականորեն ընդունվեց սիրիացիների կողմից և որակվեց որպես «տարածաշրջանում վերահսկողություն հաստատելու ամերիկյան-սիոնիստական ծրագրի մաս»: Համաձայնագրով նախատեսվում էր նաև զուգահեռաբար սիրիական ուժերի

[214] Caspar P. Weinberger, Fighting for Peace: Seven Critical Years in the Pentagon. New York: Warner Books, 1990, pp. 154-155.

դուրսբերումը Լիբանանից[215]: Սակայն բանակցություններից դուրս մնացած Դամասկոսը, չնայած ամերիկյան դիվանագետների խորհուրդներին, մերժեց դուրս բերել իր զորքերը Լիբանանից: Փաստորեն, հրաժարվելով իրականացնել համաձայնագրի վերոհիշյալ կետը՝ Լիբանանում ամերիկյան ռազմական ներկայության պայմաններում, Սիրիան անմիջական հակամարտության մեջ ներքաշվեց ԱՄՆ-ի հետ: Երկկողմ հարաբերությունները գնալով էլ ավելի սրվեցին, հատկապես, երբ Դամասկոսը persona non grata հայտարարեց ԱՄՆ դեսպան Հաբիբին:

Շուֆ լեռներից դեպի Բեյրութի հարավային մասի Ավալի գետն իսրայելյան զորքերի ետքաշումից հետո, երբ սաստկացան ռազմական գործողությունները դրուզների և կառավարամետ քրիստոնյաների միջև, Վաշինգտոնը պահանջեց Իսրայելից «հետաձգել» իր ուժերի ծրագրված դուրսբերումը Լիբանանից: Այն ժամանակ, երբ պարզ դարձավ, որ դրուզները պարտության են մատնում քրիստոնյա ուժերին և լիբանանյան բանակին, ԱՄՆ նավատորմը կրակ բացեց Բեյրութի մոտակայքում գտնվող Սուկ ալ-Ղարբ դրուզական գյուղի վրա, ինչպես նաև օդային հարձակումներ կատարեց սիրիական հսկողության տակ գտնվող այլ շրջաններում՝ արդարացնելով իր գործողությունները որպես «հարձակողական ինքնապաշտպանություն»: Դրան ի պատասխան՝ դրուզները ռմբակոծեցին Բեյրութի օդանավակայանը, որտեղ տեղակայված էին ամերիկյան ուժերը: Խորհրդային Միությունը մեղադրեց Միացյալ Նահանգներին և Իսրայելին «պատերազմի նոր փուլի» նախապատրաստման մեջ: Սիրիական կառավարությունն իր հերթին զգուշացրեց, որ ռազմական գործողությունների սաստկացումը կարող է պատճառ դառնալ սիրիական միջամտության համար: Սեպտեմբերի 21-ին Ռեյգանը

[215] William R. Polk, The Arab World Today, Harward University Press, Cambridge, London, 1991, p. 355.

Լիբանանում իրավիճակի սրման ողջ պատասխանատվությունը դրեց Սիրիայի և ԽՍՀՄ-ի վրա: Միացյալ Նահանգներում աճում էին դժգոհությունն ու քննադատությունը Լիբանանում Ռեյգանի վարած քաղաքականության նկատմամբ, հատկապես՝ հոկտեմբերի 23-ին ամերիկյան նավատորմի կենտրոնավայրի ու նավաստիների կացարանների պայթեցումից հետո: Համաձայնվելով պետքարտուղարության հետ՝ Ռեյգանը մեկ անգամ ևս վերահաստատեց ԱՄՆ-ի վճռականությունն առ այն, որ «ահաբեկիչները չեն կարող ստիպել Միացյալ Նահանգներին դուրս գալ Լիբանանից և զավթել աշխարհի այս կենսական ու ռազմավարական նշանակություն ունեցող տարածքը»[216]: 1983 թ. դեկտեմբերին Ռեյգանը հրամայեց օդային հարձակում իրականցնել Բեկաա հարթավայրում տեղակայված իրանական և սիրիական դիրքերի վրա: Հարձակման ընթացքում սիրիական հրթիռները երկու ամերիկյան ռմբակոծիչ խփեցին: Օդաչուներից մեկը զոհվեց, իսկ մյուսը գերի ընկավ, սակայն շուտով ազատ արձակվեց:

Հարկ է նշել, որ 1982 թ. Իսրայելի ներխուժումը Լիբանան բացարձակ հնարավորություն ընձեռեց Թեհրանին անմիջական ռազմական միջամտության համար: 800-1000 համեմատաբար փոքրաձավալ իրանական «փասդարաններից» (հեղափոխական գվարդիա) կազմված ռազմական ստորաբաժանումն անցավ Սիրիայի տարածքով և տեղավորվեց Բաալբեկի և Բեկաա հարթավայրի մահմեդական շիա շրջանում: Հետաքրքրական է, որ մինչ 1982 թվականը Հ. Ասադը ժխտական կեցվածք էր որդեգրել Լիբանանում իրանական ռազմական ներկայության նկատմամբ: Սակայն իսրայելյան ներխուժման, ինչպես նաև Սիրիայում, մասնավորապես Համայում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով

[216] Lou Cannon, President Reagan: The Role of a Lifetime. New York: Simon&Schuster, 1991, pp. 443-444.

սրված ներքաղաքական պայքարի պատճառով Դամասկոսի համար ի հայտ եկավ Իրանի հետ համագործակցելու ռազմավարական կարևորությունը:

Հատկանշական է, որ հենց 1982 թ. սկսած սիրիա-ամերիկյան հարաբերություններում զգալի տեղ զբաղեցրին ահաբեկչության ու պատանդներին առնչվող խնդիրները: Այդ առնչությամբ հարկ ենք համարում նշել, որ Սիրիան, թույլատրելով իրանական խմբավորումների մուտքը Լիբանան, վարպետորեն օգտագործեց նրանց որպես խաղաքարտ Միացյալ Նահանգների հետ հարաբերություններում, մասնավորապես՝ պատանդների հետ կապված հարցերում:

Այսպես՝ 1982 թ. Ամալից[217] անջատված Հուսեյն Մուսավիի ղեկավարած խմբավորումն առևանգեց Բեյրութի ամերիկյան համալսարանի նախագահ Դավիդ Դոջին: Սկզբում նրան պահեցին Բեկաայում, իսկ հետո տեղափոխեցին Իրան: Միայն մեկ տարի անց՝ սիրիական միջամտությունից հետո, Դոջն ազատ արձակվեց, իսկ Սիրիան ստացավ Դոջի և ամերիկացիների շնորհակալությունները: Նույն սցենարով հետագայում տեղի ունեցան բազմաթիվ առևանգումներ, որոնք, անկասկած, ծառայում էին Սիրիայի շահերին՝ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների պահպանման և երբեմն ճնշում գործադրելու առումով: 1984 թ. փետրվարին, երբ սիրիացիների հովանավորությունը վայելող Ամալի միլիցիան գրավեց Արևմտյան Բեյրութը, սիրիացիները բազմաթիվ քայլեր ձեռնարկեցին այլ

[217] Լիբանանյան շիաների Ամալ շարժումը հիմնադրվել էր 1974 թ. իմամ Մուսա ալ-Սադրին, որը ներառում էր նաև ՊԱԿ-ի և դրուզների իսլամական ձախակողմյան ուժերը: Լիբանանի շիաների սիրիամետ դիրքորոշումը սկսեց ավելի ցայտուն ուրվագծվել հիմնականում 1975 թ. հետո, երբ նվազեց հավատը ՊԱԿ-ի նկատմամբ, ինչպես նաև զգալիորեն սերտացան կապերը վերջինիս և հեղափոխական իրանական շարժման միջև: ՊԱԿ-ի և լիբանանյան շիաների միջև աստիճանաբար աճող հակասությունները հետագայում շիա համայնքի մեջ սիրիամետ և իրանամետ խմբավորումների առաջացման հիմքը դրեցին: 1984 թ. սեպտեմբերին իրանամետ Հեզբալլահի հրապարակային հայտնությունն ուղղակիորեն հակասության մեջ մտավ Լիբանանում Դամասկոսի հետապնդած շահերի հետ:

խմբավորումների կողմից պատանդ վերցված ամերիկացիների ազատ արձակման ուղղությամբ: 1985 թ. ամերիկյան հեռուստատեսության լրագրող Ջերեմի Լյուվինին ազատելու համար Սիրիան նորից պաշտոնական Վաշինգտոնի երախտագիտական խոսքերին արժանացավ: Պետք է նշել, որ Միացյալ Նահանգները սեփական ուժերով պատանդներին ազատելու առանձին փորձեր կատարեց, որոնք սակայն բոլորն էլ ապարդյուն ավարտվեցին: ԿՀՎ և Սենատի հետախուզության հարցերով հանձնաժողովի եզրակացությամբ ԱՄՆ-ն չուներ «ո՛չ համապատասխան պատրաստվածություն, ո՛չ էլ որակ»՝ նման առաքելություն իրականացնելու համար[218]:

Ահաբեկչական գործողությունները զգալի դեր խաղացին նաև Լիբանանից ամերիկյան ուժերի դուրսբերման հարցում: 1984 թ. հունվարի 18-ին Բեյրութում հայտնի գիտնական և արաբական աշխարհի մասնագետ Մալքոլմ Քերիի սպանությունը հավելյալ ահազանգ էր այն մասին, որ որևէ ամերիկացի չի կարող անվտանգ զգալ իրեն Լիբանանում: ԱՄՆ-ի ներսում աճող ընդդիմությունը, լիբանանյան բանակի հետագա կազմալուծումն ու Ժմայելի կառավարության տապալումը որևէ այլընտրանք չթողեցին Ռեյգանին, քան 1984 թ. փետրվարի 7-ին հրաման ստորագրել Բեյրութից նավատորմի դուրսբերման վերաբերյալ: Ամերիկացիների զայրույթն ու անկարողությունն այնքան մեծ էր, որ ամերիկյան «Նյու Ջերսի» գծանավն իր 406 մմ թնդանոթներից կրակ բացեց Բեյրութի մոտակայքում տեղակայված սիրիամետ մահմեդական միլիցիայի դիրքերի վրա: Փետրվարի 26-ին ամերիկյան ռազմական անձնակազմը վերջնականապես հեռացավ Լիբանանից:

Պատմաբաններն ու քաղաքագետները բազմիցս են անդրադարձել Լիբանանում ամերիկյան քաղաքականության անհաջողությանը: Սակայն շատ քչերն են նշել այն հանգամանքը, որ Վաշինգտոնի քաղաքականության անարդյունավետության հիմնական պատ-

[218] “Washington Post”, May 12, 1985.

ճառը ոչ միայն լիբանանյան ճգնաժամի իրական դրդապատճառների ու ներքին շարժառիթների խոր և համակողմանի վերլուծության բացակայությունը կամ Ռեյգանի վարչակազմի մեջ տարաձայնությունների առկայությունն էր, այլև Սիրիայի դերի անտեսումն ու թերագնահատումն էր ճգնաժամի ընթացքում:

Չնայած որ ԱՄՆ պետքարտուղար Շուլցը ձգտում էր «ազդել Հ. Ասադի վրա, իհարկե, անուղղակիորեն՝ արաբական այլ երկրների միջոցով», այնումենայնիվ, նա համոզված էր, որ Լիբանանում ամերիկյան անհաջողության պատճառը ոչ թե Սիրիայի նկատմամբ անուշադրությունն էր, այլ ռազմական ուժով սատարելու՝ վարչակարգի դիվանագիտական անկարողությունը: Այդ առումով ամբողջ մեղավորությունը Շուլցը բարդում էր Վայնբերգերի վրա, որը «հրաժարվում էր ուժային միջոցների կիրառումից»[219]:

Դժվար է պատասխան գտնել այն հարցին, թե ինչպես որևէ քաղաքականություն Լիբանանում կարող էր գործել առանց Հ. Ասադի հետ համագործակցելու: Սիրիայի համար Լիբանանը չափազանց բարձր գին ուներ, այդ իսկ պատճառով Հ. Ասադը չէր կարող համաձայնվել ու զորքերը հենց այնպես դուրս բերել Լիբանանից հատկապես այն ժամանակ, երբ իր համար նվազագույն գնով ի վիճակի էր պաղեստինյան և այլ ուժերի միջոցով հարված հասցնել այնտեղ տեղակայված իսրայելյան և արևմտյան բազմազգ ուժերին (MNF): Դուրս թողնելով Սիրիային բանակցային գործընթացից՝ Վաշինգտոնն էլ ավելի հեշտացրեց Լիբանանի հարցում որևէ զիջում չկատարելու՝ Հ. Ասադի խնդիրը:

Լիբանանյան պատերազմի ընթացքում Իսրայելի հետ Վաշինգտոնի ռազմավարական սերտ համագործակցությունն ու ծայրահեղ հակասիրիական քաղաքականության որդեգրումը միանգամայն հակառակ արդյունք ունեցան: Ամերիկյան այն տեսակետը, թե

Լիբանանում ԽՍՀՄ-ի, Սիրիայի, ՊԱԿ-ի, դրուզների և շիաների ձևավորված ճակատին անհրաժեշտ է հակադրել ԱՄՆ-ի, Իսրայելի և մարոնիների դաշինքը, չափազանց հասարակ էր և հաշվի չէր առնում խմբավորումների միջև գոյություն ունեցող շահերի անհամատեղելիությունը: Պարտադրելով մայիսի 17-ի համաձայնագրի ստորագրումը՝ Միացյալ Նահանգներն անուղղակիորեն նպաստեց Ժմայելի մեկուսացմանն ու թուլացմանը՝ միևնույն ժամանակ ուժեղացնելով նրա հակառակորդներին՝ դրուզներին և շիաներին: Ձեռնարկելով ռազմական գործողություններ նրանց դեմ՝ Վաշինգտոնը վերջիններիս էլ ավելի մեծ կախվածության մեջ դրեց Դամասկոսից և օգնեց Հ. Ասադին գործելու որպես լիբանանյան քաղաքականության իրական դատավոր: Ավելին, Լիբանանում ընթացող քաղաքացիական պատերազմը համարելով Արևմուտք-Արևելք հակամարտության տեղական դրսևորում՝ Ռեյգանի վարչակազմն Հ. Ասադին կրկին ստիպեց «ընկնել Մոսկվայի գիրկը»:

11. Սիրիան և «Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը»

1948 թ. պատերազմից հետո Սիրիայում ապաստան էին գտել շուրջ 100.000 պաղեստինցի փախստականներ: Նրանք, ըստ օրենքի, համարվում էին սիրիացիներ և օգտվում էին այդ երկրի քաղաքացիների բոլոր իրավունքներից: Ս. Ջադիդը հակված էր պաղեստինցիներին դիտարկել «հերոսական» լույսի տակ, երբ նրանք սկսեցին ֆիդայական ջոկատներ կազմել Իսրայելի դեմ պայքարելու նպատակով[220]: Սիրիական իշխանությունները պաղեստինցիներին տրամադրեցին երկու ճամբար Դամասկոսի մոտա-

[219] George P.Shultz. Turmoil and Trimph: My Years as Secretary of State, New York, Charles Scribners Sons, 1993, pp. 233-234.

կայքում զինվորներին վարժեցնելու, ինչպես նաև կենտրոնական Դիրայում՝ Հորդանանում և Արևմտյան ափում գործողությունները ղեկավարելու համար: Սիրիացիները պաղեստինցիներին փոխանցեցին Ալժիրի նախագահ Հուարի Բումեդյենի կողմից առաքված զինամթերքը: Ի դեպ, Ալժիրն առաջինը ճանաչեց 1958 թ. Յասիր Արաֆաթի (Աբու Ամար) ստեղծած Պաղեստինի դիմադրության շարժումը՝ Ալ-Ֆաթհին, երկրորդը Սիրիան էր:

Պաղեստինցիների գործունեությունը վերահսկում էր Սիրիայի բանակի սպայակույտի օպերատիվ բաժինը, որը խստորեն զսպում էր ջոկատների գործունեությունը 1966-1967 թթ. աշնանն ու ձմռանը:

Ս. Ջադիդի իշխանության սկզբում Սիրիայի տարածքում գործում էին պաղեստինյան երկու կազմակերպություններ՝ Յ. Արաֆաթի «Ֆաթհը» և սիրիացիների հովանավորած «Պաղեստինի ազատագրության ճակատը» (ՊԱՃ)՝ Ահմեդ Ջիբրիլի գլխավորությամբ: Սիրիական իշանությունները նրանց մատակարարում էին անհրաժեշտ զինտեխնիկա և զինամթերք: Վերջին հանգամանքի շնորհիվ էր, որ «Ֆաթհի» զինվորական թևը՝ Ալ-Ասիֆան 1967 թ. ապրիլին իրականացրեց 4 հարձակում իսրայելական կողմի վրա, իսկ մայիսի սկզբին հրետանակոծության ենթարկեց Իսրայելի հյուսիսային գյուղերը[221]:

1961 թ. «Ֆաթհի» կենտրոնականը տեղափոխվեց Դամասկոս: Սակայն Սիրիայի և պաղեստինցիների ռազմավարությունները տարբերվում էին միմյանցից: Եթե Արաֆաթը պատերազմի էր ձգտում Իսրայելի հետ, ապա սիրիացիները չէին ցանկանում պատերազմել: Սիրիացիները թույլատրում էին պաղեստինցիներին փոքրածավալ ռազմական գործողություններ իրականացնել ապառազմանակացված գոտում և, որ խրախուսելի էր, հիմնականում

[220] Seale P. Asad of Syria: The Struggle for the Middle East, pp. 124-125.
[221] Lawson, H. Fred, Why Syria Goes to War. Thirty Years of Confrontation, p. 44.

Հորդանանի կամ Լիբանանի տարածքից: Դժվար թե Դամասկոսը լուրջ հույսեր կապեր պաղեստինցիների հետ՝ Իսրայելի դեմ պայքարում, սակայն ֆիդայիների գործողությունները շարունակական պայքարի տպավորություն էին թողնում սիրիացիների կողմից լայնածավալ պատերազմ վարելու անհնարինության պայմաններում: «Ֆիդայիները պատվավոր լուծում էին առաջարկում» Դամասկոսին ստեղծված իրավիճակում[222]: Այնուհետև՝ 1964 թ. հունվարին, Կահիրեում կայացած Արաբական լիգայի գագաթնաժողովում «ծրագրվեց» «Պաղեստինի ազատագրության կազմակերպության» (ՊԱԿ) ստեղծումը: Չնայած սիրիացիների և սաուդցիների դիմադրությանը՝ եգիպտական կողմի առաջարկով կազմակերպության ղեկավար նշանակվեց Ահմեդ Շուքեյրին[223]: Փաստորեն, քաղաքական ասպարեզում զուգահեռ, բայց իրարից անջատ սկսեցին գործել պաղեստինյան երկու կազմակերպություններ, որոնք մարտավարական և գործնական տարբեր մեթոդներ էին որդեգրել Իսրայելի դեմ պայքարում[224]: Եթե «Ֆաթհի» համար զինված պայքարը Պաղեստինի ազատագրման համար միակ միջոցն էր, ապա Ա. Շուքեյրին սահմանափակվում էր միայն խոսքերով: «Ֆաթհը» չմտավ ՊԱԿ-ի մեջ և շարունակեց իր անկախ գործունեությունը մինչև 1969 թ. փետրվար, երբ ՊԱԿ-ի գործկոմի նախագահ ընտրվեց Յ. Արաֆաթը[225]:

---

[222] Lawson, H. Fred, Why Syria Goes to War. Thirty Years of Confrontation, էջ 125:

[223] Ե. Պրիմակովը նրան բնութագրում է որպես «անդեմ և ինքնուրույնությունից զուրկ անձի»: Примаков Е., Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX - начало XXI века), с. 228.

[224] ՊԱԿ-ի ենթակայության ներքո գործում էին 8 շարժումներ՝ «Ֆաթհը», «Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատը» (ՊԱԺՃ), «Պաղեստինի ազատագրության դեմոկրատական ճակատը» (ՊԱԴՃ), Ալ-Սաիկան, ՊԱԺՃ-ԳՀ (ՊԱԺՃ-Գլխավոր հրամանատարություն), ԱԱՃ («Արաբական ազատագրության ճակատ»), ՊԱՃ («Պաղեստինի ազատագրության ճակատ»), ՊԺՊՃ («Պաղեստինի ժողովրդական պայքարի ճակատ»):

[225] Յ. Արաֆաթի դիրքերը պաղեստինյան շարժման մեջ մեծապես ամրապնդվեցին 1968 թ. մարտի՝ Քարամե բնակավայրի մոտ Իսրայելի բանակի դեմ հաջող ռազմական

Պաղեստինյան զինված պայքարի նկատմամբ Հ. Ասադի վերաբերմունքը հստակ դրսևորվեց 1972 թ. ապրիլին՝ Քուվեյթ իր պաշտոնական այցելության և սիրիական համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում: Այդ հանդիպման ժամանակ Հ. Ասադը նշեց, որ «պաղեստինյան դիմադրությունը արաբական ազատագրական պայքարի մաս է կազմում, սակայն դա որոշիչ գործոն չէ Իսրայելի դեմ պայքարում»: Նա ընդգծեց, որ «այդ ուղղությամբ կարևոր դեր են խաղում եգիպտական և սիրիական բանակները, իսկ պաղեստինյան դիմադրությունը զուտ քաղաքական նշանակություն ունի»[226]:

ՊԱԿ-ի նկատմամբ Դամասկոսի դիրքորոշման մասին ամբողջական պատկերացում ունենալու համար նշենք, որ Սիրիայի քաղաքական վերնախավը Լիբանանի պես Պաղեստինը մշտապես համարել է հարավային Սիրիայի մաս, որը գրավված է Իսրայելի կողմից: Պաղեստինի խնդիրը նաև բաասական Սիրիայի պանարաբական և հակաիսրայելական քաղաքականության անկյունաքարն էր: Այդ իսկ պատճառով սիրիական իշխանությունների աջակցությունը «Ֆաթհին», այնուհետև ՊԱԿ-ին կրել է շարունակական բնույթ:

Դամասկոսը միշտ ձգտել է վերահսկել ՊԱԿ-ի գործողությունները պաղեստինյան շարժման մեջ՝ «Ֆաթհին» հակակշռելով այլ շարժումներ հովանավորելու միջոցով, ինչպիսիք էին «Պաղեստինի ազատագրության ճակատը» (ՊԱՃ) և Ալ-Սաիկան: Այդ պատճառով էլ Դամասկոսի և ՊԱԿ-ի միջև հարաբերությունները չէին կարող ա-

---

գործողությունների իրականացումից հետո: Այդ ճակատամարտի շնորհիվ Յ. Արաֆաթը դարձավ պաղեստինյան հերոս, իսկ նրա ղեկավարած «Ֆաթհի» հեղինակությունը արաբական աշխարհում շեշտակիորեն բարձրացավ: Այս հաջողությունը մեծապես նպաստեց Յ. Արաֆաթի՝ որպես ՊԱԿ-ի ղեկավարի ընտրությանը: Չնայած այդ ճակատամարտում մեծ դեր խաղացին հորդանանյան բանակի ստորաբաժանումները (25 հորդանանցի զինվոր զոհվեց), սակայն վերջիններիս դերը Յ. Արաֆաթի կողմից միտումնավոր նվազեցվեց:

[226] «Ալ-Ռայ Ալ-Ամմ» (քուվեյթյան օրաթերթ), 22.04.1972:

նամպ լինել: Նրանք ունեցել են բազմաթիվ ճգնաժամային պահեր, վերելքի ու անկման ժամանակահատվածներ: Անհամաձայնությունն ու հակասությունները ՊԱԿ-ի և սիրիական ղեկավարության միջև ծագել են այն ժամանակ, երբ պաղեստինցիների գործողությունները չեն համապատասխանել Սիրիայի շահերին կամ առաջնայնություններին: Այդ դեպքում Դամասկոսը խիստ միջոցներ է ձեռնարկել ՊԱԿ-ի դեմ: Այս կապակցությամբ հիշատակման արժանի են Հ. Ասադի հետևյալ խոսքերը Յ. Արաֆաթին՝ Դամասկոսի և ՊԱԿ-ի միջև ծագած հերթական վեճի ընթացքում. «Դու մեզանից ավելի շատ չես ներկայացնում Պաղեստինը: Պաղեստինի ժողովուրդ կամ պաղեստինյան միավոր չկա, գոյություն ունի միայն Սիրիա, իսկ Պաղեստինը Սիրիայի անքակտելի մասն է կազմում»[227]:

Սիրիայի պաշտպանության նախարար, այնուհետև երկրի ղեկավար Հ. Ասադը ՊԱԿ-ի նկատմամբ ավելի իրատեսական մոտեցում ուներ ու ավելի քիչ էր տարված բաասական գաղափարաբանությամբ, քան կառավարության՝ իր քաղաքացիական գործընկերները: Այսպես, պաղեստինյան ֆիդայիներին աջակցելով հանդերձ՝ նա ջանք չխնայեց նրանց սիրիական քաղաքականության նպատակներին ծառայեցնելու համար: Ըստ Հ. Ասադի՝ գաղափարական օժանդակությունը չէր նշանակում, որ մի քանի հազար զինված երիտասարդ պաղեստինցիներ կարող են մարտնչել ցանկացած պահին և ցանկացած վայրում: ՊԱԿ-ը շարունակում էր իր գործունեությունը Դամասկոսում, ֆիդայիները զինվում և մարզվում էին սիրիական ճամբարներում: Չնայած Հ. Ասադի հավաստիացումներին, որ «Սիրիան այն թոքերն է, որոնցով շունչ է առնում պաղեստինյան շարժումը», այնուամենայնիվ, պաղեստինյան ջոկատները գտնվում էին սիրիական իշխանությունների հսկողության

[227] Dawisha, Adeed. Syria and the Lebanese Crisis, pp. 103-106.

տակ և ի վիճակի չէին առանց վերջիններիս համաձայնության Իսրայելի դեմ ինքնակամ գործողություններ իրականացնելու[228]:

Այսպես, ներկուսակցական հակասությունները, որոնք առկա էին Ս. Ջադիդի և Հ. Ասադի միջև, արտահայտվեցին նաև ՊԱԿ-ի նկատմամբ նրանց մոտեցումներում: Դա առավել ցայտուն դրսևորվեց Հորդանանի ճգնաժամի օրերին: Այսպես, երբ 1970 թ. սեպտեմբերին բախումներ տեղի ունեցան պաղեստինցիների և հորդանանյան բանակի միջև, սիրիական բաասական վարչակարգի քաղաքացիական թևը փորձեց օգտագործել արտաքին քաղաքական այդ կարևոր հարցը՝ կուսակցության ներսում սեփական դիրքերն ամրապնդելու համար: Յուսուֆ Զուայինը՝ սիրիացիների հովանավորած Ալ-Սաիկայի ղեկավարը, այդ օրերին Ամման այցելությունից հետո զեկուցագիր ներկայացրեց Սիրիայի կառավարությանը, առաջարկելով «ներխուժել Հորդանան»[229]: Առաջարկը արժանացավ նաև Ս. Ջադիդի հավանությանը: Սիրիայի նախագահ Ալ-Ատասին Դամասկոսում կազմակերպված հանրահավաքներից մեկում խոստացավ «արյունը չափսոսալ» Հորդանանում պաղեստինցիներին օգնելու նպատակով: Վարչակարգի նման անհաշվենկատ և պոպուլիստական քաղաքականությունը հանգեցրեց Հ. Ասադի և զինվորականների միջամտությանը՝ երկրի տարածքում ալ-Սաիկայի բաժանմունքները փակելու հարցում: Զինվորական հրամանատարությունը հայտարարեց, որ «Բաասի» շրջանային մասնաճյուղերն այսուհետ կգործեն որպես Ալ-Սաիկայի գրասենյակներ, քանի որ «նրանք արդեն նույնն են դարձել»[230]:

1970 թ. Հորդանանի ճգնաժամից և ՊԱԿ-ի Բեյրութ տեղափոխումից հետո էլ Դամասկոսը շարունակեց իր աջակցությունը ցուցաբերել պաղեստինցիներին: 1974 թ. Ռաբաթի գագաթնաժողո-

[228] Maoz, Moshe. Syria and Israel From War to Peacemaking, p. 113.
[229] Middle East Record 1969-1970, p. 1150.

վում Սիրիան ամենաեռանդուն կողմնակիցն է եղել ՊԱԿ-ի՝ որպես Պաղեստինի ժողովրդի միակ օրինական ներկայացուցչի ճանաչմանը: 1975 թ. մարտին Դամասկոսը առաջարկել է ՊԱԿ-ին ստեղծել միասնական Սիրիա-ՊԱԿ քաղաքական և ռազմական հրամանատարություն, պաղեստինյան շարժումը վերահսկելու ակնհայտ մտադրությամբ: Հ. Ասադի բազմակողմանի աջակցությունը ՊԱԿ-ին նրան Լիբանանում վերածեց կարևոր ռազմական և քաղաքական միավորի, որը սկսեց իրական վտանգ ներակայացնել անզոր լիբանանյան կառավարության համար և նպաստեց Լիբանանում քաղաքացիական պատերազմի բռնկմանը: ՊԱԿ-ի դերակատարությունը Լիբանանում խոչընդոտում էր այդ կարևորագույն երկրում Դամասկոսի քաղաքական նպատակների իրականացմանը: Ահա այստեղից էլ սկսվեցին լուրջ բախումները Յ. Արաֆաթի և Հ. Ասադի միջև:

Այն հարցին, թե ինչու Հ. Ասադը քաղաքացիական պատերազմի սկզբնական շրջանում որոշեց օժանդակել աջակողմյան քրիստոնեական ուժերին, մենք կանդրադառնանք հետագա շարադրանքում՝ Լիբանանի քաղաքացիական պատերազմին նվիրված մասում, սակայն այստեղ հարկ է նշել, որ Լիբանանում սիրիական ուժերը, փաստորեն, հայտնվեցին ձախակողմյան և արմատական պաղեստինյան ուժերի, այդ թվում նաև ՊԱԿ-ի հետ հակամարտության մեջ: 1976 թ. ամռանը Յ. Արաֆաթը հայտարարեց, որ ՊԱԿ-ը սիրիացիների համար «Լիբանանը կվերածի երկրորդ Վիետնամի»: 1976 թ. հուլիսի 20-ին Հ. Ասադը այսպես հակադարձեց Յ. Արաֆաթին. «Պաղեստինյան դիմադրությունը ներկայումս կռվում է այլ ուժերի (Լիբանանի ձախերի) նպատակների իրականացման համար և Պաղեստինի արաբ ժողովրդի շահերին հակառակ: Նա (Արաֆաթը) ուզում է ազատագրել Ջունիեն և Տրիպոլին

[230] Arab Report and Record, 1-15 August, 1970.

(Լիբանանում) և չի ցանկանում ազատագրել Պաղեստինը, եթե նույնիսկ հայտարարում է այդ մասին»[231]:

«Չկան մշտական դաշնակիցներ և թշնամիներ, այլ կան մշտական շահեր» սկզբունքը կիրառելի է ՊԱԿ-Դամասկոս հարաբերությունները բնութագրելու համար: Երբ Լիբանանում սկսվեցին բախումները լիբանանյան քրիստոնյա ուժերի և սիրիացիների միջև, հատկապես 1978 թ. հետո Դամասկոսը սկսեց համագործակցել ՊԱԿ-ի հետ՝ նրա ճամբարներն ու հնարավորությունները երկրում օգտագործելու նպատակով:

1982 թ.՝ Իսրայելի՝ Լիբանան ներխուժումից և ՊԱԿ-ի կենտրոնակայանը Թունիս տեղափոխվելուց հետո, Յ. Արաֆաթին թուլացնելու նպատակով սիրիացիները հակամարտություն հրահրեցին «Ֆաթհի» ներսում. հեղինակություն վայելող Աբու Մուսան և Աբու Սալեհը ելույթ ունեցան Յ. Արաֆաթի քաղաքականության դեմ: Նրանք մեղադրեցին Յ. Արաֆաթին՝ Իսրայելի հետ հաշտություն կնքելու պատրաստակամության, Հուսեյն թագավորի հետ բանակցություններ վարելու, այնուհետև՝ Կահիրե՝ Ա. Սադաթին այցելելու համար:

Սիրիացիներն աջակցություն ցուցաբերեցին Արաֆաթի դեմ ապստամբած «Ֆաթհի» վերոհիշյալ գործիչներին հատկապես 1983 թ. նոյեմբերին, երբ նրանք լայնածավալ ռազմական գործողություն իրականացրին Լիբանանի Տրիպոլի քաղաքի դեմ, որը ՊԱԿ-ի միակ և վերջին պատվարն էր այդ երկրում:

Սիրիացիները, անտարակույս, ձգտում էին հեռացնել «անհնազանդ» Արաֆաթին ՊԱԿ-ի ղեկավարումից: Այդ մասին բացահայտ հայտարարում էին նաև Սիրիայի ԱԳՆ բարձրաստիճան որոշ դիվանագետներ:

---

[231] Maoz Moshe. Syria and Israel From War to Peacemaking, p. 165.

Ե. Պրիմակովն իր գրքում նշում է ՊԱԿ-ի և սիրիացիների հաշտեցման ուղղությամբ Մոսկվայի և անձամբ իր գործունեության մասին: Նա հետաքրքրական տեղեկություն է հաղորդում սիրիացիների կողմից Աբու Մուսային և ապստամբներին աջակցելու պատճառների վերաբերյալ: Ըստ Արաֆաթի՝ Հ.Ասադի եղբայր Ռիֆաաթը հայտնել էր իրեն, որ սիրիական ղեկավարությունն ի սկզբանե սխալ տեղեկատվություն էր ստացել այն մասին, որ ապստամբները վայելում են համատարած օժանդակություն և կարող են իրենց հետևից տանել «Ֆաթհի» մեծամասնությանը: Համոզվելով, որ այդ տեղեկությունները իրականությանը չեն համապատասխանում, Հ. Ասադը ստեղծեց հանձնաժողով՝ պաղեստինյան մրցակից խմբավորումներին հաշտեցնելու նպատակով: Այդ հանձնաժողովում չընդգրկվեցին ո՛չ ԱԳ նախարար Ա. Խադդամը, ո՛չ էլ ռազմական հետախուզության պետ Ալի Դուբան, որոնք հանդես էին գալիս Սիրիայի և Արաֆաթի մերձեցման դեմ[232]:

Ինչևիցե, Սիրիայի և ՊԱԿ-ի միջև վստահությունն այդպես էլ չհաջողվեց վերականգնել: Յ. Արաֆաթն ու Հ. Ասադը չկարողացան հաղթահարել նաև փոխադարձ հակակրանքը: Այն հանգամանքը, որ Խորհրդային Միությունը, լինելով Սիրիայի «հովանավոր» երկիր, վերջինից անկախ հաստատեց և այնուհետև պահպանեց ՊԱԿ-ի հետ ուղղակի կապն ու օժանդակությունը, նույնպես իր ուրույն դերն ունեցավ պաղեստինցիների նկատմամբ սիրիացիների անվստահության պահպանման գործում:

Ավելի ուշ 90-ական թթ. խաղաղության գործընթացն ու ԱՄՆ հիմնական ուշադրության կենտրոնացումը պաղեստինյան ուղղությամբ, (palestinian track) և սիրիական գործոնի անտեսումը ՊԱԿ-ը հանեցին Դամասկոսի ազդեցության ոլորտից: Իսրայելի դեմ պայ-

[232] Примаков Е. Конфиденциально: Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX - начало XXI века), с. 245, 247:

քարում Դամասկոսին անհրաժեշտ էին նոր ուժեր: Պաղեստինում այն դարձավ «Համասը», իսկ Լիբանանում՝ «Հեզբալլահը»: Այս կապակցությամբ անհրաժեշտ է հստակեցնել մի կարևոր հանգամանք: Դամասկոսը երբեք չի ունեցել «Հեզբալլահը» ամբողջովին վերահսկելու հնարավորություն: Այն միայն թույլատրել է իրանական օժանդակության անխափան մատակարարումը «Հեզբալլահին» և վերջինիս գործունեությունը Լիբանանի Բեկաա հարթավայրում: Իբրև փոխհատուցում՝ «Հեզբալլահը» ձեռնպահ է մնացել այնպիսի գործողություններից, որոնք կարող էին պատճառ դառնալ Իսրայելի հզոր հակահարվածի և, բնականաբար, Սիրիայի դիրքերի թուլացմանը Լիբանանում[233]: Սիրիան երբեք չի ցանկացել պատերազմ Իսրայելի հետ: Դամասկոսի շահերից է բխել հակամարտության կրակի «անմար» պահպանումը՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքական նկատառումներից ելնելով:

«Համասի» դեպքում զավեշտալին այն էր, որ ժամանակին պաղեստինյան «Համասի» հզորացման ու նրա գործունեության ակտիվացման մեջ շահագրգռվածություն էր ցուցաբերում Իսրայելը՝ պաղեստինյան շարժումը մասնատելու և Յ. Արաֆաթի աճող հեղինակությանն ու միանձնյա առաջնորդությանը հակակշռելու նպատակով: Դամասկոսը համակողմանի աջակցություն ցուցաբերեց «Համասին» և, ԱՄՆ-ի բողոքներին հակառակ, թույլատրեց իր տարածքում «Համասի», «Պաղեստինի ազատագրության դեմոկրատական ճակատի գլխավոր հրամանատարության» (ՊԱԴՃ-ԳՀ) և «Իսլամական ջիհադ» կազմակերպության գրասենյակների գործունեությունը:

---

[233] Բնականաբար, իրերի նման դրությունը շարունակվեց մինչև սիրիական ուժերի դուրսբերումը Լիբանանից, որն իրականացվեց 2005 թ.՝ Ռ. Հարիրիի սպանությունից հետո, միջազգային հզոր ճնշման պայմաններում:

ԳԼՈՒԽ Գ

ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ – 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1. Իրանա-իրաքյան պատերազմը (1980-1988 թթ.)

1967 թ. հուլիսյան հեղաշրջումից հետո Իրաքում իշխանության եկավ «Բաաս» կուսակցությունը[234]: 1979 թ. կուսակցական խիստ զտումներից հետո նախագահ Բաքրիին փոխարինեց 42-ամյա Սադդամ Հուսեյնը[235]: Վերջինս դարձավ ոչ միայն նախագահ, այլև ստանձնեց երկրի բոլոր գլխավոր պաշտոնները՝ Հեղափոխական հրամանատարության խորհրդի նախագահ, «Բաասի» տարածաշրջանային կառավարչության գլխավոր քարտուղար, գործադիր իշխանության ղեկավար, զինված ուժերի գլխավոր հրամանատար: Սկսվեց Իրաքի նորագույն պատմության թերևս ամենաանհանգիստ ու փորձություններով լի ժամանակաշրջանը:

1980 թ. սեպտեմբերին Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնը ելույթ ունեցավ երկրի Ազգային ժողովում: Նա հայտնեց, որ Իրանի

---

[234] Աբդել Քարիմ ալ-Կասեմի ժամանակաշրջանի մասին կարդալ՝ Batatu, Hanna. The Old Social Classes and the Revolutuionary Movements of Iraq. Princeton, 1979, Khadduri M. Republican Iraq. New York, 1969, Dann, Uriel. Iraq under Qasim. New York, 1969:

[235] Սադդամ Հուսեյնի և բաասական վարչակարգի վերաբերյալ հիշատակման արժանի են հետևյալ աշխատությունները՝ Робин Дж. Апдайк. Саддам Хусейн. Ростов на Дону, 1999, Mackey, Sandra. The Reckoning: Iraq and the Legacy of Saddam Hussein. New York: W. W. Norton, 2002, Matar, Fuad. Saddam Hussein: The Man, the Cause and the Future. London, 1981, Samir al Khalil (ծածկանուն), Republic of Fear. Berkeley, 1989, Baram, Amatzia. Culture, History and Ideology in the Formation of Ba'thist Iraq, 1968-89.

կողմից Իրաքի ինքնիշխանության հաճախակի խախտումները փաստորեն ի չիք են դարձնում Ալժիրյան համաձայնագիրը: «Այժմ, երբ խախտված է նրա ոգին, Իրաքն այլընտրանք չունի, բացի Շատ էլ-Արաբի իրավաբանական կարգավիճակը վերականգնելուց, ինչպիսին այն եղել է մինչև 1975 թվականը: Այդ գետը պետք է լինի արաբների լիակատար տնօրինության տակ, ինչպես եղել է դարեր շարունակ և ինչի մասին վկայում է հենց անունը»[236]:

Սադդամի այս ելույթի գործնական հետևանքները երկար սպասել չտվեցին: Սեպտեմբերի 22-ին, փորձելով կրկնել իսրայելցիների մարտավարությունը 6-օրյա պատերազմում, իրաքյան օդային ուժերը սկզբում ռմբակոծեցին Իրանի 10 օդանավակայաններ՝ փորձելով ոչնչացնել իրանական ինքնաթիռները: Իսկ հաջորդ օրն իրաքյան զորքերն անցան Իրանի սահմանը՝ սկիզբ դնելով Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամենաերկար ու արյունոտ կոնֆլիկտներից մեկին:

Իրան ներխուժումից ընդամենը 8 ամիս առաջ Սադդամը պարծենում էր, որ «Իրաքը նույնքան հզոր է, որքան Ճապոնիան, Խորհրդային Միությունը և ԱՄՆ-ն»[237]: Սակայն պատերազմի սանձազերծումն առավել քան անհաջող քայլ կարելի է համարել Իրաքի նախագահի համար: 1979-1980 թթ. համաշխարհային շուկայում նավթային բարենպաստ պայմանների շնորհիվ իրաքյան տնտեսությունն աննախադեպ ծաղկում էր ապրում: Երկրով մեկ իրականացվում էին շինարարական աշխատանքներ: Իրաքյան հասարակության շատ շերտերի կենսամակարդակը շոշափելիորեն բարձրացել էր: Իսկ պատերազմը կարող էր հարվածի տակ դնել այս բո-

---

London: Macmillan, 1991, Devlin, F.John. The Ba'th Party: A History from its Origins to 1966. Stanford:Hoover Institution, 1976:

[236] Karsh, Efraim and Rautsi, Inari. Saddam Hussein: A Political Biography. New York: Free Press, 1991, p. 156.

[237] Tahir Kheli, Shirin and Ayubi, Shaheen. The Iraq-Iran War. New York, 1983, p. 29.

լոր ձեռքբերումները և, հետևաբար, խարխլել Սադդամի հեղինակությունն ու դիրքերը երկրի ներսում:

Ոմանք պատերազմի սանձազերծումը բացատրում են Սադդամի փառասիրությամբ, ոմանք էլ՝ նրա հեռատեսությամբ: Վերջիններս նշում են, որ Իրանը տարածքով և բնակչությամբ մեծ էր Իրաքից և ընդունելով Իրանի գերազանցությունը՝ Սադդամը չէր էլ մտածում մրցակցել նրա հետ՝ Ծոցում գերիշխանություն հաստատելու համար: Դրա փոխարեն նա իր ողջ ուժերն ուղղեց արաբական աշխարհի կողմը (ինչի մասին վկայում էր Ազգային խարտիան), որն ավելի հեռանկարային ուղղություն էր: Ալժիրյան համաձայնագրից հետո թվում էր, թե Սադդամը մտադիր չէ խախտել Իրանի հետ հաշտությունը, ուր մնաց թե բացահայտ պատերազմ սկսել: Նա մեծ անհանգստությամբ հետևում էր 70-ական թվականների վերջին Իրանում տեղի ունեցող իսլամական հեղափոխական փոթորկին, որը սպառնում էր թափանցել նաև հարևան երկրներ: Զգուշավոր Հուսեյնը որոշեց ողջունել նոր հեղափոխական վարչակարգը Թեհրանում՝ հայտարարելով, թե «այն վարչակարգը, որը չի միջամտում իրենց ներքին գործերին և չի պաշտպանում իրենց թշնամիներին, արժանի է հարգանքի»[238]: Այս հայտարարությանը հետևեց պաշտոնական հուշագիրը՝ ուղղված Իրանի վարչապետ Մեհդի Բազարգանիին, որում ընդգծվում էր Իրաքի ցանկությունը՝ Իրանի հետ «հաստատելու ամենամոտ եղբայրական հարաբերություններ՝ հարգանքի և ներքին գործերին չմիջամտելու հիման վրա»:

Թեհրանը, սակայն, նույնպիսի ջերմությամբ չպատասխանեց: Ընդհակառակը, իշխանության գալու առաջին իսկ օրից հեղափոխական վարչակարգը բացասական էր տրամադրված Սադդամի նկատմամբ: Իրանի ղեկավարությունը հույս ուներ, որ Իրաքի բնակչության 60 տոկոսը կազմող շիաները, որոնք միշտ իրենց կե-

[238] Робин Дж. Апдайк. Саддам Хусейн. Ростов на Дону, 1999, с. 50.

ղեքված ու իրավազուրկ էին համարում, կհետևեն Իրանի օրինակին և կըմբոստանան իրենց «սուննի կեղեքիչների» դեմ: Այդ սպասումներն ավելի էին ամրապնդվում Իրաքում իշխող կուսակցության՝ «Բաասի» աշխարհիկ «հերետիկոս» բնույթով: Ուստի իրանական իսլամական հեղափոխության համար Իրաքն առաջնային տեղ էր զբաղեցնում:

1979 թ. հունիսին Իրանի հեղափոխական վարչակարգը սկսեց հրապարակավ կոչեր անել Իրաքի բնակչությանը՝ ապստամբելու և տապալելու «սադամական վարչակարգը»: Մի քանի ամիս անց Թեհրանը վերսկսեց իր օժանդակությունն իրաքյան քրդերին (այն կասեցվել էր 1975 թ.), շիաների ընդհատակյա շարժումներին: Իրաքի ականավոր գործիչների դեմ նաև ահաբեկչական գործողություններ սկսվեցին, որոնք իրենց գագաթնակետին հասան 1980 թ. ապրիլի 1-ին, երբ ձախողվեց վարչապետ Թարիք Ազիզի դեմ մահափորձը: Ավելի քան 20 պաշտոնական անձինք շիաների իրականացրած ահաբեկչությունների զոհ դարձան: Իրաքում շիաների ընդհատակյա կազմակերպությունների գործողությունները ստիպեցին Սադդամին շիաներին հանգստացնելուն ուղղված ջանքերը զուգակցել պատժիչ գործողությունների հետ. երկրից վտարվեցին հարյուր հազար շիաներ:

Ի պատասխան Սադդամի սպառնալիքների՝ 1980 թ. հունիսի 9-ին Այաթոլա Խոմեյնին իրաքյան շիաներին կոչ արեց տապալել Սադդամի վարչակարգը: Իրանի նախագահ Աբուլ Հասան Բանիսադրը նույնպես զգուշացրեց, որ եթե իրադրությունը սահմանում վատանա, Իրանը պատերազմ կսկսի[239]:

Մինչ այդ իրանա-իրաքյան առճակատումն արդեն նոր փուլ էր մտել: Ընդհանուր սահմանի երկայնքով տեղի էին ունենում ընդհա-

[239] Chubin, Shahram and Tripp, Charles. Iraq and Iran at War. Woulder, Colo., 1988, p. 39.

ռումներ, որոնք օգոստոսին վերածվեցին ծանր մարտերի՝ տանկերի ու հրետանու մասնակցությամբ և օդային հարվածներով: 1980 թ. սեպտեմբերի 7-ին Իրաքը մեղադրեց Իրանին Իրաքի սահմանամերձ քաղաքների ռմբակոծման մեջ և պահանջեց անմիջապես դուրս բերել իրանական ուժերն այդ շրջանից: Շատ չանցած՝ Իրաքը շտապեց «ազատել» այդ վիճելի տարածքները (որոնք Ալժիրյան համաձայնագրով պատկանում էին Իրաքին) և սեպտեմբերի 10-ին հայտարարեց, որ դա կատարված է: Մեկ շաբաթ անց Հուսեյնը ձևականորեն չեղյալ հայտարարեց Ալժիրյան համաձայնագիրը:

1980 թ. գարնանը նա հրապարակավ հայտարարեց Իրաքի՝ երեք փոքր պետությունների (սուննիական, շիական և քրդական) բաժանվելու վտանգի մասին: Այն, որ Սադդամը չէր ուզում հարձակվել Իրանի վրա, պարզորոշ դրսևորվեց նրա մարտավարության ընթացքում: Իրանական բանակին վճռական հարված հասցնելու և հեղափոխական վարչակարգը տապալելու փորձերի փոխարեն նա ձգտում էր տեղայնացնել պատերազմը, կրճատել իր բանակի առաջադրանքները: Զսպվածություն ցուցաբերելով՝ նա հույս ուներ, որ Թեհրանը կպատասխանի նույն կերպ կամ նույնիսկ կուզենա համաձայնության գալ: Փոխանակ իր զորքերին հրամայելու, որ առաջ շարժվեն այնքան, որքան թույլ կտային իրենց հնարավորությունները, ռազմական գործողությունները սկսվելուց արդեն մեկ շաբաթ անց Սադդամը բացահայտորեն զսպում էր նրանց առաջխաղացումը՝ զուգահեռաբար հայտարարելով բանակցություններ սկսելու իր պատրաստակամության մասին: Սակայն Իրանի հեղափոխական վարչակարգը ոչ միայն հաշտվելու փորձ չարեց, այլև օգտագործեց պատերազմը ներքին քաղաքական խնդիրները կարգավորելու՝ ընդդիմությունը ճնշելու համար:

1980 թ. հոկտեմբերին Իրանն անցավ հակահարձակման: Իրանական զինվորական հրամանատարությունն սկսեց կիրառել

«մարդկային հոսանքների» մարտավարությունը. առջևից գնում էին 14-17 տարեկան տղաներ՝ ականապատ տեղանքում ճանապարհ բացելով «թանկարժեք» զրահատանկային տեխնիկայի համար:

Որքան էլ տարօրինակ, բայց փաստ է, որ Իրաքի ռազմական անհաջողություններն օգնեցին Սադդամին՝ ժողովրդին իր շուրջը համախմբելու համար: Հենց որ Իրաքը սկսեց պաշտպանել իր սեփական հողը, զորքերի մեջ բարձրացավ ազգային ոգին:

Սադդամն այդ դժվարին պահին փորձում էր ձեռք բերել Ծոցի արաբական երկրների աջակցությունը՝ հավաստիացնելով, որ իրանական հեղափոխության միակ զոհը Իրաքը չի լինի: Հասարակական մոտեցման արտացոլում էր նաև Ազգային խարտիան (1981): Իրաքի կողքը կանգնեցին Սաուդյան Արաբիան և Քուվեյթը: Մինչև 1981 թ. վերջը Սաուդյան Արաբիան Իրաքին մոտ 10 մլրդ ԱՄՆ դոլարի օգնություն էր տրամադրել, իսկ Քուվեյթը դրան ավելացրեց ևս 5 մլրդ ԱՄՆ դոլար: Սաուդյան Արաբիան նույնիսկ թույլ տվեց իր տարածքում իրաքյան նավթամուղ կառուցել դեպի Կարմիր ծով՝ հնարավորություն տալով Բաղդադին շրջանցելու Իրանի գերիշխանությունը ծոցում:

Հմտորեն օգտագործելով իսլամական վարչակարգի թշնամանքն Արևմուտքի նկատմամբ՝ Սադդամը հասավ նրան, որ Խորհրդային Միության և Ֆրանսիայի հետ մեկտեղ ԱՄՆ-ն վերականգնեց իր աջակցությունը Իրաքին[240]: 1984 թ. դիվանագիտական հարաբերությունները վերականգնելուց ընդամենը մեկ ամիս անց Բաղդադում ամերիկյան դեսպանատունը սկսեց Իրաքին գաղտնի տեղեկություններ տրամադրել:

Եթե 1979 թ. Հուսեյնը կողմ էր Եգիպտոսը Արաբական լիգայից հանելու որոշմանը, ապա 3 տարի անց նա կոչ արեց իր արաբ հա-

մախոհներին նորից ընդունել Եգիպտոսին իրենց շարքերը: Դա զարմանալի չէր, քանի որ այդ ժամանակ Եգիպտոսն այն ամուր սյուներից էր, որի վրա կարող էր հենվել Սադդամը: 1980 թ. վերջին Սադդամը դիմեց Անվար Սադաթին՝ ռազմական աջակցության խնդրանքով: Մինչև 1983 թ. եգիպտական ռազմական օգնության գումարը կազմում էր 2.7 մլրդ դոլար, շուրջ 30 հազար եգիպտացի «կամավորներ» ուղարկվեցին իրաքյան զինված ուժեր:

1982 թ. Սադդամը մասնակցեց արաբական պետությունների ղեկավարների հանդիպմանը Ֆեսում, որը ճանաչեց արաբա-իսրայելական հակամարտության լուծումը 2 երկրների՝ Իսրայելի և Պաղեստինյան պետության միջոցով: Նա նույնիսկ հայտարարեց, որ «ոչ մի արաբական պետություն չի ձգտում ոչնչացնել Իսրայելը»: Իրաքը ցանկանում էր ձեռք բերել Իսրայելի համաձայնությունը՝ մինչև Աքաբայի նավահանգիստը նավթամուղ անցկացնելու համար: Չնայած Իսրայելի վարչապետ Պերեսը տվեց իր համաձայնությունը նախագծի իրականցմանը, վերջինս, միևնույնն է, չիրագործվեց: Այնուամենայնիվ, Իսրայելի հետ կապեր հաստատելու Իրաքի փորձերը շարունակվեցին մինչև 1987 թ. աշուն, բայց աստիճանաբար դադարեցին՝ սառը ընդունելություն գտնելով Իսրայելի կողմից խորհրդային և արևմտյան օգնությամբ Բաղդադի ռազմական դիրքերն աստիճանաբար ամրապնդելու հետևանքով:

Պատերազմի ընթացքում Իրաքի շիաները ոչ միայն չողջունեցին իրենց ինքնակոչ ազատարարներին, այլև կողք կողքի կռվեցին իրենց սուննի եղբայրների հետ: Կենտրոնական իշխանություններն իրենց հերթին ջանքեր գործադրեցին երկրում բնակվող շիաների կենսամակարդակը բարձրացնելու և ընտրական որոշ իրավունքներ շնորհելու ուղղությամբ:

---

[240] ԱՄՆ նշված քաղաքականության մասին տե՛ս Smith, Jean Edward. George Bush's War. New York: Nenry Holt&Co., 1992, Darwish, Adel and Alexander, Gregory. Unholy

1984 թ. Հուսեյնը սկսեց, այսպես կոչված, «տանկերային պատերազմ»՝ հարձակումներ գործելով դեպի Իրան և Իրանից նավարկող տանկերների վրա ու հույս ունենալով պատերազմի մեջ ներքաշել արևմտյան տերություններին, որոնք պետք է օգնեին Իրաքին խաղաղության հաստատման գործում: Իրաքի ղեկավարը հավանաբար ցանկանում էր Իրանին դրդել ծայրահեղ քայլերի՝ փակելու Հորմուզի նեղուցը, ինչն արևմտյան նավթ սպառողներին կստիպեր անհապաղ միջամտել: Այս ամենը հասկանալով՝ Թեհրանը զուսպ էր իր արձագանքներում և հայտարարում էր, որ նեղուցի փակման քայլից «Իրանի Իսլամական Հանրապետությունն առաջինը կտուժի»: Արևմտյան տերություններն այդպես էլ գրեթե չմիջամտեցին[241]:

Մարդկային, տնտեսական, նյութական և այլ կորուստները մեծ հարված հասցրին Իրանի ազգաբնակչությանը, որն իր բողոքն արտահայտում էր հակակառավարական ցույցերով (1985 թ.): Կամավորների թիվը ճակատում գնալով նվազում էր:

Իրանի համառությունը վերջնականապես կոտրվեց 1988 թ. փետրվարին, երբ 2 ամսվա ընթացքում ավելի քան 150 հրթիռներն ու իրաքյան բազմաթիվ ավիահարվածներն ավերեցին իրանական ամենախոշոր քաղաքները: Դա հանգեցրեց նրան, որ մայրաքաղաքը լքեցին ոչ միայն բնակիչները, այլև պետական ծառայողները, իսկ բանակը ցանկություն չուներ կռվելու:

1988 թ. ապրիլին՝ ցամաքային պատերազմում մոտ 6 տարի տևած պաշտպանությունից հետո, Իրաքն անցավ հակահարձակման և 48 ժամ տևած համառ մարտերից հետո ետ վերցրեց Ֆաո կղզին, որի կորուստը (1986 թ.) Բաղդադի ամենամեծ անհաջողությունն էր պատերազմում: Դա, փաստորեն, շրջադարձային եղավ պատերազմի ընթացքի համար:

Babylon: The Secret History of Saddam's War. New York: St. Martin's Press, 1991:

[241] Niblock, Tim. Iraq: The Contemporary State, New York, 1982, p. 6.

Մոլլաները համոզում էին այաթոլա Խոմեյնիին, որ «Իրաքը Իրանի միակ թշնամին չէ: Իմպերիալիստական ուժերի համաշխարհային կոալիցիան՝ «Մեծ սատանայի» (ԱՄՆ) գլխավորությամբ, ծարավ է իրանական արյան»[242]: Հետևաբար հաշվի առնելով Իրանի սոցիալ-տնտեսական վիճակը՝ պետք է գնալ հաշտության՝ իսլամական հեղափոխության ձեռքբերումները վտանգի չենթարկելու համար:

Ի վերջո, 1988 թ. հուլիսի 18-ին Իրանն ընդունեց Անվտանգության խորհրդի 598-րդ բանաձևը՝ իրանա-իրաքյան պատերազմի դադարեցման մասին: 1 ամիս անց զինադադար հաստատվեց ընդհանուր սահմանին՝ ազդարարելով երկու դարավոր հարևաններ-ի միջև այդ անիմաստ և արյունալի պատերազմի ավարտը:

2. Իրաքի ներխուժումը Քուվեյթ: Դրդապատճառներն ու հակասադդամական միջազգային կոալիցիայի ձևավորումը

Իրաքի հետ պատերազմից հետո Իրանը լրջորեն թուլացավ: Իր հերթին Իրաքի ռազմական ներուժը մինչպատերազմյանի համենատ ավելի հզորացավ: Եթե Թեհրանում հասունանում էր բնակչության դժգոհությունը, ապա Բաղդադում միլիոնավոր մարդիկ պարում էին փողոցներում և փառաբանում իրենց առաջնորդին: Սակայն Սադդամի իշխանությանը նոր վտանգ էր սպառնում: 1989 թ. հունվարին՝ արևմտյան սպաների՝ իր դեմ կատարած անհաջող մահափորձից հետո, Սադդամը հասկացավ, որ անհրաժեշտ է մի

[242] Робин Дж. Апдайк, Саддам Хусейн. Ростов на Дону, 1999, с. 54, Генерал Халд ибн-Султан-Воин в пустыне, Москва, 1996, Данциг Б. М., Ирак в прошлом и настоящем, Москва, 1980.

նոր ազդու միջոց՝ համընդհանուր խանդավառությունը և իր նկատմամբ սերը պահպանելու համար:

1989 թ. ապրիլին անցկացվեցին ազգային ժողովի ընտրություններ, որտեղ իրենց թեկնածությունն առաջադրելու իրավունք ստացան նաև ոչ բաասականները: Սակայն իշխանությունները «մոռացան» հայտարարել, որ ընտրություններին մասնակցելու իրավունք չունեին այն մարդիկ, որոնք «վտանգ էին ներկայացնում պետության համար»: Բաղդադի համալսարանում կանգնեցվեց «Ազատության պատը», որտեղ ենթադրվում էր, որ ուսանողները պետք է արտահայտեն իրենց դժգոհությունը: Թերթերում ավելի հաճախ էին հանդիպում առօրյա կյանքի դժվարությունների և կոռուպցիայի մանր դեպքերի մասին հոդվածներ:

Իրաքի այս ցուցադրական «դեմոկրատացումն» ավելի շատ ուղղված էր դեպի Արևմուտք (Իրաքում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված)՝ երկրի վարկանիշը բարձրացնելու համար հատկապես քրդերի դեմ ուղղված դաժան գործողությունների ֆոնին: Պատերազմի ավարտից չէր անցել 2 ամիս, երբ քրդական շուրջ 65 գյուղեր ենթարկվեցին քիմիական հարձակման: «Մահաշունչ քամուն» զոհ գնաց ավելի քան 5 հազար մարդ:

Քրդերի նկատմամբ այդ վայրագություններն առաջացրին միջազգային հասարակության դժգոհությունը: Սադդամն արդարանում էր՝ ասելով՝ «Իրաքը մաքրում է սահմանամերձ գոտիներն ամբողջ բնակչությունից, ներառյալ քրդերից, որպեսզի մարդկանց պաշտպանի իրանական հնարավոր հարձակումից»: Արևմտյան տերություններին բավարարեց Հուսեյնի խոստումը քիմիական զենք չօգտագործելու մասին[243]:

---

[243] Իրաքում քրդական խնդրի վերաբերյալ տե՛ս Jawad, Saad. Iraq and the Kurdish Question, 1958-1970. London, 1981, Kutschera, Chris. Le Movement National Kurde. Paris, 1979, Ghareeb Edmund. The Kurdish Question in Iraq. Syracuse, 1981, O'Ballance, Edgar. The Kurdish Revolt 1961-1970. London, 1973: Իսկ քրդերի ժամանակակից պատմության

1989 թ. փետրվարին կազմավորվեց Արաբական համագործակցության խորհուրդը (ԱՀԽ), որն ընդգրկում էր Եգիպտոսը, Հյուսիսային Եմենը, Հորդանանը և Իրաքը: Չնայած նոր բլոկի ստեղծման պատճառը տնտեսական էր, ամենասկզբից էլ պարզ էր, որ այն կզբաղվի քաղաքական հարցերով և գործիք կդառնա՝ թեկուզ և որոշակի շրջանակներում Սադդամի իշխանությունը տարածաշրջանում ամրապնդելու համար:

1988 թ. աշնանը սկսվեց իրաքյան ինտենսիվ միջամտությունը լիբանանյան քաղաքացիական պատերազմին՝ գեներալ Աունին ցույց տրվող ֆինանսական և ռազմական օժանդակության տեսքով:

1988 թ. նոյեմբերին Հուսեյնը նույնիսկ հայտարարեց, որ պատրաստ է համագործակցելու նույնիսկ Իսրայելի հետ՝ «հանուն սիրիական օկուպացիայից Լիբանանի ազատագրման»[244]:

Պատերազմից հետո անմխիթար վիճակում էր երկրի տնտեսությունը: Սադդամի սկսած սեփականաշնորհման գործընթացն ավելի շուտ բերեց բացասական հետևանքների՝ բարձր սղաճը և այլն: Ուստի Սադդամը ստիպված էր հսկողություն սահմանել գների վրա, իսկ սեփականաշնորհումն անիմաստ էր, քանի դեռ տնտեսության հիմնական լծակը՝ նավթարդյունաբերությունը, որը տալիս էր Իրաքի եկամուտների 95 տոկոսը, մնում էր պետության ձեռքում: Այսինքն՝ շոշափելի մասնավոր հատվածի ստեղծման համար ոչ մի լուրջ հիմք չկար:

Որքան էլ Հուսեյնը ջանում էր թաքցնել, այնուամենայնիվ տնտեսական քայքայված վիճակն ակնհայտ էր: Նրա վերականգն-

---

վերաբերյալ առավել հիշարժան աշխատանքներն են՝ Chaliand, Gerard. People without Country. The Kurds and the Kurdistan. London, 1980, McDowall, David. A Modern History of the Kurds. London, New York, I.B. Tauris, 1997:

[244] Matthews, Ken. The Gulf Conflict and International Relations. New York: Routledge, 1993, p. 26.

ման արժեքը գնահատվում էր 230 մլրդ ԱՄՆ դոլար: Իրաքի 15-միլիարդանոց նավթային եկամուտը բավական չէր նույնիսկ ընթացիկ ծախսերի համար: Առաջին անհրաժեշտության ապրանքների ներմուծման վրա ծախսվում էր 12 մլրդ ԱՄՆ դոլար, պարտքերի վերադարձը կազմում էր 5 մլրդ, իսկ օտարերկրյա աշխատողների վրա ծախսվում էր 1 մլրդ ԱՄՆ դոլար, այնպես որ, վարչակարգին անհրաժեշտ էր տարեկան ևս 10 մլրդ ԱՄՆ դոլար պակասորդը լրացնելու և հետո նոր վերականգնման աշխատանքներին անցնելու համար:

Արտաքին խնդիրները ևս լրջորեն մտահոգում էին Հուսեյնին: Նրան չէր հաջողվել պաշտոնապես հաշտություն կնքել Իրանի հետ, որի հետևանքով անհայտ էր 65 հազար իրաքցի ռազմագերիների հետագա ճակատագիրը:

Իրաքի ղեկավարը քաջ գիտակցում էր, որ կանգնած է սեփական ժողովրդի հետ առճակատման վտանգի առաջ, եթե նրան չհաջողվի արագ մատուցել «պատմական հաղթանակի» խոստացված բարիքները[245]:

Դեռ պատերազմի ընթացքում նա արդեն ճնշում էր գործադրում Ծոցի երկրների, հատկապես Սաուդյան Արաբիայի և Քուվեյթի վրա իրենց փոխատվություններն Իրաքին չեղյալ հայտարարելու համար: Նա ասում էր, որ պատերազմն Իրաքի գործը չէր միայն, դա արաբական աշխարհի արևելյան թևի պաշտպանությունն էր իսլամական ֆունդամենտալիզմից: Այս ճնշումն ավելի ուժեղացավ հետպատերազմյան շրջանում: Արաբական համագործակցության խորհրդի ղեկավարների գագաթնաժողովին (1990 թ. փետրվարին) Սադդամը Ամմանում հանդիպեց Հորդանանի Հուսեյն թագավորին և Եգիպտոսի նախագահ Մուբարաքին: Հանդիպումների ընթաց-

[245] Freedman, Lawrence and Karsh, Efraim. The Gulf Conflict 1990-1991 Diplomacy and War in the New World Order. Princeton Universtity Press, 1993, p. 36.

քում նա հայտնեց, որ Իրաքը պահանջում է Ծոցի երկրներից ոչ միայն լրիվ սառեցնել պատերազմի տարիներին գոյացած Իրաքի պարտքերը, այլև լրացուցիչ ֆինանսական աջակցություն ցուցաբերել շուրջ 30 մլրդ դոլարի չափով: «Թող Ծոցի կառավարություններն իմանան, որ եթե իրենք ինձ փող չտան, ես գիտեմ՝ ինչպես ստանալ այն այլ ճանապարհով»,– հայտարարեց Սադդամը: Համընթաց քուվեյթյան սահմանի չեզոք գոտում իրաքյան ռազմական զորաշարժեր սկսեցին:

Պատերազմից հետո Իրաքը և Իրանը պահանջեցին «Նավթ արտահանող երկրների կազմակերպության» (ՆԱԵԿ/OPEC) անդամներից նվազեցնել նավթային քվոտաները, որպեսզի իրենց հնարավորություն տրվի մեծացնելու նավթի սեփական արտադրությունը՝ չիջեցնելով գները: Սակայն, ՆԱԵԿ-ի որոշ անդամներ շարունակում էին մեծացնել իրենց քվոտաները՝ իջեցնելով նավթի գները համաշխարհային շուկայում:

1990 թ. փետրվարին՝ Քուվեյթ կատարած աշխատանքային այցի ժամանակ, Իրաքի նավթարդյունաբերության նախարար Իսամ Արբդել Ռահիմ ալ-Հալաբին համոզում էր Քուվեյթին հետևել ՆԱԵԿ-ի կողմից սահմանված քվոտային: Այդ նպատակով նա ուղևորվեց նաև Ռիյադ: Երեք ամիս անց՝ Ժնևում կայացած ՆԱԵԿ-ի երկրների նախարարների հանդիպման ժամանակ, Հալաբին նորից կոչ արեց պահպանել քվոտաները՝ օրական 22 մլն բարել և բարձրացնել գները մինչև 18 ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց:

1990 թ.՝ Բաղդադում արաբական երկրների ղեկավարների հետ հանդիպման ժամանակ, Սադդամը հայտարարեց, որ նավթի մեկ բարելի գնի նվազեցումն անգամ 1 դոլարով, կնշանակի յուրօրինակ «պատերազմ Իրաքի դեմ»:

Սադդամին հանգստացնելու նպատակով Քուվեյթի էմիրը պաշտոնից ազատեց նավթարդյունաբերության նախարարին, սա-

կայն չկրճատեց նավթի արդյունաբերությունը, չեղյալ չհամարեց իր փոխատվությունները, ինչպես նաև Բաղդադին չտրամադրեց լրացուցիչ դրամական օժանդակություն: Քուվեյթի նման քաղաքականությունը Սադդամը բնութագրեց որպես «տարածաշրջանի տնտեսության դեմ ուղղված հրեական դավադրություն»: Միայն հուլիսի 10-ին Ջեդդայում կայացած նավթարդյունաբերության նախարարների նիստի ժամանակ Քուվեյթը և ԱՄԷ-ն համաձայնեցին հետևել իրենց նավթային քվոտաներին՝ տեղի տալով Սաուդյան Արաբիայի, Իրանի և Իրաքի ճնշմանը: Սակայն արդեն ուշ էր: Հուլիսի 16-ին Քուվեյթի վրա գործադրվող ճնշումը նկատելիորեն ուժեղացավ: Իրաքի արտգործնախարար Թարիկ Ազիզը Արաբական երկրների լիգայի գլխավոր քարտուղարին ուղղված իր նամակում մի քանի պահանջ առաջ քաշեց՝ նավթի գինը բարձրացնել բարելի համար ոչ պակաս, քան 25 դոլար, դադարեցնել քուվեյթյան կողոպուտը Ռումայլայի իրաքյան նավթահորերից և վերադարձնել Իրաքից «գողացված» 2,4 մլրդ դոլարը, ինչպես նաև չեղյալ համարել իրաքյան ռազմական պարտքերը:

Բաղդադում գնալով սաստկանում էր հակաքուվեյթյան արշավը ինչպես պետական գործիչների, այնպես էլ զանգվածային միջոցներով: Քուվեյթում հասկանում էին, որ ինչ-որ զիջումներ պետք է արվեն, սակայն ցանկանում էին դրանք հասցնել նվազագույնի: Քուվեյթն Արաբական երկրների լիգայի գլխավոր քարտուղարին հուշագիր ուղարկեց, որում ասվում էր, որ «Եղբայրական երկիրը (Քուվեյթը), որ միշտ գտնվել է արաբական ազգային պայքարի առաջին շարքերում, արժանի չէ նման վերաբերմունքի, որ Քուվեյթի զավակները թե՛ լավ, թե՛ վատ ժամանակներում մնում են սկզբունքային և ազնիվ մարդիկ, բայց նրանք երբեք չեն ենթարկվում ճնշման և սպառնալիքների»:

Հուսեյնն այս պատասխանը ընդունեց որպես անձնական վիրավորանք: Դրանից հետո նա էլ ավելի ամրապնդվեց իր այն կարծիքի մեջ, որ անհրաժեշտ է Քուվեյթի հարցը լուծել ռազմական ուժով: Քուվեյթի վրա հարձակվելով՝ Սադդամը թերևս մտադիր էր հարևան երկրի հարուստ նավթային պաշարների շնորհիվ լցնել Իրաքի դատարկված գանձարանը՝ հույս փայփայելով մարել երկրի արտաքին հսկա պարտքը և իրականացնել վերականգնման ծրագրերը, որոնք խոստացել էր Իրաքի ժողովրդին պատերազմից հետո:

Հաշվի առնելով Իրաքի պատմական հավակնությունները Քուվեյթի նկատմամբ՝ օկուպացիան կարող էր բարձրացնել Սադդամի որոշակիորեն խարխլված հեղինակությունը երկրի ներսում՝ ներկայացնելով նրան որպես իրաքյան բռնազավթված հողերի ազատագրող[246]: Ավելին, Քուվեյթի գրավումը, ըստ Սադդամի, կապահովեր Իրաքի անխափան մուտքը դեպի Ծոց ու վճռորոշ դերակատարություն համաշխարհային նավթային շուկայում:

Հուլիսի 21-ին, հակաքուվեյթյան հզոր քարոզչության ֆոնին, իրաքյան մոտ 30-հազարանոց ստորաբաժանումները շարժվեցին դեպի սահման: Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը շտապեց Բաղդադ, որտեղ Հուսեյնը հավաստիացրեց նրան, որ Քուվեյթ ներխուժելու միտք չունի, քանի դեռ չեն սպառվել խաղաղ կարգավորման բոլոր միջոցները: Այս պատասխանը պարզապես փորձ էր Սադդամի կողմից՝ իր հետագա գործողությունները համաշխարհային հասարակայնության առջև արդարացնելու համար:

Նկատի ունենալով, որ միայն ԱՄՆ-ն կարող էր խոչընդոտել

---

[246] Օսմանյան կայսրության կազմում Քուվեյթը մաս է կազմել Բասրայի փաշալիկության: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Քուվեյթը Անգլիայի պրոտեկտորատն էր: Իրաքն անկախության ձեռքբերումից հետո՝ 20-րդ դարի 30-ականներին, բազմիցս հայտարարել է, որ Քուվեյթի տարածքը ժառանգության իրավունքով պատկանում է Իրաքին:

իր ծրագրերի իրականացմանը, հուլիսի 25-ին Սադդամը իր մոտ հրավիրեց Բաղդադում ամերիկյան դեսպան տիկին Էյփրիլ Գլասպիին: Վերջինս հանդիպման ընթացքում ասաց. «Դա մի հարց է, որ արաբներն իրենք պետք է լուծեն, իսկ Միացյալ Նահանգներում չկա որոշակի կարծիք ներարաբական տարաձայնությունների վերաբերյալ, ինչպիսիք են Իրաքի սահմանային խնդիրները՝ կապված Քուվեյթի հետ»: Նա նշեց, որ պետական քարտուղար Բեյքերն իրեն հրահանգել է այս տեսակետը Սադդամին հաղորդել:

Եթե այս հանդիպումից հետո Սադդամի մոտ ԱՄՆ դիրքորոշմանն առնչվող որոշ կասկածներ դեռ մնացել էին, ապա դրանք վերջնականապես անհետացան 3 օր անց նախագահ Բուշի անձնական գրությամբ, որում թեև նշվում էր, որ «ուժի գործադրումն անթույլատրելի է», միաժամանակ արտահայտվում էր նաև «անկեղծ հետաքրքրություն»՝ Բաղդադի հետ հարաբերությունների բարելավման կապակցությամբ[247]:

Այսպիսով, ստանալով ամերիկյան չեզոքության ապացույցը՝ Հուսեյնն անցավ իր պլանի իրագործման վերջին փուլին: Օգոստոսի 2-ին Սադդամը հրամայեց իր զորամիավորումներին անցնել Քուվեյթի սահմանը: Վերջինս գրավելուց հետո նա այնտեղ ստեղծեց «ժամանակավոր հեղափոխական կառավարություն»: Քուվեյթի

[247] Baram, Amatzia and Rubin, Barry. Iraq's Road to War. New York, St.Martin Press, 1993, pp. 255–272. Բազմաթիվ աշխատությունների մեջ Ծոցի ճգնաժամի պատասխանատվությունը դրվում է ԱՄՆ վարչակազմի վրա, ինչպես նաև քննադատության է ենթարկվում նախագահ Ջորջ Բուշի որոշումների կայացման ձևերը, նրա հայտարարությունների ու գործնականում դիվանագիտության իրականացման միջև առկա տարբերությունը՝ Marcia Lynn Whicker, James P.Pfiffner, and Raymond A. Moore, ed., The Presidency and the Persian Gulf war. Westport, Conn.: Praeger, 1993, Carpenter, Ted Galen. America Entangled: The Persian Gulf Crisis and its Consequences. Washington, D. C., Cato Institute, 1991: ԱՄՆ ղեկավարության՝ հետպատերազմյան Իրաքում փոփոխություններ կատարելու անկարողությունը խիստ քննադատության է ենթարկված հետևյալ աշխատություններում՝ Atkinson, Rick. Crusade: The Untold Story of the Persian Gulf War. Boston: Houghton Mifflin Co., 1993, և Watson, W. Bruce. Military Lessons of the Gulf War. Novato, Calif., Presidio Books, 1991:

Էմիր Ջաբեր ալ-Ահմեդ ալ Ջաբեր աս-Սաբահը իր հարազատների հետ ժամանեց ամերիկյան դեսպանատուն և ռազմական ինքնաթիռով ուղևորվեց Սաուդյան Արաբիա:

Ներխուժումից մի քանի ժամ անց նախագահ Ջորջ Բուշը տնտեսական էմբարգո դրեց Իրաքի վրա և հրամայեց «Ինդիֆենդնս» ավիակրին Հնդկական օվկիանոսից շարժվել Պարսից ծոց: Քուվեյթյան և իրաքյան բոլոր ակտիվներն ու սեփականությունը ողջ աշխարհի ամերիկյան բանկերում և ընկերություններում սառեցվեցին, մարդկանց և ապրանքների շարժը Իրաք և Իրաքից դուրս ամբողջովին կասեցվեց: Ցուցաբերելով բացարձակ համերաշխություն՝ երկու գերտերությունները՝ Խորհրդային Միությունը և ԱՄՆ-ն, հրապարակեցին համատեղ փաստաթուղթ, որով դատապարտեցին իրաքյան ագրեսիան:

ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում 15 անդամներից 14-ը (բացի Եմենից) ընդունեցին Իրաքի կողմից Քուվեյթի բռնազավթումը դատապարտող 660-րդ բանաձևը: Այն կոչ էր անում անհապաղ և անվերապահորեն դուրս բերել իրաքյան զորքերը Քուվեյթից: Այն բանից հետո, երբ արևմտյան լրատվական միջոցները հաղորդեցին իրաքյան զորքերի՝ «դեպի սաուդյան սահմանները շարժվելու մասին», Եվրախորհուրդը և Ճապոնիան նույնպես տնտեսական սանկցիաներ դրեցին Իրաքի վրա, իսկ Խորհրդային Միությունը և Չինաստանը դադարեցրին զենքի մատակարարումը: Իրաքի շուրջ օղակն ավելի սեղմվեց, երբ օգոստոսի 6-ին Անվտանգության խորհուրդն ընդունեց 661-րդ բանաձևը, որով տնտեսական սանկցիաներ և էմբարգո էր սպառնում այն երկրներին, որոնք Իրաքին զենք մատակարարելու փորձ կկատարեն:

Հանդիպելով միջազգային հանրության նման անհաշտ կեցվածքին՝ օգոստոսի 5-ին Բաղդադը հայտարարեց, որ զորքերի դուրսբերումը սկսված է: Բացի դրանից՝ նա հերքեց Սաուդյան Ա-

բաբիայի նկատմամբ հնարավոր ագրեսիայի մասին որոշ լրատվամիջոցների տարածած հաղորդումները: Սակայն ո՛չ Սադդամի հավաստիացումները, ո՛չ էլ իրաքյան զորքերի իբր թե սկսված դուրսբերումը Քուվեյթից տպավորություն չգործեցին ԱՄՆ վարչակազմի վրա: Ընդհակառակը, օգոստոսի 8-ի վաղ առավոտյան՝ իր հեռուստատեսային ելույթի ժամանակ, նախագահ Բուշն ամերիկյան ժողովրդին հայտնեց Սաուդյան Արաբիայի խնդրանքին ընդառաջելու և այնտեղ ամերիկյան զորքեր ուղարկելու իր որոշման մասին: Հուսեյնին անվանելով «հարևանների համար ագրեսիվ դիկտատոր»՝ Բուշը հստակեցրեց իր քաղաքականության 4 հիմնական սկզբունքները՝ Իրաքի անհապաղ, անվերապահ և լրիվ վտարումը Քուվեյթից, քուվեյթյան օրինական կառավարության վերահաստատումը, Ծոցում անվտանգության ու կայունության, ինչպես նաև արտասահմանում ամերիկյան քաղաքացիների պաշտպանության ապահովումը:

Քուվեյթում շարունակվող ժողովրդական դիմադրության և միջազգային տնտեսական ու ռազմական աճող ճնշման պայմաններում Իրաքի նախագահը հասկանում էր, որ անհնար է կանգնել կես ճանապարհին: Օգոստոսի 8-ին ՀՀԽ-ն հայտարարեց Իրաքի և Քուվեյթի միավորման մասին: Սակայն իրադարձություններն այնպես զարգացան, որ Սադդամը ստիպված էր վերանայել մշակված սցենարը: Արդեն օգոստոսի 7-ից նկատվում էր տրամադրության փոփոխությունն իրաքյան մամուլում: Ինտերվենցիան այլևս չէր անվանվում «կարճատև միջոցառում», դրա փոխարեն Քուվեյթն «իրաքյան տարածքի մի մասն էր հայտարարվում, որն անցյալում անարդարացիորեն անջատվել է երկրից», որ իրաքցիներն ու քուվեյթցիները մինչ այդ եղել են «մի ընտանիք»: Օգոստոսի 28-ին Քուվեյթը պաշտոնապես հայտարարվեց Իրաքի 19-րդ նահանգ:

Երկրում ներքին կայունությունն ապահովելու նպատակով նա ազդարարեց, որ մթերքների կուտակումը կոմերցիոն նպատակներով կհամարվի ազգային անվտանգությունը վտանգող «հանցագործություն ու սաբոտաժի ակտ» և կպատժվի մահապատժով: 1 ամիս անց ՀՀԽ-ն որոշեց առանց որևէ փոխհատուցման բռնագրավել գյուղատնտեսական մասնավոր հողերը, որոնք չէին մշակվում «նախատեսված ինտենսիվությամբ»: Բացի դրանից՝ իշխանությունները սկսեցին բնակչությանը տալ պարենային քարտեր՝ հիմնական սննդամթերքների համար:

Ինչպես և իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ, Սադդամը փորձում էր ժողովրդին համախմբել իր շուրջը. այս անգամ միայն մեկ բան էր փոխվել. պարսիկների դերում հանդես էին գալիս ամերիկացիները, որոնց գլխավորում էր «անամոթ իմպերիալիստը»՝ Ջորջ Բուշը:

Միացյալ Նահանգների հզոր ուժին դիմակայելու համար Իրաքի միակ հույսը Իրանն էր: Օգոստոսի 14-ին Սադդամը ուղերձ հղեց Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիին՝ առաջարկելով, որ երկու երկրներն էլ ընդունեն 1975 թ. Ալժիրյան համաձայնագրի պայմանները, համաձայնեն ռազմագերիների փոխանակմանը և դուրս բերեն զորքերը օկուպացված տարածքներից: Զարմացած Ռաֆսանջանին անմիջապես օգտվեց այդ հնարավորությունից, և օգոստոսի 18-ին սկսվեց ռազմագերիների փոխանակումը:

Իրանի հետ հարաբերությունները լավացնելուն զուգընթաց՝ Սադդամը փորձում էր Ծոցի ճգնաժամին տալ «հակաիսրայելյան» երանգավորում: Իր քուվեյթյան ավանտյուրան կապելով պաղեստինյան խնդրի հետ՝ նա հույս ուներ ապահովել արաբական աշխարհի աջակցությունը՝ դատարկ իրաքյան գանձարան լցվող առատաձեռն ֆինանսական օգնության տեսքով:

Օգոստոսի 12-ին Սադդամը շարադրեց ճգնաժամի լուծման իր սցենարը: Դրա համար անհրաժեշտ էր ապահովել Իսրայելի անհապաղ ու անվերապահ դուրսբերումը Պաղեստինի, ինչպես նաև Սիրիայի ու Լիբանանի օկուպացված արաբական տարածքներից, ինչպես նաև Սիրիայի հեռացումը Լիբանանից: Եվ միայն այն բանից հետո, երբ այս խնդիրները լուծված կլինեն, հնարավոր կլինի համաձայնության գալ Քուվեյթի վերաբերյալ՝ նկատի առնելով Իրաքի պատմական իրավունքներն այդ հողի նկատմամբ և Քուվեյթի ժողովրդի ընտրությունը:

Քուվեյթյան ճգնաժամի լուծումը դնելով ցուցակի վերջում՝ Սադդամը փորձում էր ժամանակ շահել՝ փոքր էմիրությունում ժողովրդագրական հաշվեկշիռն այնպես փոխելու համար, որ երբ Քուվեյթի ժողովուրդը հնարավորություն ստանար որոշելու իր ապագան, արդյունքը կանխորոշված լիներ: Որոշ տվյալների համաձայն՝ ներխուժումից հետո 300 հազար քուվեյթցիներ փախել էին երկրից, իսկ մնացածները ենթարկվում էին հալածանքների:

Կահիրեում հրավիրված արաբական երկրների Լիգայի անդամների արտակարգ հանդիպման ժամանակ որոշվեց արաբական զինվորական ստորաբաժանում ստեղծել՝ հակասադդամական միջազգային կոալիցիային միանալու նպատակով:

Հունվարի 12-ին ԱՄՆ Կոնգրեսը լիազորեց նախագահ Բուշին ռազմական ուժ օգտագործելու և Իրաքին Քուվեյթից վտարելու համար: Ի պատասխան՝ Իրաքի նախագահն իր ժողովրդին սրբազան պատերազմի՝ «ջիհադի» կոչ արեց:

Ռազմական գործողությունները սկսեցին հունվարի 17-ին՝ Բաղդադի ժամանակով առավոտյան ժամը 3-ին: Իրաքը ենթարկվեց ուժեղ ռմբակոծության: Հարվածներն ուղղված էին զորամիավորումներին, օդանավակայաններին, նավթավերամշակման գոր-

ծարաններին: Բաղդադում տները ցնցվում էին ռմբահարումներից: Խիստ տուժեց նաև նախագահական պալատը:

Սադդամը քաջ գիտակցում էր, որ երկարատև կոնֆլիկտն անհեռանկարային է: Այդ պատճառով ռազմական գործողությունների ամենասկզբից Սադդամի ռազմավարությունն մի նպատակ էր հետապնդում՝ դրդել կոալիցիային վաղաժամ ցամաքային հարձակում կատարելու Քուվեյթում, ինչը կհանգեցներ պատերազմի արագ ավարտին թեկուզ և Իրաքի կողմից ծանր կորուստների գնով: Այդ նպատակին հասնելու համար Ս. Հուսեյնը հրթիռային հարված հասցրեց Իսրայելի գլխավոր բնակավայրերին: Վստահ լինելով, որ Իսրայելը չի ուշացնի հակահարվածը, ինչը բարդ կացության մեջ կդներ կոալիցիայի արաբական երկրներին և իր հերթին կստիպեր դաշնակիցներին, որոնք վախենում էին, որ Իսրայելի ներքաշումը պատերազմի մեջ կփլուզի ռազմական կոալիցիան, նախատեսվածից ավելի շուտ կատարելու ցամաքային հարձակումը Քուվեյթի վրա: Հունվարի 18-ին իսրայելյան 3 բալիստիկ ցամաքային հրթիռներ ընկան Թել-Ավիվի, իսկ 2-ը՝ Հայֆայի վրա: Սակայն Ամերիկայի Միացյալ Նահանգների ճնշման տակ Իսրայելը ցուցաբերեց զսպվածություն և ձեռնպահ մնաց պատասխան հարված հասցնելուց՝ խափանելով Սադդամի մտադրությունները: Քանի որ Իսրայելի վրա հարձակումը չառաջացրեց դաշնակիցների սպասվող արձագանքը, Սադդամը դիմեց ռազմավարական մեկ այլ քայլի՝ օգտագործելով նավթային խաղաքարտը: Հունվարի 22-ին Իրաքը հրկիզեց մի քանի նավթային կայաններ Քուվեյթում: Ս. Հուսեյնի հիմնական նպատակն էր կոալիցիային հիշեցնել, որ ձգձգվող պատերազմը խորտակիչ ազդեցություն է թողնում համաշխարհային նավթային շուկայի և տարածաշրջանի էկոլոգիայի վրա: Նույն նպատակով Իրաքը սկսեց նավթ արտանետել Պարսից ծոց, ինչը հանգեցրեց էկոլոգիական խոշոր աղետի:

Ռազմական գործողությունների սաստկացմանը զուգընթաց դիվանագիտական քայլեր էին ձեռնարկվում նաև ԽՍՀՄ-ի կողմից: Բաղդադ մեկնած հատուկ բանագնաց Ե. Պրիմակովը Սադդամ Հուսեյնի հետ քննարկեց կրակի դադարեցման հնարավորությունները: Օգտվելով Ե. Պրիմակովի այցից և Անվտանգության խորհրդի՝ Ծոցի պատերազմին նվիրված հատուկ նիստից՝ ՀՀԽ-ն փետրվարի 15-ին հայտարարեց «Արժանի և ընդունելի որոշման հասնելու համար Անվտանգության խորհրդի 660-րդ բանաձևը վերանայելու Իրաքի պատրաստակամության մասին»: Սակայն շուտով պարզվեց, որ Քուվեյթից հեռանալու Սադդամի պատրաստակամությունն ուղեկցվում էր հետևյալ պայմաններով՝

Իսրայելի հեռացում Պաղեստինից և գրավված արաբական բոլոր տարածքներից:

ՄԱԿ-ի՝ Իրաքի դեմ ուղղված բոլոր բանաձևերի չեղյալ հայտարարում:

Ծովում և ցամաքում Իրաքի ունեցած պատմական իրավունքների միջազգային ճանաչում:

Իրաքի արտաքին պարտքի չեղյալ հայտարարում:

Աջակցություն երկրի տնտեսական վերականգնմանը՝ դաշնակիցների միջոցներով:

Բնականաբար, վերոհիշյալ պահանջները Բուշը մերժեց: 1991 թ. փետրվարի 18-ին Թարիք Ազիզը մեկնեց Մոսկվա, որտեղ նրան ներկայացրին կրակի դադարեցման խորհրդային ծրագիրը: Երեք օր անց Ազիզը բերեց Սադդամի պատասխանը, որով վերջինս ընդունում էր խորհրդային առաջարկը՝ համաձայնելով լրիվ և անվերապահ հեռացմանը Քուվեյթից (ՄԱԿ-ի 660-րդ բանաձևի համապատասխան):

Նախագահ Բուշը հայտարարեց, որ կոալիցիան Իրաքին ժամանակ է տալիս Քուվեյթից հեռանալու մինչև փետրվարի 23-ի կե-

սօրը, և Սադդամը պետք է հրապարակավ և պաշտոնապես հայտարարի, որ ընդունում է այդ պայմանները: Սակայն Հուսեյնի համար դա հավասարազոր էր սեփական մահվան դատավճիռը ստորագրելուն: Հուսեյնի համար ավելի ընդունելի էր ցամաքային կամպանիան, քան անվերապահ կապիտուլյացիան: Ուստի նա հրապարակավ մերժեց վերջնագիրը:

Նախագահ Բուշը պատասխանեց իրաքյան մերժմանը մի քանի ժամ անց: Փետրվարի 24-ի առավոտյան նա հայտարարեց, որ Սաուդյան Արաբիայում կոալիցիայի ուժերի գերագույն հրամանատար Նորման Շվարցկոպֆը հրահանգ է ստացել «օգտագործել բոլոր եղած ուժերը՝ իրաքյան բանակը Քուվեյթից դուրս շպրտելու համար»: Դեպքերը զարգանում էին մեծ արագությամբ: Իրաքցիները զանգվածաբար հանձնվում էին:

Փետրվարի 25-ի կեսգիշերին՝ ցամաքային պատերազմը սկսվելուց մոտավորապես քառասուն ժամ անց, պետական ռադիոն հայտարարեց, որ «հրաման է տրվել իրաքյան զինված ուժերին՝ կազմակերպված նահանջել դեպի դիրքերը, որոնք նրանք զբաղեցնում էին մինչև 1990 թ. օգոստոսի մեկը: Դա կարելի է գնահատել որպես 660-րդ բանաձևին հետևելու պատրաստակամություն»:

Չնայած Մ. Գորբաչովն անձամբ զանգահարեց Բուշին և տեղեկացրեց, որ Սադդամն այլևս չի պահանջում ՄԱԿ-ի բոլոր բանաձևերի չեղյալ հայտարարում, Սպիտակ տունը պահանջեց, որ Սադդամն «անձամբ և հրապարակավ» խոստանա թողնել Քուվեյթը և ենթարկվել Անվտանգության խորհրդի բոլոր 12 բանաձևերին:

Հայտնվելով մուրճի ու սալի արանքում՝ պատերազմի շարունակման կործանարար հետևանքների և պարտությունն ընդունելու տհաճ անհրաժեշտության երկընտրանքի առջև, Սադդամը փորձեց խուսափել թե՛ մեկից և թե՛ մյուսից: Փետրվարի 26-ին նա իրաքյան

ժողովրդին հայտնեց, որ իրենց «անհաղթ զինված ուժերը կշարունակեն հեռացումը Քուվեյթից և այն կավարտեն այսօր»:

Այնուամենայնիվ, Սադդամն այս հապշտապ հեռացումը պերճախոս կերպով ներկայացնում էր որպես Իրաքի մեծագույն հաղթանակ՝ հայտարարելով իրաքցիներին, որ նրանք դիմակայել են երեսուն երկրների և «այն չարի դեմ, որ նրանք բերել են», որ իրաքցիները հաղթանակել են՝ դիմագրավելով ողջ աշխարհին, որ իրաքցիները երբեք չեն մոռանա, որ 1990 թ. օգոստոսի 8-ին Քուվեյթը դարձավ Իրաքի մի մասը:

Երբ իրաքյան զորքերը Քուվեյթում կատարում էին իրենց գերագույն հրամանատարի հրամանը, դաշնակիցները զեկուցում էին իրաքյան քառասուն դիվիզիաներից քսանմեկի ոչնչացման մասին: Փետրվարի 26-ի երեկոյան՝ Քուվեյթի անկախության 13-ամյակին, էլ-Քուվեյթի վրա ծածանվեց երկրի պետական դրոշը:

Փորձելով փրկել այն, ինչ մնացել էր ռազմական հզոր մեքենայից, Սադդամն էլ ավելի մեղմացրեց իր դիրքորոշումը: Անվտանգության խորհրդի նախագահին և գլխավոր քարտուղարին ուղղված անձնական ուղերձում Թարիք Ազիզը պաշտոնապես հայտարարեց Քուվեյթի անեքսիայից հրաժարվելու, բոլոր ռազմագերիներին ազատելու և ռազմատուգանքները վճարելու՝ Իրաքի պատրաստակամության մասին կրակի անհապաղ դադարեցման և սանկցիաների վերացման դիմաց: Անվտանգության խորհուրդն առաջարկությունը մերժեց՝ պնդելով, որ Բաղդադը պետք է ենթարկվի ՄԱԿ-ի բոլոր տասներկու բանաձևերին: Շուտով հետևեց համաձայնությունը. ՄԱԿ-ում Իրաքի ներկայացուցիչ Աբդել Ամիր ալ-Անբարին հաղորդեց Անվտանգության խորհրդին, որ Բաղդադը պարտավորվում է կատարել Անվտանգության խորհրդի բոլոր բանաձևերը:

Այսպիսով, իրաքյան ռազմական ուժերը, որ մինչ այդ թվաքանակով չորրորդն էին աշխարհում, տալով 150 հազար սպանված, հեռացան Քուվեյթից: Միջազգային հանրության վճռական միջամտությամբ Քուվեյթն ազատագրվեց:

Սադդամի անխոհեմ ու կործանարար քաղաքականության պատճառով իրաքյան ժողովուրդը հարյուր հազարավոր զոհեր ու անթիվ նյութական կորուստներ ունեցավ: Բիրտ ուժի օգտագործումով, արաբական լայն զանգվածների գաղափարական ու կրոնական զգացմունքների շահարկումով, առանց հաշվի առնելու սեփական ժողովրդի ու երկրի շահերը՝ ապահովելու իր քաղաքական կենսունակությունը. ահա սա էր Սադդամ Հուսեյնի իրական նպատակը:

Ծոցի ճգնաժամը ծանրագույն հարված հասցրեց Իրաքի տնտեսությանն ու նրա միջազգային հեղինակությանը: Սադդամ Հուսեյնի իշխանության գալու պահին, հիրավի, Իրաքը համարվում էր տարածաշրջանի գերտերություններից մեկը՝ 35 մլրդ ԱՄՆ դոլար տարադրամային պաշարներով: Տասներկու տարի անց երկու անհեռանկար ու աղետաբեր պատերազմների հետևանքով Իրաքը հասավ ծայրահեղ աղքատության՝ 80 մլրդ դոլար արտաքին պարտքով և ավերված տնտեսությամբ:

Ծոցի պատերազմը մեծապես ազդեց նաև տարածաշրջանում ընթացող քաղաքական գործընթացների վրա ինչպես միջարաբական հարաբերություններում, այնպես էլ արաբա-իսրայելյան հակամարտությունում: 90-ականներին ծավալված խաղաղության գործընթացը հնարավոր դարձավ սկսել հենց այդ ճգնաժամից հետո[248]:

---

[248] Ծոցի պատերազմի արդյունքների և հետևանքների մասին տե՛ս Faour, Muhhamad. The Arab World after Desert Storm. Washigton, D.C., US Institute of Peace Press, 1993, McCain, John. The Gulf War Aftermath: An Environmental Tragedy. Dordrecht., Holland, 1993, Golan, Galia. Moscow and the Middle East: New Thinking on Regional Conflict,

3. Իրաքյան պատերազմը (2003-2011 թթ.)

1991 թվականի Ծոցի պատերազմից հետո ԱՄՆ նախագահ Ջ. Բուշի վարչակազմը քայլեր էր ձեռնարկում Իրաքում Սադդամ Հուսեյնի վարչակարգը տապալելու ուղղությամբ և դեռևս հույսեր էր փայփայում, որ այն կիրականացնի Իրաքի ժողովուրդը[249]: Սակայն դա տեղի չունեցավ, և արդեն 1998 թվականին ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոնը ստորագրեց Իրաքի ազատագրման ակտը (Iraq Liberation Act)՝ պաշտոնապես որդեգրելով այդ երկրում ռեժիմի փոփոխությունն իրականացնելու քաղաքականությունը:

Արդեն իսկ 2002 թ. ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության (National Security Strategy) փաստաթղթի մեջ Ազատության օրակարգում (Freedom Agenda) կենտրոնական տեղ էր հատկացված «Իրաքի տրանսֆորմացմանը՝ Մերձավոր Արևելքի ամենաբռնատիրական պետությունից բազմակուսակցական ժողովրդավարության»: Այնտեղ նշվում էր. «Իրաքի դեմոկրատացումը հաջողելու դեպքում այն ուղերձ կդառնա Դամասկոսից Թեհրանին՝ ազատությունը ցանկացած ժողովրդի ապագան համարելու համար»[250]:

Հարկ է նշել, որ Ազատության օրակարգը նոր բան չէր ԱՄՆ արտաքին քաղաքականության մեջ. այն կրկնում էր դեռևս 1950 թ. ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդի կողմից ընդունված փաստաթուղթը, որում հստակեցվում էր «ազատ աշխարհը» պաշտպանելու ամերիկյան հանձնառությունը: Սակայն այս դեպքում նորույթն այլ էր. առաջին անգամ ԱՄՆ-ն իր վրա էր վերցնում

New York, 1992, Azzam, Maha. “The Gulf Crisis: Perceptions in the Muslim World”, International Affairs 97, 1991, Indyk Martin. “Watershed in the Middle East”, Foreign Affairs 721, Winter 1992:

[249] Դրան պետք է նպաստեին Իրաքի ջրային, ցամաքային, օդային շրջափակումը, ինչպես նաև խիստ ռազմական, տնտեսական և ֆինանսական էմբարգոն:

[250] Henry Kissinger.World Order. Penguin Press, New York, 2014, p. 322.

ինքնիշխան երկրի տարածք ուղղակի ռազմական ներխուժման միջոցով «ազատությունը» պաշտպանելու առաքելությունը, ինչը հիմնականում ԱՄՆ արձագանքն էր երկու տարի առաջ՝ սեպտեմբերի 11-ին Նյու Յորքում տեղի ունեցած ահաբեկչական աննախադեպ գործողության, ինչպես նաև սառը պատերազմի պայմաններում ԱՄՆ-ի աննախադեպ հզորության և միակ գերտերության կարգավիճակը:

2003 թ. Իրաք ներխուժումը Միացյալ Նահանգները հիմնավորեց այն պատճառաբանությամբ, որ Իրաքը խախտում է ՄԱԿ-ի ԱԽ 1441 բանաձևի դրույթները[251] և աշխատում է Զանգվածային ոչնչացման, մասնավորապես միջուկային, կենսաբանական և քիմիական զենքերի (ՁՈՁ) ստեղծման վրա[252]:

Վերոհիշյալը կասեցնելու համար ԱՄՆ-ն առանց ՄԱԿ ԱԽ հավանության ընտրեց ուժային ռազմական միջոցը և Իրաքի իշխանություններին ներկայացրած 48-ժամյա վերջնագրի ժամկետը լրանալուց հետո՝ 2003 թ. մարտի 20-ի առավոտյան, ԱՄՆ-ի ղեկավարած միջազգային կոալիցիոն ուժերն[253] անցան Իրաքի սահմանը: Թեև պաշտոնապես արձանագրվել էր, որ 49 երկրներ էին մաս կազմել միջազգային դաշինքին, հիմնական ռազմական գործողությունների բեռը կրեցին Միացյալ Նահանգներն ու Մեծ Բրիտանիան: Կոալիցիայի զինուժի ընդհանուր թվաքանակը ռազմական գործողությունների սկզբնական փուլում (մարտի 19-ից մայիսի 1-ը) կազմում էր 177.194 մարդ, որից 130.000-ը՝ ԱՄՆ-ից, 45.000-ը՝ Մեծ Բրիտանիայից, 2.000-ը՝ Ավստրալիայից և 194-ը՝ Լեհաստանից:

---

[251] *https://undocs.org/S/RES/1441(2002)*, Բանաձևն ընդունվել է 2002 թ. նոյեմբերի 8-ին և քննադատության է ենթարկում Իրաքին՝ ՁՈՁ-ի հետ կապված նախկինում ընդունված բազմաթիվ բանաձևերը չիրագործելու, ինչպես նաև Իրաքին համարժեք փոխհատուցումը շարունակաբար մերժելու համար:

[252] Իրաքի ՁՈՁ-ի մասին տե՛ս *https://www.cia.gov/library/reports/general-reports-1/iraq_wmd_2004:*

[253] ՌԴ-ն, Ֆրանսիան և Գերմանիան կողմնակից էին դիվանագիտական միջոցներով խնդրի կարգավորմանը:

Նույն թվականի ապրիլի 10-ին ամերիկյան ցամաքային ուժերը ճնշեցին դիմադրության վերջին կետերը և վերահսկողություն հաստատեցին մայրաքաղաք Բաղդադի վրա, որտեղ որոշ ժամանակ շարունակվեցին փողոցային մարտերը:

Փաստորեն, ռազմական գործողությունների 21 օրվա ընթացքում դաշինքի ուժերը վերահսկողություն հաստատեցին Իրաքի գրեթե բոլոր խոշոր քաղաքների վրա: Հին զինատեսակներով զինված Իրաքի բանակն անկարող գտնվեց դիմակայելու ամերիկյան և բրիտանական ուժերին, որոնք անհամեմատ ավելի լավ էին զինված: Իրաքի բանակում տիրում էր քաոսային իրավիճակ՝ բարոյալքված հրամանատարությունը կա՛մ հանձնվում էր, կա՛մ փախչում, ուստի կոալիցիայի ուժերի համար Իրաքի գրավումը մեծ դժվարություն չներկայացրեց: Իսկ քրդական շրջաններում Մոսուլի, Քիրկուկի և այլ քաղաքների գրավման ընթացքում քրդական միլիցիան ամերիկացիների հետ միասին պայքարում էր Իրաքի հանրապետական գվարդիայի դեմ:

Այսպիսով, երիցս ավելի մեծ թվաքանակ ունեցող իրաքյան բանակը[254] ընդամենը երեք շաբաթվա ընթացքում ամբողջությամբ ջախջախվեց՝ կրելով մեծ կորուստներ:

Բանակի ղեկավարությունը բարոյալքված էր, իսկ առանց սոցիալական ամուր հենարանի անհնար էր վարել արդյունավետ պատերազմ, երկիրը տասնամյակներ ի վեր բռնի ուժով ղեկավարող սուննի փոքրամասնության ներկայացուցիչ Ս. Հուսեյնը չէր վայելում բնակչության շիա մեծամասնության վստահությունն ու հավատարմությունը, եթե չասենք ավելին: Իսկ նրա նկատմամբ քրդերի բացահայտ թշնամանքը հիմնված էր քրդական բնակչության դեմ տարբեր ժամանակահատվածներում վարչակարգի իրականացրած

[254] Պատերազմի նախօրեին Իրաքի տրամադրության տակ կար 424.000 զինծառայող, այդ թվում՝ 375.000 կանոնավոր բանակում և պահեստազոր՝ 650.000: *https://razm.info/3178:*

ծայրահեղ դաժանությունների (քիմիական զենքի և զանգվածային ոչնչացման այլ միջոցների օգտագործմամբ) հիշողությունների վրա:

Ս. Հուսեյնի տապալումից հետո ԱՄՆ և նրա դաշնակիցների առջև ծառացած առաջնային խնդիրը օրենքի և կարգուկանոնի հաստատումն էր ընդդեմ անիշխանության պայմաններում երկրում սկիզբ առած զանգվածային կողոպուտի ու գողության, հատկապես Բաղդադում, որտեղ տեղակայված էին կառավարական կառույցները: Աստիճանաբար պատերազմը վերածվեց պարտիզանական պայքարի՝ հետագայում ընդունելով քաղաքացիական կռիվների բնույթ:

Սկզբնական շրջանում՝ Ս. Հուսեյնի տապալումից հետո, ԱՄՆ-ն և կոալիցիոն ուժերն իրենց ձեռքը վերցրին Իրաքի կառավարումը: Ստեղծվեց Կոալիցիոն ժամանակավոր իշխանություն (Coalition Provisional Authority), որն օժտված էր ամենալայն լիազորություններով: Այնուհետև՝ 2004 թ. հունիսին, իշխանությունը փոխանցվեց Իրաքի ժամանակավոր կառավարությանը (Iraqi Interim Government), իսկ հաջորդ տարի՝ 2005 թ., տեղի ունեցան խորհրդարանական ընտրությունները, ինչպես նաև երկրի նոր Սահմանադրության հանրաքվեն, որի արդյունքներով էլ նույն տարվա վերջին՝ խորհրդարանական ընտրությունները[255]: Սա կարևոր քայլ էր երկրի կառավարման համակարգի, իշխանության ձևավորման և Իրաքում ժողովրդավարության հաստատման ուղղությամբ:

Փաստորեն, առաջին անգամ երկրի մեծամասնությունը կազմող շիաները մեծ թվով ձայներ ստացան խորհրդարանում և հնարավորություն ունեցան մասնակցելու երկրի կառավարմանը՝ վարչապետի մակարդակով: Իրաքի նախագահի պաշտոնը վստահվեց

---

[255] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3, Երևան, 2006, էջ 550:

քուրդ Ջալալ Տալաբանիին: Սուննիները դադարեցին Իրաքի կառավարող ուժ լինելուց, ինչը «յուրատեսակ հեղաշրջում էր», եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ դեռևս բրիտանական մանդատից սկսած՝ սուննիների ձեռքում էր կենտրոնացած ամբողջ իշխանությունը[256]:

Այսուհանդերձ, փորձագետների կարծիքով Իրաք ներխուժելու փոխարեն ԱՄՆ-ն թալիբներին ոչնչացնելուց հետո պետք է մնար Աֆղանստանում՝ կենտրոնացնելով իր ուժերը Օսամա Բեն Լադենին հետապնդելու և ոչնչացնելու վրա: Իրաքի դեմ պատերազմ սանձազերծելով՝ Վաշինգտոնը «նոր շունչ» հաղորդեց Ալ-Կաիդային և ապահովեց իսլամական ծայրահեղականության երկրորդ ծնունդը[257]:

ԱՄՆ ներխուժումից հետո Իրաքը վերածվեց ջիհադական պայքարի խոշոր ճակատներից մեկի, որտեղ ծավալված պայքարը դարձավ շատ մուսուլմանների, այդ թվում՝ «Ալ-Կաիդան Իրաքում»[258] (2004 թ.) խմբավորման հիմնադիր Աբու Մուսաբ ալ-Զարկավիի և նրա ռազմական ճամբարն անցած իսլամականների ու զինակիցների համար[259]: Գաղտնի ուղիներով Միջին Ասիայից և Հյուսիսային Աֆրիկայից իսլամականներ էին ներխուժում Իրաք՝ ԱՄՆ-ի և կոալիցիոն ուժերի դեմ ջիհադական պայքար իրականացնելու նպատակով[260]: Այդ իսլամականներից շատերը հետագայում անցան Սիրիայի տարածք՝ ավերիչ դերակատարություն ունենալով

---

[256] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3, Երևան, 2006, էջ 551:

[257] Daniel L. Byman. Iraq and the Global war on Terrorism. *https://www.brookings.edu/articles/iraq-and-the-global-war-on-terrorism/*.

[258] Հետագայում՝ Ալ-Զարկավիի սպանությունից հետո, վերանվանվեց «Իրաքում Իսլամական պետություն» (2006 թ.), այնուհետև՝ «Իրաքում և Շամում Իսլամական պետություն», իսկ 2014 թ. Իսլամական պետություն՝ Աբու Բաքր ալ-Բաղդադիի գլխավորությամբ:

[259] Գրիգորյան Ս., Իսլամական պետություն. Ակունքներից մինչև Խալիֆայության հռչակում, Երևան, 2016, էջ 62:

նաև սիրիական հակամարտության մեջ: Սակայն իրավիճակն Իրաքում առավել բարդանում էր նրանով, որ վերածելով Իրաքը ջիհադի նոր կենտրոնի՝ իսլամականները հընթացս վերափոխում էին հակաամերիկյան իրաքյան դիմադրության բնույթը՝ այն կենտրոնացնելով երկրի սուննիական շրջաններում: Իրաքի մնացյալ տարածքը՝ քրդական շրջաններից դուրս, ներքաշված էր քաղաքացիական կռիվների մեջ կամ լուծում էր փաստացի չկայացած (failed) պետությանը բնորոշ խնդիրներ:

Միջազգային կոալիցիոն ուժերը Ամերիկայի Միացյալ Նահանգների գլխավորությամբ այդպես էլ չկարողացան հստակ ապացույցներ ներկայացնել Իրաքում զանգվածային ոչնչացման զենքի առկայության մասին: Իսկ Իրաքի ղեկավար Սադդամ Հուսեյնի երկար դատավարությունից և 2006 թ. դեկտեմբերին նրան կախաղանի միջոցով մահապատժի ենթարկելուց հետո երկիրն այդպես էլ անվտանգ և կայուն չդարձավ: Ավելին, այն ընկղմվեց քաղաքացիական և կրոնական երկարատև ու արյունալի ընդհարումների մեջ: Փաստորեն, մի կողմից ստեղծվում էին սուննիական և շիական զինված ուժեր և միավորումներ, որոնք անողոքաբար պայքարում էին միմյանց դեմ, իսկ մյուս կողմից ջիհադական խմբեր, որոնք թիրախավորում էին կոալիցիոն ուժերին, մասնավորապես՝ ամերիկացիներին:

2007 թվականի մայիսին Իրաքի խորհրդարանը ԱՄՆ-ից պահանջեց զորքի դուրսբերման ժամանակացույց կազմել[261]: Դաշինքի երկրները սկսեցին ատիճանաբար դուրս գալ Իրաքից, իսկ ԱՄՆ-ն այդ գործընթացն ավարտին հասցրեց 2011 թ. դեկտեմբերի 31-ին:

---

[260] Նույն տեղում, էջ 75:

[261] *https://web.archive.org/web/20130514040204/http:/www.foxnews.com/story/0%2C2933%2C271210%2C00.html*

ԱՄՆ ներխուժումն Իրաք հանգեցրեց միլիոնավոր իրաքցիների տեղահանման և ավելի քան 183.000–205.000 իրաքցիների, ինչպես նաև ամերիկյան 4.5 հազար զինվորականների մահվան[262]:

Պատերազմն ավերիչ հետևանքներ ունեցավ համաշխարհային մշակույթի և հնագիտության համար: Թալանվեցին թանգարաններ, ոչնչացվեցին պատմական բացառիկ հուշարձաններ, Իրաքից դուրս բերվեցին մշակույթի և արվեստի բազմաթիվ անգին նմուշներ:

Իրաք ամերիկյան ներխուժման արդյունքներից մեկն էլ եղավ այն, որ 1992 թ. հիմնադրված Քրդստանի տարածաշրջանային կառավարությունն ամրապնդեց իր ինքնիշխանությունը և բռնեց անկախության ճանապարհը:

Փաստորեն, իրաքյան պատերազմը, Սադդամի վարչակարգի տապալման և ժողովրդավարության հաստատման հիմնարար նպատակներին հակառակ, Իրաքն էլ ավելի մասնատեց ազգային և կրոնական հենքի վրա՝ իրական նախադրյալներ ստեղծելով երկրի վերջնական տրոհման համար:

---

[262] 2019 թ. փետրվարի դրությամբ, ըստ՝ *Iraq Body Count database*. From the Iraq Body Count project. *https://edition.cnn.com/2015/10/26/opinions/zakaria-iraq-war-lessons/index.html*

4. Նավթային գործոնն Արաբական Արևելքում[263]

Համաշխարհային տնտեսության և միջազգային հարաբերություններում բացառիկ տեղ է զբաղեցնում նավթը՝ էներգիայի հիմնական աղբյուրը և համաշխարհային առևտրի մեջ ամենահիմնական ապրանքը: Նավթը հատուկ դեր է խաղում նաև արաբական երկրների նորագույն պատմության և ժամանակակից տնտեսության բոլոր ոլորտներում:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ Արևմուտքը պայքար ծավալեց մոսուլյան նավթի համար, «արաբներ» և «նավթ» հասկացությունները դարձան անքակտելի: Նավթային հարուստ պաշարների հայտնաբերումը փոխեց արաբական աշխարհի ճակատագիրը 20-րդ դարում: Արաբական երկրներում, ըստ առկա պաշարների մեծության հերթականության՝ Սաուդյան Արաբիա, Իրաք, Քուվեյթ, Լիբիա, Միացյալ Արաբական Էմիրություններ, Ալժիր, Եգիպտոս, Կատար, Օման, Սիրիա, Թունիս, Բահրեյն, կենտրոնացված է շուրջ 50 մլրդ տոննա նավթ՝ համաշխարհային պաշարների գրեթե կեսը: 20-րդ դարի ընթացքում այն բոլորը, ինչ ուղղակի կամ անուղղակիորեն կապված է արաբական նավթի հետ, վերաճեց խնդիրների ու հակասությունների բազմազան, ճյուղավորված և բարդ համակարգի (սկսած հանքարդյունաբերությունից

[263] Տե՛ս Закария М. Г., Яковлев А. И., Нефтяные монархии Аравии на пороге XXI в., Москва, ИИИиБВ, 1998, Ближний Восток. Нефть и политика. Серия: Проблемы общественного развития стран Азии и Африки, ИНИОН РАН, 2014, Нестабильность в Северной Африке и на Ближнем Востоке: влияние на мировой рынок нефти. Ответственный редактор: С. В. Жуков, Москва, ИМЭМО РАН, 2012, Проханов А., Шурыгин В., Ивашов Л., Сирийский армагеддон. ИГИЛ, нефть, Россия. Битва за Восток. 2016. Cordesman, H. Anthony. Energy Developments in the Middle East. Praeger, London, 2004, Falola, Toyin & Ann Genova. The Politics of the Global Oil Industry: An Introduction, Praeger, London, 2005, Skeet, Ian. OPEC: Twenty-five Years of Prices and Politics. Cambridge, 1988, Longrigg, H. Stephen. Oil in the Middle East. London, 1968, Yergin, Daniel. The Prize: The Epic Quest for Oil, Money and Power. New York: Simon & Schuster, 1991.

մինչև գաղափարախոսություն) ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային և առանձին երկրների մակարդակներով: Փորձենք ստորև քննարկել այդ համակարգի հիմնական բաղադրիչները առաջին և երկրորդ մակարդակներում:

Առաջին նավթահորի բացումն ու հեղուկ վառելիքի արդյունահանումը 1859 թ. ԱՄՆ Պենսիլվանիա նահանգում իրականացրեց ամերիկացի ֆերմեր Էդվին Դրեյքը: 1870 թ. նավթի համաշխարհային արտադրությունը կազմում էր մոտ 800 հազար տոննա, իսկ արդեն 20-րդ դարավերջում այն տարեկան հասնում էր շուրջ 4 միլիարդ տոննայի:

Նավթն առավել ակտիվորեն սկսեցին օգտագործել կերոսինի լամպերի հայտնագործումից հետո: Կերոսինի առևտրի շնորհիվ աճեց Ջոն Ռոքֆելլերի հիմնադրած «Սթանդարդ օյլ» նավթային ընկերությունը: Անցյալ դարի առաջին տասնամյակում ռազմական, իսկ այնուհետև առևտրական նավատորմն իր հնոցներում սկսեց մազութ վառել: Ներքին այրման շարժիչի ներդրումն իրական հեղափոխություն առաջացրեց նավթի արդյունահանման և նրա վերամշակման գործում: Նավթը՝ որպես հիմնական վառելիք, շատ առավելություններ ունի. նրա ջերմատվությունը մեկուկես անգամ ավելի բարձր է, քան քարածխի ամենալավ տեսակինը, հանույթի ինքնարժեքը ցածր է, փոխադրումը՝ հեշտ ու էժան: Նավթը՝ որպես հիմնական վառելիք, եկավ փոխարինելու քարածխին:

20-րդ դարասկզբին «Սթանդարդ օյլը» ընկավ ԱՄՆ հակատրեստային օրենսդրության տակ և բաժանվեց իրավաբանորեն անկախ երեք տասնյակ ընկերությունների՝ մնալով Ռոքֆելլերի տիրապետության կազմում: Նրանցից գլխավորը ռոքֆելլերյան, այսպես կոչված, «քույրերն» են՝ «Սթանդարդ օյլ օֆ Նյու Ջերսի» (հետագայում՝ «Էքսոն»), «Մոբիլ Օյլ», և «Սթանդարդ օյլ օֆ Կալիֆոր-

նիա»: Սվելի ուշ ԱՄՆ-ում հիմնադրվեցին Մելոնների «Գալֆ օյլը» և «Թեքսակոն»:

19-20-րդ դարերի սահմանագծում, Սումատրայում անգլիական «Շելլ» ընկերությունն ու հոլանդական «Ռոյալ Դատչը» համատեղ հիմնադրեցին նավթային մեկ այլ՝ «Ռոյալ Դատչ-Շելլ» ընկերությունը, որը թվով վեցերորդն էր:

«Բրիթիշ Փեթրոլեում» յոթերորդ մոնոպոլիան ստեղծվեց անմիջապես Պարսից ծոցի գոտում: 1901 թ. անգլիացի գործարար Դը Արսին և ինժեներ Ռեյնոլդսը, կոնցեսիա ձեռք բերելով Իրանի շահից (տարածությունը գերազանցում էր Անգլիայի և Ֆրանսիայի տարածքները միասին վերցրած), պայմանավորվեցին անմիջապես 20 հազար ֆունտ ստեռլինգ և այնուհետև տարեկան նավթից առաջացած շահույթի 16 տոկոսը վճարել իրանական կառավարությանը: Երկար աշխատանքներից հետո՝ 1908 թ. մայիսին, Մեսջեդե Սոլեյմանի շրջանում (Սողոմոնի տաճար) խփեց նավթի առաջին շատրվանը՝ առաջինը Ծոցի գոտում: 1909 թ. ստեղծվեց անգլո-պարսկական նավթային ընկերությունը (ԱՊՆԸ): Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, անգլիական կառավարությունը գնեց այդ ընկերության բաժնետոմսերի 51 տոկոսը՝ հսկողություն սահմանելով ԱՊՆԸ-ի վրա, որը հետագայում կոչվեց «Անգլո-իրանական նավթային ընկերություն» (ԱԻՆԸ), իսկ հետո վերանվանվեց «Բրիթիշ Փեթրոլեումի»:

Տակավին մոլեգնում էին կրքերն իրանական նավթի շուրջ, երբ Վերին Միջագետքի արևից շիկացած հարթավայրերում կոնցեսիաների համար սկսվեց անզիջում պայքարը ԱՄՆ-ի, Անգլիայի և Գերմանիայի միջև: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին ԱՊՆԸ-ն իր համար ապահովել էր ապագա ընկերության բաժնետոմսերի կեսը, «Ռոյալ Դատչ-Շելլը»՝ քառորդը, իսկ գերմա-

նական խումբը՝ մյուս քառորդը[264]: Սակայն պատերազմում Գերմանիայի պարտությունը պայքարից դուրս մղեց գերմանական կապիտալը: Իրաքն իր նավթային հանքավայրերով դրվեց անգլիական խնամակալության տակ: Կոնցեսիայի գերմանական մասը հանձնեցին Ֆրանսիային Մոսուլի վիլայեթի հավակնությունից հրաժարվելու և Ֆրանսիայի ենթամանդատային տարածքի՝ Սիրիայի միջով նավթամուղ կառուցելու համաձայնություն տալու դիմաց:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ին, ապա «քույրերը» նետվել էին արտաքին շուկա՝ ակտիվ գործունեություն ծավալելով հատկապես նշված կոնցեսիայում մասնաբաժին ձեռք բերելու նպատակով: Հաջողություն ապահովելու համար ամերիկյան քույրերը դիմեցին սեփական կառավարության օժանդակությանը: 1928 թ. ստեղծվեց «Իրաք Փեթրոլեում» ընկերությունը, որի բաժնետոմսերը բաժանվեցին հետևյալ կերպ. «ԱԻՆԸ» ստացավ 23.75 տոկոս, նույնքան էլ «Ռոյալ Դատչ-Շելլը», «Կոմպանի Ֆրանսեզ դը պետրոլը» և ամերիկյան երկու ընկերություն միասին՝ «Սթանդարդ օյլ օֆ Նյու Ջերսին» և «Մոբիլ օյլը»:

Մեծ ծախսերի հետ կապված պայքարից հոգնած՝ նավթային բիզնեսի մագնատները որոշեցին համաձայնության գալ միմյանց հետ: 1928 թ. Շոտլանդիայի ամրոցներից մեկում տեղի ունեցավ «Ռոյալ Դատչ Շելլի», «Ջերսիի» և «ԱԻՆԸ»-ի ղեկավարների պատմական հանդիպումը, որի ընթացքում նավթային երեք հսկաները պայմանավորվածություն ձեռք բերեցին՝ նավթահանության, նավթի շահագործման, վերամշակման և տեղափոխման ոլորտներում համատեղ գործելու վերաբերյալ: Հետագայում նրանց միացան նավ-

[264] Միջագետքի կոնցեսիան կապված է նաև Գալուստ Գյուլբենկյանի անվան հետ: Գյուլբենկյանի ակտիվ աջակցությամբ անգլիացիները կարողացան խափանել կոնցեսիայի հանձնումը ամերիկացիներին: Իր «ծառայությունների» համար Գյուլբենկյանը ստացավ բաժնետոնսերի 5 տոկոսը: Այդուհետ նա հայտնի դարձավ որպես «պարոն 5 տոկոս»:

թային մյուս «քույրերը»: Այսպես ծնվեց միջազգային նավթային կարտելը (համաձայնագիրը): Սահմանելով ազդեցության ոլորտի բաշխման սկզբունքներն ամբողջ աշխարհում՝ «յոթ քույրերը» հանդես էին գալիս որպես մեկ կազմակերպություն՝ միջազգային շուկայում նավթի բարձր գները պահպանելու և նավթային այլ ընկերությունների մրցակցությանը դիմակայելու նպատակով:

Միջազգային նավթային կարտելի մասնակիցները Մերձավոր և Միջին Արևելքում, Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում և Հարավարևելյան Ասիայում կոնցեսիայով կամ վարձակալությամբ ստացան մի քանի միլիոն քառակուսի կիլոմետր տարածություն: «Յոթ քույրերը» արմատավորվեցին նավթ արտադրող և սպառող երկրների միջև՝ գրեթե ամբողջությամբ խլելով նավթի միջազգային շուկայի մենաշնորհը:

Պետք է նշել, որ մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը բրիտանացիներին էր պատկանում մերձավորարևելյան նավթի արդյունահանման շուրջ 80 %-ը, իսկ ամերիկացիներին՝ միայն 14 %-ը: Սակայն անգլիացիները, որոնք վերահսկում էին Իրանի և Իրաքի հանքավայրերը, ռազմավարական խոշոր սխալ գործեցին՝ թույլ տալով ամերիկացի «քույրերից» մեկին հիմնավորվելու Սաուդյան Արաբիայում: 1932 թ. նավթի առաջին շատրվանը ժայթքեց Բահրեյնի և Սաուդյան Արաբիայի միջև ընկած հատվածում: «Սթանդարդ Օյլ օֆ Կալիֆորնիան» («Սոկալ») կոնցեսիա ստացավ Սաուդյան Արաբիայում: Անգլիացիները, իհարկե, դիմադրեցին, բայց թույլ: Այսպիսով, ամերիկյան բիզնեսն արմատավորվեց Սաուդյան Արաբիայում: «Սոկալը» որոշ ժամանակ անց բաժնետոմսերի կեսը վաճառեց «Թեքսակոյին», և նրանք միասին ստեղծեցին «Արաբիեն-Ամերիկեն Օյլ Կոմպանին»՝ «ԱՐԱՄԿՈՆ», որը դարձավ ամենախոշոր նավթահանող ընկերությունն աշխարհում:

Քուվեյթում մրցակցության մի քանի ամիսներից հետո կոնցեսիան ստացավ «Քուվեյթ օյլը», որի բաժնետոմսերը հավասար բաժանեցին «ԱԻՆԸ» և «Գալֆ Օյլը»: 1944-1945 թթ. ձմռանը հանդիպում նախապատրաստվեց ԱՄՆ նախագահ Ռուզվելտի և Սաուդյան թագավորության հիմնադիր Իբն Սաուդի միջև, և, այսպիսով, թերակղզում սկիզբ դրվեց ամերիկյան քաղաքական, իսկ այնուհետև՝ նաև ռազմական ազդեցությանը: Եթե 1950 թ. մերձավորարևելյան նավթի հանույթում ամերիկյան կապիտալի բաժինը կազմում էր մոտ 40 տոկոս, ապա 1955 թվականին հասավ 60 տոկոսի:

Այսպիսով, Միացյալ Նահանգները ստանձնեց ռազմավարական նշանակություն ունեցող Մերձավոր Արևելքի նավթային պաշարների վերահսկողությունը՝ քաղելով ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական բացառիկ օգուտներ:

Մինչև 1950-ական թվականները Մերձավոր Արևելքում գործում էր կոնցեսիոն համաձայնագրերի միանգամայն կողոպտիչ՝ ամրագրված վճարումների սկզբունքը: Այսինքն՝ մերձավորարևելյան երկրները «հում նավթի» իրացման դիմաց ընդհանուր շահույթից ստանում էին միայն 16-18 տոկոս: Եվ դա բնական էր, քանի որ կարտելի մասնակիցները կոնցեսիաները ստացան այն ժամանակ, երբ նավթով հարուստ երկրները գաղութներ էին կամ կիսագաղութներ: Կոնցեսիոն որևէ համաձայնագրով նախատեսված չէր տեղական կապիտալի մասնակցությունը նավթի հետախուզման, հանույթի, տեղափոխության, վերամշակման և արտադրական կամ վաճառահանման այլ օպերացիաներին: Նավթային երկրները, փաստորեն, զրկված էին սեփական միջոցներով թե՛ նավթի ինքնուրույն արդյունահանման և թե՛ նավթարտադրության վերոնշյալ բոլոր գործընթացներին մասնակցելու հնարավորությունից:

1950-1954 թթ. Իրանում և անկախություն ձեռք բերած արաբական մի շարք երկրներում ազգային հարստությունների համար

ծավալված պայքարին մասնակից նավթ արտահանողները մշակեցին եկամուտները բաշխելու նոր չափաքանակներ: Սահմանվեց, այսպես կոչված, «ֆիֆթի-ֆիֆթի» (50:50) սկզբունքը, որով ձևականորեն նախատեսվում էր հավասար մասերի բաժանել «հում նավթի» վաճառքից ստացված շահույթը «տեղեկատու» գների հիման վրա: Հաշվարկը կատարվում էր ոչ միայն նավթի արհեստականորեն իջեցված տեղեկատու գների հիման վրա, այլև, օգտվելով արաբական երկրների կառավարությունների անիրազեկությունից կամ դիմադրելու անկարողությունից, հաստատված շահույթի կեսի մեջ, համաձայն «քույրերի թեթև ձեռքով» հաստատված կարգի, մտցվում էին թե՛ վարձակալության վճարը և թե՛ շահույթներից ստացված հատկացումները:

Փաստորեն, նոր համակարգը նավթի տնօրեն երկրներին թողնում էր շահույթի 50 տոկոսից էլ պակաս: Մոնոպոլ-կոնցեսիոն երկրները շահագրգռված էին նավթի վաճառքը կատարել ցածր գներով, քանի որ նրանք, այն հանձնելով իրենց մասնաճյուղերի ձեռքը, նավթի և նավթամթերքների շարժման հաջորդ փուլերում համապատասխանաբար ավելացնում էին շահույթները: Հատկացումների մեխանիզմը «յոթ քույրերին» թույլ էր տալիս շուկայի կայուն իրավիճակում ամենաբարձր շահույթները ստանալ, իսկ վատանալու դեպքում՝ նավթի տերերի վրա դնել կորստի զգալի մասը:

1960 թ. ամռանը «Սթանդարդ օյլ օֆ Նյու Ջերսի» ընկերությունը մի քայլ արեց, որը, ինչպես երբեք, միավորեց Մերձավոր և Միջին Արևելքի նավթ արտադրող պետություններին: «Ջերսին» իջեցրեց մերձավորարևելյան նավթի տեղեկատվական գինը: Շուտով մյուս խոշոր ընկերություններն էլ հետևեցին նրա օրինակին: Բաղդադից մինչև Էռ-Ռիադ, Թեհրանից մինչև Քուվեյթ կառավարություններն այդ անարդարության վերաբերյալ արտահայտում էին

իրենց ծայրաստիճան զայրույթը: Նավթային երկրները որոշեցին միավորվել, գների իջեցումն արգելել և սահմանել տեղեկատու գնի նոր համակարգ, որի հիման վրա նավթային ընկերության շահույթներից կատարվում էին հատկացումներ: Բաղդադում 1960 թ. սեպտեմբերին տեղի ունեցած խորհրդակցությունն հանգեցրեց «Նավթ արտահանող երկրների կազմակերպության» (ՆԱԵԿ/OPEC) ստեղծմանը: Սկզբում դրա մեջ էին մտնում Իրանը, Իրաքը, Քուվեյթը, Սաուդյան Արաբիան և Վենեսուելան: Ավելի ուշ նրան միացան Արաբական Միացյալ Էմիրությունները, Կատարը, Լիբիան, Ալժիրը, Ինդոնեզիան, Նիգերիան, Էկվադորը, Գաբոնը:

ՆԱԵԿ-ի անդամները պահանջեցին նավթի համար սահմանել հաստատուն տեղեկատու գին և այն բարձրացնել իր նախկին մակարդակին, որը չպետք է փոփոխվեր առանց արտահանող երկրների կառավարությունների հետ նախապես խորհրդակցելու: Պարսից ծոցի գոտու ՆԱԵԿ-ի մասնակիցների երկրորդ պահանջն այն էր, որ վարձակալության վճարը մտցվեր ընկերության շահագործման ծախսերի մեջ, իսկ եկամտահարկը 50 տոկոսով հանվեր մնացած գումարից: Վերջապես ՆԱԵԿ-ի անդամները հրաժարվեցին իրենց վրա վերցնել ընկերության առևտրական ծախսերի մի մասը:

ՆԱԵԿ-ի մղած պայքարն առաջին լուրջ արդյունքը տվեց 1970 թ. դեկտեմբերին՝ Կարակասում կազմակերպության 21-րդ նստաշրջանի ժամանակ, երբ նավթ արտահանող երկրները նավթային ընկերություններից պահանջեցին վերանայել «50:50» հաշվարկային սկզբունքը: 1971 թ. Թեհրանում ստորագրվեց համաձայնագիր ՆԱԵԿ-ի վեց երկրների և տարածաշրջանում գործող ամերիկյան, անգլիական, ֆրանսիական և հոլանդական ընկերությունների միջև, որի համաձայն, հաշվի առնելով սղաճի տեմպերը, նախատեսվում էր նավթի տեղեկատու գների տարեկան բարձրացում,

մինչև 55 տոկոս «հում նավթի» իրացումից առաջացած շահույթի տրամադրում նավթ արտահանող երկրներին վարձակալման վճարի՝ «ռոյալթիի» (որպես վճարումների ինքնուրույն տեսակի) առանձնացում: Համաձայնագրի կարևորագույն արդյունքն այն էր, որ վերջ դրվեց «ֆիֆթի ֆիֆթի» համակարգին, և պատմության մեջ առաջին անգամ մերձավորարևելյան երկրների համար ձեռնտու շահույթի բաշխման ձև սահմանվեց:

Սկզբունքորեն կարևոր առանձնահատկություն դարձավ 1967 թ. սկսած արաբական երկրների կողմից որպես ճնշման միջոց նավթի օգտագործումը ԱՄՆ և արևմտյան այլ երկրների վրա: 1967 թ. արաբա-իսրայելյան «վեցօրյա» պատերազմի հետևանքով արաբական երկրները կասեցրին նավթի արտահանումը Իսրայելին աջակցող՝ ԱՄՆ և ՆԱՏՕ-ի որոշ երկրներ: Լիբանանը և Սիրիան ընդհատեցին նավթի առաքումներն իրենց տարածքով: Չնայած նավթային էմբարգոն տևեց հունիսից-սեպտեմբեր և չէր կարող լրջորեն վատթարացնել իրավիճակը նշված երկրների ներքին շուկաներում ու շոշափելիորեն կրճատել նավթային մոնոպոլիաների շահույթները, այնուամենայնիվ արաբական երկրների այդ քայլը տեսանելի դարձրեց «արաբական զենքի» ոչ սակավ հնարավորությունները:

1973 թ. արաբա-իսրայելյան պատերազմի ընթացքում արաբական երկրները նույնպես նավթը հաջողությամբ օգտագործեցին որպես քաղաքական զենք, սակայն ոչ առանց տարաձայնությունների՝ նավթային էմբարգոյի շարունակման նպատակահարմարության, դադարեցման և այլ հարցերի շուրջ: Այսուհանդերձ, նավթի առաքման կասեցումը (էմբարգո), որին մասնակցեցին Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Բահրեյնը, ԱՄԷ-ն, Իրաքը, Կատարը, Եգիպտոսը, Սիրիան, Ալժիրը և Լիբիան, տևեց 5 ամիս: Այն լրջորեն ապակայունացրեց իրավիճակը ԱՄՆ-ում, Ճապոնիայում, արև-

մտաեվրոպական այլ երկրներում: 1975 թ. սեպտեմբերին Միացյալ Նահանգների պետքարտուղար Հենրի Քիսինջերը, ելույթ ունենալով Օհայո նահանգում, հայտնեց, որ ԱՄՆ-ում էմբարգոն հանգեցրեց 500 հազար աշխատատեղերի փակման և 10 մլրդ դոլարով ազգային համախառն արտադրանքի կրճատման:

Արաբական աշխարհում «նավթային» ակտիվ քաղաքականություն է վարում 1968 թ. ստեղծված «Նավթ արտահանող արաբական երկրների կազմակերպությունը» (ՆԱԱԵԿ/OAPEC), որին անդամակցում են արաբական 10 երկրներ՝ Սաուդյան Արաբիան, Իրաքը, Քուվեյթը, Բահրեյնը, ԱՄԷ-ն, Կատարը, Եգիպտոսը, Լիբիան, Ալժիրը և Սիրիան: ՆԱԱԵԿ-ի շրջանակներում իրականացվում է արաբական պետությունների նավթային քաղաքականության համակարգումը, համատեղ քայլեր են ձեռնարկվում ազգային նավթային արդյունաբերության զարգացման (նավթամշակման և տրանսպորտային), մոնոպոլիաների գործառույթների սահմանափակման, «նավթային զենքի» օգտագործման ուղղությամբ:

70-ական թվականներին արաբական երկրներում տեղի ունեցող ներքին քաղաքական կտրուկ փոփոխություններն իրենց հերթին համաշխարհային նավթային համակարգում հեղափոխական տեղաշարժերի տեղիք էին տալիս: Միանգամայն հստակ էր, որ կոնցեսիաների և նավթապաշարների շահագործման կիսագաղութային մեթոդներն իրենց սպառել են: Այսպես, 1972 թ. հունիսի 1-ին Իրաքի հանրապետության հեղափոխական հրամանատարության խորհուրդն օրենք ընդունեց՝ Իրաք Փետրոլեում Կոմպանիի (ԻՓԿ) սեփականությունն ազգայնացնելու մասին: Նույն օրը Սիրիայի նախագահը հայտարարեց այդ երկրի տարածքում գտնվող ԻՓԿ-ի ամբողջ ունեցվածքի ազգայնացման մասին:

1979 թ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխության հետևանքով Արևմուտքը զրկվեց նաև նավթի այդ խոշորագույն

աղբյուրից: Սակայն ոչ բոլոր նավթարդյունաբերող երկրներն էին տնտեսական ինքնուրույնության գնում հեղափոխական միջոցներով: Նրանցից ոմանք նախապատվությունը տալիս էին աստիճանական վերափոխումներին: Այնուամենայնիվ, օգտագործելով նավթի առաքումներից Արևմուտքի աճող կախվածության հանգամանքը՝ ՆԱԵԿ-ի անդամ նավթարդյունաբերող երկրներն արդեն 1980 թ. գրեթե վերացրել էին անհավասար կոնցեսիաների համակարգը, ազգայնացրել էին իրենց տարածքում գտնվող օտարերկրյա մոնոպոլիաների սեփականությունը և սկսել էին պայքարել պատրաստի արտադրանքի և հումքի միջև գնային հարաբերակցությունը նվազեցնելու ուղղությամբ:

«Նավթադոլարների» հեղեղը, որն անցյալ դարի 70-80 թթ. թափվեց արաբական երկրների, հիմնականում Արաբիայի միապետությունների վրա, ուղղվեց այդ երկրներում զարգացման վիթխարի նախագծերի իրականացմանը: Եվ եթե ժամանակին խոսվում էր միջազգային նավթային մոնոպոլիաների «յոթ քույրերի» մասին, ապա տնտեսագետները սկսեցին օգտագործել «յոթ եղբայրներ» արտահայտությունը՝ նկատի ունենալով նավթարդյունահանող երկրներում ստեղծված ֆինանսական խոշոր հիմնադրամները՝ «Զարգացման Սաուդյան հիմնադրամը», Աբու-Դաբիում «Արաբական տնտեսական զարգացման հիմնադրամը», «Արաբական երկրների տնտեսական զարգացման Քուվեյթի հիմնադրամը», Արաբական երկրների լիգայի կողմից ստեղծված« Տնտեսական և սոցիալական զարգացման հիմնադրամը», ինչպես նաև 1974 թ. և 1975 թ. հիմնադրված Տնտեսական զարգացման արաբական և Զարգացման իսլամական բանկերը: Գոյություն ունի նաև «ՆԱԵԿ միջազգային զարգացման հիմնադրամը», որին արաբական երկրները հատկացնում են նրա ամբողջ միջոցների 52 %-ը:

Անհրաժեշտ է նշել նաև այն հանգամանքը, որ նավթային գործոնը մեծապես նպաստեց արաբական աշխարհի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Նավթ արտահանող երկրներն իրենց զարգացման մակարդակով «պոկվեցին» արաբական մյուս երկրներից՝ վերածվելով հատուկ արտոնյալ խմբի: Նավթային գործոնն ազդում է արաբական երկրների ոչ միայն ներքին՝ տնտեսական, սոցիալական, գիտական, մշակութային զարգացման, այլև նրանց միջև քաղաքական համագործակցության վրա: Այսպես, Սաուդյան Արաբիան նավթից ստացված եկամուտների շնորհիվ աստիճանաբար իր ազդեցությունը տարածում է արաբական աշխարհում: Հենվելով իսլամական սրբավայրերի (Մեքքա և Մեդինա) վերահսկողության վրա, իր տրամադրության տակ ունենալով անսահմանափակ ֆինանսական կարողություններ և ցուցաբերելով տնտեսական օժանդակություն, ելնելով արտաքին քաղաքական գերակայություններից՝ սաուդյան արքունիքը հավակնում է արաբական աշխարհի առաջնորդի դերին և կարևոր դերակատարություն ունի միջարաբական հարաբերություններում:

Մի կողմից նավթն աներևակայելիորեն հարստացրեց արաբական, մասնավորապես Ծոցի երկրներին՝ լայն հնարավորություններ ստեղծելով նրանց տնտեսական զարգացման համար, մյուս կողմից այդ երկրներին մշտապես կախվածության մեջ պահելով միջազգային շուկայի տատանումներից: Իր հերթին Վաշինգտոնի քաղաքականությունն արաբա-իսրայելյան հակամարտության նկատմամբ, գերտերության կայսերական խնդիրներն ու մեթոդներն անխուսափելիորեն հակազդեցություն են առաջացնում արաբական աշխարհում, որտեղ ժողովրդական շարժումները գնալով աստիճանաբար սկսում են կրել հակաամերիկյան բնույթ՝ անցնելով ինչպես աշխարհիկ, այնպես էլ կրոնական կարգախոսների: 2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած հրեշավոր ահաբեկչությունն ու դրան հետևած զարգացումները վերոհիշյալի ապացույցներից մեկն էր:

5. ՋՐԱՅԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ[265]

Համաշխարհային ջրային պաշարների 97 %-ը կազմում են օվկիանոսների ջրերը, որոնք պիտանի չեն խմելու և գյուղատնտեսության ու արդյունաբերական նպատակների համար: Ջրային ողջ պաշարների միայն 3 %-ը կարող է բավարարել մարդկանց կարիքները: Սակայն դրանց 2 %-ից ավելին գտնվում է սառույցների և ստորգետնյա խորը ջրավազանների տեսքով ու նույնպես չի կարող օգտագործվել: Փաստորեն, երկրագնդի ջրային պաշարների միայն 0.36 %-ը, որ կազմում են գետերն ու լճերը, կարող է համարվել մաքուր ջրի աղբյուր: Վերջինիս աշխարհագրական անհավասար բաշխումն առավել ցայտուն երևում է Մերձավոր Արևելքում, որը Հյուսիսային Մեքսիկայի և Աֆրիկայի նման ջրային սուր կարիք ունեցող տարածաշրջաններից է:

Եթե համաշխարհային նավթային պաշարների օգտագործումն ու արդյունավետ վերահսկումը, դեռևս 20-րդ դարասկզբից սկսած,

[265] Hillel, Daniel. Rivers of Eden: The Struggle for Water and the Quest for Peace in the Middle East. Oxford University Press, New York, 1994, Zeitoun, Mark. Power and Water in the Middle East. The Hidden Politics of the Palestinian-Israeli Water Conflict, I.B.Tauris, 2011, International Waters of the Middle East: From Euphrates-Tigris to Nile, edited by Asit K. Biswas, Oxford University Press, 1994, Kliot, Nurit. Water Resources and Conflict in the Middle East. New York, Routledge, 1994, Murakami, Masahiro. Managing Water for Peace in the Middle East: Alternative Strategies. New York, United Nations University Press, 1995, National Research Council (U.S.). Committee on Sustainable Water Supplies for the Middle East. Water for the Future: The West Bank and Gaza Strip, Israel, and Jordan. Washington, National Academy Press, 1999, Shapland, Greg. Rivers of Discord: International Water Disputes in the Middle East. New York, St. Martin's Press, 1997, Sherman, Martin. The Politics of Water in the Middle East: An Israeli Perspective on the Hydro-Political Aspects of the Conflict. New York, St. Martin's Press, 1999, Water, Peace and the Middle East: Negotiating Resources in the Jordan Basin, Hydropolitics Along the Jordan River: edited by John A. Allan. New York, St. Martin's, 1996, Wolf, Aaron T. Scarce Water and Its Impact on the Arab-Israeli Conflict. New York, United Nations University Press, 1995, Water and Conflict in the Middle East. Edited by Marcus Dubois King, London, 2019.

գտնվում են գիտնականների ու քաղաքական գործիչների ուշադրության կենտրոնում, ապա ջրային խնդիրը, որոշակիորեն անտեսվելով, 21-րդ դարում պետությունների խոշորածավալ հակամարտությունների հիմնական պատճառներից մեկը կարող է դառնալ:

Ջրային հիմնախնդիրը Մերձավոր Արևելքում երկար պատմություն ունի, և ներկայումս էլ պահպանվում է այդ վտանգավոր հակամարտության բռնկման հնարավորությունը, քանի որ տարածաշրջանի քաղաքական սահմանները գծող ազգային և կրոնական տարբեր խմբավորումները արժանվույնս հաշվի չեն առնում կենսական ջրային գործոնը: Փաստորեն, բոլոր գետերը և հիմնական ջրավազանները գտնվում են միջազգային վերահսկողության տակ և համատեղ օգտագործվում են տարբեր երկրների կողմից: Ջրի պակասը Մերձավոր Արևելքում արդեն իսկ խոչընդոտում է արդյունաբերական զարգացմանը: Տարածաշրջանի բնակչության աճն ամենաբարձրն է աշխարհում. եթե 20-րդ դարի վերջում այնտեղ բնակվում էր շուրջ 425 մլն մարդ, ապա այսօր այդ թիվը կարող է կրկնապատկված լինել: Ջրային հակամարտությունը Մերձավոր Արևելքում բարդանում է նաև արաբա-իսրայելյան հակամարտության առկայությամբ, ռազմական բախումների, քաղաքական անկայունության, անապատների և կլիմայական բարդ պայմանների գոյությամբ:

Մերձավոր Արևելքում ջրային հակամարտությունը ծավալվում է չորս հիմնական՝ Տիգրիս-Եփրատյան, Նեղոսի, Հորդանան գետի ջրավազանների և Արևմտյան ափի արտեզյան աղբյուրների ջրային համակարգերի շուրջ, որոնց օգտագործման շրջանակում էլ ծավալվում է պայքարը հարակից երկրների միջև: Միջազգային իրավունքում լիովին արտացոլված չէ ջրային ռեսուրսներից համատեղ օգտվելու խնդիրը: Գոյություն ունեցող տեսություններից մեկի համաձայն, որը հայտնի է «Հարմոնի հայեցակարգ» (Harmon Doctrine)

անվանումով, ջրավազանի վերին մասում գտնվող պետությանն է վերապահվում ջրի օգտագործման ողջ իրավունքը: Գոյություն ունեցող մեկ այլ մոտեցումն է՝ ջրային պաշարների հավասար բաշխումը հարևան պետությունների միջև: Այսպիսով, գետերի ակունքները վերահսկող երկրները պնդում են, որ իրենք պետք է վերցնեն այնքան ջուր, որքան ուզում են, իսկ գետերի ստորին հոսանքներում գտնվող երկրները միշտ առարկել են այս տեսակետի դեմ:

Ա. Տիգրիս-եփրատյան ավազանը

Թուրքիան, որ վերահսկում է Տիգրիս-եփրատյան ավազանի ակունքը՝ ջրային զանգվածի 20 %-ը, իր պայմաններն է թելադրում գետերի ստորին հոսանքում գտնվող երկրներին՝ Իրաքին և Սիրիային, որոնք համապատասխան հատվածում վերահսկում են ավազանի 66 %-ը: Թուրքիան ձեռնամուխ է եղել «Հարավարևելյան Անատոլիայի նախագիծ» (GAP) կոչվող ջրային ռեսուրսի կառավարման ընդարձակ համակարգի ստեղծմանը: Տնօրինելով գետերի վերին ափամերձ տարածքները՝ Թուրքիան իր ջրային ռեսուրսների օգտագործման նպատակով նախաձեռնել է 22 ամբարտակների և 25 ոռոգիչ համակարգերի կառուցման գործը: Իրաքն ու Սիրիան մտավախություն ունեն, որ եթե Թուրքիան սկսի լցնել իր ջրամբարները, ապա իրենց կողմ հոսող ջուրը կարող է էականորեն նվազել՝ վնաս հասցնելով գյուղատնտեսությանը: Իր գործողությունները Թուրքիան փորձում է արդարացնել հետևյալ կերպ. «Եթե արաբական երկրները միայնակ շահագործում են իրենց նավթային պաշարները, ինչու Թուրքիան պետք է նրանց հետ կիսի իր ջրային ռեսուրսները»[266]:

[266] "*The Strategic Importance of Water*," by Kent Hughes Butts US Army War College Quarterly, Spring, 1997, Vol. XXVII, No. 1.

Թուրքիայի ոռոգման ընդարձակ համակարգն արդեն իսկ էապես թուլացնում է ջրի հոսքը: Խնդիրն այն է, որ ոռոգելի հողերի հետ հեռացող քիմիական տարրերն ու աղերը շարունակ որակազրկում են Սիրիա և Իրաք հասնող ջրերը: Հետևաբար երկու երկրներն էլ ռազմավարական տեսանկյունից խոցելի են դարձել Անկարայի կայացրած վերոհիշյալ նախագծերի իրականացման որոշումից հետո: Սակայն արաբական այդ երկրները ի զորու չեն տարածաշրջանի հզոր ռազմական պետություններից մեկի՝ Թուրքիայի նմանօրինակ վարքագծի դեմ ռազմական, քաղաքական կամ տնտեսական լուրջ լծակներ գործադրել: Ավելին, ամբարտակն անհնար է ոչնչացնել, քանի որ նույնիսկ նրա չնչին իսկ ճեղքման դեպքում գետը կարող է վարարել և մեծ ավերածություններ պատճառել ափամերձ քաղաքներին ու ոռոգման համակարգերին: Հաշվի առնելով Սիրիայի և Իրաքի միջև առկա տարաձայնությունները՝ դժվար է նաև ակնկալել, որ այդ երկրները միասնական հակադարձ ու արդյունավետ քայլեր կձեռնարկեն: Նրանց միջև հնարավոր համաձայնության միակ կետը թերևս այն է, որ երկուսն էլ սատարում են քրդական փոքրամասնությանը Թուրքիայի դեմ պայքարում: Ի պատասխան՝ Թուրքիան դիմում է կտրուկ միջոցների ու սպառնալիքների ընդհուպ մինչև դեպի հարևա ն երկրներ գետի ջրային հոսքի ամբողջական կասեցումը՝ հավելյալ լարվածություն ստեղծելով առանց այդ էլ պայթունավտանգ տարածաշրջանում:

Բ. Նեղոսի ավազանը

Նեղոսը Եգիպտոսի սիրտն է և երկրի բնակչության պաշտամունքի առարկան՝ վաղնջական ժա մանակներից սկսած: Եվ իսկապես, դեռ ինքնաթիռից կարելի է տեսնել Նեղոսի շնորհիվ ծաղկող գյուղատնտեսական կանաչ տարածքները, որոնք գետի բացակա-

յության պայմաններում պարզապես կվերածվեին անապատի: Եգիպտոսն իր ջրային կարիքների շուրջ 97 %-ը բավարարում է Նեղոսի հաշվին: Պատմության ողջ ընթացքում Եգիպտոսի կառավարիչները կամք ու վճռականություն են դրսևորել Նեղոս գետի իրենց հատվածը պաշտպանելու հարցում:

Եգիպտոսն իր աշխարհագրական դիրքով աշխարհի ամենաերկար գետի ափամերձ պետություններից վերջինն է: Գետի երկայնքով տեղաբաշխված են ութ պետություններ, որոնք նախքան Նեղոսի Եգիպտոս հասնելը, օգտվում են գետի ջրային պաշարներից: Ջրային խնդրի և Նեղոսի ջրավազանի շուրջ հիմնական հակամարտությունը ծավալվում է Եգիպտոսի, Սուդանի, Եթովպիայի և Լիբիայի միջև: Նեղոսի ջրերի օգտագործման հարցը Եգիպտոսի ու Իսրայելի միջև բանակցությունների առարկա է դառնում 1978 թվականից ի վեր, երբ առանց որևէ գործնական արդյունքի քննարկման դրվեց խոշորագույն այդ գետի ջրային պաշարների «համատեղ օգտագործման» հարցը:

Կապույտ Նեղոսի 85 %-ը, Եթովպիայից շարունակելով իր հոսքը մտնում է Սուդան, որտեղ միանալով Սպիտակ Նեղոսի հետ և Խարտումում թողնելով ջրերի 15 %-ը՝ հոսում է Եգիպտոս: Եգիպտոսի և Սուդանի միջև Նեղոսի ջրօգտագործման հարցը կարգավորվում է 1959 թ. կնքված համաձայնագրով, ըստ որի՝ Նեղոսից 55,5 մլրդ խորանարդ մետր ջուր՝ 60%-ը, հատկացվում է Եգիպտոսին, իսկ 18,5 մլրդը՝ Սուդանին: Ներկայումս Սուդանում արմատական մահմեդական կառավարիչները փորձում են խուսափել համաձայնագրի պահանջների կատարումից:

Ավելցուկային ջրերի խնայողության և նվազ ջրապարունակող շերտերում հավելյալ անցքերի բացման շնորհիվ Եգիպտոսին 1990 թ. հաջողվեց իր ջրային պաշարներն ավելացնել 63.5 մլրդ խոր. մետրով, իսկ 2000 թ. տվյալներով Եգիպտոսի իրական պահան-

ջարկն արդեն կազմում էր մոտ 70 մլրդ (պետք է նկատի ունենալ, որ Եգիպտոսի բնակչությունը 2027 թ. կկրկնապատկվի):

Եգիպտոսին չեն կարող չանհանգստացնել նաև Եթովպիայի՝ երկրի լեռնային շրջաններում ջրամբարներ կառուցելու ծրագրերը: Թոթափելով Մենգիստուի վարչակարգը՝ Եթովպիայի ղեկավարությունը ձգտում է խթանել երկրի տնտեսական զարգացումը: Վերջինս անհնար է իրականացնել առանց Կապույտ Նեղոսի ջրերի լայն օգտագործման: Ամբարտակները պետք է ապահովեն ինչպես հողերի ոռոգումը, որոնք թեև պտղաբեր, սակայն չոր են, այնպես էլ նորագույն արդյունաբերության համար պահանջվող հիդրոէլեկտրաէներգիան: Այս հարցում Եգիպտոսի դրսևորած անհաշտ կեցվածքը հավանաբար կհանգեցնի նախագծերի կասեցմանը, ինչպես դա տեղի ունեցավ 1989 թ., երբ Կահիրեն սպառնաց պատերազմ հայտարարել Եթովպիային իսրայելյան մասնագետների հետ համատեղ ջրամբարների կառուցման նախագծերը կյանքի կոչելու պարագայում:

Լիբիայում իրականացված ջրային նախագծերը, որոնց համաձայն ստորգետնյա ջրերը հզոր պոմպակայաններով ջուր են արտամղում՝ ապահովելով երկրի հյուսիսային շրջանների կարիքները, մեծապես ազդում են Նեղոսի մակարդակի վրա և բարդություններ առաջացնում Եգիպտոսի և Լիբիայի հարաբերություններում: Այնուամենայնիվ, տարածաշրջանի բնակչության սրընթաց աճն ու անընդհատ երաշտները մեծացնում են այս կարևոր գետի շուրջ հակամարտությունների հավանականությունը:

Գ. Հորդանանի ավազանը

Հորդանան գետի ավազանի շուրջ ընթացող հակամարտությունը համապարփակ բնույթ ունի և ներկայումս ջրային ամենաբարդ խնդիրներից մեկն է: Արաբա-իսրայելյան հակամարտության

տարբեր փուլերում այն կողմերի համար առանցքային նշանակություն է ունեցել: Չնայած Հորդանան գետի արտահոսքը երկու տոկոսով զիջում է Նեղոսին, սակայն, անկասկած, կենսական մեծ նշանակություն ունի ափամերձ երկրների՝ Իսրայելի, Հորդանանի, Սիրիայի, Լիբանանի և Պաղեստինյան նոր պետության համար: Հորդանան գետը սնվում է չորս գետերից՝ Դան, Հասբանի, Բանիաս և Յարմուկ: 1967 թ. պատերազմի ընթացքում արաբական երկրներից բռնագրավված հողերի ու Լիբանանի հարավում անվտանգության գոտու ստեղծման միջոցով Իսրայելը դե ֆակտո դարձավ Հորդանան գետի ավազանի ամենամեծ ափամերձ երկիրը, ինչը վերջինիս հնարավորություն ընձեռեց վերահսկելու Հորդանան գետի ջրերի ու նրա գետափի մեծ մասը: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև 1967 թ. Իսրայելի գրաված Գոլանի բարձունքներում Բանիասի ջրերի ակունքների առկայության հանգամանքը, որտեղից ջրերը լցվում են Գալիլեյան լիճը՝ Իսրայելի մաքուր ջրի միակ ավազանը, որն ապահովում է երկրի ջրային կարիքների 1/3-ը: 1991 թ. Մադրիդում մեկնարկած խաղաղության գործընթացի շնորհիվ հաջողվեց ստորագրել իսրայելա-հորդանանյան խաղաղության համաձայնագիրը, որով, սակայն, ճանաչվեց միայն Հորդանանի «ներքին օգտագործման նպատակով ջրային նվազագույն կարիքները հոգալու» իրավունքը: Իսրայելը դժվար թե տարածքներ վերադարձնի՝ առանց հաշվի առնելու կենսական ջրային գործոնը: Իսրայելի մինչ օրս բռնազավթած Գոլանները, ինչպես նաև անգամ Լիբանանի հարավից իսրայելյան ուժերի դուրսբերումից հետո այնտեղ Շեբաա ագարակների (Shebaa farms) շուրջ ծագած պայքարը, վերն ասվածի վառ ապացույցն են:

Դ. Արևմտյան ափի ջրային աղբյուրը

Ջրային մեկ այլ հակամարտություն կենտրոնացված է Արևմտյան ափում, որտեղ հիմնական պայքարը ծավալվել է Իսրայելի կողմից դեպի Յարքոն Տանինիմ ջրի ստորգետնյա արտեզյան աղբյուր (aquifer)՝ մուտքի իրավունքի համար: Իսրայելը 1967 թ. արաբա-իսրայելյան պատերազմից ի վեր շրջափակել է պաղեստինյան Արևմտյան ափն ու անխնա շահագործում է նշված ջրային պաշարները: Արևմտյան ափը, բարձրավանդակ լինելով, կասեցնում է տեղումների հոսքը Միջերկրական ծով, իսկ նրա արտեզյան ջրաշերտը թեքվում է դեպի Արևմտյան ափ և հատում նախկին իսրայելյան սահմանային Կանաչ գիծը: Իսրայելն այժմ խիստ կախված է արտեզյան այս աղբյուրից, որը կազմում է երկրի ջրի կենցաղային սպառման 25-40 %-ը: Մինչև 1990 թ. սահմանափակումների իրականացումը Իսրայելը հետևողականորեն բարձրացնում էր արտեզյան ջրերի շահագործման սահմանված նորմաները՝ խստորեն վերահսկելով պաղեստինցիների ջրօգտագործումը: Այս ջրերի մոտ 80 %-ից օգտվում են իսրայելցիները, իսկ Արևմտյան ափից պաղեստինցի բնակիչներին հիմնականում բաժին է ընկնում ընդամենը 20%-ը: Չնայած Իսրայելն ի վիճակի է շարունակելու արտեզյան ջրերի արտամղումը դեպի Կանաչ գծի արևմտյան՝ իսրայելյան հատված, այնուամենայնիվ Արևմտյան ափի հանձնումը պաղեստինյան հսկողությունն անխուսափելիորեն կհանգեցնի պոմպերի մեծամասնության վրա Իսրայելի հսկողության կորստին, ինչը կարող է մեծացնել թունավոր թափոնների և այլ արտանետումների հավանականությունը, որն իր հերթին կհանգեցնի ջրի որակազրկմանը: Մի խոսքով, ջրային այդ աղբյուրից Իսրայելի ունեցած կախվածության հանգամանքը մեծապես ազդում է պաղեստինյան տարածքների նկատմամբ Իսրայելի որդեգրած ռազմավարության վրա:

Մինչդեռ Իսրայելը ոռոգման կոմերցիոն տեխնոլոգիաների առումով հաճախ է բարձր գնահատականի արժանանում այդ ոլորտի մասնագետների կողմից, սակայն նրա ընդհանուր ջրային ռեսուրսների կառավարումն անթերի չէ: Բյուրեղյա հարթավայր (Crystal Plain) կոչվող արտեզյան ջրերի երկրորդ աղբյուրը, որ բացառապես Իսրայելի տարածքում է գտնվում և հոսում է ափի երկայնքով, խիստ նվազել է: Միջերկրական ծովից տեղի է ունենում աղի ջրերի ներհոսք, և գյուղատնտեսական թափոններից արտազատվող աղն ու նիտրատներն աղտոտում են այս արժեքավոր ջրերի առնվազն 20 %-ը:

Արդի աշխարհում ջրային սակավությունը ոչ միայն շրջակա միջավայրի անվտանգության խնդիր է, այլև մշտապես ապակայունացնող գործոն է երկրագնդի տարբեր մասերում: Բնակչության աճը, ջրի պահանջարկն ու բնակլիմայական պայմանների գլոբալ փոփոխությունները 21-րդ դարում կարող են հանգեցնել աշխարհաքաղաքական շոշափելի փոփոխությունների: Կարող ենք վստահ լինել, որ 21-րդ դարում ջրային խնդիրը ընդմիշտ հիշեցնելու է միջազգային հարաբերություններում և ռազմաքաղաքական հարցերում աշխարհագրական ցուցանիշների կարևորության մասին: Իսկ Մերձավոր Արևելքում ջրային հակամարտությունն ակնհայտ ծավալման միտումներ է դրսևորում ոչ միայն Իսրայելի և իր հարևան արաբական երկրների, այլև հենց արաբական երկրների միջև, ինչը տարածաշրջանի համար հղի է անկանխատեսելի հետևանքներով:

ԳԼՈՒԽ Դ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

1. 1991թ. Մադրիդյան մերձավորարևելյան համաժողովը՝ խաղաղության նոր գործընթացի սկիզբ (1990-2000 թթ.)

1989 թ.՝ ԱՄՆ նախագահի պաշտոնում Ջորջ Բուշի ընտրվելուց հետո, արաբական աշխարհը սկսեց հույսեր փայփայել, որ ԱՄՆ-ն ի վիճակի կլինի լուրջ քայլեր ձեռնարկել արաբա-իսրայելյան հակամարտության կարգավորման և տարածաշրջանում արդար ու համապարփակ խաղաղության հաստատման ուղղությամբ: «Որպես միջազգային անվտանգության և խաղաղության համար պատասխանատու գերտերություն՝ ԱՄՆ-ն պետք է հրաժարվի սիոնիստական մտածելակերպից և վերջ դնի սիոնիստական վտանգին, ստիպելով սիոնիստ թշնամուն դուրս բերել զորքերը գրաված տարածքներից և իրագործել միջազգային որոշումները՝ տարածաշրջանում արդար ու համապարփակ խաղաղություն հաստատելու նպատակով»[267],– գրում էր սիրիական «Թիշրին» օրաթերթը:

Նախագահության սկզբնական շրջանում Բուշն ու պետքարտուղար Բեյքերը քննադատում էին Իսրայելի վարած քաղաքականությունը գրավված արաբական տարածքներում՝ վերջինից պահանջելով կարգավորել արաբա-իսրայելյան հակամարտությունը հիմնվելով ՄԱԿ-ի 242 և 338 բանաձևերի վրա, խաղաղություն՝ տարածքների վերադարձի դիմաց սխեմայով: Միևնույն ժամանակ

Վաշինգտոնը հավաստիացնում էր բոլոր ճակատներում համապարփակ կարգավորման հասնելու իր մտադրության մասին:

Մինչ այդ փոփոխություններ էին կատարվում միջարաբական հարաբերություններում: Այսպես, Սիրիան, 1989 թ. ընթացքում որդեգրելով ավելի ճկուն դիրքորոշում, աջակցություն հայտնեց ՄԱԿ-ի վերոհիշյալ բանաձևերին և աստիճանաբար սկսեց Եգիպտոսի հետ մերձեցմանն ուղղված քայլեր նախաձեռնել: 1988 թ. դեկտեմբերին՝ տասնամյա հակաեգիպտական քարոզչությունից հետո, Հ. Ասադը հրապարակավ հայտարարեց, որ «ընդունում է Եգիպտոսի կարևորությունն արաբական բեմի վրա», և որ «սիրիա-եգիպտական համագործակցությունը մշտապես համապատասխանել է արաբական աշխարհի ընդհանուր շահերին»[268]: 1989 թ. մայիսին Սիրիան այլևս չէր ընդդիմանում Եգիպտոսի վերաանդամակցմանն Արաբական լիգային: 1989 թ. դեկտեմբերի կեսերին վերականգնվեցին օդային թռիչքները Կահիրեի և Դամասկոսի, իսկ երկու շաբաթ անց՝ նաև դիվանագիտական հարաբերությունները երկու երկրների միջև: 1990 թ. հուլիսին Հ. Ասադը 13 տարվա ընդմիջումից հետո կատարեց առաջին պաշտոնական այցը Եգիպտոս:

ԽՍՀՄ-ում կատարվող փոփոխությունները նույնպես մեծ ազդեցություն ունեցան արաբական մի շարք երկրների արտաքին քաղաքական հայեցակարգերի վրա:

1990 թ. օգոստոսին Իրաքը ներխուժեց Քուվեյթ: Առաջին անգամ արաբական պետությունը, ոտնահարելով միջազգային, ինչպես նաև միջարաբական հաստատված նորմերը, հարձակվեց արաբական երկրի վրա: Անգամ Սիրիան, որ արաբա-իսրայելյան հակամարտության և համաարաբականության գաղափարախոսության հիմնական ջատագովներից մեկն էր համարվում, Եգիպ-

[267] «Թիշրին», 21.01.1989:
[268] «Թիշրին», 09.02 և 16.05.1989:

տոսի և Սաուդյան Արաբիայի հետ միացավ ԱՄՆ-ի ձևավորած՝ ընդդեմ Իրաքի հակասադդամական դաշինքին:

Վաշինգտոնը կոալիցիային միանալու դիմաց Սիրիային խոստացավ Սադդամին Քուվեյթից դուրս քշելուց հետո «վճռական» միջոցներ ձեռնարկել՝ տարածաշրջանում «արդար խաղաղություն հաստատելու» նպատակով:

Ծոցի պատերազմից հետո արաբական մի շարք երկրների, ինչպես նաև պաղեստինցիների համար պարզ դարձավ, որ Իսրայելի հետ հակամարտությունն անհնար է լուծել ուժի միջոցով: Ճգնաժամի օրերին Խորհրդային Միության համագործակցությունն ԱՄՆ-ի հետ մեկ անգամ ևս ապացուցեց, որ սառը պատերազմի խաղի կանոնները փոխվել են՝ արձանագրելով ԱՄՆ-ի առաջատար դիվանագիտական դերը:

ԽՍՀՄ-ի փլուզումը և սառը պատերազմի ավարտը բացարձակապես նոր իրավիճակ և ուժերի դասավորություն ստեղծեցին Մերձավոր Արևելքում՝ ծանր կացության մեջ դնելով արաբական որոշ երկրների, մասնավորապես Սիրիային և պաղեստինցիներին:

Ծոցի պատերազմից հետո փոփոխություններ կրեց նաև ամերիկյան քաղաքականությունը Մերձավոր Արևելքում: Այն երկու հիմնական նպատակ էր հետապնդում: Առաջին, համաձայն արաբներին տված իր խոստման՝ ԱՄՆ-ն կենտրոնացրեց ջանքերը խաղաղության գործընթացի վրա՝ Իսրայելի և արաբական երկրների միջև անվտանգության և համագործակցության մասին համաձայնագրեր ստորագրելու նպատակով: Երկրորդ, Վաշինգտոնը ձգտում էր կանխել մերձավորարևելյան նավթի վրա միանձնյա հսկողություն ունեցող «տարածաշրջանային գերտերության» ի հայտ գալը:

Խաղաղության գործընթացն ակտիվացնելու նպատակով 1991 թ. ընթացքում ԱՄՆ պետքարտուղար Բեյքերը 8 այցելություն կատարեց Մերձավոր Արևելք, որոնց ընթացքում փորձեց համոզել

հակամարտող կողմերին նստելու բանակցությունների սեղանի շուրջ, միջազգային համաժողովի հովանու ներքո:

1991 թ. մայիսի 31-ին Բուշը նամակներ հղեց Իսրայելի վարչապետ Շամիրին, Սիրիայի նախագահ Հ. Ասադին, Հորդանանի թագավոր Հուսեյնին, Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդին, Եգիպտոսի նախագահ Մուբարաքին և Պաղեստինյան գրավված տարածքների ղեկավար Ֆեյսալ Հուսեյնիին՝ խնդրելով վերջնական որոշում կայացնել մերձավորարևելյան խաղաղության բարձրաստիճան համաժողովին մասնակցելու վերաբերյալ:

Այն ժամանակ, երբ արաբական բոլոր երկրները, ներառյալ Սիրիան, համաձայնեցին ամերիկյան առաջարկին, Իսրայելի վարչապետ Շամիրի վարչակազմը շարունակում էր իր ծայրահեղական քաղաքականությունը գրավված արաբական տարածքների նկատմամբ (նոր հրեական բնակավայրերի կառուցումը և այլն):

1991 թ. հունիսին՝ Բեյքերի հետ բազմաթիվ հանդիպումներից հետո, Թել-Ավիվը մերժեց Մերձավոր Արևելքի խաղաղության համաժողովի գումարման վերաբերյալ ամերիկյան առաջարկը: Իսրայելը դեմ էր ընդհանրապես համաժողովի անցկացմանը՝ կարծելով, որ արաբական մի քանի պատվիրակությունների համատեղ մասնակցությունը, ինչպես նաև ԽՍՀՄ-ի ներկայությունը «որևէ դրական արդյունք չի կարող ունենալ Իսրայելի համար»[269]: Պաղեստինյան պատվիրակության մասնակցության վերաբերյալ Թել-Ավիվի վերապահումները հետևյալն էին՝ բացառել ՊԱԿ-ի, պաղեստինցիների սփյուռքի և Երուսաղեմի ներկայացուցիչների մասնակցությունը: Երկար քննարկումներից հետո Իսրայելը համաձայնեց Արևմտյան ափի և Գազայի հատվածի ներկայացուցիչների մասնակցության հետ այն էլ միասնական հորդանանա-պաղեստինյան

[269] Bregman, Ahron and El-Tahri, Jihan. The Fifty Years War: Israel and the Arabs. Penguin Books, London, p. 207.

պատվիրակության կազմում[270]: Այնուամենայնիվ, 1991 թ. հոկտեմբերի 22-ին Իսրայելի նախարարների խորհուրդը, ԱՄՆ-ից սպասվող 10 մլրդ վարկը չխափանելու տակտիկական նկատառումներից ելնելով, խորհրդային հրեաներին բնակեցնելու, օբստրուկցիոնիզմի մեջ ամերիկյան մեղադրանքներից խուսափելու և «գնդակը սիրիական դաշտ նետելու» նպատակով որոշեց մասնակցել Մադրիդում կայանալիք խաղաղության համաժողովին:

1991 թ. հոկտեմբերի 30-ին Մադրիդում Բուշի և Գորբաչովի համատեղ նախագահությամբ կայացավ Մերձավոր Արևելքի խաղաղությանը նվիրված միջազգային համաժողովը, որին մասնակցեցին Իսրայելը, Սիրիան և Լիբանանը, ինչպես նաև միացյալ հորդանանա-պաղեստինյան պատվիրակությունը: Համաժողովին ներկա էին նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի և Եվրոպական Միության ներկայացուցիչները, ինչպես նաև Սաուդյան Արաբիայի դեսպանը:

Չնայած ամերիկացիներն ու իսրայելցիները համաձայնվել էին, որ Բուշն իր ելույթում չի անդրադառնա «խաղաղություն հողի դիմաց» բանաձևին, այնուամենայնիվ Բուշը նշեց. «Մենք հավատացած ենք, որ տարածքային զիջումը կենսական նշանակություն ունի խաղաղության համար: Սահմանները պետք է արտացոլեն ինչպես անվտանգության, այնպես էլ քաղաքական դասավորումների որակը»[271]:

Համաժողովի առաջին և երկրորդ օրերը համեմատաբար խաղաղ անցան: Սակայն երրորդ օրն իրավիճակը սրվեց Շամիրի ելույթից հետո, երբ նա, արձագանքելով Սիրիայի արտգործնախարարի

---

[270] Ըստ ամերիկյան դիվանագետների՝ իսրայելյան կողմի հետ առանձին քննարկվել էր նաև պաղեստինյան յուրաքանչյուր ներկայացուցչի մասնակցության նպատակահարմարության հարցը:

[271] Ahron Bregman and Jihan El-Tahri.The Fifty Years of War Israel and the Arabs. p. 216.

ելույթին, Սիրիայի վարչակազմը որակեց որպես «ամենաուժային և ամենածայրահեղ», իսկ երկիրը՝ «ահաբեկչական»: Շամիրից հետո բեմահարթակ դուրս եկավ Սիրիայի արտգործնախարար Ֆարուկ ալ-Շարաան, որը, բարձրացնելով ձեռքի մեջ գտնվող թերթիկն, ասաց. «Ես Ձեզ միայն ցույց կտամ պարոն Շամիրի լուսանկարը: Գիտեք, թե ինչու է այս լուսանկարը տարածվել ամենուր, որովհետև նա գտնվել է հետախուզման մեջ: Նա օգնել է, եթե ես չեմ սխալվում, 1948 թ. Պաղեստինում ՄԱԿ-ի բանագնաց Կ. Բեռնադոտի սպանությանը: Նա սպանում է խաղաղության բանագնացներին»[272]:

Համաժողովի ընթացքում հաջորդ ճգնաժամը եղավ այն պահից սկսած, երբ ամերիկացիներն առաջարկեցին արաբական պատվիրակությունների և Իսրայելի միջև ուղղակի բանակցություններ սկսել տարբեր տեղերում և տարբեր ժամանակ, իսկ սիրիացիները պահանջեցին բանակցություններն անցկացնել միևնույն ժամանակ և նույն տեղում: Վերջապես գտնվեց փոխզիջումային տարբերակը. կողմերը համաձայնեցին ուղղակի բանակցություններ վարել նույն հյուրանոցում, սակայն տարբեր ժամերին:

Մադրիդում կայացած համաժողովը խաղաղության նոր ճանապարհ հարթեց և հիմք դրեց տարածաշրջանում հետագա պատմական իրադարձությունների համար: Այն քաղաքական կարևոր նշանակություն ունեցավ, քանի որ առաջին անգամ հակամարտող կողմերը նստեցին բանակցությունների սեղանի շուրջ: Առաջին անգամ միջազգային համաժողովի մասնակցեցին նաև պաղեստինցիները և ելույթ ունեցան իրենց իսկ անունից: Համաժողովի ամենաէական արդյունքերից մեկը համարվեց այն, որ կողմերը համաձայնեցին շարունակել բանակցային գործընթացը:

---

[272] Ahron Bregman and Jihan El-Tahri.The Fifty Years of War Israel and the Arabs, էջ 207:

Մադրիդը կարևորվում է ևս մեկ առումով. այստեղ կայացած համաժողովն առաջին անգամ **զուգահեռ երկու ուղղություններով** տարվող բանակցությունների նոր մեխանիզմ ստեղծեց: Առաջին ուղղության առանձնահատկությունը բազմակողմանի բանակցություններն էին, որտեղ Իսրայելը, տարածաշրջանի արաբական երկրները և տարածաշրջանից դուրս այլ երկրներ կարողացան միանալ Մերձավոր Արևելքում գոյություն ունեցող հինգ հիմնական խնդիրների՝ ջրի, շրջակա միջավայրի, սպառազինությունների հսկողության, փախստականների և տնտեսական զարգացման շուրջ ընթացող քննարկումներին: Այդ քննարկումները տեղի ունեցան 1992 թ. հունվարին Մոսկվայում, որոնց սիրիացիները մերժեցին մասնակցել այն պատճառաբանությամբ, որ քանի դեռ Իսրայելը շարունակում է վերահսկել գրավված Գոլանները, Արևմտյան ափն ու Գազայի հատվածը, ուստի տարածաշրջանային երկարատև անվտանգության վերաբերյալ բանակցություններն անիմաստ են: Երկրորդ ուղղությունը Իսրայելի և իր արաբ հարևաններ Սիրիայի, Հորդանանի, Լիբանանի և պաղեստինցիների միջև երկկողմ բանակցություններն էին Վաշինգտոնում:

1992 թ. հունիսին Իսրայելում կայացած ընտրություններից հետո իշխանության եկավ «Աշխատանք» կուսակցությունը՝ Իցխակ Ռաբինի գլխավորությամբ: Ո՞վ կարող էր ենթադրել. այն կուսակցությունը, որ առաջնային դեր խաղաց տարիներ առաջ արաբական հողերի գրավման և նրանց վրա հրեաների վերաբնակեցման գործում, ձեռնամուխ կլինի խաղաղության գործընթացի արագացմանն ու կաջակցի Իսրայելի և պաղեստինցիների, ինչպես նաև Հորդանանի միջև պատմական համաձայնագրերի ստորագրմանը: Իսկ նրա ղեկավար Ի. Ռաբինն այդ խաղաղության համար անգամ կվճարի իր սեփական կյանքով:

Չնայած Վաշինգտոնում պաղեստինա-իսրայելյան ընթացող բանակցություններին՝ դեպքերի բերումով առաջընթացն այդ ուղղությամբ արձանագրվեց ոչ թե Վաշինգտոնում այլ հեռավոր Նորվեգիայում: 1993 թ. օգոստոսի 4-ին ԱՄՆ նոր պետքարտուղար Քրիսթոֆերը մեկնեց տարածաշրջան[273], ուր հանդիպումներ ունեցավ Իսրայելի, Եգիպտոսի, Սիրիայի և Հորդանանի ղեկավարների հետ: Երբ Քրիստոֆերը և իր մերձավորարևելյան հատուկ համակարգող (Special Middle East Co-ordinator) Դեննիս Ռոսսը[274] վերադարձան Վաշինգտոն, նրանք դեռ չգիտեին, որ շուտով իրենց ամառային արձակուրդը կընդհատվի Իսրայելի և Նորվեգիայի արտգործնախարարներ Պերեսի և Հոլստի այցելությամբ, որոնք լուր կբերեն Օսլոյում իսրայելցիների և պաղեստինցիների միջև բանակցությունների ընթացքում ձեռք բերված սկզբունքային համաձայնության մասին:

1993 թ. սեպտեմբերի 9-ին, ավարտելով երկարատև բանակցությունները, Իսրայելի վարչապետ Ռաբինն ու ՊԱԿ-ի ղեկավար Արաֆաթը նամակներ փոխանակեցին, որոնցով պաշտոնապես ճանաչեցին միմյանց: Իսկ չորս օր անց Սպիտակ տանը տեղի ունեցավ «Պաղեստինի ժամանակավոր ինքնավարության սկզբունքների վերաբերյալ հռչակագրի» ստորագրման պաշտոնական արարողությունը:

Հռչակագիրն իսրայելա-պաղեստինյան կարգավորման միայն առաջին քայլն էր, որին հետևեց 1994 թ. մայիսին, այսպես կոչված, Գազա-Երիխոն մեծ համաձայնագրի ստորագրումը: Վերջինս իրավական հիմքեր ստեղծեց վերոհիշյալ տարածքները պաղեստինցի-

---

[273] 1992 թ. նոյեմբերին Միացյալ Նահանգների նոր նախագահ էր ընտրվել Բիլ Քլինթոնը:

[274] Մանրամասն իսրայելա-պաղեստինյան բանակցությունների մասին տե՛ս Ross Dennis. The Missing Peace: The Inside Story of the Fight for Middle East Peace. Farrar, Straus and Giroux, 2004:

ներին վերադարձնելու ու երկու ամիս անց Արաֆաթի՝ Գազայում պաղեստինյան գործերի ղեկավարումը ստանձնելու համար:

Թերևս առավել բարդ ընթացք ունեցավ 1995 թ. սկզբին սկսած Իսրայելի և պաղեստինցիների միջև բանակցությունների երկրորդ փուլը՝ Արևմտյան ափից իսրայելյան ուժերի դուրսբերման վերաբերյալ: Եթե Գազայի հատվածում առկա էին ընդամենը մի քանի տասնյակ հրեական բնակավայրեր, ապա Արևմտյան ափում նրանց թիվն անցնում էր 140-ից: Իսկ ամենադժվարը Հեբրոնի խնդիրն էր, որը հրեաների համար երկրորդ սուրբ քաղաքն էր Երուսաղեմից հետո: Ծանր բանակցություններում կողմերը համատեղ աշխատեցին Արևմտյան ափը 3 գոտիների բաժանելու ուղղությամբ: Մեկն ամբողջությամբ պաղեստինյան վերահսկողության տակ գտնվող գոտին էր (պաղեստինցիներով բնակեցված), երկրորդը՝ Իսրայելի հսկողության տակ գտնվող հրեական բնակավայրերը և զինվորական օբյեկտները, երրորդ գոտում հանրային կարգի ապահովման համար պատասխանատվությունը դրվում էր պաղեստինցիների վրա, իսկ իսրայելյան կողմը պետք է հոգար անվտանգության կարիքները:

Կողմերի, այդ թվում նաև Իսրայելի արտգործնախարար Պերեսի և ՊԱԿ-ի նախագահ Արաֆաթի միջև տեղի ունեցած ակտիվ բանակցությունները հաջողությամբ ավարտվեցին 1995 թ. սեպտեմբերի 28-ին Վաշինգտոնում 300-էջանոց «Օսլո-2» համաձայնագրի ստորագրմամբ: Վերջինիս համաձայն՝ մի քանի ամսվա ընթացքում իսրայելյան ուժերը դուրս բերվեցին Արևմտյան ափի 6 հիմնական քաղաքներից և հարյուրավոր գյուղերից: Երեք ամսվա ընթացքում Իսրայելն ավարտեց իր զորքերի դուրսբերումը, բացի Հեբրոնից:

1994 թ. սկիզբ դրվեց նաև իսրայելա-հորդանանյան աստիճանական մերձեցմանը, որն ավարտվեց 1994 թ. հոկտեմբերի 25-ին

երկու երկրների միջև խաղաղության պայմանագրի ստորագրմամբ:

1994 թ. հոկտեմբերին իսրայելա-հորդանանյան համաձայնագրի ստորագրման պաշտոնական արարողությանը մասնակցելու նպատակով տարածաշրջան մեկնեց ԱՄՆ նախագահ Քլինթոնը, նա այցելեց նաև Դամասկոս: Վերջին 20 տարիների ընթացքում՝ Նիքսոնից հետո, Քլինթոնը դարձավ առաջին ԱՄՆ նախագահը, որն այցելեց Սիրիայի մայրաքաղաքը: Փաստորեն, արաբական ճակատում մնացին միայն Սիրիան և Լիբանանը, որոնք համաձայնության չեկան Իսրայելի հետ:

1995 թ. նոյեմբերի 4-ին Ռաբինի սպանությունը խորը ցասում առաջացրեց ողջ աշխարհում: Այն կարծես թե հարցականի տակ դրեց նաև վերջին տարիների ընթացքում սիրիա-իսրայելյան բանակցությունների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները: Երկու երկրների միջև բանակցություններն ավարտվեցին Իսրայելում Բ. Նաթանյահուի իշխանության գալով՝ առանց որևէ գործնական արդյունքի: Այդ տարիների բանակցային գործընթացն Իսրայելին և Սիրիային մոտեցրեց միայն համաձայնագրի ստորագրմանը՝ աստիճանաբար հարթելով երկու երկրների միջև եղած հիմնական տարաձայնությունները: Պետք է նշել, որ Սիրիան և Իսրայելն իրենց գոյության ընթացքում երբևիցե այդքան մոտ չեն եղել խաղաղության հաստատմանը: Սակայն այն չիրականացավ և անգամ բանակցությունների ընթացքում ձեռք բերված բոլոր համաձայնությունները ի չիք եղան Իսրայելում Նաթանյահուի ընտրություններից հետո:

Բ. Նաթանյահուի իշխանության օրոք Իսրայելի կարծր դիրքորոշումը սպառնում էր ոչ միայն կասեցնել խաղաղության գործընթացն ու հարվածի տակ դնել ԱՄՆ միջնորդական ջանքերն այդ ուղղությամբ, այլև, հեղինակազրկելով վերջինիս քաղաքականութ-

յունը Մերձավոր Արևելքում, փորձել թելադրել խաղի սեփական կանոններ: Այդ իմաստով ուշագրավ էր ԱՄՆ արաբական համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում երկրի «առաջին տիկին» Հիլարի Քլինթոնի արած հայտարարությունն այն մասին, որ պաղեստինցիների համար կարևոր է սեփական պետություն ունենալը: Չնայած այն հանգամանքին, որ Սպիտակ տունն անմիջապես հայտարարեց, որ դա անձնական կարծիք է և չի համապատասխանում ԱՄՆ պաշտոնական տեսակետին, քանզի ԱՄՆ-ն միակողմանի երբեք չի համաձայնի պաղեստինյան պետության հռչակմանը: Այնուամենայնիվ, նման բարձր մակարդակով առաջին անգամ էր շոշափվում Պաղեստինի պետության ստեղծման անհրաժեշտությունը: Որոշ քաղաքագետներ անգամ ներքաղաքական իրավիճակի սրումը Ամերիկայում՝ կապված Մոնիկա Լյուինսկիի հայտնի գործի հետ, վերագրում էին ԱՄՆ առաջին տիկնոջ վերոհիշյալ հայտարարությանն ու Իսրայելի նկատմամբ ԱՄՆ պաշտոնական դիրքորոշման փոփոխմանը: Այնուամենայնիվ, Վաշինգտոնի ճնշման տակ 1997 թ. հունվարի 15-ին Իսրայելի և ՊԱԿ-ի միջև ստորագրվեց համաձայնագիր՝ Հեբրոնի կարգավիճակի և վերջինս Պաղեստինյան իշխանություններին փոխանցելու պայմանների վերաբերյալ:

1998 թ. օգոստոսի 8-ին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեան ընդունեց կարևորագույն մի բանաձև, որի համաձայն՝ պաղեստինցիներին տրվում էր ՄԱԿ-ի անդամի կարգավիճակ առանց քվեարկության իրավունքի:

1998 թ. հոկտեմբերի 15-ին ԱՄՆ-ի նախաձեռնությամբ Մերիլենդ նահանգում՝ Վաշինգտոնից ոչ հեռու գտնվող Ուայ Ռիվեր Փլանթեյշն (Wye River Plantation) վայրում, սկսվեցին բանակցությունները ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթի և Իսրայելի վարչապետ Նաթանյահուի միջև՝ ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնի, պետ-

քարտուղար Մադլեն Օլբրայթի և մերձավորարևելյան խաղաղության գործընթացի հարցերով ԱՄՆ ներկայացուցիչ Դենիս Ռոսսի մասնակցությամբ: Սակայն հոկտեմբերի 19-ին պաղեստինցի ծայրահեղականի կողմից իսրայելական Բերշեբա քաղաքում կատարված ահաբեկչություններից հետո Իսրայելը հայտարարեց, որ ընդհատում է բանակցությունները և ցանկացած համաձայնագրի ստորագրում կապում է պաղեստինյան կողմի՝ անվտանգության երաշխիքների ներկայացման հետ: Իսրայելի պատվիրակությունը պայթյունից անմիջապես հետո դադարեցրեց իր մասնակցությունը բանակցություններին: Քլինթոնը սպառնաց իսրայելական պատվիրակությանը, որ եթե իսրայելական զորքերի դուրսբերման շուրջ պայմանավորվածություն ձեռք բերվի, ապա 1999 թ. մայիսին ԱՄՆ-ն կճանաչի անկախ պաղեստինյան պետությունը:

Հոկտեմբերի 22-ին Քլինթոնը դիմեց Հորդանանի Հուսեյն թագավորի օգնությանը, վերջինս բուժման նպատակով գտնվում էր ԱՄՆ-ի Մինեսոտայի հիվանդանոցներից մեկում: Հուսեյնը խորհուրդ տվեց մտածել ապագայի մասին և կոչ արեց կողմերին նստել բանակցությունների սեղանի շուրջ: Վերջապես, 1998 թ. հոկտեմբերի 22-ի առավոտյան համաձայնագիրը ստորագրվեց: Այն պարունակում էր հետևյալ հիմնադրույթները.

- ✓ պաղեստինյան պատվիրակությունը համաձայնեց հանել Իսրայելի ոչնչացման վերաբերյալ կետերը ՊԱԿ-ի կանոնադրությունից,
- ✓ Իսրայելը համաձայնեց վերաբացել Գազայի օդանավակայանը, ինչպես նաև ապահովել երկու անվտանգ ճանապարհ Արևմտյան ափի և Գազայի միջև,
- ✓ պաղեստինյան իշխանությունները պարտավորվում էին «անհանդուրժողականություն դրսևորել ահաբեկչության

հանդեպ» և ԱՄՆ ներկայացուցիչներին ներկայացնել հակաահաբեկչական ծրագիր,

- ✓ որդեգրվեց «Հող՝ խաղաղության դիմաց» սկզբունքը: Իսրայելը պարտավորվում էր դուրս բերել զորքերը Արևմտյան ափի 13,1 տոկոս տարածքից,
- ✓ կողմերը համաձայնեցին պաղեստինյան ոստիկանական ուժերը նվազեցնել 43000-ից մինչև 30000-ի, ինչպես նաև կատարել ապօրինի զենքի բռնագրավումներ:

Ուայ-Փլանթեյշնի համաձայնագիրը չընդունեցին երկու կողմերի ծայրահեղական ուժերը: Իսրայելին անհանգստացնում էր այն փաստը, որ պաղեստինցիներին հանձնված 13,1 տոկոս տարածքում ապրում է ավելի քան 170000 հրեա վերաբնակ, և որ տասնյակից ավելի հրեական բնակավայրեր ընկնում են պաղեստինցիների հսկողության տակ: Իսկ արաբական կողմը համարում էր համաձայնագիրը «պարտվողական» և «մեծագույն զիջողություն»:

Ուայ-Փլանթեյշնի համաձայնագրի կարևորությունն այն էր, որ նրանով, փաստորեն, վերսկսվեց սառեցված խաղաղության գործընթացը: ՊԱԿ-ի կանոնադրությունից Իսրայելը վերացնելու կետի չեղյալ հայտարարումը նշանակում էր Իսրայելի գոյատևման իրավունքի ճանաչում և նոր քաղաքական-իրավական պայմանների ստեղծում արաբա-իսրայելյան համագոյակցության համար: Պատահական չէ, որ Նաթանյահուն Իսրայելի համար համաձայնագիրը դիտում էր որպես «խաղաղության ապահովություն»:

ՊԱԿ-ը թեև զգալիորեն նահանջեց Օսլոյի համաձայնագրից, բայց, այդուհանդերձ, պաղեստինյան կողմը շահում էր այն առումով, որ նրա հսկողության տակ էին անցնում նոր տարածքներ, ինչը ավելի էր մեծացնում պաղեստինյան պետության ստեղծման հավանականությունը:

2000 թ. ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոնը հայտարարեց, որ Իսրայելի վարչապետ Է. Բարաքը և Պաղեստինի ինքնավարության առաջնորդ Յասեր Արաֆաթը ընդունել են հուլիսի 11-ին Քեմփ-Դևիդ այցելելու իր հրավերը՝ Մերձավորարևելյան խաղաղության գործընթացի բանակցությունները շարունակելու համար: Քեմփ-Դևիդում կայացած հանդիպումը Քլինթոնի վարչակազմի վերջին փորձն էր պաղեստինա-իսրայելյան համապարփակ համաձայնագրի ստորագրման և դրանից բխող Պաղեստինի պետության հռչակման ուղղությամբ: Սակայն երկարատև ու թեժ քննարկումներից հետո կողմերը չկարողացան համաձայնության գալ **փախստականների վերադարձի և Երուսաղեմի կարգավիճակի** հետ կապված առանցքային հարցերի շուրջ:

Այսպիսով, մեկ անգամ ևս ապարդյուն անցան բոլոր փորձերն աշխարհում ամենատևական հակամարտության կարգավորման ուղղությամբ: Պաղեստինցիները կորցրին պատմական այն հնարավորությունը, որն ընձեռվել էր իրենց: Պաղեստինի ղեկավարությունը որոշ առումով չվերահսկելով ներքին քաղաքական իրավիճակը, ինչպես նաև առավելագույնը կորզելու իր անիրատեսական ձգտմամբ՝ անկարող գտնվեց սեփական ժողովրդի համար ապահովելու արժանապատիվ խաղաղությունն ու անկախ պետության ստեղծումը:

2. Սիրիա-Իսրայել. չօգտագործված հնարավորությունները և ապագա հեռանկարները խաղաղության հաստատման համար (1991-2001 թթ.)

2000 թ. հունիսի 10-ին վախճանվեց Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադը: Ավարտվեց Սիրիայի նորագույն պատմության կարևորագույն մի ամբողջ ժամանակաշրջան: Իր կառավարման 30 տարիների ընթացքում, չնայած երկրում հաստատված մենիշխանական և խիստ կենտրոնացված համակարգին, Հ. Ասադին հաջողվեց վերացնել «բազմադեմ երկրի» ներսում գոյություն ունեցող քաղաքական և կրոնական տարաձայնություններն ու հակասությունները, ստեղծել 400-հազարանոց մարտունակ բանակ, վերահսկողություն հաստատել հարևան Լիբանանի վրա՝ տնտեսական և քաղաքական շահույթ ապահովելով իր երկրին[275]:

Հ. Ասադի վարած հետևողական և հավասարակշռված արտաքին քաղաքականության շնորհիվ Սիրիան վերածվեց տարածաշրջանային ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող երկրի: Եվ այսօր անկարելի է վերջնական ու շարունակական խաղաղություն հաստատել Մերձավոր Արևելքում՝ առանց Սիրիայի և Լիբանանի: Բոլորի համար ակնհայտ է նաև այն, որ տարածաշրջանում խաղաղություն չի կարող հաստատվել այնքան ժամանակ, մինչև որ Սիրիան և Իսրայելը համաձայնության չգան: Իսկ թե որքանով է դա հնարավոր և ինչ հեռանկարներ կան այդ նպատակին հասնելու համար հատկապես Սիրիայում կատարված իշխանափոխությունից հետո, փորձենք ստորև հիմնավորել:

Երկար տարիներ Իսրայելին հակամարտ և հակազդող արաբական պետություններից ամենագլխավորը համարվում էր Եգիպ-

[275] Լիբանանի վերահսկումը թույլ տվեց Սիրիային առաջին հերթին Իսրայելի դեմ նոր ռազմական ճակատ բացել, ինչը չափազանց կարևոր խաղաքարտ և տարածաշրջանում իրավիճակը ղեկավարելու արդյունավետ միջոց դարձավ նրա համար:

տոսը՝ իր զինված ուժերով, տարածքով, ակտիվ ղեկավարությամբ և աշխարհագրական դիրքով: Սակայն 1979 թ. Իսրայելի հետ Քեմպ-Դևիդի համաձայնագիրը ստորագրելով՝ Եգիպտոսը կորցրեց իր այդ դերը, իսկ նրա տեղը գրավեց Իսրայելի մյուս հզոր հարևանը՝ Սիրիան: Հետևաբար կարող ենք արձանագրել, որ 1979 թվականից սկսած՝ Դամասկոսն իր հսկողության տակ առավ արաբա-իսրայելյան հակամարտության Արաբական ճամբարի ղեկավարությունը՝ ստանալով պատերազմելու և խաղաղություն հաստատելու որոշման մենաշնորհը: Զուտ ռազմական տեսանկյունից արաբա-իսրայելյան հակամարտությունը վերածվեց «սիրիա-իսրայելյան հակամարտության»: Եվ եթե Պաղեստինյան հարցը կարելի է դիտել որպես արաբա-իսրայելյան հակամարտության քաղաքական սիրտը, ապա Սիրիայի և Իսրայելի միջև հարաբերությունները կարելի է համարել հակամարտության ռազմավարական և աշխարհաքաղաքական անկյունաքարը:[276]

Մ. Գորբաչովի «վերակառուցումը» և ԽՍՀՄ-ի փլուզումը Արևելյան Եվրոպայում, ուղղակիորեն ազդեցին Սիրիայի վրա: Կենտրոնական Եվրոպայի երկրները ոչ միայն չշարունակեցին օգնել Սիրիային, այլև, Իսրայելի արտաքին գործերի նախկին նախարար Մոշե Արենսի արտահայտությամբ, «հերթ էին կանգնել» Իսրայելի հետ իրենց հարաբերությունները վերականգնելու համար: ԽՍՀՄ-ի ներսում կատարվող փոփոխություններն ու առկա դժվարությունները չէին կարող չանհանգստացնել Դամասկոսին: Այսպես, 1989 թ. ընթացքում Խորհրդային Միությունից Սիրիա առաքվող զենքի քանակը նվազեց 50 տոկոսով: Չնայած ԽՍՀՄ-ը դեռևս շարունակում էր տնտեսական ծրագրեր իրականացնել Սիրիայում (Տարտուս քաղաքի նավահանգստի կառուցումը և այլն, ինչպես նաև մոտ 2.500 ռազմական խորհրդատուների ներկայությունը),

[276] Ռ. Կարապետյան, Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996), Երևան, 2000, էջ 6:

Հ. Ասադը, գիտակցելով իրավիճակի փոփոխման վտանգը, սկսեց փոխզիջումային քայլեր ձեռնարկել Սիրիայի հանդեպ Արևմուտքի դիրքորոշումը մեղմելու ուղղությամբ:

Սառը պատերազմի մոտալուտ ավարտին ընդառաջ Սիրիայի արտաքին քաղաքականությունը ձևավորողները ստիպված էին ոչ միայն բարելավել երկրի տարածաշրջանային դիրքերը, այլև ընդհանուր ճակատ բացել Եգիպտոսի (ինչպես նաև Սաուդյան Արաբիայի և Հորդանանի) հետ՝ հակազդելու Իսրայելի մերժողական կեցվածքի և պաղեստինցիների ու Հորդանանի հետ առանձին գործարք կնքելու նրա ձգտմանը: Այդ իսկ պատճառով Դամասկոսը շարունակաբար հայտնում էր արաբա-իսրայելյան հակամարտությունը խաղաղ ճանապարհով լուծելու իր պատրաստակամության մասին:

Գլոբալ և տարածաշրջանային փոփոխությունները շատ ավելի ծանր հետևանքներ ունեցան Դամասկոսի, քան Թել-Ավիվի համար: Եթե Սիրիային ցուցաբերվող խորհրդային ռազմական, քաղաքական և դիվանագիտական աջակցությունը նվազեց, ապա Իսրայելի նկատմամբ միջազգային հովանավորչությունը ոչ միայն շարունակվեց, այլև աճեց: 1990-ականների սկզբին ռազմավարական տեսանկյունից Իսրայելի դիրքերն ավելի ամուր էին, քան Սիրիայինը: Պատահմամբ և անսպասելիորեն ստեղծված կացությունից դուրս գալու և սիրիա-ամերիկյան հարաբերություններում «առաջընթաց» արձանագրելու գործում Ասադին անուղղակիորեն օգնեց մի անձնավորություն, որը նրա հակառակորդն էր տարիներ շարունակ՝ Սադդամ Հուսեյնը:

1991 թ. Պարսից ծոցի ճգնաժամը Սիրիայի համար չափազանց շահութաբեր եղավ ոչ միայն տնտեսական, այլև միջազգային դիրքերը բարելավելու առումով: Միայն նավթի գների կտրուկ աճը Դամասկոսին շուրջ 200 մլն եկամուտ ապահովեց: Ավելացնենք տար-

բեր չափի ֆինանսական ներարկումները Եվրոպական Միությունից՝ 200 մլն, Ճապոնիայից՝ 500 մլն վարկի ձևով, Սաուդյան Արաբիայից, Քուվեյթից և Արաբական Էմիրություններից ստացվեց մոտ 2 մլրդ դոլար: Ճգնաժամը բարելավեց նաև Սիրիայի միջազգային կարգավիճակը:

Պարսից ծոցի ճգնաժամը հնարավորություն ընձեռեց Հ. Ասադին նաև իրականացնելու Լիբանանը կառավարելու՝ 15 տարի շարունակ փայփայած իր նպատակը: 1920 թ. Լիբանանի ստեղծումից ի վեր սիրիացիներից քչերն էին ընդունել նրա անկախ լինելու փաստը: Միայն 1975 թ. Լիբանանում բռնկված քաղաքացիական պատերազմը հարմար առիթ դարձավ Դամասկոսի ուղղակի ներխուժման համար: Քաղաքացիական պատերազմի առաջին իսկ օրից Սիրիան հետևողականորեն ձգտում էր քայլ առ քայլ տարածել իր ազդեցությունը Լիբանանում: Արդեն իսկ 1980 թ. սիրիական 40-հազարանոց բանակը հսկողության տակ էր առել Լիբանանի տարածքի համարյա երկու երրորդը: Երբ Ծոցի ճգնաժամը շեղեց միջազգային հանրության ուշադրությունը, և Սադդամ Հուսեյնը դադարեցրեց իր օգնությունը լիբանանյան «protege»-ին, եկավ Հ. Ասադի գործելու ժամանակը: 1990 թ. հոկտեմբերի 13-ին, երեք ժամվա ընթացքում Հ. Ասադն իրեն ենթարկեց ամբողջ Բեյրութը և երկրի հիմնական մասը՝ բացառությամբ հարավում գտնվող Իսրայելի հետ սահմանամերձ «անվտանգության գոտու»:

Վաշինգտոնից ղեկավարվող Եգիպտոսի և Սաուդյան Արաբիայի հետ հակասադամական կոալիցիային Սիրիայի մասնակցությունը վերջ դրեց նաև վերջինիս մեկուսացմանն արաբական աշխարհից և միջազգային ասպարեզից: Պարսից ծոցի պատերազմը միևնույն ժամանակ Հ. Ասադի համար հստակեցրեց իրողությունը, որ արաբա-իսրայելյան հակամարտությունն անհնարին է լուծել ուժի միջոցով: Խորհրդային Միության և ԱՄՆ-ի համա-

գործակցությունը ճգնաժամի օրերին ևս մեկ անգամ ապացուցեց, որ սառը պատերազմի խաղի կանոնները փոխվել են՝ արձանագրելով ԱՄՆ-ի առաջատար դիվանագիտական դերը: ԽՍՀՄ փլուզումից և սառը պատերազմի ավարտից հետո բացարձակապես նոր իրավիճակ և ուժերի դասավորություն ստեղծվեց Մերձավոր Արևելքում՝ ծանր կացության մեջ դնելով արաբական որոշ երկրներին, այդ թվում՝ նաև Սիրիային: Ստեղծված պայմաններում Հ. Ասադը քաջ գիտակցում էր, որ իր քաղաքական կենսունակությունն ու երկրի անվտանգության ապահովումը մեծապես կախված կլինեն ԱՄՆ-ի հետ իր հետագա հարաբերություններից:

Արևմուտքի, մասնավորապես Վաշինգտոնի հետ իր կապերը սերտացնելու նպատակով Սիրիան ընդունեց Մերձավոր Արևելյան խաղաղության բարձրաստիճան համաժողովին մասնակցելու ամերիկյան առաջարկը: Համաժողովը կայացավ 1991 թ. հոկտեմբերի 30-ին, Մադրիդում և խաղաղության նոր ճանապարհ հարթեց՝ հիմք դնելով տարածաշրջանում հետագա պատմական իրադարձությունների համար: Այն կարևոր քաղաքական նշանակություն ունեցավ, քանի որ առաջին անգամ հակամարտող կողմերը նստեցին բանակցությունների սեղանի շուրջ: Առաջին անգամ միջազգային համաժողովի մասնակցեցին նաև պաղեստինցիները և հանդես եկան իրենց իսկ անունից: Իհարկե, անսպասելի չէր, որ համաժողովում լուրջ առաջընթաց չարձանագրվեց, սակայն ամենաէականը եղավ այն, որ կողմերը համաձայնեցին շարունակել բանակցային գործընթացը: Ի վերջո, Իսրայելը խաղաղության համաձայնագրեր ստորագրեց պաղեստինցիների (1993 թ. սեպտեմբեր) և Հորդանանի (1994 թ. հոկտեմբեր) հետ՝ առաջին անգամ խաղաղություն հաստատելով իր սահմանների մեծ մասում (բացառությամբ Սիրիայի և Լիբանանի):

ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչությունն իր հերթին փորձեց ամեն կերպ արագացնել նաև սիրիա-իսրայելյան համաձայնագրի ստորագրումն Իսրայելում և ԱՄՆ-ում 1996 թ. կայանալիք ընտրություններից առաջ: Սակայն սիրիա-իսրայելյան բանակցությունները շարունակվեցին ընդհուպ մինչև 1996 թ. հունիսը՝ չտալով որևէ գործնական արդյունք: Բանակցային գործընթացը, այնուամենայնիվ, աստիճանաբար հարթեց երկու երկրների միջև եղած հիմնական տարաձայնությունները՝ Իսրայելին ու Սիրիային մոտեցնելով համաձայնագրի ստորագրմանը: Պետք է ընդգծել, որ, հիրավի, հակամարտող կողմերը խաղաղության հաստատման բաղձալի ավարտին երբեք այդքան մոտ կանգնած չէին եղել: Սակայն, դժբախտաբար, այն չիրականացավ և բանակցությունների ընթացքում ձեռք բերված բոլոր համաձայնություններն ի չիք դարձան Իսրայելում Բենյամին Նաթանյահուի վարչապետ ընտրվելուց հետո, որը, մերժելով հակամարտության կարգավորման նախկին «հող՝ խաղաղության դիմաց» սկզբունքը, առաջ քաշեց «անվտանգ խաղաղության» նոր սկզբունքը՝ բացարձակապես մերժելով Գոլանների վերադարձը: Ավելին, Վաշինգտոն կատարած իր առաջին այցելության ընթացքում Նաթանյահուն փորձեց համոզել Քլինթոնին խաղաղության գործընթացից Սիրիային ընդհանրապես մեկուսացնելու հարցում: Եթե Ռաբինը փորձում էր Վաշինգտոնից ստանալ ամենաբարձր փոխհատուցումը՝ Սիրիայի հետ խաղաղություն հաստատելու դիմաց, ապա Նաթանյահուն մերժեց նաև այդ հնարավորությունը[277]: Ռաբինի և Պերեսի օրոք սիրիացիների հետ բանակցությունների ընթացքում ձեռք բերված բանավոր պայմա-

[277] Գոլանները վերադարձնելու դեպքում Իսրայելի անվտանգությունն ապահովելու նպատակով Ռաբինը 25 մլրդ ԱՄՆ դոլարի փոխհատուցում պահանջեց ԱՄՆ-ից՝ ներկայացնելով հետախուզական օդանավերի, հաղորդակցման կայանների, արբանյակներից տեղեկատվություն ստացող կայանների և այլ անհրաժեշտ սարքավորումների մանրամասն ցուցակ:

նավորվածությունները Նաթանյահուն պաշտոնական պարտավորություն չէր համարում:

Իսրայելի վարչապետի պաշտոնում Եհուդ Բարաքի ընտրվելուց հետո նոր հնարավորություններ ստեղծվեցին՝ Իսրայելի և Սիրիայի միջև խաղաղության համաձայնագիրը ստորագրելու համար: Հատկապես, երբ 1999 թ. հունիսի 6-ին Քնեսեթում երդման արարողության ժամանակ Ե. Բարաքն իր ելույթում նշեց, որ ձգտում է արաբական բոլոր երկրների, մասնավորապես Սիրիայի և Լիբանանի հետ իրական հաշտության հասնել՝ իրագործելով պաղեստինցիների հետ ձեռք բերված բոլոր համաձայնությունները:

1999 թ. դեկտեմբերի 14-15-ին ԱՄՆ միջնորդական բուռն ջանքերի շնորհիվ, ի վերջո, Սիրիան և Իսրայելը 1996 թվականից ընդհատված խաղաղության բանակցությունները վերսկսեցին Վաշինգտոնում «հող՝ խաղաղության դիմաց» սկզբունքի հիման վրա: Եռակողմ այս հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց 2000 թ. հունվարին նույն կազմով ԱՄՆ-ում բանակացությունների առաջին փուլի անցկացման մասին:

2000 թ. հունվարի 3-ին Արևմտյան Վիրջինիա նահանգի Շեփրդսթաուն բնակավայրում սկսվեցին բանակացությունները Սիրիայի ԱԳ նախարար Ֆարուկ Շառաայի և Իսրայելի վարչապետ Ե. Բարաքի միջև: Սակայն սկսվելուց անմիջապես հետո օրակարգի վերաբերյալ ծագած տարաձայնությունների պատճառով բանակցությունները հայտնվեցին ընդհատման սպառնալիքի տակ, և միայն ԱՄՆ նախագահի ու պետքարտուղարի գործադրած ջանքերի շնորհիվ հաջողվեց կասեցնել տապալումը: Ուշագրավ է այն հանգամանքը, որ ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոնը 7 օրվա ընթացքում 5 անգամ այցելեց Շեփրդսթաուն և առանձին-առանձին բանակցություններ վարեց Շառաայի և Բարաքի հետ: Առանց որևէ լուրջ արդյունքի ավարտված այդ բանակցություններից հետո ամե-

րիկյան միջնորդները կողմերին ներկայացրին համաձայնագրի նախագիծ, որը կոչվում էր «Իսրայելի և Սիրիայի միջև խաղաղության շրջանակ»:

Համաձայնագրի մասին տեղեկատվության արտահոսքը և նրա ամբողջական տեքստի հրապարակումն իսրայելյան «Հաարեց» օրաթերթում, փաստորեն, խափանեցին փաստաթղթի ստորագրումը և «անհնար դարձրին Սիրիայի վերադարձը բանակցային սեղանին»[278]:

Այսպիսով, չնայած ամերիկյան միջնորդների գործադրած բոլոր ջանքերին՝ Սիրիայի և Իսրայելի միջև բանակցությունները, արդեն երկրորդ անգամ չափազանց մոտ լինելով հաջող ավարտին, սառեցվեցին, իսկ համաձայնագրի ստորագրման հնարավորությունը շարունակեց մնալ չնչին և անհավանական հատկապես Հաֆեզ Ասադի մահվանից և Իսրայելում ծայրահեղական Արիել Շարոնի իշխանության գալուց հետո:

Հ. Ասադին փոխարինեց նրա որդին՝ Բաշար Ասադը: Ներքին քաղաքական և տնտեսական բնագավառում նրա առջև ծառացած առաջնային բարդ խնդիրներից էին ազգային տնտեսության ազատականացման ու ամրապնդմանն ուղղված քաղաքականությունն ու պետության կողմից տնտեսության խիստ վերահսկողության համատեղումը: Որոշ սիրիագետներ անգամ սկսեցին խոսել Սիրիայում «չինական մոդելի» գործադրման մասին:

Դեռևս 2000 թ. հունիսին Բ. Ասադը հայտարարեց, որ թույլատրելու է երկրում օտար բանկերի գործունեությունն ազատ առևտրական գոտիներում: Առաջինն այդ իրավունքը ստացան լիբանանյան 4 բանկեր: 2000 թ. դեկտեմբերին «Բաաս» կուսակցության որոշմամբ թույլ տրվեց նաև մասնավոր բանկերի գործունեությունը, առաջարկվեց ստեղծել բաժնետոմսերի շուկա, քննարկել

[278] «Ալ-Հայաթ», 09.01.2000 թ., «Հաարեց», 13.01.2000 թ.:

բանկային գաղտնիքի մասին օրենքը, ինչպես նաև հեշտացնել տարադրամի արտաքին գործարքների և փոխանցումների հետ կապված ընթացակարգերը: 2001 թ. պետական բյուջեի ժամանակին ներկայացումը հույս էր ներշնչում, որ Սիրիայի կառավարությունը վճռական է տրամադրված տնտեսական բարեփոխումների շարունակման գործում:

Բ. Ասադը որոշակի քայլերի դիմեց նաև քաղաքական ազատությունները երկրի ներսում ընդլայնելու ուղղությամբ: 2000 թ. նոյեմբերին շուրջ 600 քաղբանտարկյալ ազատ արձակվեց սիրիական բանտերից: Բ. Ասադը հայտարարեց, որ ինքը կողմնակից է բազմաթեկնածուական ընտրությունների անցկացմանն իր պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո՝ 2007 թվականին: Իշխանություններն ավելի հանդուրժողական կեցվածք որդեգրեցին մարդու իրավունքների և ազատությունների ընդլայնման օգտին հանդես եկող նորաստեղծ՝ Մարդու իրավունքների կոմիտեի գործունեության նկատմամբ: Բ. Ասադն առաջին անգամ վերջին 50 տարվա ընթացքում արտոնեց նաև ոչ պետական թերթի հրատարակումը: Վարչակազմի և ժողովրդի միջև գոյություն ունեցող անջրպետը հաղթահարելու և անձի պաշտամունքի հիմքի վրա ղեկավարման արատավոր պրակտիկային վերջ դնելու նպատակով իշխանության առաջին իսկ օրերին Բաշարը հրամայեց փողոցներից և հրապարակային վայրերից հեռացնել իր նկարներն ու պաստառները: Նրա կարևոր նորամուծություններից էին նաև երկրում ինտերնետային կապի և շարժական հեռախոսների զանգվածային օգտագործման արտոնությունը:

Մի խոսքով, Բ. Ասադը երկրի ներսում ձեռնարկեց իրական «պերեստրոյկա» (վերակառուցում): Եվ եթե սիրիացիների մոտ վերջապես հույս արթնացավ, որ բարեփոխումները գնալով էլ ավելի կխորանան ու կզարգանան՝ ժողովրդավարության սերմեր գցելով

հասարակության մեջ, ապա նույնը չէր կարելի ասել Սիրիայի արտաքին քաղաքականության և հատկապես Իսրայելի հետ նրա հարաբերությունների մասին:

Եթե Բ. Ասադին երկրի ներքին քաղաքական կյանքում որոշակիորեն հաջողվեց ղեկավարման լծակները կենտրոնացնել սեփական ձեռքերում, ապա հին վերնախավի ներկայացուցիչները՝ փոխնախագահ Աբդուլ Հալիմ Խադդամն ու պաշտպանության նախարար Մուսթաֆա Տլասը, շարունակեցին պահպանել իրենց ազդեցությունը հատկապես արտաքին քաղաքականության ասպարեզում:

Այստեղ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ երեք տասնամյակ ի վեր Սիրիայի ալավիական ղեկավարությունը ստիպված էր եղել վարել արտաքին այնպիսի քաղաքականություն, հատկապես արաբա-իսրայելյան հակամարտությանը վերաբերող հարցերում, որն առավել համապատասխանել է բնակչության տրամադրություններին: Եվ եթե երկրի ներսում հաստատելով ավտորիտար իշխանություն՝ վարչակազմը կասեցրել է այլախոհության և այլակարծության որևէ դրսևորում, ապա արտաքին քաղաքական հարցերում նա միշտ պահպանել է «ժողովրդավարական» մոտեցումը: Այս իմաստով Սիրիան ներքին և արտաքին «քաղաքականության փոխկապակցվածության» (linkage politics) ուսումնասիրման համար մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել:

Միանգամայն տրամաբանական է, որ Իսրայելի հետ խաղաղության հաստատման, Պաղեստինի հիմնախնդրի կարգավորմանը վերաբերող հարցերում Բաշարը շարունակում էր հոր նախկին քաղաքականությունը: Սակայն, եթե Հ. Ասադը 1996 թ. և 2000 թ. չափազանց մոտ էր կանգնած այդ խնդիրների լուծմանը, ապա ներկայումս Սիրիայի արտաքին քաղաքականության համար հիմնական երկու խնդիրները՝ խաղաղության հաստատումը և Լիբա-

նանից սիրիական զորքերի դուրսբերումը, չեն կարող իրականանալ այնքան ժամանակ, քանի դեռ Բաշարն ամբողջովին վերահսկում է երկրի անվտանգության ամենազորեղ ապարատը՝ էլ ավելի ամրապնդելով իր սեփական իշխանությունը:

Բ. Ասադի իրականացրած բարեփոխումների հաջողությունից, նրա ցուցաբերած քաղաքական կամքից ու վճռականությունից մեծապես կախված է լինելու ոչ միայն Դամասկոսի արտաքին քաղաքական հետագա ընթացքը, այլև երկրի ապագան:

Վերոհիշյալ արտաքին քաղաքական կարևորագույն խնդիրների վրա Դամասկոսի ուշադրությունը կենտրոնացնելու նպատակով Բ. Ասադը ձեռնամուխ եղավ հարևանների հետ հարաբերությունների բարելավմանը: Առաջին քայլը նա կատարեց Իրաքի ուղղությամբ: Բաասական իր երկարամյա մրցակցի հետ Դամասկոսն ավելացրեց ուղղակի առևտրի ծավալները, փոխանակեց բազմաթիվ բարձրաստիճան դեմքերից բաղկացած պատվիրակություններ, անգամ վերացրեց երկու երկրների քաղաքացիների մուտքի արտոնագրերի պահանջը: Անցյալ տարի վերագործարկվեց երկար ժամանակ փակ մնացած Իրաք-Սիրիա նավթամուղը: Չնայած, ի հակակշիռ թուրք-իսրայելյան հաստատված սերտ համագործակցությանը, սիրիա-իրաքյան հարաբերությունները սկսեցին բարելավման միտումներ ցույց տալ դեռևս 1990-ականների կեսերից, սակայն միայն Բաշար Ասադի օրոք այդ հարաբերություններում շոշափելի առարջնթաց արձանագրվեց: Ջերմացման նախանշաններ առկա են նաև Սիրիայի՝ Հորդանանի և ՊԱԿ-ի հետ փոխհարաբերություններում:

Իսրայելի նկատմամբ իր քաղաքականությունը Բ. Ասադը կառուցեց հետևյալ հիմնական երեք բաղադրիչներից:

Ոչ մի նահանջ Իսրայելի հետ խաղաղության հաստատման հիմնական նախապայմանից՝ իսրայելյան զորքերի դուրսբերում

մինչև 1967 թ. հունիսի 4-ի սահմանները: «Գոլանների վերադարձի հարցը գլխավորում է մեր ազգային առաջնայնությունները»,– հայտարարեց Բ. Ասադը: Որպես սկսնակ նախագահ, որն փորձում է տպավորություն թողնել բաասական հին վերնախավի անդամների վրա, այս հարցը թերևս ամենավերջինն է, որտեղ Բ. Ասադը կարող է նահանջել: Ավելի շատ, քան իր հայրը վերջին տարիներին, նա չափազանց հաճախ է անդրադառնում նաև պաղեստինցիների իրավունքների ապահովման անհրաժեշտությանը, հատկապես Պաղեստինի պետությունը ստեղծելու, վերջինիս մայրաքաղաքը Երուսաղեմում հաստատելու և պաղեստինցի փախստականների վերադարձն ապահովելու հարցերին: Իրաքի նկատմամբ Բաշարի ավելի մեղմ դիրքորոշման հետ մեկտեղ նման կեցվածքը թերևս ուղղված է հատկապես Պաղեստինում ծավալված «ինթիֆադայի» պայմաններում երկրի բնակչության լայն զանգվածների համակրանքը շահելուն: Միաժամանակ դեռևս որևէ փոփոխություն չի արձանագրվել Դամասկոսում տեղակայված ծայրահեղական պաղեստինյան խմբավորումների կարգավիճակի հարցում:

Աջակցություն «Հեզբալլահին» և Լիբանանի հարավում գտնվող Շեբաա ագարակների (Shebaa Farms) վրա գերիշխանության հաստատման Բեյրութի կոչերին: Սիրիան ոչ միայն նախաձեռնեց Արաբական լիգայի կողմից Լիբանանի պահանջը պաշտպանող բանաձևի ընդունումը, այլև ՄԱԿ-ում Սիրիայի դեսպան Միխայիլ Վահբին իր նամակում գրեց, որ «Իսրայելը չի ավարտել իր զորքերի դուրսբերումը Հարավային Լիբանանից մինչև միջազգայնորեն ճանաչված սահմաններ, ներառյալ Շեբաայի ագարակները»[279]: Նման դիրքորոշումը, իհարկե, կարող է արդարացնել «Հեզբալլահի» շարունակվող հարձակումները Իսրայելի վրա, ինչպես նաև

[279] Alan Makovsky, *Syria's Foreign Policy Challenges US Interests,* "Policy Watch" No 513, 19 January, 2001, The Washington Institute for Near East Policy, p. 4.

վերջինիս վրա ճնշում գործադրելու հարմար միջոց հանդիսանալով Դամասկոսի համար, հատկապես Հարավային Լիբանանի «կորստի» պայմաններում:

Հռետորական ակտիվություն, ներառյալ աջակցություն «ինթիֆադային», Իսրայելի նկատմամբ համաարաբական բոյկոտի հայտարարում և Իսրայելի հետ կապերի խզում բոլոր արաբական երկրների կողմից: Իր ելույթներից մեկում Բ. Ասադը, կոչ անելով արաբական երկրներին հզորացնել իրենց ռազմական կարողությունները, հայտարարեց, որ նրանք պետք է ձգտեն ոչ թե թույլի, այլ «ուժեղի խաղաղության»:

Լիբանանը թերևս Բաշարի ամենացավոտ խնդիրն էր: Հաֆեզ Ասադի մահը և Հարավային Լիբանանից իսրայելյան զորքերի դուրսբերումն առաջին հերթին քաղաքական օրակարգում դրեցին Լիբանանում սիրիական ներկայության շարունակման նպատակահարմարության հարցը, որը նախաձեռնեց և ղեկավարեց Լիբանանի մարոնի համայնքը: Չնայած Սիրիան հրապարակայնորեն միայն հերքեց լիբանանցիների այդ դիրքորոշման առկայությունը, այնուամենայնիվ, ըստ որոշ աղբյուրների, Դամասկոսը նվազեցրեց իր զորքերի թվաքանակը Բեյրութում և ամենուրեք՝ Բեքաայի հարթավայրից դուրս: Լիբանանցիներին սիրաշահելու նպատակով Դամասկոսն ազատ արձակեց նաև լիբանանյան 59 քաղբանտարկյալների: Այսուհանդերձ, Սիրիան շարունակում է ամուր ձեռքով վերահսկել Լիբանանը և աջակցել Իրանի դրդմամբ այնտեղ «Հեզբալլահի» գործունեության ծավալմանը: Իրանը շարունակում է մնալ Դամասկոսի կարևոր գործընկերներից մեկը տարածաշրջանում:

Անշուշտ, վերոհիշյալ առանցքը, ինչպես նաև Բ. Ասադի ձգտումը բարիդրացիական հարաբերություններ հաստատելու Իրաքի և իր բոլոր հարևանների հետ, կարող էր լրացուցիչ դժվարություններ առաջացնել տարածաշրջանում ԱՄՆ քաղաքականության իրակա-

նացման համար: Սակայն, ընդհանուր առմամբ Իսրայելի և Սիրիայի միջև խաղաղության հաստատումը բխում էր «մերձավորարևելյան խաղում» ընդգրկված բոլոր կողմերի շահերից: Վաշինգտոնի համար այն կկայունացներ իրավիճակը տարածաշրջանում, կապահովեր մերձավորարևելյան նավթի անխափան արտահանումն ու կայուն գները, ինչպես նաև էլ ավելի կմեկուսացներ Իրաքը և Իրանը: Սիրիային այն հնարավորություն կընձեռեր կենտրոնանալու լայնածավալ տնտեսական բարեփոխումների և սոցիալական հրատապ մի շարք խնդիրների լուծման վրա:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Իսրայելի հետ խաղաղության հաստատումը լուրջ բարդություններ կարող էր առաջացնել Բ. Ասադի իշխանության համար: Առաջին հերթին, այն կարող էր օտարել «Բաաս» կուսակցության մեծ թվով անդամներին և կառավարական ծառայողներին, որոնց հիմնական մասը սիոնիզմի վտանգի պատճառաբանմամբ ներգրավված է ռազմական և ներքին անվտանգության հսկա համակարգերում: Երկրորդ՝ սիրիացի գործարարներն ու լիբերալներն Իսրայելի հետ խաղաղության համաձայնագրի ստորագրումը դիտում էին որպես Արևմուտքի հանդեպ երկիրը բացելու սկիզբ: Բ. Ասադը հավանաբար չէր կարող մտահոգված չլինել այն հանգամանքից, որ «պերեստրոյկան» կարող էր փլուզել իր կառավարությունը, ինչպես դա կատարվեց Արևելյան Եվրոպայի երկրներում:

Սիրիայի հետ խաղաղության հաստատման հարցում որոշակիորեն շահագրգռված էր նաև Իսրայելը: Հատկապես պաղեստինյան «ինթիֆադայի» ծավալման պայմաններում նույնիսկ առկա է եղել Իսրայելի՝ Սիրիայի հետ բանակցային գործընթացը վերսկսելու որոշակի հետաքրքրությունը: Իհարկե, Սիրիայի հետ խաղաղության հաստատումն աննախադեպ անվտանգության մթնոլորտ կստեղծեր Իսրայելի համար և հնարավորություն կընձեռեր վերջի-

նիս տարածաշրջանում ծավալելու «հարձակողական» տնտեսական քաղաքականություն՝ երկարատև հեռանկարում հաստատելով ոչ միայն ռազմական այլև տնտեսական գերիշխանություն Մերձավոր Արևելքում: Սակայն զարգացումներն ընթացան քաղաքական այլ տրամաբանությամբ, և խաղաղության փոխարեն մի շարք տարածաշրջանային և նրանց ետևում կանգնած ավելի մեծ ուժերը ընտրեցին Սիրիայում քաղաքացիական պատերազմ հրահրելու և Բ. Ասադին իշխանությունից հեռացնելու բարդ, ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, նաև Սիրիայի համար կործանարար քաղաքականությունը և տարածաշրջանում անկայունությունն ու հակամարտությունները պահպանելու ռազմավարությունը: Վերջինիս անհեռատես ճարտարապետները, համոզված լինելով, որ իսլամական վտանգը «սեփական սահմաններից» հեռու պահելու լավագույն միջոցը «խառնաշփոթն» ու մշտական ցնցումները պահպանելն է Արևելքում, երկարատև հեռանկարում էլ ավելի խոցելի վիճակի մեջ են դնելու հենց Արևմուտքը, նրա անվտանգությունն ու ապագան:

3. Երուսաղեմի հիմնախնդիրը պաղեստինա-իսրայելյան հակամարտության կարգավորման գործընթացում

ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդում ելույթներից մեկի ժամանակ Մերձավոր Արևելքի հայտնի մասնագետներից Ֆ. Լեյփսոնն ասել է. «Պաղեստինյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում որևէ կողմ չի կարող հասնել 100 տոկոսանոց բավարարման: Կողմերից և ոչ մեկը չի կարող ամբողջությամբ փոխհատուցում ստանալ հայրերի և պապերի հետ կատարված պատմական անարդարությունների դիմաց: «Նոր Մերձավոր Արևելք» նշա-

նակում է համատեղ ապագայի կառուցում: Իսկ այս ուղղությամբ ամենաբարդ և ցավոտ խնդիրներից է Երուսաղեմի ապագան»[280]:

Իսրայելցիների կարծիքով Իսրայելի մայրաքաղաք Յերուշալայիմը (Խաղաղության քաղաք)[281], ըստ պաղեստինյան կողմի, ապագա Պաղեստինի պետության մայրաքաղաք Ալ-Ղուդսը (Սրբազան քաղաք) հազարամյակներ գտնվել է մերձավորարևելյան թատերաբերում ծավալվող պատմական իրադարձությունների էպիկենտրոնում:

Մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Քանաանյան ցեղախմբի կողմից հիմնադրված Երուսաղեմ քաղաքը վերապրել է բազում տիրապետություններ՝ Հրեական (մ.թ.ա. 1 հազարամյակ), Եգիպտական (մ.թ.ա. 925), Հռոմեական (մ.թ.ա. 63), Բյուզանդական (629 թ.), Մուսուլմանական (638 թ.), Քրիստոնեական (1099 թ.), նորից Արաբական (1187 թ.), Օսմանյան (1517 թ.) և չորս դար հետո՝ Բրիտանական (1917-1948): 1885 թ. ստորագրված Բեռլինի պայմանագրում նշվում էր. «Սրբավայրերի ստատուս-քվոն (status-quo) չպետք է վտանգվի որևէ կերպ»:

1947 թ. նոյեմբերի 29-ին ընդունված ՄԱԿ-ի բաժանման ծրագրի համաձայն՝ Երուսաղեմի կարգավիճակը հաստատվեց որպես «անկախ գոտի՝ հատուկ միջազգային վարչակարգի կառավարման ներքո»: Ապառազմականացված այս քաղաքը պետք է կառավարեին հատուկ հոգաբարձուների խորհուրդն ու կառավարիչը, որը, իր հերթին չհանդիսանալով որևէ կողմի՝ իսրայելյան թե պա-

---

[280] Шагаль В., Арабский мир: Пути познания, Москва, 2001.

[281] ԱՄՆ Օհայո նահանգի Մայամիի համալսարանի պրոֆեսոր Թոմաս Իդինոպուլոսն իր «Երուսաղեմ» գրքում նշում է. «Քանաանցիները Երուսաղեմը համարում էին աշխարհի կենտրոն, գետնի և երկնքի հանդիպավայր: Նրանց համար միայն այնտեղ էր արևը ծագում և մայր մտնում: Ուստի այնտեղ էր նրանց աստվածներ Շալեմի և Շահրարի հայրենիքը: Առաջինը իր անունը տվեց Երուսաղեմին (Jeru-shalem), որը նշանակում էր Շալեմ (արևածագի) աստվածի տեղ: Երբ Իսրայելցիները եկան Քանաանների անտիկ հողը, նրանք փոխեցին Շալեմ անունը եբրայական խաղաղություն-շոլոմ (sholom) բառով: Դրանից հետո Երուսաղեմը սխալմամբ կոչվեց «խաղաղության քաղաք»:

ղեստինյան քաղաքացի, պետք է պաշտպաներ Սրբավայրերի երեք դավանանքները կրողների շահերն ու ապահովեր նրանց խաղաղ գոյակցությունը: Սակայն առաջին արաբա-իսրայելյան պատերազմից հետո (1948-1949) Երուսաղեմը բաժանվեց Անդրհորդանանի և Իսրայելի միջև: Առաջինը գրավեց քաղաքի արևելյան մասը, ներառյալ «Հին քաղաքը», իսկ արևմտյան մասը՝ Իսրայելը հռչակելով այն իր պետության մայրաքաղաք:

ՄԱԿ-ի 1949 թ. դեկտեմբերի 19-ի Երուսաղեմը միջազգայնացնելու վերաբերյալ որոշումը այդպես էլ չիրագործվեց: Նման իրավիճակը շարունակվեց մինչև 1967 թ. «վեցօրյա» պատերազմի ավարտը, ապա Իսրայելը գրավեց Երուսաղեմի «Հին քաղաքը»:

Վերջապես 1980 թ. հունիսին Կնեսսետը (խորհրդարանը) Երուսաղեմն ամբողջությամբ հռչակեց «Իսրայել պետության մայրաքաղաք», ինչն անմիջապես արժանացավ ՄԱԿ-ի քննադատությանը: Երկու տարի անց Ֆեցի ռագրով նախատեսվում էր «անկախ Պաղեստինյան պետության ստեղծումը՝ Ալ-Ղուդս (Երուսաղեմ) մայրաքաղաքով»: Միացյալ Նահանգները շարունակ նշում էր Երուսաղեմի «անբաժանելիությունը», իսկ ԽՍՀՄ-ը կողմ էր արտահայտվում Երուսաղեմի բաժանմանը՝ ընդգծելով, որ քաղաքի արևելյան մասը պետք է հատկացնվի արաբներին և կոչվի Պաղեստինյան պետության մայրաքաղաք: Բոլոր հավատացյալների անխափան մուտքը դեպի սրբավայրեր պետք է ապահովվի քաղաքի ամբողջ տարածքում:

Պաղեստինա-իսրայելյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցում առանցքային նշանակություն ունի Երուսաղեմի վերջնական կարգավիճակի որոշման հարցը: Վերջինս շարունակ քննարկման առարկա է եղել խաղաղության գործընթացի սկզբից ևեթ:

1995 թ. հոկտեմբերի 31-ին՝ Ստոկհոլմում 17-ամսյա բանակցություններից հետո, իսրայելյան կողմը, ի դեմս Իսրայելի փոխարտգործնախարար Յոսսի Բեյլինի և ՊԱԿ-ի գործադիր կոմիտեի անդամ Աբու Մազենի, հստակեցրին խաղաղության ապագա համաձայնագրի շրջանակները՝ նախատեսելով Երուսաղեմի սահմանների վերաձևումը: Վերջինիս համաձայն՝ Երուսաղեմը ներառում էր մերձակա Աբու Դիս, Ալ-Ազարիա և Ալ-Ռամ արաբական գյուղերը, ինչպես նաև Մաալե և Ադումիմ հրեական բնակավայրերը: Երուսաղեմի պաղեստինյան արվարձանները, վերոհիշյալ գյուղերն ու բնակավայրերը կազմելու էին Ալ-Ղուդսը՝ պաղեստինյան մայրաքաղաքը, իսկ հրեական մասերը՝ Իսրայելի մայրաքաղաքը: Երկու մայրաքաղաքները կազմելու էին մեկ բաց քաղաք՝ ազատ մուտքով դեպի վերջինիս բոլոր մասերը: «Հին քաղաքը» և մերձակա շրջաններին տրվում էր «սրբատեղիի» հատուկ կարգավիճակ, ուր կողմերը կարող էին պահպանել իրենց ազգային խորհրդանիշները, իսկ ինքնիշխանության հետ կապված հարցերի լուծումը հետաձգվում էր մի քանի տարով: Սակայն Իցխակ Ռաբինի սպանությունը խափանեց Իսրայելի և Պաղեստինի միջև համապարփակ համաձայնագրի ստորագրումը՝ բնականաբար, չլուծելով նաև կողմերի համար ամենացավոտ՝ Երուսաղեմի կարգավիճակի հարցը:

Երուսաղեմի հիմնահարցը տարաձայնության հիմնական առարկա դարձավ 1999 թ. Քեմփ-Դևիդի բանակցություններում: Այնտեղ հստակորեն պարզվեց, որ օրակարգից հանվել էին Երուսաղեմի հարցին առնչվող միջազգային որոշումները, և քննարկման էին դրվել քաղաքի նորովի բաժանման ծրագրերը: Երուսաղեմի, մասնավորապես «Հին քաղաքի» վրա պետական գերիշխանության հաստատման հարցը դարձավ Քեմփ-Դևիդի բանակցությունների ձախողման հիմնական պատճառներից մեկը:

Ա. Տեղեկություններ «Հին քաղաքի» մասին

Երուսաղեմի «Հին քաղաքում» (85 հա) գտնվում են քրիստոնեական, մահմեդական և հրեական կարևորագույն մի շարք սրբավայրեր: Այն բաժանված է 4 թաղամասերի՝ քրիստոնեական, իսլամական, հրեական և հայկական:

1997 թ. տվյալներով «Հին քաղաքում» բնակվել է 31.500 մարդ, որի 70 %-ը (22190)՝ մահմեդական, 20%-ը (6300)՝ քրիստոնյա և 10%-ը (3000)՝ հրեա (ամբողջ Երուսաղեմի բնակչության թիվը հասնում է 600 հազարի):

Հայկական թաղամասում են գտնվում Երուսաղեմի հայոց պատրիարքարանը, Սուրբ Հակոբ Եկեղեցին, պատրիարքարանի գրադարանը, դպրեվանքը, հայկական վարժարանը և եկեղեցիներ (Հին քաղաքից դուրս՝ Խաչեվանքը): Հայկական թաղամասը կազմում է «Հին քաղաքի» մոտ 1/5-ը մասը: Թաղամասն ունի 2200 բնակիչ, որից 1200-ը հայեր են, 350-ը՝ մահմեդական, մնացածը՝ հիմնականում հրեաներ: Պաղեստինցիներն ու հրեաները կազմում են այս թաղամասի բնակչության 1/3-ը:

Հրեաների թիվը հայկական թաղամասում կազմում է 653, իսլամականում՝ 168, քրիստոնեականում՝ 140:

Հրեական թաղամասը գտնվում է Հայկական թաղամասի հարևանությամբ: Այն միակ տարածքն է Հին քաղաքում, որտեղ հրեաները մեծամասնություն են կազմում (88 %, 2100 բնակիչ): Այս մասում ապրում է նաև 290 մահմեդական:

Հրեական և իսլամական թաղամասերի միջև ընկած հատվածում գտնվում է «Տաճարի բարձունք» (արաբերեն՝ «Հարամ աշ-Շարիֆ) կոչվող հատվածը:

Ըստ հրեական ավանդության (կամ պատմության)՝ այդ բարձունքում է գտնվել հրեա ժողովրդի սրբության սրբոցը՝ Սողոմոնի

տաճարը: Բարձունքի ստորին մասում է գտնվում «Լացի պատը». Սողոմոնի տաճարից մինչև օրս կանգուն է մնացած միակ պարիսպը, որտեղ ուխտագնացություն են կատարում աշխարհի բոլոր հրեաները: Հավատացյալ հրեաների համոզմամբ նույն վայրում Մեսիայի գալստյամբ նա ինքը պետք է նորից կառուցի Սողոմոնի տաճարը:

Տաճարի տեղում 7-րդ դարից գործում է Օմարի մզկիթը, նրա հարևանությամբ՝ իսլամական 3-րդ սրբավայր «Ալ-Ակսա» մզկիթը, որտեղից, իսլամական ավանդության համաձայն, երկինք է համբարձվել Մուհամեդ մարգարեն:

Վերոհիշյալի պատճառով «Տաճարի բարձունքը» և նրան հարող շրջակայքը «կռվախնձոր» են դարձել հրեաների և մահմեդականների միջև:

Մահմեդական թաղամասը Հին քաղաքի ամենախիտ բնակեցվածն է և համասեռը: Այստեղ ապրում է 22000 արաբ, որոնց 94 %-ը մուսուլման է:

Քրիստոնեական թաղամասն ունի բացարձակ մեծամասնություն կազմող քրիստոնյա բնակչություն՝ 4862 մշտական բնակիչներից 3830-ը (79%): Կա մոտ 100 քրիստոնյա կրոնավոր: Այս թաղամասում են գտնվում քրիստոնեական սրբավայրեր «Սուրբ հարություն» տաճարը (որտեղ խաչվել, թաղվել և հարություն է առել Հիսուս Քրիստոսը), «Խաչի ճանապարհը», տասնյակից ավելի քրիստոնեական տարբեր դավանանքների եկեղեցիներ ու մատուռներ: Ներկայացված է երեք պատրիարքարաններով՝ Հունաց ուղղափառ, որին ենթակա են բոլոր ուղղափառ եկեղեցիները (կառավարությունում ուղղափառ եկեղեցիների անունից ձայնի իրավունք ունի միայն Հունաց պատրիարքարանը), Հայոց (որին տրվել են արևելյան՝ ղպտի, եթովպական և ասորի եկեղեցիների ձայների իրավունքը) և Լատին կամ Ֆրանցիսկյան (բոլոր կաթոլիկ եկեղեցիները):

Բ. Պաղեստինյան և իսրայելյան դիրքորոշումները Երուսաղեմի կարգավիճակի վերաբերյալ

Ըստ Պաղեստինյան տեսակետի՝ Արևելյան Երուսաղեմը («Հին քաղաքը» ներառյալ) պետք է դառնա Պաղեստինի պետության մայրաքաղաքը, իսկ Արևմտյանը՝ Իսրայելի: Պաղեստինյան ներկայացուցիչները շարունակում են պահանջել մինչև 1967 թ. սահմանների ստատուս-քվոյի վերականգնումը:

Որպես փոխզիջումային տարբերակ՝ պաղեստինցիները կարող են քննարկել Հրեական թաղամասը և «Լացի Պատը» Իսրայելի ինքնիշխանության տակ թողնելու հարցը: Պաղեստինյան կողմը (հիմնականում լիբերալ մտավորականությունը) դեմ չէ նաև Երուսաղեմը երկու պետությունների բաց մայրաքաղաք հռչակելու տարբերակին, սակայն պայմանով, որ երկու պետությունների բաժանման գիծ ընդունվի մինչև 1967 թվականը եղած սահմանը:

Պաղեստինյան կողմից, ոչ պաշտոնական մակարդակով, հազվադեպ ակնարկներ են հնչում նաև ի պաշտպանություն քաղաքի միջազգայնացման տեսակետի:

Իսրայելյան կողմն իր հերթին համարում է, որ Երուսաղեմն Իսրայելի միացյալ և հավերժական մայրաքաղաքն է և ենթակա չէ վարչական որևէ բաժանման[282]: Որպես փոխզիջումային տարբերակ՝ Հին քաղաքում գտնվող քրիստոնյա և իսլամական սրբավայրերը կարելի է հանձնել պաղեստինցիների կրոնական և մունիցիպալ իշխանությունների ենթակայությանը՝ Իսրայելին վերապահելով պետական գերիշխանությունը: Հայկական թաղամասը պետք է մնա Իսրայելի գերիշխանության տակ՝ հրեական թաղամաս անվտանգ մուտք ապահովելու պատճառաբանությամբ:

---

[282] Դ. Հովհաննիսյան, Արաբա-իսրայելյան հակամարտություն. Երուսաղեմի խնդիրը, ՌԱՀՀԿ., Երևան, 2001:

Իսրայելյան կողմը կարող է քննարկել նաև Արևելյան Երուսաղեմին հարող Աբու-Դիս գյուղը պաղեստինցիներին հանձնելու (ըստ 1995 թ. մշակված տարբերակի) հնարավորությունը պայմանով, որ այն հարակից տարածքներով դառնա Պաղեստինի մայրաքաղաքը: Վերջինս գետնաշեն թունելի միջոցով կմիանա իսլամական 3-րդ սրբավայր Ալ-Ակսա մզկիթին: Ինչ վերաբերում է «Տաճարի բարձունքին», ապա Իսրայելի վարչապետ Եհուդ Բարաքի խոսքերով «Իսրայելի և ոչ մի վարչապետ երբևիցե չի ստորագրի որևէ փաստաթուղթ, որով «Տաճարի բարձունքը» կհանձնվի Պաղեստինի կամ այլ իսլամական մարմնի գերիշխանությանը»:

Գոյություն ունեն Երուսաղեմի կարգավիճակի լուծման մի շարք այլ տարբերակներ, որոնք ներկայացնում են տարբեր միջնորդներ, սակայն երկուստեք մերժել են թե՛ պաղեստինցիները, թե՛ իսրայելցիները:

Երուսաղեմը ՄԱԿ ԱԽ հովանու ներքո հռչակվում է հատուկ կարգավիճակով միջազգային բաց քաղաք՝ բոլոր հավատացյալներին մուտքի և պաշտամունքի լիակատար ազատություն և հավասարություն ապահովելով: Փաստորեն, այս տարբերակը նախատեսված է եղել 1947 թ. ՄԱԿ-ի 181-րդ բանաձևով, որն այդպես էլ կիրառում չգտավ:

Երուսաղեմը հռչակվում է «Աստվածային» քաղաք և վերահսկվում է երեք կրոնների հոգևոր առաջնորդների կողմից (Վատիկանի կարգավիճակի նման, այս դեպքում երեք կրոնների հավասար իրավունքներով):

Ըստ ամերիկյան կողմի ներկայացրած տարբերակի՝ «Տաճարի բարձունքը» բաժանվում է չորս մասի՝ ամեն մեկը տարբեր աստիճանի խառն ինքնիշխանությամբ:

Բոլոր կողմերի համար ակնհայտ է, որ Երուսաղեմի հիմնահարցի կարգավորումը պետք է հիմնված լինի փոխզիջման վրա:

Պաղեստինյան քաղաքագետներից մեկը վստահեցնում է. «Հարցին իրատեսական մոտեցման դեպքում մենք կարող ենք քայլեր ձեռնարկել, որոնք կարող են ծառայել երկու կողմերի մունիցիպալ և քաղաքական շահերին: Բայց առաջին հերթին անհրաժեշտ է հրաժարվել շուրջ 30 տարի իրականացվող ուղեղների լվացումից»:

Երուսաղեմի կարգավիճակի հարցը կարևոր նշանակություն ունի նաև հայ ժողովրդի համար: Հոգևոր և նյութական անգնահատելի արժեքների պահպանման հարցին զուգահեռ այսօր օրակարգում դրված է Երուսաղեմում հայ համայնքի գոյատևման և ապագայի խնդիրը: Հաշվի առնելով 1967 թ. Իսրայելի՝ Երուսաղեմի արևելյան մասի գրավումից հետո հայ ազգաբնակչության շարունակական անկումը, կալվածքների թվի շոշափելի նվազումն ու Պաղեստինի ստեղծվելիք պետության հեռանկարի անորոշությունը՝ հայկական կողմի համար առավել ձեռնտու լուծումը կլինի Երուսաղեմին ՄԱԿ-ի հովանու ներքո միջազգային քաղաքի կարգավիճակի շնորհումը: Հակառակ դեպքում պետք է բացառել Հայկական մասը Երուսաղեմում ներկայացված քրիստոնեական այլ եկեղեցիներից (Ուղղափառ և Լատին) բաժանելու տարբերակը: Այդ նպատակով անհրաժեշտ է նպատակաուղղված և հետևողական գործունեություն ծավալել՝ օգտագործելով ինչպես ՀՀ և Իսրայելի, ՌԴ-ի, Վատիկանի ու Հունաստանի միջև երկկողմ հարաբերությունների, այնպես էլ Հայ առաքելական եկեղեցու և շահագրգռված քրիստոնեական այլ եկեղեցիների համագործակցության ողջ ներուժը:

ԳԼՈՒԽ Ե

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

1. ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼԻԶՄ)[283]

Եթե համառոտակի ձևակերպելու լինենք իսլամական արմատականություն (իսլամիզմ կամ քաղաքական իսլամ) եզրը, ապա այն սովորաբար օգտագործվում է բնորոշելու համար այն մահմեդականներին, որոնց համար իսլամը նրանց քաղաքական գործողությունների կիզակետն է: Վերոհիշյալ եզրերը միջազգային քաղաքագիտական շրջաններում սկսեցին հաճախակի օգտագործվել հիմնականում 1979 թ. Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունից հետո: Մեր օրերի ամենակարևոր երևույթներից մեկի՝ իսլամական արմատականությանն առնչվող հարցերը լուսաբանելիս և քննարկելիս անհրաժեշտ է ցուցաբերել բազմակողմանի և առավել անաչառ մոտեցում:

Իսլամն արտաքուստ միշտ հանդուրժողաբար է վերաբերվել կրոնական այլ դավանանքներին: Դրա հետ մեկտեղ մուսուլմանների զգուշավորությունն այլ կրոնների նկատմամբ և վերջիններիս

[283] Արմատականության վերաբերյալ տե՛ս Dekmejian, R. Hrair. Islam in Revolution: Fundamentalism in the Arab World. 2nd ed. Syracuse, NY, Syracuse University Press, 1995, O'Ballance, Edgar. Islamic Fundamentalist Terrorism, 1979-95: The Iranian Connection. New York, New York University Press,1997, Fluehr-Lobban, Carolyn. Islamic Society in Practice. Gainesville, FL, University Press of Florida, 1994, Peters, Rudolph. Jihad in Classical and Modern Islam. Princeton, NJ, Markus Wiener Publishers, 1996. Braswell, George W. Islam: Its Prophet, Peoples, Politics, and Power. Nashville, TN, Broadman & Holman, 1996, Dershowitz. M.Alan. Why Terrorism Works. Yale University Press, 2002, Kushner.W. Harvey. Essential Readings on Political Terrorism. Nrebraska, University of Nebraska Press, 2002:

գոյությունը հանգիստ ընդունելու անկարողությունն ու ցանկության բացակայությունը մշտապես զարմացրել են եվրոպացիներին: Արևմտյան տարբեր փորձագետների շրջանում հաստատվել է այն կարծիքը, որ Արևմուտքի և Իսլամի միջև գոյություն ունեն խորը և անհաղթահարելի տարաձայնություններ:

Ֆրանսիացի հայտնի ազգագրագետ և փիլիսոփա Կլոդ Լևի-Ստրոսի կարծիքով «իսլամը որոշակիորեն հիմնվում է ոչ այնքան բացահայտ և օբյեկտիվ ճշմարտությունների վրա, որքան շրջապատող աշխարհի հետ շփում հաստատելու իր անկարողության վրա: Մահմեդականները չեն կարող հանդուրժել իրենցից տարբեր որևէ բանի կամ մեկի գոյությունը, ոչ էլ ընդունել այդ «ոչ մահմեդականի»՝ նրանց հետ հավասար գոյության իրավունքը: Միակ միջոցը, մահմեդականների կարծիքով, ինչը կարող է իրենց պաշտպանել որևէ կասկածների արտահայտումից և նսեմացված զգացողությունից, բացասական վերաբերմունքն է օտարների, «եկվորների» նկատմամբ՝ դիտարկելով այդ «բացասական վերաբերմունքը» որպես այլ հավատի և իսլամից տարբեր այլ ապրելակերպի գոյության ճանաչում: Ճշմարտությունն այն է, որ ոչ մահմեդականների հետ շփվելու անխուսափելիության փաստը շատ է մտահոգում մահմեդականներին»:

Վերջին տասնամյակների ընթացքում արաբական աշխարհի վրա կախված արևմտականացման (վեստերնիզացիա) վտանգը հանգեցրեց իսլամական արմատականության ակտիվացմանը: Արաբները, որոնք խստորեն պահպանում են իրենց ավանդույթները, զգում են, որ վերջիններիս գոյությանը վտանգ է սպառնում և գտնում են, որ իսլամը Ալլահի անսահմանափակ իշխանության իր հաստատմամբ կարող է իսկապես իրենց օգնել:

Իսլամը ժամանակակից արաբական աշխարհի միակ ասպեկտն է, որը չի ենթարկվել և չի ենթարկվի «վեստերնիզացիայի»

գործընթացին: Հենց կրոնն է, որ արաբական, մերձավորարևելյան քաղաքակրթության ինքնատիպության պահպանման միակ գրավականն է: Որպես իսլամական ֆունդամենտալիզմի աճի և նրա տարածման հետևանք՝ բավական նշանակալի են դառնում ավանդական գործունեության տարբեր ձևերի ակտիվացումը և իսլամի խորհրդանիշերի լայն օգտագործումը, որոնք հիշեցնում և վերահաստատում են արաբական և իսլամական հին արժեքների անխախտությունն ու արաբների նվիրվածությունը պատմության ստեղծած իդեալներին:

19-րդ դարում իսլամը հիմնականում գաղութային ճնշման դեմ պայքարի շարժիչ ուժն էր: Մուհամմեդ Աբդոն և Ջամալ ալ-Դին ալ-Աֆղանին ոչ միայն տպագրական հեղափոխություն իրականացրին մահմեդականության մեջ՝ հրատարակելով «Ալ-Ուրվա ալ-Վուսղա» և «Ալ-Մանար» կրոնական ուղղվածություն ունեցող օրաթերթն ու ամսագիրը, այլև սկիզբ դրեցին նոր և նորագույն ժամանակաշրջանների իսլամական քաղաքական մտքի զարգացման առաջին փուլին: Այն հիմնականում կենտրոնացավ Արևմուտքի աշխարհիկ նորամուծությունների դեմ պայքարի վրա: Միևնույն ժամանակ նրանք քաջ գիտակցում էին արևմտյան գիտության և տեխնոլոգիաների կարևորությունն արաբական աշխարհի առաջընթացի ապահովման գործում: Ուստի փորձեր կատարեցին հիմնավորելու համար այն դրույթը, որ իսլամը որևէ կերպ հակառակ չէ գիտությանը: Այդ ժամանակվա մահմեդական կառավարիչները, իրենց հայտարարելով իսլամի հետևորդներ, ավելի շատ փորձում էին ոչ թե իշխանություն հաստատել մահմեդական հոծ զանգվածների վրա, այլ օգտագործել իսլամը որպես քաղաքական միջոց՝ արևմտյան երկրների ներթափանցումը կասեցնելու համար:

Ավելի ուշ, երբ նորանկախ ազգային պետությունները կանգնեցին տնտեսական և քաղաքական զարգացման արևմտյան կամ սո-

ցիալիստական (խորհրդային) մոդելի ընտրության առջև, իսլամը նորից քաղաքական հղումների առարկա դարձավ, մասնավորապես պետական մակարդակներում: Այսուհանդերձ, դիտորդներն անուշադրության են մատնել այն հանգամանքը, որ իսլամը շարունակեց հարաճուն կերպով ներազդել ինչպես քաղաքացիական հասարակության, այնպես էլ անհատ քաղաքացիների վրա:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից մինչև 1970-ականների սկիզբն արաբական աշխարհում ակնհայտ էին երկու հիմնական՝ քաղաքական անկախության հետագա ամրապնդման և մոդեռնիզացիայի փորձերի ակնհայտ տապալման իրողությունները: Արաբական աշխարհի մեծամասնության հիմնական խնդիրները՝ աղքատությունը, անգրագիտությունը, գործազրկությունը այդպես էլ չստացան իրենց լուծումը: Մյուս կողմից, ահավոր չափերի հասնող և անկանոն ուրբանիզացիան, սոցիալական հետզհետե աճող շերտավորումը մեծապես նպաստեցին արաբական ավանդական հասարակարգի քայքայմանը: Նախկին սոցիալական կյանքն ավարտվեց՝ տեղը զիջելով երբեմնի քաոսային և ոչ ստեղծագործ հասարակությանը, որտեղ առաջացած բոլոր դժվարությունների և խնդիրների մեղքը բարդվեց դրսից ներմուծված թե՛ արևմտյան, թե՛ սոցիալիստական գաղափարախոսությունների վրա: Իսլամը ժողովրդի համար դարձավ միակ հանգրվանը. իրենց խնդիրների լուծումը նրանք սկսեցին փնտրել կրոնի մեջ:

Իսլամական արմատականության զարգացման համար որպես պարարտ հող ծառայեցին նաև արաբական երկրներում քաղաքական ազատությունների սահմանափակումը, ժողովրդավարական ինստիտուտների բացակայությունը: Այն պայմաններում, երբ քաղաքական կուսակցություններն արգելված են, միությունները՝ անգործունակ, մզկիթները դառնում են այն միակ հավաքատեղին, որտեղ մարդիկ կարող են հանդիպել միմյանց, հարցեր քննարկել և

քաղաքական որոշումներ կայացնել: Նման միջավայրում, բնական է, ստեղծվեցին և իրենց հետագա զարգացումը ստացան մի շարք կազմակերպություններ, որոնք իսլամը հռչակեցին որպես գերագույն իշխանություն: Ստեղծված կազմակերպությունները միատարր չէին և իրար հակասող բազմաթիվ եզրեր ունեին՝ քաղաքական մարտավարությունից մինչև գաղափարախոսական ուղղվածություն: Դա գալիս է ապացուցելու այն, որ գոյություն չունի Իսլամի մեկ և միասնական տեսլական, որ ցանկացած մահմեդական չի կարող գտնել համապարփակ պատասխան իրեն հուզող արդի բոլոր հարցերի վերաբերյալ Ղուրանում, ինչպես որևէ մեկը՝ Աստվածաշնչում:

Իսլամական ամենահին արմատական կազմակերպությունը՝ «Մուսուլման եղբայրները» (Իխվան ալ-Մուսլիմին), Եգիպտոսում 1928 թ. ստեղծել է դպրոցական ուսուցիչ Հասսան ալ-Բաննան: Կազմակերպությունը շատ հզոր էր 1940-1950-ական թվականներին: Սակայն, երբ 1952 թ. «Եղբայրները» հայտարարեցին մեծ քաղաքականության մեջ մտնելու իրենց մտադրությունների մասին և 1954 թ. անհաջող մահափորձ իրականացրին Նասերի վրա, նրանց գործունեությունը կասեցվեց, իսկ կազմակերպության առաջնորդները ձերբակալվեցին: Չնայած Նասերի օրոք հետապնդումների հետևանքով նրանց գործունեությունն անկում ապրեց, սակայն Սադաթի ժամանակ այդ կազմակերպությունը նորից վերականգնվեց՝ իր գործունեությունը տարածելով ողջ արաբական աշխարհում: «Եղբայրները» փորձում են իսլամական արժեքներ տարածել և քարոզում են հավատով եղբայրացած մեկ ազգի (ումմա) և պետության ստեղծումը, ուր ժողովրդի կամքը պետք է գործադրվի ներկայացուցչական կառավարության կողմից խորհրդակցական հիմքի վրա (Ալ-Շուրա), և բոլորը պետք է օժտված լինեն հավասար իրավունքներով: Ներկայումս «Եղբայրները» գործում են չափազանց զգույշ և հաշվենկատ՝ օգտագործելով պայքարի տարբեր միջոցներ:

Արաբական աշխարհում գործող մահմեդական արմատական մյուս խոշոր կազմակերպությունը «Հեզբալլահն» է (Աստծո կուսակցությունը): Այն հիմնադրել է Մահմուդ Գաֆֆարին 1973 թ. Ղոմում (Իրան), սակայն մինչև կուսակցության հիմնադրի մահը և իսլամական հեղափոխությունը Իրանում այդ կուսակցության գործունեությունը գրեթե անտեսանելի էր: Այաթոլա Խոմեյնին, իշխանության գալով, նոր կյանք տվեց այդ կազմակերպությանը, որին անդամակցում էին հիմնականում լյումպենացված երիտասարդությունը, գործազուրկները և սոցիալապես անապահով խավերի ներկայացուցիչները: 1982 թ., երբ Իսրայելը Լիբանանից դուրս քշեց պաղեստինյան ստորաբաժանումները, ստեղծված իրավիճակը օգտագործեց Իրանը և Լիբանանի հարավ ուղարկեց շուրջ 1500 զինվոր (Իսլամական հեղափոխության պահապանների՝ «Փասդարանների» միավորումից): Այդ ընթացքում Լիբանանում գործող շիա մահմեդականների «Ամալ» կազմակերպությունը (հիմնադիր՝ Մուսա Սադր)[284] մասնատվեց, իսկ Այաթոլա Խոմեյնու կողմնակիցներից ստեղծվեց «Հեզբալլահ» կուսակցության մասնաճյուղը: Վերջինիս հոգևոր առաջնորդ ճանաչվեց Սեյեդ Մոհամմադ Հուսեյն Ֆադլալլան, որն այդ պաշտոնին հաստատվեց Թեհրանում, իսկ կազմակերպության ներկայիս գլխավոր քարտուղարն է շեյխ Հասան Նասրալլան: «Հեզբալլահը», «ջիհադ» հայտարարելով Իսրայելին, պայքարում է նրա դեմ և օգտագործելով Լիբանանը՝ աստիճանաբար իր ազդեցությունը տարածում է Պաղեստինյան ինքնավարության տարածքներում ու արագորեն ավելացնում այնտեղ իր համախոհների ու կողմնակիցների թիվը:

Մյուս մահմեդական արմատական կազմակերպությունը՝ «Իսլամական դիմադրության շարժումը» (Հարաքաթ ալ-Մուղավամա

[284] Ըստ որոշ աղբյուրների՝ «կենդանի ռումբերի» մտահղացումն առաջին անգամ հնչեցրել է հենց Մուսա Սադրի աշակերտը՝ Տիրի (Լիբանան) ինժեներական համալսարանի ուսանող Մոհամմադ Սաադին:

ալ-Իսլամիյա (ՀԱՄԱՍ)) Շեյխ Ահմեդ Յասինի գլխավորությամբ սկզբում գործում էր Գազայում որպես «Մահմեդական եղբայրներ» կազմակերպության իսլամական կենտրոն (Ալ-Մուջամաա ալ-Իսլամիյա) և ավելի շատ կողմնակից էր «ներքին ջիհադին», այսինքն՝ մահմեդականների շրջանում իսլամական արժեքների արմատավորմանը և, իսլամի կանոնների համաձայն, նրանց կենսակերպի վերափոխմանը, քան «արտաքին ջիհադին»՝ Իսրայելի դեմ պայքարին: Սակայն 1988 թ. փետրվարին Ինթիֆադայի տարածմանը զուգահեռ վերոհիշյալ կենտրոնը վերածվեց առանձին կազմակերպության՝ «Իսլամական դիմադրության շարժման» (Հարաքաթ ալ-Մուղավամա ալ-Իսլամիյա) և քարեր շպրտելու փոխարեն դիմեց հարձակումների սկզբում ներքին դավաճանների՝ պաղեստինցիների, հետո՝ իսրայելյան զինվորների, ոստիկանների ու քաղաքացիների վրա: 1989 թ. իսրայելյան ուժերը ստիպված եղան ձերբակալել «Համասի» առաջնորդին և տասնյակ ղեկավար անդամներին: Այնուհետև կազմակերպությունը մասնատվեց բազմաթիվ փոքր միավորումների, որոնք, գաղտնի գործելով և առանց իրար հետ կապ ունենալու, կատարում էին տեղական ղեկավարների կարգադրությունները: «Համասը» պատասխանատվություն է կրում բազմաթիվ ահաբեկչական գործողությունների համար[285]:

Բնավ նպատակ չունենալով նկարագրելու կրոնական հենքի վրա գործող արաբական բոլոր կազմակերպությունների գործունեությունը՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդ կազմակերպությունների մեծ մասը, որդեգրելով պայքարի և գործունեության ծայրահեղ միջոցներ՝ ահաբեկումներ, պատանդներ և այլն, թույլատրում են մեկ կարևորագույն ռազմավարական սխալ՝ առաջ

[285] Մինչ 1999 թվականը՝ Շեյխ Ահմեդ Յասինի ազատ արձակումը, Գազայում կազմակերպությունը ղեկավարում էր Աբդուլազիզ Ռանթիսին, իսկ արտաքին քաղաքական ղեկավարությունը Հորդանանից իրականացնում էին Իբրահիմ Ղոշեհը, Աբու Մարզուկը և Խալեդ Մաշաալը: Հետագայում վերջիններս պայքարի մեջ մտան Շեյխ Ահմեդ Յասինի հետ:

քաշելով Իսրայել պետության ոչնչացման անիրատեսական և ծայրահեղական կարգախոսը: Վերջինս առիթ է տալիս Իսրայելին և նրան սատարող ներքին ու միջազգային բոլոր ուժերին արդարացնելու իրենց գործողությունները՝ որպես ինքնապաշտպանական կամ հակաահաբեկչական: Անկախ արաբական դատի արդար լինելու հանգամանքից, այստեղ ևս մենք ականատես ենք դառնում արաբների՝ «օտարի» հետ երկխոսության մեջ մտնելու անկարողությանը և որպես հետևանք՝ քաղաքական անհեռատեսությանն ու հնարավորությունների սահմանափակությանը:

Պետք է նաև արձանագրել, որ արմատական իսլամական այս երեք կազմակերպությունները՝ «Հեզբալլահը», «Համասը» և «Մուսուլման եղբայրները» աստիճանաբար ձերբազատվեցին ռադիկալ գործելաոճից և որդեգրեցին քաղաքական պայքարի ուղին: Փաստորեն, նրանք ակտիվ քաղաքական գործունեությամբ ամրապնդեցին իրենց քաղաքական դիրքերը և վերջին տասնամյակների ընթացքում շոշափելի քաղաքական դերակատարություն ունեցան Լիբանանի, Եգիպտոսի և Պաղեստինի քաղաքական կյանքում:

Ինչ վերաբերում է ահաբեկչությանը՝ որպես պայքարի ձևի, նրա բուն պատճառներին և մեր օրերում դրան դիմակայելու առավել արդյունավետ միջոցներին, ապա պետք է խոստովանել, որ այն դեռ երկար քննարկումների առարկա է լինելու քաղաքագետների և գիտնականների համար: Որտե՞ղ է սահմանագիծն ազգային-ազատագրական պայքարի և ահաբեկչական գործողությունների միջև: Արդյո՞ք վերջինիս պատճառները և հետապնդած նպատակները պետք է լրջորեն հաշվի առնել ահաբեկչական այս կամ այն գործողություններին որակում տալու համար:

Պակիստանցի գիտնական Զիյաուդդին Սարդարի կարծիքով «շուրջ 200 տարի մահմեդականներն անկման շրջան են ապրում հասարակական գործունեության գրեթե բոլոր բնագավառներում՝

տնտեսական, սոցիալական, քաղաքական և մտավոր: Այսօր նրանք հայտնվել են լիակատար կախվածության մեջ իրենց մշտական և թշնամական հակառակորդից՝ արևմտյան քաղաքակրթությունից: «Մոդեռնիզացիայի» և «առաջընթացի» փորձերը՝ մահմեդական հասարակության և մահմեդականների արևմտականացման միջոցով ի սկզբանե դատապարտված էին ձախողման: Այդ փորձերը շատ թանկ նստեցին իսլամական մշակույթի և հասարակության տնտեսական, սոցիալական և քաղաքական կառուցվածքի վրա: Վնասը, որը հասցվել է մահմեդական հասարակությանը, այնքան մեծ է, որ անգամ մեծ ցանկության դեպքում անհնար է վերականգնել կամ վերանորոգել գոյություն ունեցող սոցիալական կառուցվածքները: Իրական և գրեթե միակ այլընտրանք կարող է դառնալ քաղաքական, տնտեսական և սոցիալական այնպիսի համակարգի ստեղծումը, որն արմատապես կտարբերվի աշխարհասփյուռ մահմեդական հասարակություններից»[286]:

Մահմեդական մտավորականներն ակտիվորեն «իսլամական այլընտրանք են» փնտրում իրենց հասարկությունների համար: Շատ երկրներում երիտասարդները կազմակերպում են իսլամի եռանդուն հետևորդների ոչ ֆորմալ խմբեր, որտեղ քննարկումներ են կազմակերպվում իսլամի դերի և հասարակության կյանքում նրա ունեցած ներդրման վերաբերյալ:

Իսլամական շարժման տարածման այս փուլը հատկանշվեց նրանով, որ իսլամի գաղափարախոսները սկսեցին մտածել, թե մահմեդականներն ինչպես կարող են ձեռք բերել քաղաքական իշխանություն: Որոշ տեսաբաններ կողմնակից էին հեղափոխական միջոցների (Սեյիդ Քութբ), իսկ մյուսները՝ աստիճանականությանն այդ հարցում (ավանդապաշտները):

---

[286] Fluehr-Lobban, Carolyn. Islamic Society in Practice. Gainesville, FL, University Press of Florida, 1994, p. 45.

Իսլամական գլոբալ ռազմավարությանը փաստորեն սկիզբ դրվեց 1969 թ. «Իսլամական կոնֆերանս» կազմակերպության ստեղծման հետ միասին, երբ շրջանառության մեջ դրվեցին այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են իսլամական ժողովրդավարությունը կամ իսլամական սոցիալիզմը:

1979 թ. Իրանում[287] տեղի ունեցած իսլամական հեղափոխությունը եկավ ազդարարելու մի նոր ժամանակաշրջանի սկիզբը, երբ համաշխարհային քաղաքական քարտեզի վրա բաժանարար գծեր հայտնվեցին ոչ թե գաղափարախոսական (սոցիալիզմ կամ կապիտալիզմ), այլ քաղաքակրթական գործոններից ելնելով: Արաբական որոշ երկրներ հայտարարեցին զարգացման այլ՝ երրորդ ուղու մասին (Լիբիա):

Անկասկած, իսլամական արմատականությունն իրական սոցիալական ուժ է ներկայացնում արդի աշխարհում: Ինչպես Ալ-Գունդի Ֆադվան է գրում. «Դա իսկապես պատմական պատահականություն էր, որ իսլամը մարտի դաշտում հայտնվեց այն ժամանակ, երբ երկու հիմնական հակամարտող ուժեր էին հանդես գալիս՝ կապիտալիստական և սոցիալիստական: Իսլամիզացիան դինամիկ գործընթաց է, այն վերածվում է իրական ուժի, որը նպաստում է բուն իսլամի պահպանմանը և նախկինում կորցրած դիրքերի վերականգնմանը: Ներկայումս իսլամն ակտիվորեն հանդես է գալիս որպես որոշակի համակարգ, որը նոր առաջացող տարբեր խնդիրների իր սեփական լուծումներն ունի: Իսլամը՝ որպես գիտություն, հավատք, օրենքների և սկզբունքների համակարգ, վերջին տարիների ընթացքում ցուցաբերեց իր դինամիզմը՝ առաջադրելով նորագույն, երբեմն էլ՝ անակնկալ մեկնաբանություններ ու բացատրություններ, ինչպես նաև, ժամանակի պահանջներին հա-

[287] Մինչ օրս, Իրանից բացի, իսլամական պետություն ստեղծվել է Սուդանում և Աֆղանստանում (Թալիբներ):

մապատասխան, խնդիրների կարգավորման սեփական մոտեցումներ»[288]: Այսպես, Սաուդյան Արաբիայի Ֆահդը կոչ արեց իսլամական օրենսդրության մեջ վերականգնել «իջթիհադի» սկզբունքը (մտածել նորովի, ժամանակակից ձևով), իսլամի կարևորագույն սկզբունքների նշանակությունը քննարկելու և գնահատելու նոր մոտեցումներ՝ արդի աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների լույսի ներքո:

Եթե 1993 թվականից սկսած՝ գիտական աշխարհը երկփեղկված էր Սամուել Հանթինգթոնի առաջ քաշած «21-րդ դարը որպես քաղաքակրթությունների բախման հարյուրամյակ»[289] հայտնի կանխատեսման իրատեսական լինելու հարցում, ապա 2001 թ. սեպտեմբերի 11-ին Միացյալ Նահանգներում տեղի ունեցած ահաբեկչությունը, արձանագրելով առաջին նման բախումը, կարծես եկավ հաստատելու վերոհիշյալ թեզի սահմռկեցուցիչ ճշմարտացիությունն ու անխուսափելիությունը: Իսլամական ծայրահեղական գործոնի մուտքը համաշխարհային քաղաքականության մեջ ավետեց նոր և չափազանց վտանգավոր գլոբալ հակամարտության սկիզբը, որն անկանխատեսելի հետևանքներ կարող է ունենալ միջազգային հանրության համար:

Ներկայումս միջազգային անվտանգության համար առաջնային վտանգերից է ահաբեկչությունը, որն ընդունել է մի շարք նոր հատկանիշներ ու գործելու մեթոդներ: Առաջինն այն է, որ ժամանակակից միջազգային (գլոբալ) ահաբեկչությունը՝ հանձին «Ալ-Կաիդայի» և «Իսլամական պետության», պայքարում է աշխարհի քաղաքական համակարգի փոփոխության, այլ ոչ թե մի երկրի սահմաններում դրա տրանսֆորմացիայի համար: Երկրորդը՝ այդ

---

[288] Braswell, George W. Islam: Its Prophet, Peoples, Politics, and Power. Nashville, TN, Broadman & Holman, 1996, p. 97.

[289] Տե՛ս Huntinghton, P. Samuel. The Clash of Civilizations, Harvard University Press, 1993:

ահաբեկչական կազմակերպությունների տեխնոլոգիական, ֆինանսական, ռազմական, մարդկային և այլ հնարավորությունների աննախադեպ ընդլայնումն է, որի արդյունքը նրանց ազդեցության կտրուկ աճն է:

Եվ վերջապես, մարտավարության և առաջնահերթությունների հարցերում առկա տարբերություններից զատ, վերոհիշյալ կազմակերպությունները, իրականում իսլամականության քողի տակ առաջ քաշելով միասնական իսլամական խալիֆայության ստեղծման նպատակը, թիրախավորում են հենց մուսուլմանական երկրները, որոնք ունեն աշխարհիկ, չափավոր վարչակարգեր: «Ալ-Կաիդան» ավելի շատ ահաբեկչական գործողություններ է իրականացրել Մերձավոր Արևելքում (Սաուդյան Արաբիայում, Եգիպտոսում և այլն), քան Արևմտյան Եվրոպայում: Իսկ «Իսլամական պետությունն» իր գործողությունների կիզակետ է ընտրել սկզբում Իրաքը, այնուհետև՝ Սիրիան:

Այս պայմաններում առաջնային է իսլամական արմատականության (ֆունդամենտալիզմ) և իսլամական ծայրահեղականության (էքստրեմիզմ) միջև հստակեցում մտցնելը: Եվ, ինչպես Ե. Պրիմակովն էր ասում. «Իսլամական արմատականությունը կյանքի կարգավորումն ու ղեկավարումն է՝ համաձայն իսլամի, դա մզկիթների կառուցումն է, դա հավատացյալներին տարատեսակ օգնության կազմակերպումն է: Իսկ երբ իսլամական արմատականությունը ընդունում է ագրեսիվ, ծայրահեղական բնույթ, այն վերածվում է պետությանն ու հասարակությանը իսլամական կառավարման մոդելի բռնի պարտադրանքի: Սա արդեն իսլամական ծայրահեղականություն է»[290]:

---

[290] Примаков Е., Ближний Восток на сцене и за кулисами (вторая половина XX - начало века), Москва, 2006, с. 373.

Պատմության այս վճռորոշ փուլում մենք պետք է ջանքեր գործադրենք՝ աշխարհը կրոնական սկզբունքով բաժանելու բոլոր բռնի փորձերը կանխելու համար: Մարդկության զարգացման ու առաջընթացի գրավականը ոչ թե վտանգավոր ու կործանարար բաժանող գծերի ստեղծումն է, այլ տարբեր կրոնների ու քաղաքակրթությունների երկխոսությունը, նրանց խաղաղ գոյակցությունն ու փոխգործակցությունը: Վերջապես, բոլոր կրոնների հիմքում քաղաքակրթական նույն ուղերձներն են ու իմաստությունը, նրանք քարոզում են նույն՝ անփոփոխ սիրո արժեքներն ու երջանիկ ապրելու պատվիրանները:

2. «Արաբական գարուն». պատճառներն ու հետևանքները

2011 թ. գարնանը արաբական մի շարք երկրներում՝ Թունիսում, Եգիպտոսում, Լիբիայում, Եմենում, հեղափոխական հզոր շարժումները, որոնք ստացան «Արաբական գարուն» անվանումը, հանգեցրին այդ երկրներում հին վարչակարգերի տապալմանն ու սկիզբ դրեցին տարածաշրջանային աշխարհաքաղաքական նոր գործընթացներին:

Այսպես կոչված, «Արաբական գարունը» սկսվեց 2010 թ. դեկտեմբերին Թունիսում, երբ ոստիկանների կամայական գործողություններին ի բողոք՝ բանջարեղեն վաճառող երիտասարդ Մուհամեդ Բուազիզին ինքնահրկիզվեց: Սա դարձավ սրընթաց ծավալվող հեղափոխական շարժման հիմնական դրդապատճառը, որից հետո՝ 1987 թվականին, Թունիսի նախագահ Զին Աբեդին Բեն Ալին ստիպված երկրից փախուստի դիմեց:

Եգիպտոսում հեղափոխության բռնկման դրդապատճառ դարձավ 2010 թ. հունիսին Ալեքսանդրիայում ոստիկանների ձեռքով

28-ամյա Խալեդ Սաիդի սպանությունը: Վերջինիս դաժան ծեծի տեսագրությունն արագորեն տարածվեց սոցիալական ցանցերով, և արդեն 2011 թ. հունվարի 25-ին կոչեր հնչեցին հավաքվելու Կահիրեի կենտրոնական Ալ-Թահրիր հրապարակում՝ պահանջելով վերջ դնել ոստիկանության կամայականություններին և վերացնել երկրում գործող «արտակարգ իրավիճակը»: Ցույցեր ու բազմամարդ հավաքներ տեղի էին ունենում երկրի տարբեր քաղաքներում, և շուտով դրանք աստիճանաբար վերածվեցին իշխանությունների՝ ի դեմս բազմամյա (1981 թվականից) նախագահ Հոսնի Մուբարաքի դեմ պայքարի: Վերջինս էլ 2011 թ. փետրվարի 11-ին ստիպված եղավ հրաժարական տալ ժողովրդական հզոր ճնշման ներքո:

Լիբիայում ցեղային բազմազանության և նրանց միջև առկա հակասությունների ու մրցակցության պատճառով «Արաբական գարունն» ընդունեց քաղաքացիական արյունալի պատերազմի բնույթ, ինչն էլ ուղղակի ռազմական միջամտություն իրականացնելու առիթ տվեց օտար ուժերին: 1969 թ. հեղափոխությունից հետո երկիրը միանձնյա կառավարող գնդապետ Մուամմառ Կադդաֆիին հաջողվել էր միջցեղային համաձայնության հասնել և կայունություն հաստատել երկրում: Էներգակիրներով հարուստ այդ երկիրը մշտապես գտնվել է Արևմուտքի ուշադրության կիզակետում, իսկ անկանխատեսելի ու անկառավարելի Քադդաֆին շարունակ գլխացավանք է եղել ԱՄՆ-ի ու նրա դաշնակից եվրոպական տերությունների (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա և այլ երկրներ) համար: Վերջիններս Կատարի հետ միասին, որը թե՛ օբյեկտիվ (դեպի Եվրոպա գազի արտահանում) և սուբյեկտիվ (Կատարի էմիրի անձնական թշնամանքը) պատճառներ ուներ ցանկանալու Կադդաֆիի հեռացումն իշխանությունից, գործադրեցին բոլոր հնարավոր քաղաքական, դիվանագիտական, վերջում՝ ռազմական

միջոցները Լիբիայում իշխանափոխություն իրականացնելու նպատակով: Նախ դրսից սկսեցին գրգռել հիմնականում արևելքում գտնվող նավթային պաշարներով հարուստ Կիրենաիկայի շրջանի բեդվին ցեղերի առաջնորդներին՝ հաշվի առնելով, որ նրանք էին տրիպոլետանիացի Մ. Կադդաֆիի բնական հակառակորդները: Նրանց առավել մեծ մասնաբաժին խոստացան նավթային և գազային շահույթներից: Ներքաղաքական իրավիճակի կտրուկ սրման և իշխանությունների ուժային գործողությունների սաստկացման պայմաններում, 2011 թ. մարտի 17-ին ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդն ընդունեց 1973 բանաձևը, որով կոչ էր արվում «պաշտպանելու քաղաքացիական բնակչությանն ու քաղաքացիներով բնակեցված տարածքները», ինչպես նաև վերոհիշյալն իրականացնելու նպատակով փակել Լիբիայի օդային տարածքը (no fly zone)[291]: ԱՄՆ և ԵՄ պետությունների օդային ուժերը հնարավորություն ստացան նաև հարվածներ հասցնելու լիբիական կառավարական ցամաքային ուժերին: Կադդաֆիի համառ դիմադրությունը և ըմբոստ ցեղերի շեյխերի հետ պայմանավորվածությունը կարծես սկսում էին փոխել իրավիճակը՝ հօգուտ կառավարական ուժերի: Այդ ժամանակ որոշում ընդունվեց ցամաքային ռազմական միջամտության վերաբերյալ, որն էլ իրականացրին Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Կատարը: Հոկտեմբերի 20-ին Մուամմառ Կադդաֆին հայտնաբերվեց Սիրտի իր ապաստարանում և դաժանաբար սպանվեց: Երկիրը ֆրագմենտացվեց և ընկավ տարբեր ցեղերի, իսլամական խմբերի վերահսկողության տակ, իսկ կենտրոնական իշխանությանը մինչ օրս էլ չի հաջողվում վերահսկողություն հաստատել երկրի ողջ տարածքում:

---

[291] *https://www.un.org/press/en/2011/sc10200.doc.htm*, Մինչ այդ, Արաբական պետությունների լիգայի խորհրդի կողմից մարտի 12-ին ընդունված բանաձևը կոչ էր անում ՄԱԿ-ի ԱԽ-ին Լիբիայի օդային տարածքը հայտարարել «ոչ թռիչքային գոտի»:

«Արաբական գարնան» սկզբնական շրջանում Սիրիայում իրավիճակը կայուն էր, և թվում էր արաբական աշխարհում բարձրացած հեղափոխական ալիքն այս անգամ կշրջանցի այդ երկիրը: Սակայն 2011 թ. մարտին Դերաա քաղաքում բռնկված քաղաքացիական անհնազանդության փոքրաթիվ ցույցը վերաճեց անհնազանդության հզոր շարժման ողջ երկրով մեկ: Իշխանությունների խնդիրը կարգավորելու ուժային փորձերին ի պատասխան սկսեց ձևավորվել ընդդիմություն (Սիրիական ազգային խորհուրդը և Սիրիական ազատ բանակը, այնուհետև ձևավորվեց Սիրիական Հեղափոխական և ընդդիմադիր ուժերի Ազգային դաշինքը), որի կայացմանն ու հետագա գործունեությանը սկսեցին բազմապիսի աջակցություն ցուցաբերել արտաքին ուժերը: Մի կողմից Իրանը, լիբանանյան Հեզբալլահը, ավելի ուշ՝ Ռուսաստանը, որոնք աջակցություն էին ցուցաբերում պաշտոնական Դամասկոսին, մյուս կողմից՝ ընդդիմությունը, որը, սնվելով ԱՄՆ-ից, Ֆրանիսայից, Թուրքիայից, Սաուդյան Արաբիայից, Կատարից, քաղաքացիական պատերազմը դուրս բերեցին Դամասկոսի վերահսկողությունից և վերածեցին դասական «միջնորդավորված պատերազմի» (proxy war): Իրավիճակը Սիրիայում բարդացավ նրանով, որ Իրաքից Սիրիա տեղափոխվեցին մեծ թվով զինյալներ սկզբում «Իրաքի և Լևանտի Իսլամական պետություն» (ԻԼԻՊ – արաբերեն՝ «Դաիշ»), հետո՝ «Իսլամական պետություն» անվան տակ 2013 թ. պատերազմի մեջ մտան Բաշար ալ-Ասադի վարչակարգի դեմ: Այնուհետև իրավիճակն էլ ավելի խճճվեց ընդդիմության ճամբարում ծագած անհամաձայնությունների և տարբեր խմբավորումների (ինչպես ԻՊ-ի և «Ալ-Նուսրա ճակատի» (Ալ-Կաիդայի մասնաճյուղը Սիրիայում) միջև պայքարի սաստկացմամբ: Այդ պատճառով էլ ներսիրիական ճգնաժամն ընդունեց տարածաշրջանային ու գլոբալ աննախադեպ ընդգրկում: Դրսից միջամտող ուժերի քանակը ոչ միայն քաղաքա-

ցիական պատերազմում մասնակիցների բազմազանություն ստեղծեց, այլև մեծապես դժվարացրեց ճգնաժամի հանգուցալուծումը: Այն դարձավ արաբական աշխարհում ամենատևական, արյունալի և ավերիչ քաղաքացիական պատերազմներից մեկը, որը, նյութական ահռելի ավերածություններից բացի, արդեն 2016 թ. հանգեցրեց 400.000 սիրիացիների մահվան, 11 մլն սիրիացիներ լքեցին իրենց բնակության վայրերը, 13.5 միլիոնն էլ հրատապ մարդասիրական օգնության կարիքավորներ դարձան[292]:

Արաբական ամենաաղքատ երկրներից մեկում՝ Եմենում, ներքաղաքական իրադարձությունները նույնպես զարգացան միջնորդավորված պատերազմի տրամաբանությամբ, և հեղափոխությունը հանգեցրեց երկրի նախագահ Ալի Աբդալլահ Սալեհի հրաժարականին ու նրա փախուստին երկրից: Այնուհետև երկրի 43 տոկոսը կազմող շիաներն (հուսիները), աջակցություն ստանալով Իրանից, սկսեցին զինված պայքարը իշխանության համար: Հակահուսիական դաշինքը երկրում հովանավորում է Սաուդյան Արաբիան, որը չի կարող հանդուրժել հուսիների ամրապնդումն իր թագավորության թիկունքում: Պատերազմի հետևանքով Եմենում ստեղծվել է աննախադեպ ծավալների մարդասիրական ճգնաժամ:

Իրավիճակի կարճատև վատթարացում արձանագրվեց Բահրեյնում, ուր գոյություն ունի շիական 60 տոկոսանոց մեծամասնություն՝ սուննի մուսուլման Ալ-Խալիֆա տոհմի կառավարման ներքո: Սաուդյան Արաբիայի ռազմական կտրուկ միջամտության շնորհիվ այդ թագավորությունում հնարավոր եղավ խուսափել քաղաքացիական պատերազմից:

Ինչ վերաբերում է «Արաբական գարնան» բուն պատճառներին, ապա անհրաժեշտ է արձանագրել, որ եթե Թունիսում և Ե-

---

[292] Համաձայն "I am Syria" տվյալների՝ 2016 թ. դեկտեմբերին զոհերի թիվը հասել էր 450.000-ի: Տե՛ս *www.iamsyria.org/death-tolls.html*, Nikolaos Van Dam, Destroying a

գիպտոսում հեղափոխության պատճառները գրեթե նույնանման էին, ապա Լիբիայում, Եմենում և Սիրիայում թե՛ ներքին և թե՛ արտաքին պայմաններն ու հիմքերը զգալիորեն տարբեր էին:

Անդրադառնանք այդ երկրներում տիրող **սոցիալ-տնտեսական իրավիճակին**:

Մուբարաքի կառավարման տարիներին Եգիպտոսի տնտեսությունը աճել էր գրեթե 4,5 անգամ, աղքատության մակարդակը նվազել էր և Արևելյան Եվրոպայի որոշ երկրների մակարդակից ցածր չէր, սով չի եղել վերոհիշյալ որևէ երկրում՝ բացառությամբ Եմենի, իսկ Թունիսն ավելի նվազ կոռումպացված երկիր էր, քան ԵՄ անդամ Իտալիան (Transparency International): Մինչ հեղափոխությունը Լիբիան համարվում էր արաբական ամենահարուստ երկրներից մեկը. ՀՆԱ-ն հասել էր 14.878 ԱՄՆ դոլարի (մեկ շնչի հաշվարկով), գործազրկությունը 20 տոկոս էր կազմում, այն էլ ոչ թե աշխատատեղերի պակասի, այլ աշխատելու ցանկության բացակայության պատճառով: Լիբիայում անվճար էին կրթությունը (անգամ արտասահմանում ուսանելը) և առողջապահությունը, իսկ յուրաքանչյուր ընտանիք պետությունից ստանում էր 60.000 ԱՄՆ դոլար՝ նոր բնակարան կամ տուն գնելու և 7000 դոլար յուրաքանչյուր նորածին երեխայի համար: Ուրեմն որո՞նք էին այն հիմնական գործոնները, որոնք արաբական այդ երկրների բնակչությանը ստիպեցին անհաշտ պայքարի դուրս գալ իրենց երկարամյա կառավարիչների դեմ: Որո՞նք էին հեղափոխական այդ ալիքի պատճառները:

Առաջին կարևոր գործոնը 2007–2008 թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում գների կտրուկ աճն էր, ինչն էլ իր հերթին հանգեցրեց առաջին անհրաժեշտության ապրանքների գների բարձրացմանը նաև արաբական երկրներում:

Nation. The Civil War in Syria. I.B. Tauris, 2017, p. 65:

Երկրորդ գործոնը առնչվում էր գործազրկությանը: Եթե Եգիպտոսում և Թունիսում գործազրկության ընդհանուր մակարդակը չէր գերազանցում 10 տոկոսը, ապա երիտասարդների շրջանում, հատկապես կրթություն ստացած և 20–30 տարեկան, գործազրկությունը 45 տոկոսի էր հասնում: Սա էլ այն հիմնական զանգվածն էր, որն իրականացրեց հեղափոխությունները Եգիպտոսում և Թունիսում: Երրորդ կարևոր գործոնը վերջին տասնամյակում, հատկապես Եգիպտոսում, բնակչության սրընթաց աճն էր՝ տարեկան շուրջ 10 տոկոս, ինչն առաջացրել էր տնտեսական լրջագույն խնդիրներ և որի հետևից չէր հասցնում տնտեսությունը. թեև հետևողականորեն աճ էր արձանագրվում, սակայն բնակչության աճի նույն տեմպերով անկարող էր զարգանալ: Իրավիճակը բարդանում էր նաև գերբնակեցմամբ, երկրի 80 մլն բնակչությունը տեղաբաշխված է Եգիպտոսի տարածքի միայն 5 տոկոսի վրա: Եվ, վերջապես, հեղափոխության համար թե՛ Եգիպտոսում և թե՛ Թունիսում հեղափոխական շարժման ծավալման, երիտասարդության մոբիլիզացման ու կազմակերպման համար կարևորագույն դերակատարություն ունեցան սոցիալական ցանցերը, որոնք ապահովեցին ինքնաբուխ շարժման համակարգումը, մարդկանց մոբիլիզացումն ու անհրաժեշտ օպերատիվ ուղղորդումը:

Եգիպտոսի և Թունիսի դեպքերում որոշակի զուգահեռներ կարելի է անցկացնել՝ նաև հեղափոխությունից առաջ այդ երկրներում ստեղծված **<u>ներքաղաքական իրավիճակից</u>** ելնելով:

Եգիպտոսում 1981 թվականից իշխանության ղեկին էր Հոսնի Մուբարաքը, իսկ Թունիսում՝ 1987 թվականից Զին Աբեդին Բեն Ալին: Սակայն, եթե Հ. Մուբարաքն իր որդուն՝ Գամալ Մուբարաքին, իրեն փոխանորդ էր պատրաստում, ապա Թունիսի նախագահը, 2002 թ. փոխելով Սահմանադրությունը, պատրաստվում էր նախագահության վեցերորդ ժամկետին: Եթե Եգիպտոսում Մուբարաքի

որդին աստիճանաբար իր ձեռքում էր կենտրոնացրել երկրի տնտեսությունը, ապա Թունիսում նախագահի կինը՝ Լեյլա Թրաբելսին և նրա ընտանիքը վերահսկում էին երկրի տնտեսության 30 տոկոսը և մենաշնորհային դիրք էին զբաղեցրել երկրի տնտեսության տարբեր ոլորտներում: Երկու երկրներում էլ գոյություն ունեին հակասություններ, որոնք, օրինակ, Եգիպտոսում բանակի և նախագահի որդու թիմի միջև հիմնականում տնտեսական շահերի շուրջ էին: Զինվորականությունը դեմ էր իշխանության փոխանցմանը քաղաքացիական Գամալ Մուբարաքին: Իսկ Թունիսում առկա էին հակասություններ բանակի և հատուկ ծառայությունների միջև, որի վրա հենվում էր նախագահը, և որի թվաքանակը շուրջ չորս անգամ գերազանցում էր բանակինը: Փաստորեն, բանակի վերնախավի հրաժարումը Բեն Ալիին աջակցելուց ստիպեց վերջինիս հրաժարական տալ: Եգիպտոսում իրավիճակը բարդացրեց այն հանգամանքը, որ «Մուսուլման եղբայրները» թեև արգելված էին երկրում, սակայն, որպես «անկախ» պատգամավորներ մշտապես ներկա էին խորհրդարանում: 2010 թ. խորհրդարանական ընտրությունների ավարտին երկրում հեղինակություն վայելող «Մուսուլման եղբայրները» ոչ մի պատգամավոր չունեցան, ինչը մեծ հիասթափություն և զայրույթ առաջացրեց կրոնական արմատական այդ կազմակերպության մեծաթիվ աջակիցների շրջանում՝ հավելյալ լիցք հաղորդելով Եգիպտոսում ծավալված հեղափոխական գործընթացին:

Եթե Թունիսում և Եգիպտոսում էլիտաների միջև պայքարը ընթացավ նմանատիպ սցենարով, ապա Լիբիայում, հաշվի առնելով երկրում առկա միջցեղային հակասությունները, հեղափոխությունը միանգամայն այլ բնույթ ստացավ: Փաստորեն, երկրի՝ հիմնականում արևելյան էներգակիրներով հարուստ շրջանի ցեղերի շեյխերը ընդվզեցին Կադդաֆիի դեմ՝ էներգակիրների շահագործման և

դրանից ստացվող եկամուտների բաշխման մեջ ավելի մեծ մասնաբաժին ունենալու ակնկալիքով: Մուամմառ Կադդաֆիի սպանությունը վերջ չդրեց քաղաքացիական պատերազմին, այն ուղղակի վերածվեց «բոլորն ընդդեմ բոլորի» պայքարի՝ դուրս բերելով երկրի բազմաթիվ շրջաններ կենտրոնական իշխանության վերահսկողությունից ու փաստացի հարցականի տակ դնելով Լիբիայի որպես միասնական պետության հետագա գոյության հարցը: Այնտեղ ձևավորվեց փաստացի երկիշխանություն, մի կողմից Տրիպոլիում իսլամական Համընդհանուր ազգային կոնգրեսի և մյուս կողմից՝ հակաիսլամական ճակատի, որը կազմված է Տոբրուկում գործող միջազգայնորեն ճանաչված Աբդալլահ Ալ-Թանիի կառավարությունից և գեներալ Խալիֆա Խաֆթարի ազգային բանակից: Այս մրցակցող ուժերի երկու կենտրոններն հավասարապես իրար մեջ բաժանեցին պետության տարածքը: Ներազգային համաձայնության հասնելու բոլոր փորձերն ապարդյուն էին:

Եմենը, թեև արաբական աշխարհի մյուս երկրների հետ որոշակի ընդհանրություններ ուներ սոցիալ-տնտեսական և քաղաքական-ժողովրդագրական զարգացման դինամիկայի տեսանկյունից, սակայն շարունակում է մնալ ծայրամասում, որի քաղաքական մշակույթը դեռևս պահպանում է միջնադարյան հասարակության որոշ էլեմենտներ: Եմենը ուղղակի չհասավ սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական այն նախադրյալներին, որոնք հիմք հանդիսացան Հյուսիսային Աֆրիկայում և Մերձավոր Արևելքում Արաբական գարնան ծագման համար: Այդ պատճառով էլ վերնախավի ներսում առկա ճեղքվածքը, որն ընդունեց Սալեհ և ալ-Ահմար ընտանիքների, այդ թվում՝ նաև անցումային շրջանի ռեժիմի հակամարտության տեսք, բավարար հիմք չհանդիսացան երկրի քաղաքական վարչակարգի փոփոխման համար: Պետության ներսում առկա կրոնական բազմազանությունը օգտագործեցին դրսի ուժերը՝ Իրանն ու Սաուդ-

յան Արաբիան՝ հրահրելով պատերազմ, որն ավերիչ հետևանքներ ունեցավ Եմենի և նրա ժողովրդի համար:

Արաբական գարունը Մերձավոր Արևելքում հանգեցրեց հետևյալ լրջագույն աշխարհաքաղաքական փոփոխությունների: Արաբական գարնանը հաջորդեցին քաղաքացիական պատերազմները Լիբիայում, Սիրիայում և Եմենում՝ վերջիններիս կանգնեցնելով տրոհման և ֆրագմենտացման իրական հեռանկարի առջև:

Արաբական գարնանից հետո «Մուսուլման եղբայրների» կարճատև իշխանություն ոչ միայն հանգեցրեց տնտեսական լուրջ ճգնաժամի, այլև նպաստեց տարածաշրջանային առանցքային երկրի՝ Եգիպտոսի միջազգային դիրքի շոշափելի թուլացմանը:

Տեղի ունեցավ տարածաշրջանի հետագա բևեռացում, նաևսուննի-շիա հակամարտության աննախադեպ ակտիվացում՝ Իրանի և Սաուդյան Արաբիայի միջև տարածաշրջանային գերիշխանության համար մղվող պայքարի ակնհայտ սրմամբ:

Կտրուկ աճեց Թուրքիայի տարածաշրջանային դերը:

Ստեղծվեց Իսլամական պետությունը, որի ռազմավարությունն ու պայքարի մեթոդները, ի տարբերություն Ալ-Կաիդայի (հիմնականում թիրախավորում է ԱՄՆ-ն և նրա դաշնակիցներին), նախանշեցին պայքարի որակական նոր փուլի սկիզբը և սպառնում են մշտական լարվածության մեջ պահել տարածաշրջանի աշխարհիկ վարչակարգերն ու էլ ավելի ապակայունացնել Մերձավոր Արևելքը:

Տարածաշրջանային քաղաքականության առաջնագծում հայտնվեց Քրդական հարցը, հատկապես Սիրիայում որտեղ քաղաքացիական պատերազմի արդյունքներով քրդերն Արևմտյան Քրդստանի (Ռոժավա) ինքնավարություն ստեղծելու հնարավորություն ստացան, ինչը դրդում է Թուրքիային ուղղակի ռազմական միջամտություն իրականացնել Սիրիայում՝ նշված զարգացումը թույլ չտալու համար: Հակառակ դեպքում երկարատև հեռանկարում այն

կարող է վերածվել Թուրքիայի ապակայունացման հիմնական գործոնի, ինչն էլ կարող է հանգեցնել անկանխատեսելի հետևանքների՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիրիայի քրդերը սահմանից այն կողմ պայքարող իրենց ցեղակիցների հետ սերտորեն կապված են ոչ միայն արյամբ, այլև՝ քաղաքականապես:

Խթանեց Իսրայելի և արաբական երկրների, հատկապես Սաուդյան Արաբիայի ու Ծոցի այլ երկրների (ԱՄԷ, Օման) միջև գործակցությունը, որի հիմնական թիրախն Իրանն ու տարածաշրջանում նրա դաշնակիցներն են՝ Սիրիան, Լիբանանը, Հեզբալլահը, Պաղեստինյան Համասը, Իրաքում և Բահրեյնում շիական մեծամասնությունները, Եմենի հուսիները:

Արաբական գարունը Ռուսաստանի Դաշնությանը «վերադարձրեց» Մերձավոր Արևելք, որտեղ ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ-ն ստանձնել էր միակ գերտերության դերը: Սիրիական ճգնաժամում Մոսկվան դարձավ արտաքին կարևոր ուժերից մեկը, որը պաշտպանեց իշխող վարչակարգն ու հնարավորություն տվեց Բաշար ալ-Ասադին շարունակելու պայքարը:

Փաստորեն, 1991 թ.՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, հենց Սիրիայում ծավալվեց առաջին լուրջ պայքարը ՌԴ-ի և ԱՄՆ-ի միջև՝ Մերձավոր Արևելքում (երկու երկրների անմիջական ռազմական միջամտության ու ներկայության տեսքով) տարածաշրջանային նոր աշխարհակարգի ձևավորման հողի վրա:

3. Սիրիական ճգնաժամը

Արաբական գարնան սկզբում թվում էր, որ այն կարող է շրջանցել Սիրիան: Սակայն 2011 թ. մարտին երկրի հարավային Դերաա քաղաքում բռնկված բողոքի ոչ մարդաշատ ցույցն աստիճանաբար ծավալվեց ողջ երկրում[293]:

Խնդիրը կարգավորելուն ուղղված իշխանությունների ուժային փորձերին ի պատասխան սկսեց ընդդիմություն ձևավորվել (Սիրիական ազգային խորհուրդը և Սիրիական ազատ բանակը, այնուհետև կազմավորվեց Սիրիական հեղափոխական և ընդդիմադիր ուժերի ազգային դաշինքը), որի կայացմանն ու հետագա գործունեությանը օժանդակում էին արտաքին ուժերը: Իրանը, Ռուսաստանը, լիբանանյան Հեզբալլահը աջակցություն էին ցուցաբերում պաշտոնական Դամասկոսին, իսկ ԱՄՆ-ն, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Թուրքիան, Իսրայելը, Սաուդյան Արաբիան, Քաթարը և ԱՄԷ-ն՝ սիրիական ընդդիմությանը: Այսպիսի հզոր արտաքին միջամտության արդյունքում քաղաքացիական պատերազմը դուրս եկավ Դամասկոսի վերահսկողությունից և վերաճեց դասական «միջնորդավորված պատերազմի» (proxy war) վերոհիշյալ երկու հիմնական խմբերի միջև:

Իրավիճակը հստակ պատկերացնելու համար հարկ է նշել, որ թեև 2011 թ. հունիսին հայտարարվեց սիրիական ընդդիմության

---

[293] Որոշ հեղինակներ սիրիական հեղափոխության սկզբնական տարեթիվ են համարում 2011 թ. փետրվարի 17-ը, երբ Դամասկոսի Հարիկա թաղամասում տեղի ունեցան հակակառավարական ցույցեր, կամ հունվարի 26-ը, երբ սիրիացի Հասան Ալի Աղլահը ինքնահրկիզման փորձ կատարեց ալ-Հասակայում, ճիշտ ինչպես Թունիսում Մուհամմեդ Բուազիզին: Տե՛ս Carsten Wieland, Syria-A Decade of Lost Chances: Repression and Revolution from Damascus Spring to Arab Spring. Seattle, 2012, pp. 16-19, Charles R.Lister, The Syrian Jihad: Al-Qaeda, The Islamic State and the Evolution of an Insurgency. London, 2015, p. 12, David W.Lesch, Syria: the Fall of the House of Assad, London, 2012, p. 92, Nikolaos Van Dam, Destroying a Nation. The Civil War in Syria, I.B. Tauris, London, 2017, p. 192.

հիմնական ռազմական միավորի՝ Ազատ սիրիական բանակի (ԱՍԲ) (Free Syrian Army, FSA) ստեղծման մասին, որն էլ դարձավ ամենահայտնի ընդդիմադիր զինվորական կազմակերպություններից մեկը, սակայն այն այդպես էլ չվերածվեց ամենահզոր և ամենաարդյունավետ կառույցի: Արևմտյան երկրները ճանաչեցին ԱՍԲ-ն որպես չափավոր աշխարհիկ կազմակերպություն և համաձայնեցին համագործակցել նրա հետ վարչակարգի, իսկ ավելի ուշ՝ Իսլամական պետության դեմ պայքարում: Հարկ է նշել, որ ԱՍԲ ղեկավարությունը գտնվում էր ոչ թե Սիրիայում, այլ՝ Թուրքիայի հարավում, ինչն ի սկզբանե թուլացնում էր նրա դիրքերը թե՛ լեգիտիմության և թե՛ արդյունավետության տեսանկյունից: ԱՍԲ-ն մեծապես կախված էր տարբեր պետությունների տրամադրած օգնությունից, որոնք չէին համակարգում իրենց ռազմական օժանդակությունը, իսկ ԱՍԲ-ի ներսում առկա ֆրագմենտացումն ու միասնականության բացակայությունն անհնար էին դարձնում սիրիական վարչակարգի դեմ արդյունավետ պայքարը:

Զինվորական կառավարման կենտրոններ ստեղծվեցին Թուրքիայում և Հորդանանում՝ սիրիական ընդդիմադիր ուժերին, համապատասխանաբար երկրի հյուսիսում և հարավում, ռազմական օժանդակություն ցուցաբերելու նպատակով: Տեղին է նաև ընդգծել, որ այս կենտրոններում ներգրավված տարբեր երկրներ գործում էին իրարից անկախ և հետապնդում էին սեփական շահերն ու նպատակները, ինչն իր հերթին չէր նպաստում ընդդիմության ուժերի կենտրոնացմանն ու թուլացնում էր ԱՍԲ-ի դիրքերը: Իսկ, օրինակ, դոնոր երկրներ Թուրքիան և ԱՄՆ-ն երբեմն իրար հակասող հրահանգներ էին իջեցնում սիրիական զինվորական հրամանատարներին Իսլամական պետության դեմ ընթացող մարտերի ժամանակ՝ սպառնալով դադարեցնել օգնությունն իրենց հրահանգները չկատարելու դեպքում:

Քաղաքացիական պատերազմի հաջորդ փուլում՝ 2013 թ., իրավիճակն էլ ավելի բարդացավ, քանի որ Իրաքից Սիրիա տեղափոխվեցին մեծ թվով զինյալներ սկզբում «Իրաքի և Լևանտի Իսլամական պետություն» (ԻԼԻՊ արաբերեն «Դաիշ»), հետո՝ «Իսլամական պետություն» անվան տակ, որոնք պատերազմի մեջ մտան Բաշար ալ-Ասադի վարչակարգի դեմ: Այնուհետև իրավիճակն էլ ավելի բարդացավ ընդդիմության ճամբարում ծագած անհամաձայնությունների և տարբեր խմբավորումների միջև ընթացող պայքարի սաստկացմամբ, ինչպես ԻՊ-ի և «Ջաբհաթ ան-Նուսրայի»[294] (Ալ-Կաիդայի մասնաճյուղը Սիրիայում) միջև: Վերջինս իր առաջնային նպատակն էր համարում Բաշար Ալ-Ասադի հեռացումը իշխանությունից և երկրի կառավարման ձևի փոփոխումը իսլամականի: Իսկ «Իսլամական պետության» նպատակներն էլ ավելի ամբիցիոզ էին՝ «համաշխարհային խալիֆաթի ստեղծում», որը չէր սահմանափակվում Սիրիայով, այլ ընդգրկելու էր մի քանի երկրներ: Հիշարժան է, որ չսպասելով Ասադի հեռացմանը նրանք անմիջապես սկսեցին կառուցել իրենց «այսրսահմանային կվազի-պետականությունը» գրավյալ տարածքներում[295]: Այդ իսկ պատճառով էլ ներսիրիական ճգնաժամն ընդունեց տարածաշրջանային ու գլոբալ աննախադեպ ընդգրկում: Դրսից միջամտող ուժերի քանակը ոչ միայն ստեղծեց քաղաքացիական պատերազմում մասնակիցների բազմազանութ-

---

[294] Թեև «Ջաբհաթ ան-Նուսրա»-ն ԱՄՆ-ի կողմից պաշտոնապես ընդգրկվել էր ահաբեկչական խմբավորումների ցուցակում, այնուամենայնիվ ԱՍԲ-ն համակարգում էր նրա հետ Ասադի դեմ պայքարին առնչվող մարտավարական հարցերը: Այսպես, 2013 թ. մարտին գործելով համատեղ՝ ԱՍԲ և «Ջաբհաթ ան-Նուսրայի» իսլամական ջոկատները գրավեցին Ռակկան, որն առաջին նահանգային կենտրոնն էր, որ ընկավ ապստամբների վերահսկողության տակ և մինչ պատերազմն ուներ 200 հազար բնակիչ: «Ջաբհաթ ան-Նուսրայի» հետ միասին *Իսլամական դաշինքի մեջ էին մտնում նաև «Ահրար աշ-Շամ», «Ջունուդ ալ-Ակսա», «Լիվա Ֆուրսան ալ-Հակ», «ԱՍԲ 13-րդ դիվիզիա»* և այլ կազմավորումներ:

[295] «Сирийский рубеж», под редакцией М. Ю. Шеповаленко, Центр анализа стратегий и технологий, Москва, 2016, с. 80.

յուն, այլև մեծապես դժվարացրեց ճգնաժամի հանգուցալուծումը:

Հոլանդացի դիվանագետ և անվանի սիրիագետ Նիկոլաոս Վան Դամի կարծիքով հնարավոր չէր Սիրիայում խուսափել քաղաքացիական պատերազմից՝ հաշվի առնելով «տարիներ ի վեր սիրիական իշխանությունների վարած ներքին քաղաքական սխալներն ու սիրիական ընդդիմությանը ցուցաբերվող արտաքին օժանդակության ծավալները»[296]: Հարկ է նշել, որ դեռևս ճգնաժամի սկզբում, երբ իրավիճակն անհուսալի չէր թվում, ընդդիմադիր գործիչներ Մ. Կիլոն, Ա. ալ-Բուննին, Մ. Խադդամը և ուրիշներ փորձեցին հասնել ազգային համաձայնության և խուսափել արյունահեղությունից: 2011 թ. հունիսին նրանք հավաքվեցին Դամասկոսում և պահանջեցին «խաղաղ անցում ժողովրդական, քաղաքացիական և բազմակարծությունն ապահովող պետության»: Հարկ է նշել, որ թեև իշխանությունները սկզբանական շրջանում փորձեցին մտրակի և քաղցրաբլիթի քաղաքականություն վարել՝ մի կողմից կոշտ, անհամաչափ ուժ կիրառելով ցուցարարների նկատմամբ, մյուս կողմից՝ քայլեր ձեռնարկելով համայնքային ու ներազգային լարվածությունը թուլացնելու ուղղությամբ: Այդպես, բանտից ազատ արձակվեց 260 քաղբանտարկյալ (մեծ թիվ էին կազմում իսլամիստները), 2011 թ. ապրիլի 7-ին Սիրիայի նախագահի հրամանագրով երկրի հյուսիս-արևելքում բնակվող շուրջ 220.000 քրդերի շնորհվեց Սիրիայի քաղաքացիություն, որից քրդերը զրկված էին դեռ անցյալ դարի 60-ականների սկզբից: Նույն ամսվա վերջին Սիրիայի նախագահը վերացրեց 48 տարի երկրում գործող «արտակարգ դրությունը», իսկ ավելի ուշ անգամ ստեղծվեց Հաշտեցման նախարարություն: Այսուհանդերձ, 2011 թ. հունիսին բռնություններն ու

[296] Nikolaos Van Dam, Destroying a Nation. The Civil War in Syria, I.B. Tauris, London, 2017, p. 64.

հակաբռնություններն աճեցին այն աստիճան, որ անհնար դարձավ որևէ խաղաղ քննարկում և երկխոսություն ռեժիմի ու ընդդիմության միջև: ԱՄՆ-ն արդեն իսկ 2013 թ. ԱՍԲ-ին ցուցաբերում էր շոշափելի ռազմական աջակցություն՝ մատակարարելով տարբեր տեսակի զենք ու զինամթերք, իսկ 2014 թ. սեպտեմբերից սկսեց ուղղակի օդային հարվածներ հասցնել «Իսլամական պետության» դիրքերին Սիրիայում: 2014-2015 թթ., ԱՄՆ-ից բացի, այդ գործողություններին մասնակցում էին Ավստրալիայի, Բահրեյնի, Բելգիայի, Կանադայի, Ֆրանսիայի, Հորդանանի, Սաուդյան Արաբիայի, Թուրքիայի, ԱՄԷ-ի և Մեծ Բրիտանիայի օդային ուժերը[297]: 2014-2016 թթ. ԱՄՆ-ն ֆինանսավորեց «Սիրիական վարժեցում և զինում» (Syrian Train and Equip Program) ծրագիրը, որի միջոցով սիրիական ընդդիմադիր ուժերը նախապատրաստվում էին Սիրիայում և Թուրքիայում Իսլամական պետության դեմ պայքարին[298]: Այնուհետև ԱՄՆ-ն 2017 թ. սեպտեմբերին Սիրիայում տեղակայեց նաև շուրջ 4000 հատուկ ջոկատայիններ, որոնք օժանդակում էին քրդական ջոկատներին Ռակկայի գրավման ընթացքում[299]: 2015 թ. սկզբին ռազմավարական իրավիճակը սիրիական կառավարական ուժերի համար ծայրահեղ անհաջող էր ընթանում: Անգամ Իրանի[300] և «Հեզբալլահի» ուղղակի ռազմական աջակցության պայմաններում թուլացած և բարոյալքված սիրիական բանակն անցնե-

---

[297] “Сирийский рубеж”, под редакцией М.Ю.Шеповаленко, Центр анализа стратегий и технологий, Москва, 2016, с. 82.

[298] ԱՄՆ-ն ծախսեց շուրջ 500 մլն ԱՄՆ դոլար: “Obama Administration Ends Effort to Train Syrians to Combat ISIS”. The New York Times. *9 October 2015. Retrieved 24 October 2011.*

[299] Ըստ Պենտագոնի՝ 2017 թ. դեկտեմբերին Սիրիայում գտնվում էին 2000-2500 հատուկ ջոկատայիններ: *There are four times as many U.S. troops in Syria as previously acknowledged by the Pentagon* The Washington Post, 6 December, 2017.

[300] Իրանն աջակցում էր սիրիական բանակին ոչ միայն զենքի և զինամթերքի առաքումներով, այլև զինվորներով, որոնք կազմված էին շիական միլիցիայի իրաքյան կամավորներից ու աֆղանցի կամավորներից (շիա-խազարացիներ), որոնք միավորվել էին «Ֆաթիմիյուն» դիվիզիայի մեջ:

լով ռազմավարական պաշտպանության, ի վիճակի չեղավ հարձակողական լուրջ գործողություններ իրականացնելու: Պաշտոնական Դամասկոսը մայիսին կորցրեց գրեթե ողջ Իդլիբ նահանգն ու նրա հարյուրհազարանոց Իդլիբ քաղաքը: Ծանր էր իրավիճակը նաև Լաթակիայի նահանգում, որտեղ ապստամբներն ԱՍԲ-ի գլխավորությամբ մոտեցել էին ծովափնյա շրջանին: Մայիսին իսլամիստները գրավեցին Պալմիրան և ալ-Քարյաթեյնան, ինչը նրանց հնարավություն տվեց վերահսկելու անապատային հսկայական տարածությունները և այնտեղ գտնվող նավթագազային հանքերն ու խողովակաշարերի ամբողջ համակարգը:

Այդ ընթացքում երկրի հյուսիս-արևելքում ԱՄՆ խոշորամասշտաբ աջակցությամբ ի հայտ էր գալիս նոր «խաղացող» սիրիական պատերազմում՝ քրդական ազգային ինքնապաշտպանական ջոկատները (YPG), որոնք 2014 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին մղված արյունահեղ կռիվներից հետո իրաքյան քրդական փեշմերգաների հետ միասին ազատագրեցին Կոբանի քրդական քաղաքը, իսկ 2014 թ. վերջում և 2015 թ. սկզբում կարողացան «Իսլամական պետությունից» Թուրքիային սահմանակից զգալի տարածքներ ազատագրել:

Նման պայմաններում Սիրիայի ղեկավարությունը ռազմական աջակցության խնդրանքով դիմեց ՌԴ իշխանություններին, իսկ 2015 թ. սեպտեմբերի վերջին ՌԴ-ն ակտիվ օդային գործողություններով զգալի օգնություն ցուցաբերեց Սիրիայի ազգային բանակին ու երկրի իշխանությունների հետ միասին պայքարող մյուս ուժերին՝ իսլամիստների առաջխաղացումը կասեցնելու և աստիճանաբար նրանց գրաված տարածքներն ու քաղաքները Սիրիայի իշխանությունների վերահսկողությանը վերադարձնելու գործում: Սկսվեց սիրիական պատերազմի նոր փուլը, որը նշանավորվեց կառավարական ուժերի հարձակմամբ Սիրիայի հյուսիսից՝ Լաթակիայի լեռնա-

յին հյուսիսարևմտյան շրջաններից մինչև Հալեպի մերձակա շրջանները: Մինչև 2016 թ. ընդդիմադիր չափավոր խմբավորումների հետ կնքված զինադադարը հնարավորություն տվեց կառավարական ուժերին կենտրոնացնելու ուժերը «Իսլամական պետության» դեմ պայքարում և ազատագրելու Պալմիրան, Հոմսը, Հալեպը և այլ կարևորագույն շրջաններ:

Ինչ վերաբերում է սիրիական ճգնաժամում Իսրայելի դիրքորոշմանը, ապա հարկ է նշել, որ Իսրայելը հետապնդում է տարբեր նպատակներ, ներառյալ Սիրիայում իրանական ազդեցության նվազեցումը, Հեզբալլահին զենքի մատակարարումների կասեցումը, Սիրիայի կողմից ռազմական վտանգի չեզոքացումը կամ Իրանին սիրիական տարածքն Իսրայելի դեմ օգտագործելու հնարավորության կանխարգելումը, Գոլանի բարձունքների[301] նկատմամբ սիրիական ինքնիշխանության հաստատման բացառումը, Իսրայելի սահմանին սուննի զինյալների ենթակառուցվածքների կամ ռազմական ճամբարների կառուցման խոչընդոտումը: Թեև Իսրայելը գործնականում շատ քիչ կարողություն ունի սիրիական տարածքում իրադարձություններին ուղղակի միջամտելու կամ ազդելու, այնուամենայնիվ նա երկարատև հեռանկարում ցանկանում է Սիրիայում տեսնել իր հետ խաղաղ գոյակցող նոր կենտրոնաձիգ աշխարհիկ կառավարություն, որն արդյունավետորեն կվերահսկի երկրի տարածքը, կդիմակայի Իրանի միջամտությանն ու ազդեցությանը և,

[301] Իսրայելի ջրամատակարարման մեկ երրորդը գալիս է Գոլանի բարձունքներից: Ընդհանրապես ջրային խնդիրը կարևոր դեր է խաղում արաբա-իսրայելական հակամարտության մեջ: Իսկ Պաղեստինի դեպքում ջրային անհավասար բաշխումը Իսրայելի գործողությունների պատճառով հանգեցրել է նրան, որ, օրինակ, Արևմտյան ափի ջրավազանների 90 տոկոսն օգտագործում է Իսրայելը՝ թողնելով պաղեստինցիներին միայն մնացյալ տասը տոկոսը: Այսինքն՝ 599.901 իսրայելցի վերաբնակիչները օգտագործում են վեց անգամ ավելի շատ ջուր, քան Արևմտյան ափի 2.86 մլն ամբողջ պաղեստինյան բնակչությունը: Տե՛ս "What's driving Israeli claims to the Golan Heights?" by Zena Agha, Foreign Affairs, 1November 2018. *https://www.foreignaffairs.com/articles/israel/2018-11-01/whats-driving-israeli-claims-golan-heights:*

իհարկե, թույլ այնքան, որ լուրջ սպառնալիք չլինի Իսրայելի համար: Հակառակ դեպքում Սիրիայի կոնֆեդերացումը կարող է նույնպես ձեռնտու լինել Իսրայելին, եթե հաշվի առնենք նրա անթաքույց աջակցությունը միացյալ Քուրդիստանի ստեղծման ծրագրերին:

Այսպիսով, Սիրիական ճգնաժամը վերածվեց արաբական աշխարհում ամենատևական, արյունալի և ավերիչ քաղաքացիական պատերազմի, որը, նյութական ահռելի ավերածություններից բացի, արդեն 2016 թ. հանգեցրել էր 400.000 սիրիացիների մահվան, 11 մլն սիրիացիներ լքել էին իրենց բնակության վայրերը, իսկ 13.5 մլն սիրացիներ կարիք ունեին հրատապ մարդասիրական օգնության[302]: ՄԱԿ-ի փախստականների հարցերով բարձրագույն հանձնակատարի (UNHCR) հրապարակած տվյալների համաձայն՝ 4.8 մլն սիրիացիներ ապաստան էին գտել Թուրքիայում, Լիբանանում, Հորդանանում, Եգիպտոսում և Իրաքում, իսկ Սիրիայում ներքին տեղահանվածների թիվը կազմում էր 6.6 մլն[303]:

Սիրիայում դեռևս ամբողջությամբ չավարտված պատերազմը հավակնում է լուրջ ազդեցություն ունենալ ոչ միայն Սիրիայի ապագայի, այլև ողջ տարածաշրջանի վրա: Այն, ինչ տարիներ ի վեր տեղի է ունենում Սիրիայում, սխալ է դիտարկել զուտ սիրիական ներքաղաքական զարգացումների (պայքար իշխանության և ընդդիմության միջև) համատեքստում: Ակնհայտ է, որ Արևմուտքի կողմից սիրիական վարչակազմի փոփոխության նպատակն է թուլացնել տարածաշրջանում Իրանի դիրքերը և ստեղծել բարենպաստ պայ-

---

[302] Համաձայն "I am Syria" տվյալների՝ 2016 թ. դեկտեմբերին զոհերի թիվը հասել էր 450.000-ի: Տե՛ս *www.iamsyria.org/death-tolls.html*, Nikolaos Van Dam, Destroying a Nation, The Civil War in Syria. I.B. Tauris, 2017, p. 65:

[303] The Syrian Refugee Crisis and its Repercussiou ns for the EU, September 2016. *http://syrianrefugees.eu*. Սիրիացիների հիմնական մասը տեղավորվեց Լաթակիայի և Տարտուսի շրջաններում, որոնք գտնվում էին իշխանությունների վերահսկողության տակ և համարվում էին համեմատաբար անվտանգ ու ապահով:

մաններ Թեհրանի դիմադրությունը վերջնականապես կոտրելու համար: Ոչ մեկին չի հետաքրքրում սիրիական ժողովրդի ապագան, ինչ գնով կիրականացվի Բաշար ալ-Ասադի հեռացումը իշխանությունից:

Սիրիայում իշխանափոխությունը կարող է թուլացնել Իրանի դիրքերը տարածաշրջանում ու էլ ավելի մեծ դերակատարություն հատկացնել Թուրքիային: Պետք է նկատի ունենալ, որ Սիրիայում պարտություն կրելուց հետո առավել մեկուսացված ու խոցելի Իրանին չափազանց դժվար կլինի երկար ժամանակ դիմադրել միջազգային աճող ճնշմանը: Հարկ է նաև գիտակցել, որ անգամ, եթե ԱՄՆ կամ նրա տարածաշրջանային դաշնակիցները ընտրեն Իրանի միջուկային հանգույցի ուժային լուծման խելահեղ ճանապարհը, ապա դա նրանք կարող են իրականացնել միմիայն Սիրիական ճգնաժամի հանգուցալուծումից հետո: Այդ իսկ պատճառով էլ Իրանի աջակցությունը Բաշար ալ-Ասադին հիմնված է Թեհրանի սեփական տարածաշրջանային շահերի, այլ ոչ թե, ինչպես հաճախ նշվում է, կրոնական հենքի[304] վրա: Անշուշտ, Իրանի և Սաուդյան Արաբիայի միջև տարածաշրջանային մրցակցությունը խաղում է իր նշանակալի դերը սիրիական ճգնաժամում, սակայն Սիրիա-Իրանական սերտ համագործակցությունն առավել ճիշտ կլինի դիտարկել որպես կրոնական և աշխարհիկ վարչակարգերի միջև դաշինք, որն ավելի շատ բխում է Իրանի ռազմավարական և աշխարհաքաղաքական հետաքրքրություններից: Նույնպես պետք է դիտարկել նաև Իրանա-Սաուդյան հակամարտությունը տարածաշրջանային գերիշխանության համար մղվող պայքարի տեսանկյունից:

---

[304] Նկատի ունենալով Շիական գործոնը, քանի որ Բաշար Ալ-Ասադը ներկայացնում է երկրի բնակչության տասը տոկոսը կազմող ալավիական համայնքը: Ալավիներին ընդունված է համարել շիա մուսուլմանների աղանդ: Սակայն Իրանի շիաները սիրիական ալավիներին չեն համարում անգամ որպես Տասներկուերրորդ դպրոցի շիական դպրոցի հետևորդներ, ինչպիսին իրենք են: Նույնպես որոշ սիրիացի ալավի շեյխեր համարում են, որ իրենք տարբեր են Իրանի շիաներից:

Սիրիական ճգնաժամը նաև հնարավորություն ընձեռեց սիրիացի քրդերին հետապնդելու սեփական ազգային նպատակներ ուժերը կոնսոլիդացնելու և, ի վերջո, Սիրիական Քուրդիստանում (Ռոժավա[305]) ինքնավարություն ստեղծելու համար: Սկզբնական շրջանում քրդերը չեզոք դիրքորոշում էին որդեգրել կենտրոնական իշխանության հանդեպ, սակայն քրդական Ժողովրդավարական Միություն Կուսակցությունը (PYD-Partiya Yekitiya Demokrat) աստիճանաբար սկսեց հետապնդել իր հեռահար քաղաքական նպատակը՝ Արևմտյան Քուրդիստանի ստեղծումը (Ռոժավա) Սիրիայի հյուսիսում: Արդեն իսկ 2012 թ. Դամասկոսը քաղաքացիություն շնորհեց քրդերին, ինչից երկար տարիներ ձեռնպահ էր մնում: Այնուհետև, ռազմական իրավիճակից ելնելով, սիրիական իշխանությունները դուրս բերեցին կառավարական ուժերը երկրի հյուսիսային քրդաբնակ շրջաններից: Քրդերը հնարավորություն ստացան ստեղծելու ինքնակառավարման մարմիններ, կազմակերպելու սեփական զինուժը, ինքնուրույն կառավարելու այդ տարածքները: Սիրիական պատերազմի ընթացքում ԺՄԿ-ին և նրա ռազմական թևին YPG-ին հաջողվեց վերահսկողություն հաստատել սիրիական քրդական երեք շրջանների հիմնական մասում՝ դեպի արևելք ընկած երկու շրջաններում (Ղամիշլի և Կոբանի), ինչպես նաև արևմուտքում՝ Աֆրինի շրջանում: Սակայն, երբ քրդական ուժերը փորձեցին աշխարհագրականորեն կապել այդ երկու մասերը՝ գրավելով Կոբանիի և Աֆրինի միջև ընկած սահմանամերձ շրջանը, Թուրքիան պարտադրված սպառնաց ուղղակի ռազմական միջամտությամբ: Հարցն այն է, որ Անկարան PYD-ն նույնացնում է թուրքական PKK-ի հետ, որին համարում է ահաբեկչական կազմակերպություն: Սիրիայի հյուսիսում՝ իր սահմանների մոտ, քրդական ինքնավարության ձևավորման հեռանկարը Թուրքիայի ազգային անվտան-

[305] Արևմուտք (քրդերեն):

գության ամենամեծ սպառնալիքն է: Այստեղ Անկարան չի կարող որևէ զիջման գնալ: Անկարայի համար խնդիրը բարդանում է նրանով, որ ԱՄՆ-ն ռազմական սերտ համագործակցություն է հաստատել PYD-ի հետ՝ վերջինիս համարելով արդյունավետ ուժ ԻՊ-ի (Իսլամական պետություն) դեմ պայքարում:

Սիրիական ճգնաժամի և Իրանի հարցերում ակնհայտ են աստիճանաբար աճող տարաձայնությունները մի կողմից ԱՄՆ-ի և ԵՄ-ի, մյուս կողմից՝ Ռուսաստանի և Չինաստանի միջև: Այդ իսկ պատճառով էլ իրավիճակը Սիրիայում սպառնում է ընդունել տեղական հարատև հակամարտության բնույթ երեք հիմնական ուժերի միջև, որոնք պատերազմը Սիրիայում վերածեցին միջնորդավորված պատերազմի (proxy war) տարածաշրջանային գերիշխանության համար՝ Իրանի, Իսրայելի (Սաուդյան Արաբիայի, ԱՄԷ ևն) և Թուրքիայի միջև: Եթե այս ամենին էլ գումարենք արտատարածաշրջանային ուժերի ներգրավվածությունը Սիրիայում, մի կողմից, ԱՄՆ, մյուս կողմից՝ ՌԴ գլխավորությամբ, ապա միանգամայն հստակ է, որ միջազգային այդպիսի լայն ընդգրկվածության պայմաններում անկայունությունը Սիրիայում կսպառնա տարածվել ողջ տարածաշրջանում և ընդունել տևական բնույթ այստեղից բխող բոլոր բացասական հետևանքներով Մերձավոր Արևելքի և գլոբալ անվտանգության համար: Վերջապես, որո՞նք են Սիրիական պատերազմի հետագա զարգացումների հնարավոր սցենարները:

Առաջին, պատերազմը շարունակվում է ավարտելու ժամանակի անորոշ հեռանկարով, հավելյալ զոհերով ու ավերածություններով: Երկրորդ, վարչակարգը հաղթում է պատերազմը և անցնում խիստ ռեպրեսիվ միջոցների ընդդիմության և այլ ուժերի նկատմամբ: Երրորդ, ընդդիմադիր խմբերը հաղթում են՝ երկրում իսլամական դիկտատուրա հաստատելու միանգամայն իրական հեռանկարով: Չորրորդ, երկիրը (ժամանակավորապես կամ ընդմիշտ)

տրոհվում է մի քանի մասերի տարբեր ավտորիտար ուժերի վերահսկողության տակ: Եվ վերջապես, հինգերորդ ամենացանկալի զարգացումը քաղաքական կոմպրոմիսի միջոցով՝ սահմանադրական ճանապարհով ճգնաժամի կարգավորումն է: Թե այս ուղիներից որ մեկով կընթանան հետագա զարգացումները, ցույց կտա միայն ժամանակը:

Իսկ մինչ այդ՝ 2016 թ. նոյեմբերին, Բաշար Ալ-Ասադը հայտարարեց, որ մտադիր է մնալ նախագահի պաշտոնում մինչև իր երրորդ յոթամյա ժամկետի ավարտը՝ 2021 թվականը: Այս հայտարարությունը հիմք ընդունելով, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրի տարածքի մեծ մասը հայտնվել է կառավարական ուժերի վերահսկողության տակ, դժվար է ակնկալել որևէ լուրջ երկխոսություն ընդդիմության և Բաշար ալ-Ասադի միջև: Եվ, եթե իրավիճակը Սիրիայում կտրուկ փոփոխությունների չենթարկվի, ամենայն հավանականությամբ Բաշար ալ-Ասադի ճակատագիրը կորոշվի 2021 թվականին:

Սիրիան տարածաշրջանի նյարդն է, իսկ ավելի ճշգրիտ՝ նյարդերի այն կծիկը, որից կախված են Մերձավոր Արևելքի կենսունակությունն ու ապագան: Կասկած չի հարուցում այն, որ սիրիական պատերազմի ավարտին ի վերջո կվճռվեն Մերձավոր Արևելքի ապագայի և նրա աշխարհաքաղաքական նոր կառուցվածքի կնճռոտ հիմնախնդիրները, որոնք իրենց վճռական ազդեցությունը կունենան ոչ միայն տարածաշրջանի, այլև գլոբալ անվտանգության ճակատագրի վրա: Այդ պատճառով է, որ սիրիական ճգնաժամում բոլոր խաղացողների համար գինը չափազանց բարձր է...:

4. Աշխարհաքաղաքական նոր իրավիճակ Մերձավոր Արևելքում

Հայ ժողովրդի պատմությունն անքակտելիորեն կապված է Մերձավոր Արևելքի՝ այն անմիջական ու կենսական տարածաշրջանի հետ, որտեղ կայացել է հայոց պետականությունը՝ արձանագրելով իր անկումներն ու վերելքները, հաղթահարելով գոյութենական բնույթ ունեցող սպառնալիքները, անընդհատ բախվելով խաղաղության ու պատերազմի հիմնախնդիրները լուծելու պարտադրանքներին: Ակնհայտ է, որ այսօր Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձություններին առանձնահատուկ ուշադրությամբ հետևելու և հետագա զարգացումները կանխատեսելու գործառույթները պետք է լինեն ՀՀ արտաքին քաղաքականության իրականացման հիմնական հենասյուները:

2017 թ. վերջին ԱՄՆ նախագահ Դ. Թրամփի հայտարարությունը Երուսաղեմի վերաբերյալ[306] և դրա շուրջ ծավալված բուռն քննարկումները, քննադատություններն ու խորը մտահոգությունները, այդ թվում՝ նաև Հայաստանում, պարտադրում են մեզ «հայացք նետել Երևանից» Մերձավոր Արևելքում ստեղծված իրավիճակին՝ փորձելով վերլուծել ՀՀ-ի համար դրա հեռանկարներն ու սպառնալիքները:

Մի կողմ թողնելով ԱՄՆ նախագահի հայտարարության ներքաղաքական դրդապատճառներին առնչվող միանգամայն հիմնավոր վարկածները (քրիստոնյա սիոնիստական աջակցության ապահովում, իմփիչմենթի հեռանկար և այլն)՝ նախ փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչով էր պայմանավորված ամերիկյան դեսպանությունը Երուսաղեմ տեղափոխելու մասին ԱՄՆ նախա-

[306] *https://www.whitehouse.gov/briefings-statements/statement-president-trump-jerusalem/*

գահի հայտարարության համար այս ժամանակի ընտրությունը, այնուհետև վերլուծենք, թե ինչ կարող է նշանակել այդ հայտարարությունն ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականության համար ու ինչ ազդեցություն այն կարող է ունենալ Երուսաղեմում հայկական ներկայության ու մեր շահերի պաշտպանության վրա:

Նախ պետք է արձանագրենք, որ ԱՄՆ Սենատն ու Ներկայացուցիչների պալատը «Երուսաղեմի դեսպանության» մասին հանրային օրենքը (Jerusalem Embassy Act)[307] ընդունել էին դեռևս 1995 թ., որով ոչ միայն հստակեցվել էր Թել-Ավիվից Երուսաղեմ ԱՄՆ դեսպանության տեղափոխման ժամկետը՝ մինչև 1999 թ. մայիսի 31-ը, այլև պետքարտուղարության 1996-1997 թթ. բյուջեով հատկացվել էր 100 մլն ԱՄՆ դոլար (25 մլն և 75 մլն համապատասխանաբար) «դեսպանության նոր շենքի կառուցման և այլ ծախսերի» համար: Սակայն Դ. Թրամթին նախորդած ԱՄՆ երեք նախագահները վերոհիշյալ օրենքի գործադրումը շարունակաբար վեց ամսով կասեցրել էին՝ «ազգային անվտանգության նկատառումներից» ելնելով: Նկատենք նաև, որ Երուսաղեմի վերաբերյալ իր հայտնի հայտարարությունից առաջ՝ 2018 թ. հունիսի 1-ին, Թրամփը նույնպես վեց ամսով արգելափակեց նույն այդ օրենսդրական ակտի գործողությունը[308]: Նշենք, որ 2017 թ. դեկտեմբերի սկզբին ԱՄՆ նախագահն ուներ միայն երկու տարբերակ՝ կա՛մ պետք է երկարաձգեր օրենքի արգելափակումը, կա՛մ էլ կատարեր նախընտրական խոստումը՝ արտահայտելով իր հստակ դիրքորոշումը, ինչն էլ նա արեց:

Հայտարարության ժամանակի ընտրությունը, մեր կարծիքով, ուղղակիորեն պայմանավորված չէր սիրիական ճգնաժամի վերջին զարգացումներով կամ տարածաշրջանային այլ նկատառումներով:

[307] https://www.congress.gov/104/plaws/publ45/PLAW-104publ45.pdf

Սակայն, եթե հայտարարության ժամանակի ընտրությունն ուղղակի առնչություն չուներ տարածաշրջանային զարգացումներին, ապա ինքնին հայտարարության որոշումն ակնհայտորեն ուներ թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքական դրդապատճառներ:

Ներքինի մասին շատ է խոսվել, իսկ ինչ վերաբերում է հայտարարության արտաքին դրդապատճառներին, ապա դրանք լիովին տեղավորվում են դեռևս Ջ. Բուշի նախագահության օրոք ձևակերպված, սակայն այդպես էլ վերջնական տեսք չստացած՝ ԱՄՆ տարածաշրջանային նոր ռազմավարության շրջանակներում: Առաջին կարևոր դրդապատճառը կապված էր սիրիական ճգնաժամին ՌԴ-ի ակտիվ ներգրավման հետ: Փաստորեն, ԽՍՀՄ փլուզումից հետո առաջին անգամ Մերձավոր Արևելք վերադարձավ Ռուսաստանը, որը ոչ միայն հաջողություն արձանագրեց, այլև Միջերկրականի Տարտուս նավահանգստում ստացավ մշտական ռազմակայան տեղակայելու իրավունք, ինչը չէր հաջողվել անգամ Խորհրդային Միությանը: Երկրորդը, մեր կարծիքով, տարածաշրջանում Իրանի դիրքերի աստիճանական ամրապնդումն ու արաբական երկրների ներքին գործերի ու տարածաշրջանային գործընթացների վրա ներազդելու՝ Իրանի կարողությունների կտրուկ ավելացումն էր: Եվ, վերջապես, Թուրքիայի հետ ԱՄՆ ռազմավարական դաշնության ակնհայտ թուլացումն ու երկկողմ հարաբերություններում առկա խորը անջրպետը և անվստահությունը:

Թրամփի հայտարարությունը տրամաբանական ավարտին հասցրեց այն, ինչ տարիներ շարունակ տեղի էր ունենում ԱՄՆ մերձավորարևելյան քաղաքականության մեջ, որի շրջադարձը, ինչպես արդեն նշեցինք, սկսել էր դեռևս Ջ. Բուշի նախագահության օրոք: Վերջինս Իրաք ներխուժումից հետո՝ 2003 թ. նոյեմբերին, իր

---

[308] https://www.whitehouse.gov/presidential-actions/presidential-memorandum-secretary-state/

ելույթներից մեկում քննադատեց ԱՄՆ նախկին՝ տարածաշրջանային քաղաքականությունը՝ ասելով, որ «վաթսուն տարի Արևմտյան պետությունները, ներելով և հարմարվելով ազատության բացակայությանը Մերձավոր Արևելքում, ոչինչ չարեցին՝ մեզ անվտանգ դարձնելու համար, որովհետև երկարատև հեռանկարում կայունությունը չի կարող ձեռք բերվել ազատության հաշվին»[309]: Այնուհետև՝ արդեն 2005 թ. հուլիսին, Կահիրեի ամերիկյան համալսարանում ունեցած իր ելույթում այդ մասին առավել հստակ ակնարկեց նաև պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը. խոսելով տարածաշրջանում ԱՄՆ քաղաքականության մասին՝ նա նշեց, որ անցած 60 տարիների ընթացքում Վաշինգտոնի հիմնական մտահոգությունը եղել է տարածաշրջանում կայունության ապահովումը՝ ժողովրդավարության հետ կապված հարցերի վրա աչք փակելու հաշվին: Այժմ՝ հատկապես սեպտեմբեր 11-ից հետո, չհամարելով կայունության ապահովումն առաջնային խնդիր, ԱՄՆ-ն նոր քաղաքականություն է որդեգրել ՝ «սատարել դեմոկրատական արժեքների տարածմանն ու հաստատմանը»: «Ժողովրդավարության ու ազատության սկզբունքների սերմանումը Մերձավոր Արևելքում Միացյալ Նահանգների համար կարևոր է նաև ազգային անվտանգության (ԱՄՆ համար առավել անվտանգ միջավայր ձևավորելու) տեսանկյունից»[310],– հայտարարել էր ԱՄՆ պետքարտուղարը:

Փաստորեն, դեռևս տարիներ առաջ էր հաստատվել Մերձավոր Արևելքում արաբական երկրներին ու վարչակազմերին ցուցաբերվող ամերիկյան քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ աջակցությունների կրճատման քաղաքական նոր ուղեգիծը, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու էր նաև տարածաշրջանում ԱՄՆ ռազմական, քաղաքական ու դիվանագիտական ներկայության աս-

[309] Henry Kissinger. World Order. Penguin Press, New York, 2014, p. 324.

տիճանական նվազմանը՝ նրա տարածաշրջանային դերի ու դիրքերի անխուսափելի թուլացմամբ: Այսպիսով, Միացյալ Նահանգները նախընտրեց վերադառնալ տասնամյակներ առաջ՝ դեռևս «սառը պատերազմի» տարիներին բնորոշ քաղաքականությանը՝ նվազագույնի հասցնելով ամերիկյան անմիջական ներկայությունը տարածաշրջանում և փորձելով «տարածաշրջանային հենարան» կոչված պետությունների միջոցով վերահսկել իրավիճակն ու ազդել այնտեղ տեղի ունեցող զարգացումների վրա: ԱՄՆ նախագահ Դ. Թրամփի հայտարարությունը Երուսաղեմի վերաբերյալ վերջակետ դրեց ամերիկյան այդ նոր քաղաքականության ձևավորման ընթացքին: ԱՄՆ-ն անուղղակիորեն ազդարարեց Իսրայելի գլխավորությամբ ամերիկյան (այլևս՝ ոչ արևմտյան)[311] տարածաշրջանային նոր առանցքի ձևավորման մասին, որը մոտակա տարիներին, եթե ոչ տասնամյակներում, լինելու է Վաշինգտոնի հենարանը՝ ի հակակշիռ Իրանի և վերջինիս շուրջը միավորվող շիական դաշինքի:

Անհերքելի է, որ ԱՄՆ նախագահի այդ հայտարարությունը նոր լարվածություն առաջացրեց պաղեստինա-իսրայելական ճակատում, Միացյալ Նահանգները զրկվեց պաղեստինա-իսրայելական խաղաղության անավարտ գործընթացում «միջնորդի» կարգավիճակից[312], հարցականի տակ դրվեցին «խաղաղության գոր-

---

[310] Եգիպտոսում ՀՀ դեսպանության հեռագիրը՝ ԱՄՆ պետքարտուղար Ք. Ռայսի այցելության վերաբերյալ, 20.07.2005:

[311] Այս և այլ հարցերում ԱՄՆ-ԵՄ-ի միջև առկա տարաձայնությունները, Brexit-ը և այլ զարգացումները հաշվի առնելով:

[312] Թեև պետք է արձանագրենք, որ Մադրիդում մեկնարկած «խաղաղության գործընթացի ավարտին 1993 թ. Օսլոյում ձեռք բերված պաղեստինա-իսրայելական համաձայնության մեջ ԱՄՆ-ն որևէ դերակատարություն չի ունեցել, իսկ ինչ վերաբերում է 1994 թ. իսրայելա-հորդանանյան պայմանագրի ստորագրմանը, ապա դրանում Վաշինգտոնի մասնակցությունը եղել է զուտ արարողակարգային, քանի որ ուղղակի շփումները Հորդանանի և Իսրայելի միջև միշտ գոյություն են ունեցել, և Հորդանանի դեպքում «լուրջ միջնորդական ջանքերի մասին խոսելն անհարկի է: Մինչդեռ առանցքային՝ պաղեստինյան և սիրիական ուղղություններով ԱՄՆ միջնորդական ջանքերը որևէ արդյունք չտվեցին:

ծընթացի» ապագան ու հեռանկարները, նոր բաժանարար գծեր հայտնվեցին առանց այդ էլ միասնականությունից զուրկ արաբական երկրների միջև, լուրջ հարված հասցվեց ԱՄՆ դիրքերին արաբական և իսլամական աշխարհում: Սակայն ամենաէականն այն էր, որ Դ. Թրամփն ամրագրեց այն, ինչից, այսինքն՝ Մերձավոր Արևելքում ձևավորվող նոր աշխարհակարգում Իսրայելին առաջնային և անփոխարինելի դերակատարություն վերապահելուց փորձում էր խուսափել կամ ձեռնպահ մնալ Բ. Օբաման:

Այսօր քչերն են կասկածում, որ ԱՄՆ 45-րդ նախագահը լրջորեն մտադրված է Իսրայելին հատկացնել տարածաշրջանում «առաջին ջութակի» դերակատարությունը, որի շուրջ գործնականում, սակայն *ոչ հրապարակավ* կհամախմբվեն Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան և Ծոցի այլ երկրներ՝ ի հակակշիռ Իրանի և վերջինիս ազդեցության տակ գտնվող արաբական երկրների՝ Իրաք, Սիրիա, Լիբանան, Եմեն ու ռազմաքաղաքական ուժերի՝ Հեզբալլահ, Համաս և այլն:

Թուրքիա-ԱՄՆ հարաբերությունների անկասելի վատթարացման պայմաններում շարունակում են աճել Իսրայելի նշանակությունն ու կարևորությունը Վաշինգտոնի համար: Ամերիկյան այդ նոր ռազմավարության հեղինակների կարծիքով ներիսլամական սունի-շիա հակամարտության խորացման պայմաններում և դրա արդյունքում Իսրայելը կարող է վերջնականապես հաստատվել տարածաշրջանային գերտերության կարգավիճակում: Փաստորեն, ԱՄՆ-ն Թել Ավիվին անփոխարինելի դերակատարություն է վերապահում Իրանում (Ադրբեջանի միջոցով) և ապագայում՝ գուցե Թուրքիայում (քրդական հարցի) իրադրությունն ապակայունացնելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև տեղական այլ գործողություններ իրականացնելու համար:

Վերոհիշյալ կանխատեսումները հաստատվեցին Դ. Թրամփի՝ Երուսաղեմի հայտարարությունից մի քանի օր անց ԱՄՆ ազգային անվտանգության նոր ռազմավարության հրապարակմամբ, որտեղ Իրանը դասվում է Ամերիկային սպառնացող «հիմնական վտանգների» շարքը, Հյուսիսային Կորեայի և ծայրահեղական ահաբեկիչների կողքին: Նման ձևակերպման ամրագրումը երկրի կարևորագույն փաստաթղթում հաստատում է դեռևս տարիներ առաջ արված մեր հետևյալ կանխատեսումը. «Սիրիական ճգնաժամի հանգուցալուծումից հետո Իրանը դառնալու է ԱՄՆ-ի հովանավորած ու աջակցությունը վայելող, վերը նշված տարածաշրջանային առանցքի առաջնային թիրախը՝ Իսրայելի գլխավորությամբ»[313]:

Սիրիական ճգնաժամի և Իրանի հարցերում ակնհայտ են աստիճանաբար աճող տարաձայնությունները մի կողմից ԱՄՆ-ի և ԵՄ-ի, մյուս կողմից՝ Ռուսաստանի և Չինաստանի միջև: Այդ իսկ պատճառով էլ իրավիճակը Սիրիայում սպառնում է ընդունել տեղական հարատև հակամարտության բնույթ երեք հիմնական ուժերի միջև, որոնք տարածաշրջանային գերիշխանության համար պատերազմը Սիրիայում վերածեցին միջնորդավորված պատերազմի (war by proxy) Իրանի, Սաուդյան Արաբիայի և Թուրքիայի միջև:

Եթե այս ամենին էլ գումարենք արտատարածաշրջանային ուժերի ներգրավվածությունը Սիրիայում (ԱՄՆ, ՌԴ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա), ապա միանգամայն հստակ է, որ միջազգային այդպիսի լայն ընդգրկվածության, Սիրիայում անկայունությոան պայմաններում սպառնում է տարածվել ողջ տարածաշրջանում և ընդունել տևական բնույթ՝ Մերձավոր Արևելքի և գլոբալ անվտանգության համար բոլոր բացասական հետևանքներով:

Սիրիայում իշխանափոխությունը կարող է թուլացնել Իրանի դիրքերը տարածաշրջանում ու էլ ավելի մեծ դերակատարություն

[313] R. Karapetian, The Place and Role of Syria in Arab-Israeli conflict 1946–2000, IsAG-The Institute of Advanced Studies in Geopolitics and Auxiliary Sciences, Rome, 2012.

հատկացնել Թուրքիային: Պետք է նկատի ունենալ, որ Սիրիայում պարտություն կրելուց հետո առավել մեկուսացված ու խոցելի Իրանին չափազանց դժվար կլինի երկար ժամանակ դիմադրել միջազգային աճող ճնշմանը: Հարկ է նաև գիտակցել, որ նույնիսկ եթե ԱՄՆ կամ նրա տարածաշրջանային դաշնակիցները ընտրեն Իրանի միջուկային հանգույցի ուժային լուծման խելահեղ ճանապարհը, ապա դա նրանք կարող են իրականացնել միմիայն Սիրիական ճգնաժամի հանգուցալուծումից հետո: Այդ իսկ պատճառով էլ Իրանի աջակցությունը Բաշար ալ-Ասադին հիմնված է Թեհրանի սեփական տարածաշրջանային շահերի, այլ ոչ թե, ինչպես հաճախ նշվում է, կրոնական հենքի վրա[314]: Իհարկե, Իրանի և Սաուդյան Արաբիայի միջև տարածաշրջանային մրցակցությունը խաղում է իր դերը սիրիական ճգնաժամում, սակայն Սիրիա-Իրանական սերտ համագործակցությունն առավել ճիշտ կլինի դիտարկել որպես կրոնական և աշխարհիկ վարչակարգերի դաշինք, որն ավելի շատ բխում է Իրանի ռազմավարական և աշխարհաքաղաքական հետաքրքրություններից:

Սիրիական ճգնաժամը նաև հնարավորություն ընձեռեց քրդերին հետապնդելու սեփական ազգային նպատակները, ուժերը կոնսոլիդացնելու և, ի վերջո, Սիրիական Քրդստանում (Ռոժավա) ինքնավարություն ստեղծելու համար, որտեղ Անկարայի ցանկացած արտաքին միջամտություն դիտարկվելու է որպես ամենալուրջ սպառնալիքը Թուրքիայի ազգային անվտանգությանը ու արժանանալու է հզոր և անզիջում պատասխանի: Հաշվի առնելով ԱՄՆ աջակցությունը քրդերին, միանգամայն իրական է ԱՄՆ-Թուրքիա հակասությունների էլ ավելի սրումը:

---

[314] Նկատի ունի շիական գործոնը, քանի որ Բաշար Ալ-Ասադը ներկայացնում է երկրի ալավիական համայնքը: Ալավիներին ընդունված է համարել շիա մուսուլմանների աղանդ: Սակայն Իրանի շիաները սիրիական ալավիներին չեն համարում անգամ Տասներկուերրորդական շիական ուղղության հետևորդներ, ինչպիսին իրենք են: Նույնպես սիրիացի որոշ ալավի շեյխեր համարում են, որ իրենք տարբեր են Իրանի շիաներից:

Թուրքիան տարածաշրջանային գերիշխանության համար պայքարող երրորդ տերությունն է (Իրանի և Իսրայելի կողքին): Արևմուտքի հետ անընդհատ վատթարացող հարաբերությունների համատեքստում իր գրեթե բոլոր հարևանների հետ խնդիրներ ունեցող Անկարան, չցանկանալով ընկղմվել «դրսի պատվերով» սունի-շիա վտանգավոր ու անհեռանկարային հակամարտության մեջ, փորձում է ստանձնել իսլամական աշխարհի առաջնորդի դերակատարությունը և հակադրվելով Իսրայելին՝ իր կողմը գրավել պաղեստինցիներին ու արաբական աշխարհի «փողոցը»: Մյուս կողմից Անկարան ձգտում է Իրանին ներքաշել տնտեսական համագործակցությոան մեջ՝ փորձելով Ադրբեջանի հետ համագործակցության եռակողմ ձևաչափը ամրապնդելու նպատակով: Թուրքիան հույսեր է փայփայում, որ տնտեսական և քաղաքական առավելագույն օգուտներ կարող է քաղել Իսրայել-Իրան սրվող հակամարտությունից:

Ինչ վերաբերում է Երուսաղեմի հին քաղաքում հայկական թաղամասի ապագային ու հայերի ներկայությանը, ապա պետք է նշել, որ 1967 թ. «վեցօրյա» պատերազմից հետո Արևելյան Երուսաղեմում գտնվող հայկական թաղամասը հայտնվեց իսրայելյան վերահսկողության տակ (մինչ այդ Հորդանանի), իսկ 1980 թ. արդեն ողջ Երուսաղեմը Իսրայելն իրավականորեն ամրագրեց որպես իր «միասնական և անբաժան մայրաքաղաք»: Այս ժամանակաշրջանում Իսրայել պետությունը Երուսաղեմում հետևողականորեն իրականացրել է հայկական ներկայության «դուրսմղման» քաղաքականություն: Այն դրսևորվել է տարբեր միջոցներով՝ հին քաղաքում հայկական եկեղեցական ունեցվածքի, նոր քաղաքում՝ Հայոց պատրիարքարանի կալվածքների ձեռքբերման, սահմանափակումների գործադրման, իրավական ու այլատեսակ խտրականության և այլ միջոցների կիրառմամբ, ինչի հետևանքով կտրուկ նվազել է հա-

յերի ներկայությունը և թուլացել են Սուրբ քաղաքում Պատրիարքարանի ու հայության դիրքերը: Ուստի Թրամփի հայտարությունը ոչ մի կերպ չի շտկելու այն իրավիճակը, որի մեջ վերջին տասնամյակների ընթացքում գտնվել է Երուսաղեմի հայկական համայնքը: Խնդիրներն այստեղ, իսրայելական քաղաքականությունից զատ, հայկական կողմում են՝ պայմանավորված Պատրիարքարանի ներսում տասնամյակներ շարունակ ընթացող բացասական գործընթացների, Էջմիածնի հետ հարաբերությունների կաթվածահար վիճակի, Իսրայելում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության և հստակ պետական ռազմավարության բացակայության, հայկական պատմական ու նյութական ժառանգությանը տեր կանգնելու մեր անկարողության կամ ցանկության բացակայությամբ: Արդյո՞ք կկարողանանք իսրայելոց քաղաքականությանը հակադրել հայոց ազգային շահերը պաշտպանող պետական քաղաքականություն, կկարողանա՞նք համայնքային ու եկեղեցական մակարդակներում վեր դասել ազգայինն անձնական և տեղական մանր շահերից. ահա այս հարցերի պատասխաններից է կախված Երուսաղեմում հայկական ներկայության ապագան և ոչ թե այս կամ հայտարարությունից:

Ի դեպ, պետք է հավելենք, որ հայկական թաղամասին լուրջ վտանգ էր սպառնում դեռևս 2000 թ. Քեմփ-Դևիդում իսրայելա-պաղեստինյան բանակցությունների ընթացքում, երբ գործնական քննարկումներ էին ընթանում հին քաղաքը Պաղեստինի և Իսրայելի միջև արևելյան և արևմտյան մասերի բաժանելու վերաբերյալ: Այն ժամանակ ամրագրվեց հայկական միասնական դիրքորոշումը, որի համաձայն՝ մեզ համար ամենաընդունելի տարբերակը Սուրբ քաղաքի միջազգային կարգավիճակի պահպանումն է, այլապես դրա անհնարինության դեպքում չի կարելի թույլ տալ հայկական թաղամասի անջատումը քրիստոնեականից: Այն ժամանակ պա-

ղեստինա-իսրայելական բանակցություններն արդյունք չտվեցին և հարցը մտավ փակուղի:

Անհերքելի է, որ ՀՀ համար խիստ անցանկալի է իրար հակադիր Իսրայելի և Իրանի միջև տարածաշրջանային մրցակցության վերափոխումը հակամարտության և ուղղակի բախման, ինչը կարող է ավերիչ հետևանքներ ունենալ հատկապես առաջնային գծում գտնվող Հայաստանի համար: Անցյալ տասնամյակի ընթացքում մենք ականատեսը եղանք Իսրայել-Ադրբեջան համագործակցության խորացմանը, իսկ հավասարակշռության ակնհայտ շեղման պայմաններում նաև իսրայելյան վերջին՝ Երևանի հետ հարաբերությունները բարելավելու փորձերին: Այստեղ ՀՀ արտաքին քաղաքականությունը պետք է սահմանի իր կարճատև և երկարատև ռազմավարությունը, հստակ առաջնահերթություններն ու սեփական շահերի պաշտպանության հարցում հաշվի նստի տարածաշրջանային վերոհիշյալ առանցքների միջև ընթացող և ներկա փուլում սրման միտումներ ցույց տվող առկա հակամարտության հետ:

Ամփոփելով ընդգծենք, որ Երուսաղեմի վերաբերյալ ԱՄՆ նախագահի հայտարարությունը չէ, որ Հայաստանին ու հայությանը պետք է անհանգստացնի, այլ նոր շեշտադրումներով ԱՄՆ տարածաշրջանային քաղաքականության իրական գործադրումն է մասնավորապես Իրանի նկատմամբ, ինչը կարող է ուղղակիորեն ազդել ՀՀ անվտանգության վրա: Մոտ ապագայում քրդական հարցի ակտիվացումը նույնպես լրջագույն մարտահրավեր է Հայաստանի Հանրապետության համար: Եվ այս ամենն ամենայն հավանականությամբ, ընթանալու է թուրք-ռուսական համագործակցության անխուսափելի սերտացման պայմաններում: Սակայն, մյուս կողմից, տարածաշրջանային ու գլոբալ այս նոր զարգացումները լայն հեռանկարներ են բացում Հայաստանի Հանրապետության առջև՝ աննախադեպ հնարավորություններ ընձեռելով տարածաշրջանային

գործոն ու խաղացող դառնալու և իրական «խելացի ուժի» վերածվելու համար:

Ահա թե ինչու Երևանը պետք է պատրաստ լինի ցանկացած անսպասելի զարգացումների, որոնք կարող են ձևավորվել նոր Մերձավոր Արևելքի այն աննախադեպ անվտանգության միջավայրը, որտեղ անմիջականորեն գործելու է Հայաստանի Հանրապետությունը, որի կենսունակությունն ու գոյատևումը մեծապես կախված է լինելու հենց այդ զարգացումների ընթացքից, դրանց հանդեպ ՀՀ ճշգրիտ հաշվարկված տարածաշրջանային քաղաքականությունից և այն իրականացնող հայկական դիվանագիտության հմտությունից:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայ-եգիպտական հարաբերությունները (1991-2017 թթ.)

Ա. Քաղաքական համագործակցություն

Եգիպտոսը արաբական աշխարհի քաղաքական «ծանրաքաշայինն» է ու տարածաշրջանի առաջատար պետություններից մեկը: Եգիպտոսի հետ երկկողմ համագործակցության սերտացումը մշտապես բխել է ՀՀ շահերից, հատկապես արաբական և իսլամական աշխարհի հետ ՀՀ արտաքին քաղաքականության արդյունավետ իրականացման տեսանկյունից: Հայաստանը և Եգիպտոսը դիվանագիտական հարաբերություններ են հաստատել 1992 թ. մարտին: Հայաստանը Կահիրեում դեսպանություն է բացել 1992 թ. սեպտեմբերին, իսկ Եգիպտոսը Երևանում՝ 1993 թ. ապրիլին:

Երկու երկրների միջև տեղի են ունեցել բազմաթիվ պաշտոնական փոխայցելություններ, այդ թվում՝ Եգիպտոս են այցելել Հայաստանի նախագահները (1992 թ. և 2007 թ.) «Ազգային ժողովի նախագահները» (1997 թ. և 2010 թ.), ՀՀ վարչապետը (2005 թ.)[315], իսկ 1992 թ. Հայաստան է այցելել Եգիպտոսի վարչապետը:

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր Հայաստանը և Եգիպտոսը ստորագրել են համագործակցության չորս տասնյակից ավելի փաստաթղթեր՝ համաձայնագրեր, արձանագրություններ և փոխըմբռնման հուշագրեր: Ստեղծվել է հզոր իրավապայմանագրային բազա՝ երկկողմ հարաբերությունները գրեթե բոլոր բնագավառներում զարգացնելու համար:

1993 թ. երկու երկրների արտգործնախարարությունների միջև ստորագրվել է դիվանագիտական խորհրդակցություններ անցկաց-

[315] *http://www.gov.am/am/news/item/1880/*

նելու մասին փոխըմբռնման հուշագիր, 1997 թ. սկսած յուրաքանչյուր տարի կողմերի միջև տեղի են ունեցել պարբերական դիվանագիտական խորհրդակցություններ փոխարտգործնախարարների մակարդակով:

Դիվանագիտական խորհրդակցությունները մեծապես նպաստել են կողմերի միջև քաղաքական համագործակցության զարգացմանը, ինչը հատկապես դրսևորվել է միջազգային կազմակերպություններում, որտեղ երկու երկրներն աջակցություն են ցուցաբերում տարբեր հարցերում միմյանց դիրքորոշումներին, ինչպես նաև տարբեր հանձնախմբերի ընտրություններում միմյանց թեկնածուներին:

1993 թ. Եգիպտոսի արտգործնախարարությունում ստեղծվեց ԱՊՀ երկրների հետ տեխնիկական համագործակցության հիմնադրամ, որի նպատակն էր ԽՍՀՄ փլուզումից հետո աշխուժացնել կապերն ու համագործակցությունն անկախություն ձեռք բերած նոր երկրների հետ տարբեր ոլորտներում կադրերի վերապատրաստման, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ասպարեզներում այցելությունների կազմակերպման, համատեղ տարբեր ծրագրերի իրականացման միջոցով:

1993-2010 թթ. Հայաստանից ավելի քան 1500 մասնագետներ (դիվանագիտության, անվտանգության, ներքին գործերի, առևտրի, բանկային համակարգի, առողջապահության, արաբագիտության և այլ ոլորտներից) մասնակցել են հիմնադրամի կողմից Եգիպտոսում կազմակերպված վերապատրաստման դասընթացների[316]:

1996 թ. ստորագրվել է համագործակցության արձանագրություն ՀՀ նախագահի վերահսկողական ծառայության և ԵԱՀ վարչական վերահսկողության ծառայության միջև: Այս տարիների ըն-

[316] Եգիպտոսում ՀՀ դեսպանության տարեկան հաշվետվությունից 2010 թ. (ՀՀ ԱԳՆ արխիվ):

թացքում երկու գերատեսչությունների միջև իրականացվել են մի շարք փոխայցելություններ, որոնց ընթացքում երկու երկրների վերահսկողական ծառայությունները ծանոթացել են միմյանց փորձին և համագործակցության սերտ կապեր հաստատել:

2005-2010 թթ. ընթացքում լուրջ առաջընթաց է արձանագրվել երկկողմ հարաբերություններում. ՀՀ վարչապետի առաջին այցելությունը 2005 թ. դեկտեմբերին, ինչպես նաև 2007 թ. ապրիլին, 15-ամյա ընդմիջումից հետո ՀՀ նախագահի պաշտոնական այցը Եգիպտոս որակական նոր մակարդակի վրա բարձրացրին հայ-եգիպտական քաղաքական երկխոսությունը:

2009 թ. փետրվարին Եգիպտոս պաշտոնական այց է կատարել ՀՀ ԱԳ նախարարը, իսկ 2010 թ.՝ ՀՀ ԱԺ նախագահը:

Եգիպտոսն ի սկզբանե որդեգրել էր չեզոք և անկողմնակալ դիրքորոշում ԼՂ հիմնահարցի նկատմամբ: Տարբեր առիթներով պաշտոնական Կահիրեն հայտնել է «ԼՂ հակամարտությունը միմիայն խաղաղ միջոցներով, ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում և միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն» կարգավորելու՝ իր սկզբունքային և անփոփոխ դիրքորոշման մասին:

Կահիրեում է գտնվում «Արաբական պետությունների լիգա» կազմակերպության (ԱՊԼ) կենտրոնակայանը: Հայաստանն ակտիվացրեց իր համագործակցությունն այդ կազմակերպության հետ 2005 թվականից, երբ հուշագիր ստորագրվեց ՀՀ ԱԳՆ և ԱՊԼ-ի միջև, իսկ 2008 թվականից Եգիպտոսում ՀՀ դեսպանն առաջին անգամ համատեղության կարգով նշանակվեց ԱՊԼ-ում ՀՀ լիազոր ներկայացուցիչ: Արաբական այդ միակ և հեղինակավոր կազմակերպությունում դեսպանի մակարդակով ՀՀ ներկայացվածությունը կարևոր քայլ էր Հայաստան-Արաբական աշխարհ հարաբերությունների հետագա ծավալման ու խորացման ուղղությամբ: Այն նոր որակ և մակարդակ ապահովեց արաբական երկրների հետ ՀՀ

երկկողմ ու բազմակողմ համագործակցության համար՝ հնարավորություն ընձեռելով ԱՊԼ-ի շրջանակներում տարբեր բնույթի քաղաքական, տնտեսական և մշակութային նախաձեռնություններով հանդես գալու, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ու միջազգային կարևոր այլ հիմնախնդիրների վերաբերյալ մեր պետության դիրքորոշումները ներկայացնելու ու պարզաբանելու համար:

Բ. Առևտրատնտեսական հարաբերություններ

Եգիպտոսը հայկական արտադրանքի սպառման հսկայական շուկա է, ինչպես նաև Աֆրիկա մայրցամաք մուտք գործելու և տարածվելու հիմնական ուղի: Եգիպտոսում կարող են լայն սպառում գտնել հայկական գյուղատնտեսական, քիմիական, էլեկտրոնային, և այլ բնագավառների ապրանքները: Եգիպտոսից Հայաստան հնարավոր է ներկրել տեքստիլի, դեղագործական արտադրանք, ինչպես նաև էլեկտրական որոշ սարքավորումներ: Համատեղ փոխշահավետ ծրագրեր կարելի է իրականացնել տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, տեքստիլ, գյուղմթերքների վերամշակման, սննդի, դեղարտադրության և այլ բնագավառներում:

1992 թ. Հայաստանի և Եգիպտոսի կառավարությունների միջև ստորագրված տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին համաձայնագրի հիման վրա ձևավորվել է հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողով:

Մինչ օրս կայացել է հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողովի հինգ նիստ (1996 թ.՝ Երևանում, 1997 թ.՝ Կահիրեում, 2002 թ.՝ Երևանում, 2005 թ.՝ Կահիրեում և 2017 թ.՝ Երևանում), հստակեցվել են երկու երկրների միջև տնտեսական, գիտատեխնիկական և այլ ոլորտներում համագործակցության զարգաց-

ման հնարավորություններն ու հեռանկարները[317]: Հայաստանը չորս անգամ մասնակցել է Կահիրեում կազմակերպվող միջազգային արդյունաբերական ամենամյա ցուցահանդեսին թե՛ պաշտոնական և թե՛ գործարարների մակարդակով:

Հայաստանի և Եգիպտոսի միջև առևտրատնտեսական համագործակցությունը խթանելու ուղղությամբ ամենակարևոր իրադարձությունը 2005 թ. դեկտեմբերին ՀՀ վարչապետի պաշտոնական այցելությունն էր Եգիպտոս: Այցը լուրջ նախադրյալներ ստեղծեց հայ-եգիպտական տնտեսական համագործակցության հետագա զարգացման և խորացման համար: Այցելության ընթացքում ստորագրվեց տնտեսական կարևորագույն համաձայնագրերից մեկը՝ «Երկակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագիրը»: Նույն թվականին ՀՀ Սահմանադրական դատարանը վերանայեց դեռևս 1996 թ. իր կայացրած որոշումը, որի համաձայն՝ կասեցվել էր ՀՀ և Եգիպտոսի միջև ստորագրված «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության համաձայնագրի» վավերացման գործընթացը: 2005 թ. մայիսին ՀՀ Սահմանադրական դատարանը, հիմնվելով Եգիպտոսում ՀՀ դեսպանությունից ստացված նյութերի և պարզաբանումների վրա, դրական որոշում կայացրեց: Դրանով վերացվեց հայ-եգիպտական առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման և համագործակցության հետագա խորացման իրավական հիմնական խոչընդոտը:

2005 թ. դեկտեմբերին Կահիրեում առաջին անգամ տեղի ունեցավ Հայ-եգիպտական գործարար համաժողով, որին մասնակցեցին հայկական շուրջ 20 ընկերությունների ներկայացուցիչներ: Գործարար համաժողովի ընթացքում Հայաստանի և Եգիպտոսի առևտրաարդյունաբերական պալատների նախագահները համագործակցության համաձայնագիր ստորագրեցին: ՀՀ զարգացման

[317] *http://egypt.mfa.am/en/bilateral-eg/*

գործակալության գործադիր տնօրենը եգիպտացի շուրջ 60 խոշոր գործարարներին ներկայացրեց ՀՀ տնտեսական վիճակն ու զարգացման հիմնական ուղղությունները: Երկու պալատների նախագահների միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց Կահիրեում ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի ներկայացուցչություն բացելու վերաբերյալ[318]:

2007 թ. ՀՀ նախագահի Եգիպտոս պաշտոնական այցի ընթացքում համագործակցության համաձայնագիր կնքվեց Հայաստանի արդյունաբերողների ու գործարարների միության և Եգիպտոսի գործարարների ասոցիացիայի միջև: 2006-2008 թթ. Եգիպտոսում ՀՀ դեսպանության աջակցությամբ նախաձեռնվեցին Հայաստանում մի շարք ներդրումային ծրագրերի շուրջ քննարկումները զբոսաշրջության և գյուղատնտեսության բնագավառներում: 2008 թ. հուլիսին Հայաստան այցելեց եգիպտական ներդրումային հայտնի ընկերության «Արտոկ Գրուպի» պատվիրակությունը՝ ՀՀ-ում խոշորածավալ ներդրումներ իրականացնելու հնարավորությունները քննարկելու նպատակով: 2008 թ. հունվարին դեսպանության աջակցությամբ հայկական գյուղատնտեսական ապրանքները (մրգերի տարբեր տեսակի պահածոները) առաջին անգամ մուտք գործեցին եգիպտական շուկա: Նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց շուրջ 360 մլն ԱՄՆ դոլար ներդրումներ իրականացնելու վերաբերյալ: 2008 թ. հունվարին հայկական գյուղատնտեսական ապրանքները (մրգերի տարբեր տեսակի պահածոները) ՀՀ անկախությունից հետո առաջին անգամ մուտք գործեցին եգիպտական շուկա:

2008 թ. հայ զբոսաշրջիկների համար սկսեցին չարթերային թռիչքներ իրականացվել Երևանից Շարմ էլ-Շեյխ, ինչը հանգեցրեց

---

[318] Եգիպտոսում ՀՀ դեսպանության 2005 թ. տարեկան հաշվետվությունից (ՀՀ ԱԳՆ արխիվ):

նաև Եգիպտոս այցելող հայ զբոսաշրջիկների թվի աննախադեպ և կտրուկ ավելացմանը: Եգիպտոսը միջազգայնորեն ճանաչված փորձ ունի դեղարտադրության ասպարեզում և պատրաստակամություն է հայտնել Հայաստանին աջակցելու այդ ոլորտում: Երևանում տարբեր վակցինաների և դեղորայքի համատեղ արտադրությունը կազմակերպելու փորձ արվեց: Էլեկտրական սարքավորումներ արտադրող եգիպտական ամենամեծ «Էլ-Սուեդի քեյբլս» ընկերության ներկայացուցիչները 2009 թ. այցելեցին Հայաստան՝ համագործակցության հեռանկարները քննարկելու նպատակով:

2009 թ. հիմնադրվեց նաև «Հայ-եգիպտական գործարար ասոցիացիան», որում ընդգրկված եգիպտացի շուրջ 150 գործարարները ներկայացնում էին երկրի ամենախոշոր և հայտնի ընկերությունները զբոսաշրջության, սննդի արտադրության, շինարարության, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ ոլորտներում:

2013 թ. նոյեմբերին Երևանում ստորագրվեց Փոխ- ըմբռնման հուշագիր՝ «ՀՀ կառավարության և ԵԱՀ կառավարության միջև զբոսաշրջության մասին»[319]:

2014 թ. հունիսին ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության և Զարգացման հայկական գործակալության հետ համատեղ կազմակերպել էին Հայ-եգիպտական բիզնես ֆորում, որին մասնակցեցին Եգիպտոսի Արաբական Հանրապետության տարբեր ոլորտները ներկայացնող ընկերությունների ղեկավարներ և գործարարներ[320]:

2017 թ. սեպտեմբերին Հայաստան այցելեց ԵԱՀ ներդրումների և միջազգային համագործակցության նախարար Սահար Նասրը:

---

[319] *http://egypt.mfa.am/en/bilateral-eg/*

[320] *http://www.umba.am/hy/search.php?q=%D4%B5%D5%A3%D5%AB%D5%BA%D5%BF%D5%B8%D5%BD&submit=%C2%A0*

Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ Հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի հինգերորդ նիստը[321]:

ՀՀ և Եգիպտոսի միջև տրանսպորտային ուղիների հիմնական խոչընդոտը վերացնելու դեպքում երկկողմ առևտրի ծավալները կարող են սրընթաց աճ արձանագրել: Եգիպտոսի և աֆրիկյան մայրցամաքի այլ երկրների հետ Հայաստանի առևտրատնտեսական կապերը սերտացնելու համար առկա են բոլոր նախադրյալները:

Գ. Գիտակրթական համագործակցություն

Գիտակրթական բնագավառում նշանակալի իրադարձություն էր 2007 թ. Կահիրեի համալսարանի բանասիրական ֆակուլտետում Հայագիտական կենտրոնի հիմնադրումը: 250 հազար ուսանողություն ունեցող Եգիպտոսի «մայր բուհում», որը Մերձավոր Արևելքի ամենամեծ համալսարանն է, Հայագիտական կենտրոնի հիմնումը ոչ միայն պատմական, այլև քաղաքական մեծ նշանակություն ունեցող իրադարձություն կարելի էր համարել: Կենտրոնի բացումը պատմական էր. այն դարձավ տարածաշրջանում գործող առաջին Հայագիտական կենտրոնը, որտեղ դասավանդում են հայոց լեզու ու հայ ժողովրդի պատմություն, ինչպես նաև դասախոսություններ են կարդացվում՝ հայ մշակույթի, հայ-արաբական և հայ-եգիպտական հարաբերությունների վերաբերյալ[322]:

2007 թ. դեկտեմբերին համալսարանի ուսանողության համար առաջին դասախոսությունը՝ «Հայ-արաբական պատմական

---

[321] *https://armenpress.am/arm/news/907226/armenian-premier-egyptian-minister-discuss-prospects-for-activation-economic-cooperation.html*

[322] Մանրամասն տե՛ս Ռ. Կարապետյան, Կահիրեի համալսարանում Հայագիտական կենտրոնի հիմնադրման պատմությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ, 3 (648), սեպտեմբեր-հոկտեմբեր, Երևան, 2016, էջ 45–52:

առնչություններ» թեմայով, կարդաց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը: Դասախոսությունն այնուհետև Հայագիտական կենտրոնը հրատարակեց արաբերեն առանձին գրքույկով:

2007 թ. ապրիլի 29-ին ԵԱՀ բարձրագույն կրթության նախարարի հովանավորությամբ Կահիրեի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնում տեղի ունեցավ հայ-արաբական հարաբերություններին նվիրված առաջին միջազգային գիտաժողովը՝ «Հայաստան-արաբական աշխարհ. անցյալը և ներկան» խորագրով: Գիտաժողովը կազմակերպվել էր Եգիպտոսում ՀՀ դեսպանության ու եգիպտահայ բոլոր կազմակերպությունների համատեղ ջանքերով:

«Հայաստան-արաբական աշխարհ. անցյալը և ներկան» խորագրով գիտաժողովին մասնակցում էին քսանից ավելի ճանաչված արաբ հայագետներ Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից, ինչպես նաև հայ արաբագետներ՝ Հայաստանից: Նման ներկայացուցչական միջազգային գիտաժողով տարածաշրջանում իրականացվում էր առաջին անգամ: Զեկուցումները նվիրված էին հայ-արաբական և հայ-իսլամական հարաբերությունների պատմական տարբեր փուլերի լուսաբանմանը, արաբական երկրներում հայ համայնքների դերին, հայոց ցեղասպանության նկատմամբ արաբների դրական դիրքորոշմանը և այլն: Գիտաժողովին զուգընթաց բացվեց արաբալեզու հայագիտական գրականության ցուցահանդես: Այնուհետև՝ 2008 թ. մարտին, Հայագիտական կենտրոնում կայացավ երկրորդ գիտաժողովը, որը նվիրված էր «Հայ-արաբական մշակութային առնչություններին»: Այս ինքնատիպ միջոցառմանը նույնպես մասնակցեցին արաբ հայագետներ Հայաստանից, Եգիպտոսից, Սիրիայից և Լիբանանից:

Իր գործունեության երկու տարվա ընթացքում Կահիրեի համալսարանի հայագիտական կենտրոնը հասցրեց կազմակերպել երկու միջազգային գիտաժողով, ինչպես նաև հրատարակել 5 գիրք արաբերենով՝ հայ-արաբական, հայ-եգիպտական բարեկամության և հայոց պատմության վերաբերյալ: Այսպիսով, Հայագիտական կենտրոնը սկսեց կատարել երկու պետությունների միջև համագործակցության ու հայ-արաբական բարեկամության ամրապնդմանն ուղղված կարևորագույն առաքելությունը: Հատկանշական է, որ ՀՀ կառավարությունն առաջին անգամ պետական բյուջեում գումար հատկացրեց հատուկ Կահիրեի համալսարանի հայագիտական կենտրոնի համար: Իսկ Կենտրոնի հիմնադրման առթիվ նյութական և բարոյական աջակցություն ցուցաբերեցին Կահիրեի և Ալեքսանդրիայի Հայոց առաջնորդարանները, ինչպես նաև ՀԲԸՄ Եգիպտոսի շրջանակային հանձնաժողովն ու Կահիրեի մասնաճյուղը: Համահայկական այս կենտրոնի աշխատանքները համակարգելու և անխափան գործունեությունը ապահովելու նպատակով Եգիպտոսում ՀՀ դեսպանությանը կից ստեղծվեց հատուկ հանձնաժողով: Կահիրեի համալսարանի Հայագիտական կենտրոնը, իրոք, դարձավ համահայկական նախագիծ:

Հաջորդ տարիներին Կենտրոնում շարունակվեց ավանդույթը. կայացան տարբեր գիտաժողովներ, դասընթացներ ու դասախոսություններ[323]: Սակայն, ցավոք, Կենտրոնի աշխատանքները խափանվեցին Եգիպտոսում Մոհամեդ Մուրսիի իշխանության գալուց հետո (2012-2013 թթ.) նրա վարած թուրքամետ քաղաքականության հետևանքով: Այսուհանդերձ, ՀՀ դեսպանության ջանքերով

[323] 2011 թ. ՀՀ դեսպանությունը կազմակերպեց «Հայաստանը արևելյան և արևմտյան աղբյուրներում» գիտաժողովը: 2013 թ. փետրվարին տեղի ունեցավ «Հայաստանը և քաղաքակրթությունների երկխոսությունը» միջազգային գիտաժողովը: Իսկ 2016 թ. հոկտեմբերին կայացավ «Հայագիտությունն արաբական աշխարհում» թեմայով գիտաժողովը, որը նվիրված էր ՀՀ անկախության 25-ամյակին:

Հայագիտական կենտրոնը վերականգնեց իր նախկին կարգավիճակը և 2014 թ. հոկտեմբերին վերսկսեց գործունեությունը՝ շարունակելով կատարել իր հիրավի առանցքային դերակատարությունը:

Մերձավոր Արևելքում հայ համայնքների քայքայման անկասելի ընթացքը և արաբական աշխարհի հետ մեր հարաբերությունների պահպանման ու խորացման անհրաժեշտությունն այսօր առանձնահատուկ և անհետաձգելի խնդիրներ են առաջադրում նման կենտրոնների վարկն ամրապնդելու և նրանց գործունեության անխափան գործընթացն ապահովելու համար:

2006 թ. փետրվարին Հայոց գրերի ստեղծման 1600-ամյակի առթիվ Ալեքսանդրիայի պատմական նորակառույց գրադարանի կենտրոնական ընթերցասրահում բացվեց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանից բերված հին ձեռագրերի երկշաբաթյա ցուցահանդեսը: Միաժամանակ Ալեքսանդրիայի գրադարանում կազմակերպվեց գիտաժողով՝ նվիրված «Հայ-եգիպտական պատմամշակութային առնչություններին», որին մասնակցեցին ԵՊՀ համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը (այնուհետև՝ ՀՀ ԳԱԱ նախագահ), Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը, երջանկահիշատակ գիտնականներ, Մատենադարանի տնօրեն, ակադեմիկոս Ս. Արևշատյանը, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը, ինչպես նաև Եգիպտոսի մի շարք անվանի գիտնականներ: Գիտաժողովը բացեցին Ալեքսանդրիայի գրադարանի տնօրեն Ի. Սարագելդինն ու Եգիպտոսում ՀՀ դեսպան Ռ. Կարապետյանը: Գիտաժողովի նյութերն ամփոփվեցին առանձին հրատարարակված գրքում: 2007 թ. ապրիլին Երևանի բժշկական համալսարանի և Կահիրեի համալսարանի միջև ստորագրվեց համագործակցության համաձայնագիր: ՀՀ-ն արդեն չորս կրթաթոշակ է տրամադրել եգիպտացի երիտասարդներին՝ Երևանի պե-

տական բժշկական համալսարանում և Երևանի պետհամալսարանում ուսանելու նպատակով:

2007 թ.՝ ՀՀ անկախությունից հետո առաջին անգամ, ՀՀ կառավարության կրթաթոշակների արժանացած 3 եգիպտացիներ մեկնեցին Հայաստան՝ ֆիզիկա և մաթեմատիկա մասնագիտությունների գծով դոկտորանտուրայում ուսանելու համար:

Յուրաքանչյուր տարի Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի 5 ուսանող վերապատրաստում է անցնում Կահիրեի համալսարանում և օտարերկրացիների համար արաբերենի ուսուցման կենտրոնում:

Միևնույն ժամանակ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դասախոսներն ու ուսանողները եգիպտական հիմնադրամի աջակցությամբ մասնակցում են արաբագիտության դասընթացների:

Կրթության ոլորտում համագործակցության վերաբերյալ ստորագրված են թե՛ միջպետական իրավական փաստաթղթեր և թե՛ միջբուհական բազմաթիվ հուշագրեր ու գործնական ծրագրեր:

Դ. Համագործակցություն մշակույթի բնագավառում

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր Հայաստանի և Եգիպտոսի միջև ակտիվ համագործակցություն է ծավալվել նաև մշակույթի բնագավառում:

1997 թ. մարտին Կահիրեում ստորագրվել է «Գիտության, կրթության և մշակույթի բնագավառներում համագործակցության մասին» համաձայնագիրը: 1998 թ. հունվարին կայացել է Հայաստանի մշակույթի և արվեստի առաջին փառատոնը Եգիպտոսում (ծրագրում՝ հայ արվեստի վարպետների ելույթներ, հայկական գեղանկարչության, գորգերի և մանրաքանդակների ցուցահանդեսներ, հայկական ֆիլմերի փառատոն):

1999 թ. հուլիսի 20-27-ը Հայաստանում տեղի ունեցավ Եգիպտոսի մշակույթի և արվեստի փառատոնը:

2005 թ. դեկտեմբերին երկու երկրների միջև ստորագրվեց «2006-2009 թթ. մշակութային համագործակցության գործնական ծրագիրը»:

2007 թ. հուլիսի 19-29-ը Երևանում կազմակերպվեց Եգիպտոսի մշակույթի շաբաթը, որի շրջանակներում կայացան Նուբիական թմբուկների համույթի ելույթները, գեղանկարիչ Ֆ. Աբդել Հաֆիզի կտավների ցուցահանդեսը ՀՀ ազգային պատկերասրահում, ինչպես նաև եգիպտական ֆիլմերի փառատոնը:

2007 թ. ապրիլին ՀՀ նախագահի Եգիպտոս այցի ընթացքում տեղի ունեցան ՀՀ օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի հյուրախաղերը Կահիրեում և Ալեքսանդրիայում, որտեղ առաջին անգամ ներկայացվեց «Գայանե» բալետը: Միջոցառմանը ներկա էին երկու երկրների առաջին տիկինները: Այցը կազմակերպվել էր Եգիպտոսի և ՀՀ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 15-ամյակի առթիվ:

2010 թ. աշնանը Եգիպտոսում տեղի ունեցան հայկական մշակույթի օրեր: Չնայած Եգիպտոսում հայերի երկարատև պատմական ներկայությանն ու թողած բացառիկ հարուստ ժառանգությանը՝ երկրի հանրային որևէ վայրում հայկական հուշարձան գոյություն չուներ (բացի Ալեքսանդրիայի օպերայի բակում տեղադրված Նուբար փաշայի հուշարձանից): Այս հանգամանքը հաշվի առնելով՝ Եգիպտոսում ՀՀ դեսպանությունը նախաձեռնեց և ընթացք տվեց Հայ-եգիպտական բարեկամության հուշարձանի պատրաստման աշխատանքներին՝ եգիպտահայ ճարտարապետ Սարգիս Թոսունյանի գլխավորությամբ: Հուշարձանի բացման պաշտոնական արարողությունը Կահիրեի կենտրոնական «Հուռիյա» (Ազատություն) զբոսայգում տեղի ունեցավ 2007 թ. ապրիլին՝ ՀՀ նախագահի Ե-

գիպտոս այցի ընթացքում: Տարիներ շարունակ հայ արվեստագետներն ու դերասանները մասնակցել են Կահիրեի բիենալեին և փորձարարական թատրոնների միջազգային փառատոնին: Հայ նկարիչ Թենի Վարդանյանն արժանացել է Կահիրեի 2007 թ. բիենալեի «Ոսկե գավաթին»:

2011 թ. դեկտեմբերին ստորագրվեց «ՀՀ մշակույթի նախարարության և ԵԱՀ մշակույթի նախարարության միջև 2011-2013 թթ. մշակութային համագործակցության մասին» գործնական ծրագիրը:

Ե. Եգիպտահայ համայնքն այսօր

Մինչև անցյալ դարի 50-ական թվականները Եգիպտոսի հայ համայնքի թվաքանակը կազմել է շուրջ 40-50 հազար մարդ: 50-ական թթ.՝ հատկապես 1952 թ. հեղափոխությունից հետո, երկրում իրականացված մասնավոր սեփականության ազգայնացման և համատարած արաբականացման քաղաքականության պատճառով հայ համայնքի գերակշիռ մեծամասնությունն արտագաղթել է Եգիպտոսից: Այսօր եգիպտահայության թիվը հազիվ հասնում է ընդամենը 6-7 հազարի:

Ներկայումս եգիպտահայության մեծամասնությունը կազմում են միջին խավի ներկայացուցիչները, երկրի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքում նրանք չունեն ազդեցիկ դիրքեր, փոքրաթիվ լինելու պատճառով համայնքի ներկայացուցիչները ներկայացված չեն պետական կառավարման մարմիններում: Թեպետ շատ են բարեկեցիկ կյանքով ապրողները, սակայն եգիպտական չափանիշներով մեծահարուստներ չկան: Հիմնական զբաղմունքներն են մանր և միջին առևտուրը, բժշկությունը, ոսկերչությունը, լուսանկարչությունը, տպագրական գործը, կան ինժեներներ, երաժիշտներ, նկարիչներ, լրագրողներ, դասախոսներ և այլն:

Համայնքը բաժանված է առաքելական և կաթոլիկ հատվածների, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կառույցները:

Առաքելական համայնքը մինչ օրս ղեկավարվում են Կահիրեի և Ալեքսանդրիայի թեմական և քաղաքական ժողովները, որոնք գլխավորում է Եգիպտոսի թեմի առաջնորդ Աշոտ վարդապետ Մնացականյանը: Նա հրավիրում ու նախագահում է թեմական և քաղաքական ժողովներում, նշանակում է Կահիրեի և Ալեքսանդրիայի առաջնորդական փոխանորդներին:

Եգիպտահայ առաքելական համայնքն ունի 3 եկեղեցի Կահիրեում, 2 եկեղեցի՝ Ալեքսանդրիայում, 2 դպրոց՝ Կահիրեում և մեկը՝ Ալեքսանդրիայում: Երկու քաղաքների դպրոցներում ուսանող աշակերտների ընդհանուր թիվը 250 է:

Կաթոլիկ հայերի թիվը չի անցնում 300-ից, նրանց հոգևոր առաջնորդն է Եգիպտոսի և Սուդանի հայ կաթողիկե թեմի առաջնորդը: Հայ կաթոլիկ համայնքի անդամների մեծ մասը հայախոս չէ, ունեն 2 եկեղեցի Կահիրեում, մեկը՝ Ալեքսանդրիայում: Համայնքին է պատկանում Կահիրեի ամենահեղինակավոր դպրոցներից մեկը՝ Անարատ հղության քույրերի վարժարանը, որի աշակերտները (մոտ 2500 հոգի) հիմնականում եգիպտացիներ են: Դպրոցում հայերեն չի դասավանդվում: Լույս են տեսնում 2 հայկական օրաթերթ՝ «Արև» և «Հուսաբեր», մեկ երկշաբաթաթերթ՝ «Ջահակիր», և մեկ արաբալեզու «Արեկ» (նախկին «Արև») ամսագիր[324]:

Հայ համայնքի ներկայացուցիչները մշտապես ակտիվորեն մասնակցում են համահայկական նշանակության տարբեր միջոցառումներին, այդ թվում՝ Հայաստան-Սփյուռք համաժողովներին, Համահայկական խաղերին և այլն:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է հաստատել, որ հայ-եգիպտական առնչություններն անցել են բացառիկ պատմական

[324] Ներկայումս՝ «Արեկ»:

ուղի, որը լի է բարեկամության, եղբայրության, փոխադարձ հարգանքի ու օժանդակության էջերով: Եգիպտահայ համայնքն առանձնահատուկ տեղ ունի հայկական բոլոր գաղթօջախներում իր ձևավորման ու գոյության ընթացքով, ինչպես նաև Եգիպտոսի պետական կյանքում ունեցած նշանակալի ավանդով: Հայաստանը՝ որպես առաջին քրիստոնյա պետություն, և Եգիպտոսը՝ որպես իսլամական աշխարհի առաջատար երկրներից մեկը, հատկապես այսօր կարող են և պետք է հանդես գան համատեղ տարբեր նախաձեռնություններով՝ «քաղաքակրթությունների երկխոսության» կարգախոսի ներքո: Դժվար է գտնել իսլամական որևէ երկիր, որտեղ հայերը պատմության ընթացքում զբաղեցրած լինեն այդքան բարձր քաղաքական պաշտոններ՝ վայելելով հասարակության անվերապահ հարգանքն ու վստահությունը: Եգիպտոսում հայերի թողած քաղաքական, տնտեսական և մշակութային հարուստ ժառանգությունը, երկու ժողովուրդների պատմամշակութային սերտ կապերն այն հզոր հիմքն են, որի վրա ներկայումս հնարավոր է խարսխել այդ երկխոսությունը նաև միջազգային հարթակներում ու բազմակողմ ձևաչափով:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Կահիրեի համալսարանում հայագիտական կենտրոնի հիմնադրման պատմությունը

Հայ և արաբ ժողովուրդների պատմական սերտ առնչություններն իրենց արտացոլումն են գտել քաղաքական, առևտրային, մշակութային և մի շարք այլ ասպարեզներում: Հայոց ցեղասպանությունից հետո հարևան արաբական երկրներում ապաստանած հայ տարագիրները հսկայական ներդրում ունեցան այդ երկրների զարգացման ու առաջընթացի գործում:

Արաբական երկրներում հայ համայնքները հիմնականում կազմավորվել են Հայոց ցեղասպանությունից հետո: Դրանց մեջ Եգիպտոսն առանձնանում է հայկական ներկայության բացառիկ պատմագրությամբ: Եգիպտական հողի վրա հաստատված առաջին հայ հատվածի մասին մեզ հասած հավաստի տեղեկությունը վերաբերում է մ.թ.ա. առաջին դարին, երբ, ըստ պատմիչների, Եգիպտոսում բավականին թվով հայեր ապրում և իշխող դիրքեր էին գրավում[325]: Եգիպտահայ համայնքը հետագայում զարգացել ու բարգավաճել է Արաբական խալիֆայությունների, մասնավորապես Ֆաթիմյանների ժամանակաշրջանում, երբ Եգիպտոսում բարենպաստ պայմաններ են ստեղծվել հայ բնակչության կենտրոնացման և հայ արհեստավորության ու առևտրականների ակտիվ գործունեության համար: Եգիպտահայ համայնքը XI-XII դարերում ունեցել է շուրջ 30.000 բնակչություն[326]: Եգիպտահայությունը ծանր վիճակի մեջ հայտնվեց Այուբյան դինաստիայի ապա մամլուքների տիրապետության ժամանակաշրջանում (1171-1517):

---

[325] Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 128:

[326] Մատթեոս Ուռհայեցի. Ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 121:

Հետագայում, հատկապես XIX դարի առաջին կեսին, Մուհամմեդ Ալիի վարչական և տնտեսական ռեֆորմներն իրենց դրական ազդեցությունը ունեցան նաև եգիպտահայ համայնքի վրա: Նա թելադրում էր իր շրջապատին. «Հայազգի պաշտոնյաներ ընտրեք, որովհետև նրանք իրենց պաշտոնն ավելի հստակ, ավելի խղճով, ավելի անձնվեր ու եռանդով են կատարում և պետությունը հսկա քայլերով առաջ տանում»[327]:

Արևմտյան Հայաստանից և հարևան արաբական երկրներից տեղափոխվելով Եգիպտոս՝ հայերը սկսեցին գործուն աջակցություն ցուցաբերել երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացմանը: Թեպետ հայ համայնքն իր թվաքանակով փոքրերից մեկն էր, սակայն ամենատարբեր ոլորտներում իր մասնակցությամբ և ընդգրկվածությամբ առաջատար դիրքեր էր զբաղեցնում, ինչպես, օրինակ, Եգիպտոսի առաջին վարչապետ Նուբար Նուբարյան փաշան, երկրի առաջին 4 արտգործնախարարները[328], կրթության նախարար Յակուբ (Հակոբ) Արթին Փաշա Չրաքյանը, որին անվանում էին «Մեծ ուսուցիչ» (Ուսթազ ալ-Քաբիր), գյուղատնտեսության ոլորտում Յուսուֆ էֆենդին, ում պատվին մինչ օրս մանդարինը Եգիպտոսում անվանում են «Յուսուֆ էֆենդի», ինչպես նաև Պողոս Նուբար փաշան, որը հիմնադրեց ՀԲԸՄ-ն ու Կահիրեի «Հելիոպոլիս» թաղամասի կառուցապատման աշխատանքների հիմքը դրեց: Այս շարքը կարելի է անվերջ շարունակել:

---

[327] Ա. Ալպոյաճեան, Եգիպտոսի նահանգը և հայերը, Գահիրէ, 1960, էջ 60: Sona Zeitlian. Armenians in Egypt. Contribution of Armenians to Medieval and Modern Egypt, Hraztan Publications, LA, 2006, p. 97.

[328] Տվյալները տեղադրված են նաև Եգիպտոսի ԱԳՆ համացանցային կայքէջում: Պողոս Բեյ Յուսուֆյան (1826-1844 թթ.), Արթին Բեյ Շուքրի/Չրաքյան (1844-1850 թթ.), Ստեփան Բեյ Ռասմի էլ Արմանի (1850-1858 թթ.) և Նուբար Նուբարյան փաշա (1858-1879 և 1884-1888 թթ): Հայազգի ԱԳ նախարար է եղել նաև Տիգրան փաշան (Դ'Աբրո) (1891-1894 թթ.):

Մուհամմեդ Ալիի կառավարման տարիներին (1805-1848) ու դրանից հետո առաջին անգամ մահմեդական այս երկրում քրիստոնյա հայերը ոչ միայն պետական բարձր պաշտոնների նշանակվեցին, այլև նրանցից շատերն արժանացան «փաշա» և «բեյ» բարձր տիտղոսների, ինչը հայ ժողովրդի պատմության եզակի երևույթներից է:

Մինչև անցյալ դարի 50-ական թվականները հայ համայնքի թվաքանակը կազմել է շուրջ 40-50 հազար մարդ: Հատկապես 1952 թ. հեղափոխությունից հետո երկրում իրականացված մասնավոր սեփականության ազգայնացման և համատարած արաբականացման քաղաքականության պատճառով հայ համայնքի գերակշիռ մեծամասնությունն արտագաղթեց Եգիպտոսից: Այսօր եգիպտահայության թիվը կազմում է ընդամենը 6-7 հազար մարդ:

ՀՀ անկախության ձեռքբերումից հետո հայ-եգիպտական հարաբերությունները թևակոխեցին որակական նոր փուլ, որը բազում հնարավորություններ ընձեռեց թե՛ երկկողմ և թե՛ բազմակողմ համագործակցության համար:

Գիտակցելով երկկողմ հարաբերությունների՝ պատմական այդ հզոր հենքի առկայության փաստը, հատկապես երբ Եգիպտոսի ԱԳ նախարար Ահմեդ Աբուլ Ղեյթը ՀՀ դեսպանի հետ առաջին հանդիպման ընթացքում հատուկ ընդգծեց այն հանգամանքը, որ հայերը «բացառիկ մեծ ներդրում ունեցան ժամանակակից Եգիպտոսի պետության կայացման գործում[329], Եգիպտոսում ՀՀ դեսպանությունը դեռևս 2004 թ.[330] սկսեց ակտիվ աշխատանքներ ծավալել հայ-եգիպտական բազմաբնույթ հարաբերությունները պաշտոնա-

[329] Ներկայիս Արաբական լիգայի գլխավոր քարտուղարն է: Եգիպտոսի Արաբական Հանրապետության արտաքին գործերի նախարար Ահմեդ Աբուլ Ղեյթի և ԵԱՀ-ում ՀՀ դեսպան Ռուբեն Կարապետյանի առանձնազրույցի սղագրությունից (28.11.2004):

[330] Հոդվածի հեղինակը՝ Ռուբեն Կարապետյանը, Եգիպտոսում ՀՀ դեսպան է նշանակվել 2004 թ. օգոստոսին:

պես քարոզելու ուղղությամբ: Վերջինս հիմնավորվում էր բարեկամ երկրի լայն հասարակության ու քաղաքական շրջանակներում Եգիպտոսի քաղաքական ու հասարակական կյանքում հայերի ունեցած ավանդը որպես ոչ միայն եգիպտահայ կամ հայ ժողովրդի, այլ նաև Եգիպտոսի պատմության «անբաժան և կարևոր մաս» ներկայացնելու անհրաժեշտությամբ: Այդ նպատակով գործնական քայլեր կատարվեցին արաբական ամենամեծ ու հեղինակավոր այդ երկրում հայագիտական միավորի ստեղծման ուղղությամբ[331]:

Նախնական աշխատանքների շնորհիվ, չնայած եգիպտական մի շարք համալսարաններ իրենց համաձայնությունն էին տվել հայագիտական միավոր հիմնելու վերաբերյալ (Այն Շամսի, Ալեքսանդրիայի և այլ), այնուհանդերձ վերջնական ընտրությունը բաժին ընկավ երկրի կենտրոնական՝ Կահիրեի համալսարանին: Դա բացատրվում է նրանով, որ Կահիրեի համալսարանը կրթական ամենամեծ և հեղինակավոր հաստատությունն էր Մերձավոր Արևելքում, ինչպես նաև այն հանգամանքով, որ արաբական աշխարհում գոյություն ունեցող եզակի հայագիտական միավորները (Հալեպ, Բեյրութ) չէին գործում որևէ «մայր բուհում»:

Նախ 2005 թվականին ստորագրվեց ԵՊՀ-ի և Կահիրեի համալսարանի համագործակցության համաձայնագիրը, որով ամրագրվեց Հայագիտական «միավորի» ստեղծումը Կահիրեի համալսարանում: Սակայն այդ համաձայնագրի իրականացմանը խոչընդոտում էր Կահիրեի համալսարանում տիրող աննպաստ մթնոլորտը, ինչը հնարավորություն չէր տալիս ռեկտորին՝ վերջնական որոշում կայացնելու: Ամենագլխավոր խոչընդոտներից առանձնացնենք միայն երկուսը:

---

[331] Նման փորձ կատարվել էր դեռևս 1996 թվականին: Այդ նպատակով ՀԲԸՄ Կահիրեի մասնաճյուղի կողմից Կահիրեի համալսարանին առձեռն փոխանցվել էր 50.000 եգիպտական ֆունտ (շուրջ 15.000 ԱՄՆ դոլար): Սակայն նախաձեռնությունն անարդյունք էր ավարտվել:

Եգիպտոսի բնակչության շուրջ տասը տոկոսը կազմող քրիստոնյա ղպտիների աննպաստ ձևով արձագանքեցին Կահիրեի համալսարանում հայագիտական կենտրոն հիմնելու ծրագրին: Ըստ համալսարանի տնօրինության՝ «…ստացվել էին նամակներ այն մասին, որ «երկրի իշխանությունները մշտապես անտեսել են սեփական ժողովրդի շոշափելի հատվածը կազմող ղպտիների շահերը՝ ընդհանրապես մերժելով ղպտիերենի ուսուցումը, էլ չենք խոսում որևէ ղպտիական ուսումնական կենտրոնի բացման մասին: Սակայն համաձայնություն են տալիս այլ ժողովուրդների համար կենտրոններ բացելուն»: Վերը նշվածը ծայրահեղ բացասական ազդեցություն ունեցավ, որին ավելացավ երկրորդ խոչընդոտը՝ Կահիրեի համալսարանի բանասիրական ֆակուլտետում գործող թուրքական բաժնի անհանդուրժողական կեցվածքը հայագիտական կենտրոն հիմնելու առիթով՝ «հայ-թուրքական խնդիրները համալսարան ներմուծելու, այնտեղ գիտագործնական մթնոլորտը վատթարացնելու և, վերջապես, թուրք-եգիպտական հարաբերությունների վրա բացասաբար ազդելու» անհիմն պատճառաբանություններով:

Փաստորեն, սկզբից ևեթ առաջացան անհաղթահարելի թվացող խոչընդոտներ: Կահիրեի համալսարանի ռեկտորը փորձեց հարցի լուծման պատասխանատվությունը դնել Եգիպտոսի բարձրագույն կրթության նախարարության վրա: Սակայն այդ ընթացքում Կահիրեի համալսարանի ռեկտորն ազատվեց պաշտոնից, ինչը լրացուցիչ բարդություններ առաջացրեց պայմանավորվածությունների պահպանման և այլ առումներով:

Հարցի լուծմանը գործնական ընթացք հաղորդելու նպատակով 2005 թ. դեկտեմբերին ՀՀ վարչապետի՝ Եգիպտոս պաշտոնական այցի ծրագրում հատուկ նախատեսվեց նաև հանդիպում Կահիրեի համալսարանում ռեկտորի և բանասիրական ֆակուլտետի

ղեկավարության հետ, որի ընթացքում մեկ անգամ ևս կարևորվեց Հայագիտական կենտրոնի ստեղծումը: Այս քայլն անհրաժեշտ էր նման բարձր մակարդակով հաստատելու նախկինում ստորագրված համաձայնագրից բխող դրույթը, ամրապնդելու Կահիրեի համալսարանի հանձնառությունը և փակելու եգիպտական կողմի նահանջի ճանապարհները: Սա հստակ հաշվարկված դիվանագիտական քայլ էր: Այսուհանդերձ, ՀՀ վարչապետի այցից հետո եգիպտական կողմը կրկին փորձեց ձգձգել հարցի լուծումը՝ «համալսարանի գիտական տարբեր խորհուրդների և նախարարության կողմից հարցի քննարկման անհրաժեշտության, դասախոսների բացակայության, եգիպտացի ուսանողների մոտ հայոց լեզվի և պատմության նկատմամբ հետաքրքության բացակայության» և այլ պատճառաբանություններով: Հանդիպումներից մեկի ժամանակ Կահիրեի համալսարանի ռեկտոր Հոսսամ Քամիլը տեղեկացրեց ՀՀ դեսպանին, որ Թուրքիայի դեսպանությունը աշխատանքներ է տանում համալսարանում կենտրոնի բացումը թույլ չտալու ուղղությամբ[332]:

Այնուհետև,Հայագիտական կենտրոնի հարցով ՀՀ դեսպանը և Եգիպտոսի բարձրագույն կրթության նախարարը երեք հանդիպում ունեցան, որոնց արդյունքում ամրագրվեց հարցին դրական լուծում տալու՝ եգիպտական կողմի պատրաստակամությունը:

2006 թ. դեկտեմբերին Հայագիտական կենտրոնի հարցը քննարկվեց ՀՀ դեսպան Ռ. Կարապետյանի և Եգիպտոսի վարչապետ Ահմեդ Նազիֆի միջև կայացած հանդիպման ընթացքում[333]:

Միևնույն ժամանակ Եգիպտոսում ՀՀ դեսպանությունը դիմեց ՀՀ կառավարությանը՝ 2007 թ. բյուջեով համապատասխան գու-

---

[332] Եգիպտոսում ՀՀ դեսպան Ռ.Կարապետյանի և Կահիրեի համալսարանի ռեկտոր Հ. Քամիլի զրույցի գրառումից (2006.10.07):

[333] Եգիպտոսում ՀՀ դեսպան Ռ. Կարապետյանի և Եգիպտոսի վարչապետ Ա. Նազիֆի հետ հանդիպման վերաբերյալ հաղորդագրությունից (2006.09.12):

մար նախատեսելու և Կահիրեի համալսարանում հայագիտական կենտրոնի բացումն իրականացնելու նպատակով: Զուգահեռաբար դեսպանությունը աշխատանքներ ծավալեց եգիպտահայ համայնքի հետ ստեղծվելիք հայագիտական կենտրոնի գործունեությանը նյութական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ: Հարցին վերջնական լուծում տալու նպատակով, օգտագործելով 2007 թ. ապրիլին Եգիպտոս կայանալիք ՀՀ նախագահի պաշտոնական այցի հանգամանքը, ՀՀ դեսպանը նորից հանդիպեց Եգիպտոսի վարչապետի հետ: Եվ արդյունքը երկար սպասեցնել չտվեց. ՀՀ նախագահի պաշտոնական այցի հենց առաջին օրը ՀՀ դեսպանությունը ստացավ Եգիպտոսի վարչապետ Ահմեդ Նազիֆի պաշտոնական որոշումը՝ «Կահիրեի համալսարանի բանասիրական ֆակուլտետում Հայագիտական կենտրոն (Մառքազ Դիրասաթ Ալ-Արմանիա) հիմնելու մասին»: Սա շուրջ երեք տարվա դիվանագիտական աշխատանքի արդյունք էր: Շուրջ 250 հազար ուսանողություն ունեցող Եգիպտոսի «մայր բուհում», որը Մերձավոր Արևելքի ամենամեծ համալսարանն է, բանասիրական ֆակուլտետում, որը ոչ միայն եգիպտական, այլև արաբական աշխարհի առաջնորդների դարբնոցն է համարվում, Հայագիտական կենտրոնի հիմնումը պատմական և քաղաքական նշանակալի իրադարձություն կարելի է համարել:

Մեկ այլ հիշարժան փաստ է նաև այն, որ Կահիրեի համալսարանում այդ պահին օտարերկրյա կամ օտարազգի այլ կենտրոն գոյություն չուներ:

Պետք է մեկ անգամ ևս շեշտել այն բացառիկ հանգամանքը, որ ՀՀ անկախությունից ի վեր առաջին անգամ ՀՀ կառավարությունը, թեկուզ սիմվոլիկ, գումար հատկացրեց արտերկրում Հայագիտական կենտրոնի համար: Սա պետական քաղաքականության ուշագրավ դրսևորում էր հայագիտության զարգացման հարցում:

Կահիրեի համալսարանում գործող հայագիտական կենտրոնն առաջինն էր արտերկրում, որ ֆինանսական աջակցություն ստացավ անմիջապես ՀՀ-ից[334]:

Հարկ է նաև հատուկ ընդգծել, որ կենտրոնի հիմնադրման պահից ի վեր նյութական և բարոյական աջակցություն են ցուցաբերում Կահիրեի և Ալեքսանդրիայի Հայոց առաջնորդարանները, ինչպես նաև ՀԲԸՄ Եգիպտոսի շրջանակային հանձնաժողովն ու Կահիրեի մասնաճյուղը[335]: Աշխատանքները համակարգելու և կենտրոնի անխափան գործունեությունն ապահովելու նպատակով Եգիպտոսում ՀՀ դեսպանությանը կից ստեղծվեց հատուկ հանձնաժողով: Կահիրեի համալսարանի հայագիտական կենտրոնը, հիրավի, դարձավ համահայկական նախագիծ:

2007 թ. սեպտեմբերից Կենտրոնում սկսվեցին հայոց լեզվի ու հայ ժողովրդի պատմության դասավանդումն ու դասախոսությունները՝ հայ մշակույթի, հայ-արաբական և հայ-եգիպտական հարաբերությունների մասին:

2007 թ. դեկտեմբերին առաջին անգամ համալսարանի ուսանողության առջև «Հայ-արաբական պատմական առնչություններ» թեմայով դասախոսությամբ հանդես եկավ պատմական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը:

2007 թ. ապրիլի 29-ին ԵԱՀ բարձրագույն կրթության նախարարի հովանավորությամբ Կահիրեի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնում տեղի ունեցավ հայ-արաբական հարաբերություններին նվիրված առաջին միջազգային գիտաժողովը՝ «Հայաստան-արաբական աշխարհ. անցյալը և ներ-

---

[334] 2007 թ. ՀՀ պետական բյուջեում ՀՀ ԱԳՆ-ին հատկացվող միջոցների մեջ առանձին տողով ամրագրվեց **10 մլն դրամ գումարը**: Ցավոք, այն մնաց առաջին և վերջին նախադեպը՝ չստանալով զարգացում այլ երկրներում գործող հայագիտական կենտրոններին ֆինանսավորելու կամ նոր կենտրոններ բացելու առումով:

[335] *http://www.agbuegypt.com/press-details.aspx?ID=205*

կան» խորագրով: Գիտաժողովը կազմակերպվել էր Եգիպտոսում ՀՀ դեսպանության և եգիպտահայ բոլոր կազմակերպությունների համատեղ ջանքերով: Գիտաժողովի բացման խոսքով հանդես եկան ԵԱՀ բարձրագույն կրթության նախարարի առաջին տեղակալ Ահմադ Խեյրին և Եգիպտոսում ՀՀ դեսպան Ռ. Կարապետյանը[336]:

Վերոնշյալ գիտաժողովին մասնակցում էին քսանից ավելի ճանաչված արաբ հայագետներ՝ հրավիրված Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից, ինչպես նաև հայ արաբագետներ Հայաստանից: Նման ներկայացուցչական միջազգային գիտաժողով տարածաշրջանում իրականացվեց առաջին անգամ: Զեկուցումները նվիրված էին հայ-արաբական և հայ-իսլամական հարաբերությունների պատմական տարբեր փուլերի լուսաբանմանը, արաբական երկրներում հայ համայնքների դերին, Հայոց ցեղասպանության նկատմամբ արաբների դրական դիրքորոշմանը և այլն: Գիտաժողովին զուգահեռ տեղի ունեցավ արաբալեզու հայագիտական գրականության ցուցահանդես: Այնուհետև՝ 2008 թ. մարտին, Հայագիտական կենտրոնում կայացավ երկրորդ գիտաժողովը, որը նվիրված էր «Հայ-արաբական մշակութային առնչություններին»: Այս գիտաժողովին նույնպես մասնակցեցին արաբ հայագետներ Հայաստանից, Եգիպտոսից, Սիրիայից և Լիբանանից:

Իր գոյության առաջին երկու տարիներին Կահիրեի համալսարանի հայագիտական կենտրոնը կազմակերպեց երկու միջազգային գիտաժողով, ինչպես նաև հրատարակեց 5 գիրք՝ արաբերեն լեզվով՝ հայ-արաբական, հայ-եգիպտական բարեկամության և հայոց պատմության վերաբերյալ:

Հաջորդ տարիներին Կենտրոնում շարունակվեց ավանդույթը, հրավիրվեցին տարբեր գիտաժողովներ, դասընթացներ ու դասա-

---

[336] *http://azad-hye.net/news/viewnews.asp?newsId=371jla93*, *http://www.agbuegypt.com/-press-details.aspx?ID=259*

խոսություններ: Այսպես, 2011 թ. ՀՀ դեսպանությունը կազմակերպեց «Հայաստանը արևելյան և արևմտյան աղբյուրներում» գիտաժողովը: 2013 թ. փետրվարին տեղի ունեցավ «Հայաստանը և քաղաքակրթությունների երկխոսությունը» միջազգային գիտաժողովը: Իսկ 2016 թ. հոկտեմբերին կայացավ «Հայագիտությունն արաբական աշխարհում» թեմայով գիտաժողովը, որը նվիրված էր ՀՀ անկախության 25-ամյակին: Սակայն, ցավոք, Կենտրոնի աշխատանքները խափանվեցին Եգիպտոսում Մոհամեդ Մուրսիի իշխանության գալուց հետո (2012-2013 թթ.) նրա վարած թուրքամետ քաղաքականության հետևանքով: Այսուհանդերձ, ՀՀ դեսպանության ջանքերով Հայագիտական կենտրոնը վերականգնեց իր նախկին կարգավիճակը և 2014 թ. հոկտեմբերին վերսկսեց գործունեությունը՝ շարունակելով կատարել իր հիրավի առանցքային դերակատարությունը:

Ավարտելով հարկ է շեշտել, որ Մերձավոր Արևելքում հայ համայնքների քայքայման անկասելի ընթացքը և արաբական աշխարհի հետ մեր հարաբերությունների պահպանման ու խորացման անհրաժեշտությունն այսօր առանձնահատուկ և անհետաձգելի խնդիրներ են առաջադրում՝ նման կենտրոնների վարկն ամրապնդելու և նրանց գործունեության անխափան ընթացքն ապահովելու համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀՀ-Արաբական պետությունների լիգա համագործակցության պատմությունից

Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ)՝ որպես արաբական աշխարհը համախմբող միակ և ամենակարևոր կառույցի հետ կապերը մշտապես կարևորվել են ՀՀ բազմակողմ համագործակցության համատեքստում:

Կահիրեում ԱՊԼ-ի կենտրոնակայանի գտնվելու հանգամանքը դյուրացրել է շփումներն այդ կազմակերպության հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այնտեղ է տեղակայված Աֆրիկյան մայրցամաքում ՀՀ միակ դեսպանությունը:

2004-2008 թվականները բեկումնային կարելի է համարել Հայաստան-ԱՊԼ, իսկ լայն իմաստով՝ Արաբական աշխարհի հետ մեր համագործակցության համար:

2001 թ. ԱՊԼ գլխավոր քարտուղարի պաշտոնում Ամր Մուսայի[337] ընտրությունից հետո այդ կազմակերպությունը սկսեց առավել մեծ ուշադրություն դարձնել արաբական շրջանակներից դուրս գտնվող ոչ միայն աշխարհաքաղաքական կենտրոնների, այլև տարբեր պետությունների հետ համագործակցությանը: Ստեղծվեցին ԱՊԼ-Չինաստան, ԱՊԼ-Լատինական Ամերիկա, ԱՊԼ-ԵՄ և համագործակցության այլ խորհուրդներ:

Օգտվելով վերոնշյալ բարենպաստ պայմաններից՝ Եգիպտոսում ՀՀ դեսպանությունը նախաձեռնեց ակտիվ աշխատանքներ՝ ԱՊԼ-ի հետ համագործակցությունն իրավական ամուր հիմքերի

---

[337] Ամր Մուսան Եգիպտոսում մեծ հեղինակություն վայելող քաղաքական և հասարակական գործիչ է, վաստակաշատ և հմուտ դիվանագետ: Նա որպես ԱՊԼ գլխավոր քարտուղար պաշտոնավարեց մինչև 2011 թվականը, իսկ մինչ այդ զբաղեցնում էր

վրա դնելու ուղղությամբ: Որպես առաջին քայլ 2004 թվականից սկիզբ դրվեց ԱՊԼ-ի և ՀՀ ԱԳՆ-ի ակտիվ շփումներին ու քննարկումներին՝ օգտագործելով տարբեր բազմակողմ համաժողովների շրջանակները: Այդ հանդիպումների ընթացքում՝ 2005 թվականի հունվարին՝ ՀՀ ԱԳ նախարարի Եգիպտոս կատարած պաշտոնական այցի օրերին, Եգիպտոսում ՀՀ դեսպանությունը կազմակերպեց նաև հանդիպում ԱՊԼ գլխավոր քարտուղար Ամր Մուսայի հետ, որի ընթացքում Փոխըմբռնման հուշագիր ստորագրվեց ՀՀ ԱԳՆ-ի և ԱՊԼ-ի միջև, ինչը հայ-արաբական հարաբերությունների զարգացման և արաբական աշխարհի հետ ՀՀ քաղաքական համագործակցությունն արդյունավետ համակարգելու նոր փուլի սկիզբը դրեց[338]:

Ստորագրված փաստաթղթի շնորհիվ Եգիպտոսում հավատարմագրված հայ դիվանագետները հնարավորություն ստացան մասնակցելու ԱՊԼ-ում տեղի ունեցող գագաթնաժողովների բացման հանդիսավոր արարողություններին, մամուլի ասուլիսներին ու տարբեր հարցերի վերաբերյալ քննարկումներին: ՀՀ դեսպանությունը ներգրավվեց ԱՊԼ ղեկավարության և միջազգային այդ կազմակերպությունում հավատարմագրված դեսպանների ու դիվանագիտական կորպուսի ակտիվ շփումների մեջ: Կահիրեից Երևան սկսեցին ուղարկվել հեռագրեր ու վերլուծականներ՝ միջարաբական և տարածաշրջանային ընթացիկ կարևորագույն խնդիրների, արաբական տարբեր երկրների դիրքորոշումների ու վարած քաղաքականության մասին, ինչը հնարավորություն տվեց ՀՀ ԱԳՆ-ին առավել ճշգրիտ ու թիրախային դարձնելու թե՛ արաբական տարբեր

Եգիպտոսի արաբական հանրապետության արտաքին գործերի նախարարի պաշտոնը (1991-2001 թթ.):

[338] *http://www.armeniandiaspora.com/showthread.php?16766-Armenia-Arab-League-sign-memo-on-mutual-understanding*

երկրների նկատմամբ քաղաքականության մշակման և թե՛ երկկողմ համագործակցության ուղղորդման գործընթացները:

2007 թ. մարտին ՀՀ նախագահի պաշտոնական այցը Եգիպտոս, Հայաստան-Արաբական աշխարհ հարաբերությունների զարգացման առումով կարելի է գնահատել որպես պատմական: ՀՀ դեսպանությունը, հայ-եգիպտական երկկողմ հանդիպումներից բացի, կազմակերպեց ՀՀ ղեկավարի առաջին այցելությունը Արաբական Պետությունների Լիգայի կենտրոնական, որտեղ ոչ միայն տեղի ունեցավ առանձնազրույց այդ կազմակերպության գլխավոր քարտուղարի հետ, այլև կազմակերպվեց հանդիպում Լիգայում հավատարմագրված արաբական բոլոր 22 երկրների դեսպանների հետ:

Հանդիպման սկզբում Հայկական պետության ղեկավարի կողմից հատուկ ընդգծվեց Հայաստանի պատրաստակամությունը էլ ավելի խորացնելու ու զարգացնելու ավանդական բարեկամական հարաբերությունները արաբական աշխարհի հետ[339]: Ապա անդրադարձ կատարվեց Պաղեստինյան հիմնախնդրին, Իրաքում ստեղծված իրավիճակին, ահաբեկչության դեմ պայքարին, Մերձավոր Արևելքում հայկական կազմակերպված համայնքների ու հայ անհատների շոշափելի ներդրմանը արաբական երկրների զարգացման և առաջընթացի գործում: Նշվեց, որ «երբ հայ ժողովուրդը ցեղասպանության ենթարկվեց Օսմանյան Թուրքիայում, արաբական երկրներն առաջինն էին, որ օգնության ձեռք մեկնեցին՝ ապաստան տրամադրելով և հնարավոր աջակցություն ցուցաբերելով հարյուր հազարավոր մարդկանց: Հայ ժողովուրդը երբևիցե չի կարող մոռանալ արաբ ժողովրդի նման վերաբերմունքը, և դա իր արտացոլումն ունի նաև Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ:

Անկախության ձեռքբերումից ի վեր Հայաստանի Հանրապետությունը հետևողականորեն զարգացրել է իր հարաբերություններն արաբական երկրների հետ և մշտապես իր համերաշխությունը հայտնել մերձավորարևելյան խաղաղ գործընթացում արաբական դիրքորոշմանը»:

Հանդիպման ընթացքում շոշափվեցին նաև ՀՀ արտաքին քաղաքականության, տնտեսության առանձնահատկությունների ու առաջնահերթությունների, մշակութային համագործակցության, քաղաքակրթական երկխոսության, ԼՂՀ հիմնախնդրի կարգավորման գործընթացին առնչվող հարցեր:

ԱՊԼ-ում հավատարմագրված դեսպանների առջև ունեցած իր պատասխան ելույթում կազմակերպության գլխավոր քարտուղար Ամր Մուսան հատուկ շեշտեց. «Մեզ համար մեծ պատիվ էր Հայաստանի նախագահին հյուրընկալել այստեղ, քանի որ հայերի և արաբների միջև հարաբերությունները պատմականորեն ջերմ են մինչև այսօր»:

Այնուհետև ողջույնի խոսքով հանդես եկան Սաուդյան Արաբիայի (որպես դուայեն), Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Եգիպտոսի, Քուվեյթի դեսպանները: Արաբ դեսպանները վերահաստատեցին հայ ժողովրդի հանդեպ իրենց տածած հարգանքն ու ակնածանքը, որը «տարածվում է նաև հայկական պետության վրա»: Նրանք հատկապես շեշտեցին հայ և արաբ ժողովուրդների միջև պատմական կապերի բացառիկությունը, հայերի շոշափելի ներդրումն իրենց երկրների զարգացման ու առաջընթացի ապահովման գործում:

ԱՊԼ-ում տեղի ունեցած այդ հանդիպումն ու ելույթներն ուղիղ հեռարձակվեցին արաբական տարբեր երկրներում, այնուհետև լայ-

---

[339] Մինչ այդ Եգիպտոս այցելած ԱՊՀ ու Արևելյան Եվրոպայի որևէ երկրի ղեկավար չէր ունեցել հանդիպում ԱՊԼ-ում հավատարմագրված դեսպանների հետ, ինչ-

նորեն լուսաբանվեցին արաբական ամենահեղինակավոր ԶԼՄ-ների միջոցով:

Վերոհիշյալ այցելությունը հզոր լիցք ու էապես նոր բովանդակություն հաղորդեց ԱՊԼ-ի հետ մեր համագործակցությանը: Ի կատարումն ձեռք բերված պայմանավորվածությունների՝ այցից անմիջապես հետո ՀՀ ԱԳ նախարարը պաշտոնական նամակով դիմեց ԱՊԼ գլխավոր քարտուղարին Եգիպտոսում ՀՀ դեսպանին արաբական այդ հեղինակավոր կազմակերպությանը հավատարմագրելու առաջարկով:

Սկսվեց դիվանագիտական լարված աշխատանք ոչ միայն ԱՊԼ քարտուղարության, այլև առանձին երկրների հետ՝ նրանց աջակցությունը ԱՊԼ-ում ապահովելու նպատակով: Օրինակ, Սաուդյան Արաբիայի հետ ՀՀ դիվանագիտական հարաբերությունների բացակայությունը, նկատի առնելով նաև այն հանգամանքը, որ Սաուդյան Արաբիան այդ կազմակերպության հիմնական դոնորներից մեկն է և ունի վճռորոշ ձայն, ամենալուրջ խոչընդոտներից մեկն էր Հայաստանի համար:

Սաուդյան Արաբիայի երկու դեսպանների (Եգիպտոսում և ԱՊԼ-ում)[340] հետ ծավալված ակտիվ շփումների շնորհիվ ապահովվեց Արաբական Լիգայում Էռ-Ռիադի բարյացակամ դիրքորոշումը ՀՀ խնդրանքին:

Նպատակասլաց դիվանագիտական աշխատանքի շնորհիվ 2008 թ. մարտի 3-ին Արաբական պետությունների լիգայի 22 ան-

---

պես նաև ելույթ ԱՊԼ կենտրոնակայանում:

[340] Այդ հարցում նշանակալի էր Եգիպտոսում Սաուդյան Արաբիայի դեսպան Հիշամ Նազերի աջակցության ապահովումը, որը մինչ Եգիպտոսում Սաուդյան Արաբիայի դեսպան նշանակվելը զբաղեցրել էր այդ երկրի ծրագրավորման նախարարի, այնուհետև՝ նավթի նախարարի պաշտոնները, ղեկավարել է աշխարհում ամենամեծ նավթային ընկերությունը՝ «Արամկոն»: Նրա հետ անգամ սկսվեցին գործնական քննարկումներ երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման նպատակով:

դամ երկրների արտաքին գործերի նախարարների խորհուրդը միաձայն համաձայնություն տվեց Եգիպտոսում ՀՀ դեսպանին ԱՊԼ-ում որպես ՀՀ լիազոր ներկայացուցիչ հավատարմագրելուն: Այդ որոշման հիման վրա մի քանի ամիս անց ՀՀ նախագահի հրամանագրով ՀՀ դեսպան Ռուբեն Կարապետյանը համատեղության կարգով նշանակվեց ԱՊԼ-ում ՀՀ լիազոր ներկայացուցիչ: ՀՀ լիազոր ներկայացուցիչը պաշտոնապես իրավունք ստացավ ներկա գտնվելու ԱՊԼ գագաթնաժողովներին (առանց ձայնի իրավունքի), մասնակցելու ԱՊԼ շրջանակներում բոլոր քննարկումներին ու նստաշրջաններին (բացառությամբ փակ նիստերի), շրջանառել ՀՀ պաշտոնական հայտագրեր (նոտաներ) ու փաստաթղթեր:

ՀՀ դեսպանի՝ ԱՊԼ-ում հավատարմագրման պահին, ոչ արաբական երկրներից ԱՊԼ-ում դեսպանի մակարդակով ներկայացված էին միայն ՌԴ-ն, Չինաստանը, Իտալիան և Մալթան: ՀՀ-ն դարձավ ոչ արաբական հինգերորդ երկիրը, որը դիվանագիտական բարձր ներկայացվածություն ունեցավ ԱՊԼ-ում, ինչն էլ վերահաստատեց ու նորովի ամրագրեց հայ ժողովրդի բացառիկ պատմական կապերի առկայությունն արաբ ժողովրդի հետ, նրա անուրանալի ներդրումն արաբական երկրների զարգացման գործում՝ բացելով լայն հեռանկարներ հայ-արաբական բարեկամության էլ ավելի ամրապնդման ու խորացման համար:

Արաբական բոլոր երկրները միավորող միակ միջազգային կազմակերպությունում դեսպանի մակարդակով ՀՀ ներկայացվածությունը կարևոր քայլ էր Հայաստան-Արաբական աշխարհ հարաբերությունների հետագա ծավալման ուղղությամբ: Այն նոր որակ հաղորդեց ու ամենաբարձր մակարդակն ապահովեց արաբական երկրների հետ ՀՀ երկկողմ և բազմակողմ համագործակցության համար, հնարավորություն ընձեռեց առավել արդյունավետությամբ պաշտպանելու մեր ազգային ու պետական շահերը՝ ԱՊԼ-ի շրջա-

նակներում Արցախի ու մեր երկրին առնչվող միջազգային կարևոր այլ հիմնախնդիրների վերաբերյալ ՀՀ դիրքորոշումները ներկայացնելու և պարզաբանելու, ինչպես նաև տարաբնույթ քաղաքական, տնտեսական և մշակութային նախաձեռնություններով հանդես գալու համար:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, II, III, IV հատորներ, Երևան, 2004, 2006:
2. Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003:
3. Вавилов А. И., Страны Ближнего Востока: проблемы и перспективы развития: уч. пособие. М., Изд-во МГЛУ, 2012.
4. История стран Ближнего и Среднего Востока после Второй мировой войны, ред. Стрельцов Дмитрий Викторович, Лунев Сергей Иванович, Москва, 2018.
5. Ланда Р. Г., История Арабских стран, М., Восточный Университет, 2005.
6. Новейшая история арабских стран (1917-1966), М.: Институт Востоковедения РАН, 1990, Отв. редактор. В. В. Наумкин.
7. Сапронова М. А., Политический процесс в арабских странах: уч. Пособие. М., Изд-во МГИМО, М., 2008.
8. Cleveland William L. History of the Modern Middle East. 5-th edition. Westview Press, Colorado, 2012.
9. Goldschmidt, Arthur. A Concise History of the Middle East. 11-th Edition, Boulder: Westview Press, Colorado, 2015.
10. Hitti, Philip K. History of the Arabs. Revised: 10th Edition, Palgrave Macmillan, London, 2002.
11. Hourani, Albert. A History of the Arab Peoples. Cambridge, Harvard University Press, 1991.
12. Mansfield Peter, A History of the Middle East. 4th Revised, Updated ed., Penguin, N. Y., 2013.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. Еремеев Д. Е., Мейер М.С. История Турции в Средние века и новое время. М., 1992.
2. Ерофеев Н. А. Английский колониализм в середине XIX века. Очерки. 1977.
3. Иванов Н. А., Османское завоевание арабских стран (1516-1574), М., 1984.
4. Лазарев М. С,. Крушение турецкого господства на Арабском Востоке (1914-1918), М., 1960.
5. Лорд Кинросс, Расцвет и упадок Османской империи. М., 1999.
6. Миллер А., Турция. Актуальные проблемы новой и новейшей истории. М., 1968.
7. Новичев А., Турция. Краткая история. М., 1966.
8. Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы (Отв.ред. С.Орешкова), М., 1986.
9. Османская империя: государственная власть и социально-политическая структура. (Отв.ред. С.Орешкова), М., 1990.
10. Петросян Ю.А. Османская империя: могущество и гибель. Исторические очерки. М., 1990.
11. Gibb A. R. Hamilton and Bowen, Henry. Islamic Society and the West. Oxford, 1950, 1957.
12. Issawi, Charles. The Economic History of the Middle East, London. 1968.
13. Karpat, Kemal. The Ottoman State and its Place in World History, Leiden, 1974.

14. Miller, William. The Ottoman Empire and its Successors, 1801-1927, Cambridge, 1927.
15. Pamuk, S. The Ottoman Empire and European Capitalism, 1820-1913, Trade, Investment and Production. Cambridge, 1987.
16. Stripling, George. The Ottoman Turks and the Arabs. Urbana, Ill., 1942.

ՍԻՐԻԱ, ԼԻԲԱՆԱՆ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆ

1. Ազէզեան Հ., Արաբական զարթօնքը եւ հայ գործիչները, Հալէպ, 2008:
2. Նաջարյան Ե.Հ., Լիբանանը 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1985:
3. Նաջարյան Ե., Արաբական ազգային-մշակութային զարթոնքը, Երևան, 1988:
4. Базили К. М., Сирия и Палестина под турецким правительством. М., 1962.
5. Валерс Ж., Крестьяне Сирии и Ливана. М., 1962.
6. Левин З. И., Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте. М., 1972.
7. Оганесян Н., Образование независимой Сирийской Республики, Издательство Наука, Москва, 1968.
8. Смилянская И. М., Крестьянское движение в Ливане в первой половине XIX века. М., 1965.
9. Antonius, George. The Arab Awakening: The Story of the Arab National Movement, 2nd ed., N.Y., Capricorn Books, 1965.
10. Chevallier, Dominique. La Societe du Mont Liban a l'epoque de la Revolution Industrielle en Europe. Paris, 1971.
11. Harik F. Iliya. Politics and Change in a Traditional Society: Lebanon, 1711-1845. Princeton, 1968.

12. Hourani, H. Albert. Syria and Lebanon. London, 1946.
13. Hovhannisyan, Nikolay. Arab National-Cultural Renaissance-Nahda and the Contribution of Armenians. Yerevan, 2007.
14. Khoury, Philip. Syria and the French Mandate. London, 1987.
15. Marcus, Abraham. The Middle East on the Eve of Modernity: Aleppo in the Eighteen Century. New York, 1989.
16. Maoz, Moshe. Ottoman Reforms in Syria and Palestine 1840-1861. London, 1968.
17. Maoz, Moshe. Studies on Palestine during the Ottoman Period. Jerusalem, 1975 Nantet, Jacques. Histoire du Liban. Paris: Les Editions de Minuit, 1963.
18. Poliak, N. Abraham. Feudalism in Egypt, Syria, Palestine and Lebanon, 1250-1900. London, 1939.
19. Polk, R. WIliam. The Opening of South Lebanon, Cambridge, Mass., 1963.
20. Rabbath, Edmond. L'Evolution politiques de la Syrie sous mandat. Paris, 1928.
21. Salibi S. Kamal. The Modern History of Lebanon., N.Y., 1965.
22. Ziadeh, A. Nicola. Syria and Lebanon. London, 1957.

ԵԳԻՊՏՈՍ

1. Ал-Джабарти Абд ар-Рахман. Египет в период экспедиции Бонапарта (1798-1801), М., 1962.
2. Ал-Шафии А. Развитие национально-освободительного движения в Египте (1882-1952). М., 1962.
3. Ротштейн Ф. А., Захват и закабаление Египта. М., 1959.
4. Тарле Е. В., Наполеон. М., 1939.
5. Al-Sayyid, Afaf Lutfi. Egypt and Cromer. London, 1968.

6. Anderson, Matthew S. The Eastern Question, 1774-1923. New York, 1966.
7. Cromer, Lord. Modern Egypt. London, Macmillan, 1908.
8. Baer, Gabriel. A Social and Economic History of Egypt. Chicago, 1969.
9. Blunt, Wilfrid S. The Secret History of the English Occupation of Egypt. New York, 1922.
10. Colvin A. The Making of Modern Egypt. London, 1906.
11. Cromer E. Modern Egypt. London, vol. 11.
12. De Forbin M. le Cte. Viyage dans le Levant en 1817 et 1818. Paris, 1819.
13. Deny J. Sommaire des Archives Turques du Caire. le Caire, MCMXXX.
14. Dodwell H., The Founder of Modern Egypt. Cambridge, 1931.
15. Glubb, Lt. Gen. Sir John. Britain and the Arabs. London: Hoder & Stoughton, 1957.
16. Feis, Herbert. Europe: The World's Banker. New Haven, 1930.
17. Henry Dodwell. Founder of Modern Egypt: A Study of Mohammed Ali. London: Cambridge University Press, 1931.
18. Hamont. P. H., L'Egypte sous Me'hemet-Ali. Paris,1843.
19. Heller, Joseph. British Policy Towards the Ottoman Empire 1908-1914. London, 1983.
20. Ibn Khaldun, Abd al-Rahman. Muqaddimah, trans. Franz Rosental, New York: Jamal Mohammed Ahmed. Intellectual Origins of Egyptian Nationalism. London, Oxford University Press, 1960.
21. Jamal Mohammed Ahmed. Intellectual Origins of Egyptian Nationalism. London, Oxford University Press, 1960.
22. Keddie, R. Nikki. An Islamic Response to Imperialism. Berkeley, 1968.
23. Kedourie, Elie. Afghani and Abduh: An Essay on Religious Unbelief and Political Activism in Modern Islam. London, 1966.
24. Landes, David S. Bankers and Pashas. Cambridge, 1958.

25. Langer, William L. The Diplomacy of Imperialism. New York, 1935.
26. Longrigg, Stephen H. Four centuries of Modern Iraq. Oxford, 1925.
27. Lord Cromer. Modern Egypt. London, 1908.
28. Marlo, John. World Ditch: The Making of the Suez Canal. New York, 1964.
29. Marsot Afaf Lutfi al-Sayyid. Egypt in the Reign of Muhammad Ali. Cambridge. 1984.
30. Pantheon, 1958 Mahdi, M. Ibn Khaldun՝s Philosophy of History. London: Cresset Press, 1954.
31. Paton A.A. History of the Egyptian Revolution, London, 1863.
32. Princeton, 1966 Holt, Peter M. Political and Social Change in Modern Egypt. London, 1968.
33. Safran, Nadav. Egypt in Search of Political Community. Cambridge, 1961.
34. Tignor, Robert L. Modernization and British Colonial Rule in Egypt, 1882-1914. London, 1972.

ԻՐԱՔ

1. Longrigg, Stephen H. Four centuries of Modern Iraq. Oxford, 1925.
2. Saleh, Mesopotamia, 1600-1914, Baghdad, 1957.
3. Sluglet, Peter. Britain in Iraq, 1914-1932. London, 1976.
4. Stokes, Frank. Iraq. London, 1958.

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ՍՈՒԴԱՆ

1. Аршаруни Н. А., Ливия, М., 1965.
2. Ланда Р. Г., Национально-освободительное движение в Алжире, (1939-1962), М., 1962.

3. Ланда Р. Г., Кризис колониального режима в Алжире, 1931-1954. М., 1980.
4. Ланда Р. Г., История алжирской революции. М., 1983.
5. Луцкая Н. Ц., Очерки новейшей истории Марокко. М., 1973.
6. Манасерян Л. П., Марокко в борьбе за независимость. Ереван, 1969.
7. Маслов Ю. А. , Ливия. Экономика и внешняя торговля. М., 1965
8. Прошин Н., История Ливии, Конец XIXв.-1969г. М., 1975.
9. Чистов А. А., По Тунису и Ливии. М., 1966.
10. Яхимович З. П., Итало-Турецкая война 1911-1912, М., 1967.
11. Abd al-Rahman, Maddathir. Imperialism and Nationalism in Sudan, New York, 1969.
12. Allen, J. A. Libya since Independence. New York, 1982.
13. Bechtold, K. Peter. Politics in the Sudan: Parliamentary and Military Rule in an Emerging African Nation. New York, 1986.
14. Davis, John. Libyan Politics: Tribe and Revolution. Berkeley, 1988.
15. Deeb, Marius and Deeb, Jane. Libya since the Revolution. New York, 1982.
16. Fluehr-Lobban, Carolyn. Islamic Law and Society in the Sudan. London, 1987.
17. Gillespie, Asell, S. et. al. Histoire d'Algerie. Paris: Boivin, 1927 Gsell, Marsais, Yver. Histoire d'Algerie, Paris, 1929.
18. Gillespie, Joan. Algeria, Rebellion and Revolution. London, 1960.
19. Emerit, Marcel. L'Algerie a l'Epoque d'Abd el-Kader. Paris: Editions Larose, 1951.
20. Holt, Peter. The Mahdist State in the Sudan, 1881-1898. Oxford,1958
21. Holt, Peter. A Modern History of the Sudan. New York, 1961.
22. Joffe E.G.H. and McLachan K.S. Social and Economic Development of Libya. Boulder, Colo., 1982.
23. Landau, Ron. Morocco Independent. London: Allen & Unwin, 1961.
24. Malwal, Bona. People and Power in Sudan. London, 1981.

25. Mason, P. John. Island of the Blest: Islam in a Libyan Oasis Community. Athens, Ohio, 1977.
26. Niblock, Tim. Class and Power in Sudan. Albany, 1987.
27. Robert O. Land beyond the Rivers: The Southern Sudan, 1898-1918. New Haven, 1971.
28. Segre, G. Claudio. Fourth Shore: The Italian Colonization of Libya. Chicago, 1975.
29. Slatin, C. Robert. Fire and Sword in Sudan. London, 1896.
30. Voll, John and Voll, Sarah. The Sudan. Boulder, Colo., 1985.
31. Wingate, Sir Reginald. Mahdism and the Egyptian Sudan. London, 1891.
32. Wright, John. Libya: A Modern History. Baltimore, 1982.

ԱՐԱԲԻԱ

1. Васильев А. М., История Саудовской Аравии (1745-1973), М., 1982.
2. Герасимов О. Г., Саудовской Аравия. М., 1977.
3. Мелкумян Е., История арабских стран. Государства залива в XX - начале XXI века. Учебное пособие для академического бакалавриата. М., 2018.
4. Прошин Н. И., Саудовской Аравия. М., 1964.
5. Сейранян Б. Г., Новейшая история Йемена, 1917-1982. М., 1984.
6. Уолд, Р. Эллен, Saudi Inc. История о том, как Саудовская Аравия стала одним из самых влиятельных государств на геополитической карте мира, Litres, М., 2018.
7. Amin, Abdul Amir. British Interest in the Persian Gulf. Leiden, 1966.
8. Farrah, Talal. Protection and Politics in Bahrain, 1869-1915. Beirut, 1985.
9. Hopwood, Derek. The Arabian Peninsula. London, 1972.

10. Kelly, B. John. Britain and the Persian Gulf, 1795-1800. New York, 1968.
11. Kour. Z.H. The History of Aden. London, 1981.
12. Lawson, Fred. Bahrain: Modernization of Autocracy. Boulder Colo., 1989.
13. Peterson, John. Oman in the Twentieth Century. London, 1978.
14. Risso, Patricia. Oman and Muscat. New York, 1986.
15. Troeller, Gary. The Birth of Saudi Arabia: Britain and the Rise of the House of Saud. London, 1976.
16. Winder, R. Bayly. Saudi Arabia in the Nineteenth Century. New York. 1965.
17. Zahlan, Rosemarie Said. The Origins of the United Arab Emirates. New York, 1978.
18. Zahlan, Rosemarie Said. The Creation of Qatar. London, 1979.

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՄԱՆԴԱՏԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1918-1945)

1. Բայրամյան Ա., Ալեքսանդրետի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-1939 թթ.), Երևան, 1998:
2. Հովհաննիսյան Ն., Սարգսյան Հ., Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1946 թթ.), Երևան, 1975:
3. Հովհաննիսյան Ն., Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում, Երևան, 1967:
4. Амин, Саид. Восстания арабов в XX веке, пер. с араб., М., 1964
5. Арабы в борьбе за независимость. М., 1957.
6. Звягельская И. Д., Декларация бальфура в контексте англо-сионистской дипломатии в период Первой мировой войны. Институт Востоковедения РАН, Москва, 2016.

7. Котлов Л. Н., Становление национально-освободительного движения на Арабском Востоке, М., 1976.
8. Левин З. И., Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте. М., 1972.
9. Нации и национализм на мусульманском Востоке. Отв. редакторы В. Я. Белокреницкий, Н. Ю. Ульченко. Институт Востоковедения, РАН, Москва, 2016.
10. Оганесян Н. О., Национально-освободительное движение в Ираке (1917-1958гг.), Ереван, 1976.
11. Оганесян Н. О., Политика империалистических держав на Арабском Востоке в годы второй мировой войны. Ереван, 1980.
12. Федченко А. Ф., Ирак в борьбе за независимость (1917-1969), М., 1970.
13. Antonius, George. The Arab Awakening: The Story of the Arab National Movement, 2nd ed., N.Y., Capricorn Books, 1965.
14. Correspondence between Sir Henry McMahon and the Sharif Hussein of Mecca, July 1915-March 1916. London, 1939.
15. Dawisha, Adeed. Arab Nationalism in the Twentieth Century: From Triumph to Despair. Princeton, 2016.
16. Dawn, C. Ernest. From Ottomanism to Arabism: Essays on the Origins of Arab Nationalism. Urban, Chicago and London: University of Illinois Press, 1973.
17. Declaration and the Birth of the British Mandate for Palestine. New York, 1983.
18. Hourani, Albert. The Emergence of the Modern Middle East. Berkeley, 1981.
19. Hurewitz, J.C. Diplomacy in the Near and Middle East: A Documentary Record: 1914-1956. 2 Vols., Princeton, Toronto, London and New York, 1956.
20. Hussein, Abd Allah. Memoirs of King Abdullah of Transjordan, ed. by Philip P. Graves. London, 1950.

21. Lawrence, T.E. Evolution of a Revolt: Early Postwar Writings of T. E.
22. Lawrence. ed. by Stanley and Rodelle Weintraub. The Pennsylvania University Press, 1968.
23. Report of a Committee Set Up to Consider Certain Correspondence between Sir Sachar, Howard M., The Emergence of the Middle East: 1914-1924. New York, 1969.
24. Sanders, Ronald. The High Walls of Jerusalem: A History of the Balfour Declaration and the Birth of the British Mandate for Palestine. New York, 1983.
25. Segev, Tom. One Palestine, Complete: Jews and Arabs Under the British Mandate.UK, 2001.
26. Fromkin, David. A Peace to End all Peace. The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East.New York, 1989.
27. Stein, Leonard. The Balfour Declaration, London, 1961.
28. Woodward, L. Ernest and Butler, Rohan. Documents on British Foreign Policy, 1919-1939, first series, vol.4. London, 1952.
29. Zeine, N. Zeine. The Struggle for Arab Independence. Beirut, 1960.
30. Khalidi, Walid. From Haven to Conquest: Readings in Zionism and the Palestine Problem until 1948. Beirut: Institute for Palestine Studies, 1971.
31. Weizmann, Chaim. The Letters and Papers of Chaim Weizman. Edited by Dvorah Barzilay and Barnet Litvinoff. Jerusalem, Israel University Press, 1977.

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

1. Գևորգյան Գ., Եգիպտոսի արտաքին քաղաքականության արաբական ուղղությունը նախագահ Հոսնի Մուբարաքի իշխանության առաջին տասնամյակում (1982-1991), Երևան, 2019:

2. Կարամանուկյան Շ., Արաբական Պետությունների Լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988:
3. Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները (1967-1996), Երևան, 2000:
4. Հովհաննիսյան Ն., Լիբանանյան կոնֆլիկտը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը (1975-1982), Երևան, 1982:
5. Беляев И. П., Примаков Е.М. Египет: время президента Насера. М., 1974.
6. Вавилов В. В., Социально-экономические преобразования в Сирии. (1946-1970гг), Москва, 1972.
7. Дятлов В.И. Крупная буржуазия в Египте накануне революции 1952 года. Иркутск, 1983.
8. Курдгелашвили Ш. Н., Революция 1952 года и крах британского господства в Египте, М., 1966
9. Прошин Н., История Ливии, М., 1975.
10. Сейранян Б. Г., Египет в борьбе за независимость, 1945-1952, М., 1970.
11. Уолд, Р.Эллен. Saudi Inc. История о том, как Саудовская Аравия стала одним из самых влиятельных государств на геополитической карте мира, Litres, М., 2018.
12. Abdel-Malek, A Nouar Egypt: Military Society. New York, 1968.
13. Antonius, George. The Arab Awakening. New York: G.P. Putnam's Sons, 1948.
14. Batatu, Hanna. The Old Social Classes and the Revolutionary Movements of Iraq. Princeton, 1979.
15. Delvin, F. John. Syria: Modern State in an Ancient Land. Westwiew Press, Boulder, Colorado, 1983.
16. Delvin, F. John. The Ba'th Party: A History. Stanford, Calif., 1976.
17. Itamar Rabinovich. Syria under Baath: 1963-66: The Army-Party Symbiosis. Israel University Press, Jerusalem, 1972.

18. Lacouture, Jean and Simon. Egypt in Transition. New York, 1958.
19. Khadduri M. Republican Iraq. New York, 1969; Dann, Uriel. Iraq under Qasim. New York, 1969.
20. Longrigg, H. Stephen. Iraq, 1900-1950: A Political, Social and Economic History. London, 1953.
21. Nasser, Gamal Abdel. Philosophy of the Revolution. Cairo, 1963.
22. Nuri es-Said. Arab Independence and Unity. Baghdad, 1943.
23. Nutting, Anthony. Nasser. New York: E.P. Dutton & Co, 1972.
24. Sadat, Anwar. Revolt on the Nile. London, 1957.
25. Seale, Patrick. The Struggle for Syria. A study of Past War Politics. 1945-1958, London, 1965.
26. Seale, Patrick. Asad of Syria. The Struggle for the Middle East, Berkeley&Los Angeles, 1988.
27. Shoukri Ghali. Egypt: Portrait of a President-Sadat's Road to Jerusalem London, 1981.
28. Stephens, Robert. Nasser: A Political Biography. New York: SImon&Schuster, 1971.
29. Vatikiotis P.J. Nasser and His Generation. New York, 1978.
30. Waterbury, John. The Egypt of Naser and Sadat. Princeton, 1983.

ԱՐԱԲԱ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1. Հովիաննիսյան Դ., Արաբա-իսրայելյան հակամարտություն. Երուսաղեմի խնդիրը. ՌԱՀՀԿ., Երևան, 2001:
2. Бар-Зохар Микаэль. Бен-Гурион. Ростов на Дону, 1998.
3. Ближневосточный конфликт: из документов Архива внешней политики РФ. 1947-1967. В 2-х томах. / Отв. ред. В.В. Наумкин. М.: МФД, 2003.
4. Гойтейн Ш. Д., Евреи и арабы. Мосты культуры. М., 2001.

5. Концельман Герхард. Арафат. Ростов на Дону, 1997
6. Международный сионизм: история и политика, М., 1977.
7. Никитина Г., Государство Израиль, М., 1968.
8. Примаков Е., Конфиденциально.Ближний Восток. На сцене и за кулисами, М., 2016.
9. Примаков Е., История одного сговора: (Ближневосточная поли-ти¬ка США в 70-е начале 80-х годов), М., Политиздат, 1985.
10. Пырлин Е. 100 лет противоборства (1897-1997). Генезис, Эволюция, современное состояние ни перспективы решения палестинской проблемы. М., 2001.
11. Рубби Антонио. Палестинский Марафон. 30 лет борьбы за мир на Ближнем Востоке. М., 2001.
12. Шейндлин П., Рэймонд. Летописи еврейского народа. Москва. 1997.
13. Alan R. Tailor. Prelude to Israel: An Analysis of Jewish Diplomacy. New York: Philosophical Library, 1959.
14. Black, Ian. Enemies and Neighbours. Arabs and Jews in Palestine and Israel, 1917-2017. Atlantic Monthly Press, 2017.
15. Bregman, Ahron and El-Tahri, Jihan. The Fifty Years of War: Israel and the Arabs. BBC Books, London, 1998.
16. Burdett, Winston. Encounter with the Middle East. An Intimate Report What Lies Behind the Arab-Israeli Conflict. Atheneum, New York, 1969.
17. Caufman, Burton. The Arab Middle East and the US, Twayne Publishers, New York, 1996.
18. Cordesman, H. Anthony. Perilous Prospects: The Peace Process and the Arab-Israeli Military Balance, Westview Press, 1996.
19. De Azcarate, Pablo. Mission in Palestine, 1948-1952. Washington, 1966.

20. Edward R. F. Sheehan, The Arabs, Israelis, and Kissinger: A Secret History of American Diplomacy in the Middle East. New York: Reader's Digest Press, 1976.
21. Fawaz Turki, The Disinherited: Journal of a Palestinian Exile. New York: Monthly Review Press, 1972.
22. Gary V. Smith, Zionism: The Dream and the Reality, a Jewish Critique. London: David and Charles, 1974.
23. Hurewitz J. C., The Struggle for Palestine. New York: Schocken Books, 1976.
24. Ibrahim Abu-Lughod, Transformation of Palestine. Evanston, Ill.: Northeastern University Press, 1971.
25. International Documents on Palestine, 1970.
26. Kayyali A.W., Palestine: A Modern History. London: Croom Helm, 1978.
27. Kimche, Jon. Seven Fallen Pillars. New York: Praeger, 1953.
28. Korany, Bahgat and Dessouki, Ali E. Hillal. The Foreign Policies of Arab States, Westview Press, London, 1984.
29. Laquer, Walter. The Struggle for the Middle East. Routledge and Kegan Paul, London, 1970.
30. Mearsheimer, John & Walt, Stephen. The Israel Lobby and US Foreign Policy. New York, 2007.
31. Michael C. Hudson, Arab Politics: The Search for Legitimacy. New Haven: Yale University Press, 1977.
32. Moshe Maoz: Syria and Israel From War to Peacemaking, Claredon Press, Oxford, 1995.
33. Noam Chomsky, Peace in the Middle East? Reflections on Justice and Nationhood. New York: Pantheon Books, 1974.
34. Quandt, B. William. ed., The Middle East: Ten Years after Camp-David, The Brookings Institution, 1988.

35. Quandt, B. William. Peace Process, American Diplomacy and the Arab-Israeli conflict since 1967, Brookings Institution, Washington D.C. 1993.
36. Quandt, William. Fuad Jabber, Ann Mosely Lesch, The Politics of Palestinian Nationalism. Berkeley: University of California Press, 1973.
37. Riad, Mahmoud. The Struggle for Peace in the Middle East. Quartet Books, UK, 1981.
38. Ross, Dennis. The Missing Peace: The Inside Story of the Fight for Middle East Peace. Farrar, Straus and Giroux, 2004.
39. Ross, Dennis, Makovsky David. Myths, Illusions & Peace. Finding a New Direction for America in the Middle East. New York, 2010.
40. Rubin, Barry. The Arab States and the Palestine Conflict. Syracuse, N.Y., Syracuse University Press, 1981.
41. Safran, Nadav. From War to War.: The Arab-Israeli Confrontation, 1948-1967. New York, 1969.
42. Said, Edward. W. The Question of Palestine, Routledge and Kegan Paul, London, 1980.

ԱՐԱԲԱ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ 1948 Թ. ՊԱՏԵՐԱԶՄԸ

1. Арабо-израильские войны (1948-1982). Арабский взгляд. М., 2008
2. O'Ballance, Edgar. The Arab-Israeli War, 1948. New York, 1957
3. Herzog, Chaim & Gazit, Shlomo. The Arab-Israeli Wars. Vintage UK, 2005
4. Karsh, Efraim. The Arab-Israeli conflict: The Palestine War 1948. Oxford, 2002.
5. Morris, Benny. 1948: A History of the First Arab-Israeli War. Yale University Press, 2008.

1956 Թ. ՍՈՒԵԶԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1. Медведко Л. И., К востоку и западу от Суэца. М., 1980.
2. Политика Англии на Ближнем и Среднем Востоке, М., 1966.
3. Childers, B. Erskine. The Road to Suez. London, 1962.
4. Freiberger, Z. Steven. Dawn over Suez: The Rise of the American Power in the Middle East. Chicago, 1992.
5. Kunz, B. Diane. The Economic Diplomacy of the Suez Crisis. Chapel Hill: University of North Carolina Press, 1991.
6. Kyle, Keith. Suez. New York: Str. Martin's Press. 1991.
7. Lloy, Selwyn. Suez 1956: A Personal Account. London, 1978.
8. Louis, Roger William and Owen Robert. Suez 1956: The Crisis and its Consequences. Oxford: Claredon Press, 1989.
9. Lucas, W. Scott. Divided We Stand: Britain, the US and the Suez Crisis. London: Holder and Stoughton, 1991.
10. Neff, Donald. Warriors at Suez: Eisenhower Takes America into the Middle East. New York: Simon & Schuster, 1981.
11. Nutting, Anthony. No End of a Lesson. London, 1967.
12. The Suez Canal Problem. State Department Special Release. Washington, 1956.

ԱՐԱԲԱ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ 1967 Թ. «ՎԵՑՕՐՅԱ» ՊԱՏԵՐԱԶՄԸ

1. Howard, Michael and Hunter, Robert. Israel and the Arab World: The Crisis of 1967. London, 1967.
2. Kosut, Hal. Israel and the Arabs: The June 1967 War. New York: Facts on File, 1968.
3. Laquer, Walter. The Road to war: The Origin and Aftermath of the Arab-Israeli conflict, 1967/8. Baltimore: Penguin Books, 1968.

4. Neff, Donald. Warriors for Jerusalem: The Six Days that Changed the Middle East. New York: Simon&Schuster, 1984.
5. O'Ballance, Edgar. The Third Arab-Israeli War. Hamden: Archon Books, 1972.

1970 Թ. ՀՈՐԴԱՆԱՆԻ ՃԳՆԱԺԱՄԸ

1. Clinton, Bailey. Jordan՝s Palestinian Challenge, 1948-1983. Westview, Boulder, 1984.
2. Dann, Uriel. King Hussein and the Challenge of Arab Radicalism: Jordan, 1955-1967. New York: Oxford University Press, 1989.
3. Quandt, William. Decade of Decisions. American Policy toward the Arab-Israeli Conflict, 1967-1976. University of California Press, 1977.
4. Kissinger, Henry. White House Years. Simon & Schuster, New York, 2011.
5. Dowty, Alan. Middle East Crisis.US Decision-Making in 1958, 1970 and 1973. University of California Press, 1984.

1973 Թ. ԱՐԱԲԱ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1. Laquer, Walter. Confrontation: The Middle East and World Politics. New York: Quadrangle/ New York Times Book, 1974.
2. Heikal, Mohammed. The Road to Ramadan. New York, 1975.
3. El-Badri, Hasan. The Ramadan War, 1973: An Egyptian Report. Boulder, Colo., Westview Press, 1977.
4. Eshel, David. The Yom-Kippur War, Tel Aviv, Eshel-Dramit, 1978.
5. Herzog, Chaim. The War of Atonement: October 1973. Boston: Little, Brown&Co., 1975.
6. O՝Ballance, Edgar. No Victor No Vanquished: The Yom Kippur War. San Rafael, Calif., Presidio Press, 1978.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

1. Avi-Ran R., The War of Lebanon: Arab Documents, Tel-Aviv, 1987.
2. Dawisha. A.I. Syria and the Lebanese Crisis. New York: St. Martin's Press, 1980.
3. Evron Y., War and the Intervention in Lebanon: The Israeli-Syrian Deterrence Dialogue, Baltimore, 1987.
4. Rabinovich Itamar. The War for Lebanon, 1970-1983. Ithaca, NY: Cornell University Press, 1984.
5. Salibi, S. Kamal. Crossroads to Civil War. Lebanon 1958-1976. New York: Caravan Books, 1976; Bulloch, John. Final Conflict: The War in the Lebanon. London, 1983; Deeb, Marius. The Lebanese Civil War. New York: Praeger Publishers.
6. Weinberger, Naomi Joy. Syrian Intervention in Lebanon: The 1975-76 Civil War. New York: Oxford University press, 1986.

ԻՐԱՔԸ ՍԱԴԴԱՄ ՀՈՒՍԵՅՆԻ ՕՐՈՔ. ԻՐԱՆ-ԻՐԱՔՅԱՆ ԵՎ ԾՈՑԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

1. Апдайк Робин. Саддам Хусейн. Ростов на Дону, 1999.
2. Генерал Халд ибн-Султан. Воин в пустыне. М., 1996.
3. Данциг Б. М., Ирак в прошлом и настоящем. М., 1980.
4. Шарипов У., Персидский залив. Обострение политической и военной ситуации в международных отношениях в конце XX-начале XXI вв., Институт Востоковедения РАН, Москва, 2010.
5. Хазанов А., Олимпиев А. Войны на Большом Ближнем Востоке.1960-е - 2016., Изд-во Юнити-Дана, Москва, 2016.
6. Atkinson, Rick. Crusade: The Untold Story of the Persian Gulf War. Boston: Houghton Mifflin Co., 1993.
7. Baram, Amatzia. Culture, History and Ideology in the Formation of Ba'thist Iraq, 1968-89. London: Macmillan, 1991.

8. Baram, Amatzia and Rubin, Barry. Iraq's Road to War. New York, St. Martin Press, 1993.
9. Carpenter, Ted Galen. America Entangled: The Persian Gulf Crisis and its Consequences. Washington, D.C., Cato Institute, 1991.
10. Chubin, Shahram and Tripp, Charles. Iraq and Iran at War. Woulder, Colo., 1988.
11. Darwish, Adel and Alexander, Gregory. Unholy Babylon: The Secret History of Saddam's War. New York: St. Martin's Press, 1991.
12. Devlin, F.John. The Ba'th Party: A History from its Origins to 1966. Stanford: Hoover Institution, 1976.
13. Faour, Muhhamad. The Arab World after Desert Storm. Washington, D.C., US Institute of Peace Press, 1993.
14. Freedman, Lawrence and Karsh, Efraim. The Gulf Conflict 1990-1991-Diplomacy and War in the New World Order. Princeton University Press, 1993.
15. Karsh, Efraim and Rautsi, Inari. Saddam Hussein: A Political Biography. New York: Free Press, 1991.
16. Marcia Lynn Whicker, James P. Pfiffner, and Raymond A. Moore, ed., The McCain, John. The Gulf War Aftermath: An Environmental Tragedy. Dordrecht., Holland, 1993.
17. Golan, Galia. Moscow and the Middle East: New Thinking on Regional Conflict, New York, 1992.
18. Matar, Fuad. Saddam Hussein: The Man, the Cause and the Future. London, 1981; Samir al-Khalil (pseudonym), Republic of Fear. Berkeley, 1989.
19. Matthews, Ken. The Gulf Conflict and International Relations. New York: Routledge,1993.
20. Niblock, Tim. Iraq: The Contemporary State, New York, 1982.
21. Presidency and the Persian Gulf War. eds. Marica Lynn Wicker, James Pfiffner, and Raymond A. Moore. Westport, Conn.: Praeger, 1993.

22. Smith, Jean Edward. George Bush's War. New York: Nenry Holt&Co., 1992.
23. Tahir Kheli, Shirin and Ayubi, Shaheen. The Iraq-Iran War. New York, 1983.
24. Watson, W. Bruce. Military Lessons of the Gulf War. Novato, Calif., Presidio Books, 1991.

ՆԱՎԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ

1. Андреасян Р. Х., Эльянов А. Я., Ближний Восток: нефть и независимость. М., 1961.
2. Ближний Восток. Нефть и политика. Серия: Проблемы общественного развития стран Азии и Африки, ИНИОН РАН, 2014.
3. Васильев А., Персидский залив в эпицентре бурь. М., 1983.
4. Гусаров В. И., Семин Н. С., Арабская нефть. М., 1975.
5. Закария М. Г., Яковлев А. И., Нефтяные монархии Аравии на пороге XXI в., М., ИИИиБВ, 1998.
6. Нестабильность в Северной Африке и на Ближнем Востоке: влияние на мировой рынок нефти. Ответственный редактор: С. В. Жуков. М.: ИМЭМО РАН, 2012.
7. Проханов А., Шурыгин В., Ивашов Л., Сирийский армагеддон. ИГИЛ, нефть, Россия. Битва за Восток. 2016.
8. Abi-Ayad, Naji and Grenon, Michel. Instability and Conflict in the Middle East: People, Petroleum and Security Threats. New York, St. Martin's Press, 1997.
9. Cordesman, H. Anthony. Energy Developments in the Middle East. Praeger, London, 2004.
10. Falola, Toyin & Ann Genova. *The Politics of the Global Oil Industry: An Introduction*, Praeger, London, 2005.

11. Gilbar, Gad G. The Middle East Oil Decade and Beyond: Essays in Political Economy. Portland, Frank Cass, 1997.
12. Longrigg, H. Stephen. Oil in the Middle East. London, 1968.
13. Skeet, Ian. OPEC: Twenty-five Years of Prices and Politics. Cambridge, 1988.
14. Yergin, Daniel The Prize: The Epic Quest for Oil, Money and Power. Simon & Schuster, New York, 1991.

ՋՐԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ

1. Hillel, Daniel. Rivers of Eden: The Struggle for Water and the Quest for Peace in the Middle East. New York, Oxford University Press, 1994.
2. International Waters of the Middle East: From Euphrates-Tigris to Nile, edited by Asit K. Biswas. Bombay, India, Oxford University Press, 1994.
3. Kliot, Nurit. Water Resources and Conflict in the Middle East. New York, Routledge, 1994.
4. Murakami, Masahiro. Managing Water for Peace in the Middle East: Alternative Strategies. New York, United Nations University Press, 1995.
5. National Research Council (U.S.). Committee on Sustainable Water Supplies for the Middle East. Water for the Future: The West Bank and Gaza Strip, Israel, and Jordan. Washington, National Academy Press, 1999.
6. Shapland, Greg. Rivers of Discord: International Water Disputes in the Middle East. New York, St. Martin's Press, 1997.
7. Sherman, Martin. The Politics of Water in the Middle East: An Israeli Perspective on the Hydro-Political Aspects of the Conflict. New York, St. Martin's Press, 1999.

8. Spiegel, L. Steven. Practical Peacemaking in the Middle East: The Environment, Water, Refugees, and Economic Cooperation and Development. California, 2002.
9. Water, Peace and the Middle East: Negotiating Resources in the Jordan Basin, Hydropolitics along the Jordan River: edited by John A. Allan. New York, St. Martin's, 1996.
10. Water and Conflict in the Middle East. Edited by Marcus Dubois King, London, 2019.
11. Wolf, Aaron T. Scarce Water and Its Impact on the Arab-Israeli Conflict. New York, United Nations University Press, 1995.
12. Zeitoun, Mark. Power and Water in the Middle East. The Hidden Politics of the Palestinian-Israeli Water Conflict, I.B.Tauris, 2011.

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Ս., Իսլամական պետություն. Ակունքներից մինչև Խալիֆայության հռչակում, ԵՊՀ, Երևան, 2016
2. Գրիգորյան Ս., Իսլամական արմատականությունը Կովկասում, ԵՊՀ, Երևան, 2017:
3. Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. Նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ, Երևան, 2003:
4. Жданов Н., Исламская концепция миропорядка. Международные отношения, М., 2003:
5. Бабкин С. Э., Движения политического ислама в Северной Африке. М., 2000.
6. Игнатенко А. А., Ислам и политика, М., 2004.
7. Ключников Б., Исламизм, США и Европа. Война обьявлена. Эксмо, М., 2003.

8. Ланда Р. Г., Политический ислам: предварительные итоги, М., 2005.
9. Льюис Бернард, Что не так? Путь Запада и Ближнего Востока: Прогресс и Традиционализм. Прогресс, М., 2003.
10. Малашенко А., Исламская альтернатива и исламистский проект. М., 2006.
11. Млечин Л., Кто взорвал Америку? М., 2002.
12. Модестов С., Геополитика Ислама, Молодая Гвардия, М., 2003.
13. Наумкин В. В., Исламский радикализм в зеркале новых концепций и подходов. М., 2005.
14. Фундаментализм: сборник статей. М.: Изд-во ин-та Востоковедения РАН, 2003.
15. Шагаль В. Арабский мир: Пути познания, М., 2001.
16. Ajami, Fouad. The Arab Predicament. Cambridge, 1981.
17. Braswell, George W. Islam: Its Prophet, Peoples, Politics, and Power. Nashville, TN, Broadman & Holman, 1996.
18. Corm, Georges. Fragmentation in the Middle East: The Last Thirty Years. London, 1988.
19. Dekmejian, R. Hrair. Islam in Revolution: Fundamentalism in the Arab World. 2nd ed. Syracuse, NY, Syracuse University Press, 1995.
20. Dershowitz. M.Alan. Why Terrorism Works. Yale University Press, 2002.
21. Fluehr-Lobban, Carolyn. Islamic Society in Practice. Gainesville, FL, University Press of Florida, 1994.
22. Frampton Martyn. The Muslim Brotherhood and the West. A History of Enmity and Engagement. Harvard University Press, 2018.
23. Kushner. W. Harvey. Essential Readings on Political Terrorism. Nebraska, University of Nebraska Press, 2002.
24. Lewis, Bernard. The Crisis of Islam. Holy war and Unholy Terror. Phoenix, London, 2003.

25. O'Ballance, Edgar. Islamic Fundamentalist Terrorism, 1979-95: The Iranian Connection. New York, New York University Press, 1997.
26. Peters, Rudolph. Jihad in Classical and Modern Islam. Princeton, NJ, Markus Wiener Publishers, 1996.

«ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆ»

1. Հովիաննիսյան Ն., Գևորգյան Գ., Արաբական գարունը. Համաարաբական ըմբոստությունը հանուն արաբական հասարակության արդիականացման, Երևան, 2018:
2. Арабский мир и экономические вызовы, Труды ИВ РАН, под редакцией М.Филоника, Москва, 2018.
3. Ахмедов В., Сирийское восстание. История, Политика, Идеология. Институт востоковедения РАН, Москва, 2018.
4. Долгов Б., Феномен “Арабской весны” 2011-2016.: Причины, развитие, перспективы. Тунис, Египет, Ливия, Сирия, Алжир, Москва, 2017.
5. Егорин А., Арабский Восток в борьбе за обновление (Ливия, Египет, Сирия). Хроника событий, 2012-2013 гг., Институт Востоковедения РАН, Москва, 2014.
6. Кузнецов В., Потаенные тропы Туниса: жить и рассказывать революцию. Москва, 2018.
7. Мейсан Тьерри, Преступления глубинного государства. От 11 сентября до Дональда Трампа, Москва, 2017.
8. Основные участники ливийской драмы, Отв. Редактор: Плотников Н., Москва, 2017.
9. Ражбадинов М., Анатомия египетской революции-2011: Египет накануне и после политического кризиса в январе-феврале 2011 г., Институт Востоковедения РАН, Москва, 2013.
10. Ajami, Fouad, The Syrian Rebellion. Stanford, 2012.

11. Anderson Tim, The Dirty War in Syria: Washington, Regime Change and Resistance. Global Research, 2016.
12. Lister, Charles. R., The Syrian Jihad: Al-Qaeda, The Islamic State and The Evolution of an Insurgency. London, 2016.
13. Phillips, Christopher, The Battle for Syria: International Rivalry in the New Middle East, New Haven, 2016.
14. Van Dam, Nikolaos, Destroying a Nation. The Civil War in Syria. I.B. Tauris, London-NY, 2017.

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

1. Հարությունյան Լ., Փաշայան Ա., Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. Արդի հիմնախնդիրներ, Երևան, 2012:
2. Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, III հատոր, Երևան, 2006:
3. Հովհաննիսյան Ն., Մերձավոր Արևելքի և Սիրիայի հայ համայնքները և նրանց հեռանկարները, Երևան, 2015
4. Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը. Արդի հիմնախնդիրներ, Երևան, 2011:
5. Փոլադյան Ա., Հայ-սիրիական հարաբերությունները. Պատմական համագործակցություն, Դամասկոս, 2017 (արաբերեն):
6. Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), հատոր երկրորդ, Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, 2003:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Բուհական դասագիրք

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Լ. Հովհաննիսյանի, Մ. Հովհաննիսյանի
Խմբագիր՝ Վ. Խաչատրյան

Տպագրված է «Time to Print» օպերատիվ տպագրությունների սրահում:
Ք. Երևան, Խանջյան 15/55

Ստորագրված է տպագրության՝ 19.12.2019:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 33:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am

Պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Կարապետյանը 1993-2013 թթ. ՀՀ ԱԳՆ համակարգում զբաղեցրել է տարբեր դիվանագիտական պաշտոններ: 2004-2013 թթ. ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի պաշտոնն է զբաղեցրել Եգիպտոսում, այնուհետև՝ Իտալիայում:

2019 թ. հուլիսից ՀՀ ԱԳ նախարարի խորհրդականն է:

Երևանի պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամ է:

Հայ-ռուսական համալսարանի, Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է:

ՀՀ ԳԱԱ և ԵՊՀ մի շարք գիտական պարբերականների խմբագրական խորհուրդների անդամ է:

Հեղինակ է Մերձավոր Արևելքի, Հարավային Կովկասի աշխարհաքաղաքականության ու միջազգային արդի հիմնախնդիրների վերաբերյալ տպագրված 6 մենագրությունների և ավելի քան 30 հոդվածների:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2019
publishing.ysu.am